A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
www.a-pdf.com

Գիրքը յուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

www.a-pdf.com

ԴՈՒՔ ԿՈՒԶԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԿԵՐԿՈՒՏՈՒՆ ՈՒՆԵԼԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԼՈՒՄԱՑԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿՈՄԿՈՆ՝

www.freebooks.do.am

ԵԼՈՒՅԱՊԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՆՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՆ
ՑԱՆԿԱՆԱԼՈՒՄ ԵՆՔ ՀԱԶԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

www.a-pdf.com

ԿՐՈՄՎԵԼ



Սամսոն Պոսխոսով

panarmenian freebooks library
www.freebooks.do.am
www.freebooks.am

www.a-pdf.com



Cromwell

www.a-pdf.com

Սատյանա Պավլովա

ԿՐՈՄՎԵԼ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1983

www.a-pdf.com

Ռուսերենից թարգմանել է
ԼԱԴԻՄԻՐ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ

Դանիելա, Տ. Ա.
Պ 273 Կրոմվել (թարգմ. վ. Դանիելյան) — Եր.: Հայաստան, 1983 — 360 էջ, 16 թ. նկ.:

Պատմական վեպերի թեկնածու Տ. Ա. Դանիելայի գիրքը նվիրված է անգլիական բուրժուական հեղափոխության նշանավոր գործիչ Օլիվեր Կրոմվելի կյանքի ու ժամանակի պատկերմանը՝ քաղաքացիական պատերազմին, հանրապետության հռչակմանը, շոտլանդական ապստամբություններ և Կրոմվելի դիկտատուրային, որը հասցրեց Ստյուարտների վերահաստատման, իրադարձություններ, որոնք վճռական նշանակություն ունեցան XVII դարի Անգլիայի պատմության մեջ։ Գիրքը գրված է ընթերցող լայն շրջաններին քիչ մանրամասն պատմական նյութերի և փաստաթղթերի հիման վրա։

Պ 4702010200 / 701 (01) 83 — 81 83

ԳՄԴ 63.3 (0) 52
9 (Մ) 31

© Издательство «Молодая гвардия», 1980 г.
© Թարգմանված է հայերեն «Հայաստան» հրատարակչություն 1983 թ.

www.a-pdf.com

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր մարդ մի առեղծված է։ Պատմական անձնա-
գրությունը՝ կրկնակի առեղծված մենք դրկված ենք անմիջա-
կան շփման հնարավորությունից և ստիպված ենք մարդու ներ-
աշխարհը թափանցել նրա սեփական նամակների, օրագրերի, ոչ
միշտ վստահելի կցկտուր վկայությունների, նրան շրջապատող-
ների՝ համակրողների և հակակրողների կանխակալ կարծիքնե-
րի միջոցով։ Իսկ նշանավոր դեմքերի այդ անվերջանալի
բարանում առանձնանում են մի քանի հատկապես խորհրդավոր-
ներն ու հատկապես անըմբռնելիները, որոնք իրենց դերն են խա-
ղացել համաշխարհային պատմության մեջ։ Այդպիսի մի առեղ-
ծվածային անձնավորություն է եղել Օլիվեր Կրոմվելը՝ XVII դարի
անգլիական բուրժուական հեղափոխության առաջնորդը։

Արդեն իսկ ճակատագիրը նրա արտասովոր է. անհայտ, ոչ
տարուստ գավառական ջենտլմենը դարձավ նշանավոր զորավար,
նոսավ օրինական միապետի գլխատմանը և ինքը, ըստ էության,
բռնեց նրա տեղը, դառնալով Անգլիայի անսահմանափակ
տիրակալը, եվրոպական տերությունների սարսափը, այն ժա-
մանակվա համաշխարհային քաղաքականության տնօրինողը։
Մինչև այսօր էլ չեն հանդարտվում վեճերը այդ զարմանալի
մարդու մասին հետազոտողները կանխակալ են նույնպես, ինչ-
պես և ժամանակակիցները, նրանց գնահատականները իրարա-
հակադիր են, հաճախ մի կարծիք միանգամայն բացասում է մյուսը։
Ամենք պնդում են, թե նա եղել է «երեսպաշտ բռնակալ», «ենե-
գամիտ ուղղապատոր», որն սկզբից ևեթ հմտորեն օգտվել է հե-
գափոխական լոզունգներից և պուրիտանական շարժման կրո-
նական պաթոսից, հասնելու համար անձնական փառքի, հարըս-
տության, իսկ գլխավորը՝ իշխանության։ Մյուսները գտնում են,
որ նա եղել է մի իսկական հեղափոխական, ժողովրդի բարօրու-
թյան համար մաքառող մարտիկ, գաղափարի ասպետ, որին
ոչ հանգամանքներն էին հարկադրում ապավինելու բռնակա-
լական մեթոդների։ Մեկը Կրոմվելին հռչակում է ուրացող ու
դավաճան, որը դավել է ժողովրդի գործին, մյուսը մեծարում է
նրան որպես մեծաստատուն դրվող հերոս, ի վերուստ առաքված

www.a-pdf.com

[illegible] գրվել է Անգլիան նրա լավ ամբողջ [illegible] կրթությունը ավարտում են, թե նա լիբերալ է և բա- [illegible] անգլիական բուրժուական դեմոկրատիզմի «բացա- [illegible] ասնարանները նրան պառլամենտական կարգերի [illegible] են կոչում, ինչ-որ մեկը նրա ճակատին I դրոշմում «պատմականորեն բոնակալ» խարանը վերջապես կան մարդիկ, որոնք փորձում են ապացուցել, որ Կրոմվելը պարզապես պյուրիտան մի ջենտլմեն է, որի ունեցվածքը նվազել է, դրա համար էլ ցլխավորում է «ավերումի հեղափոխություն», ոչնչացրեց Անգլիան անվերապահորեն անցյալի տիրին ամենամեծ ֆեոդալական կարգերին։

Գնահատականների այդպիսի անհամատեղելիությունը դուրկ չէ հիմքից։ Եթե մենք անդրադառնալու լինենք Կրոմվելի արարքներին և ասույթներին, ինքնին վերցրած, ապա դեմ կանենք հակասությունների մի այնպիսի զանգվածի, որն անխուսափելիորեն մեզ կառաջնորդի դեպի փակուղի։ Երկար, տանջալի տատանումներ, հապաղումներ, անվճռականություն և հոանդի մոլեգին ժայթքումներ, գործելու զարմանալի ունակություն, անակնկալ, կտրուկ շրջադարձեր, հանկարծահաս մճիռներ անսպասելի արարքներ։ Ակնհայտ վախկոտություն, սովորում մասլու ձգտում, երկյուղ սեփական կյանքի համար, և անընկրկելի համարձակություն։ Խիզախություն մարտի դաշտում, քաղաքական ձախողված ակտերի պատասխանատվություն ամբողջովին իր վրա վերցնելու կարողություն։ Հոգեվար կրոնասիրություն, «սատծու մշտատև որոնում», հակվածություն հանդեպ միստիկան և ղգաստ քաղաքական միտք, հաշվենկատություն, գործնականություն։ Ժողովրդի հետ լեզու գտնելու, նրա կարիքները հասկանալու կարողություն, և ժողովրդական շարժումների անդիջում ջախջախում, «աղքատ մարդու» նույնացում «վատ մարդու» հետ։ Քնքշանք հանդեպ հարազատները, հոգատարություն հանդեպ մերձավորները, հանդեպ զինվորները, մեծ հոգություն թշնամիների նկատմամբ, և դաժանություն։

Այդ հակասականությունը անկարելի է հասկանալ՝ առանց խորամուխ լինելու այն իրադարձությունների մեջ, որտեղ Կրոմվելն այդպիսի նշանակալի դեր խաղաց հեղափոխության իրադարձություններում։ Առանց հեղափոխության Կրոմվելին չես ըմբռնի մի որոշ իմաստով նա դրա կերտողն է, բայց ավելի մեծ մասով նրան ստաց մղեց իրադարձությունների ընթացքը։ Հեղափոխության ուժն ու միությունը, իսկ այնուհետև նոր կառավարողների կողմից դրա առավել դեմոկրատական հոսանքների խեղդումը հենց Կրոմվելին դարձրին այն, ինչ նա եղավ պատմության մեջ։ Առաջին հայացքից անհասկանալի նրա արարքների և նույնիսկ կրքերի փոփոխականությունը կարելի է բացատրել միայն ուշադիր հետևելով հեղափոխական շարժման մեջ տեղի ունեցած յուրաքանչյուր շրջադարձին։

www.a-pdf.com

XVII դարի կեսի անգլիական բուրժուական հեղափոխությունը, Մարքսի արտահայտությամբ, «եվրոպական մասշտաբի» առաջին բուրժուական հեղափոխությունն էր[1]։ Դա եղավ իր ուժով ու հետևանքով ցնցող այն իրադարձությունը, որը կործանիչ հարված հասցրեց ամբողջ Եվրոպայում տիրող ֆեոդալական կարգերին։ Այդ «ամպրոպի ճայթյունը» ավետեց նոր հասարակարգի ծնունդը, իշխանության գլուխ կանգնեցրեց նոր դասակարգեր, ոչնչացրեց հին հասարակարգը։ Այն բացառապես անգլիական երևույթ չէր. XVIII դարի վերջի ֆրանսիական Մեծ հեղափոխության նման այն նշանակում էր «նոր հասարակարգի հաղթանակը, բուրժուական սեփականության հաղթանակը ֆեոդալականի հանդեպ, ազգինը՝ դավառականության հանդեպ, մրցակցությանը՝ համքարային կարգի հանդեպ, սեփականության բաժանմանը՝ մայորականի հանդեպ, հողի սեփականատիրոջ տիրապետության հաղթանակը՝ սեփականատիրոջը հողին ենթարկելու հանդեպ, լուսավորությանը սնահավատության հանդեպ, ինտանիքինը՝ տոհմանվան հանդեպ, նախաձեռնությանը՝ հերոսական ծուլության հանդեպ, բուրժուական իրավունքինը՝ միջնադարյան արտոնությունների հանդեպ»[2]։

Հեղափոխությունն Անգլիայում աստիճանաբար հասունանում էր այն ժամանակներում, երբ անգլիական աբսոլյուտիզմը, ինչպես էր, նոր միայն ապրում է իր ծաղկման դարաշրջանը։ Արդեն Եղիսաբեթ I թագուհու կառավարման օրոք, XVI դարի երկրորդ կեսերին, նոր դասակարգերը, որ ծնվել էին ֆեոդալական հասարակարգի ընդերքում՝ բուրժուազիան և ազնվականությունը (ջենթրի), մերթ այստեղ, մերթ այնտեղ ցուցադրում էին իրենց ուժն ու ազդեցությունը։ Սավալվում էին արդյունաբերությունն ու առևտուրը։ Ազնվականական կալվածքներում տնտեսությունը կառուցվում էր բուրժուական հենքի վրա։ Համայնքապատկան հողը, որ դարեր ի վեր ծառայել էր գյուղացիներին, ոչնչացվեց և նրա վրա ձեռներեց տնատերը ոչխար էր բազմացնում, որպեսզի ապուհետև մսի և բրդի առևտուր աներ և բազմապատկեր իր կապիտալը։ Միևնույն մարդը միաժամանակ հանդես էր գալիս և՛ իբրև հողատեր, և՛ արդյունաբերող, և՛ վաճառական։ Դա էր Անգլիայի հասարակական կարգի կարևորագույն առանձնահատկությունը, մի առանձնահատկություն, որն այնքան վառ արտահայտվեց հեղափոխության բուն բնույթի մեջ։

Բնական է, որ այդ նոր մարդկանց իանգարում էին ֆեոդալական սահմանափակումները, որոնք կաշկանդում էին ազատ առևտուրն ու նախաձեռնողականությունը։ Հատկապես ուժեղացավ նրանց դժգոհությունը Ստյուարտների դինաստիայի թագա-

---

[1] Маркс К и Энгельс Ф., Соч., т. 6, с. 115.

[2] Նույն տեղը։

www.a-pdf.com

դրների օրոք, երբ փոխարինեցին Եղիսաբեթ Թյուդորը գահակալությանը։ Հակոբ I-ը և նրա որդի Կարլոս I-ը, չանալով հարատևել զանձարանը, հարություն էին տալիս հին, վաղուց մոռացված ֆեոդալական սովորույթներին ու լարքերին նրանք օգտվում էին «արքայական առանձնաշնորհից» որպեսզի թուլացնեին պառլամենտների ազդեցությունը, որտեղ նիստեր էին անում նոր դասակարգերի ներկայացուցիչները, իսկ դժգոհությունները ճնշելու համար ավելի հաճախ էին դրսևորվում մեջ գնում արտակարգ դատարանները՝ Աստեղային պալատը և Բարձր հանձնաժողովը

Դժգոհությունը, սակայն, աճում էր։ Եվ քանի որ «ին աշխարհը գեսես ուժեղ էր և նոր հոսանքներն իրենց արմատներով ձգվում էին միջնադարի խորքերը, դժգոհությունը նույնպես ընդունում էր միջնադարյան ձևեր. իր գաղափարական դրոշը նա ընտրեց կրոնը։ Բայց ոչ միջնադարյան կաթոլիկությունը, որ սերտորեն միահյուսված էր հին կարգերի հետ, ի ոչ էլ անգլիականությունը[1], որ ծնունդ էր առել անգլիական թագավորների կողմից անցկացված ռեֆորմացիաների հետևանքով։ Անգլիական ռեֆորմացիան «վերից», որ սկսվել էր Հենրիխ VIII-ի և վերջնականապես ձևավորվել էր Եղիսաբեթի օրոք, կրում էր սահմանափակ բնույթ։ Նա եկեղեցու և պետության կառավարող վերնախավին ազատեց Հռոմի պապի աշխարհահանձնման հակոդությունից բայց անսասան պահպանեց եպիսկոպոսական եկեղեցական կարգը, փառահեղ ծեսերը և կաթոլիկականության շատ դոգմաներ։ Անգլիական եկեղեցին դարձավ արսոլյուտիզմի հենաղախինը, իսկ սրա դավանաբանությունը նրա տաղափարաբանական հենքը։ Դրա համար էլ աբսոլյուտիզմի դեմ լուրաքանչյուր ընդվզում ընդունում էր հակաեկեղեցական հակաանդլիկանական, բողոքական ձև։

Դժգոհությունների գաղափարական հենքը դարձավ կալվինականությունը։ Կրոնական այդ ուսմունքի հիմնադիրը եղավ ծնեցի բարեռորոգիչ Ժան Կալվինը։ Կալվինականությունը իսկապես բուրժուական կրոն էր։ Այն ավերեց կաթոլիկ եկեղեցու նվիրապետության վիթխարի շինությունը, որ կառուցված էր պապականության անսահմանափակ հեղինակության վրա և ասես կրկնությունը լիներ միջնադարյան ֆեոդալական հասարակության աշխարհիկ նվիրապետության։ Ոչ թե եկեղեցական որոշումները, այլ աստվածաշունչը, որը սակավ հասկանալի միջնադարյան լատիներենից XVI դարում թարգմանվել էր եվրոպական լեզուներով, դարձավ նրա դասակարգերի գաղափարաբանության, նրանց քաղաքականության գլխավոր սնուցող աղբյուրը, բարոյական արժեքների գլխավոր չափանիշը։ Ոչ թե

---

[1] Բողոքականություն անգլիական տարբերակը (ծ. ն. իմ.)։

www.a-pdf.com

ծեսերն ու խորհուրդները, որոնք կաթոլիկ հոգևորականության արքայական մենաշնորհն էին, այլ հավատը՝ յուրաքանչյուրի անձնական հավատը, հայտարարվում էր կրոնի հիմքը։ Նա, ով ունի իսկական հավատ, սովորեցնում էին կալվինիստները, կփրկվի, նույնիսկ եթե չպահպանի եկեղեցու սահմանած ծիսակատարությունները։ Եվ ընդհակառակը, ո՛չ կնքվելը, ո՛չ հաղորդվելը, ո՛չ պատարագը, ո՛չ խոստովանությունները և մեղքերի թողությունները չեն օգնի նրան, ով իր հոգում հավատ չունի։ Իսկ նրանք, ովքեր հավատում են, հավատար են աստծո առաջ։ Այստեղից էլ ծնունդ էր առնում հավատարության բուրժուական գաղափարը ընդհանրապես։ Վահառակներ աստծո նույնպիսի մի ապարատ է, ինչպիսին շաբաթ ոգիներով պարուրված լորդը։ Ենթակարգաբար, եթե նա անկեղծորեն հավատում է աստծուն, նույնքան արժանի է իրավության որքան տերը։

Այդ նոր ուսմունքը հետզհետե տիրապետում էր անգլիացիների ավելի ու ավելի լայն խավերին։ Նոր ազնվականներն ու ֆինանսիստները, նրանք, ովքեր շահագրգռված էին իրենց աշխատությունը կապիտալիստական ոգով գործադրելու մեջ, յուրացի վարձակալներն ու խանութպանները, ենթավարպետները ու գյուղական մշակները դարձան «պուրիտաններ» (լատիներեն purus-մաքուր), հանուն եկեղեցու մաքրության պայքարող մարտիկներ։ Այս խնդիրը նրանց թվում էր գլխավորը։ Կաթոլիկական ծիսակատարությունների շղթաներից կրոնի ազատագրման, եպիսկոպոսական իշխանության և եկեղեցական դատարանների վերացման մեջ շատերը տեսնում էին իրենց հիմնական խնդիրը։ դա հանախ նրանցից պահանջում էր հասարակական զարգացման առավել խոր, սոցիալական և քաղաքական պահանջները։ Իրենց պայքարի համար անհրաժեշտ կերպարները, փաստարկները լուսնդները նրանք քաղում էին Հին կտակարանից, որը դարձել էր նրանց սեփականությունը, հատկապես Հին կտակարանից պայքարի կոչող, սպառնացող, անհաշտվողական։ «Կրոմվելը և անգլիական ժողովուրդը,— գրել է Մարքսը,— իրենց հեղափոխության համար օգտագործեցին Հին կտակարանից փրկած առած լեզուն, կիրքն ու պատրանքները»[1]։

Անգլիական հեղափոխության սկիզբն ընդունված է համարել 1640 թ. նոյեմբերի 3-ը՝ երկարատև պառլամենտի բացման օրը։ Բուրժուազիան և նոր ազնվականությունը, որոնք ներկայացված էին այնտեղ, առաջին անգամ հանդգնեցին բացեիբաց հանդես գալ թագավորական մինիստրների կամայականությունների, ապօրինի հարկերի, անգլիկանական եպիսկոպոսական եկեղեցու իշխանության, արտակարգ դատարանների դեմ։ Իրենց

[1] Маркс К. и Энгельс Ф. т. 8, с. 120

www.a-pdf.com

պրեսբիտերական հեղափոխություն էին։ Երբեմն նաև լայն զանգվածների վրա։ որպես գաղափարական առանձնապես փոքր արտահայտվեց այն։ Սանտրիրքի գրքում։ ինչ ինքը ժողովրդը, հավատարիմ մնալով իր հայրենի չունչի վրա, 1641 թ. մայրին Կարլոս I-ին ստիպեց ստորագրել իր Ֆանչիրքի մահվան դատավճիռը։ Հենց ինքը ժողովրդը Միլիան թաքցրեց պատրամենտական հինգ ատյանների և թույլ չտվեց նրանց բանտարկել 1642 թվականի սկզբին։ Եվ այն պատերազմը, որն արքան սկսեց պատրաստել դեմ նույն այդ ատյանը, ամենից առաջ ատանրագում էր անգլիական ժողովրդի դեմ։

Առաջին բուրժուական պատերազմը տուաքերին ցուցադրեց անգլիական հեղափոխության համաժողովրդական բնույթը։ Նոր տիպի բանակը, որն ստեղծվեց նշանակալից չափով շնորհիվ Կրոմվելի եռանդի ու տաղանդի, հեղափոխության այդ փուլում իսկական ժողովրդական բանակ էր՝ ոգեշնչված ազատության ու արդարության իդեալներով։ Դա իր մեջ միավորել էր ամենադեմոկրատական այլազան ուժերը, և Կրոմվելի մեծագույն ծառայությունն այն էր, որ նա կարողացավ համատեղել իր շահերը այդ համաժողովրդական շարժման հետ, կարողացավ դառնալ հեղափոխական բանակի առաջնորդը և նրան դեպի հաղթանակ տանել ի հեճուկս միանգամայն անվճռական, միապետության հետ դիջողամտության հակված հրամանատարության։ Արդեն արդեն պատերազմի բնթացքում հեղափոխական ճամբարում ի հայտ էին եկել տարաձայնություններ։

Քանի որ այն հեռավոր ժամանակներում մարդկանց զգացմունքներն ու մտքերը, էնդեմի արտահայտությամբ, բացառապես անվում էին կրոնով, ուստի և հակասությունները պատրամենտական ճամբարում նույնպես ի հայտ եկան որպես կրոնական հակասություններ։ Ունեոր փաճառականները, Միլիի գրամատները, խոշոր հողատերերը, որ հակված էին միայն չափավոր կիսատ-պուտ բարենորոգումներին, ճանաչում էին իրենց որպես պրեսբիտերներ[1]— օրթոդոքսալ կալվինիստներ, պետական եկեղեցու և սահմանափակ միապետության կողմնակիցներ։ Նոր ազնվականության միջին խավերը, ինչպես փաճառականները, ոչ մեծ արհեստանոցների և մանուֆակտուրաների տերերը, մանր իրանուիպանները, ենթավարպետները, ազատ գյուղացի յոմենները ինդեպենդենտներ էին, այսինքն՝ անկախներ, որոնք պահանջում էին, որ պետությունը չպետք է միջամտի կրոնի գործերին և հանդես էին գալիս հանուն հավատի լայն հանդուրժողության։ Ինդեպենդենտների խավին էր պատկանում նաև Կրոմվելը։

---

[1] Հունարեն «presbyteros» բառից՝ ծեր, խնամակալ, հոգևոր հայր։

Պրեսբիտերները միասում էին եպիսկոպոսական իշխանություններ և իրենց պաշտամունքի ազատավորներ ճանաչում էին եկեղեցական համայնքի կողմից ընտրված պրեսբիտերներին՝ հոգևոր հայրերին։

www.a-pdf.com

Սակայն ինդեպենդենտները միասնական չէին։ 1647 թ. ամ[illegible]
[illegible]ությամբ ի հայտ եկան աջերն քաղաքական, և ոչ թե
[illegible]ական տարբերությունները մեծաքան ինդեպենդենտների,
[illegible] գրանդների, ինչպես ծաղրանքով անվանում էին նրանց իս-
[illegible]ական եղանակով, և լևելլերների միջև, որ անգլերեն նշանա-
[illegible]ում է «հավասարարներ»։ Գրանդները, որոնց թվին պատկանում
[illegible] բարձր սպայությունը, ուրեմն և՝ նոր ազնվականության
[illegible]ել պատվարժան, առավել ունևոր ներկայացուցիչները,
[illegible] իրենց, Կրոմվելի նման դեմոկրատներ չէին։ Նրանք հանդես
[illegible] գալիս երկիրը ֆեոդալական կարգերից վճռականորեն մաքրել-
[illegible] ուզում էին, բայց այդ մաքրումը մտածում էին անց կացնել միա-
[illegible]կությամբ, միայն ի շահ իրենց դասակարգի։ Ժողովրդական զանգ-
[illegible]վածներից նրանք վախենում էին և բնավ էլ չէին ձգտում բավա-
[illegible]արել նրանց կարիքները կամ քաղաքական իրավունքներ տալ։
[illegible] լևելլերները՝ ընդհակառակը, ձգտում էին լայն դեմոկրատական
[illegible] փոփոխումների նրանք հանդես էին գալիս հանրապետական
[illegible]ություններ հիմնելու, համընդհանուր ընտրական իրա-
[illegible]ի, ամենամյա միաձայնությամբ պառլամենտներ ընտրելու օգ-
[illegible]։ Լևելլերներին աջակցում էին հասարակ մարդկանց լայն
[illegible]ները, և հենց ի շնորհիվ զանգվածների այդ հեղափոխական
[illegible]ման՝ գրանդները համարձակվեցին կատարել մինչ այդ
[illegible]ությանը անհայտ մի ակտ նրանք դատեցին ու մահա-
[illegible]ի ենթարկեցին թագավորին, իսկ այնուհետև Անգլիայում
[illegible]ակեցին հանրապետություն։ Էնգելսը գրել է «Բացառապես
[illegible] շնորհիվ միջամտության յոմենների և քաղաքային պլեբե-
[illegible]ական տարրերի, պայքարը հասցվեց վերջին, վճռական վախ-
[illegible]ն և Կարլոս I-ը շնորհ բերեց կառափնարան»[1]։

Սակայն այդ «հեղափոխությամբ» էլ բուրժուազնվականա-
[illegible] առաջնորդները սահմանափակվեցին։ Օգտվելով ժողովրդի
[illegible]ներից և անցնելով իշխանության գլուխ, նրանք ամե-
[illegible] առաջ սկսեցին հոգ տանել իրենց անձնական, ներդասակար-
[illegible]ին շահերի մասին։ Հարստանալը այժմ դարձավ նրանց աստ-
[illegible]։ Մի կողմ թողնելով նախկին իդեալները, մոռացության
[illegible]ով սեփական դեմոկրատական լոզունգները, նրանք հանրա-
[illegible]ական բանակը ի սպաս դրին գրավելու ուրիշի հողեր, ամե-
[illegible] առաջ Իռլանդիան, ապա Շոտլանդիան։ Իռլանդիայի նվա-
[illegible]մը եղավ այն ապառաժը, որին զարնվելով, Մարքսի արտա-
[illegible]ությամբ, ջախջախվեց անգլիական հանրապետությունը։
Այն ունեցավ երկու կարևորագույն արդյունք, նախ հանգեցրեց
[illegible]ական հողերի կողոպտմանը, դրանց հաշվին նոր դասա-
[illegible]ների հարստացմանը, որոնք վերջին հաշվով վերածվել էին
[illegible]հեղափոխական ուժի և հասցրեց Ստյուարտների վերա-

Маркс К и Энгельс Ф, Соч т 22 с 308

www.a-pdf.com

կանգնմանը։ Երկրորդ՝ Իռլանդիայի կողոպտումը ժողովրդական հեղափոխության բանակը վերածեց զավթիչների և անսկզբունք վարձկանների, որոնք ծարավի էին հարստության։ Ժողովրդի հեղափոխական նախաձեռնությունը, այսպիսով, լիզոքացվեց։

Իսկ լևելլերնե՞րը։ Սրանք նույնպես պարտություն կրեցին։ Սրանց իդեալները բուն էության մանրբուրժուական էին, սահմանափակ. սրանք հռչակում էին միայն քաղաքական հավասարություն։ Լևելլերները վճռապես երես էին թեքում նրանցից, ովքեր ձգտում էին ունեցվածքի հավասարության։ Նման շարժում, որ ոգեշնչված էր համընդհանուր աշխատանքի և սեփականության հանրայնացման սոցիալիստական գաղափարներով, «նոր համաշխարհային կարգերի» գաղափարներով որտեղ չկա շահագործում նույնպես գոյություն ուներ անգլիական հեղափոխության մեջ։ Դրա կրողներն էին դիգերները և սրանց առաջնորդը՝ Ջերարդ Ուինսթենլին։ Ի դեմս սրանց իրեն ի հայտ էր բերում ինքնուրույն շարժումը այն դասակարգի, որը քիչ թե շատ զարգացած նախորդն էր ժամանակակից պրոլետարիատի»[1]։ Սակայն այդ շարժումը շափազանց խակ էր։ Եվ այն փաստը, որ լևելլերները վճռականորեն մերժում էին իրենց մասնակցությունը դրան, իբրև ընդգծելով իրենց զուտ քաղաքական «հավասարարականությունը», հանդեցրեց բուն ժողովրդական դյուրացիական-պլեբեյական ճամբարի պառակտմանը և պայմանավորեց դրա պարտությունը։ Վերջին հեղափոխական ակտը, որ ժողովրդական զանգվածների ճնշման տակ կատարվեց Կրոմվելի կողմից եղավ երկարատև պառլամենտի թափթփուկների հալածումը պառլամենտ, որը վերածվել էր շահախնդրական օլիգարխիական մի խմբակցության։

Սակայն դրան հետևեց էլ ավելի կարուկ շրջադարձ դեպի աջ։ «Սրբազանների պառլամենտի» վրա անհաջող էքսպերիմենտից հետո, պառլամենտ, որ գունարված էր քաղաքականությունից և պետական գործերից վատատեղյակ ինդեպենդենտական կրոնական համայնքների ներկայացուցիչներից, Կրոմվելը տեղի է տալիս բարձր սպայության ճնշման առաջ և համաձայնում է Անգլիայում պրոտեկտորատի հաստատմանը, որն, ըստ էության, իրենից ներկայացնում էր բուրժուազիայի և նոր ազնվականության ռազմական դիկտատուրա։ Այդ դասակարգերն այժմ ձգտում էին իրենց ձեռքում պահել իշխանությունը և Կրոմվելյան սուրը հակադրել միապետության վերահաստատման վտանգին՝ մի կողմից, և հեղափոխական վերափոխումները շարունակելու ժողովրդական զանգվածների փորձերին՝ մյուս կողմից։ Հարկադրված լինելով մշատան պաշտպանվել այդ երկու կողմերից,

---

[1] Маркс К и Энгельс Ф Соч т 19 с 191

www.a-pdf.com

...ենկտորատը դառնում էր ավելի ու ավելի պահպանողական։ ...ի ներքում նա իրականացնում էր մի քաղաքականություն, հիշեցնում էր Հակոբ I և Կարլոս I Ստյուարտների քաղաքա-...ությունը. ձգտում էր դժգոհության յուրաքանչյուր փորձ, ...ի էր պառլամենտները, շտապում էր կորզում՝ հաճախ ...նելով օրենքները, բաժանում էր մոնոպոլիաներ, խրախու-...ում էր հողերից գյուղացիներին հալածելը։ Իսկ արտաքին աշ-...խարհում նա չանում էր նվաճել Բրիտանիայի տիրապետությունը ...ների վրա, ձեռք էր բերում առևտրական արտոնություններ ...նգլիական վաճառականների համար մղում էր զավթողական ...ռազմներ, կողոպտում էր ուրիշի հողերը։

Այնուհանդերձ, այդ վարչակարգի դասակարգային հիմնա-...տարը ավելի ու ավելի էր նեղանում։ Ժողովուրդը բուրժուա-...դեմոկրատական հանրապետությունից երես էր դարձրել դեռևս ...9 թ. երբ Կրոմվելը ճնշեց լևելերական շարժումը, իսկ նոր ...ինականատերերը որ հարստացել էին ռոյալիստական և իռ-...ենական հողերի հաշվին, սկսում էին հակվել դեպի միա-...պետական իշխանությունը որպես ավելի «օրինական», կայուն ...ոգունակ լավագույնս արտահայտելու իրենց շահերը։ Պատա-...ական չէ, որ Կրոմվելին 1657 թ առաջարկեցին ընդունել թագը։ ...նա պատրաստ էր արդեն ընդունելու այդ թագը, բայց այն ...ները, որոնք ցանկանում էին զինվորական դիկտատուրա, ...ստիպեցին նրան պատասխանել հրաժարումով։ Նրա կյանքի ...ին տարիներին պրոտեկտորատի վարչակարգը մոտենում էր ...ուրման, և միայն Կրոմվելի անձնական հզոր հեղինակությունն ...պահպանում երկիրը նոր խառնակչություններից։ Նրա մահից ...ետո անցած՝ անգլիական սեփականատերերը, իրենց բուն էու-...յամբ այդ պահպանողականները, զիմեցին դարերով փորձված ...ռեակտիվ կարգին։ Երկիր վերադարձան վտարված Ստյու-...ները։ 1661 թ հունվարի 30-ին, Կարլոս I ի գլխատման ...արելիցի օրը, Կրոմվելի աճյունը հանվեց գերեզմանից և ենթարկվեց անարգանքի։ Բուրժուական հեղափոխությունն ավարտ-...վեց։ Անցավ պատմության գիրկը։

Կանցնեն դարեր և մենք նորից կփորձենք հասկանալ Կրոմ-...վելին ներքնապես, հասկանալ նրա բնավորության հակասու-...թյունները, ուժն ու թուլությունը, հավատարմությունը իդեալնե-...րին և նահանջը դրանցից, դեմոկրատիզմն ու պահպանողական-...ությունը։ Ինչպե՞ս թափանցել այդքան բարդ, մեզ այդքան ոչ ...վան, այդքան ինքնատիպ այդ նշանավոր մարդու աշխարհը։ Ինչպե՞ս հասկանալ նրա հաղթանակներն ու վրիպումները, խղճի ...վատումներն ու կրքի պոռթկումները։ Խորամուխ լինենք նրա ...սերի ու նամակների մեջ, կարդանք ժամանակակիցների հի-...ացությունները ու կարծիքները նրա մասին, բծախնդիր ուշա-...դրությամբ ուսումնասիրենք նրա բազմաթիվ կենսագրական-...ները, խթանենք մեր երևակայությունը՝ և այնժամ կխոսի նա ...մեզ հետ, որպես կենդանի մարդ։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ I

ԾԱԳՈՒՄՈՎ ՋԵՆՏԼՄԵՆԸ

Ծագումով ես եղել եմ ջենտլմեն և ապրել եմ ոչ առանձնապես բարձր շրջաններում բայց և ոչ անհասության մեջ։

Կրոմվել

Տղան ծնվեց 1599 թ. ապրիլի 25-ի գիշերվա ժամը երեքին մի համեստ, բայց բարեխնամ տան մեջ, գավառական Հանթինդդոն քաղաքի ծայրամասում, որը գտնվում է Միջին Անգլիայում։ Նրա ծնունդը ոչնչով աչքի ընկնող չէր նա անգամ առաջնեակը չէր։ Ռոբերտ և Եղիսաբեթ Կրոմվելները ունեին արդեն չորս երեխաներ։ Ավանդույթի համաձայն վրա հինգերորդ օրը, ապրիլի 28-ին, աղջիկն կնքեցին քաղաքի եկեղեցում և անվանակոչեցին Օլիվեր՝ ի պատիվ հորեղբոր՝ պարոն Օլիվեր Կրոմվելի, որը բազմաթիվ ծառաների ուղեկցությամբ որպես կնքահայր ներկա էր։

Հորեղբայրն այդ սքանչելի մարդ էր։ Նա լիիրավ հպարտանում էր իր, ճիշտ է, ոչ այնքան հնամենի, բայց տոհմիկ և փառավոր ծագումով։ Նրա նախնիները Ուելսից եկածներ էին։ Նրանք բարձրանում էին Թյուդորների թագավորական տան բարձրացման հետ միասին։ 1540 թ. մայիսի մի ջինջ առավոտ Հենրիխ VIII-ի թվով չորրորդ ամուսնության ճոխ հանդեսում գլամորգհանշիրցի էսքվայր Ռիչարդ Ուիլյամսը, ընդունելով իր հորեղբոր՝ թագավորական կանցլեր Թոմաս Կրոմվելի անունը, ըստ ամենայնի աչքի ընկավ ասպետական գինամրցման մեջ և գոհացրեց ծերացող ցանկասեր աչքը իր սրընթաց հարձակումներով և խիզախ պաշտպանությամբ։ Որպես պարգև էսքվայր Ռիչարդ Ուիլյամսին (այսինքն Կրոմվելին, ճերմակ, թավշյա թիկնոցով) շնորհվեց ասպետի տիտղոս։ Ինքը՝ թագավորը զգացվելով ասաց «Նախկինում դու իմ Դիկն էիր, այժմ դու կլինես իմ դիամանտը»[1]— և նվիրեց նրան շողակն մատանի։ Այսպես են ասում հնագույն ժամանակագիրները։

Արքայի հերթական ամուսնությունը դարձյալ անհաջող դուրս եկավ, և այն գլուխ բերող կանցլեր Թոմաս Կրոմվելը երկու ամիս անց գլխատվեց Թաուեր-հիլում, որպես հերետիկոս և պե-

---

1 Դիամանտ (ֆրանս.)— ալմաստ։

www.a-pdf.com

...յան դա լաճան։ Թագավորի շարությունը, սակայն, 22-ամյա Ռիչարդ Ուիլյամսին, որը կարողացել էր օգտակար լինել թագավորին որպես սըր Կրոմվելի նա ճիշտ ժամանակին էր կա... հարությանը հայտնել կաթոլիկների կողմից պատրաստվող դավադրության մասին և մասնակցություն ունեցավ նրա ջախջախմանը, իր սրով ծառայեց արքային Ֆլոդենիաֆինելդի դեմ ...ած պատերազմում ամուսնացավ Լոնդոնի քաղաքապետի ...նա հետ և կարգին հարստացավ փթթող մենաստաններից։ ...ղիմաց նա, ի հավելումն ազամանդի մատանու, պատկա... կալվածքներ ստացավ Լոնդոնում Ուելս և Հանթինգդոն ...հությունում։ Այդ կալվածքները նույնպես ստացվեցին ...նքերի սեփականությունն էին եղել, որոնք այնքան ջանադ...շար ավերում էր նրա հորեղբայրը։

Ռիչարդի որդին՝ սըր Հենրի Կրոմվելը բազմապատկեց հոր ...ությունը։ Նա Ուզի ափին գտնվող Հինչինբրուք կալվածքում կա...ուցեց մի պերճաշուք ամրոց, այն զարդարեց անգրծովյան գո...ելիներով, նկարներով և սկահակներով։ Նա ապրում էր ...ուրբ, հյուրընկալ, հավատարիմ բարեկամն էր անգլիական ...ղեցու և ամենից ավելի խոնարհվում էր Նորիսարեթ թագուհու ...աջ։ Սա նրան շնորհեց ասպետի կոչում և շնորհ արեց Հին...ինբրուք այցելել, մի բան, որը դրանից հետո դեռ երկար ժա...ամակ հիշում էր ամբողջ շրջակայքը։ «Մսկե ասպետին», ինչ...ա հորջորջում էին սըր Հենրիին, սիրում էին պերճախոսության ...առատաձեռնության համար։ Նա պառլամենտի անդամ էր, ...ինբրիջի և Հանթինգդոնի շերիֆը։ Եվ դեռ Լոնդոնի քաղաքա...ետի աղջիկն էլ նրան կին դարձավ։

Իր երեխաներին (վեց որդիներ և հինգ դուստրեր) գյուղական մագնատը քիչ կարողություն չթողեց։ Հինչինբրուքը ժառան...ավագ որդի Օլիվերը, նույն այն հորեղբայրը և կնքահայրը ...Ֆ. ծնված մանկիկի։ Սա ընդօրինակել էր հոր անկաշկանդ ...վկակերպը, առատաձեռնությունն ու հյուրընկալությունը, ...ա դուրկ էր նրա հաշվենկատությունից և հարստանալու ունա...ությունից։ Անվերջանալի, շքեղաշուք խնջույքներին Հինչին...ում հեռանում էին մի քանի օր անող բազեներով որսորդու...ները։ Մրցախաղերն ու դիմակահանդեսները հաջորդում էին ...մյուսին։ Հյուրերը անից անպակաս էին։

Մի անգամ սըր Օլիվերին հաջողվեց իր ամրոցում բնդունել ...ամայն առանձնահատուկ մի հյուր։ Նորմանդիայի թագուհու ...ետևում հիշատակի ոսկեհուռ արձանը մայր մ...ոտ ...ինա անմիջական ժառանգները չէր թողել, և անգլիա...ը անցավ շոտլանդացի Հենրի VI-ին՝ Մարիա Ստյուար...ի որդուն, որը մահապատժի էր ենթարկվել 1587 թվականին իր ...ակիր քրոջ դեմ մշատան խարդավանքների համար։

Եվ ահա 1603 թվականի ապրիլի 27-ին Հինչինբրուքի բնա...ները հեռվից նշմարեցին արքայական կառաջարը։ Հակոբ

www.a-pdf.com

VI ը, որը դարձել էր անգլիական Հակոբ I Շոտլանդիայից ու զափոխվում էր Լենդոն և ճանապարհին մի քանի օրով կանգ էր առել հանգստանալու և հյուրընկալվելու սըր Օլիվեր Կրոմվելի տանը

Որպիսի՞ փառահեղ շուքով հյուրասիր տանտերը կազմակերպեց այդ հանդիպումը: Ամբողջ գյուղը, սքանչելի պուրակը, դրա շրջակայքը, ձիանոցն ու շնանոցը, պահեստները ու ամբարները լեփլեցուն էին օրինակելի կարգ ու կանոնի Հանդիսությանը բավիրել էին Հանթինգդոնի և Քեմբրիջի բոլոր մեծատուն մարդկանցը: Պերճաշուք խնջույք իսպանական թանկագին գինով, երաժշտությամբ և նվագախմբերով ասպետական սրցամարտ գյուղի առջևի մարդաղեղնում՝ արքայական աչքին արժանի մի տեսարան, ազնվացնող եղջերվի որս՝ ոչինչ մոռացված չէր: Ծնցված արքան, մեծ գլխով ու ծուռ ոտքերով, փոքրիկ, թուլակազմ մի մարդ, տանտիրոջ մեջքին սուր կապեց՝ ասպետի կոչում շնորհելով նրան: Այդ ուրախ գյուղացիս նա իսկական արքայական նվերներ ստացավ. մի խոշոր ոսկյա թաս, զատարյուն ազատական նժույգներ, որոնցից սըր Օլիվերը շատ լավ գլուխ էր հանում, լավագույն որսաշների մի ոհմակ և որսի բազեների մի երամ: Ջէյմս մոռացել և շքախմբին ոսկին անհաշիվ թափվում էր պալատականների ափերի մեջ:

Այսպիսին էր սըր Օլիվերը: Նա չորեսներ փողը հաշվել մի բան, որով հարուցում էր կրտսեր եղբոր՝ Ռոբերտի ակամա հանդիմանանքը, որը ապրում էր իր համեստ՝ բայց բարեհնամ տանը Հանթինգդոնի ծայրամասում:

Ռոբերտ Կրոմվելը միանգամայն այլ սարդ էր: Սա նրանցից էր, ում այն ժամանակ անվանում էին պուրիտաններ և ովքեր իրենց ամբողջ նկարագրով տարբերվում էին պալատական մեծամեծներից և շեն ու շռայլ ապրող մագնատներից, որպիսին էր Օլիվերը: Այդ մարդիկ՝ պուրիտանները, հայտնվել էին Անգլիայում դեռևս Եղիսաբեթ թագուհու օրոք: Նրանք իրենց պահում էին տարօրինակ. գինի չէին խմում, չէին երգվում աստծու անունով, չէին պարում տոներին փողոցներում, թուղթ ու ճան չէին խաղում. նրանց դեմքերը արտահայտում էին սեհեռանություն և բարեպաշտություն: Նրանք շոր էին իրենց վարվեցողությամբ և ծլատ՝ արտահայտվելու մեջ: Նրանց խոսքերը միշտ համեմվում էին աստվածաշնչյան արտահայտություններով: Նրանք իրենց երեխաներին անվանում էին Հին կտակարանից վերցրած անուններով, հայտնվում էին փոքրիկ Երեմներ, Իսահակներ, Ռութներ... Պուրիտաններն ստրատքին տեսքով նույնպես խստիվ աչքի էին ընկնում խայտաբղետ ամբոխի մեջ: Նրանք հագնում էին հասարակ, սև, ճերմակ կտավե օձիքով առանց ժանյակների և այլ զարդարանքների զգեստ: Նրանք չէին հանդուրժում զվարճանքը, պարերը ծիծաղը (բացի բիբլիական սաղմոսներից), չէին այն-

www.a-pdf.com

թատրոն լէին մասնակցում մարզական խաղերին, որոնք համարվում էին որպես լիակատար մեղսագործություն, թեթևություն, սատանայական զբաղմունք։ Նրանք աշխատում էին սպասանց շատ և ջանադիր շատ և ջերմեռանդ աղոթում։

Նրանց հավատը եկել էր Ժնևից և կոչվում էր կալվինիզմ։ Ընդդիմանալով Հենրիխ VIII ի օրոք և բարդավաճելով Եղիսաբեթի ժամանակ, անգլիկանական եկեղեցին իր բազմաթիվ ծեսերով, երբ հնարավոր չէր լինում աշխատել (ուրեմն և՝ փող վաստակել), իր փարթամ ծիսակատարություններով, որոնց համար պահանջվում էր այնքան թանկարժեք շուրջառներ, սրբապատկերներ ու զարդեր (փող արժեցող), չէր գոհացնում այդ մարդկանց։ Այն պահպանել էր շափազանց շատ կաթոլիկական գծեր և՛ իր ներքին կառուցվածքում, և՛ ծեսերի շքեղության մեջ։ Պուրիտաններին, որոնք ցանկանում էին գործ անել և բազմապատկել իրենց սեփականությունը համեստ կալվածքներում, արհեստանոցներում կամ առևտրական գրասենյակներում, հարկավոր էր բոլորովին այլ տեսակի եկեղեցի՝ էժան, պարզ, ոչնչ նստող ավելորդություններից զերծ։

Աստվածաշունչը նրանց գլխավոր և հաճախ միակ գիրքն էր։ Լարգմանվելով անգլերեն և Ժնևի միաբանության ջանքերով տարածվելով Անգլիայում XVI դարի վերջին, այն պուրիտաններին վիթխարի սնունդ տվեց խորհրդածությունների, մեկնությունների, որոնումների համար։ Աստվածաշնչի մեջ կարելի էր գտնել պատասխանը յուրաքանչյուր հարցի, քաղել տասնյակ օրինակներ այս կամ այն միտքը հիմնավորելու համար, ընտրել ամենորեն մերկացնող կամ ոչնչացնող բառեր, որոնցով կարելի էր խոցել մինչև հոգու խորքը։ Հին կտակարանը սպառնում էր, նախազգուշակում, պայքարի կոչում։ Ուստի այն շատ ավելի մոտ էր պուրիտաններին, որոնց համար հասել էր ֆեոդալական աշխարհի դեմ պայքարի ժամը, քան Ավետարանն իր ամենաներող ոգով։ Հին կտակարանը նրանց համար դարձավ իմաստական հեղինակություն և ոչ միայն և ոչ այնքան հոգևոր գործերում, այլև աշխարհիկ՝ քաղաքական հասարակական կյանքում։

Կալվինիստների կարծիքով բոլոր մարդիկ բաժանվում են ընտրյալների՝ ի սկզբանե փրկության ու դրախտային երանության արժանացողների, և անիծյալների՝ դժոխային կրակների ստատապարտվածների։ Բայց հաստատապես իմանալ՝ ով է փրկվածների մեջ, ով՝ անիծվածների, այս կյանքում անհնար էր։ Մնում էր կռահումներ ու ենթադրություններ անել և աստվածային ողորմածության կամ անողորմության նշաններ տեսնել իրական մարդկային կյանքում։ Եվ պուրիտանները ենթադրում էին, որ արիպաշտությունը, խնայողությունը, ինչպես և գործում հաջողության հասնելը վկայում են ընտրյալ լինելու, աստվածային ողորմածության մասին։ Եվ ընդհակառակը. շռայլությունը, ան-

www.a-pdf.com

կանոն վարքը, սնանկությունը անհերքելի նշաններ էին այն բանի, որ մարդուն ապագայում սպասվում է գեհենը։

Այդպիսի մի հետևողական պուրիտան էլ իրեն համարում էր Ռոբերտ Կրոմվելը։ Նրա շրթունքները միշտ սեղմված էին լինում, դեմքը լուրջ էր, այն կրում էր մտահոգության և կենտրոնացվածության կնիք։ Այդպիսի մարդը միշտ պատասխանատվություն է զգում ընտանիքի առաջ, իր գործի նկատմամբ, իր աստծու հանդեպ։ Սակայն ձեռնոց նետելով ավագ եղբորը, նա վարում էր ընդգծվածորեն համեստ, գործարար կյանք։ Անասուն էր բազմացնում նախկին վանքապատկան, իսկ այժմ իրեն պատկանող արոտավայրերում, ցորեն էր ցանում և գարեջուր պատրաստում։ Նրա գործերը վատ չէին գնում. այն ժամանակ, երբ եղբայրը մսխեց ունեցվածքը և սնանկացավ, նա հարստացավ, նրա եկամուտները հասան տարեկան 300 ֆունտի և նա նվաճեց հարևանների հարգանքը։ Նրան վիճակված չէր մնալ անհայտության մեջ նա ընտրվեց պառլամենտի անդամ, ծառայում էր որպես հաշտարար դատավոր։

Նրա կնոջ անունը Եղիսաբեթ էր։ Աղջկական ազգանունը եղել էր Ստյուարդ, որը ոմանց հիմք էր տալիս հետագայում պնդելու, թե նա կապ է ունեցել Ստյուարտները արքայական տան հետ։ Հազիվ թե դա ճշմարիտ լիներ։ Եղիսաբեթը ծնվել էր Նորֆոլքցի մի հաջողակ ջենտլմենի ընտանիքում, որը, ինչպես և Կրոմվելները, հարստացել էր վանքերի վերացման շնորհիվ։ Որպես օժիտ կինը ամուսնու համար բերել էր տարեկան 60 ֆունտ ստեռլինգի ռենտա և գարեջրի գործարան։ Սրա եղբայր Թոմաս Ստյուարդը՝ փոքրիկ Օլիվերի մյուս հրևելի քեռին, համարվում էր հարուստ հողատեր և ապրում էր Իլիում՝ Քեմբրիջի դքսությունում։

Նա գեղեցիկ կին չէր. ոչ խոշոր թուխ աչքեր, երկար քիթ, լիքը այտեր։ Բայց հյութալի, լավ գծագրված շրթունքներն իրենց մեջ նրբություն էին թաքցնում, իսկ հայացքը կամային էր ու խելացի։ Լրացել էր նրա 34 տարին, երբ ծնվեց Օլիվերը։ Դրանից հետո ծնվեցին ևս հինգ երեխա։ Բայց ահա դժբախտություն պատահեց. երկու տղաները՝ Հենրին ու Ռոբերտը, մահացան մանուկ հասակում։ Օլիվերը մնաց վեց քույրերի շրջապատման մեջ, և նրա՝ իր թանկագին Նոլիի հետ էր մայրը կապել իր բոլոր հույսերը, իր ամբողջ սերը։ Նա անկասկած, ինչպես և իր ամուսինը, պատկանում էր պուրիտանական հավատին սիրում և մանրախնդրորեն վարում էր տնային տնտեսությունը, անձամբ կամ միստրիսի օգնությամբ սովորեցնում էր երեխաներին կարդալ ու աղոթքներ սերտել։ Նրա նկատմամբ, հավանորեն, կարելի կլիներ կիրառել լոնդոնցի մի պուրիտանի՝ Նեմի Ուիլինգթոնի խոսքերը, որն իր մոր մասին գրել է «Նա ծնողներին սաստիկ սիրում էր ու հնազանդ էր նրանց, սիրով ու բարությամբ էր լցված ամուսնու նկատմամբ, սաստիկ քնքշանք էր տածում դեպի երեխաները, նա սիրում էր ամենայն բարին և ատում լարն

www.a-pdf.com

ու թեթևամիտը։ Նա համեստության տիպար էր և շատ հաղվադեպ էր դուրս գալիս անից որևէ տեղ գնալու համար, բացի եկեղեցուց։ Երբ ուրիշները զվարճանում էին տոնական օրերին կամ մի այլ առիթով, նա ձեռքն էր վերցնում կարը և ասում «Ահա իմ զվարճանքը...»։ Աստված նրան օժտել էր երևելի խելքով և գերազանց հիշողությամբ։ Նա հիանալի ուսումնասիրել էր աստվածաշնչյան ավանդապատումները, ինչպես նաև բոլոր մարտիրոսների պատմությունները, և գիտեր լավ պատմել դրանք»։ Ի լրումն՝ Նզիսաբեթն ուժեղ բնավորության տեր էր և բավական օժտված խելքով, գործնականությամբ և ուշիմությամբ։

Ալսպիսի ընտանիքում էր մեծացել Կրոմվելը։ Շատ լեգենդներ են հյուսվել նրա մանկության մասին հետագայում, երբ նա արդեն իր ուսերին կրում էր փառքի ծանրությունը կամ անգամ ավելի ուշ՝ XVIII դարում, երբ նրա կյանքը վաղուց ի վեր պատմության սեփականությունն էր դարձել։ Խոսում էին, որ այն սենյակում, ուր նա ծնվել է, կախված էր գոբելեն Ահեղ դատաստանի և սատանայի դեմքի պատկերով՝ առաջին բանը որ նա տեսել էր լույս աշխարհ գալով։ Այնուհետև պնդում էին, որ վաղ մանկական հասակում, երազում թե կիսաբթուն, նրա աչքին երևում է ոմն վիթխարահասակ պատգամաբեր ու հայտարարում սա կդառնա Անգլիայի ամենամեծ մարդը, «թագավորի պես մի բան»։ Պահպանվել է զրույց մի կապիկի մասին, որը մանուկ Օլիվերին փախցնում է օրորոցից, երբ սա ծնողների հետ հյուրընկալված է եղել Հինչինբրուքում, և ի սարսափ ամբողջ ընտանիքի՝ նրան հասցնում է ամրոցի գագաթը։

Սակայն ամենից նշանավոր լեգենդը՝ դա զրույցն է չորսամյա Օլիվերի մասին, որը հանդիպել է երեքամյա արքայազն Կարլոսի՝ թագա Կարլոս I-ի հետ։ Որպես թե Հակոբի Հինչինբրուքում եղած ժամանակ, 1603 թվականի գարնանը, արքայազն Կարլոսը և փոքրիկ Օլիվերը սկսում են զվարճալի մի խաղ, իսկ այնուհետև սկսում են կռվել, ինչպես դա հաճախ է պատահում երեխաների հետ, և Օլիվերը (օ՜ մեծ նախանշանակ) արյունոտվելու չափ ջարդում է ապագա գահաժառանգի քիթը։

Թողնենք այդ լեգենդները իրենց հորինողների խղճին։ Ճշմարիտն այն է եղել, որ Օլիվեր Կրոմվելը ծնվել ու դաստիարակվել է Համնետ, բայց բարեխնամ պուրիտանական մի տան մեջ, գտնվելով մի փոքրիկ քաղաքի, որ ընկած էր ճահճոտ հարթավայրերի արանքում։ Տնից դուրս գալով՝ նա տեսնում էր լայնարձակ, ցածրիկ երկինքը, որ գրեթե միշտ ծածկված էր լինում ամպերով, տեսնում էր գմբեթները քաղաքի եկեղեցիների, որոնցից ամենամոտիկներից մեկը՝ սուրբ Հովհաննես Մկրտիչի եկեղեցին էին տանում նրան ամեն օր։

Հանթինգդոնը հենց իր իսկ կեբպարանքում ուներ ինչ-որ պուրիտանական բան։ Սրածայր տանիքներով հին, մռայլ տները

www.a-pdf.com

ձգվում էին խորդուբորդ ճանապարհի երկայնքով, որ տանում էր դեպի ցածրիկ բլուրներով պատված անծայր հարթավայրը։ Տնից անմիջապես այն կողմ սկսվում էին դաշտերն ու բանջարանոցները։ Արոտավայրերի ցանկապատերի եռևում ձգվում էին մարգագետինները և ճլմփացող ստրֆաճահիճները, որոնց միջով հոսում էր ցլատաս Ուզը միշտ մթամած ու տղմոտ հունով։ Արևը մայր էր մտնում մեգի մեջ, հաճախակի անձրևներ էին դալիս, ճահճային եղեգները աղմկում էին քամու տակ։

Տանը հայրը նրան դաստիարակում էր իր ոգով։ Երեկոները ընտանիքը հավաքվում էր բուխարու մոտ, իսկ վեցամյա տղան, նստած ցածրիկ աթոռակի վրա, հոր ծնկների մոտ, լսում էր ապշեցուցիչ պատմություններ և խստակրոն քարոզներ հաստափոր գրքից՝ նրանց կյանքի գլխավոր գրքից։ Մի քանի տեղեր դրանից հատկապես մխրճվել էին նրա գիտակցության մեջ։ «Վախեցիր, որդյակ իմ, աստծուց և արքայից,— կարդում էր հայրը։ — Անգամ մտովի մի չարախոսիր արքային, քանի որ երկնային հավքը կարող է տեղ հասցնել խոսքդ...»։ Աստծուց և ոչ պակաս հեռավոր, հեքիաթային արքայից պետք էր վախենալ վախենալ պետք էր և որոշ մարդկանցից՝ չարերից և ագահներից։ «Ծնունդ կա, որի առամները դաշույններ են, և ծնոտները՝ դանակներ, որպեսզի խժռեն այս աշխարհի խեղճերին և աղքատներին»։

Գիրքը սովորեցնում էր սատար կանգնել թույլերին և ինչ-որ անորոշ սպառնալիք էր տալիս ոմանց։ Բուխարիկի բոցերը թրմրեցնում էին հայացքը, աչքերը մեղմորեն փակում և փոքրիկ տղան ավելի ու ավելի էր ապավինում հոր ծնկներին։ Ականջներում զնգում, անգիտակցորեն մտապահվում էին խոսքերը. «Բաց արա շուրթերդ հանուն ձայնազուրկի և հանուն բոլոր որբերի պաշտպանության։ Բաց արա շուրթերդ արդարադատության և խեղճի ու աղքատի գործի համար... Սիրեցե՛ք արդարությունը, աշխարհի դատավորներ, շիտակ մտածեցեք տեր աստծու մասին և պարզ սրտով փնտրեցեք նրան...»։ Հոր ձայնը հնչում էր ավելի ու ավելի բարձր, ավելի ու ավելի լարված «Վա՛յ քեզ, ամայացնո՛ղ, որ չես ամայացվել, և կողոպտի՛չ, որ չես կողոպտվել։ Երբ վերջացնես ամայացումը, կամայանաս և դո՛ւ։ Երբ դադարեցնես կողոպուտը, կկողոպտեն և քեզ։ քանի որ Տոփեթը վաղուց ի վեր կառուցված է, այն պատրաստված է նաև թագավորի համար, այն խորն է ու լայն. նրա խարույկում շատ կրակ կա ու փայտ տիրոջ շունչը ծծումբի բոցի պես կայրի նրան.. »։

«Ի՞նչ բան է Թոփեթը— սթափվելով հարցնում էր տղան։ Եվ իմանում, որ հին Երուսաղեմի մոտ եղել է մի այդպիսի տեղ, որտեղ բնակիչները կրում-տանում էին իրենց աղբը և տյն մեռելների դիակները, որոնք անարժան են եղել հուղարկավորվելու։

www.a-pdf.com

Այնտեղ նրանց այրում էին և բոյերն ուղղակի նստած էին լեհերի կրակների։

Հասկանալի է, որ այդպիսի ընթերցումներից հետո ապրում էր վատ, տեսնում էր տանջալի երազներ։ Ֆիզիկապես նա ամուր երեխա էր, սիրում էր վազվզել, ընկնում էր քույրերի մոտից։ Բայց չուներ հավասարակշիռ բնավորություն, արցունքները հաճախ լցվում էին թափվում աչքերից։ Արտասովոր տպավորվող էր։ Գիշերները մանկական սենյակի աղջամուղջի մեջ նրա աչքին երևում էր երևալ մի վիթխարի կերպարանք, որը հին մարգարեների պես փառք կկանխատեսեր նրան։

Ճանապարհ օրերին նա ընտանիքով հյուրընկալվում էր Հինչինբրուքում իր հորեղբոր տանը, և ակամտես էր լինում միանգամայն այլ կյանքի՝ փարթամ, լիառատ, ցոփ։ Նրան տնտեղ լինելիս էր խաղալ մետաքսով և ժանյակներով պճնված աղջիկների՝ սրբ Օլիվերի որդիների հետ, մարգագետնում մերթընդմեջ կամ շրջիկ թատրոնի ներկայացումներ դիտել, ճաշակել համադամ կերակրատեսակներ։ Մեկ-մեկ էլ կարող էր հանդիպել հենց իրեն՝ Հակոբ թագավորին, որին դուր էր եկել կրոմվելյան պալատի հյուրընկալությունը։ Ինքը՝ հորեղբայրը հմայիչ և ուրախաձեռն իրենից ներկայացնում էր շեքսպիրյան Ֆալսթաֆի մի տարբերակը։ Նա բարձր քրքիջով դատապարտում էր արծաթի դավաթները, ոգին էր բոլոր խրախճանքների և մեկ էլ տեսար՝ հանիկին էր նվիրում մի որևէ արտասովոր իր։

Ասենք, մեծահասակների խոսակցություններից և մանր հանդիմանանքներից Օլիվերը շատ վաղ հասկացավ, որ այդ կյանքը, Հինչինբրուքի կյանքը թեպետ ձգող, բայց արտասովոր է։ Այն նրանց համար չէ», աշխատասեր, համեստ, խնայող մարդկանց համար չէ։ Նա վաղ սովորեց թեթև արհամարհանքով նայել ոսկեզօծ շրջանակներով այդ նկարներին ժանեկագործ հագուստներին, արծաթի սպասքներին։ Մի ուրիշ իդեալ էր բույն դնում նրա հոգում։

Երբ նա յոթ թե ութ տարեկան էր, հայրը նրան ուսման տվեց։ Հանթինգդոնի տարրական դպրոցը տեղավորված էր Կրոմվելների տնից ոչ հեռու, սրագագաթ տանիքով և բարձր գոթական պատուհաններով աղյուսե մի հին շենքում այն կառուցվել էր դեռևս XIII դարում։ Դա «աղատ» քաղաքային դպրոց էր, որ ստանում էր քաղաքային միավորման ղեկավարության տակ գտնվող և մայր տաճարի ուսումնական հաստատություններն այն ժամանակներում արդեն անհետացել էին։ Դպրոցում կար միայն մի դասասենյակ՝ բոլոր տարիքի երեխաների համար, և միայն մեկ ուսուցիչ։

Ուսուցիչն, ասենք, սովորական մեկը չէր։ Դոկտոր Թոմաս Բիրդը նշանավոր անձնավորություն էր քաղաքում։ Պուրիտանությամբ տոգորված Քեմբրիջի շրջանավարտը միաժամանակ

www.a-pdf.com

ծառայում էր որպես ծխական քահանա ուրեմն այն տարը Հովհաննես Մկրտիչի եկեղեցում, ուր այցելում էր Կրոմվելների ընտանիքը, և լատիններեն պիեսներ էր հորինում աստվածաբանության թեմաներով։ 1597 թվականին լույս տեսավ նրա «Աստծո պատիժների թատրոն, թարգմանված ֆրանսերենից, ավելի քան 300 օրինակով հանդերձ» վերնագրով գիրքը։ Դրանում ապացուցվում էր, որ բոլոր իրենց մեղսագործությունների համար մարդիկ արժանի պատիժ են կրում արդեն իրենց երկրային կյանքում։ Բազում օրինակներով ամրապնդվում էր այդ գաղափարը։ Մարդկային ամբողջ կյանքը պատկերվում էր որպես անդադրում պայքար աստծո և խավարի ուժերի միջև և միայն աստծո ընտրյալները, որոնք ապրում են համաձայն նրա օրենքների, հաղթանակում են այդ պայքարում։

Առանձնահատուկ ուշադրություն էին դարձվում թագավորներին ու տիրակալներին՝ «մեղանչման առավել հակվածներին» և ուղղվելու դժվար ենթականերին։ Գլուխներից մեկը հատկապես նշում էր, թե «որքա՜ն հազվադեպ են բոլոր ժամանակներում հանդիպում բարի տիրակալներ»։ Մի ուրիշում ասված էր, որ այս աշխարհի տիրակալները, նույնիսկ ամենահզորներն ու մեծերը, չեն խուսափի իրենց անօրինականությունների համար պատժից։ Աստված պատժում է առանց դեմքին ու դիրքին նայելու։ Նա օգնում է և՛ աղքատին, և՛ հարուստին։ Ինչ վերաբերում է երկրային արքաներին, ապա նրանք բարձր չեն օրենքից։ Նրանք ենթակա են օրենքին, որ հիմնված է իրավացիության և արդարության վրա։ Անհամապատասխան է աստվածային ու երկրային օրենքներին, գրում է Բիրդը, եթե թագավորը լափից ավելի հարկեր է դնում ժողովրդի վրա, եթե նա խլում է ունեցվածքը իր հպատակներից։

Դոկտոր Բիրդը շուտով դարձավ Կրոմվելների ընտանիքի բարեկամը։ 1616 թվականին նա ծերունի սըր Օլիվերին նվիրեց իր նոր ստեղծագործությունը, որն էլ ապացուցում էր, որ Հռոմի պապը ոչ այլ ոք է, քան հենց հակաքրիստոնյա։ Այդպիսի ուսուցչի աղդեցությունը վիթխարի էր։

Դոկտոր Բիրդը ավանդույթի համաձայն Օլիվերին և նրա մյուս հասակակիցներին սովորեցնում էր կարդալ այբբենարանը և առաջին անգլերեն գրքերը՝ սաղմոսների չափածո փոխադրումները, Ավետարանը Կատեխիզիսը, աղոթագիրքը։ Հետագայում դրանց միացավ լատիներենը. առակների թարգմանությունը, Ցիցերոնի ճառերը, Օվիդիոսը, Վերգիլիոսը և, վերջապես, Պլավտիոսը, Հորացիոսը, Յուվենալիսը։ Երեխաներին ուսուցանում էին թվաբանություն և երկրաչափություն տրամաբանություն և ճարտասանության նախագիտելիքներ, նաև հունարեն։ Դոկտոր Բիրդը, դրանից բացի, ստեղծել և իր աշակերտների հետ խաղում էր բարոյախոսական պիեսներ։

Օլիվերն իր ուսուցչին տեսնում էր ոչ միայն դպրոցում կր-

www.a-pdf.com

բակի օրերին նա իրենց ողջ ընտանիքի հետ գնում էր եկեղեցի պատվարժան դոկտորի քարոզը լսելու։

Քարոզը պուրիտանի համար գլխավորն է եկեղեցական արարողության մեջ։ Նրանք մի առանձին նշանակություն չէին տալիս աղոթքի երգեցողությանը, ծեսերին, խորհուրդներին՝ «պապական կռապաշտության» այդ մնացորդներին։ Այլ, ուրիշ լան է քարոզը։ Նա խոսում է այսօրվա մասին, այն մասին, ինչը կարևոր է յուրաքանչյուր ունկնդրի համար աստծու նկատմամբ մարդու վերաբերմունքի և մարդու՝ իր իսկ նմանի նկատմամբ վերաբերմունքի մասին։ Դրան ավելացրած, գավառներում քարոզը միակ միջոցն էր վերջին նորությունները իմանալու։

Օլիվերը տեսնում էր, թե որպիսի ուշադրությամբ է հայրը լսում քարոզը։ Նոր արքան չէր արդարացրել ոչ մեկի սպասումները։ Նա չէր ճանաչում և չէր սիրում այն երկիրը, որը նրան բախտ էր վիճակվել ղեկավարելու։ Նրա տրակտատները թագավորական իշխանության աստվածային ծագման և օրենքից բացարձակ անկախ լինելու մասին, որոնք նա շարադրել էր դեռևս Շոտլանդիայում, ոչ մեկի համակրանքը չէին հարուցում։ Անգլիական պառլամենտը տարեցտարի ուժեղանում էր։ Նրա անդամները, որոնց մեջ քանի գնում ավելի շատ տեղ էին գրաղեցնում նոր ազնվականները[1] Ռոբերտ Կրոմվելի նման մարդիկ, էին դանկանում հաշտվել ինքնակալության հետ։

1605 թվականին քարոզիչը եկեղեցում լուտանքներ էր տեղում լուսականներին վրա, որոնք պառլամենտի շենքի տակ տեղադրել էին 36 տակառ վառոդ, որպեսզի հօդս ցնդեցնեին թագավորին լորդերի պալատի հետ միասին։ Նա օրհնում էր ստորին պալատի անդամներին, որոնք հրաժարվում էին քվեարկել նոր հարկերի դեմ, մինչև որ թագավորը չհաստատեր համայնքների սալաոի իրավունքները և չհրաժարվեր ինքնակալական քաղաքականությունից։

Իհարկե, դոկտոր Բիրդը զգուշանում էր ուղղակի դատապարտել արքային իր ամբիոնից՝ այլապես նրա բանը վատ կլիներ։ Բայց բավական էր, որ մեջբերում արվեր պառլամենտում Հակոբ արտասանած ճառը, և ունկնդիրների համար ամեն ինչ պարզ էր դառնում «Դատել այն մասին, թե աստված ինչ կարող է և ինչ չի կարող, աստվածանարգում է։— Հակոբն ասես թե պա-

---

[1] Նոր ազնվականներ կամ ջենթրիներ Անգլիայում անվանում էին ֆեոդալական դասի այն ներկայացուցիչներին, որոնք, ի տարբերություն հին հողատիրական արիստոկրատիայի, իրենց տնտեսությունը վերակառուցել էին նոր, կապիտալիստական հենքի վրա. նրանք ցանկապատում էին համայնքի հողերը և ոչխարներ էին պահում, իրենց կալվածքներում լայնորեն կիրառում էին վարձու աշխատանքը, հողը տալիս էին վարձով, ներդնում էին ագրոտեխնիկական բարելավումներ։ Նրանց տնտեսությունը սերտորեն կապված էր շուկայի հետ, իսկ նրանք իրենք հաճախ հանդիսանում էին նաև քաղաքներում ապիտալիստական ձեռնարկությունների սեփականատերեր։

www.a-pdf.com

տատիանում էլ պուրիտաններին, որոնք հենց միայն նրանով էին զբաղված, որ կարդում, վերընթերցում էին, մեկնաբանում էին սուրբ գիրքը — Իսկ դատողություններ անել այն մասին, թե ինչ չի կարող անել թագավորը՝ խռովություն է։ Ես թույլ չեմ տա դատել իմ իշխանության մասին։ Միապետական կարգը աշխարհիս երեսին ամենաարդար կարգն է։ Միապետներն աստծու փոխարքաներն են։ Աստված ինքը նրանց աստվածներ է անվանում»։

Այդ խոսքերի դիմաց ինչպիսի՞ ոչնչացնող պատասխան կարող էր գտնել քարոզիչն Աստվածաշնչում։ «Բայց երբ նա նստի իր թագավորական գահին, պետք է դուրս գրի իր համար օրենքի ցանկը և թող կարդա նա այն իր կյանքի բոլոր օրերին և ձգտի կատարել այդ օրենքի բոլոր կետերը, որպեսզի չդողանա նրա սիրտը իր եղբայրների առաջ և որպեսզի չշեղվի նա օրենքից ոչ աջ, ոչ ձախ, որպեսզի շատ օրեր կենա իր գահի վրա»։

Թագավորը չստանալով պարլամենտի համաձայնությունը նոր հարկեր մտցնելու մասին և ցանկանալով լցնել հավերժ դատարկ գանձարանը, բռնագանձում էր անօրինական տուգանքներ, մաքս էր դնում ներմուծվող և արտահանվող ապրանքների վրա։ Փողով ծախում էր պետական պաշտոններն ու տիտղոսները, բաժանում էր արտոնագրերն ու մենաշնորհները, և դրա համար էլ քարոզիչը գտնում էր իր ամպագոռգոռ սպանիչ խոսքը «Նողկալիությունը թագավորների համար ապօրինի գործ է, որովհետև ճշմարտությամբ է հաստատուն գահը»։

Իսկ ի՞նչ ասես արքունիքի շռայլ կյանքի մասին, անվերջանալի պարերի, անպատշաճ դիմակահանդեսների (ինքը՝ թագուհին, ներկայանում էր պարահանդես դեմքին ու ձեռքերին մուր քսած), փառահեղ որսորդությունների մասին, հրավառությունների մեծատոհմիկ սիրեկանների մասին, որոնց վրա ծախսվում էին հազարավոր ֆունտեր։ Եվ հին եկեղեցու կամարների տակ որոտում էին կրակոտ խոսքեր և գայրույթով լցնում ունկնդիրների սրտերը «Ինչպես պոռնկուհի դարձավ հավատարիմ մայրաքաղաքը, ոստանն արդարության։ Ճշմարտությունն էր բնակվում այնտեղ, իսկ հիմա՝ մարդասպաններն են։ Արծաթդ այրուք դարձավ, գինիդ եղծվեց ջրով, իշխաններդ՝ օրինազանց և գողերի գործակիցներ, նրանք բոլորը նվեր են սիրում, վազում են փառքի ետևից, նատար չեն որբերին ու լքյալներին»։

Աստվածաշունչը կարելի էր մեկնաբանել զանազան կերպ, ամեն ոք այնտեղ կարող էր գտնել իր իրավացիությունը հաստատող ապացույցներ։ Բայց առաջներում այդ անգնահատելի զենքից օգտվում էին միայն ուսյալները, լատիներեն իմացող եկեղեցու հայրերը և աստվածաբանները նրանք էլ այն մեկնաբանում էին հենց հօգուտ միապետների և խոշոր լենդլորդերի, որոնք պաշտպանում էին նրանց։ Այժմ սուրբ գիրքը դուրս էր եկել նրանց ազդեցությունից և դարձել մասսաների սեփականությունը։ Ամեն ոք, ով կարող էր կարդալ, ազատ էր հին տեքս-

www.a-pdf.com

տերը մեկնարանելու այնպես ինչպես իրեն ճիշտ էր թվում։ Եվ աճում էր կամավոր քարոզիչների թիվը, և Հին կտակարանի մարգարեների բոցաշունչ ու անհաշտ խոսքերը ի ապաս դրվեցին հօգուտ նոր, վեր բարձրացող աշխարհի։

Երբեմն Օլիվերը տեսնում էր դոկտոր Բիրդին հորեղբոր կամ հոր տանը և լսում էր նրա համոզչության ուժով լեցուն ճառերը։ Սրտի թրթիռով նա սկսել էր հասու լինել, որ աստված մի վերերկրային հեռավոր ուժ չէ, որը ծածկվել է երկնքում՝ ամպերից այն կողմ և սպասում է մարդու մահվանը, որպեսզի կարդա նրան իր դատաստանը։ Դոկտոր Բիրդի աստվածը ընդհակառակը, կրքոտ հետաքրքրասիրությամբ հետևում էր մարդկանց յուրաքանչյուր արարքին, նրանց ոգու և խղճի յուրաքանչյուր շարժմանը։ Հենց որ մի բան պատահեր, նա անմիջապես միջամտում էր նրանց կյանքին, իրախուսելով բարեպաշտներին, անկթորեն պատժելով չարերին և դաժաններին։ Նա օգնում էր կռվող բանակներին, կործանում դահիրը անարժան տիրակալների և անհերևույթ մասնակից լինում յուրաքանչյուր մարդու կյանքի ամենաառօրյա իրադարձություններին։

Այդ աստվածն էլ հենց դարձավ Օլիվերի աստվածը։ Մինչև իր կյանքի վերջին օրերը նա համոզված էր, որ նախախնամությունն ինքն է ղեկավարում աշխարհը, և այն ամենի մեջ, ինչ կատարվում էր իր հետ, փնտրում էր ինչ-որ ի վերուստ տրված նշան՝ աստծու իրախուսանքը կամ հանդիմանանքի դրսևորում։ Ինչպես իր ծնողները, ինչպես պուրիտանների մեծ մասն այն ժամանակվա Անգլիայում, նա ևս աշխարհն ընկալում էր իբրև անընդհատ պայքար աստծո և սատանայի միջև, Քրիստոսի, որի կողմում կանգնած էին նրա հայրը ու նրա ուսուցիչը, և «անարատության մամոնայի», որին ծառայում էին թագավորը, episkոպականներն ու եպիսկոպոսները։

Օլիվերը սովորում էր ոչ փայլուն, թեպետև լատիներենը նա յուրացրեց այնքան, որ իր լորդ-պրոտեկտոր եղած ժամանակ սպատորեն բացատրվում էր օտարերկրյա տերությունների դեսպանների հետ։ Սակայն հախուռն անհավասարակշիռ բնավորությունը խանգարում էր նրան լինել նստաջան։ Նա, իհարկե, չասյլորեն տուրք էր տալիս սովորական տղայական զվարճություններին։ Աշխույժ խաղերում նա հաջողության էր հասնում, ուժեղ էր, լավ վազող, վաղ սովորեց ձիավարել։ Սիրում էր շուն, սրսի բազեներ, խաղում էր գնդակ, կեգլի, իսկ երբեմն էլ հասակակիցների խմբի հետ պրոհում ուրիշի խնձորի այգիների վրա։ Դոկտոր Բիրդը իր հին բարի սովորության համաձայն ձեռքից բաց չէր թողնում ճիպոտից օգտվելու առիթը և Օլիվերին հաճախ էր դրանից բաժին հանում։ Բայց տղան հաճախ ընկղմվում էր մտայլության մեջ, կորցնում էր հետաքրքրությունն ամեն ինչի հանդեպ, աչքերից առանց պատճառի թափվում էին արցունքները։ Դրանց փոխարինելու էր գալիս ծիծաղելու սրամտությունը։

www.a-pdf.com

թյան անակնկալ բոնկումը կամ նույնքան անակնկալ զայրույթի պոռթկումը։ Մոր գործը սրա հետ շատ էր դժվար։

Ֆանդոթ տարեկանին մոտ Օլիվերը բոյ քաշեց, դարձավ բարձրահասակ, թիկնեղ մի պատանի։ Գեղեցկությամբ նա չէր փայլում, կրում էր հասարակ գյուղական զգեստ և հաղիվ թե որևէ բանով գանազանվեր իր հասակակիցներից, որոնք եկել էին, ինչպես և նա, 1616 թվականի գարնանը ընդունվելու Քեմբրիջի համալսարանը։ Նրան դրանցեցին ապրիլի 23-ին ընդունված ուսանողների թվում՝ նույն այն օրը, երբ Էյվոնի Ստրատֆորդում վախճանվեց մեծ Շեքսպիրը։ Որպես նվեր իր կոլեջին պատանի Կրոմվելը ավանդույթի համաձայն բերել էր արծաթյա մի գավաթ։

Հավանաբար, դոկտոր Բիրդի խորհրդով պատանի Օլիվերը քեմբրիջյան կոլեջներից ընտրել էր ամենանորագույնը՝ Սիդնի-Սասեքսյան կոլեջը, որը հիմնադրվել էր 1596 թվականին։ Այն կառուցվել էր կարմիր և սպիտակ աղյուսներից, նախկին Գորշ եղբայրներ վանքի փլատակների վրա։ Վանքապատկան շինություններից կոլեջի տարածքում պահպանվել էր սեղանատունը, որը ուսանողների համար ծառայում էր իբրև համեստ տնային եկեղեցի։ Պուրիտանական սովորության համաձայն այնտեղ չկային ո՛չ սրբապատկերներ, ո՛չ ապակենախշեր։ Երբեմնի վեհաշուք գոթական տաճարի տեղում փոքրիկ մարդագետին էր, որտեղ ուսանողները խաղում էին գնդակ ու կեգլի։

Սիդնի-Սասեքսյան կոլեջը ընտրված էր, իհարկե ոչ պատահաբար։ Եթե Քեմբրիջը դեռևս Եղիսաբեթի ժամանակ ճանաչվում էր պուրիտանական ոգու կենտրոնակետը, ապա Սիդնի-Սասեքսը կոլեջներից ամենապուրիտանականն էր։ Նրա կանոնագիրքն ասում էր, որ այն պատրաստում է ուսանողներ եկեղեցու սպասավորների ասպարեզի համար և հանդիսանում է մի լայնարձակ մարդագետին որտեղ երիտասարդները մեղվի նման մեղր կհավաքեն բոլոր ծաղիկներից, որպեսզի այնուհետև, դուրս գալով փեթակից, պարս կազմած շարվեշարան թռչեն գնան եկեղեցիները և հավաքած դանձերը բաժանեն այնտեղ։

Բոլոր դասատուները պապականների կատաղի թշնամիներն էին։ Ուսանողների համար սահմանված կանոններով արգելվում էր ունենալ երկար կամ ոլորված մազեր, փարթամ օձիք, թավշյա տաբատ և այդ կարգի այլ ավելորդ զարդարանքներ։ Ցուլերի մրցամարտ, արջերի հալածում և այլ մոլեգին զվարճություններ արգելված էին։ Ուսանողներին չէր թույլատրվում այցելել քաղաքային պանդոկներ և զվարճատներ, վեգ և թուղթ խաղալ։ Կարճ ասած, այդ կոլեջը ամենից պատվարժան հաստատությունն էր, և ծնողները հանգիստ խղճով էին այնտեղ ուղարկել իրենց քմահաճ անհավասարակշիռ, ամեն տեսակ վտանգների ենթակա Օլիվերին, որի համար մշտապես ցավում էր մայրական սիրտը։

www.a-pdf.com

...նոր ուսուցիչը դարձավ աստվածաբանության դոկտոր ...ել Ուորդը։ Դա մի հույժ գիտնական և պուրիտանական ...ներում երևելի մարդ էր։ Մասնակցել էր Աստվածաշնչի ...ին թարգմանությանը, եղել էր Գոթրինգեմում կայացած ...ինիստական եկեղեցաժողովի պատգամավոր և հայտնի էր ...ս հեղինակ հակակաթոլիկական տրակտատների։ Կոլեջը ...ա դիկտատորությամբ դարձավ, ըստ արքեպիսկոպոս Լոդի ...ի դիտողության, «պուրիտանության բուծարան»։ Ուորդը ...ինիվեր էր մանրախնդրության առտիճան. աշակերտներից նա ...ջանջում էր խստագույն կարգապահություն և մանրակրկիտ ...պատասխանումը բոլոր քարոզների, որոնք նրանք ունկնդրել էին։ ...նափոքրիկ դանցանքի դեպքում նրանց ձաղկում էին դահլիճում. հրապարակավ՝ ի խրատ մյուսների։

Աստվածաբանությունը կոլեջում միակ ուսուցանվող առարկան չէր։ Ուսանողներին սովորեցնում էին նաև թվաբանություն, ...հարհագրություն, տարրական աստղաբաշխություն, ճարտարապետություն, տրամաբանություն, հին լեզուներ։ Գիրքն առանձնապես չէր հրապուրում կենդանի, ավելի շատ գործունեության, բան խորհրդածությունների հակված պատանուն։ Սակայն պարապմունքները կոլեջում նրա համար զուր չէին անցնում։ Լեզուների նկատմամբ Օլիվերը ընդունակություններ հանդես չէր բերում, բայց դրա փոխարեն շատ էր առաջադիմում մաթեմատիկայի, աստղաբաշխության և պատմության մեջ։ Նրան զբաղեցնում էր երկնային լուսատուների շարժումը և դրանց խստագույն կանոնավորությունը։ Դա խոսում էր այն ներդաշնակության մասին, որին այնքան ծարավի էր նրա հոգին, խստագույն օրենքների աշխարհի ենթարկվածության մասին, աստվածային ...ստեղծագործության մեծության ու ներդաշնակության մասին։ ...ան թվում էր, թե մարդիկ նույնպես պետք է հետևեն աստղերի ...ին, ճշտիվ գիտենան իրենց տեղը կյանքում և կատարեն ...վուստ կանխագծվածը։

Գրքերից նա առանձնապես սիրեց Ուոլթեր Ռելիի «Համաշխարհային պատմությունը», որը մանրակրկիտորեն համադրված էր ...բարձրությունների, որոնք նկարագրված էին Աստվածաշնչում։ Հետագայում, արդեն լինելով լորդ-պրոտեկտոր, նա ...ուրդ էր տալիս որդուն անպայման կարդալ այդ գիրքը «Այն ...ակում է պատմության լիակատար շարադրանքը և քեզ ...ավելի բան կտա պատմության ամբողջական ըմբռնման ...մար, քան առանձին հատվածները»։

Բայց գրքերը չէին կարող երկար զբաղեցնել նրա ուշադրությունը։ Անդադրում բնավորությունը, գործելու ծարավը խանգարում էին խորանալ պարապմունքների մեջ, իսկ միտքը հակված չուներ տրամաբանական կոնստրուկցիաների նկատմամբ։ Պնդակազմ, ուժեղ, բռնկուն խառնվածքով պատանին, ...ի ...ծ հայրական խնամքից, տուրք էր տալիս գպրոցական ան-

www.a-pdf.com

մեղ զվարճությունների կրակ կտրած գնդակ էր խաղում, խլ-գրոն սուսերամարտում էր, նետ արձակում, լողում։ Եթե որսորդության էին գնում՝ նա դրա անպայման մասնակիցն էր, սաստիկ սիրում էր ձիավարել։

Ավելի հանգիստ զբաղմունքները ևս օտար չէին նրան։ Ինչպես և բոլոր դյուրազգաց բնավորությունները նա շատ լավ զգում էր երաժշտությունը և սերը դրա հանդեպ պահպանեց ամբողջ կյանքում։ Պատմում էին, որ նա մասնակցել է ուսանողական մի ներկայացման և ընկերներին ապշեցրել՝ կեղծ թագը դնելով գլխին և հանդիսատեսից սրտաբանելով մի քանի վեհապանծ, իրոք սրբազան խոսքեր։

Նրա համալսարանական կյանքում տեղի է ունենում անակնկալ ընդհատում։ Հազիվ էր լրացել մի տարին, երբ ստացվեց ոսկե շրջանակով երիզված մի ծրար, որը գուժում էր նրա հոր մահը։ Մի քանի շաբաթ անց մեռավ և պապը՝ մոր հայրը։ Պատանեկությունը վերջացավ մեկընդմիշտ այստեղ։ Նա դարձավ ընտանիքի գլխավորը, էնթվայրը, տան տերը, այն տան, որտեղ վշտից խելակորույս մոր արցունքները խառնվել էին վեց քույրերի հեկեկոցների հետ։ Մեկը նրանցից նոր միայն ամուսնացել էր, իսկ ամենակրտսերը ընդամենը վեց տարեկան էր։ Օլիվերը թողեց Քեմբրիջը և փութաց տուն։

Տանը ընկճված տրամադրություն էր տիրում։ Բավական չէր, որ ընտանիքը կորցրել էր կերակրողին, նրան այժմ սպառնում էր արքայական խնամքի տակ ընկնելու վտանգը։ Օլիվերին ավագ որդուն, մինչև լափահաս դառնալը մնացել էր ևս երեք տարի և թանգավորական աստիճանավորները պատրաստ էին Ռոբերտի թողած ժառանգությունն իրենց ձեռքը վերցնելու։ Իսկ թե ինչ էր նշանակում արքայական խնամակալություն՝ բոլորը գիտեին, անվերջանալի վճարումներ տուգանքներ, պարհակներ՝ Անգլիայում տիրապետում էր ֆեոդալական իրավունքը։ Երբ լրանար Օլիվերի քսանմեկը, նա դեռ պետք է ետ գներ իր ունեցվածքը վճարեր՝ ժառանգելու իրավունք ստանալու համար, եթե մինչ այդ վճարելու որևէ բան ունենար։

Բայց Ռոբերտը զուր չէր ձեռք բերել զգուշավոր ու խելամիտ մարդու համբավ. նա իր ամբողջ կարողությունը կուտակել էր ոչ թե որդուն, այլ կնոջը՝ Եղիսաբեթին։ Եվ նրան հաջողվեց ազդեցիկ ազգականների օգնությամբ դատարանում ապացուցել, որ ունեցվածքի ետ գնումն արդեն արված է՝ նոր մահացել է սըր Հենրին, «ոսկե սապետը», և Ռոբերտը, նրա որդին, տեր է կանգնել ունեցվածքին։

Դատական ընթացքը, իհարկե, քիչ վող և նյարդէր չնստեց ամբողջ ընտանիքի վրա, որը դեռևս չէր ապաքինվել կորստից։ Այն ցուցմունքից, որ որպեսզի դյուղացիական Անգլիայում լինեա

www.a-pdf.com

...ությունը և կարողանում պաշտպանվել թագավորական ասպետների կամայականություններից, հարկավոր է լավ իմանալ իրավունքը և գլուխ հանել հողային հարաբերությունների դրությունից։ Վճռվեց, որ Օլիվերին ուղարկեն Լոնդոն՝ Լանֆատուն, որպեսզի այնտեղ հասու լինի այդ գերիմաստուն գրություններին։ Մայրը խոստացավ ինքը վարել տնտեսությունը մինչև ի վերջո գարեջրի գործարանը՝ իր օժիտը, դեռևս եկամուտ բերում և ռենտան գալիս էր կանոնավոր։

Եվ ահա Օլիվերը, արդեն նոր Օլիվերը՝ առնականացած և լրջացած, ճանապարհվում է Լոնդոն։ Սանկուց յուրացրած պուրիտանական բարոյախոսությունը նրան սովորեցրել էր ճակատագրի անակնկալներին նայել իբրև աստվածային փորձությունների, որոնք պետք է անտրտունջ տանել։ Նա գիտակցում էր իր ոչ պատասխանատվությունը մոր և քույրերի հանդեպ, հայրական գործի հանդեպ։ Բայց նա առլեցուն էր կյանքի ծարավով և պատանեկան առողջ հետաքրքրասիրությամբ։ Վիթխարի աշխարհ դեռ նոր էր բացվում նրա առաջ։

Գավառական կոպիտ ողջին, սանը գործված քաթանե հագուստով, քամահարված գյուղական դեմքով այդ պատանուն ուղղաքաղաքը թվում էր անհավատալիորեն վեհաշուք, բազմատարդ, վիթխարի։ Այդ համահվրոպական Բաբելոնի փողոցների լաբիրինթոսում՝ Սիթիի գործարար փողոցներում, որոնք արիստոկրատական թաղամասերում կազմված են հարուստ առանձնատներից, առևտրական և տոնավաճառային այդ փողոցներում, նավահանգստային, ծուռտիկ և մթամած այդ փոքրիկ փողոցներում, որոնք բացվում էին դեպի լայնավետ, պղտոր, բազում ոտքեր իր վրա կրող Թեմզան, հեշտ էր մոլորվել։ Զարմանալի ինքնությունների մի ամբողջ ղանգված՝ արքայական փառահեղ Ուայթհոլ պալատը, Վեսթմինսթերի վեհաշուք կառույցը, որտեղ խատեր էր անում պառլամենտը (Օլիվերը չէր բացառում, որ երբևէ ինքն էլ ստիպված կլիներ բարձրանալ այդ աստիճաններով) վիթխարի, մռայլ Թաուերը՝ ամրոց-բանտը, դրա առջև, բլրի վրա, մի ժամանակ մահապատժի էին ենթարկում պետական հանցագործներին։ Փեթակի պես գվվացող բազմամարդ բորսան բազմալեզու նավահանգիստը, որտեղ ամեն օր նավեր էին բեռնաթափում աշխարհի բոլոր ծայրերից Լոնդոնի կամուրջը իր եռուզեռով և խանութներով։ Գեատեղերյա թատրոններն ու կրկեսները դեռ ով գիտե թե էլի ինչը կարող էր ցնցել գավառից եկած պատանի չենչմենի երևակայությունը։ Ազատությունից գլուխը բժժել էր, յայթակղությունը մեծ էր և այլազան։ Եվ որքան դժվար էր պայքարել ինքն իր դեմ, իր անսանձ, կրակոտ բնավորությամբ։ Ուզում էր փորձել ամեն ինչ, լինել ամեն տեղ, ճաշակել ամենատարբեր, թեկուզև արգելված, հաճույքները։

Եվ Օլիվերը նետվեց մայրաքաղաքային կյանքի մեջ։ Նա հա-

www.a-pdf.com

ճախում էր ցլամարտի և արջահալածի, լինում էր թատրոններում, գինի էր խմում նավահանգստային պանդոկներում, համբուրում սիրունիկ սպասուհիների և, ասում են, նույնիսկ տաբվել էր թղթախաղով։ Քիչ էր մնում բանը սուսերի հասներ, և մի տուրուդմփոց չէ, որ ընկած էր նրա խղճի վրա։

Լինկոլնս-Ինում իրավաբանության պարապմունքներն այնքան էլ հաջող չէին ընթանում։ Բայց դրանք, այնուհանդերձ, քիչ օգուտ չբերեցին։ Ատենատուն այցելում էին այն ժամանակներում աշքի ընկնող այնպիսի տաղանդավոր մարդիկ, ինչպիսիք էին Օլիվեր Սենթ-Ջոնը, Դենզիլ Հոլզը, Էդմունդ Ռուլերը, Արթուր Գեղլիդը, Թոմաս Ֆերֆաքսը, հեղափոխության ապագա առաջնորդները։ Մարդիկ գրքերից ավելի հետաքրքիր էին։ Այնտեղ կարելի էր ծանոթանալ քաղաքական վերջին նորությունների հետ լսել այն պատերազմի մասին որը մայր ցամաքում մղում էին անձնվեր բողոքականներն ընդդեմ կաթոլիկ-պապականների, Ուելսի արքայազն Կարլոսի, Իսլանդիայի արքայադստեր՝ մոլի կաթոլիկուհու հետ ենթադրյալ ամուսնության կապակցությամբ։ Այստեղ նաև վտանգավոր խոսակցություն էր տեղի ունենում այն մասին, թե թագավորը երկիրը տանում է դեպի սնանկացում։

Օ՜, ինչպե՜ս էր գանգատվում ծուռոտիկ, թուլակազմ, ընչին Հակոբը, Հակոբ Հոտածը, ինչպես կնքել էին նրան գաղտնաբար, մեծն Եղիսաբեթից։ Նրա մեջ չկար որևէ բան թագուհուց՝ ո՛չ նրա առժանապատվությունը, ո՛չ վեհությունը, ո՛չ հայրենասիրությունն։ Անգլիայի ճակատագիրը բոլորովին նրա հոգը չէր՝ միայն թե ապրեր հանգիստ, զվարճանար պարահանդեսներում ու դիմակահանդեսներում, ավելի շատ փող հավաքեր ժողովրդից և պարապ ժամանակ սրակատաներ գրոտեր թագավորների իրավունքների աստվածային ծագման մասին։ Հանգստավետ կյանքը, որ այնպես սիրում էր, նրա համար նշանակում էր կյանք առանց սահմանափակումների և առանց պատասխանատվության։ Այդ կյանքի նպատակն էր բավարարում տալ իր ամենամանր քմահաճույքներին և իր ֆավորիտի՝ ամենակարող Բեքինհեմի դրսի քմահաճույքներին։ Իսկ թագավորների աստվածատուր իրավունքը ոչ այլ ինչ է, քան հավաքել ժողովրդից ցանկացած հարկերը և ծախսել ինչպես քեֆը տալիս է։

Հանգստավետ կյանք նշանակում էր նաև խաղաղություն օտար տերությունների հետ՝ խաղաղություն ի վնաս Անգլիայի պատվի և շահերի։ Եվ Հակոբը դաշինք կնքեց ատելի կաթոլիկ Իսպանիայի հետ, որը կողոպտում էր անգլիական առևտրական նավերը և թույլ չէր տալիս մտնել Վեստ-Ինդիա. այն Իսպանիայի հետ, որի դեմ պայքարում ինչքա՜ն ուժեր էին ներդրել անգլիացիները Եղիսաբեթ թագուհու օրոք։ Այդ էր պակաս, որ թագաժառանգն ամուսնանար իսպանուհու հետ։

Այդպիսի խոսակցություններ էր լսում Կրոմվելը ատենա-

www.a-pdf.com

...ր և իր ազգականների մոտ, ուր նա ապրում էր Լինկոլնում, ...ում, բանից պարզվեց, նա ուներ բավականին շատ ազգա... մորաքույրերից մեկը ամուսնացած էր սըր Բրինդթոնի հետ, մյուսը՝ Հեմփդենի, երրորդը՝ Ուոլիի հետ։ Սրանք բոլորը նի ազգանուններ էին։ Նրա հետ ազգակցական կապերի մեջ և՛ Սենթ-Ջոնները, և Հոֆֆենները, և՛ Հեմոնդները, և՛ Ինգրիները՝ նոր մարդիկ։ Սրանց գործն աջ էր գնում, և սրանք ...ենաառաջադիմական հայացքի տեր մարդիկ էին։ Սրանց տունում Օլիվերը ծանոթացավ իր բազմաթիվ հասակակից զարմուհիների հետ, որոնք նույնպես սկսել էին ջերմորեն հետաքրքրվել ...ոքականությամբ։

Օլիվերը լսել էր, որ պառլամենտը դեռևս 1604 թվականին կոհարված էր տվել օտարերկրացի միապետի հավակնություններին՝ նրան հայտարարելով. «Ձերդ մեծություն մոլորության մեջ կընկներ, եթե որևէ մեկը ձեզ համոզեր, թե Անգլիայի թագավորն ունի ինչ-որ բացարձակ ինքնուրույն իշխանություն, կամ թե՝ որ թագավորը կարող է միանձնյա փոխել երկրի գոյություն ունեցող օրենքները»։ Համայնքները հրաժարվել էին թույլատրել արքային նոր հարկեր հավաքել։ Նրանք պահանջում էին դադարեցնել ապօրինի ձերբակալությունները, հրապարակ հայտարարել կամալական հարկերն ու մաքսերը, երկրի ներսում առանձին ապրանքների առևտրի մենաշնորհի վաճառումը։ Չէ՞ որ կապալառուները տզրուկի նման ծծում էին ժողովրդի արյունը, անվերջ բարձրացնելով իրենց ապրանքների գները։

Թագավորը լէր համաձայնում և, փորձելով փող ձեռք բերել, պրանական հողերը ծախծխում էր իր սիրեցյալներին, հարուցանում էր տալիս վաղուց մոռացված ֆեոդալական պարհակները, առուծախի առարկա էր դարձնում պետական տիտղոսներն ...աշտոնները։ Նա հարկագրում էր վաճառականներին և հողատերերին ստանալ ասպետի կոչում, չէ՞ որ այդ պատվի դիմաց պրող էր կորզել պատկառելի գումարներ։

Նա նեղում էր ազնիվ պուրիտաններին բողոքի ամենափոքր փորձի դեպքում նրանց նետում էին բանտերը։ Թագավորը, ...ել էր բողոքական Շոտլանդիայից, այժմ ակներև հակվել էր պապականությունը և՛ իր մտածելակերպով, և՛ իր գործունեությամբ։

Նա թե ինչ սովորից Կրոմվելը Լոնդոնում,

...ով էլի մի կարևոր իրադարձություն տեղի ունեցավ նրա ...ում։ Ազգականների տանը նա հանդիպեց Նդիսաբեթ Բուրշրարեռեռ օրիորդի, փարթամ, խարտյաշ մազերով և լայն ...տով։ Նրա աչքերը խոշոր էին, իրացից հեռու, վճիտ, ...ներին խաղում էր փոքր-ինչ հեգնախառն ժպիտը, այտերին ...նում էին փոսիկներ։

Նա լոնդոնցի հարուստ վաճառական-մորթագործի, Օլիվերի ...ոջ՝ Էսթերի կալվածքի հարևանուհու ավագ դուստրն էր։

www.a-pdf.com

Լինելով Օլիվերից գրեթե երկու տարով մեծ, Եղիսաբեթը անհամեմատ ավելի գրական և հավասարակշռված բնավորության տեր էր։ Շուտով երիտասարդ աբվայրին հյուր ընդունեցին Քրիպլսդեյթում գտնվող Բուրշյեի տանը և Օլիվերը սկսեց հաճախակի այցելել այնտեղ։

Ինչ ասել կուզի, Եղիսաբեթը հիանալի դույդ էր. ծագումը, արդիականական խստակրոն դաստիարակությունը, գեղեցկությունը պատկառելի օժիտը՝ բոլորը խոսում էր այդ ամուսնության օգտին։ Պսակադրությունը տեղի ունեցավ 1620 թվականի օգոստոսի 22-ին՝ սուրբ Ջայլսի եկեղեցում, Բուրշյեի անից ոչ հեռու։ Գրանցման գրքում փնտան, հավատարիմ իր տոհմի ավանդույթին, գրեց տոհմական երկու անունները՝ պսակադրվում է Օլիվեր Կրոմվելը նույն ինքը՝ Հանթինգդոնցի Ուիլյամսը։

Հարսանիքը շատ չանցած երիտասարդները թողեցին Լոնդոնը, որպեսզի վերջնականապես բնակություն հաստատեին Հանթինգդոնում ծայրամասի հնամենի տանը, որտեղ սպասում էր նրանց մայրը հերմակած և ծերացած Եղիսաբեթը։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ II

ՃՄԱՀԻՃՆԵՐԻ ՏԵՐԸ

Ի՞նչ բան է մարդը,
Եթե իր կյանքի գլխավոր շահը և խարժեքը
Միմիայն ուտել և քնել լինի։
Անասուն միայն, ոչինչ ավելի։
Անտարակույս, նա, որ մեզ ստեղծեց այլ լայն հանճարով,
Դեպի ետ նայող և դեպի առաջ,
Չպարգևեց մեզ այնպիսի մի մեծ լեյո նախնություն
Եվ աստվածանման բանականություն,
Որ դրանք անպետք բորբոսնեն մեր մեջ։

Շ Ե Ք Ս Պ Ի Ր Համլետ

Դուք գիտեք ինչպիսին է եղել իմ ապրելակերպը։ Ես ապրել եմ խավարում և ատել լույսը։ Ես եղել եմ մեծ, մեծադույն մեղսագործ։ Սա հիրավի այդպես է։ Ես ատել եմ բարեպաշտությունը, բայց տեր-աստվածը ողորմացել է ինձ։

Ֆ ա վ ե լ

Ամենևին չի եղել ոչ մի արտասովոր բան, ոչ մի թեկուզև որևէ ոգով ուշագրավ բան նաև հետագա տարիներին։ Պուրիտանական մի համեստ հարսանիքից հետո նա կնոջ հետ վերադարձավ տուն և սկսեց ապրել, ինչպես բոլորը։ Նրան բաժին էր հասել ոչ մեծ ժառանգություն, բայց, համենայն դեպս, ոչ վատը։ Սիրունիկ Եղիսաբեթի օժիտը լավ նեցուկ ծառայեց նրան։ Բայց կարողությունը հարկավոր էր բազմապատկել՝ այդպես է պատգամվել Տրդուն դարերից ի վեր։ Եվ Օլիվերն զբաղվեց տնտեսությամբ։

«Ամուսնացավ՝ փոխվեց»,— ասում է ժողովուրդը։ Երիտասարդ Կրոմվելը լրջացել էր։ Հարկավոր էր նոր ձևով տուն դնել, մտնել տնտեսության բոլոր մանրուքների մեջ, հոգ տանել լամուսնացած քույրերի և գալիք սերնդի մասին։ Եղիսաբեթը լավ կին դուրս եկավ, համեստ, տնարար, տնտեսող։ Օլիվերին գորովանքով էր հսկում նրա միամիտ տնտեսվարությունը և անսահմանորեն ուրախացնում էր, որ կինն էլ իր նման արհամարհում է հագուստ-կապուստն ու պաճուճանքը։ Իր հոգում լինելով իսկական պուրիտանուհի, Եղիսաբեթը տնային պարտականությունների կատարման մեջ էր տեսնում քրիստոնյայի իր լարքը աստծու և ամուսնու առջև։

www.a-pdf.com

քեր կիրակի օրերը պարում էին, մասնակցում դիմակահանդեսներին, թատրոն էին գնում։ Նրանք քարոզում էին եկեղեցիներում, պանդոկներում, շուկաների հրապարակներում և ոչ միայն ապաշխարանքի կոչ էին անում, այլև մերկացնում էին արքունիքի պերճամոլությունն ու շվայտությունը, աղքատների կողոպուտը, հարկերի բարձրացումը, եպիսկոպոսական դատարանների վայրագ իշխանությունը։ Դարձ դնպի «իսկական հավատը» ողջ երկիրն էր ապրում։ Եվ այդ դարձը փոթորկով հագեցած էր։

«Իմ գովաբժան բարի ընկերոջը՝ պարոն Հենրի Դաունհոլին։

Հանրինգդոն, 14 հոկտեմբերի 1626 թ.

Սիրելի սր՛ր.

Դուք ինձ շատ կպարտավորեցնեք, եթե համաձայնեք դառնալ իմ երեխայի կնքահայրը։ Ես պետք է ինքս գայի ձեզ մոտ, որպեսզի հրավիրեի ձեզ բոլոր կանոնների համաձայն, սակայն հանգամանքներն ինձ թույլ չեն տալիս, ներեցեք ինձ։

Ձեր գլխացավանքի օրը կլինի հաջորդ հինգշաբթին։ Թույլ տվեք խնդրել ձեզ, որ ժամանեք շորեքշաբթի օրը։

Ստացվում է, որ ես դարձյալ ոտնձգություն եմ անում ձեր բարեհաճության դեմ, այնինչ ես ավելի շատ պետք է արտահայտեի իմ շնորհակալությունն այն սիրո համար, որը ես արդեն գտել եմ ձեր մեջ։ Բայց ես գիտեմ, որ ձեր համբերությունն ու ձեր բարեսրտությունը չի կարող սպառել

ձեր բարեկամ ու ծառա

Օլիվեր Կրոմվել»։

Կրակն ուրախ բոցկլտում էր բուխարիկում, հալածելով հոկտեմբերյան մռայլ երեկոյի խավարը։ Վառվող մոմերի բոցը առկայծում էր պղնձյա փայլեցրած մոմակալների, անագե գավաթների վրա։ Ընթրիքի էին նստել Քեմբրիջից ժամանած Հենրի Դաունհոլը, համալսարանում Կրոմվելի երբեմնի համակուրսեցին, բժիշկը, որ հենց նոր էր այցելել Եղիսաբեթին (սա նորածին շորս օրական մանչուկի հետ պառկած էր վերևում), քարոզիչը, նրա հետ Կրոմվելն այժմ մեծ բարեկամություն էր անում, և ինքը՝ տանտերը։ Թանկագին հյուրի համար, որ հանուն հաջորդ օրվա մկրտության արարողության՝ կտրել-անցել էր տասնվեց մղոն ճանապարհ աշնանային շլոփայի տակ, արդեն սենյակ էր նախապատրաստված. սավանները նարդոս էին բուրում, վերմակի տակ դրված էր մետաքսապատ կավե ջեռակ։

Ինչի՞ մասին էին խոսում սեղանի շուրջը։ Իհարկե, նոր թագավորի, Կարլոս I-ի մասին։ Մի տարի առաջ, Հակոբի մահից

www.a-pdf.com

հետո, նա գահ էր բարձրացել, և արդեն կարողացել էր դժգոհություն հարուցել։ Դեռևս նրա Ուելսի արքայազն եղած ժամանակ անգլիացիներից շատերը երկյուղում էին, թե նա կամուսնանա կաթոլիկ իսպանուհու հետ, և որպիսի՞ն էր ուրախությունը, երբ իր սիրելի Բեքինհեմի հետ նրա արկածախնդրական, անխոհեմ ուղևորությունը դեպի Մադրիդ ավարտվեց ձախողումով։ Սիթիում նույնիսկ հնչեցրին զանգերը և տոնական խարույկներ վառեցին։ Բայց, թագավոր դառնալով, Կարլոսը ամենափոքր իսկ չափով ավելի լավ չվարվեց. կնության առավ մի տասնհինգամյա ֆրանսուհու՝ Հենրիխ IV-ի աղջկան և Լյուդովիկոս XIII-ի քրոջը՝ Հենրիետա-Մարիային։ Թեթևամիտ ու սիրունատես այդ աղջնակը նույնպես պապական էր, և նրա հետ միասին Անգլիայում հայտնվեցին կաթոլիկ քահանաներ, հակաքրիստոնյա պապի լրտեսներն ու ծառաները։ Բանը հասավ նրան, որ անգլիական թագավորական պալատում այժմ պատարագներ էին տրվում։ Գեղեցկադեմ Բեքինհեմն, այդ պճնված խեղկատակը, այդ նորելուկը, այդ ապաշնորհ ոչնչությունը, առաջվա պես շնորհ է վայելում, կարծես թե այդ նա է կառավարում երկիրը, այլ ոչ թե օրինական թագավորը։

Կարլոսն ինքն էլ սկզբում բոլորին դուր եկավ. արտաքնապես հմայիչ, շարժուձևերը նրբագեղ, դաստիարակված, ճաշակով հագնված, սիրում էր սպորտը, գեղանկարչությունը։ Բայց նրա հենց առաջին քայլերը հիասթափեցրին։ Իսպանիայի դեմ պատերազմ, հաղթական պատերազմի փոխարեն՝ երկարատև, թանկ նստող, անօգուտ պատերազմ մայր ցամաքի վրա։ Եվ դեռ, ի խայտառակություն Անգլիայի, դաշինք կնքել կաթոլիկ Ֆրանսիայի հետ՝ ընդդեմ բողոքականների։ Կաթոլիկների դեմ վճռական պայքարի փոխարեն՝ ներողամտություն ամեն ինչում։ Տուրքերի կրճատման և պառլամենտի խելամիտ պահանջները կատարելու փոխարեն՝ մաքսերի մեծացում և ամեն տեսակի կողմնակի, պառլամենտը շրջանցող, հարկեր։ Զարմանալի չէ, որ պառլամենտը բացեիբաց արտահայտեց իր անբավականությունը նրա նկատմամբ և մերժեց վարկավորել նրան։ Ջոն Էլիոթը համարձակություն ունեցավ հարձակվել Բեքինհեմի վրա, նրա տիմար արկածախնդրական, վնասակար քաղաքականության վրա. «Մեր պատիվը ոտնակոխ է արված, մեր նավերը՝ խորտակված, մեր մարդիկ զոհված են, բայց ոչ թշնամու ձեռքով, ոչ դժբախտ պատահարից, այլ նրանց ձեռքով, ում մենք վստահում էինք»,— ասում էր նա։ Պալատը պահանջեց դատի տալ Բեքինհեմին, ազգային ունեցվածքը վատնողին։ Ի պատասխան՝ Կարլոսը դոռոզամտորեն, իր հորը սազական տոնով, հայտարարեց. «Պառլամենտներն ամբողջովին իմ իշխանության տակ են, և այն բանից, թե ես դրանք օգտակար կհամարեմ կամ վնասակար, կախված կլինի, կշարունակե՞ն դրանք գոյատևել, թե ոչ»։ Նա արձակեց իր պառլամենտը և դիմեց հարկադրական փոխառություն բաց թող-

www.a-pdf.com

Էրնեստ է սրտին ու աչքառությունը նրա,
Եվ խրճիթի էլ պոռթկում է ավում,—

գրել է յանուարեկիր։ Գիտարելիվ ենյակները միշտ մաքրամաքուր էին լինում։ Մի Վալնի է սրում էր ջանքը վառվում էր գվարթ բոցով։

Ամուսնուն նա սիրում էր ամբողջ սրտով հեզահամբույր և նվիրվածորեն, ինչպես որ վայել է բարի քրիստոնյային։ Մի խոսքով, դա երջանիկ ամուսնություն էր, որը շուտով պսակվեց առաջնեկի ծնունդով։ Ի պատիվ պապի, որ չէր տպրել մինչև ուրախալի օրը, նրան անվանեցին Ռոբերտ։

Ցյուջանիկ հորը վայել չէր ձեռները ծալած նստել, ժառանգի ի հայտ գալով՝ հոգսերն ավելանում էին։ Կառավարիչ վարձել Կրոմվելը ի վիճակի չէր՝ միջոցները թույլ չէին տալիս և ստիպված ինքն էր պայմանավորվում մշակների հետ, լսում վարձակալների գանգատները, հետևում, որպեսզի գարնանը ժամանակին հացահատիկը ցանեին, որպեսզի անասունները խնամվեին ու կերակրվեին, դե անելու՝ քի՞չ գործ կճարվեր փութիռանգ սքվայրի համար, որը տերն էր երկու ակր արոտատեղիի, չորս ... մարգագետնի և դեռ վարելահողն էլ վրան։ Եվ դեռ լուսումբինն հասարակ գյուղական հագուստով, նա ձի հեծած սուրում էր ... ռախուղի մեջ, ճմփացող ճահճուտների վրայով՝ գնում էր տեղեկանալու ամբարների վիճակի մասին մտիկ տալու կովերի նախիրը հեռավոր արոտավայրում կնքելու ... ոչխարների նոր պայմանագիր։

Դժվար ժամանակներ էին եկել, հացահատիկի ու մսի գներն ընկել էին։ Երկու տարի իրար վրա անբերրիությունը նկատելիորեն իջեցրել էր հողային ռենտան։ Մնում էր գործնականում կատարել Կալվինի պատգամը՝ ղգաստանալ, բավականանալ քչով, հաշվել յուրաքանչյուր կոպեկը։

Ընտանիքն աճում էր։ 1623 թվականին ծնվեց երկրորդ որդին, Եղիսաբեթը ցանկանում էր նրան Օլիվեր անվանել։ 1624-ին հայտնվեց դուստրը՝ Բրիջեթը, 1626 ին ևս մի տղա՝ Ռիչարդը։

Ինքը Օլիվերը առնականացել էր, դարձել էր թիկնեղ, ուժեղ լեցուն։ Նա ավելի բարձրահասակ էր, քան միջահասակ, վայելչակազմ էր, խիտ շագանակագույն մազերը երիզավորում էին հմայիչ, խոշոր, հյութալի շուրթերով դեմքը։ Առողջ գյուղական կյանքը առավոտից լիցքավորում էր նրան բուռն եռանդով. տրնտեսության հոգսերի մեջ նա էլի հասցնում էր բազմօրյա որսորդություններ սարքել, բարակների հետ հալածելով նապաստակների և աղավնիների կամ բազեներով հետապնդելով ճահճային թռչունների, որոնց շատ սիրում էր։ Երեկոները պանդոկում թուղթ էր խաղում։ Նա կարող էր և ուզածիդ պես զվարճանալ ընկերների հետ, և այստեղ էլի հայտ էր բերում հորինումների ու ամենն տնական չարաճճի արարքների անսպառ պաշար։ Եվ չնայած շատ

www.a-pdf.com

[illegible]ում, հիմնականում թույլ տնակում դարձյուր, բայց երբեմն [illegible] էր վայրենի պես, չափն անցած։ Նոպիս դյուղա[illegible] կատակներ, առգամ խեղկատակություններ, անպատշաճ [illegible] ու զրույց. և ահա ինքն իր հետ միայնակ լինելիս նա [illegible] էր, հիշելով իր որոշ արարքներ։ Եվ ցանալով մաքրագործվել դնում էր սուրբ Հովհաննես եկեղեցի՝ թողություն [illegible]։

Ավելի ու ավելի էր ներքին խորն անբավականության զգացումը համակում նրան։ Բարեհաջող ամուսնություն, երեխաներ, տնտեսական հոգսեր, դյուղական անմիտ զվարճանքներ՝ օրեցօր, տարեցտարի. մինչ ի մա՞հ։ Այս է կյանքը իր պարտականությունը, այսպես է սահմանված աստծու կողմից և նա, ինչպես աշխատասեր ճիճու, անդադրում պիտի փորփրի իր հայրենի ճահճուտի հողը, բարեխղճորեն հոգ տանի արտերի մշակման, բերքի հավաքման, վարձակալման մասին... Հանուն ինչի՞։ Գուցե այդ կյանքը հենց անեծքն է, այն մշտնջենական անեծքը, որին դատապարտված է մարդը։ Այդ դեպքում ո՞րն է փրկությունը։ Եվ ինչպե՞ս իմանալ՝ փրկվա՞ծ է ինքը, թե՞ անիծված։

Անցուսպ զվարճանքների ժամանակներին այժմ հետևում են Ինության մռայլ օրերը։ Տագնապ պատճառելով Եղիսաբեթին, որ փակվում է սենյակում, կրկին ու կրկին խորանում Աստվածաշնչի մեջ։ Փրկության մասին կեղեքող խոհերը հանկարծ դառնում են նրա կիրքը, նրա տիվանդությունը։ Գիշերները նրան լսկտում են գժոխքի տանջանքների կանխազգացումները և Տոփեթը, սարսափելի նողկալի Տոփեթը, հուշը մանկուց մնացած, կանգնում է նրա աչքի առաջ։ Նա իրեն զգում է մեծաչափ մեղսագործ։ Նա անդունդն է դլորվում, նա մեռնում է... Լացը քրտինքի մեջ նա վեր է թռչում անկողնուց, ճչում է ընկճած... Մահու չափ սարսափած Եղիսաբեթը մարդ է ուղարկում բժշկի տնից։ Գիշերվա կեսին քնից արթնացած լրջախոհ բժիշկը գլուխն է տարուբերում միստր Կրոմվելը տատապում է սևամտությամբ։

Մի այլ անգամ կեսգիշերին նրա աչքին երևում է վիթխարի մի խաչ՝ կանգնեցված Հանթինդդոնի մեջտեղում և այդ խաչը, չիրանս ինչու այնպիսի մի սարսափի մեջ է գցում նրան, որ դարձյալ հարկ է լինում արթնացնել անեցիներին բժիշկ կանչել, հանգստացնող թուրմ խմել։

Միայն Կրոմվելը չէր, որ այդ տարիներին տանջալի հարցեր էր տալիս ինքն իրեն կյանքի իմաստի մասին։ Փրկության մասին, հավատի մասին։ Նախասահմանությունն ու հատուցումը, աստծու դալիք դատաստանը և երկրի վրա Քրիստոսի երկրորդ գալուստը կրքոտությամբ և լրջորեն քննարկվում էին Անգլիայով մեկ։ Պուրիտանների թիվն աճում էր՝ նրանք եղանակ էին ստեղծում պարլամենտում, շուկան հեղեղում էին մռայլ պամֆլետներով։ Որոնցում եռկնային անեծք էին տեղում նոանց գլխին, ով-

www.a-pdf.com

նելուն։ Բայց լուսնի լին սարսռվում, թե շատերը հրաժարվում են նրան փող տալ, և հինգ մարդու արդեն դրա համար բանտ են նստեցրել, իսկ մի քանիսին էլ կինվոր են տարել և ուղարկել մայր ցամաք՝ պատանդում։

Իսկ գեղի Քաղիս գորտաշավը, որ հանդերձավորվել էր Բեքինհեմի կողմից, խայտառակ կերպով ձախողվեց։ Այո՛, Եղիսաբեթ թագուհու փառապանծ ժամանակները, որը մի հոյակապ հարվածով գատասատան էր տեսել հրեշավոր նավատորմիդի հետ, գնացին անդարձ։ Այժմ Անգլիան պատերազմում է կրում և՛ ծովի վրա՝ Իսպանիայի դեմ մղվող պատերազմում, և՛ ցամաքում՝ Լարոշելի մոտ որտեղ Բեքինհեմը փորձում էր օգնել ֆրանսիական բողոքականներին հուգենոտներին, և դարձյալ անհաջող։

Քսանյոթամյա Սլիվերի մոխրականաչավուն աչքերը տենդագին փայլ են առել։ Նա խոսում է կրակոտ ու խոհուն։ Երբեմն նա զգում է քարոզչի իր ձիրքը՝ Աստվածաշնչից մեջբերումներն իրենք իրենց գուրս են գալիս նրա շուրթերից, բարեպաշտական մտորումներն ավելի ու ավելի են տիրապետում նրա կրքոտ բնավորությանը։

Ժամանակն հոսում է, ահա Ռիչարդն էլ արդեն կանգնում է, ճոճվելով գեռևս ոչ ամուր աստիճանների վրա, իսկ օրորոցում ճչում է նորածին Հենրին։ Կրոմվելն առաջվա պես տաքարյուն է և հանդով առլեցուն թաքուն հուրը կրծքի տակ բորբոքվում է ավելի ու ավելի վառ և այրում է նրան ներսից։ Նրան դեռևս տանջում են գիշերային մղձավանջները, կեղեքում են ինչ-որ անորոշ ցավեր։ Նրա մարմնի ցամաքում է ճակատը ակոսում են կնճիռները. այժմ ոչ միայն նա, այլև տենդիները մտածում են, թե նրա մահը մոտ է։ Բայց դա մարմնի հիվանդություն չէ դա ոգու հիվանդություն է։ Իր մեղքի զգացումը մրրկում է նրան, ստիպում է գիշերները ջղաձգվել, իսկ ցերեկը կատարել և արտաքինակ արարքներ։

Մի անգամ նա փողոցում հանդիպում է իր հին ծանոթին, որի հետ երբեմնի խաղացել և քեֆ է արել պանդոկներում։ «Գնանք ինձ հետս»,— ասում է Կրոմվելը նրան, հրավիրում է իր տունը և ապշահար ղարոնին տալիս է երեսուն ֆունտ ստեռլինգ։

— Ես դրանք ստացել եմ քեզնից թղթախաղում,— ասում է նա։— Ես դրանք ստացել եմ ապօրինի ճանապարհով։ Իմ մեղքն է, որ ես մինչև այժմ դրանք քեզ չեմ վերադարձրել։

Հատուկ ուշադրությամբ և հարգանքով է վերաբերվում նա պուրիտանական քարոզիչներին՝ դասախոսներին, որոնք հին մարգարեների նման մարդկանց կոչ են անում ապաշխարանքի և չեն ցանկանում ենթարկվել եպիսկոպոսական եկեղեցու կանոններին։ Նա կանոնավորապես հաճախում է քարոզներին, դասախոսներին իր տունն է հրավիրում, փողով օգնում է նրանց։ Նրա տունը վերածվել է հալածվող պուրիտանների կացարանի։

www.a-pdf.com

Լոնդոնի սեծ սրահը կա զարձրել և ազոխատների այնտեղ գունք հավաքվում են, քարոզում, վիճաբանում, լրջում են ազգմունները։

Նա սերտ մտերմություն է հաստատում իր նախկին ուսուցիչ Լ. Լասաֆարակ դոկտոր Բիլդի հետ։ 1627 թվականին նրանք միասին մարտնչում են թագավորական աստիճանավոր Բարնարդի դեմ, որը կեղծում էր պուրիտաններին։ Հարևանները հարգանքով են լցվում նրա նկատմամբ։ «Բարեպաշտ և լրջախոհ ջենտլմենը» արժանի է այն բանին, որ պաշտպանի նրանց շահերը՝ գավառական պուրիտանների շահերը, պառլամենտում։ 1628 թ Կրոմվելին ընտրում են պառլամենտի անդամ՝ Կարլոս I-ի երրորդ պառլամենտի։

Մարտյան խոնավ քամին քշում է Թեմզայի ցածրիկ ալիքները, Լոնդոնը, ինչպես տասը տարի առաջ, լեցուն է աճապարող սրբազարար մարդկանցով։ Էլի նույն եռուզեռն է կամրջի վրա կրպակների արանքում, դարձյալ նույն բազմաբարբառ ժխորը՝ հոսվահանգստում։ Իսկ Կրոմվելն արդեն այն չէ, ոչ այլևս այն լյուզացի անփորձ պատանյակը, որ զարմանքով և հետաքրքրասիրությամբ կնայեր մայրաքաղաքային կյանքին և համտես կաներ այն, այլ հասուն քսանիննամյա ամուսինը և հայրը, տնատերը, որ վճռել է իր հարաբերությունը աշխարհի հետ, որ զարձրանում է վեսթմինսթերյան հնամենի աստիճաններով, բրեսգի պառլամենտում զբաղեցնի Թեպետև համեստ, ետին շարքերում, բայց իրավամբ իրեն արամադրված տեղը։ Եվ խելացնեթ պառլամենտական պայքարը կլանում է նրան, ձգում է, լցնում։

Նստաշրջանը իսկապես որ սկսվեց բուռն թափով։ Փափկասուն և ամբարտավան թագավորը բացեց այն մի ճառով, որը լի էր քաղաքավարի սպառնալիքներով։ Եթե իրեն մերժեն պահանջվող նպաստը, ասում էր նա, ապա կկարողանա դիմել հասուկ, հենց ասածո կողմից իրեն ընձեռված միջոցներին։ Ի պատասխան ուռքի ելավ թագավորական չարաշահումների դեմ պայքարի ընդվզող Ջոն Էլիոթը։ Դեռևս երեք տարի առաջ նա հանդես էր եկել պառլամենտում Ռեքինհեմի անաղնիվ քաղաքականության մերկացումով և արդեն երկու անգամ հասցրել էր լինել Թաուերում՝ իր բոցաշունչ վտանգավոր ճառերի համար։ Այս անգամ ևս, ինչպես երևում է Էլիոթը լի պատրաստվում նահանջել։ «Այստեղ վիճարկվում են,— ասում է նա,— ոչ միայն մեր ունեցվածքը և մեր հողերը, այլև այն ամենը, ինչը մենք անվանում ենք մերը։ Այն իրավունքները, այն արտոնությունները, որոնք մեր հայրերին դարձրել են ազատ մարդիկ, այժմ դրված են խաղաքարտի վրա»։

Կրոմվելը, առաջ հակված, ուշադրությամբ լսում էր նշանավոր հռետորներին։ Էլիոթից հետո երկար է ունենում հանդարտ,

www.a-pdf.com

սթափ ինքնավստահ պարիտան Ջոն Փիմը՝ օպոզիցիայի մյուս առաջնորդը։ Ահա և նա, Կրոմվելի դարմիկը՝ Ջոն Հեմփդենը։ Ի՞նչ հաստատ ի՞նչ սահուն է խոսում նա, ի՞նչ անբիկյուղ է նա մեղադրանքները նետում ամենազոր ֆավորիտի վրա։ Սա նույնպես արդեն բանտ է նստել ապօրինի հարկեր չվճարելու համար։ Արժանապատվությամբ և իրավունքի պատմության հիանալի իմացությամբ են լեցուն թագավորության նախկին գլխավոր դատավոր, հին օրենսդրության մեկնաբան ութսունամյա ծերունի Էդվարդ Քոկի խոսքերը։ Սա նույնպես նրանց հետ է ովքեր լեն ցանկանում հաշտվել կամայականության հետ։ Հռետորների մեջ աչքի է ընկնում նաև յորքշիրցի ազնվական Թոմաս Ուենթվորթը։ Նա, անպայման, տաղանդավոր է և խոսում է շատ լավ։ Նրա ճառերը այնքան էլ սուր չեն և գրգռիչ, ինչպես Էլիոթինը կամ Հեմփդենինը բայց նա նույնպես պաշտպանում է պառլամենտի իրավունքը, բողոքի ձայն է բարձրացնում ապօրինի հարկերի դեմ, պահանջում է կամայական ձերբակալությունների դադարեցում։

Կրոմվելը հարկ չունի ընտրություն կատարելու։ Նա հինգ սկզբից ամբողջ հոգով համակրում է այդ խիզախ մերկացնողներին, այդ նոր ազնվականներին որոնց ճառերն ասես իր սեփական մտքերի արտահայտությունը լինեն։ Եվ նրա նրանք, դրգռված արքայական կամակորությունից (բոլորի աչքի առաջ Կարլոսը ողորմածաբար մեկնում է ձեռքը որպեսզի անարգ Բեքինհեմը համբուրի) ընդունում են «Իրավունքի մասին հանրագիրը», Կրոմվելը ցնծում է։ Այդ հանրագիրը, ասես վերածնելով Ջոն Թագավորի փառապանծ ժամանակները և ազատությունների մեծ խարտիան, ողդարարում է.

«— Անգլիայի ժողովրդին չպետք է նրա ցանկության հակառակ պարտադրվի այնպիսի փոխառություն և հարկերի վճարում, որոնք չեն հաստատվել պառլամենտի կողմից.

— ոչ ոք չի կարող ձերբակալվել և ունեզրկվել այլ կերպ, քան դատարանի օրինական դատավճռի և երկրի օրենքների համաձայն.

— ապօրինի ձերբակալությունները ինչպես և զինվորների օթևանումը մասնավոր տներում պետք է դադարեցվեն»։

«Իրավունքի մասին հանրագիրը» թագավորն ընդունեց որպես վիրավորանք ու զրպարտանք դատավարության և նրա պաշտոնյաների հասցեին։ Նա պալատ է ուղարկում մի խիստ նամակ, որով արգելում է այդպիսի ելույթները։ Պալատի նախագահին հրամայում է զրկել խոսքից բոլոր նրանց, ովքեր կվարկաբեկեն թագավորական մինիստրներին։ Երևում է, բանը վերջանալու է պառլամենտի արձակումով։ Ոտքի է ելնում Էդվարդ Քոկը։ Նա փորձում է խոսել, բայց արցունքները խեղդում են նրան։ Ցնցելով ճերմակ գլուխը՝ հին դատավորը նստում է տեղը։ Սովորաբար դուսպ Փիմը նույնպես արցունք է խառնում խոսքին։ Նույնիսկ նախագահը չի կարողանում զսպել արցունքները։

www.a-pdf.com

— Եթե այդ բաների մասին մենք իրավունք չունենք խոսելու պառլամենտում,— հնչում է ինչ-որ մեկի ձայնը,— վեր կենանք ու գնանք այստեղից կամ կնստենք այստեղ անբան ու համր։

Պալատը փոթորկվում է, վրդովմունքն աճում է։ Չէ՞, խոսել լիաթոք է, այժմ կամ երբե՞ք։ Լորդերի մոտ սուրհանդակներ են ուղարկում, դեպուտատները իրար անցած՝ վեր են թռչում տեղերից, դուքս Բեքինհեմի կլխին մեղադրանքներ են տեղում։

Բայց համայնքների հուսահատությունը վաղաժամ է. լէ՞ որ արքային տրվելիք փողը դեռևս նրանք չեն հաստատել։ Իսկ առանց դրա նա չի կարող պառլամենտն արձակել, փողը երբեք այնքան պետք չի եղել նրան, որքան այժմ։ Եվ՝ օ՜, ուրախություն։ Հունիսի 7-ին առքան ստիպված զիջում է նա հաստատում է «Իրավունքի մասին հանրագիրը»։ Այդ օրը պալատը ցնծում է, նրա որոշումները տպագրվում և տարածվում են ժողովրդի մեջ։ Քաղաքը մեծ ցնծության մեջ է։ Սիթիում զողանում են զանգերը։ Ժողովուրդը փողոցներն է թափվում։ Վառվում են տոնական կրակներ։

Թև առած համայնքների պալատն սկսում է պահանջել հետագա զիջումներ։ Հարկավոր է իշխանությունից զրկել Բեքինհեմին, դատի տալ նրան, վերացնել մաքսային տուրքերը։ Դա արդեն չափազանց է։ Թագավորը ցրում է պառլամենտը արձակուրդի աշնանը դրանց կրքերը, գուցե թե, մի փոքր հանդարտվեն։

Բայց կրքերը բորբոքվում են. դրանք մոլեգնում են ոչ միայն պալատում, ոչ միայն Սիթիում, այլև ողջ երկրում։ Ինչպես ջուրը եռացող կաթսայում, այդպես եռում, հուզվում է ողջ Անգլիան։ Եվ ահա առաջին սրի շեղբն արյունով է շաղախվում։ Օգոստոսի 28-ին Պորտսմուտում պուրիտան սպա Ջոն Ֆելթոնը իր դաշույնն է խրում ատելի ժամիշխանի կուրծքը։ Բեքինհեմը սպանված է տեղնուտեղը, Լոնդոնի ամբոխը իշխանությունների կողմից ձերբակալված Ֆելթոնին դիմավորում է ծաղիկներով և բհնանքներով։

Շատերի վրա այդ անցքը սարսափ է ազդում։ Թոմաս Ուենթվորթը, որ պառլամենտում այնպես սահուն ազատախոհ ճառեր էր արտասանում, բացահայտորեն անցնում է թագավորի կողմը և անմիջապես ստանում բարոնի տիտղոս և տեղ՝ Պետական խորհրդում։ Պուրիտաններին հալածող Ուիլյամ Լոդը նշանակվում է Լոնդոնի արքեպիսկոպոս։

...Կրոմվելը ջախջախված է, ընկճված, հոգեմաշ եղած Հիլ ինդուրյան նոպան հաճախանում է, նորից սարսափն է պատում նրան։ Սեպտեմբերին նա ընդունելության է գնում մայրաքաղաքի հայտնի բժիշկ Թեոդոր Մայերնին։ Հարուստ, հաջող գործափորձ անցած բժիշկը ուշադիր լսում է նրան, որը բողոքում է ստամոքսի մշտական դավերից ուտելուց երեք ժամ հետո. դրանք չեն դադարում ոչ մի դեղորայքից ձախ կողքում

www.a-pdf.com

[illegible] և անքնություն, երիտասարդը նիհար է, աչքերը փայլում [illegible] տարմինը չոր է և տաք։ Բայց ոչ, բժիշկը չի անտեսում [illegible], նա նրա մարմնում չի գտնում ախտանշաններ։ Այդ [illegible] ոգին, նյարդային ընկալունակությունը, ներքին [illegible] կանությունն են այրում նրան։ «Valde melancholicus» «Սիրտավազություն հույժ ենթակա» — որոշում է բժիշկն իր [illegible]։

Պառլամենտի երկրորդ նստաշրջանը բացվեց 1629 թվականի [illegible] և սկսվեց գարձյալ պառլամենտական լիդերների կրոնական [illegible] քննադատության էր ենթարկվում թագավորի եկեղեցու նկատմամբ վարած քաղաքականությունը. Դեռևս նոյեմբերին նա հայտարարել էր, որ պահանջում է ամեն տեսակ կրոնական բանակոխիների դադարեցում և անվերապահ ենթարկում միասնական, անսասան, իր կողմից ղեկավարվող և գլխավորվող իրեն ենթակա անգլիկանական եկեղեցուն։ Սարդիկ կռահում էին, որ այդ ձևակերպումների ետևում թաքնված է արքեպիսկոպոս Լոդի ամուր աչքը։

Պառլամենտական պուրիտաններն չէին կարող հանդուրժել այդ բանը և, իրենց հերթին, հարձակվեցին կաթոլիկական կարգերի վրա, որոնց ավելի ու ավելի էր ապավինում թագավորը։ Փետրվարին ընդունվում է մի բանաձև, որտեղ ասվում է, թե կաթոլիկությունը սպառնում է խաղաղությանը ողջ Եվրոպայում և ամենից առաջ՝ Անգլիայում։ Բավական չէ, որ պապականները հարմարավետ բույն են հյուսել արքունիքում, նրանք հեղեղել են Իռլանդիան, նրանք ահա ուր որ է կհաղթեն բողոքականներին Եվրոպայում և պապին կծախեն Անգլիան։ Իսկ անգլիական բարձր հոգևորականության մեջ տիրապետում են արմինիանները՝ հաղորդակցողականները, որոնք պատրաստ են կաթոլիկներին ներել անել ոչ միայն ծիսակատարությունների մեջ, այլև շատ ավելի կարևոր բաներում։

Այդ հաշվին հարձակումը բալբոուին մոտիկից էր վերաբերում Կրոմվելին։ Տանը նա բավականաչափ հանկամանալի տեղեկություններ ստացավ նշանակված քարոզիչներին, որոնք փորձում էին եկեղեցի խցկել կաթոլիկական հայացքներ։ Նրանք նեղում էին ազնիվ պուրիտաններին, որոնց թույլ չէին տալիս հավաքվել և աղոթել աստծուն այնպես, ինչպես իրենք էին համարում անհրաժեշտ և իրենց համար ճիշտ հանդարտությամբ։ Նրանք բացահայտորեն ապդարարում էին, թե թագավորական իշխանությունը երկրի վրա հիմնված է ոչ թե ընտրյալ պատգամանագրի, օրենքի կամ սովորույթի, այլ ուղղակի աստծո կարգադրությամբ։ Ժամանակն է վերջ տալ այդպիսի քարոզներին։

Կրոմվելի սիրտը դարկում էր ուժգին, կոկորդը սեղմվում էր. նա ձայն խնդրեց։ Դա պառլամենտում նրա առաջին ելույթն էր՝ դեռևս կարճատև, բուռն, անկապ։ «Դոկտոր Սլաբասաները,—

www.a-pdf.com

...ացնում նա,— սուրբ Պողոս եկեղեցում բացահայտ տարել պապա-
...պետություն է քարոզում։ Երբ հարգարժան դոկտոր Բիրդը ուզում
... խելքի բերել նրան, այնժամ Վինչեսթրի եպիսկոպոսը կան-
...ել նրան իր մոտ, հայտնեց իր անբավականությունը և հրամա-
...յեց հակառակել Ալաբաստերին։ Երիտասարդ հռետորի կրքոտ
...ությունը տպավորություն գործեց։ Պառլամենտական կոմիտեն բո-
...լոր հրապարակեց «պապականության արտակարգ աճի» դեմ
...նգլիայում, Շոտլանդիայում և Իռլանդիայում։

...Դրան ավելացան նաև յուրաքանչյուր ֆունտ և յուրաքանչյուր
...ենա արտահանվող ապրանքների հարկերի դեմ ելույթները։
...Ինչի գեռ պառլամենտը լի վավերացրել այդ հարկերը՝ դրանք
...ջնջվեցին են։

Այս ամենը նման էր բացահայտ խռովության։ Թագավորը
...կարող հանդուրժել իր մենաշնորհի այդպիսի ոտնահարում։
...Դրան Չ-ին նա պառլամենտին հրամայեց հետաձգել նիստը։
...Այդ տեղի ունեցավ մինչև այդ չլսված մի բան։ Համայնքները
...ամբողջեցին ենթարկվել։ Երբ նախագահ Ջոն Ֆինչը վեր կա-
...գավ աթոռից և ուղղվեց դեպի ելքը, նրա մոտ վազեցին Հոլդը և
...Մարլեթայնը պալատի երկու անդամները։ Նրանք բռնեցին սրա
...թևից և վերադարձրին իր տեղը։

- Երդվում եմ աստծով, դուք կնստեք այնքան ժամանակ,
...նի դեռ մենք չենք թույլ տա կանգնել,— մռնչաց Հոլդը։

Պառլամենտի նախագահին ուժով պահում էին բազկաթոռի
...մեջ, իսկ Էլիոթը նույն այդ ժամանակ կարդում էր պառլամեն-
...տական բողոքագիրը։

- Բոլոր նրանք, ովքեր ջանում են պապական նորություններ
...մտցնել անգլիական եկեղեցի, պետք է դիտվեն որպես թագա-
...վորության գլխավոր թշնամիներ.

բոլոր նրանք, ովքեր թագավորին խորհուրդ են տալիս
...տրվել և հարկեր բռնագանձել, առանց պառլամենտի համա-
...ձայնության, կդիտվեն որպես իրենց երկրի թշնամիներ։

բոլոր նրանք, ովքեր կամավոր կվճարեն պառլամենտի
...կողմից չհաստատված հարկերը, կհայտարարվեն Անգլիայի դա-
...վաճառներ»։

Յուրաքանչյուր կետ ուղեկցվում էր հավանության բարձրագոչ
...բականներով։

Այստեղ զինվորներ են գալիս,— հանկարծ զոչեց ինչ-որ
...մեկը։ Արքան որոշել է ում գործադրել։

Մի բանի վայրկյանում պալատի դռները կողպվում են։ Բո-
...ղոքագիրը դրվում է քվեարկության։

Տիրական թակոցը ցնցում է դռները։ Եկան. Էլիոթը իր դրած
...թղթերը մոռեցնում է մոմին՝ դրանք բռնկվում են։ Հոլդը հիշո-
...ղությամբ կրկնում է առաջարկությունները. դռներն ահա ուր որ
...ոտքի կոան ծանր, դղրդացնող հարվածների առաջ։ Առաջար-
...կությունները ընդունվում են միաձայն։ Այժմ դեսպանները

www.a-pdf.com

կարող են թողնել նիստերի դահլիճը մաքուր խղճով։ Ոռները բացվում են, և պալատի անդամները, որոնց մեջ և Կրոմվելը, դանդաղ դուրս են գալիս նիշակավորների շարքերի միջով։ Բոլորի համար պարզ է՝ որ պառլամենտը փակված է, գուցեև, երկար տարիներով։

Հետևանքներն իրենց սպասեցնել չտվին։ Պալատի ինն անդամների, որոնց թվում էլիոթին, Հոլդին, Վալենթայնին, Սելդենին, նետեցին բանտ։ Հատուկ դեկլարացիայում Կարլոսը հայտարարում է, որ չի թույլ տա միջամտություն թագավորական մեծագույն հարցում։ Օպոզիցիայի «խռովարար և չարամիտ» անդամներին նա անվանում է հանցագործներ և թագավորության թշնամիներ։ այդ նրա՞նք են մեղավոր, որ անգլիացիները մայր ցամաքում պարտություն են կրում՝ չէ՞ որ այդ նրանք են, որ այդքան երկար ժամանակ չէին համաձայնում քվեարկել նպաստների օգտին։ Ոչ ոքի, աստծուց բացի, թագավորը պարտավոր չէ հաշիվ տալ իր գործողությունների համար։

Ամպերը Անգլիայի քաղաքական հորիզոնի վրա խտացան և լրիվ ծածկեցին երկնակամարը։ Ժամանակն էր, որ Կրոմվելը վերադառնար տուն։

Հանթինգդոնում գլանքն ընթանում էր իր հունով։ Տուն, տընտեսության հոգսեր, վարձակալություններ, հերկեր նա կրկին կռացել է իր անմեղ հոգսերի ծանրության տակ։ Նրա վերադարձից քիչ անց Եղիսաբեթը բարեհաջող ապատվեց ծնվեց ևս մի մանկիկ, այս անգամ՝ աղջիկ։ Ինչո՞ւ հատկապես հենց այս դստեր նկատմամբ Կրոմվելը պիտի հետագայում տածեր այդքան քնքշանք, ինչո՞վ էր սա նվաճել նրա սիրտը։ Նրանո՞վ արդյոք, որ սրան, ինչպես և իր մորը, ինչպես և իր կնոջը, ինչպես և մեծ թագուհուն, որի հիշատակի առջև նա միշտ խոնարհվում էր, անվանում էին Եղիսաբեթ։ Թե՞ նրանով, որ աղջիկը նման էր մորթեգործի դեռատի դստերը, նրբ դեռ նոր էին ամուսնանում. կլորադեմ, միամիտ կապուտաչյա։ Մի ինչ-որ բան այդ աղջնակի մեջ նրան ձգում էր ավելի ուժգին, քան մյուս երեխաներինը։ Միայն իր առաջնեկին՝ Ռոբերտին էր սիրում նա այդ նույն ուժգնությամբ։

Նրա մոայլությունը չէր անցել այն, ինչ նա տեսել էր պառլամենտում զուր չէր անցել։ Նրա մեջ հասունացել էր մինչ այդ անծանոթ մի վճռականություն։

Ռուիթը չհապաղեց ներկայանալ։ Սնալով առանց առաջին մինիստրի թագավորը, առավել ևս վայրացած՝ համայնքների անհնազանդությունից, դրսևի անգամ անգլիացիների իրավունքների վրա։ Նա խաղաղություն կնքեց Իսպանիայի և Ֆրանսիայի հետ և այդպիսով թեթևացրեց դրությունը։ Սկսվեցին ձերբակալությունները. բանտ էին նետեցնում նրանց, ովքեր հոպատակվելով պառլամենտի կոչին՝ հրաժարվել են հարկերը վճարել։ Հա-

www.a-pdf.com

...ուսակ համայնքների պալատի որոշման՝ գանձում էին մաքսա-
...ները։ Երևան հանվեց և գործողության մեջ դրվեց հնամենի
...ենքը, համաձայն որի յուրաքանչյուր անգլիացի, որն ունի տա-
...կան 40 ֆունտ ստեռլինգից ավելի եկամուտ բերող հող, պար-
...տավոր է ասպետի կոչում ընդունել և, հետևաբար, վճարել որոշ
...նակի հարկ։ Ինչ հպարտությամբ, ինչ ակնածանքով էին Կրոմ-
...ելի նախորդները՝ «ոսկի ասպետ» սըր Հենրին կամ հորեղբայր
...ը Օլիվերը, արքայի ձեռքից ընդունում ասպետական արժանա-
...ատավության տարբերանշանները։ Բայց այժմ Կրոմվելի համար
...ոչ կոչումը դատարկ հնչյուն է, իսկ այն պարտադրելու փորձը՝
...անություն նրա ազատության վրա։ 1630 թվականին նա վճռա-
...կանապես հրաժարվում է դառնալ «սըր» և իշխանությունների
...ամաթիվ հարկադրանքներից հետո դրա համար վճարում 10
...ֆունտ ստեռլինգ տուգանք։ Թագավորի միահեծանական հավակ-
...ությունները հասնում են նաև մինչև գավառական Հանթինգդոն։
...ինում փոքրիկ քաղաքը կառավարում էին երկու բեյլիֆ-
...ու համայնքների խորհուրդը իր 24 անդամներով որոնք
...ովում էին ամեն տարի։ 1630 թվականի հուլիսի 15-ին, հա-
...մայն թագավորական հրովարտակի, այդ խորհուրդը արձակ-
...(«անկարգությունները կանխելու համար») և փոխարինվեց
...գարագլխով և տասներկու օլդերմեններով, որոնք ընտրվում
...էին։ Առաջին դեկավարների անունները թվարկված էին հենց
...ն հրովարտակի մեջ։ Կրոմվելը, Բիրդն ու Բարնարդը նշանակ-
...ված էին հաշտարար դատավորներ։

Ինչ այսպես, նախկին դեմոկրատական կառավարմանը փո-
...խարինելու եկավ օլիգարխիան։ Քաղաքն անկման էր դատա-
...պարտվում։ Աճում էին դժգոհությունները. Հանթինգդոնի բնակիչ-
...ները ոչ առանց հիմքի երկյուղ էին կրում, որ նոր խորհուրդը
...անգություն կանի համայնքային հողերի նկատմամբ, կսկսի
...ուղանել ամեն պատահ առիթով և դրան դատ ու դատաստան
...յինի։

Կրոմվելը չկարողացավ լռել։ Նա ձայն բարձրացրեց ի պաշտ-
...պանություն իր համաքաղաքացիների։ Քաղաքային ժողովներից
...հետո նա հարձակվեց Բարնարդի և նոր քաղաքագլխի վրա
...այրությամբ բռնկված, այլևս չկարողանալով տիրապետել իրեն,
...նրանց հասցեին տեղաց ամենաթունդ մեղադրանքներ։ Պառ-
...լամենտական վիրջին փոթորիկները դեռևս հնչում էին նրա
...ականջներում, նա գոռում էր, ոտքը գետնին զարկում և կոպիտ
...վիրավորանքներ նետում թագավորական այդ առելի գրածոների
...գլխի եռեսներին։

Գործը վատ ընթացք ունեցավ. նոր օլդերմենները բողոք գրե-
...ցին Գաղտնի խորհրդին։ Սեպտեմբերի 2-ին Կրոմվելին ձերբակա-

---

[1] Բեյլիֆ (անգլ.) — թագավորի գործակալը, որն իրական ցնում էր դարձական և դատական իշխանություն։

www.a-pdf.com

[illegible] Մանչեստրը, քանզի [illegible] կոպտությունն համար, բայց հայցը կարգ[illegible] էր նեղությունն խնդրել և [illegible] խոստանալ խոստանալիքը։

[illegible] նա [illegible] հաստատվում էր [illegible] ինքնակոչ [illegible] բանկումները, որոնց հանդիսանում էին մինչև կատաղություն։ Բանվորով վայրագ պատիկումով՝ նա չէր կարողանում տիրապետել ինքն իրեն, չէր կարողանում կանգ առնել և երկար ժամանակ մոլեգնում էր։ Իսկ հետո միշտ կարմրում էր և ամաչում ինքն իրենից։

Հակառակորդները ձեռակոնորեն հաշտվեցին Կրոմվելին բաց թողեցին, բայց ձերբակալության խայտառակությունը և Գաղտնի խորհրդում դատաքննությունը սև բիծ մնաց նրա խղճի և հեղինակության վրա։ Այն մասին, թե Հանթինգդոնից կարելի կլիներ ընկնել նոր պառլամենտ, խոսք անգամ լինել չէր կարող։ Երեք տարի առաջ նրա ծեր հորեղբայրը՝ սըր Օլիվերը, սնանկացավ և վաճառեց իր սքանչելի դղյակը՝ Կրոմվելի մանկության ուրախությունը։ Հոգի եկամտաբերությունն ընկնում էր։ Կրոմվելներն ապրատանում էին։ Կյանքը, մարդիկ, քաղաքը՝ իր ցածրիկ երկնքով և ղանգերի վհատեցնող զողանջներով, հանկարծ նողկալի դարձան Օլիվերի համար։

Իսկ ի՞նչ ելնի, եթե ողջ ընտանիքով վեր կենան գնան օվկիանոսից այն կողմը։ Նոր աշխարհում, ասում են, պուրիտաններին համար ապրելը դյուրին է։ Սրվայրներից ու յոմաններից և արհեստավորներից շատ-շատերը, որոնց համար հայրենիքը դարձել էր խորթ մայր, արդեն թողել էին իրենց նախնիների հողերը։ Վաճառել էին կրպակներն ու ջրաղացները, և իրենց կանանց ու երեխաներին հանձնել նավի նոնջուն տախտակամածին՝ որ ճոճվում էր նրանց ոտքի տակ, որպեսզի այնտեղ՝ օվկիանոսից անդին, գտնեն նոր աշխարհ նոր աղատություն։ Ահա և նրա դարմիկը՝ Հեմփդենը, խորհում էր մեկնելու մասին։ Պառլամենտի շատ անդամներ արդեն ծովով շարժվում էին դեպի հնարավոր երկրներ, իսկ պետական քարտուղար Հենրի Վենի ավագ որդին և ժառանգորդը, մի փայլուն պատանյակ՝ որ մեծ հույսեր էր նրա համար, փախավ Ամերիկա։

Ինչպես էլ որ լինեի, Հանթինգդոնում մնալն այլևս անհնարին էր։ 1631 թ. Կրոմվելը վաճառում է տունը, ունեցվածքը, հողը և ընտանիքով տեղափոխվում է Սենթ Այվզ փոքրիկ քաղաքը, Ուղ գետի հոսանքով հինգ մղոն ներքև։ Այնտեղ նա վաճառում է մի արտատեղի և անասուն է պահում։

Սակայն Սենթ Այվզն էլ բոլորովին նման չէր ավելացած երկրին։ նույն ցածրիկ, ամպերով ծածկված երկինքը, նույն ընդարձակ մարգագետինները, ոտքի տակ ճաճանչող խրուտներն ու տորֆաճահիճները, նույն պղտոր ու ծանծաղ Ուղը։ Իսկ կյանքն այստեղ, թերևս, ավելի դժվար է, քան Հանթինգդոնում։ Գետի

www.a-pdf.com

...ներով մեկ վարձակալած արդյունաբերություններում ...ամվելը կովեր է պահում։ Նա սովորական նախապապի կյանք վարում սերտորեն կապված է բնության հետ։ Ուղը խոնավ տներին հորդանում է, դուրս է գալիս ափերից, հեղեղելով արդյունաբերությունները, ամռանը վրա է հասնում շոգը, երաշտը, կամ ոտքի տակ ճաքճքում է։ Զորանում, արևահարվում, միջատներով է ծածկվում նրա դեմքը, շորանում ու ցավում է կորը, ձայնը դառնում է խռպոտ։ Կիրակի օրերը նա գնում է եկեղեցի, վիզը փաթաթելով կարմիր ֆլանելե թաշկինակով։

Դրությունը երկրում քանի գնում վատանում է։ Պառլամենտը վտարված է։ Ռեակցիան հարձակվում է բոլոր կողմերից։ Պառլամենտական մարտիկները լռել են, ոմանք քաշվել նստել են իրենց գյուղերում, զբաղվում են տնտեսությամբ, մյուսները, ...նց թվում՝ Փիմը, Հեմփդենը, Սենթ-Ջոնը, Բարինգթոնը, ...նց նվիրել են առևտրական և գաղութային գործունեության։

Թագավորը նորանոր վճարումներ է պահանջում. այժմ հրամանը է տրված վճարել, եղածներից բացի, էլի ինչ-որ «նավատորամ»։ Անհիշելի ժամանակներում դա հավաքում էին մերձենյա կոմսություններից նավաշինարարության համար։ Այժմ պահանջում են, որ այդ տուրքը վճարի ամբողջ երկիրը։ Ապօրինի շորթումները, վատ բերքատվությունը ստիպում են ավելի հոգալ գոտին, էլ ավելի զզուշ վարվել ընտանեկան բյուջեի հետ։

Ավելի վատ, թվում է, չէր կարող լինել։ Բայց չի՞ լինում ...ոյթ, որ հենց ամենադժվարին պահին, կենսական անկման ...նց ամենաանելանելի դրության մեջ լցիտես որտեղից օգնություն է հայտնվում, ուժով ես լցվում և լույսի մի շող է ճառագայթում։ Գուցե մինչև հոգու խորքը ապրած հենց այն ցնցումները՝ ...ռլամենտի հալածումը, արքայական հրովարտակի դեմ պայքարի ձախողումը, իրեն ձերբակալելն ու Գաղտնի խորհուրդ ...նչելը, տան և ունեցվածքի վաճառքը, կյանքն անհայտության ...ն անցկացնելը՝ Կրոմվելի հոգում բացահայտում են լույսի աղբյուրը։ Հենց այդ ժամանակ էլ նրա մեջ ավարտվում է Կալվինի ...ոմից նախանշված դարձի գալու պրոցեսը։ Անողոք դատաստան իր նկատմամբ, ցավ ու կսկիծ սեփական մեղսալիության ...ինդեպ, ապաշխարանք, ընտրյալ լինելու հույս և, վերջապես, ...ու փրկության վստահություն։ Ահա այդ պրոցեսի աստիճանները։ Երբ կյանքը նոզկալի է, երբ այն ի հայտ է հանում միայն ախտ ու արատ, դա հենց ճիշտ այն ժամանակն է, երբ, ինչպես քարոզում է Կալվինը, պետք է դիմել աստծուն, «զգալ իր մեջ Քրիստոսին», նրա սերն ու գթասրտությունը փուչ արարածի հանդեպ։

Հենց այդ ժամանակ էլ Կրոմվելը դառնում է «սուրբ», ինչպես ...ոչում էին բոլոր նորադարձներին։ Նրա տկարությունն անցնում է։ Նրա առջև բացվում են նոր բարեբեր հորիզոններ։ Հետագայում նա այդ մասին կդրի այսպես. «. Ասալոած չլինեց ինձ,

www.a-pdf.com

[illegible] Պրեսբիտերական [illegible], որտեղ [illegible] [illegible] մեջ, նոպին իմ հայրայրիքների [illegible] մեջ, և, երբ ինձ պատիվ ունի փառաբանել իմ առաջին զարմուհի կամ առաջադեմ [illegible] Լրտեսի կլինեմ։ Այդ մասին նա երկար զրույցներ էր վարում իր բնկերոջ՝ Հենրի Կասունոյի հետ, որն այժմ ծառայում էր փոխերկրի (նա պատահական չէ) Սենթ Այվզի եկեղեցում։

Բայց [illegible] մասին ասել։ Մի նշանակալից իրադարձություն կրկին բերեց ալ Անգլիան։ Կրոմվելի դարմիկը, Բերինհեմշիրի սքվայր Հոն Համփդենը, բացեիբաց հրամայվում է վճարել «նավային գրամբ»։ Նա պահանջում է, որ դատարանը, որտեղ նրան կանչել էին, ապացույցի այդ տուրքի օրինական լինելը։ Նրա անունը թնդում է և շատերը հետևում են նրա օրինակին։ Ինչ-որ մոայլ լուրեր են պտտվում լորդերի դեմ պատրաստվող խռովությունների վերաբերյալ։ Փոթորիկ կլինի։

1636 թվականին վերջապես բախտը ժպտաց Օլիվեր Կրոմվելին։ Նրա մորեղբայրը՝ Թոմաս Սայուարդը, վախճանվեց անզավակ՝ իր ողջ ժառանգությունը թողնելով ազգականին։ Գավառական կապալառու-անասնապահից Կրոմվելը հանկարծ դարձավ ունևոր սեփականատեր, պատվավոր քաղաքացի։ Իլ քաղաքի, որը գտնվում է Հարևան Քեմբրիջի կոմսությունում։ Ինն սուն ակր[1] եկեղեցական հող, ութ ակր արոտավայր, եկամուտներ եկեղեցական տասանորդից, մի լավ դաստակերտ Իլում մեծ առանձնատնով, որտեղ ծնվել էր նրա մայրը, ձիանոցով, ամբարներով, բանջարանոցներով մի ամբողջ կարողություն։ Այդ ամենը, որ տարեկան բերում էր չորս կամ հինգ հարյուր ֆունտ, նրան պատկառելի դիրք էր տալիս քաղաքում, և Կրոմվելը ոգի առավ։ Տան կողքին գտնվում էր սուրբ Մարիա եկեղեցին, քիչ հեռու հառնում էր մայր տաճարի վիթխարի դանգվածը։ Տունն այդ լայն էր ու շեն, թեպետ չէր փայլում պերճաշուքությամբ։

Հողն էլի նույն հողն էր՝ Մեծ հարթավայրի խոնավ լայնարձակ, ճահճային հողը։ Փոքրիկ քաղաքի բնակիչներն այստեղ տավար էին պահում և արածեցնում միասին, լայնարձակ, ոչ ոքի չպատկանող արոտավայրերում որոնք լցված չէին ցանկապատերով։ Նրանց կենցաղը քիչ բանով էր տարբերվում հեռավոր նախնիների կենցաղից, որոնք անհիշելի ժամանակներից ի վեր հենց այդպես նախիր էին պահում արգավանդ մարգագետիններում, օձաձուկ էին բռնում Ուղից (որտեղից էլ ավանդաբար գալիս էր Իլի[2] անունը) և որսում ճահճային թռչուններ։

Այստեղ Կրոմվելը վերջապես իրեն ազատ զգաց։ Նրա կյանքի գլխավոր հարցը վճռվա՝ էլ։ Նա էլ էր արդեն հավատով,

---

[1] Մեկ ակրը հավասար է մոտավորապես 0.4 հեկտարի։

[2] Eel—անգլերեն՝ օձաձուկ։

www.a-pdf.com

սա ոչ ինտրիգային է։ Նա պարզամիտ է և կարող է դեռևս ծանր նախախնամության սրբազան կամքի համար։ Եվ այդ հանգամանքը հրաշքով տիրանալը իր նկատմամբ ասավածային ողորմածության նշան չէ՞ր արդյոք։ Ժամանակն էր խորհելու անցնել գործի՝ և ոչ թե պարզապես իր առօրյա անտեսության գործին, այլ առավել լայն նշանակալի, փառավոր գործունեության։ Նա այժմ գիտե թե ինչու է ինքն ապրում։

Ամենից առաջ Կրոմվելը վերջնականապես կտրում է իր կապերը տեղական հոգևորականության հետ՝ ծախու եպիսկոպոսների և եկեղեցու այլ սպասավորների, որոնք բարեհաճորեն կատրում էին թագավորի կամքը։ Մայր տաճարում նա նույնիսկ էլ երևում, պատարագի չի գնում, ծիսակատարություններ չի անում որով քաղաքում հարուցում է ոմանց դժգոհություններ։ Այդ նա համոզված է, որ իրեն հարիավոր են միջնորդներ աստուծու հետ հաղորդակցվելու համար, և արհամարհում է թիկունքում թողած շշուկները։ Անգլիայի շահերը, կառավարական քաղաքականությունը, ժողովրդի իրավունքները՝ ահա թե ինչն է այժմ զբաղեցնում նրան։

Արքայական միահեծանությունն ուժ է հավաքում։ Կարգ ու կանոն երկրի ներսում, փոխ, որ պետք է հավաքել առանց պառլամենտի թույլտվության, տմուր եկեղեցական քաղաքականություն, որպեսզի ցանկություն չլինի խորհելու և դատողություններ անելու՝ ահա նրա երեք գլխավոր խնդիրները։

Առաջին երկուսի կատարմանը ձեռնամուխ է լինում օպոզիցայի վերջին առաջնորդներից մեկը, իսկ ներկայումս թագավորական բարոն, Հյուսիսային խորհրդի նախագահ, Իռլանդիայի գլխավոր-փոխարքա Թոմաս Ուենթվորթը. Նա մի ընդունակ, խելացի, հարծարար մարդ է։ Նույնպիսի կրքոտությամբ, որով դեռ վերջերս պաշտպանում էր պառլամենտի իրավունքները Ուենթվորթը ներկայումս Իռլանդիան ենթարկում է անգլիական գահի իշխանությանը։ Մինչև նրա գնկավարման տարիները անգլիական միահեծանության պատմության վառ և ահարկու էջերն էին «Սև ոմսը», ինչպես կոչեցին նրան հետագայում, անողոքաբար ջնջում է բնակիչներին իրենց հողերից։ Նա օգտագործում է բոլոր միջոցները, որպեսզի Իռլանդիայից որքան հնարավոր է շատ հող քամի թագավորի համար։ Նրա օրոք ծաղկում են ամեն տեսակի ապօրինի հարկերը, տուգանքներն ու տուրքերը։ Բանտերը լցվում են դժգոհներով, պաշտոնյաները վայրագություններ են անում, պառլամենտը Ուենթվորթի ձեռքում դառնում է հնազանդ գլենք։ Անհնազանդներին գամում են անարդանքի սյունին, ծակծկում են նրանց լեզուն, խարանում են շիկացած երկաթով, կախում են։ Այդպիսի միջոցներով են Իռլանդիայում հիմնվում անգլիական դատարանները, սովորույթները, անգլիական եկեղեցու տեսները։ Իսկ ավելի լավ հնազանդեցման համար ստեղծվում է

www.a-pdf.com

կանոնավոր մշտական բանակի, որը, ո՞վ գիտե կարող է ժամանակի ընթացքում պետք գալ նաև Անգլիայում։

Ոչ թագավորը գոհ է։ Իսլանդիան դեռ երբեք չի տվել այդքան եկամուտ, դեռ երբեք չի թագավորել այստեղ այդպիսի խաղաղություն, հանդարտություն, այդքան լուռ հնազանդություն։ Ուենթվորթը հրաշք գործեց. նա այս երկրում հաստատեց մի կարգ, որից Անգլիան հիմա միայն շահ էր ստանում։

Անգլիայի հոգևոր հանդարտեցման խնդիրը դրվում է Ուիլյամ Լոդի վրա։ 1633 թ. թագավորը նրան նշանակում է բարձրագույն եկեղեցական պաշտոնի՝ Քենթերբերիի արքեպիսկոպոս։ Դժվար էր գտնել նրանից ավելի պակաս հարմար մի մարդ։ Վաթսունամյա Լոդը մանրախնդիր է համառության աստիճան, ինքնասեր, սահմանափակ, անհեռատես, դաժանասիրտ։ Նա ամենից ավելի հավատարիմ է, նույնիսկ, ոչ թե սուրբ գրքի տառին, էլ չասենք, իհարկե, դրա ոգուն, այլ զուտ արտաքին, կրոնապաշտական ծիսակատարությանը։ Հաղորդության սեղանը անպայման պետք է դրվի վանքի արևելյան պատի տակ, ասված չանի, եթե քահանան քարոզը կարդա սոսկ փարաջայով։ Ոչ, նա պիտի հագած լինի հանդիսավոր շուրջառ, այլապես կորած է։ Ամեն ոք, ով մտնի եկեղեցի, պետք է խաչակնքի, այսքան ու այսքան անգամ խոնարհվի, ծնրադրություն անի, երբ պետք է՝ աղոթքներ արտասանի, իսկ երբ էլ պետք է՝ երգի դրանք, երկրպագի սրբապատկերներին և աղոթի ոչ թե ոնց խելքին փչի, այլ համաձայն մեկընդմիշտ սահմանված կանոնի՝ համաձայն «Ընդհանուր աղոթագրքի»։

Ոչինչ չէր կարող ավելի վրդովել պուրիտաններին, քան այդ նեղմիտ կարգադրությունները։ Ինչպե՞ս, ուրեմն, արդեն այսքա՞ն բան նվաճելուց հետո վերադառնալ նորից դեպի հին «պապական» ծեսերը, նորից նստնալ, քահանայից հետո կրկնել անմիտ խոսքեր, հանդուրժել այդ փարաջաները, թասերը, ծածկոցները, թանկագին սրբապատկերները, երգեհոնային երաժշտությունը։ Վաղուց արդեն մարդիկ քաղաքներում ու գյուղերում մերժել էին այդ կրոնապաշտությունը, վաղուց է, ինչ նրանք կիրակի օրերը լսում էին ոչ թե տգետ վերևից նշանակված եպիսկոպոսական դրածոներին, այլ իրենց դասախոսներին, որոնց իրենք էին վարձում, սեփական քսակներից վճարելով։

Եվ ահա այժմ Քենթերբերիի արքեպիսկոպոսը հարձակում սկսեց պուրիտանական քարոզիչների դեմ։ Եպիսկոպոսները նրա կարգադրության համաձայն սկսեցին կիրակի օրերն արգելել «կամավորական» դասախոսների քարոզները, ծիսականներին էլ նույնպես պարտավորեցնում էին լսել պաշտոնական քահանային, որը միշտ նույն բանն էր ասում. անառարկելիորեն հնազանդվել թագավորին ու իշխանավորներին։ Այդ քարոզների տեքստերը կազմում էին արքեպիսկոպոսական գրասենյակներում և բաժանում ծեսերին։

www.a-pdf.com

Թագուհին, որ սովոր էր դաղիական նրբագեղ զվարճանքների ցանկանում էր կիրակի օրերը խաղալ թատրոնում և պարել։ Հետո նրա լոդը վերացնում է կիրակնօրյա զվարճությունների արգելքը։ Իսկ դժգոհների նկատմամբ գործի է դնում բարձրագույն դատարանները Աստղերի պալատը և Բարձր հանձնաժողովը, որոնք մարդկանց դատում են ապօրինաբար, շրջանցելով ընդհանուր կանոնները։ Կրոմվելը, ապրելով Իլում, շարունակ լսում էր ազնիվ պուրիտանների խոշտանգումների ու մտրակահարությունների, հրեշավոր տուգանքների ու ձերբակալությունների մասին։ 1637 թվականի շոգ հուլիսին Աստղային պալատի դատավճռով Ուիլյամ Փրինը, դոկտոր Ջոն Բասթվիկը և քահանա Հենրի Բերթոնը անարգանքի սյունին գամվեցին Լոնդոնում, Թայբերնյան բլրի վրա։ Նրանք հանդգնել էին իրենց պարսավագրերում դատապարտել եպիսկոպոսական իշխանությանը։ Շիկացած երկաթը խայտառակության խարան է քաշում սրանց լրեսներին, դահիճի դանակը կտրում է ականջները։ Փրինը կտրելու բան չուներ. նա ականջները կորցրել էր դեռ երեք տարի առաջ, երբ անվեհեր կերպով անարգեց թագուհու թատերական ելույթները։ Կտրում են նրա ականջների մնացորդները, և նա մոլեգնած գոչում է թագավորին

— Միևնո՞ւյն է, ես ուժե՞ղ եմ քեզանից։

Մահապատիժներն ու խոշտանգումները միայն բորբոքում են դժգոհությունը։ Ամբոխը նահատակներին դիմավորում է ծաղիկներով, ուղեկցում է մինչև բանտ։ Շուտով դրա սովոր պատերից մեկ-մեկ, զույգ զույգ ներս են թափանցում նրանց աշակերտներն ու համախոհները։ Պատանի ենթավարպետ Ջոն Լիլբեռնը ձեռնամուխ է լինում գաղտնորեն Հոլանդիայից տեղափոխել հերոսների այնտեղ տպագրած պարսավագրերը, իսկ մի տարի անց նա էլ է գալիս՝ սայլակին կապված, արյան ու քրտինքի մեջ կորած, ցնցվելով դահիճի եռաճյուղ մտրակի հարվածներից։ Բայց նա իր գլուխը չի խոնարհում, հպարտորեն հրաժարվում է ետ կանգնել իր համոզմունքներից։

Որքան ուժեղ է ճնշումը վերևից, այնքան անսասան ու կատաղի է ժողովրդի ցասումը։ Եվ թող դատեն, թող բանտ նետեցնեն Ջոն Հեմփդենին, ապօրինի հարկը վճարելուց նրա հրաժարվելու համար, նրա դատավարության հանած աղմուկը միայն բորբոքում է դժգոհությունը, և Հեմփդենի կողքին կանգնում են նորանոր հետևորդներ։

Կրոմվելը այս տարիներին կենտրոնացած է, ձգտումներով լի հառնդուն։ Կյանքը նրա համար արդարությանը ծառայելն է։ Նոր դիրքը քաղաքում և կոմսության մեջ նրան հնարավորություն է ընձեռում պաշտպանել ոչ միայն իր իրավունքները, այլև հարևաններինը, բոլոր մերժվածներինը։ «Բաց արա քո շուրթերը անուն ձայնաղուրկների և հանուն բոլոր որբերի պաշտպանու-

www.a-pdf.com

թյան. Բայց արա՛ բո՛ շուրթերը հանուն արդարադատության և հանուն խեղճերի ու աղքատների գործի...»

Դեռևս մինչև Կրոմվելի այստեղ գալը 1634 թվականին կոմս Բեդֆորդը ձեռնամուխ էր եղել Քեմբրիջ կոմսությունում ճահիճները չորացնելուս։ Հոլանդական լավագույն սիստեմի համաձայն տորֆաճահճուտներն էին գցել դրենաժներ։ Ցամաքեցված հողերը, ինչպես անցյալում էր եղել, չէին ծառայելու որպես հասարակական արոտավայրեր։ դրանց մի մասը դառնալու էր չորացնողների սեփականությունը մյուս մասը անցնելու էր թագավորին։ 1637 թվականին աշխատանքները ավարտված էին, և լայնարձակ մարգագետիններում սկսեցին ի հայտ գալ ցանկապատեր։ Տեղացի հողատերերը զրկվեցին համայնական արոտատեղիներից, իսկ խեղճ ու կրակ մարդիկ մնացին առանց մի կտոր հացի։

Նախարապաններին իրենց պարարտ նախիրների հետ սկսեցին քշել հին արոտավայրերից դրանք, որպես թե, կոմս Բեդֆորդի հողերն են։ Բազմություն հավաքվեց նեղաններով ու գերանդիներով դինված գյուղացիներն սկսեցին նեղել չորացնողներին «Ձեռք մի՛ տվեք մեր կովերին, կորե՛ք այնտեղ, որտեղից ելել եք»։

Ինչպես ամեհի նժույգը, որ կողերին զգում է խթանների անողոք ծակոց, Կրոմվելը մարտի նետվեց։ Նա կարողացավ հանդարտացնել ամբոխին։ Թող գյուղացիներն իրեն մենակյան մանր դրամ վճարեն յուրաքանչյուր կովի դիմաց՝ հավասարական հողերում արածեցնելու համար, իսկ ինքը խնդրագիր կտա հողի հանձնումը հինգ տարով հետաձգելու համար։ Այդ հինգ տարիներին նրանք աղատորեն կկարողանան օգտվել համայնական արոտներից իսկ հետո էլի մի բան կմտածենք։

Մինչ խնդրագիրը կանցներ քննարկումների քաշքշուկի միջով, ճահիճների Մեծ հարթավայրի էլի մի քանի տեղերում գյուղացիական խռովություններ բռնկվեցին ընդդեմ չորացնողների։ Կառավարությունը ստիպված նահանջեց։ Կրոմվելի միջամտությունը կատարվեց, և օկրուգի աչքում նա դարձավ ճահճուտների տերը թույլերի հզոր ու բարեպաշտ ապավենը։

Նրա ընտանիքն աճում էր։ 1637 թվականին աշխարհ եկավ Մերին, 1638-ին էլի մի աղջիկ՝ Ֆրենսիսը։

Իսկ հաջորդ տարին Կրոմվելը ծանր հարված ստացավ նրա առաջնեկն ու հույսը, քնքշորեն սիրված ու սիրող, աստվածավախ ու լուսամիտ Ռոբերտը, խելացի, ընդունակ տղան վախճանվեց՝ հազիվ բոլորած իր տասնյոթ տարին։ Ողջ կյանքում հայրը կվերհիշի այդ սարսափելի կորուստը։ Քսան տարի անց, ինքն էլ լինելով մահվան մահճում, նա մի անգամ ևս կասի «Իմ ավագ որդու մահը որպես դաշույն խոցեց իմ սիրտը»։

Անսասան միապետական կարգը վերջապես ճեղքվածք տվեց։ Առաջին ծիծեռնակը եկավ հյուսիսից, դաժան լեռնային մի երկ-

www.a-pdf.com

րից, որտեղից իր սերումն է առել աստծուց անիծված Սթյուարտների ցեղը։ Դեռևս անցյալ դարում շոտլանդացի Կալվինի՝ Ջոն Նոքսի, բոցաշունչ, սարսռեցնող քարոզները այդ երկիրը բերին բողոքական հավատքի։ Նրանք կաթոլիկ թագուհի Մարիա Սթյուարտին վերջ ի վերջո հարկադրեցին գլուխը կորցրած փախչել և փրկություն որոնել Եղիսաբեթ թագուհու մոտ։ Հին տոհմերը, որ պառակտված էին ներքին թշնամությունից, հավատի հարցերում դուրս եկան միասնական այդպես նրանք ամենից լավ կարողացան պահպանել իրենց ազգային արժանապատվությունը հավերժական և ուժեղագույն թշնամու՝ Անգլիայի հանդեպ։ Նրանք գուսարեցին գլխավոր ասամբլեա եկեղեցու անդամների համընդհանուր ժողով, և այն իսկապես դարձավ իշխանության ազգային մարմին։ Նոր թագավորը, չնայած շոտլանդական իր ծագմանը, չէր ճանաչում և չէր սիրում այդ երկիրը։ Առաջին անգամ նա այնտեղ այցելեց միայն երեսուներեք տարեկան հասակում և ամենաանբարենպաստ տպավորություն տարավ այդ աղքատ, մռայլադեմ, բարբարոս, անզուսպ ժողովրդից։ Նա ջանում էր որքան հնարավոր է շատ փող տանել Շոտլանդիայից, իսկ կարգ հաստատելու համար (դե իհարկե, արքեպիսկոպոս Լոդի խորհրդով) ա նտեղ մտցրեց պարտադիր անգլիկանական ժամասացություն։

Բայց դա այն ժողովուրդը չէր, որ թույլ տար անպատիժ ոտնահարել իր հավատը։ Իսկ երբ Լոդը ձեռնամուխ եղավ ուժեղացնելու շոտլանդական եպիսկոպոսարանը խուլ դժգոհությունը վերածեց սպառնալի ընդվզումի։

Սակայն եկեղեցու բթամիտ սպասավորը, որի համար կարևորն ամենից առաջ զգեստավորման գույնն էր և խոնարհանքների քանակը, չէր ընկճվում։ 1637 թվականին նրա հրահանգով Շոտլանդիայում մտցվեց «Ընդհանուր աղոթքների գիրքը»։ Ոչպես թե թագավորության մեջ ամեն ինչ պետք է կատարվի միասնական ձևով։

Եվ Շոտլանդիան ոտքի ելավ։ Անգլիական պատարագամատույցներով եկեղեցիներում արարողություն կատարելու փորձերը առաջ էին բերում վրդովմունքի աղաղակներ, սուլոց, ոտքերի դոփյուն. առավել խիզախները նետվում էին քահանայի վրա և, չարախնդորեն բռնելով հանդիսավոր հանդերձանքի քղանցքից, լարշ տալով իջեցնում էին ամբիոնից և աքացի տալով վռնդում տաճարից։ Նոր աղոթագրքերը պատառ-պատառ էին անում, այրում. «Օ՜, որքան է ոտնահարված շոտլանդական սրբազան եկեղեցին,— միաբերան գոչում էին պուրիտանական քարոզիչները՝ համանակելով Նոքսի մոլեգին մերկացումները,— Նրա նրբին լեմքը պատված է պոռնկուհու մեղսալի փայլով։ Նրա ամոթալի ճակատը խարանված է աղվեսաբզոշմով։ Նրա սքանչելի խոսքերը գալարված են հափաքրիստոնեական ոճով։ Նրա ողջախոհ ականջներում լսելի են մեծ պոռնկուհու համախոհների ատյագները»։

www.a-pdf.com

1638 թվականի գարնանը ամբողջ երկրով մեկ սուրբգրում էին Ազգային Կովենանտը՝ մի փաստաթուղթ, որը պահանջում էր երկիրը կառավարել օրենքի համաձայն, պահպանել պառլամենտական նորմերը, իսկ կալվինիզմը ճանաչվում էր որպես «միակ ճշմարիտ և աստվածահաճո կրոնը»։ Նրա համար պետք է պայքարել և «պաշտպանել այն մինչև կյանքի վերջը բոլոր ուժերով և միջոցներով»։

Այդ նույն տարվա նոյեմբերին Գլխավոր ասամբլեան հռչակ հայտարարեց Շոտլանդիայում եպիսկոպոսների իշխանությունը, «Ընդհանուր աղոթագիրքը» և հիմնեց երկրում պրեսբիտերական եկեղեցական կարգ։

Կարլոսը վրդովվեց։ Այդ բարբարոսները հանդգնել էին հակադրվել իրեն։ Ո՛չ, դրանց հարկավոր է խելքի բերել որքան կարելի է շուտ։ «Քանի դեռ այդ Կովենանտը ուժի մեջ է,— ասաց նա,— ես Շոտլանդիայում ունեմ ոչ ավելի մեծ իշխանություն, քան մի որևէ վենետիկցի դուժ։ Ավելի շուտ ես կմեռնեմ, քան կհանդուրժեմ դա»։ Նա հրամայեց ձեռնամուխ լինել պատժիչ զորք ստեղծելուն։

Մինչդեռ այդ միջոցին, 1639 թվականի փետրվարին, շոտլանդական քսաներկու հազարանոց բանակը, հանդերձավորված և զինված տեղական միջոցներով, անցավ սահմանը և ներխուժեց Անգլիա։ Սկսվեց պատերազմը։

Անգլիացի պուրիտանները ցնծում էին։ Ահա թե ինչպես պետք է պայքարել սեփական հավատի համար։ Սպանիլ հեգնանքով նրանք դիտում էին, թե Կարլոսն ինչպես է հապշտապ բանակ հավաքում ամեն տեսակ թափթփուկներից, անգամ չմտածելով, թե ինչպես պետք է վճարի նրանց։ Հետևանքը եղավ այն, որ, երբ բանը հասավ առաջին ընդհարմանը արքայական զորքերը, իրենց դիմաց տեսնելով փորձված զորավար գեներալ Լեսլիի մարտունակ ջոկատները, գեներալ, որ մայր ցամաքում ծառայել էր հենց Գուստավ Ադոլֆի զրոշի տակ, ռոնդոնների նման ցրիվ եկան։

Պատերազմը խայտառակ կերպով տանուլ էր տրված, և 1639 թվականի ամռանը Կարլոսը հապճեպ հաշտություն կնքեց, շոտլանդացիներին խոստանալով լիակատար ներում, ազատություն իրենց պրեսբիտերական «կիրկային» և պառլամենտի շուտափուլթ գումարում։ Բայց ով որ հավատում էր այդ խոստումներին, նա վատ էր ճանաչում Կարլոսին։ Գոռոզ տիրակալը երբեք՝ ոչ մինչև խոստանալը, ոչ էլ դրանից հետո, իրեն պարտավորված չէր զգում կատարելու սեփական խոստումները։ Շոտլանդիայի հետ հաշտությունը նրա համար ընդամենը անհրաժեշտ մի հեռանգում էր։ Պառլամենտերը դեռ նոր կնքած՝ նա անմիջապես էլ Շոտլանդիայի իր եպիսկոպոսներին գաղտնի հրաման ուղարկեց բոլոր բարձրացնելու Գլխավոր ասամբլեայի գործողությունների դեմ, իսկ ինքը գաղտնի հարաբերությունների մեջ մտավ լեռնցի

www.a-pdf.com

ամենի առաջնորդների հետ, որոնց գլխավորում էր մարկիզ Մոնթրոզը

Բանակ, լավ, կանոնավոր բանակ, ահա թե ամենից առաջ ինչ էր պետք թագավորին։ Նա Իռլանդիայից կանչեց հավատարիմ և ձեռնարկեց Թոմաս Ուենթվորթին և 1640 թվականի հունվարի 12-ին նրան շնորհեց Սարաֆորդի կոմս տիտղոսը։

Մինչև երեսնական թվականների վերջը Կրոմվելը հազիվ թե մտահոգված էր Անգլիայի հյուսիսային մերձավորագույն հարևանի մասին։ Նա գիտեր, որ նրա խստաբարո ժողովուրդն ընդունել է պուրիտանական հավատը և մերժում է անգլիկանական կարգերը։ Հնարավոր է, որ նա հանդիպում էր շոտլանդացի քարոզիչների հետ և կամ անասուն էր գնում շոտլանդական վաճառականներից, բայց այդ վայրի երկրի ներքին գործերը նրան քիչ էին հետաքրքրում։ Այժմ հանկարծ հեռավոր հյուսիսի լեռները նրա համար ողողվել էին նոր լույսով, իսկ դրանց ժողովուրդը դարձել էր դաշնակից։

Երբ նրա տանը օթևանելու համար տեղավորվել էին անգլիացի սպաները, որոնք գնում էին դեպի հյուսիս՝ թշնամուն ջախջախելու համար, Կրոմվելը բացեիբաց հայտնեց նրանց իր դժգոհությունը։ Նա հարկ չհամարեց նրանցից թաքցնել իր խստակրոն պուրիտան լինելը և քիչ էր մնում նրանց ներկայությամբ աղոթեր շոտլանդացիների հաղթանակի համար։ Սպաները տաբակուսանքով վեր էին քաշում ուսները, իսկ հարևանները հիացմունքով մեկը մյուսին պատմում էին նոր խիզախության և բարեպաշտության մասին։ Հարաճուն համբավը կոմսությունում բորբոքում էր նրա նկրտումները։

Ցուրաքանչյուր շաբաթը բերում էր նոր լուրեր։ Թագավորը Լոնդոնի բանկիրներից բռնագրավել է Թաուերում պահպանվող ամբողջ ոսկին ու արծաթը։ Դրամատերերի վրդովմունքն այնքան բուռն է եղել, որ թագավորը որոշ քաշքշուկից հետո ստիպված է եղել գանձերի մեծ մասը վերադարձնել նրանց։

Ոչ ոք չէր ուզում հարկերը վճարել, այլմ արդեն ոչ միայն «նավային գրամները», այլև արքայական մյուս տուրքերը. չէ՞ որ գրանք չէին արտոնված պառլամենտի կողմից։ Թագավորը փորձում էր դրամ ձեռք բերել Իսպանիայից, Ճիզվիտ վաճառականներից և նույնիսկ պապից, բայց՝ ապարդյուն։

Իռլանդիան հնազանդեցնող Ուենթվորթը իր մոտ զրույցի կանչեց լոնդոնյան խոշորագույն դրամատերերին։ Նրանց ապառնաց, պահանջելով փոխառություն, փորձելով վախեցնել։ Բայց Անգլիան Իռլանդիա չէ։ Այստեղ անգամ Ուենթվորթը չկարողացավ ոչնչի հասնել. դրամ տալ մերժեցին։

Եվ, վերջապես, 1640 թվականին բերկրալի, գլխապտույտ առաջացնող նորությունը՝ հրավիրվում է պառլամենտը։ Հետադիմության, խավարամտության, բռնակալության ատանմեկ երկա-

www.a-pdf.com

բաձիգ սարիները ետևում են դարձյալ անգլիական կոմսությունների և քաղաքների ներկայացուցիչները կկարողանան իրենց կամքն արտահայտել Վեսթմինսթերի հնամենի դահլիճներում։

Կրոմվելը լի է ոգևորությամբ։ Նրան հարկավոր է ինչ գնով էլ լինի մտնել այդ պառլամենտի մեջ։ Նա կատարում է մի քանի ձևականություններ և դառնում Քեմբրիջի քաղաքացի, որի բնակիչները ցանկանում են առաջադրել նրա թեկնածությունը պառլամենտում։

Եվ ահա նա կրկին Լոնդոնում է։ Պառլամենտը բացվեց ապրիլի 13-ին։ Կրոմվելը դարձյալ համայնքների պալատի փայտյա նստարաններին նստած տեսնում է հանդարտ և ինքնավստահ հիսունհինգամյա Փիմին բոցաշունչ Հեմփդենին ողջ օպոզիցիան այստեղ է։ Եվ չնայած բանտում վախճանվել է արժանապատիվ էլիոթը, չնայած Ուենթվորթը, այժմ արդեն Ստրաֆորդի կոմսը, անցել է թագավորի կողմը, բանտարկության հակառակորդների շարքերը չեն նվազել, այլ կարծես թե նույնիսկ ավելացել են։ Նրանք հիասթափ հասկանում են, որ թագավորին հարկավոր է իրենց դրամը միայն և անհապաղ վարկավորման նրա պահանջին պատասխանում էին «ոչ»-ով։ Նախ հարկավոր է պատժել «տիմար խարհրդականներին», դադարեցնել շարաշահումները ու բանտարկությունները, վերականգնել պառլամենտի խախտված իրավունքները։

Փիմը խոսում է երկու ժամ շարունակ։ Նա պահանջում է պառլամենտի ամենամյա, պարտադիր գումարում։ «Շոտլանդական ներխուժումն վտանգը,— թնդում է պատգամավորի ձայնը,— պակաս ահեղ վտանգ է, քան Երկրի կամայական կառավարումը։ Առաջինը գտնվում է հեռվում, իսկ այն վտանգը, որի մասին ես այժմ խոսեմ գտնվում է այստեղ, տանը»։

Թագավորի թիկունքի ետևում պառլամենտը շոտլանդացիների հետ բանակցությունների մեջ մտավ։ Նա որոշեց ընդունել և լսել շոտլանդական ներկայացուցիչներին, այդ զբաղանել նրանց դրծողությունների շարժառիթները։

Կրոմվելը չհասցրեց ելույթ ունենալ։ Պառլամենտի արձակումը տեղի ունեցավ մայիսի 5-ին գումարումից երեք շաբաթ անց։ Հաջորդ օրը լոնդոնյան վրդովված ամբոխը փոթորկվելով սկսեց հավաքվել ատելի Լոդի պալատի մոտ՝ աղաղակելով. «Կորչե՛ն եպիսկոպոսները», «Կորչե՛ն եկեղեցական դատարանները»։ Մայիսի 14-ին հուզումները կրկնվեցին նորից՝ ծառաների, ենթավարպետների, արհեստավորների աշակերտների ամբոխը հարձակվեց բանտերի շենքերի վրա, փորձելով ազատել նրանց, ովքեր ձերբակալվել էին մայիսի 6-ին։

Պառլամենտը կոչեցին «Կարճատև» և կծու քմծիծաղով, հիասթափված ու վրդովված, ցրվեցին իրենց տները։ Ընդ որում,

www.a-pdf.com

ոմանք բավականությունից շփեցին ձեռները։ «Ամեն ինչ լավ է,— ասաց օպոզիցիայի առաջնորդներից մեկը՝ Սենթ-Ջոնը,— ինչքան որ վատ է հիմա, այնքան լավ կլինի հետո։ Այդ պառլամենտը երբեք չէր անի այն, ինչ հարկավոր է»։

Շատերին, պալատի անդամներից շատերին էր թվում, որ դա վերջ չէ, այլ՝ սկիզբ, որ Անգլիայի ճակատագրում վրա է հասնում մեծ բեկում, վախեցնող և միաժամանակ ուրախացնող, որ մի այլ պատերազմ է պայթելու, և միայն ասված գիտեն, թե ինչ է բերելու այն իրենցից յուրաքանչյուրին։

Ամռանը պատերազմը շոտլանդացիների հետ վերսկսվեց։ Անգլիական բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց կոմս Ստրաֆորդը։ Դաժան հապճեպությամբ հավաքած զորքը, որին վճարել էին ավելի շատ սպառնալիքներով ու խոստումներով քան փողով (գանձարանը բոլորովին դատարկ էր), թշնամուն տեսնելուն պես դիմեց ամոթալի փախուստի։ Շոտլանդացիները գրավեցին Անգլիայի հյուսիսը։ Տեղի բնակիչները, որ մեծամասամբ պուրիտաններ էին, չէին ցանկանում դիմադրել նրանց։ Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Լոնդոնում շոտլանդացիներն ունեին շատ կողմնակիցներ։ Հնչում էին ողջամիտ և տագնապալի ձայներ պետք է վերջ տալ պատերազմին, Շոտլանդիայի հետ հաշտություն կնքել, հրավիրել պառլամենտ։ Կարլոսը հանրագիր ստացավ պերերից, Լոնդոնի քաղաքացիներից, կոմսությունների բնակիչներից։ Լուրեր էին գալիս անկարգությունների մասին. գյուղացիները խռովություններ են սարքում, ոչնչացնում են արքայական սիրուհիների ցանկապարիսպները, արհեստավոր պուրիտանները դժգոհություն են արտահայտում։ Օգոստոսի 28-ին թագավորի բանակը վերջնականապես ջախջախվեց Թայնի նյուքեսն քաղաքի մոտ, հաջորդ օրը հանձնվեց Նյուքասլը։

Եվ թագավորն անձնատուր եղավ։ 1640 թվականի աշնանը նա այդ տարի երկրորդ անգամը լինելով, հրաման արձակեց պառլամենտ գումարելու մասին։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ III

ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԱՆԴԱՄԸ

Ինձ թվում է, թե ես տեսնում եմ, ինչպես է արթնանում քնից աղնվաբարո և հզոր ազգը... Ինձ թվում է, թե ես տեսնում եմ, ինչպես է նա արծվի նման թռիչքի վարժեցնում իր կորովի երիտասարդ սերունդը, ինչպես են շլացած աչքերը ամրանում միջօրեի արեգակի ճառագայթների փայլից, երկնային լաղուրի ցոլքում հստակելով և պարզելով իր հայացքը, որն այնքան երկար փակված է մնացել խավարում։ Իսկ այդ նույն պահին երկյուղից իրար գլխի հավաքված թռչունների մի ողջ երամ խավարի արարածների հետ ճախրում են շուրջը յարմացած արտասովոր երևույթով...

Ս ի ս ի ն

Ես կարող եմ ասել ձեզ, պարոններ, թե ինչ չեմ ուզում։ Ես իսկ թե ինչ եմ ուզում՝ չեմ ասի։

Կ ր ո մ վ ե լ

Սըր Ֆիլիպ Ուորվիկը մոտեցավ հայելուն։ Վենետիկյան հաստ ապակու մեջ նա իր առջև տեսավ երեսունին մոտ մի երիտասարդի՝ խնամված ամբարտավան դեմքով, ուսերին ցրված երկար ոլորուն խոպոպներով, աղնվականական հարդարանքի ստանական իր ողջ փայլքով։ Նա ակնհայտ բավականությամբ լի հայացքով չափեց իրեն։ Օձիքի և թևքածալերի հոլանդական նրբաճաշակ ժանյակները լավ օսլայված էին և արդուկված։ Թևքերի բացվածքներից որ երևցված էին ոսկեկարով ու մարգարիտներով, երևում էր վերնաշապիկի նրբահյուս ու ձյունաճերմակ կտրվածքը։ Կոլետը նստում էր վրան ոնդ ձուլածո և նույնը կարելի էր ասել թավշյա տարատի մասին, որը գարդարված էր նույն այն կաբերով, ինչպիսին էր թևքերինը՝ ոսկով ու մարգարտով։ Սուսերը ոսկեվառ երաժշտակալով կախված էր այնտեղ, ուր հարկն էր՝ ձախ կողքին, և այն պահում էր այդ ժամանակներում ֆրանսիական ամենանորաձև դրոշմանկարը ու ճարմանդավոր ուսափոկը։ Երկարաճիտների վրա, որոնց ճաքերը շուռ էին տված ծնկներից մի փոքր ներքև և բարձր, գրեթե կանացի կրունկներով էին, առջևից ունեին քառաթև մեծ-մեծ կաշվի ժապավենակապեր։ Ամեն ինչ՝ տեղը տեղին։ Մնում էր կանչել ծառային որ արդեն սպասում էր գլխարկն ու թիկնոցը ձեռքին գցած և կարելի էր գնալ պառլամենտ։

www.a-pdf.com

Պառլամենտն իր նիստերն սկսել էր ընդամենը վեց օր առաջ՝ դեկտեմբերի 3-ին, բայց արդեն այժմ էլ պարզ էր, որ նա պատրաստվում է կանգ չառնել ոչ մի խոչընդոտի առաջ։ Նրա վրա էին Թոֆիվել Կարճատես պառլամենտի բոլոր նախկին խոռվարարները, և նրանց կողմնակիցների թիվը դեռ մեծանում էր։ Միջին հողատիրական ջենթրիները ազգի պատիվն ու նեցուկը և ժամանակ թագավորին հանդիպելիս մեկ ահեղ ուժ՝ ահա թե ովքեր էին կազմում մեծամասնությունը այդ հինգ հարյուրից մի փոքր ավելի մարդկանց մեջ, որոնք զբաղեցնում էին ներքին պատի աստիճանավորված նստարանները։ Հետաքրքրական է, որ շատ լորդեր դժգոհների հետ էին. կոմսեր Բեդֆորդը, Էսեքսը, Մանչեստերը, լորդ Դիգբին՝ նրանց բոլորին սրը Ֆիլիպը շատ բարձր էր դասում, պաշտպանում էին օպոզիցիոներներին։

Առաջվա պես նրանց առաջնորդը Ջոն Փիմն էր։ Նա, կարծես թե, ավելի էր գիրացել, բայց պահպանել էր իր նախկին մարտական կորովը։ Նիստի հենց առաջին օրերից նա իր կողմնակիցներին տրամադրում էր վճռական պայքարի։ Նա չէր խընդրում, այլ մեղադրում էր։ Նրա ծրագրային ճառում հնչում էին հանգներ՝ պառլամենտի արտոնությունները պահելու, ճշմարիտ կրոնը աղավաղումներից պահպանելու, հպատակների իրավունքները պաշտպանելու։ Նրանց կամայական ձերբակալություններից, տուգանքներից, հարկերից՝ այդ ամեն տեսակի նավային, նատուրային, ասպետական տուրքերից, մաքսային վճարումներից, մոնոպոլիաներից փրկելու մասին։

Եվ նրանք անմիջապես սկսեցին պահանջել բանտերից ազատելու արտակարգ դատարանների վճռով այնտեղ ընկած պուրիտաններին՝ Փրինին, Բերթոնին, Բասթվիկին։ Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ բոլոր օպոզիցիոն ելույթները ոգեշնչել էր հենց ինքն Ջոն Փիմը։ Նա բոլորից մոտիկ էր ապրում պալատին։ Վեսթմինսթեր-հոլի ետևի շենքում և նրա մոտ ամեն օր բաժնեդրոնքով գալիս էին օպոզիցիայի մյուս առաջնորդները՝ Հեմփդենը, Գլիդը, Սենթ-Ջոնը։

Հեմփդենը նրա աջ թևն էր, ողջ երկրով մեկ թնդում էր նրա անունը, երբ նա բացեիբաց հրաժարվում էր վճարել «նավային գումարը» և այժմ Հեմփդենը համբավ էր ձեռք բերել և հմտորեն օգտվում էր դրա պտուղներից։ Նա այնքան էլ լավ հռետոր չէր, ինչպես Փիմը, բայց ավելի խելացի ու ճկուն էր նրանից, վճռականությամբ և եռանդով չէր զիջում ոչ ոքի և հիանալի տիրապետել գիտեր իրեն։ Նրա վրա նայում էին որպես նավատորի հետ, որը ընդունակ է քաղաքական պայքարի նավը տանել փոթորիկների ու խութերի միջով դեպի բաղձալի նպատակը՝ դեպի պատուությունը։ Նրա հետ միասին միշտ ելույթ էին ունենում Սենթ-Ջոնը, Հոլդեն և Սթրոդը՝ գիտնական իրավաբանները։ Երիտասարդներից նրանց էին հարում Սաթանիել Ֆայնեսը, Երիտա-

www.a-pdf.com

սարդ ողանդալը Հենրի Վենը, որ վերջերս էր վերադարձել օվկիանոսի այն կողմից, սրը Արթուր Փեզլրիզը և Հենրի Սարթենը, որոնք հայտնի են իրենց խիզախ հայացքներով։

Սըր Ֆիլիպ Ուորիկը մտավ նիստերի դահլիճ և զննեց չորս դին, լռություն էր տիրում։ Բոլորը մեծ ուշադրությամբ ունկընդրում էին բարձրահասակ, թիկնեղ մի մարդու, որը արագ ու կրակոտ խոսում էր խիստ ու խռպոտ ձայնով։ Այդ մարդը ծանոթ չէր սըր Ֆիլիպին։ Նա քառասունին մոտ էր։ Սըր Ֆիլիպը նայեց հռետորի դեմքին և արհամարհանքով ծամածռեց շրթունքները հասարակ մուգ գույնի հագուստը պարկի պես քարշ էր ընկել վրայից, պետք է որ դա կարած լիներ ոչ հմուտ գյուղական մի դերձակ։ Ուղիղ քաթանե օձիքը, թվում էր, թե այնքան էլ մաքուր չէր... առանց ժապավենի շլյապան Սուսերը կիպ կպած էր կողքին։ Ճառողի ուռած դեմքը կարմրատակած էր, երևում էր նա իր խոսքի մեջ ներդնում է հոգու բոլոր ուժերը։ Նա ազատություն էր պահանջում այն ենթավարպետին՝ Ջոն Լիլբեռնին, որը երկու տարի առաջ ենթարկվել էր խարազանման, գամվել անարգանքի սյունին և ապա բանտարկվել Աստղային պալատի վճռի համաձայն։ Նրան, թվում է, ներկայացվել էր Անգլիայում պուրիտանական անլեգալ տրակտատներ տարածելու մեղադրանք...

Սըր Ֆիլիպը չէր կարող ասել թե հռետորը խոսում էր շատ սահուն կամ փայլուն։ Բայց նրա ճառը կտրուկ էր և կրքոտ. լսում էին նրան չգիտես ինչու մեծ ուշադրությամբ։ Սըր Ֆիլիպի հարգանքն այդ ժողովի հանդեպ սաստիկ ընկավ։

Քիչ առաջվա հռետորն անծանոթ էր ոչ միայն սըր Ուորիկին։ Երբ նիստն ավարտվեց և հայտարարեցին ընդմիջում, լորդ Դիգբին, Հեմփդենի հետ աստիճաններով իջնելիս, կամացուկ հարցրեց նրան

— Ո՞վ է այդ մարդը։ Ես տեսնում եմ, նա մեզ հետ է, նա այնքան ջերմ խոսեց այսօր։

— Հը՞մ, այդ փնթի տղան, որին դուք տեսաք քիչ առաջ և որը ոչ մի կերպ չէր դարդարում իր խոսքը,— Հեմփդենը քմծիծաղեց։— Եթե մենք երբևէ խզենք մեր հարաբերությունները արքայի հետ (աստված մի արասցե) այդ նույն փնթի տղան, ես ձեզ բան եմ ասում, կդառնա Անգլիայի մեծագույն մարդկանցից մեկը։

Այդպես անցավ Կրոմվելի առաջին ելույթը նոր պառլամենտում։ Օպոզիցիայի կուսակցությունը, որին նա պատկանում էր իր ամբողջ հոգով, ուժեղանում էր ու ամրանում։ Ընդհանուր գործին մասնակցությունը ոգեշնչում էր։ Նա միայնակ բոլորին անծանոթ նորաթուխ մեկը չէր պալատում։ Դեպուտատներից շատերին արդեն ճանաչում էր դեմքով։ Դրանցից տասնութի հետ

www.a-pdf.com

...ման կապում էին ազգակցական կապերը։ Նա հիացմունքով էր նայում Փիմին ու միշտ ուշադրությամբ էր լսում նրա ճառերը և՛ պառլամենտում և՛ ճաշերի ժամանակ, որտեղ նա գալիս էր իր ...նամոր տարմիկի՝ Հեմփդենի հետ միասին։ «Մեզ մոտ հիմա ...նաք է որ ուրիշ տրամադրություն լինի,— ասում էր Փիմը, ...խորժակով խժռելով բազի յուղալի բուդը — ոչ այնպիսին, ինչպիսին անցյալ պառլամենտում։ Մենք պետք է ոչ միայն ...ից գլուխ մաքրենք պալատը ներքևից, այլև սրբենք բոլոր այն ...ոդոստայնները, որոնք կախված են վերևներում և անկյուններում որպեսզի փոշին ու կեղտը բույն չդնեն պալատում։ ...ժամ մենք հնարավորություն ունենք երկիրը դարձնել երջանիկ, ...նպացնել բոլոր զրկանքներն ու արմատախիլ անել դրանց պատճառները, եթե միայն բոլորը ազնվորեն էլ...արեն իրենց պարտականությունը»։

Եվ Կրոմվելը ձգտում էր կատարել իր պարտականությունը, ...պարության կոչ անելով և պահանջելով ապատել անմեղներին։ Եվ ուրախանում էր այնուհետև բոլորի հետ միասին, երբ ազատություն ստացած կալանավորները՝ դառամյալ Բասթվիկը, ...նդրվելի Փրինը՝ կրկնակի անգամ կտրված ականջներով և այլն խարան, Բերթոնը՝ շփոթահար եղած լույսից, աղմուկից, ...ից, ամբոխի խանդավառ ազաղակների տակ անցնում էին բուրգի փողոցներով։

Բայց բավական չէր ազատել անմեղներին։ Հարկավոր էր ...ուժել հանցագործներին՝ նրանց, ում մեղքով տառապել էին ...ղբարավոր մարդիկ։ Սրան ուրախությունով էր դիտում Կրոմվելը, ինչպես Փիմը խիստախորեն ձեռք էր բարձրացնում ամենա...ավոր, ամենահզոր ու ամենավտանգավոր թշնամու՝ Ստրաֆորդի վրա։

Միայն նրա անունը սարսափ էր առաջացնում։ Բոլորը հիանում էին, թե նա ինչպես անձամբ մահվան դատապարտեց լորդ Բաունթնորիսին միայն մի քանի անզգույշ խոսքերի համար, իսկ ...ոպեսզի հանդարտեցներ համընդհանուր վրդովմունքը, թագավորին մի պատկառելի գումար ուղարկեց՝ ոչ ավել ոչ պակաս՝ վեց հազար ֆունտ ստեռլինգ, և այդպիսով կոծկեց գործը։ Նրան ...միայն չպատժեցին, այլև անգամ իրավունք վերապահեցին ...մարդկանց մեջ բաժան-բաժան անել դատապարտվածի ունեցվածքը։ Ստրաֆորդին առում էր ողջ երկիրը՝ բոլոր ապօրինի ...ուրք վճարողները, թագավորական գատարանների կողմից բոլոր հետապնդվողներն ու կալանվածները։ Օպոզիցիայի առաջնորդները հասկանում էին, որ, եթե այդ ամենակարող պալատականին արագ ու վճռական հարված չհասցնեն, իրենց բանը ...ոյդ կլինի։ Պառլամենտը գումարելու նախօրյակին նա համոզում էր Կարլոսին. «Կանգ մի առեք ոչ մի արգելքի առաջ։ Ծայնեղ դեպքում դուք կարող եք անել այն ամենը, ինչին կբա-

www.a-pdf.com

վականացնեն ձեր ուժերը, պառլամենտի մերժման դեպքում դուք արդարացած կլինեք ասածս և մարդկանց առաջ։ Դուք Իռլանդիայում ձեր ձեռքի տակ ունեք բանակ և դուք իրավունք ունեք այն օգտագործել այստեղ որպեսզի հնազանդեցնեք այս երկիրը»։

Ստրաֆորդը լսում էր, որ իր դեմ մեղադրանք է պատրաստվում և միջոցներ էր ձեռնարկում։ Նա որոճում էր օպոզիցիայի առաջնորդներին պետական դավաճաններ հայտարարել։ Նա պանդուխտում էր հյուսիսից մեկնել Լոնդոն, չնայած պառլամենտը հրավեր էր հղել նրան։ Միայն Կարլոսն էր պնդում նրա նստելու վրա։ «Ես չեմ կարող այստեղ յոլա գնալ առանց ձեր խորհուրդների,— գրում էր նա իր սիրելիին։— Դուք վախենալու ոչինչ չունեք դա նույնքան ճշմարիտ է, որքան այն, որ ես Անգլիայի թագավորն եմ։ Ոչ ոք չի համարձակվի ձեր մազին իսկ դիպչել»։

Նոյեմբերի 9-ին Ստրաֆորդը ժամանեց Լոնդոն և երկար խորհրդակցեց թագավորի հետ։ Նոյեմբերի 11-ին նա պետք է զբաղեցներ իր տեղը լորդերի պալատում, որպեսզի Փիմի, Հեմփդենի, Սենթ Ջոնի և պառլամենտական մյուս առաջնորդների նկատմամբ պետական դավաճանության մեղադրանք առաջադրեր և պահանջեր նրանց ձերբակալությունը։

Ով գիտե, ինչպես կդասավորվեր այնուհետև Կրոմվելի ճակատագիրը, եթե այդ ծրագիրը հաջողվեր։ Բայց կուր չէր, որ Փիմը ամենից խոհեմամիտ և ամենից խորամանկ մարդու համբավ էր վայելում։ Այդ օրը նա Համայնքների պալատում ոտքի ելավ և հայտարարեց, որ արտակարգ կարևոր բան ունի հաղորդելու։ Նա խնդրում է փակել պալատի դռները որպեսզի պալատին ոչինչ չխանգարի վճիռ կայացնելու։ Դռները փակվեցին, և Փիմը լարված լռության մեջ սկսեց խոսել։ Նա խոսում էր դատավորների կամայականության մասին բանտապանների դաժանության մասին թալանված ընտանիքների ու ամայացած դյուղերի մասին։ Նա նշավակում էր մենաշնորհներն ու ապօրինի տուրքերը որոնց վրա հարստանում են դանձապետները։ Երկիրը հասցված է փլուզման եզրին։ Բայց թող ոչ ոք չմտածի, թե նա՝ Փիմը, ուզում է որևէ վատ բան ասել թագավորի մասին։ Ո՛չ, թագավորը չի կարող մեղավոր լինել այդ չարագործությունների մեջ։ Նա ստուգամիտ է և արդարադատ։ Այդ ամենում մեղավոր են զաղրեի խորհրդականները՝ մարդիկ որոնք խարդախորեն նվաճել են արքայի վստահությունը և նենգափոխել նրա ամենաբարեմիտ ձեռնարկումները։ Եվ գլխավորը այդ խորհրդականներից, որ գերազանցել է բոլորին իր ազդեցությամբ, իր իշխանությամբ, իր ամբարտավանությամբ, իր շահախնդրությամբ՝ դա թագավորի առաջին մինիստրն է, բանակի գլխավոր հրամանատարը Իռլանդիայի լորդ-լեյտենանտ կոմս Ստրաֆորդը։ Ամե-

www.a-pdf.com

ար, որտեղ թագավորը արտաքսել է նյան միջամտել, նա բերել է լիախտությունն, սարսափ և նորին մեծության հպատակների նկատմամբ տառապանքներ, հաստատագրել ու իրականացրել է այնպիսի պլաններ, որոնք կործանարար են եղել անգլիական պետության համար։

— Եվ ամբողջ վերոհիշյալի հիման վրա,— Փիմի ձայնը դանդաղանում է և հնչում լարված, սարսափելի, պատրաստ ուր որ է պայթելու լռության մեջ,— ես առաջարկում եմ անհապաղ դեպի պալատում կոմս Ստրաֆորդին մեղադրանք ներկայացնել պետական դավաճանության մեջ։ Առաջարկում եմ տեղնուտեղը կոմսին կալանքի տակ առնել և պահել հետաքննության ամբողջ ընթացքում։

Լռությունը պայթեց։ Պալատը միանգամից լցվեց գվվոցով, որը կողմերից լսվեցին բացականչություններ։ Ինչ որ մեկը, Էլիի թե Ֆոքլենդը, փորձեց բողոքել, բայց նրան թույլ լսվեցին չտալ։ Փիմի առաջարկությունը հաստատվեց համարյա միաձայն։ Դռները բացվեցին, և Կրոմվելը մյուսների հետ միասին մտավ լորդերի պալատ, որպեսզի հանձնեն մեղադրանքի նախապես կազմած շարադրանքը։ Լորդերի վճռի մեջ չէր կարելի կասկածել՝ նույնիսկ նրանք, ովքեր համախոհ չէին ներքին պատերազմին, բավականաչափ հիմքեր ունեին ատելու ամենակարող մարդին։

Ստրաֆորդը հենց նույն օրը կանչվեց լորդերի պալատ։ Դատարանը դեպի արդեալապատը և ստիպեցին ծունկի գալ, մինչև պառլամենտի նախագահը կկարդար մեղադրական եզրակացության տեքստը։ Ուղղակի ամենաեղիր արքունական կառքով ուղարկվեց Թաուեր։

Օրերը թռչում, վազում էին առաջ, և յուրաքանչյուր օրը բերում էր մի ինչ-որ նոր բան։ Մի ամիս անց պետական դավաճանության մեջ մեղադրվեց բռնակալության մի ուրիշ, ժողովրդի կողմից ատելի կամակատար՝ արքեպիսկոպոս Լոդը, նրա ետևից ազատվորին մոտիկ էլի մի քանի լորդեր։ Պառլամենտն ընդունում և քննության էր առնում անհամար քանակությամբ բողոքներ, խնդրագրեր, հանրագրեր։ Կրոմվելը ներքաշվում էր նրա ստեղծյա կյանքի մեջ։ Կրքոտորեն նվիրվում էր յուրաքանչյուր հանձնարարված գործին։ Իսկ այդպիսի գործեր քանի գնում ավելանում ավելի էին բացվում. և ահա նա արդեն ճահիճների չորացման գործը քննող կոմիտեի անդամ է, Աստղային պալատի և Բարձրագույն հանձնաժողովի մեղադրականները վերանայելու կոմիտեի անդամ, կրոնական գործերի կոմիտեի անդամ։ Դա հետ ձեռք ձեռքի տված՝ այդ կոմիտեներում աշխատում էին Համփդենը, Գեզլրիգը, Սթրոդը, Ուալթոնը։ Կրոմվելը հետզհետե դուրս է գալիս պառլամենտական մարտիկների առաջին շարքերը։

www.a-pdf.com

Նա մանրակրկիտ խորամուխ է լինում եկեղեցական կառուցվածքի մեջ, հարձակվում է կեղեքողների վրա, պահանջում մեղավորների պատժում, իր սրտին մոտիկ պուրիտանների բողոքների բավարարում։ Նա պաշտպանում է քարոզիչներին, քննարկում նրանց հանրագրերը, հանդես գալիս հետապնդող եպիսկոպոսների դեմ։ Այստեղ նա միահամուռ է Անգլիայի հասարակ մարդկանց զանգվածների հետ։ Դեկտեմբերի 11-ին պալատ է ներկայացվում հանրագիր «պրելատության ծառը արմատով և ճյուղերով» լիակատար ոչնչացնելու մասին, որի տակ ստորագրել էին հինգ հազար մարդ։

Նույն այդ դեկտեմբերին առաջարկություն արվեց պառլամենտը գումարել յուրաքանչյուր տարի, և Կրոմվելը պաշտպանում է այդ գաղափարը։ Դեկտեմբերի 30-ին նա հանդես է գալիս պառլամենտում հօգուտ համայնքների պալատի ամենամյա գումարման։ Դա ունենում է լոկ մասնակի հաջողություն երկարատև վիճաբանություններից հետո փետրվարի 15-ին ընդունեց «Եռամյա ակտը»։ Համաձայն դրա թագավորը պարտավոր է պառլամենտ գումարել երեք տարին մեկ։

Եվ դարձյալ կրոնական, եկեղեցական գործերը դուրս են գալիս առաջին պլան։ Նրանք հենց դրա համար են այդպես հուզվում, որովհետև սերտորեն առնչվում են քաղաքական գործերի հետ։ Փետրվարի 9-ին քննարկվում է «Սնոտիապաշտության և կռապաշտության վերացման և ճշմարիտ ժամասացությունը լավագույն ձևով պահպանելու մասին» փաստաթուղթը։ Ոմն Ջոն Սթրեյնջուեյս, պաշտպանելով եպիսկոպոսների իշխանությունը, հայտարարեց

— Եթե մենք հավասարություն հիմնենք եկեղեցում, մենք պետք է հավասարության անցնենք նաև պետության մեջ։ Չէ՞ որ եպիսկոպոսները թագավորության երեք դասերից մեկն են, նրանք իրենց ձայնն ունեն պառլամենտում։

Կրոմվելը դա արդեն հանդուրժել չէր կարող։ Եպիսկոպոսները չպետք է առանձնանան մյուս դասերից։ Նրանք աստծո նույնպիսի ծառաներն են, ինչպես մնացած ազնիվ անգլիացիները։ Նրանք չեն կարող հավակնություն ունենալ բացառիկ իշխանության։ Ծանոթ, անհաղթահարելի մոլեգնությամբ նրան պոկեց նստարանից, նա դժվարությամբ ճանաչեց իր ձայնը։ սուր, մարտահրավեր նետող ձայնը

— Դե դա արդեն չեղավ։ Որտեղի՞ց է այդ պարոնը փաստարկներ վերցրել իր նախադրյալների ու հետևությունների համար։ Ես նրան չեմ ճանաչում։

Նախագահը մուրճով խփեց սեղանին։ Կրոմվելի մոլեգնությունը վարակեց հակառակորդներին։

— Ինչպե՞ս է խոսում։ Դա պառլամենտական լեզ-

www.a-pdf.com

է՛,— հնչեց տարբեր կողմերից։— Վանդակը քշել դրան։ Թող ներողություն խնդրի։

Վեր կացավ Փիմը, և աղմուկը անմիջապես խլացավ։

— Եթե ջենտլմենը ասաց մի այնպիսի բան, որը առարկություն է հարուցում — ինչպես միշտ, ծանրակշիռ և վստահ հայտարարեց նա,— թող արտահայտվի իր տեղից։

Նրան պաշտպանեց Հոլդը։

— Ինչո՞ւ ամեն ասիթով վանդակապատի մոտ կանչել։ Թող տեղից խոսի։

Կրոմվելն արդեն կարողացել էր տիրապետել իրեն, այտերի կարմրությունն անցել էր, բայց մոլեգնությունը դեռևս եփ էր գալիս ներսում, համեմելով նրա բացատրությունները սարկազմի թույնով։

— Ես չեմ հասկանում — ասաց նա,— ինչո՞ւ այդ ջենտլմենը, որ հենց նոր խոսում էր պետության մեջ հավասարությունը բխեցնում է եկեղեցու մեջ հավասարությունից և ես ոչ մի անհրաժեշտություն չեմ տեսնում եպիսկոպոսների այդքան բարձր կոչումների մեջ։ Ես այժմ, ավելի քան երբևէ, հավատացած եմ եպիսկոպոսների գոյության անիրավացորության մեջ՝ չէ՞ որ նրանք, ինչպես և հռոմեական հիերարխիան չէին հանդուրժի նրանց դիրքերի վերանայումը։

Պուրիտանական պատգամավորները իր սխալանքով աղմկեցին։ Ըստ էության այդ ճառը եպիսկոպոսներին հասցնում էր ոչ ավելի շոշափելի հարված, քան անկապ բղավոցները, որոնք էլ էր մնացել Կրոմվելին հասցնեին պառլամենտական դատարանի՝ վանդակապատի առաջ կանգնեցնեին բացատրության համար։ Բայց պահանջվող ոճը պահպանված էր և եպիսկոպոսական կողմնակիցները բռնելու տեղ չունեին։

Երկիրը փոթորկվում է վրդովմունքը ի հայտ է գալիս մերթ սահեղ, մերթ այնտեղ։ Արդեն բռնկվում են ոչնչացիական ապստամբություններ մարդիկ բրերով չարդում են լորդերի կողմից տրված ցանկապարիսպները անվերջանալի հոսանքով բողոքում են գալիս շորացնողների, պարսպապատողների ճնշողների դեմ։ Իսկ պառլամենտը, տաքացած համընդհանուր դժգոհությունից, ձեռք է զարկում չլսված մի գործի՝ դատ է բացում նախկին առաջին մինիստրի դեմ։ Մարտի 22-ին սկսվում է նշանավոր դատավարությունը Ստրաֆորդի դեմ։ Այն շարունակվում է ամբողջ տասնութ օր՝ մինչև ապրիլի 10-ը։ Փորձված ճարպիկ իրավաբան Ստրաֆորդը հմտորեն պաշտպանվում է։ Նրա կող-

---

Պառլամենտական վանդակապատի կամ միջնորմի մոտ որով նախագահությունը առանձնացվում էր դեպուտատների համար հատկացված տեղերից, կանչում էին մարդկանց նրանց մեղադրանք ներկայացնելու կամ հարցաքննելու համար։

www.a-pdf.com

մում են արդարությունը, իրավունքը շատ լորդեր։ Պերին արդեն ազատանքում է, ձգում է և ընդգծում, հրաժարվում է հաստատել այն արձանագրությունը, որը Սարաֆորդին մեղադրում է պետական դավաճանության մեջ։

Համայնքները վրդովված են։ Մի երիտասարդ, աղնվականի արտաքինով ու տարօրինակ խոր ընկած աչքերով, միստիկ ու ցնորատես, որ արդեն հասցրել է Մասաչուսեթս անդրծովյան գաղութի կառավարիչը լինել, Հենրի Վեն կրտսերը, խոսք է խնդրում։ Պատահությունն օգնել է նրան հոր՝ պետական քարտուղարի, թղթերի միջից հայտնաբերել աղազակող մի փաստաթուղթ, որն ավելի լավ քան որևէ բան կարող է օգնել մեղադրանքին։ Դա նույն այն նամակն է որով Ստրաֆորդը խորհուրդ է տալիս արքային կանգ չառնել ոչ մի բանի առաջ և անհրաժեշտության դեպքում իրավունքներ բանակն օգտագործել ընդդեմ անգլիական ժողովրդի։ Փիմը հրապարակում է այդ նամակը պալատում։ Դավաճանը մերկացված է ավելի ակնառու հանցանշան փնտրելու հարկ չկա։ Ապրիլի 10 ին Արթուր Գեզլրիգը առաջարկ է մտցնում հրապարակել Ստրաֆորդի դեմ արտակարգ ակտ՝ օրինագիծ շնորհազրկման մասին։ Դա նշանակում է մահվան դատավճիռ։

Բայց լորդերը չեն ուզում վավերացնել շնորհազրկման օրինագիծը։ Նրանք ղգում են որ վտանգ է կախված ոչ միայն Ստրաֆորդի վրա, ավելի ու ավելի ուժգին են հնչում բողոքները լորդ-եպիսկոպոսների դեմ մեկ էլ տեսան և ուրիշ պերերի հայտարարեցին «պարզելի խորհրդականներ»։ Մայիսի 1-ին Կարլոսը անձամբ է հայտնվում լորդերի պալատում։ Նա համոզված է ընդունել որ կոմսը «վատ է վարվել» բայց կտրականապես դեմ է մահվան դատավճռին։

Համայնքների պալատը բուզքում է. նրա առաջնորդները չեն կարող, չպետք է համակերպվեն խաղաթղթի վրա է դրված ամեն ինչ, իրենց անձնական ճակատագիրը, բուն պառլամենտի գոյությունը։ Փիմը, Հեմփդենը, Գեզլրիգը, Սթրոդը համարյա չեն քնում այդ օրերին։ Փիմն իր բնակարանում անընդհատ ինչ-որ մարդիկ է ընդունում՝ Սիթիից եկած վաճառականներ սուրիստան-ենթամարտնեներ։ Եվ ահա ոտքի է կանգնում Լոնդոնը։ Մայիսի 3-ին բազմահազարանոց վիթխարի մի դանդաղ շարժվում է դեպի Վեսթմինսթեր։ Ամբոխն ազմկում է ծովի պես, նա մոլեգնում է պառլամենտի հենց պատերի տակ։ «Արդարադատություն՝ արդարադատություն — հնչում է կանչերը— Մա՛հ, Կորչի՛ն մեծ հանցագործները»։

Պալատի վախեցած անդամները հայելով պատուհանից սեսնում են որ ամբոխը ոնդեն չէ ինչ-որ տեղ արևի տակ փայլում են սրի շեղբեր ու նիզակներ։ Մի այլ տեղ օդում ցցվում են տեգեր, օդ են բարձրանում մեխացիր տախտակներ։ Նիստից ուշացած լորդերն ստիպված են ճամփա բացել այդ ամբոխի

www.a-pdf.com

միջով, հանդգնելով միանգամայն մոտիկից տեսնել կատաղությունից այլայլված ժողովրդի դեմքը։

Հաջորդ օրը ցույցը կրկնվում է։ Այն պատրաստ է վերածվել ապստամբության, թվում է, ուր որ է լորդերի պալատի դռները կճթճթան նրա ճնշման տակ։ Եվ լորդերը անձնատուր են լինում. մայիսի 8-ին նրանք հաստատում են շնորհազրկման օրինագիծը։ Ստրաֆորդը դատապարտված է մահվան։

Բայց թագավո՞րը։ Կօգնի՞ արդյոք իր սիրելի մարդուն։ Կկատարի՞ իր խոստումը. «Ոչ մի մազ լի պակասի ձեր գլխից»։ «Ոչ կյանքը ձեր, ոչ բարի անունը չեն կրի ոչ մի վնաս...»։

Կարլոսը, ինչպես միշտ, խուսափում էր ուղղակի գործել։ Մայիսի 2-ին սպառազեն զինվորների մի երկուհարյուրյակ ներկայանում են Թաուերի պարեսին, թագավորի հրամանը ձեռքներին բերդը թողնել իրենց՝ բերդապահ զորքը ուժեղացնելու նպատակով։

Պարեսը հրաժարվեց բացել դարպասները նրանց առաջ, իրավացիորեն կասկածելով, թե նրանք հայտնվել են ամենևին էլ ոչ թե պահպանելու, այլ ավելի շուտ փախցնելու կոմսին։ Հետագայում պարեսը խոստովանեց, որ իրեն առաջարկում էին երկու հազար ֆունտ, եթե խոստանա շարգելել բանտարկվածի փախուստը. Թեմզայի վրա կանգնած է եղել լողալու պատրաստ մի նավ։

Տեղեկանալով, որ օրինագիծը լորդերի կողմից հաստատվել է, թագավորը խնդրում է մի օր տալ խորհրդածելու համար։ Այդ բոլոր ամբոխը, էլ ավելի հորդ ու ահեղ, հոսեց դեպի թագավորական պալատ։ Ուայթհոլը նավի պես ճոճվում էր գլուխների ալեկոծ ծովի մեջ, հետզհետե աճող ճիչերի և սաղմոսների սաղմահունչ երգեցողության մեջ։ Կեսգիշերին մոտ սկսեցին սահեր վառել։

Ոչ ոք պալատում գիշերը չքնեց։ Բերդապահ զինվորները դռները ծեփել էին պարկերով, բարձերով ու աթոռներով։ Արքան դեռևս տատանվում էր։ Թագուհին, եպիսկոպոսները, խորհրդականները՝ բոլորը նրան հորդորում են զիջել։

— Բայց խի՞ղճը, խի՞ղճը,— ասում էր Կարլոսը,— չէ՞ որ խոստացա...

— Արքայական խիղճը,— համոզում էր եպիսկոպոս Ուիլյամսը,— տարբեր է լինում. խիղճը իր համար, անհատական, մարդկային, և խիղճ՝ հասարակական հանրության համար։ Եվ եթե մեր անհատական խիղճը արդարացնում է կոմսին, ապա հասարակականը պիտի մեղադրի նրան, չէ՞ որ դատավորներն ու լորդերը նրան մեղավոր են ճանաչել և ձեր անհատական խիղճը դրանով իսկ ձերբազատված է խղճի ամենափոքր իսկ խայթից... Կոմսն ինքն էլ, որքան գիտեմ, ձեզ ազատել է ձեր տված խոսքից և հաղորդել, որ պատրաստ է գնալ մահվան...

Եվ իսկապես էլ, մի շաբաթ առաջ թագավորը Ստրաֆորդից

www.a-pdf.com

ստացել էր մի երկտող։ «Իմ համաձայնությունը,— ասվում էր դրանում,— ավելի քան որևէ այլ բան, կարող է հանգստացնել ձեր խիղճը և ձեզ հաշտեցնել աստծո հետ։ Չի կարելի անարդարացի լինել մի մարդու հանդեպ, որն ինքն է իր ճակատագիրը փնտրում։ Եթե ես ինքս էլ, աստծո ողորմածությամբ, միանգամայն հանգիստ գնում եմ դեպի մահ, սրտանց ներելով դրա համար բոլոր մեղավորներին, ապա ձեզ համար, արքա որ ողողել է ինձ իր շնորհներով, ես ուրախությամբ կգնամ դեպի այն»։

Այս երկտողը, պաշտելի թագուհու հեկեկանքները, եպիսկոպոսի հորդորները, և ամենագլխավորը՝ ահեղագոչ ամբոխը, որն անդադրում աղմկում և սպառնում էր պալատի հենց պատի տակ, վճռեցին հարցը՝ Կարլոսը անձնատուր եղավ։ Նա վավերացրեց մահվան դատավճիռը։ Մայիսի 12-ին Թաուերի առջևի հրապարակում առաջին մինիստրի գլուխը թռավ դահճի կացնից։ Ժողովուրդը, որ վիթխարի դանգվածով հավաքվել էր հրապարակում, տոնեց հաղթանակը։

Պառլամենտն ասես կապը կտրած լիներ։ 1641 թվականի գարունն ու ամառը լի էր տենդագին գործունեությամբ։ Մայիսի 10-ին, ճիշտ նույն օրը, երբ թագավորը վճռեց վերջապես ստորագրել մահվան դատավճիռը, նրան ստիպեցին անել ևս մի զիջում. համաձայնություն, որ երկարատև պառլամենտը, ինչպես սկսեցին դրան անվանել հետագայում, կարող է արձակվել միայն իր՝ պառլամենտի թույլտվությամբ։ Եվ այսպես թագավորն տյուդորյան իրավասու չէ ցրել համայնքների ներկայացուցիչներին։

Պառլամենտը զարգացնում է հարձակումը։ Պուրիտաններից շատերը երազում են եպիսկոպոսարանի՝ խղճի ազատության բռնադատման այդ ծառի վերացում, աստծո խոսքը ազատորեն քարոզելու արգելանքի վերացում։ Հարկավոր է արմատախիլ անել այդ ծառը, զրկել նրան բոլոր ճյուղերից։ Այդ մասին խոսվում էր դեռևս դեկտեմբերյան հանրագրում։ Արքահատելի Լոդն արդեն նստած է Թաուերում, Ստրաֆորդը մեռած է ոչ ոք, թվում է, չի կարող արգելք լինել այդ սուրը գործին։ Եվ Կրոմվելը, որ հատկապես կանխամիտ է այն ամենին ինչը կապված է կրոնի հետ, ձեռնամուխ է լինում օրինագիծը կազմելուն։ Գեզլրիգի և երիտասարդ Վենի հետ նա ուշադիր ուսումնասիրում է դեկտեմբերյան հանրագիրը։

«Հոգևորականության իշխանությունը հանդիսանում է գլխավոր պատճառն ու աղբյուրը բազում աղետների, ճնշումների ու ստորացումների, որոնք հասցվում են հպատակների խղճին, կամքին և ինչքին...»։

«... Համալսարաններում ծաղկում է կաշառակերությունը, ժողովրդի մեջ գրեթե ամենուրեք տիրում է ահռելի ու ցավալի տգիտություն շատ տեղերում չկան հոգևորականներ քարոզ կարդալու համար...»։

www.a-pdf.com

«. Ստեղծվում են բազում մոնոպոլիաներ և պատենտներ, որոնք առաջ են բերում բազմաթիվ չարաշահումներ. ուժգնորեն ավելացել են մաքսերն ու հարկերը առաջին անհրաժեշտության առարկաների վրա և նավային դրամների հավաքումը։ Դրանց ծանրության տակ տնքում է ողջ ժողովուրդը...»։

«... Մեր եկեղեցին պահպանել ու ընդարձակել է հռոմեական եկեղեցու հետ իր խոշոր նմանությունն ու կերպը. հագուստների, արտաքին ձևավորման մեջ, ծիսակատարություններում և կառավարման կարգում...»։

«. Պրելատները մարդկանց ձերբակալում են հատուկ անձանց միջոցով, որոնք գտնվում են նրանց տնօրինության տակ. Տուգանում և բանտ են նստեցնում ամեն տեսակի կոչումի տեր մարդկանց, ներխուժում են նրանց տներն ու պարապմունքի տեղերը, տանում են նրանց նամակները, գրքերը, բռնագրավում են ունեցվածքը, հանում են պաշտոններից, հակառակ իրենց կամքի բաժանում ամուսիններին. Երկրի դատավորները ահաբեկված են պրելատների իշխանությունից ու զորությունից, և մարդիկ նրանցից պաշտպանվելու համար դիմելու տեղ չունեն...»։

Այո՛, եպիսկոպոսարանը հարկավոր է վերացնել և որքան շուտ, այնքան լավ։ Մայիսի վերջին արմատների և ճյուղերի մասին օրինագիծը դրա հեղինակների ջանքերով դրվում է պառլամենտի քննարկման։ Բայց այ քեզ հրաշք. պալատում շատերը ամենևին էլ ոգևորված չեն առաջարկվող վճռական միջոցներից։ Նորից ջրի երես է դուրս գալիս Ջոն Սթրեյնջուեյսի սպանիչ փաստարկը, որը ժամանակին հարուցել էր Կրոմվելի այնքան ուժգին մոլեգնությունը՝ հավասարությունը եկեղեցում նշանակում է հավասարություն պետության մեջ։

— Ես նայում եմ եպիսկոպոսներին,— ասում է Կոռնուոլից եկած պատգամավորը,— որպես մի ուրույն տեսակի արտաքին պաշտպանական պատվարի. երբ ժողովուրդը տիրապետում է այդ պատվարին, նրա առաջ մերկացվում է գաղտնիքը, և մենք այնժամ ստիպված ենք անմիջականորեն անցնել մեր սեփականության պաշտպանությանը։ Եթե ժողովուրդը հասնի հավասարության եկեղեցու գործերում, նրա հաջորդ պահանջը կլինի ազգային օրենքը և հավասարությունը աշխարհիկ գործերում։ Իմ կարծիքը այսպիսին է. եպիսկոպոսարանը հարկավոր է բարեփոխման ենթարկել և ոչ թե վերացնել։

Դժբախտաբար դեռևս շատ-շատերն էին եպիսկոպոսարանի վրա նայում այդ կերպ։ Հայդը, Ֆոքլենդը, Սելդենը՝ առավել ցցուշավոր պատգամավորները, սկսեցին ձևավորել լիբերալ-սահմանադրական օպոզիցիան։ Նրանք երկյուղ էին կրում իրենց համար, իսկ այդ երկյուղը հաղթահարել դժվար էր։ Լորդերի մասին արդեն խոսք լինել չէր կարող. նրանք գրեթե բոլորն էլ դեմ էին պրելատականության վերացմանը։ Հազիվ թե նրանցից մեկ երբորդը կրում էր եպիսկոպոսական թիկնոց։

www.a-pdf.com

Բայց դրա փոխարեն թագավորական բռնապետության քաղաքական սահմանափակման գործը հաջողությամբ էր առաջ ընթանում։ Հունիսին ցրվեց բանակը, որ կազմվել էր Կարլոսի կողմից Շոտլանդիայի հետ պատերազմի համար, և թագավորը ամբողջապես զրկվեց Անգլիայում զինվորական հենարանից։ Հունիսին էլ պառլամենտը վերացրեց մաքսատուրքը։ Հուլիսին լուծարքի ենթարկվեցին Աստղային պալատը, Բարձր հանձնաժողովը, արտակարգ դատարանները, որոնք ահ ու սարսափ էին տարածել ամենուրեք և ամենքի վրա։ Օգոստոսին շեղյալ հայտարարեցին ասպետական տուգանքները, անտառային հարկերը և Հեմփդենի գործի հետ աղմուկ հանած «նավային դրամները»։ Թագավորից պահանջեցին մնացած «զազրելի խորհրդականների» և կաթոլիկների հեռացում, թագուհուն չթույլատրվեց ճանապարհորդություն կատարել դեպի մայր ցամաք։ Պետական ֆինանսները և փաստորեն ամբողջ գործադիր իշխանությունն այժմ պատկանում էին պառլամենտին։

Կարլոսին հարկավոր էր փրկել իր գրությունը։ Օգոստոսի 10-ին նա շտապուցիթ մեկնեց Շոտլանդիա՝ գաղտնի մի նպատակով՝ հյուսիսային հարևանին թշնամուց վերածել դաշնակցի, իրեն ենթարկել շոտլանդական բանակը և այն շուռ տալ պառլամենտի դեմ։

Մինչ թագավորը կհասներ հյուսիսային խստաշունչ հարևանի երկիրը, մինչ նա փորձում էր համաձայնության գալ շոտլանդական տոհմերի կամակոր առաջնորդների հետ, մինչ պառլամենտը նրա բացակայությամբ քննարկում էր հիվանդագին և նրբին եկեղեցական հարցեր, բռնկվեց ևս մեկ փոթորիկ, այս անգամ՝ Իռլանդիայում։

«Սև կոմսի» դաժան քաղաքականությունը տվեց իր դառը պտուղները։ Որքան անողոք էր ճնշումը «վերից», այնքան ավելի դաժան էր պայքարի պոռթկումը։ Ապստամբությունն սկսվեց Օլսթերում հենց այստեղ՝ հյուսիսային գավառում, կեղեքումն առանձնապես անմարդկային կերպարանք էր առել։ Ցեղեկանալով լորդ կուսակալ Ստրաֆորդի մահապատժի մասին, հուսահատության հասած իռլանդացիները կաթոլիկական խաչվառը շուռ տվին անգլիական բողոքականության դեմ։ Բոցը բռնկվեց հոկտեմբերի 23-ին։ Ապստամբները չէին խնայում ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին, նրանք խուժում էին տները և մորթում բոլորին անխտիր՝ տանտիրոջից սկսած աղախնով վերջացրած։ Այլակերպված դիակները լողում էին գետերով, անթաղ ընկած էին ճանապարհների երկայնքով։ Տները վառվում էին, ամենուր կանգնեցված էին կախաղաններ։ Կիսամերկ փախստականները մեռնում էին քաղցից ու ցրտից դեպի Դուբլին տանող մատույցներում, որը դեռևս մնացել էր անգլիացիների ձեռքին։ Կաթոլիկ հոգևորականները բանագրանքի ենթարկեցին անգլիացիներին և

www.a-pdf.com

գեհենի տանջանքներով սպառնում էին բոլորին, ովքեր կօժանդակեն նրանց։

Այդ լուրերը հասան մինչև Լոնդոն։ Իսկ ինչքա՞ն են սպանվածները։ Հիսուն հազար, ասում էին ոմանք, ո՛չ, հարյուր, հարյուր հիսուն հազար, երկու հարյուր հազար անգլիացի գազանաբար սպանված են Իռլանդիայում։ Լուրերը աճում էին, դառնում ավելի ու ավելի սարսափելի։ Լոնդոնում տրտունջ բարձրացավ։ «Անիծյալ պապականներ, իռլանդական շներ, ֆիզվիտներ։ Դրանք, երևում է, դավադրություն են կազմակերպել թագուհու դեմ»։ Ինչ-որ մեկը շշնջում էր մի դավադրության մասին, որին խառնված են շատ բարձր շրջանները. չհայտարարե՞ց միթե ապստամբների գլխավոր Օ'Նեյլը, որ ինքը լիազորություններ ունի ուղղակի թագավորից։ Այժմ թագավորը Շոտլանդիայում է. նա ուզում է այնտեղ զորք հավաքել ընդդեմ պառլամենտի։ Ով գիտե, գուցե իռլանդական խռովությունն էլ բարձրացել է նրա լուռ հավանությամբ։

Բոլորը միարան էին. խռովությունը պետք է ճնշել որքան հնարավոր է արագ։ Հենց որ Օլսթերում տեղի ունեցող անկարգության մասին լուրերը հասան մայրաքաղաք, այսինքն նոյեմբերի սկզբներին, Փիմը պառլամենտին առաջարկեց Իռլանդիայում կարգը վերականգնելու գործը վերցնել իր ձեռքը։ Նոյեմբերի 1-ին Օլիվեր Կրոմվելը հայտարարեց, որ Տրենթից հետո հավաքված անգլիական բոլոր զինված ուժերի հրամանատարությունը պետք է հանձնել կոմս Էսեքսին, այդպիսով այն խլել թագավորից։ Իսկ դրպեսզի վրեժ լուծվի թափված արյան համար և հետն էլ փոխատուցում ստանան, պառլամենտում վճռված էր բռնագրավել 1 կուսակես միլիոն ակր իռլանդական հողեր և տալ անգլիացիներին։

Այդ հողերի գրավականով հայտարարվեց փոխառություն. 1՝ որ ապստամբությունը ճնշելու համար հարկավոր էր բանակ ստեղծել և զինել։ Գործը մեծ օգուտներ էր խոստանում, 1 պառլամենտի շատ անդամներ, Սիթիի գործառուները, սքվայրները փոխառություն բաժանորդագրվեցին մեծ հաճույքով։ Բաժանորդագրվողների մեջ էր նաև Օլիվեր Կրոմվելի անունը։ Իռլանդական ապստամբությունը ճնշելու համար նա զոհաբերեց 500 ֆունտ ստեռլինգ՝ մի գումար, որ հավասար էր նրա տարեկան եկամուտին։

Դառնում էր արդեն երեկոյան ժամը տասը և յոթերորդ ժամը, 1-ն սկսվել էր նիստը։ Վիճաբանությունները համայնքների պատատում երկարաձգվում էին։ Մի քանի ծերունիներ, որոնց քունը ընդհատելիորեն տանում էր արդեն կամացուկ հեռացել էին դահլիճից։ Տեղից վեր ելավ և նրանց ետևից ծանրումեծ հեռացավ պետական քարտուղար Նիկոլասը։ Իսկ վիճաբանությունը

www.a-pdf.com

ները դեռ շարունակվում էին։ Կրոմվելը երեկ սխալվում էր, ենթադրելով, թե դրանք չեն ձգձգվի։

Քննարկվում էր Մեծ ռեմոնստրացիան։ Երկու հարյուր լորդ կետերով թվարկված էին այն բոլոր դժբախտություններն ու լարաշահումները, որոնք բաժին էին ընկել դժբախտ Անգլիային՝ վերջին կառավարության օրոք։ Ժողովուրդը պետք է իմանա թե ինչից է դժգոհ պառլամենտը, և նրան օգնության գա։ Սա պետք է իմանա ում դեմ է ուղղված պառլամենտի դայրույթը հղփացած պապականների՞, սրանց հետ խոսքերը մեկ արած եպիսկոպոսների՞, թե՞ արքայի «վատ խորհրդականների»։

Այդ փաստաթղթի միայն ընթերցումն զբաղեցրեց մի քանի ժամ։ Հիշատակված էր ամեն ինչ և Լարոշելի մոտ կրած անհաջողությունը, և Քադիսի էքսպեդիցիայի ձախողումը, և պառլամենտների արձակումը, և կամայական ձերբակալությունները, տուգանքները, բանտային դաժան պայմանները, և մենաշնորհները օճառի, աղի, գինու, կաշվի, քարածխի նկատմամբ. ապրանքներ, որոնք առավել գնայուն են և անհրաժեշտ։ «Մեծ քանակությամբ համայնքային հողեր և առանձին տեղամասեր վերցված են եղել հպատակներից՝ առանց նրանց և հակառակ նրանց համաձայնության»։ «Ստեղծված են եղել դատական նոր տրիբունալներ, առանց դրա համար օրինական հիմունքներ ունենալու», «Եպիսկոպոսները և բարձր հոգևորականության մնացած մասը ուռճացել են՝ պաշտոնազրկումների բանադրումների, զանազան դիտնականների ու բարեպաշտ քահանաների պաշտոններն իջեցնելու հաշվին...»։ «Բարձր հանձնաժողովն իր դաժանությամբ ու անգթությամբ հասել է այնպիսի էքսցեսների, որ գրեթե չի զիջում հռոմեական ինկվիզիցիաներին և այնուհանդերձ շատ դեպքերում արքեպիսկոպոսն իր իշխանությամբ էլ ավելի է ուժեղացրել պատժի չափը, հանդիպելով դրանում Գաղտնի խորհրդի աջակցությանը», «Պուրիտանները՝ մի անվանում, որի տակ նրանք միավորում են բոլոր նրանց, ովքեր ուզում են պահպանել տերության օրենքներն ու ազատությունները և կրոնը պահել թագավորության իշխանության տակ,— պետք է, նրանց կարծիքով, կամ դուրս նետվեն թագավորությունից ուժով, կամ ահաբեկմամբ դուրս քշվեն...»։

Եվ ահա արդեն որերորդ ժամն է քննարկում է տեղի ունենում։ Ամեն ոք գտնում էր ասելու որևէ բան, յուրաքանչյուր կետ ենթարկվում էր մանրակրկիտ ստուգման՝ ոմանք ցանկանում էին ուժեղացնել մեղադրանքը, ոմանք՝ թուլացնել։ Կրոմվելը քաղց էր զգում. պալատը մոռացել է ընթրիքի մասին, այն մասին, որ դրսում վաղուց արդեն գիշեր է իջել։ Վիճաբանությունների ավարտը չէր նախատեսված։

— Դա կլինի սովահար երդվյալների դատավճիռը,— քրքջաց ինչ-որ մեկը մոտերքում։

Կեսգիշերին մոտ ռեմոնստրացիան վերջապես դրեցին քվեարկ-

www.a-pdf.com

կությանն։ Եվ ահա, տարօրինակ բան այն անցնում է ճոռալով, 159-ը կողմ, 148-ը՝ դեմ։ Ովքե՞ր են սխալ այդ դեմերը։ Նրանք, ովքեր վախենում են հետևանքներից։ Նրանք, ովքեր վախենում են վճռական միջոցներից։ Դրանք պալատում քանի գնում ավելանում են։ Ահա նրանք հավաքված են Հայդի, Ֆոքլենդի, Քոլփեփերի, Փալմերի շուրջը։ Դրանք կողմնակիցներ են ասոփճանաբար, մեղմ կատարվող բարենորոգումների, պալմանագրերի և բանակցությունների։ Բայց նրանք չէին, որ, համենայն դեպս, հաղթեցին այսօր։

Նիստը սակայն չի ավարտված։ Ոտքի է ելնում Հեմփդենը։

— Ես առաջարկում եմ հրատարակել հրամանը,— սկսում է նա, և աղմուկը, ասես մի հրամանով, դադարում է,— առանց հապաղելու տպագրել ռեմոնստրացիան։

Ահա թե ինչ։ Փոխանակ այն ուղարկի լորդերի հաստատմանը, նա ուզում է ուզղակի դիմել ժողովրդին։ Դա արդյոք շատ չէ՞ համարձակ։ Չէ՞ որ առանց լորդերի հաստատման փաստաթուղթը երբեք չի համարվել օրինական։ Աղմուկը կրկին ծայր է առնում, տլիք-ալիք անցնում գահլիճով մեկ։

— Մենք գիտենք,— գոչում են նրան,— դուք ուզում էք վրդովել ժողովրդին և ազատվել լորդերի աջակցությունից։

Ոտքի է կանգնում փոքր-ինչ լիքը, խելամիտ, չափավոր Հայդը։ Նրա դեմքը արտահայտում է շինծու հեզություն, բայց երևում է, որ ինչ-որ բան է վճռել։

— Պալատի սովորության մեջ չկա,— ասում է նա,— այդ ձևով ժողովրդականացնել իր արձանագրությունները։ Ըստ իս, այդպիսի որոշումն անօրինական է. ես վախենում եմ, որ այն կհանգեցնի կործանարար հետևանքների։ Եթե այն ընդունվելու է, թույլ տվեք ինձ բողոքարկել։

— Ես էլ կբողոքեմ,— անմիջապես տեղից վեր թռավ Փալմերը։

— Բողոքարկում ենք, բողոքարկում։ Մենք էլ ենք բողոքարկում,— գոռացին տարբեր կողմերից։

Աներևակայելի աղմուկ բարձրացավ։ Անգամ Փիմը չի կարողանում կասեցնել այն։ Զուր է նա խոսում նման բողոքների ինչ-որ ապօրինության մասին։ Նրան ընդհատում են լուտանքներով։ Նա պնդում է, նրան պատասխանում են սպառնալիքներով։ Դեպուտատները տեղից վեր են թռչում, ձեռքները մեկնում են դեպի նրախակալները։ Կրոմվելը չի նկատում, թե ինչպես է շեղբն ինքնաբերաբար հայտնվում իր ձեռքում, նա ինչ-որ բան է բղավում, ես մի բոպե, և արյունով կներկվի պառլամենտի հատակը ..

Բայց գզվռտոցը այդպես էլ չի վերածվում տուրուդմփոցի։

— Պարոններ,— ասում է Հեմփդենը խռպոտած ձայնով,— մինչև ուր հասանք մենք։ Սա ինչ ստորացուցիչ անկարգություն է։ Առաջարկում եմ նիստը հետաձգել մինչև վաղը։

www.a-pdf.com

Նա իրավացի է։ Այժմ արդեն ոչ մի բանի շուրջ համաձայնություն չես հասնի։ Դեպուտատները ցրվում են։

Կրոմվելը արագ քայլերով հասնում է Ֆոքլենդին։ Դեռ երեկ նա հավատացնում էր նրան, որ ռեմոնստրացիան չի հարուցի վիճաբանություններ։

— Հը՞, ո՞նց էր,— հոգնած քմծիծաղ է տալիս սա,— եղա՞ն վիճաբանություններ։

— Մյուս անգամ կհավատամ քեզ,— նույնպես քմծիծաղ է տալիս Կրոմվելը։ Եվ հանկարծ, կռանալով ուղղակի Ֆոքլենդի ականջին, շշնջում է, նույնիսկ մի որոշ հանդիսավորությամբ.— Եթե ռեմոնստրացիան մերժեին, ես վաղը կծախծխեի ինչ ունեմ-չունեմ և այլևս ոչ մի անգամ ոտք չէի դնի Անգլիա։ Ես գիտեմ ուրիշ շատ ազնիվ մարդկանց, որոնք կանեին նույնը։

Երկու օր անց Լոնդոն վերադարձավ թագավորը։ Նրա տրամադրությունը վատ էր. այդպես էլ չէր հաջողվել շոտլանդացիների հետ պայմանագիր կնքել։ Պառլամենտը հանձնեց նրան ծավալուն ռեմոնստրացիան, որն սկսվում էր ահեղ մեղադրանքներով և արքայական առանձնաշնորհությունների համար վիրավորական պահանջներով։ Սառն արհամարհանքով թագավորը մերժեց ռեմոնստրացիան և ձեռնարկեց անաղմուկ, բայց վճռական միջոցներ. փոխեց Թաուերի պարետին, հեռացրեց պառլամենտական պահակախմբին, Հայդը, Ֆոքլենդը, Քոլփեփերը ստացան կառավարական պատկառելի պաշտոններ։

Բայց պառլամենտը նույնպես չէր նիրհում։ Պալատների պահակախումբը վերացված է։ Շատ լավ, դեպուտատները իրենց հետ նիստերի դահլիճ կբերեն իրենց զինված ծառաներին։ Ընդանոթների երախները Թաուերից ուղղված են Սիթիի վրա, որ սպառնում է Լոնդոնի անվտանգությունը՝ թող որ Լոնդոնն ինքը պատասխանի այդ միջոցառմանը։

Եվ Լոնդոնը տեղից շարժվում է։ Արհեստավորներն ու ենթավարպետները կրկին փողոցներն են թափվում, ամբոխը ահեղ փոթորկվում է արքայական պալատի մոտի հրապարակում։ «Կորչեն եպիսկոպոսները։ Արտոնություններ պառլամենտին»,— լսվում են կանչեր։ Լորդերը լցանկացան իրենց երկրից վտարել եպիսկոպոսներին, նրանց փոխարեն դա կանի ինքը՝ ժողովուրդը։ Դեկտեմբերի 11-ին ամբոխի միջից, որ շրջապատել էր Վեսթմինսթերի շենքը, առանձնացվում է մի պատգամավորություն։ Նա լորդերի պալատին է հանձնում մի հանրագիր, որն ստորագրել էր 20 հազար մարդ։ Վտարել եպիսկոպոսներին լորդերի պալատից՝ ահա հանրագրի հիմնական պահանջը։ Դեկտեմբերի 27-ին ամբոխը լորդ-եպիսկոպոսներին չի թողնում պալատի նիստերին։ Եպիսկոպոսական պատմուճանով միայն երկու գեպուտատի է հաջողվում նիստերի դահլիճ սողոսկել։ Այն, ինչ չկարողացան անել պառլամենտական ճանապարհով, արվեց իր՝ ժողովրդի միջոցով։ Ներքին պալատի առաջնորդները ցնծում

www.a-pdf.com

են։ «Աստված մի արասցե,— զգուշացնում է Փիմը,— եթե համայնքները որևէ բանով հիասթափեցնեն ժողովրդին և թուլացնեն նրա ոգևորությունը»։

Այդ օրերին ամբողջ Լոնդոնը ամենատարբեր երանգներով կրկնում է բառերը, որ ծնունդ են առել փողոցային ատելության բորբսայում. նրանք, ովքեր արքայի կողմն են, ովքեր հագնում են մետաքս ու թավիշ, ովքեր կրում են երկար խոպոպներ՝ «կավալերներն» են (ակնարկ՝ պապական Իսպանիայի հետ կապի մասին)։ Նրանք, ովքեր հագնում են հասարակ բանվորական ըզգեստ, ովքեր մազները կարճ են խուզում, հին սովորության համաձայն, դրանք «կլորագլուխներն» են՝ պառլամենտի կողմնակիցները։

Թագավորն այլևս չի ցանկանում համբերել։ Օպոզիցիային հարկավոր է վերջ տալ մի հարվածով՝ հենց այդպես էր իր ժամանակին խորհուրդ տալիս նրան կոմս Ստրաֆորդը։ Մնում էր ափսոսալ, որ ինքն այն ժամանակ չանսաց այդ խորհրդին։ Այժմ նույնն են պնդում պալատական եպիսկոպոսները, Գաղտնի խորհրդի անդամները, ինքը՝ պաշտելի թագուհին։ Լոնդոնում արդեն հայտնի է դարձել նրա բանակցությունների մասին իր եղբոր՝ Ֆրանսիայի թագավորի հետ զինված օգնության մասին ու մեկ էլ նրա խարդավանքների մասին՝ Հոլանդիայի, Դանիայի, նույնիսկ Հռոմի արքունիքների հետ։ Դա հո հանաք բան չի։ Պառլամենտը օրերից մի օր կարող է նրան մեղադրել պետական դավաճանության մեջ։ Եվ Կարլոսը վճռում է։ Ճիշտ է, միապետը հենց նոր էր խոստացել պառլամենտին լիակատար անձեռնմխելիություն, բայց շատ էլ որ խոստացել էր։ Կարլոսը Ստրաֆորդին նույնպես խոստացել էր. «Ոչ մի մաղ...»։ Ո՞չ, այդ հարվածը լետք է հասցնել միանգամից։

Նոր, 1642 թվականի հունվարի 3-ին Փիմը, Հեմփդենը, Գեզլիգը, Հոլզը և Սթրոդը, ինչպես և լորդ Մանչեստերը մեղադրվում են դավաճանության մեջ։ Թող նույն այն քարը, որը նրանք նետեցին Ստրաֆորդի վրա, ընկնի այժմ իրենց գլխին։ Նրանց տները կնքված են։ Դատախազը ներկայանում է պառլամենտի պալատ և պահանջում մեղադրյալների ձերբակալում։ Բայց պառլամենտի անդամները լավ գիտեին իրենց արտոնությունները։ Հրաժարվում են նրա ձեռքը տալ մեղադրյալներին։

Թագավորը մոլեգնում է։ Դա խռովություն է արքայական կամքի դեմ։ Դա չլսված ոտնձգություն է միապետի իրավունքների դեմ։ Նա ինքը կգնա պառլամենտ և կպահանջի մեղադրյալների հանձնումը։ Թեպետև, ըստ հին սովորության, նրան չի թույլատրվում ոտք դնել ներքին պալատի շեմքը։ Նրանք չեն թաշվում խախտել սովորությունները՝ ինքը նույնպես կարող է խախտել։ Մի ժամից հետո, ինչպես խոստացավ կնոջը, նա կվերադառնա որպես լիակատար տերը իր թագավորության։

Զունատված, մոլեգնած, դրսում թողնելով չորս հարյուր զին-

www.a-pdf.com

ված մարտիկ, Կարլոսը ներս է մտնում նիստերի դահլիճ։ Գլխարկը ձեռքին նա շարքերի միջով անցնում գնում է դեպի պառլամենտի նախագահի բազկաթոռը։ Նախագահը շուտափույթ վեր է կենում և տեղը զիջում։ Դեպուտատները ոտքի են կանգնում և մերկացնում գլուխները։ Բոլորը լռում են։

Կարլոսը նայում, շափլփում է շարքերը։ Բայց սա ի՞նչ բան է։ Դեպուտատների մեջ չկան ո՛չ Փիմը, ո՛չ Հեմփդենը . Նա մի անգամ էլ սևեռուն զննում է դեմքերը և հասկանում է, որ տանուլ է տվել, անհուսալիորեն տանուլ է տվել անպիտանները հասցրել են թաքնվել։ Նա փորձում է խոսել, կակազելով սովորականից ավելի.

— Պարոններ, ես սաստիկ վշտացած եմ այն իրողությունից, որը ինձ բերել է այստեղ։ Բայց երեկ ես հրամայեցի ձերբակալել մարդկանց, որոնք մեղադրվում են պետական դավաճանության մեջ, և սպասում էի հնազանդություն... Ոչ մի թագավոր այնքան լէր հոգա ձեր արտոնությունների մասին, ինչպես ես։ Բայց պետական դավաճանության դեպքում արտոնություն գոյություն չունի։ Ես ինքս եմ եկել ձերբակալելու նրանց։ Դուք կարո՞ղ եք ասել ինձ, միստր սփիքեր, որտե՞ղ են նրանք։

— Ձերդ մեծություն,— ծունկի է գալիս պառլամենտի նախագահ Լենթալը, նրա ձեռքերն ինքնաբերաբար իրար են հագնում պաղատական տեսքով,— ես այստեղ չունեմ աչքեր, որպեսզի տեսնեմ, և լեզու, որպեսզի խոսեմ, մինչև որ ինձ չհրամայի այս պալատը, լէ՞ որ ես նրա ծառան եմ...

— Այդպե՞ս,— արտասանում է Կարլոսը, և նրա շրթունքներն էլ ավելի են դունատվում։— Տեսնում եմ, որ թռչունները չվել են։ Ես հուսով եմ, հենց որ նրանք հայտնվեն, դուք անհապաղ նրանց կուղարկեք ինձ մոտ։ Հակառակ դեպքում ես ինքս միջոցներ կձեռնարկեմ նրանց գտնելու համար։

Նա վեր կացավ և դանդաղ, չկորցնելով վսեմ կեցվածքը, գնաց դեպի ելքը։

— Արտոնությո՞ւն,— հանկարծ խռպոտ հնչեց ինչ-որ մեկի ձայնը։

— Արտոնություն, պառլամենտական իրավունքնե՞ր։ Արտոնությո՞ւն,— հնչում էին բոլոր կողմերից։

Բոլորի հետ մեկտեղ, մոլեգնությունից իրեն կորցրած, գոչում էր և Կրոմվելը։

Արքայի հայտնվելուց կես ժամ առաջ, ինչ-որ մեկի կողմից նախազգուշացված լինելով, առաջնորդները հասցրել էին ժամանակին հեռանալ պալատից և թաքնվել Սիթիում։ Պառլամենտը մի շարաթով ժամանակավորապես հետաձգեց նիստերը, բայց նրա գլխավոր կոմիտեն նույնպես իր նիստերը տեղափոխեց Սիթի։ Թագավորը ստիպված էր տանել մի սարսափելի ամոթ. քաղաքագլուխը, որին նա ինքն էր այցի գնացել, նույնպես հրաժար-

www.a-pdf.com

վեց հանձնել մեղադրյալներին։ Դա լիակատար, ջախջախիչ պարտություն էր։ Մայրաքաղաքն այնուհետև լէր հնազանդվում թագավորին։ Դեռևս պառլամենտից ճանապարհ ընկնելու ժամանակ նրա կառքը շրջապատել էր ահեղագոչ մի ամբոխ Սիթիում, ուր նա ժամանեց առանց թիկնազորի, նա իրեն զգաց ինչպես թշնամական ճամբարում։ Ամենուր նրան դիմավորում էին դաժան դեմքեր, խառնիճաղանջ ամբոխ, սպառնալի ճիչեր «Արտոնություն՞ պառլամենտին։ Անձեռնմխելիության իրավո՞ւնք»։

Հունվարի 10-ին Կարլոսը թագուհու և երեխաների հետ ուղևորվեց Հեմպթոն-Քորթ, իսկ այնտեղից մեկնեց Վինձոր։ Ուայթհոլ կվերադառնա նա միայն յոթ երկարաձիգ տարիներ հետո և կվերադառնա արդեն որպես գերի։

Իսկ Լոնդոնը տոնում էր հաղթանակը։ Հետևյալ օրը թագավորի մեկնելուց հետո պառլամենտի հինգ մեղադրյալ անդամները, շերիֆների և միլիցիայի[1] ջոկատների ուղեկցությամբ, նստեցին նավակներ և գետով հանդիսավորությամբ ուղևորվեցին դեպի Վեսթմինսթեր։ Հազարավոր մարդիկ քայլում էին գետափով մեկ, ողջունելով նրանց բերկրալի աղաղակներով և սպառնալի կոչեր ուղղելով եպիսկոպոսների և լորդ-պապականների հասցեին։ Բեռնանավերի և նավակների վրա, որոնցով վերադառնում էր Թեմզան, ծածանվում էին տոնական նավադրոշակներ, և աղեղնակիրները կանգնած էին ամբողջովին զինավառված, ասես մարտի պատրաստ։

Թագավորի մեկնումը նշանակում էր խզում։ Եվ չնայած նա առաջարկեց պառլամենտին համառոտակի թվարկել բոլոր բողոքները և խոստացավ միանգամից վերջ գնել տարակարծություններին, բոլորի համար պարզ էր, որ հարկավոր էր պատրաստվել պատերազմի։ Հունվարի 14-ին Կրոմվելը պալատում օրինագիծ մտցրեց պաշտպանության կոմիտե ստեղծելու մասին։ Օրինագիծը հաստատվեց։ Փետրվարի վերջին հայտնի դարձավ, որ թագուհին, հետը վերցնելով անգլիական թագին պատկանող զոհարները, մեկնել է մայր ցամաք։ Նա պաշտպանություն էր փնտրում եղբոր մոտ։ Արքան այդ նույն ժամանակ ուղևորվեց Յորք՝ օգնություն ակնկալելով հյուսիսային կոմսություններից։

Պատերազմը մոտենում էր. դա զգացվում էր փողոցներում, շուկաներում, եկեղեցիներում։ Ապրիլի 23-ին պառլամենտի առաջ քարոզ կարդացվեց «Գիրք դատավորաց»-ի հինգերորդ գլխի 23-րդ ոտանավորի թեմայով. «Թող նզովյալ լինի յուրաքանչյուր ոք,— թնդում էր քարոզչի ձայնը, կրկնելով հին խոսքերը,— ով ձեռքը չի բարձրացնի առյուն հեղելու համար»։

Մարտի 5 ին պառլամենտը հրամանագիր հրատարակեց միլիցիայի մասին. զինվորական ծառայության սլիտանի բոլոր

---

[1] Անգլիայում այն ժամանակ միլիցիա են անվանում տեղական աշխարհազորայիններին։

www.a-pdf.com

մարդիկ պետք է ներկայանան կոմսությունների լորդ լեյտենանտների տրամադրության տակ։ Թագավորը առանց իր համաձայնության միլիցիա հավաքելուն արգելքով է պատասխանում։ Հետայում «պամֆլետային պատերազմ» է տեղի ունենում, թշնամական երկու կողմերն էլ տենդագնորեն ուղերձներ են փոխանակում, պահանջում հրամաններ, դեկլարացիաներ։ Հունիսի 2-ին պառլամենտը ամփոփում է իր պահանջները «Տասներկու առաջարկների» մեջ և այն ուղարկում է թագավորին։ Կարլոսը վրդովվում է, նա խոցված է և զայրացած։ «Եթե ես համաձայնեմ դրան,— ասում է նա,— իմ առաջ գլխարկ կհանեն, ձեռքս կհամբուրեն, կանվանեն «ձերդ մեծություն», գուրզ կամ սուր կկրեն, կթույլատրեն ինձ զվարճանալ թագով կամ գայիսոնով, բայց ես կլինեմ սոսկ ստվեր, իշխանության սոսկ երևութք, փուչ ուրվական»։

Եվ իսկապես, համայնքները պահանջում են, որ պետության բոլոր գլխավոր հարցերը՝ մինիստրների, դեսպանների, խորհրդականների նշանակումը, եկեղեցական գործերը, զինված ուժերի հրամանատարությունը, գատարանների ու արդարադատության հաստատությունների տնօրինությունը, արտաքին քաղաքականությունը վճռվեն ոչ այլ կերպ, քան պառլամենտի հաստատումով։ Նրա վերահսկողության տակ էր դրվում անգամ արքայական երեխաների դաստիարակությունը։ «Nolumus Leges Angliae mutari»։— «Թույլ չենք տա փոխել Անգլիայի օրենքները»,— պատասխանում է թագավորը։

Պատրաստվելով պատերազմի, պառլամենտը միջոցներ է հավաքում, ասես թե իռլանդական խռովությունը ճնշելու համար։ Օլիվեր Կրոմվելը ներգնում է երեք հարյուր ֆունտ։ Հետագայում նա ավանդագրվում է ևս հինգ հարյուր ֆունտ՝ «ի պաշտպանություն պառլամենտի»։

Նա շատ գործունյա է։ Նրա լիքը կերպարանքը երբեմն առ երբեմն երևում է Իռլանդիայի գործերի կոմիտեում, լորդերի պալատում, Վեսթմինսթերի ծառայողական հիմնարկներում, հուլնիսկ Թաուերում, որտեղ նա բանակցություններ է վարում Լոնդոնի անվտանգության գծով պարետի հետ (լուրեր էին պտտվում, որ ռոյալիստները պատրաստվում են գավթել Թաուերը)։ Նա հայտնի մարդ է դառնում. նրան ուղարկում են լորդ-քաղաքագլխի մոտ, նշանակում են «Տասնինը առաջարկներին» թագավորի պատասխանը ընդունող կոմիտեում, օգնության առաջարկով նրան են դիմում քարոզիչ պուրիտանները։ Նա հռետոր չէ, ինչպես Փիմը, քաղաքագետ չէ, ինչպես Հեմփդենը, օրենսգետ չէ, ինչպես Ուայթլոքը, հանրապետական չէ, ինչպես Մարթենը կամ Գեզլրիգը, պրեսբիտերական չէ, ինչպես Հոլլը։ Նա գործունեության մարդ է՝ կամային, ընդունակ, աշխատասեր։ Փիմի և նրա կուսակցության համար նա շահեկան կատարող է, թագավորին դիմադրելու տաղանդավոր կազմակերպիչ։

www.a-pdf.com

Այն մասին, թե ինչ կլինի այնուհետև, նա առայժմ չի մտածում։ Նա վստահ գիտե, թե ինչ է հարկավոր անել այժմ՝ բոլոր ուժերով պայքարել թագավորական կամայականությունների դեմ, պառլամենտի իրավունքների, ժողովրդի իրավունքների համար։ Կասեցնել եպիսկոպոսների բռնատիրությունը, եկեղեցուց արմատախիլ անել պապական ծիսակատարությունները։ Թույլ չտալ, որ թագավորի ճամբարը դառնա ավելի ուժեղ, քան պառլամենտինը։

Իսկ այդպիսի վտանգ կա դեպի թագավորանիստ մայրաքաղաք՝ Ցորք է հոսում, լցվում զենք, փող, այստեղ կավալերներ են ժամանում երկրի բոլոր ծայրերից։ Թագավորին չհաջողվեց դավթել Գուլը. պառլամենտին հավատարիմ կայազորի հրամանատարը բարձրացրեց կամուրջները և հրաժարվեց տմրոցը հանձնել, բայց փոխարենը արքայի մարդիկ գրավեցին Պորտսմուտը և Նյուքասլը՝ դեպի մայր ցամաք բացվող ծովային դարպասները։ Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանները հավաքում են իրենց հին արծաթեղենը, որոնք ուսանողներն էին նվիրաբերել. որոշվեց այն ուղարկել թագավորին՝ ռազմական կարիքների համար։ Այդ մեկը պառլամենտը թույլ տալ լէր կարող։ Հրամաններ ուղարկվեցին համալսարանները, որպեսզի բռնադրավեն արծաթեղենը։

Կրոմվելը վրդովված է. նրա կոմսությունը, նրա համալսարանը, այդքան փառավոր պուրիտանական ավանդույթներով հարուստ, պատրաստ է դավաճանել պառլամենտի գործին։ Օգոստոսի սկզբին պալատների հրահանգներն լուած նա սուրում է դեպի հյուսիս, դեպի հարազատ վայրերը, Քեմբրիջ։ Նա եռքի մեջ է կամավորներ է հավաքագրում, կազմակերպում է ջոկատներ, ուղեկալներ է կարգում բոլոր ճանապարհների վրա։ Թրմբուկների զարկերի տակ, փողփողացող դրոշների ներքո նրա ղորքը ոտք է դնում հնամենի համալսարանի հողը հենց այն պահին, երբ գումակը քսան հազար ունցիա արծաթ բարձած՝ արդեն պատրաստ է ճանապարհ ընկնելու։ Արքայական թիկնապորի մեջ է Կրոմվելի զարմիկ Հեներին՝ ծերունի սըր Օլիվերի որդին։ Մի ժամանակ, երբ փոքր տղաներ էին, նրանք միասին խաղացել են Հինչինբրուքում։ Ներկայումս ընտանիքը բաժանբաժան է եղել. եղբայրներն ահա ուր որ է կմերկացնեն սրերը։ «Եվ ոտքի կելնի ժողովուրդը ժողովրդի դեմ և եղբայրը՝ եղբոր »։ Բայց արյունահեղություն չի լինում գումակը խաղաղորեն անձնատուր է լինում պառլամենտին։

Պալատը շնորհակալություն է հայտնում Կրոմվելին և հրամայում զոր ու գիշեր Քեմբրիջի շուրջը բոլոր կամուրջների ու ճանապարհների վրա զինված պահակախմբեր կարգել, որպեսզի ոչ զենք, ոչ հանդերձանք, ոչ էլ դոմական միջոցներ չընկնեն հյուսիս, թագավորի ռազմակայան։

www.a-pdf.com

Հուլիսին պառլամենտը ստորագրում է բանակի ստեղծման մասին հրամանագիրը «ի պաշտպանություն թագավորի անձի, պառլամենտի դույզ պալատների և բոլոր նրանց, ովքեր ենթարկվում են նրանց հրամաններին, ինչպես և ճշմարիտ հավատի, օրենքների, քաղաքացիական ազատությունների և միացյալ թագավորությունների խաղաղության պաշտպանության համար»։

Կարծես թե քաղաքացիական պատերազմն արդեն սկսվել էր։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ IV

ՔԻՆՎՈՐԸ

Քորքերի ղեկավարման արվեստում Եվրոպան երբեք նման բան չի տեսել։

Դևիդ Լեսլի

Արդար գործի պաշտպանության համար միայն կրոնասեր ու բարեպաշտ մարդիկ են պետանի։

Կրոմվել

Որոտը դեռ խուլ թնդում էր հեռվում, բայց նրա ահարկու ուժը մարել էր։ Սուր, մրրկարեր քամին պոկում էր գլխարկների վրայի փետրափնջերը, առագաստի պես ուռցնում էր շքախմբի թիկնոցները, անողոքաբար թրթռացնում ոլորած խոպոպները։ Ցածրիկ, թուխ ամպերը սրընթաց քշվում էին Նոթինգհեմի կոմսության բլուրների վրայով։

Շքերթը, որ բաղկացած էր մի քանի հարյուր խայտարղետ հագնված հեծյալներից, թագավոր Կարլոսի և դրոշակակիրների առաջնորդությամբ դուրս եկավ ամրոցի կենտրոնական հրապարակը։ Վիթխարի հնամենի դրոշը, «Կեսարինը տվեր Կեսարին» նշանաբանով, ծփում-ծածանվում էր, պատրաստ ուր որ է դուրս սլրծնելու ձեռքերից։

Թնդացին թմբուկները, շաչեցին շեփորները, և մունետիկն ոկսեց կարդալ արքայական հրովարտակը։ Նախնիների սովորությամբ Կարլոսը հավատարիմ վասալներին կոչ էր անում իր հետ հակատամարտի դուրս գալ անհնազանդ պառլամենտի դեմ։ «Մենք կկատարենք մեր պարտքը այն աստիճան, որ աստված կոչի մեղքը մեր վրայից այն արյան համար, որը հարկավոր կլինի թափել այդ անելիս»։ Երբ ընթերցումն ավարտվեց, օդ թռան գլխարկներ և լսվեցին աննկարագրելի ճղավոցներ. «Աստվա՜ծ, պահպանի՛ր թագավորին»։ Դրոշն ամրացվեց Նոթինգհեմլան ամրոցի աշտարակներից մեկի գագաթին։

Թագավորը տխուր էր։ Նրա շքախումբը թվում էր աննշան, փող չկար, կնոջ առաքելությունը գեպի մայր ցամաք առայժմ հաջողություն չէր բերել։ Դեռևս չէր հավաքվել ոչ մի ցամաքային զունդ, զենքն ու հանդերձանքը կանգնել-մնացել էին Յորքում։ Ճիշտ է, նրան պաշտպանում էին գրեթե ամբողջ հյուսիսարևմտյան կոմսությունները, ինչպես և Ուելսն ու Կոռնուոլը։ Բոլոր մեծատոհմիկ ու նշանավոր ջերդաստանները հավաստել էին նրան իրենց նվիրվածությունը։ Բայց փոխարենը ամենից շատ-

www.a-pdf.com

[illegible] Լվրոպայի մոտիկ մարզերն ու նավահան-
[illegible] [illegible] հարավ-արևելքը, և դլխավորը՝ Լոնդո-
[illegible] [illegible] որ թաքցվում էր Սիթիում՝ բոլորը
[illegible] [illegible] կոգմն էին

Ամբողջ միտքն ոգևորում էր ջահել, քաջ մարտիկի ժամանելը Վերանիայից՝ Կարլոսի աղգականը, նրա քրոջ՝ Բոհեմայի թագուհու հետ որդին և քրոջ ամուսինը՝ Պֆալցի կուրֆյուրստ Ֆրիդրիխ սանկտուամյա արքայազն Ռուփերտը, կրակոտ հավատացնում էին, թե իրենք մի հարվածով վերջ կտան այդ արդարհատակի «կլորագլուխներին», որոնք հանդգնել են խռովություն բարձրացնել։ Խոհեմ բան չէր, որ ժամանելուն պես արքայազնին հանձնեց Կատիշի շքանշան։

Ա՜խ, որքան դեղեցիկ, կրակոտ, հանդուգն էր նա՝ արքայազն Ռուփերտը։ Որքան էին սիրում նկարիչները պատկերել նրա տարմիկ, ամբարտավան, սքանչելի դեմքը, աղնվազարմ ձեռքերը՝ ժանյակավոր թեղանիքների փրփուրի մեջ, հոյակապ ոլորավարսերը, որ ցած էին թափվում օձիքածալի վրա։ Մի ալդպիսի փայլուն, եռանդուն զորահրամանատար էր հենց պետք անվճռական, թախծամած, թուլամորթ Կարլոսին։

Փոթորկալի քամին գիշերվա դեմ սաստկացավ, և արթնանալով հաջորդ օրվա առավոտյան 1642 թվականի օգոստոսի 23-ին, թագավորը չտեսավ իր դրոշը աշտարակի վրա, այն տապալել էր քամին։ Քաղաքացիական պատերազմն սկսվեց վատ կանխանշանով։

Պառլամենտն էլ բանակ լուներ։ Անգլիայում առհասարակ չկար կանոնավոր, մշտական բանակ։ Երկարատև խաղաղությունը որ ահա արդեն երկրորդ հարյուրամյակն էր, ինչ տիրում էր երկրում, դարձել էր նրան անհարկավոր։ Բանակն ավելորդ էր դարձել։ Իսկ տեղական աշխարհազորը՝ միլիցիան, որ կանչվում էր վտանգի ժամանակ կռվել, ըստ էության, չգիտեր։ Այդ տնաբույս, վատ ուսուցված, հարազատ դյուղին կամ քաղաքին կառչած ջոկատներից հարկավոր էր ստեղծել բանակ, որ ընդունակ լիներ մարտնչելու հեծյալների դեմ։

Արդեն օգոստոսի վերջին Կրոմվելը Հանթինգդոնում և Քեմբրիջում իր հայրենակիցների միջից սկսում է հավաքել հեծյալների ջոկատ։ Դեպի նա են գալիս կապալառուները որոնք հիշում են նրա հովանավորությունը և արդարամտությունը դյուղացի յոմենները, քաղաքի արհեստավորները և ենթավարպետները, բոլոր, իհարկե, բարեպաշտ պուրիտանները։ Սեպտեմբերին Օլիվեր Կրոմվելը արդեն 60 կամավորներից կազմված ջոկատի կապիտան է, որոնք դեռևս անվարժ նստած են դաշտային աշխատանքներին սովոր իրենց ձիերին։

www.a-pdf.com

Կամավորների հավաքագրում է կատարվում ամենուրեք, և կոմս Էսեքսի՝ պառլամենտական զորքերի դիմավոր հրամանատարի, բանակը հաշվվում է 20 հազար մարդ։ Բայց սա ի՞նչ բան է կոմս Էսեքսը՝ Եղիսաբեթ թագուհու տխրահռչակ սիրեցյալի որդին, կարծես ամենևին էլ տրամադիր չի՞ ճակատամարտ տալու։ Նա ամրարտավան է ու վշտոտ։ Նրա համար հեշտ չէ դիմավորել մի բանակ, որը պիտի միրճվի մարտի մեջ ընդդեմ աստծու օծյալի, նորին մեծություն արքայի։ Նա հապաղում է, տատանվում։ Իսկ երբ, վերջապես, սեպտեմբերի 9-ին դուրս է գալիս Լոնդոնից, գումակում նրա հրամանով տանում են հուղարկավորության պիտույքներ՝ դագաղ, պատանք, տոհմական զինքերը։

Պառլամենտական բանակի հապաղումը թագավորին հնարավորություն է տալիս համախմբելու իր ուժերը։ Կարլոսը ուղղություն է վերցնում դեպի հարավ, դեպի Լոնդոն, և ճանապարհին նրան են խառնվում բոլոր ասպետներն իրենց ծառաների հետ, բոլոր ռազմիկները, որոնք մարտնչել էին մայր ցամաքում, վարձկանները, ռազմական փառք որոնողները։ Էսեքսի զորքը գնում է դեպի հյուսիս, իսկ թագավորի զորքը՝ դեպի Լոնդոն։ Դեռ նոր էին միմյանց չնկատելով անցել, մեկ էլ Էսեքսը ուշքի է գալիս։ Նա շրջվում է, ընկնում հեռացող թագավորի ետևից, ճանապարհին կորցնում է հրետանու նշանակալի մասը և, վերջապես, հոկտեմբերի 23-ի ցրտաշունչ օրը, Էջհիլ բլրի մոտ, Օքսֆորդից ոչ հեռու, հասնում է հակառակորդին։

Երկու կողմերի զորաբանակները, յուրաքանչյուրը թվով տասնչորս հազար, շարված էին դեմ առ դեմ մարտական կարգով, հետևազորը հրացանակիրներով ու նիզակավորներով՝ մեջտեղում, հեծելազորը՝ թևերում։ Կեսօրվա ժամը երկուսին արքայազն Ռուպերտը սուսերը դուրս քաշեց պատյանից և խթանեց ձիուն։ Նրա հեծյալները, սուսերները շողացնելով ցուրտ օդում, որընթաց նետվեցին պառլամենտական զորքի մթին զանգվածին ընդառաջ։ Մի քանի րոպեում «կլորագլուխների» հեծելազորի աջ թևը ճզմվեց, ջախջախվեց և դիմեց փախուստի։ Ռուպերտի հեծելազորը գոռում-գոչյունով նետվեց նրանց ետևից, ճանապարհին ընկավ գումակի վրա և, քայքայելով սեփական շարքերը, ձեռնամուխ եղավ թալանի։ Ռուպերտն իր գործը համարեց ավարտված։

Մինչ հետևազորը, պատրույգներ ծխացնելով, վերալիցքավորում էր մուշկետ հրացանները, հեծելազորը հաջորդ հարվածը հասցրեց մյուս թևում։ Այստեղ արդեն պառլամենտական ջոկատները լիներացին. դրանց գնդապետին հաջողվեց ոչ միայն դիմանալ ռոյալիստների ճնշմանը, այլև անցնել հարձակման։ Լոնդոնյան միլիցիան, որ կազմում էր պառլամենտական հետևազորի կորիզը, դիմակայում էր անսասան։ Հեծելազորային մի քանի ջոկատներ ամրապնդեցին նրա հաջողությունը և հեծյալ-

www.a-pdf.com

ներն սկսեցին նեղվել նրանց վրա էին գրոհում և՛ թևերից, և՛ թիկունքից։

Արդեն երեկոյանում էր, երբ «հաղթական» Ռուփերտը վերադարձավ մարտի դաշտ, որտեղ տիրում էր լիակատար խառնաշփոթություն։ Շատերը չէին կարողանում հասկանալ՝ ում հետ և ում համար են մարտ մղում։ Նա օգնության նետվեց արքայական հետևազորին և հազիվհազ կարողացավ կասեցնել «կլորագլուխների» գրոհները։

Գիշերը վրա հասավ, մարտն ավարտվեց բայց ոչ ոք չգիտեր, ով էր հաղթել։ Հետևյալ օրը դարմանքին չափ չկար։ Կոմս Էսեքսը հրաման տվեց նահանջել դեպի Ուորիկ։ Թագավորն իր բանակի հետ հաջողությունից քաջալերված, ետ քաշվեց Օքսֆորդի ուղղությամբ, գրավեց այն և այնտեղ՝ Լոնդոնից երեսուն մղոն հեռավորության վրա, հիմնեց իր շտաբ-կացարանը։

Կրոմվելն ընդամենը միայն հեծելազորային կապիտան էր։ Նա ցավով էր տեսնում, թե ինչպես է Ռուփերտի հեծելազորի միահամուռ գրոհը ջարդում, կոխկրտում պառլամենտական զինվորների շարքերը, նա ամոթից շրթունքներն էր կծոտում իրենց անվճռական հրամանատարների համար։ Ո՞չ, այդպիսի զորքեր չէին պետք պառլամենտին։

— Ի՞նչ սպասել ձեր հեծյալներից,— տաքացած ասում էր նա Հեմփդենին։— Նրանց մեծամասնությունը ծեր, հալից ընկած զինվորականներ են, և դրա հետ մեկտեղ՝ հարբեցողներ։ Իսկ նրանց ջոկատները՝ ջենտլմենների և ազնվականների որդիներ են։ Մի՞թե դուք կարծում եք ամեն մի խուժան ի վիճակի կլինի պայքարելու ջենտլմենների դեմ, որոնք անդրդվելի են և խիզախ, որոնց ոգեշնչում է պատիվը։ Դուք պիտի ձեզ համար հավաքեք այնպիսի ոգու տեր մարդիկ, որոնք ոչնչով չէին զիջի ջենտլմեններին, հակառակ դեպքում ձեզ միշտ էլ կխփեն։

Խոհեմ Հեմփդենը ճոճեց գլուխը։ Այդ բոլորն այդպես է և լավ բան է ունենալ ոգով ջենտլմեններին հավասար զինվորներ։ Բայց որտեղի՞ց վերցնել դրանց։ Ինչպե՞ս ուսուցանել։ Իր աղգական Կրոմվելը խիզախ է ու ջերմ սրտի տեր, նա ձգտում է բարուն, բայց նրա առաջարկությունն անիրագործելի է։

Հեմփդենը թերագնահատում էր իր զարմիկին։ Պարտությունից խոցված ու, ով գիտե, դուցե նաև հմայված հոյակապ Ռուփերտի անընդգրկելի խիզախությամբ նա ձեռք է դարկում գործի։ Նա արդեն գիտե, ինչ է հարկավոր հաղթանակի համար. դրա համար հարկավոր է գտնել վեհ ոգու տեր մարդիկ, որոնք գիտեն, թե ինչի համար են իրենք գնում մարտի, որոնք թև են առնում մարտում ոչ թե հարստանալու կամ փառքի ծարավից, այլ շատ ավելի բարձր մղումից մղումից՝ հանդեպ արդարությունը, հանդեպ ամենքի բարօրությունը, մղումից՝ հանդեպ աստվածը։ Նա գիտեր այդպիսի մարդկանց։ Դրանց հարկավոր չէր հեռու ման գալ. նրանց դաժան ճշմարտությամբ ոգեշնչված

www.a-pdf.com

դեմքերը նա տեսել էր Հանթինգդոնի և Իլիի եկեղեցիներում, որտեղ կիրակի օրերը կարդում էին սուրբ գիրքը, շուկաների հրապարակներում, որտեղ նրանք ուշադրությամբ էին լսում պուրիտանական քարոզչին, սեփական տանը։ Այդ քարոզիչները, «սրբերը», պատրաստ էին կյանքը տալ իրենց հավատի համար։ Նրանց իդեալը բարձր է հեծյալների ճղճիմ ձգտումներից։ Միայն այդպիսի մարդիկ, հարկ եղած լափով ուսուցված ու կազմակերպված մարդիկ, կարող կլինեն հաղթանակել արդար գործում։

Եվ Կրոմվելն ակսում է ստեղծել նոր բանակ։ Նրա ոլ մեծաքանակ հեծյալ ջոկատը, որ հավաքել էր արևելյան կոմսություններում անվերջանալի ուղևորությունների ժամանակ և որն այժմ միավորված է թագավորի դեմ պայքարի ասոցիացիայի մեջ, գառնում է նոր բանակի հիմնական կորիզը։ Նրա զինվորներն ատում են թագավորական կամայականությունը. նրանք ոչ ոքի թույլ չեն տա միջամտել իրենց խղճի գործերին, իրենց վզին փաթաթել այս կամ այն հավատը։ Նրանք ազնիվ են ու անկաշառ։ Նրանք անողոքում են ու առանց հավակնության և միաժամանակ պատրաստ են ենթարկվել իրենց պետերին այնպես, ինչպես ենթարկվում են ավետարանի օրենքներին։ Իսկ առանց այդպիսի ենթարկվածության, մտածում էր Կրոմվելը, չի կարելի լինել լավ մարդ։ Ասված է, չէ՞. «Հնազանդ եղեք ամենայն մարդկային իշխանության՝ հանուն աստծո»։

1643 թվականի հունվարին ջոկատն արդեն կազմված էր, և պառլամենտը Կրոմվելին շնորհում է գնդապետի աստիճան։ Դա նոր լիցք է հաղորդում նրա եռանդին. զինվորներին ու նրանց ծանրաշարժ ձիերին, որոնք սովոր էին գութանին, հարկավոր էր վարժեցնել շարքի, շրջադարձերի, զանազանակերպ քայլքի։ Եվ Կրոմվելն առավոտից մինչև երեկո, չխնայելով իրեն, զբաղվում է գնդի գործերով։ Նորակոչիկներին նա ինքն է անձամբ սովորեցնում լիցքավորել մուշկետ հրացանը, ճիշտ բռնել տեգը, վերակազմել շարքերը, ունկնդիր լինել հրահանգներին։ Նա սովորեցնում է անվերապահ հնազանդություն և անողոքություն մարտում։

«Ինչպիսի թշնամի էլ կանգնած լինի իմ դիմաց, թեկուզ արքան ինքը,— ասում է նա,— ես կգնդակահարեմ նրան բոլոր մյուսների նման։ Եթե խիղճը արգելում է ձեզ անել այդ նույնը գնացեք ուր կուզեք»։ Մերթ կշտամբանքով, մերթ անպատշաճ կատակով, որի վրա նրանց հետ միասին ինքն էլ էր քրքջում, նա հասնում էր հնազանդեցման, կուռ կազմակերպվածության, գործողությունների միասնության։ Այո, նա կլինի նպատակասլաց ու անողոք, ինչպես Ռուպերտը, բայց իր զինվորները գլուխից անմիջապես հետո չեն ցրվի ու չեն սկսի կողոպուտով զբաղվել։ Ո՛չ նրանք կհավաքվեն, նորից շարք կկազմեն և մարտակարգով կբերկին կնետվեն թշնամու վրա, որպեսզի հաղթանակը լինի լիակատար։

www.a-pdf.com

Հոգսեր գեռևս շատ կան. պետք է զինվորներին լավ կերակրել, հագցնել զինել։ Ինչ հոգատար Հայրը և հաշվենկատ մտատերը, Կրոմվելը խորամուխ է լինում նրանց բոլոր հոգսերին։ Նա չի խնայում նաև իր սեփական դրամը՝ այդքան ավելի քան հազար ֆունտ է ներդրել նա գնդի կարիքների համար, և կոմսությունների կոմիտեներին էլ մշտապես ձանձրացնում է նամակներով, խնդրում է, համոզում, պահանջում։

«Իմ զորամասն աճել է ես ունեմ սմանչելի զինակիցներ . Բայց շափազանց ալմատ եմ, որպեսզի կարողանամ օգնել փողով, և արդեն տվել եմ, ինչ կարող էի· Այժմ, ասածս ողորմածությամբ, կտամ միայն իմ կաշին, նույնը կանեն և իմ մարդիկ» «... Ես փող եմ հայցում ոչ ինձ համար Երբ խոսքն իմ մասին լիներ, ես բերան իսկ չէի բացի այսպիսի ժամանակ. Բայց ուրիշները գոհացած չեն լինի: Աղաչում եմ ձեզ, շատացեք ուղարկել հատկացումները: Եվ մի մոռացեք քարոզիչների մասին». «... Ջենտլմեններ, ճնարավորություն տվեք ապրելու և գոյությունը պահպանելու նրանց, ովքեր ուզում են հեղել իրենց արյունը հանուն ձեզ»

Եվ դեպի Լոնդոն, պառլամենտի անդամ Սենթ Ջոնին է թռչում մի նամակ

«Ես չէի անհանգստացնի ձեզ դրամական գործերով, եթե իմ զինվորների ծանր կարիքները չկեղեքեին ինձ ամենաանբնականելի չափով Իմ ջոկատներն աճել են· Ունեմ սմանչելի ընկերներ. եթե դուք ճանաչեիք նրանց, կհամաձայնեիք ինձ հետ: Նրանք կրկնակնուքներ չեն, նրանք ազնիվ, չափավոր քրիստոնյաներ են, նրանք սպասում են, որ իրենց հետ վերաբերվեն մարդավարի»

Պե՞տք է արդյոք դրանից հետո զարմանալ, որ զինվորները հոգի էին տալիս իրենց գնդապետի համար։

Բայց և դա էլ քիչ է։ Գունդը հարկավոր է բաժանել ջոկատների, իսկ դրանցից յուրաքանչյուրի վրա կարգել բանիմաց և հուսալի հրամանատար։ Դրա բանը շատ ավելի դժվար է։ Դարերով ավանդված է, որ հրամանատարը պետք է աղնվատոհմ լինի, կրթված։ Ինչ խոսք, լավ կլիներ այդպիսի հրամանատարներ ունենալ։ Բայց որտե՞ղ են դրանք։ Գունդ մտնելու համար նրանք Կրոմվելին չէին դիմում։

Եվ նա վճռեց դիմել չտեսնված մի քայլի հրամանատարներ է նշանակում հասարակ գյուղացիներից, որոնք դրսևորում են խելամտություն, համառություն ու հմտություն, բայց որոնք երբեք ասպետներ չեն եղել։ Կրոմվելի վրա ծիծաղում են, նրան կշտամբում են։ Բայց ոչինչ չի կարող սասանել նրա համոզվածությունը։

«Եթե դուք որպես կապիտան ընտրեք ասավածավախ, առաքինի մարդկանց,— *գրում է նա,*— բարեպաշտ մարդիկ նրանց

www.a-pdf.com

ետևից կգնան. Ես կոպտավուն բրդյա կապայով ճասարակ կապիտանին, որը գիտե ինչի համար է մարտնչում, և սիրում է այն, ինչն ինքը գիտի, նախընտրում եմ նրանից, ում դուք ջենտլմեն եք անվանում և որն իրենից ոչինչ ավելին չի ներկայացնում»։

Եվ կապիտան է նշանակվում կառապանը, կոշկակարը, հնոցապանը, առևտրական նավի նավապետը։

Բայց այն, ինչը պարտադիր է հրամանատար դառնալու համար՝ դա հավատարմությունն է պուրիտանական իդեալներին։ Կապիտանը պետք է լինի ոչ միայն լավ զինվոր, այլև լավ քարոզիչ։ Բոցաշունչ հավատ, կարողանալ զորքի ոգին բարձրացնել, ոգևորել նրան ջերմ, սրտաբուխ խոսքերով՝ Կրոմվելը չգիտեր մի այլ բան, որը մարտի պահին զինվորին կտար մեծ խիզախություն ու վճռականություն։ Նա հրամանատարական պոստում առաջ էր քաշում ոչ միայն չափավոր պուրիտանների, այլև ծայրահեղ աղանդավորների։ Նա ճանաչում էր այդ մարդկանց և չէր վախենում նրանցից։ Ճիշտ է, նրանք հաճախ ավերում էին տաճարները, ջարդում էին գունավոր ապակիները այրում էին սրբապատկերները և սուրբ գրքերը։ Նրանք այդ պատճառով վատ համբավ էին ձեռք բերել։ Բայց փոխարենը նրանք, ինչպես և նա ինքը, այրվում էին բռնակալության նկատմամբ ատելությամբ, իսկ համոզմունքների ազատությունը նրանց դարձրել էր ավելի ճկուն ու խիզախ զինվորներ, քան զոգմաններին նվիրված պրեսբիտերականները։

Կրոմվելն իր զինվորներին պատմում էր հավիտենական արդարության տիրապետության մասին կեղծիքի և կռապաշտության դեմ ճշմարտության ու հավատի հաղթանակի մասին։ Պարտականությունը, ընդհանուր գործը, բարին և ազատությանը ծառայելու իդեալը՝ ահա այն դոշը որի ետևից գնում էին նրա զինվորները։

Մարտի մոտերքը գունդը՝ մոտ երկու հազար հնծյալներ, պատրաստ էր մարտնչել թշնամու դեմ։ Դա զարմանալի գունդ էր։ Լրագրում նրա մասին գրել էին «Ինչ վերաբերում է Կրոմվելին, ապա նա ունի 2000 քաջարի և լավ կարգավարժված մարտիկներ։ Եթե նրանցից մեկնումեկը երդվում է աստծով, վճռում է 12 պենս տուգանք։ Եթե խմում է, ոտնակոճղ են հագցնում կամ դրանից ավելի վատ մի պատիժ տալիս։ Եթե մեկը մյուսին անվանում է «կլոր գլուխ», նրան ազատում են ծառայությունից։ Այնպես որ այն վայրերում, որտեղով անցնում են նրանք, բոլորը նրանցով հիացած են մնում և միանում են նրանց։ Ինչպիսի՜ երջանկություն կլիներ, եթե մեր բոլոր ուժերը այդպես կարդապահ լինեին»։

Եվ ահա առաջին ընդհարումները, առաջին փորձությունները մարտում։ 1643 թվականի մարտի 13։ Երեկո։ Լայնարձակ դաշտ Գրենսեմ տեղանքի մոտերքում, Լինկոլնշիրում, որտեղ ասպետ-

www.a-pdf.com

ները մարտադաշտում շարել էին հեծյալների 21 և դրագունների 4 վաշտ։

«Հենց որ լսեցինք տագնապի ազդանշանը,— *գրել է այդ նույն օրը Կրոմվելը,*— ապա դուրս բերինք մեր ջոկատը, որ կազմված էր աասներկու վաշտից, որոնցից մի քանիսը գտնվում էին այնպիսի ողորմելի վիճակում, որ դժվար է պատկերացնել Այդ մի բուռ քաջերին անսծուն հանո էր գցել բախտի նժարին Որոշ ժամանակ մենք կանգնել էինք հակառակորդից մի գնդակի հեռավորության վրա, և դրագունները կես ժամ կամ փոքրինչ ավելի կրակ էին տեղում Տեսնելով, որ հակառակորդը մեզ վրա չի գալիս, մենք ինքներս վճռեցինք գրոհել նրա վրա և երկու կողմերի բազում կրակոցներից հետո բավական խոշոր վարգով հեռավեցինք նրա վրա· Նրանք դիմադրում էին համառորեն, բայց ասածո օգնությամբ շատ արագ ետ շպրտվեցին և փախան, իսկ մենք նրանց հետապնդեցինք երկու թե երեք մղոն»

28-ը հուլիսի, 1643 թվականն։ Գեյնսբորո փոքրիկ քաղաքի մերձակայքը, նույն կոմսությունում։ «Հակառակորդի ջոկատը կանգնած էր բարձր բլրի գագաթին, մեր գլխավերևում: Մեր կողմից ոմանք փորձեցին հեռավել բարձունքն ի վեր թշնամին դիմադրում էր. Մենք ետ շպրտեցինք նրան և կարողացանք բարձրանալ բլուրը»: *Բանից պարզվում է, որ առաջատար զորքի հետևում կանգնած է ռոյալիստների մի ողջ գունդ։* «Մինչ մենք կհասցնեինք մեր գունդը կարգի բերել, հակառակորդը մեր դեմ նետեց իր հիմնական ուժերը.. Մենք նույնպես գրոհեցինք: Ես աջ թևում էի: Կիպ, ձի ձիու դիմաց, մենք երկար կռվում էինք սրերով, պահպանելով մեր շարքերի կարգը, և հակառակորդ կողմերից ոչ մեկը չէր կարողանում հաղթել մյուսին Բայց վերջապես մեր հակառակորդը երերաց, մեր մարդիկ ավելի ուժգին հուպ ավին, նա տեղի տվեց, և մենք շուտով հաղթեցինք նրան, ցաքուցրիվ արինք նրա ամբողջ զորքը Ոմանք փախան մի կողմ, մյուսները՝ մի այլ կողմ, սաստիկ խուճապահար»

10 հոկտեմբերի։ Ուինսբի, Լինկոլնշիր։ Այստեղ կանգնած են ռոյալիստների գլխավոր ուժերը՝ մոտ երեք հազար մարդ։ Մոտավորապես մի այդքան էլ պառլամենտն է կենտրոնացրել այստեղ։ Այստեղ է նաև Արևելյան միավորման զորքերի զորահրամանատար կոմս Մանչեստերը և պառլամենտի հյուսիսային զորքերի հրամանատար Թոմաս Ֆերֆաքսը։ Ճակատամարտն սկսվում է պառլամենտական դրագունների գրոհով։ Գրիթե նույն պահին էլ հնչում է միահամուռ, երկնաղողանջ եռգը։ Սաղմոս են երգում

Աստված իմ, տեր իմ
Քեզ հետ մենք կպոգահարենք մեր թշնամուն,
Հանուն քեզ ոտքերով կտրորենք մեր դեմ ելածին,
Քանզի ոչ թե աղեղին եմ իմ ապավինում ոչ էլ սուրս կփրկի ինձ։
Այլ դու կփրկես մեզ մեր թշնամիներից և կնշավակես մեզ ատողներին։

www.a-pdf.com

Այդ մարտի են գնում Կրոմվելի ջոկատները։ Աշնանային ցինջ երկնքի տակ դողանջում են առնական ձայները։

Կրոմվելն ինքն է առաջնորդում իր հեծյալներին։ Նրա հարվածի շեշտակիությունը չի դիջում ռուփերտյանին։ Ռոյալիստների հրացանակիրները համազարկ են տալիս, և Կրոմվելն դդում է, որ ընկնում է։ Սպանված ձիու ծանր մարմինը նրան գամում է գետնին։ Բայց նա ինքը կենդանի է, անվնաս, և մի հզոր ուժ բարձրացնում է նրան, նա առաջ է վազում, կրկին ընկնում է, ոտքի կանգնում ու վազում։ Մարտի իրականացման մեջ արդեն դժվար է հասկանալ ինչն ինչոց է։ Կողքից սլանում է ինչ-որ մեկի ձին՝ փրփրոտ լկամով, առանց հեծյալի։ Կրոմվելը հաջողեցնում է բռնել ձիու սանձատակից, թռչել թամբին, և ահա նա ճակատամարտի կենտրոնում է. Ինչ-որ բան է գոչում զինվորներին, խրախուսելով նրանց, հավասարեցնում է շարքերը։ Հակառակորդը սասանվում է, և ահա ռոյալիստական զինվորները գլխապատառ փախչում են, գցելով զենքը։ Հաղթանակը լիակատար է։ Գրավված է երեսունհինգ դրոշ և մոտ հազար հոգու դերի են վերցրել։ Լինկոլնշիրի մեծ մասը մաքրված է հեծյալներից։

Բայց սա ի՞նչ բան է։ Բանակի հաղթանակները կարծես չեն էլ ուրախացնում պառլամենտին, այնտեղ տիրապետում է միանգամայն այլ ոգի, քան Մեծ ռեմոնստրացիայի պանծալի օրերին էր։ Այն գլխատված է։ Խիզախ, ազնիվ Հեմփդենը մահացու վիրավորված է հուլիսի 18-ի մարտում։ Սերուկ Փիմը հիվանդ է և մահը վերահաս։ Անհաշտ, անվեհեր Մարթենը նստած է բանտում։ Այժմ գործերը վարում են զգուշավոր, պահպանողականորեն տրամադրված պրեսբիտերականները, որոնք վախենում են համաժողովրդական պատերազմից։ Ավելի լավ է, մտածում են նրանք, խաղաղ պայմանավորվածության հասնել թագավորի հետ։ Նա արդեն լավ դաս է ստացել։ Թե չէ, ով գիտե, ինչի կարող է հասցնել ժողովրդի տարերքը։ Նրանք ենթադրում են, թե հարկավոր է պայմանավորվել շոտլանդացիների հետ և դադարեցնել անմիաբանությունը թագավորության մեջ։ Իսկ դրա համար պետք է սահմանել միասնական, բոլորի համար ընդունելի եկեղեցական կանոններ, շոտլանդական պրեսբիտերական կառուցվածքի նմանությամբ։ Բոլորին ատելի եպիսկոպոսարանը կազմալուծվում է, իսկ յուրաքանչյուր եկեղեցական համայնքի գլխին նշանակվում են պրեսբիտերներ՝ ավագներ, իմաստուն և պատկառելի մարդիկ։ Նրանք ընտրում են սինոդ՝ եկեղեցական բարձրագույն մարմին, որն իրականացնում է հսկողություն եկեղեցական գործերում և պատժում է մեղանչողներին։ Այդ ծրագրի հետ համաձայն էին նաև մեծամասնությունը Սիթիում։

Պրեսբիտերների ջանքերով 1643 թվականի սեպտեմբերին պայմանագիր կնքվեց շոտլանդացիների հետ։ Այն կոչվեց «Սըրբազան Լիգա և Կովենանտ» և պաշտոնապես Անգլիայում

www.a-pdf.com

մտցրեց պրեսբիտերական եկեղեցական կառուցվածք։ Կատարելով Լիգայի պայմանները, շոտլանդական բանակը գեներալ Լիվենի հրամանատարությամբ 1644 թվականի հունվարին մտավ Անգլիա։

Բայց պառլամենտում կային նաև դժգոհներ, որոնք հիշում էին ազատության բաղձալի մթնոլորտը, որ համակել էր իրենց 1641 թվականին։ Նրանք չէին ուզում համակերպվել նեղճակատ պրեսբիտերականության հետ, որ քիչ բանով էր տարբերվում եպիսկոպոսարանից։ Նրանց չէին կարող գոհացնել այն «ռեֆորմները», որ անցկացնում էր պառլամենտը, տիրացուական հրահանգները, որոնցով արգելվում էին թատերական ներկայացումները, արջ հալածելը, մայիսյան պարերը, երգչախմբային երգեցողությունը եկեղեցում և այլն։ Նրանք ձգտում էին դավանության ազատության, դատողությունների անկախության, քաղաքական ռեֆորմները շարունակելուն, ուրեմն և՝ պատերազմը շարունակելուն։ Դրանք ինդեպենդենտներ էին՝ անկախականներ։ Հենրի Վեն կրտսերը, Օլիվեր Սենթ-Ջոնը, Արթուր Գեզլրիգը դարձան նրանց առաջնորդները։

Իհարկե, Կրոմվելն ամբողջ հոգով նրանց հետ էր։ Ճիշտ է, նա, ինչպես և բոլոր մյուս սպաները, ստորագրեց Կովենանտը և այդպիսով իսկ պաշտոնապես համաձայնեց եկեղեցու պրեսբիտերական կառուցվածքին, բայց դա ակամա համաձայնություն էր։ Պառլամենտը փետրվարի 5-ին հրատարակեց հրամանագիր, որի մեջ հրամայվում էր բոլոր անգլիացիներին, որոնց տասնութ տարին լրացել է, ստորագրել Կովենանտը։ Բայց դրա առաջ չպետք էր կանգ առնել։ Այժմ, երբ նա զգում էր, որ աստված իր ձեռքն է դրել հաղթանակի հիանալի զենք՝ իր հեծելազորը, նա հասկանում էր, որ հարկավոր է առաջ գնալ, ամրապնդել ձեռք բերածը, այլապես թշնամին նորից կգնա Լոնդոնի վրա և բոլոր հույսերը կարող են փլուզվել։ Հարկավոր է ամեն կերպ ամրապնդել բանակը։ Նա վիճում է, համոզում, պարտադրում։ «Եթե ես կարողանայի ասել այնպիսի խոսքեր, որոնք խոցեին ձեր սրտերը,— դրում է նա իշխանություն ունեցողներին,— ես այդ կանեի... Եթե մենք որևէ բան բաց թողնենք, դուք կտեսնեք՝, որ Նյուքասլի[1] բանակը մեր գլխին կնստի»։ «... Այժմ ժամանակը չէ ընտրություն կատարել կամ մտածել այն մասին, թե ինչն է առավել հաճելին։ Հարկավոր է գործին ծառայել։ Հրամաններ տվեք և հասեք հնազանդեցման։ Թող աստված զորավիգ լինի ձեր և մեր ջանքերին»։

Նա տեսնում է, որ պառլամենտական զորքերի հրամանատարները ջանում են ձգձգել պատերազմը։ Նա տեսնում է, որ համարյա ողջ հյուսիսը և արևմուտքը՝ երկրի երեք քառորդը,

---

[1] Կոմս Նյուքասլ — թագավորական բանակի գլխավոր հրամանատարը։

www.a-pdf.com

դոնվում է թագավորի ձեռքին, իսկ պառլամենտը տիրում է միայն Արևելյան ասոցիացիայի հինգ կոմսություններին։ Էսեքսն հասարակ դադարել է մարտնչել, կոմս Մանչեստերը՝ արիստոկրատ-պրեսբիտերը, դանդաղում է բանակ ստեղծելու գործում, պառլամենտը բանակցություններ է վարում արքայի հետ։

Կրոմվելն այդ չի կարող հանդուրժել։ Նա գործում է։ Առաջին անգամ նրան կտեսնեիք ասոցիացիայի մի կոմսությունում, երեքշաբթի՝ մի այլ։ Նա հրապուրում է, համոզում, սպառնում։ Մտածելու այլևս բան չկա։ Զինվեցեք և դուրս եկեք բոլորդ, ով որ կարող եք։ Զոկատներ կազմեցեք, կամավորներ հավաքեցեք, ինչպիսիք որ կարող եք, ձիեր հավաքեք։ Նամակներով անմիջապես կապվեք Նորֆոլքի, Նեֆոլքի և Էսեքսի հետ։ Աղաչում եմ, մի՞թե մի կորցրեք, եղեք ավելի եռանդուն, ավելի ջանադիր։ Ակտիվ մարդիկ կարելի է կանգնեցնել միայն հեծելազորով։ Գործեցեք ավելի արագ, աշխատեցեք անդադրում, ջանքեր մի խնայեք, օգտվեցեք բոլոր միջոցներից»։

Նա տեղեկանում է, որ մայոր-գեներալ Կրոուֆորդը՝ կոմս Մանչեստերի շտաբի պետը, պաշտոնանկ է արել և իր գնդից դուրս է մի սպայի միայն այն բանի համար, որ սա եղել է անդավոր կրկնակնունք։ Դեպի Կրոուֆորդն է թռչում մի երկրորդ նամակ. «Դուք ճիշտ չեք վարվել,— համոզում է Կրոմվելը,— հանելով գործին ճավատարիմ և ծառայության մեջ ընդունակ զինվորի մի մարդու։ Թույլ տվեք ասել ձեզ, որ ես ձեզ հետ բոլորովին համաձայն չեմ։ Ես չեմ կարող պատկերացնել, թե դուք ինչպես եք նախապատվությունը տալիս հարբեցողներին, ճայհոյողներին և նմաններին մի այդպիսի մարդուց, որը վախենում է ոչնչից, վախենում է մեղքից։ Մի՞թե միայն նրա համար, որ անդավոր կրկնակնունք է։ Իսկ համոզվա՞ծ եք դուք դրանում, թող լինի այդպես, բայց արդյո՞ք դա նրան անընդունելի դարձնում հասարակության ծառայելու... Սըր, պետությունը մարդկանց ընտրելով իր մոտ ծառայության, չպետք է հարություն դարձնի նրանց կրոնական հայացքներին։ Եթե նրանք պատրաստ են հավատարիմ ծառայելու նրան, դա բավական է... Զգուշացեք վատ վարվելուց այն մարդկանց հետ, ովքեր միայն այն է, որ չեն բաժանում ձեր կրոնական հայացքները...»։

Դա ամբողջապես խորասուզված է ռազմական գործի մեջ, հանած՝ մինչև կոկորդը, և երկրորդ որդու՝ Օլիվերի մահը պատանեական բանակի զորամասում, ծաղիկ հիվանդությունից, չի կտրում նրան գործից. դա կորուստն է պատերազմի։ 1644 թվականին Կրոմվելն ստանում է գեներալ-լեյտենանտի տիտղոս։

Երկու հզոր բանակներ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած ավելի քան քսան հազար հեծյալներից ու հետևակից, պատ-

www.a-pdf.com

բաստվում էին մարտի, պարզելով իրենց դրոշները և աչք աչքի նայելով միմյանց... Մերոնց տարբերիչ նշանն էր սպիտակ թուղթը կամ թաշկինակը՝ ամրացված գլխարկների վրա։ Մեր նշանաբանն էր. «Մեզ հետ է աստված», հակառակորդի նշանն այն էր, որ նրանք չէին կրում ո՛չ ժապավեն, ո՛չ շարֆ, նրանց լոզունգն էր՝ «Աստված և թագավորը»։

Մեր բանակի դասավորությունը, երբ այն շարային դրության էր բերված, այսպիսին էր. գեներալ Լեսլիի հեծելազորի մեծ մասը, գեներալ Ֆերֆաքսի հեծելազորի հետ կազմում էր աջ թևը։ Գեներալ Մանչեստերի հեծելազորը շոտլանդացիների զորամասի հետ կազմում էր ձախ թևը։ Հետևակայինները տեղավորվել էին կենտրոնում»։

Այդպես էր վկայում ականատեսը։

Կոմս Մանչեստերի հեծելազորը գլխավորում էր գեներալ-լեյտենանտ Կրոմվելը։ Մարսթոն-Մուր կոչվող հավամրգու ամայի տարածության վրա, Յորքից հինգ մղոն հարավ, հուլիսի 2-ին՝ մի թաց ու քամոտ օր, հանդիպեցին երկու հզոր բանակները՝ արքայազն Ռուփերտի ուժերը, միացած Նյուքասլի զորքերի հետ, ընդդեմ պառլամենտի ուժերի։ Ռոյալիստները հաշվվում էին մոտ 18 հազար մարդ, «կլորագլուխները»՝ ավելի քան 22 հազար։ Պառլամենտի զինվորները առավոտից պատառ չէին դրել բերանները։ Մթերապաշարով գումակը չգիտես ինչու չէր կարողացել ժամանակին տեղ հասնել և, ծարավից տանջահար, նրանք գլուխները ետ էին թեքում բերանով անձրևի կաթիլ որսալու համար։

Արեգակը, որ շարունակ ծածկվում էր փախչող ամպերի ծվեններով, որոնցից անձրև էր մաղում, արդեն մայրամուտ էր հակվում, երբ շեփորներն ազդարարեցին մարտի սկիզբը։ Պառլամենտական կողմից խփեցին հրանոթները, և հեծյալները, որ կանգնած էին մի հրացանի կրակոցի հեռավորության վրա, հանկարծ լսեցին ցածր, սարսռեցուցիչ, աղիողորմ ձայներ. երկուսուկես հազար հեծյալները ձախ թևում սաղմոս էին երգում։ Նրան ձայնակցեց հետևակը, որը կիսով չափ ծածկված էր աչքից, տարեկանի բարձր, խոնավ արտում։

Արքայազն Ռուփերտը ժպտալով դարձավ գեներալ Նյուքասլին.

— Այսօր ճակատամարտ չի լինի։ Նրանք երգելու են և աղոթելու։ Իսկ ես գնամ ընթրեմ։ Մենք այսօր առանց այդ էլ բավականին ճանապարհ ենք անցել։

Նա ցատկեց ձիուց և գնաց դեպի իր վրանը։ Նյուքասլը տարակուսանքով տարուբերելով գլուխը՝ հետևեց նրան, կառք նստեց և հրամայեց ծխամորճը կպցնել։

Երկինքը մթնել էր. մոտենում էր ամպրոպը։ Անձրևը ավելի ուժեղացավ, ամպրոպի հարվածը ծվատում էր երկինքը տանջահար զինվորների գլխին։ Ժամը երեկոյան յոթին մոտ էր։

Այդ պահին պառլամենտական բանակի ձախ թևը հանկարծա-

www.a-pdf.com

կի շարժման մեջ դրվեց, որոտաց հրացանների համազարկը, և սև, միաձույլ, ասես միասնական մի մարմին, հեծելազորայինների զանգվածը բլրի գագաթից գահավիժեց ցած, • չդադարեցնելով ուժեղագոչ երգը։ Կրոմվելը գրոհի տարավ իր մարդկանց։ Դա բոլորովին նոր, մինչ այդ չտեսնված մի գրոհ էր. արագ, իր հրամանատարի ձեռքի յուրաքանչյուր շարժմանը հետամուտ ու հնազանդ գրոհ։ Երասանակները չէին թուլացնում, ասպանդակները կարճ էին կապված. հեծելազորայինները արշավում էին խիտ շարքով, խոշոր-խոշոր վարգով, միմյանց բոլորովին մոտիկ։

Կավալերներն այդ չէին սպասում։ Ռուփերտը, ընթրիքը կիսատ թողած, ոտքի հանեց իր զորքը և կատաղի փութաջանությամբ շարժվեց ընդառաջ։ Երկու թշնամի, երկու նշանավոր հրամանատարներ. մեկը՝ գեղեցկատես մի երիտասարդ, մյուսը՝ Կրոմվելը, քառասունհինգամյա, պնդակազմ, հասարակ տեսքով, բամահարված կարմիր դեմքով, հանդիպում էին երես առ երես։ Ջեռնամարտի սարսափելի հարվածը կարճ ժամանակով շփոթի մատնեց երկու հեծելազորներին։ Սրաշեղբերի համառ բախումից առաջացած ղնգոցները, ձիերի վրնջոցները, վիրավորների ճիչերը և որոտները վերևից՝ երկնքից, ուր մոլեգնում էր ամպրոպը. ասես այդ ճակատամարտին մասնակցում էին ոչ միայն երկրային, այլև երկնային ուժերը։ Ռուփերտը ցնցված էր, կատաղած. առաջին անգամն էր, որ հակառակորդը շփոթահար չէր լինում, չէր փախչում նրա հարվածից, այլ միայն մի քիչ ետ էր քաշվել՝ չխարխլելով իր շարքերը։

Մոտիկ կրակոցի վոթկոցը մի ակնթարթ կուրացրեց Կրոմվելին և նա զգաց, որ վիրավորված է վզից. տաք առյամբ է ներկվել օձիքը։ Բայց միթե դա կարող է ետ պահել նրան։ Նա չէր հիշում ով, ինչ-որ մեկը շտապ կապեց իր վերքը։ Անհամբերությունից այրվում էր, և ահա նա կրկին ձիու վրա է, զինվորները միահամուռ բացականչություններով ողջունում են հրամանատարին։ Նա նրանց հետ է, նա կրկին առաջ է տանում նրանց։ Կիպ շարքերով, ծունկ ծնկի, նրանք կրկին նետվում են Ռուփերտի վրա և, օ՜ հրաշք. արքայազնի փառապանծ հեծելազորը սասանվում է... Նա նահանջում է... Նա փախչում է...

Հաղթանա՜կ։

Բայց Կրոմվելը զուր չէ, որ այդքան նախանձախնդիր, այրուն մանրակրկիտ ուսումնասիրել է Ռուփերտի տակտիկան։ Ամեն գլխավորն այն է, որ չգայթակղվեն հետապնդումով, չթողնեն մարտադաշտը, այլ հավաքվեն, շուրջ բոլորն աչք ածեն. ինչ-ու ե՞ս է մարտն ընթանում ճակատի մյուս հատվածներում, ո՞ւմ է պետք նրա իր օգնությունը։

Իսկ օգնություն պետք է, շատ է պետք. հեծելազորի աջ թևը տատիպված է, շոտլանդացիներն արցունքն աչքերին աղոթում են լիակատար կործանումից փրկվելու համար, հետևակը կենտրոնում հազիվ թե դիմանա Նյուքասլի հարվածներին։ Յուրա-

www.a-pdf.com

յինները խառնվել են օտարների հետ, մարտի թեժությունը հասել է գագաթնակետին։ Ոմանք դողում են ու լալիս, ոմանք փորձելով դուրս պրծնել, հարցնում են մոտակա գյուղը տանող ճանապարհը, ոմանք բոլորովին ուժասպառ ընկած են գետնին և չգիտես, սպանվա՞ծ են, վիրավո՞ր, թե՞ պարզապես մահու չափ հոգնած, ամեն ինչի նկատմամբ անտարբեր։

Ահա հենց այստեղ էլ դրսևորվեց դաշտային երկարատև խստավարժանքի արդյունքը. հեծելազորի մի մասը, հնազանդ հրամանատարի ձեռքի մի նշանին, նետվում է հեռացող Ռուփերտի ետևից, իսկ մյուս, ավելի խոշոր հատվածը, անսպասելի կողմից խփում է Նյուքասլի զորքերին, որոնք մնացել են առանց հեծելազորի ապավինության։

Եվ դա էլ վճռեց ճակատամարտի ելքը։ Թշնամու հետևազորը սասանվեց ու դադարեցրեց գրոհը։ Կավալերները, գցելով դրոշներն ու զենքը, սկսեցին փախչել։

Երկար ամառային օրը մոտենում էր ավարտին։ Ամպրոպն անցել էր։ Մթնում էր։ Հաղթանակից շլացած, երջանկավետ, քաղցն ու ծարավը մոռացած զինվորներն իրար գլխի էին հավաքվել։ Հանելով գլխարկները, նրանք շնորհակալության իրենց աղոթքն էին մրմնջում առ աստված։

Ստիպված էին գիշերել հենց տեղում, դաշտի մեջ։ Ժամը տասնմեկին մոտ կոմս Մանչեստերը խարույկից խարույկ ընկած ներողություն էր խնդրում այն բանի համար, որ չի կարող կերակրել նրանց ընթրիքով։ Նա խոստանում էր վաղն ամեն հոգ տանել պարենամթերքի, խոհանոցի մասին։ Զինվորները ծիծաղում էին. «Աստված մեզ հետ է,— ասում էին նրանք։— Դե մենք պատրաստ ենք ևս երեք օր չընթրել, միայն թե հաղթանակ տանենք այնպես, ինչպես այսօր»։

Պատմում էին, որ Ռուփերտը, փրկվելով հետապնդումից, խրվել է բակլայի արտը և մնացել այնտեղ, չհանդգնելով քիթը դուրս հանել։ Սպանվել են ավելի քան երեք հազար ռոյալիստներ, մեկուկես հազարը գերի է վերցված, գրավված է հարյուր դրոշ, Ռուփերտի ողջ հրետանին, ողջ գումակն ու հանդերձանքը։

Հետևյալ օրն առավոտյան կռվի դաշտում մի կին էր թափառում, փնտրելով իր սպանված ամուսնու դիակը։ Նա կանգ առավ զինվորների մի խմբի մոտ, որոնք հանում էին սպանվածների շորերը և միմյանց մեջ բաժանում նրանց իրերը։ Կնոջ ամուսինը կավալեր էր եղել, և նա սպասում էր, թե երբ պիտի զինվորները գնան, որպեսզի ինքը հետո գնի դիակները։ Սպաներից մեկը հարցրեց, թե ինչ է պետք կնոջը, և սա բացատրեց։

— Հարկ չկա այստեղ կանգնելու,— մեղմ ասաց սպան,— հիմա մենք պիտի հավաքենք ու հողին հանձնենք սպանվածների դիակները, և երբ գտնենք ձեր ամուսնուն, ձեզ կտեղեկացնենք։

Սպան նրան թևանցուկ արած սարալ դեպի ձիերը և օգնեց

www.a-pdf.com

բարձրանալու թամբի վրա։ Այդպես կանչեց մի վինվորի և պատվիրեց ուղեկցել տիկնոջը մինչև տուն։ Կինը հրաժեշտ տալիս սպային հարցրեց.

— Ի՞նչ է ձեր անունը։

— Կրոմվել, Օլիվեր Կրոմվել,— պատասխանեց նա։

Նա արբեցած էր հաղթանակով։

Նրան թվում էր, թե մի ինչ-որ աներևույթ ուժ հրապուրում է իրեն դեպի առաջ, տանում միակ ճիշտ, հրաշալի ի վերուստ նախանշված ուղիով։ Շոտլանդացիների հրամանատար Լեսլին, որը շատ տարիներ էր կռվել մայր ցամաքում, ասաց, թե նման զինվոր չես գտնի հիմա ողջ Եվրոպայում։ Զորքերի ղեկավարման նրա արվեստի մասին բարձրաձայն խոսում էին ամենուրեք։ Ռուփերտն ինքը նրան անվանում էր «երկաթակող», և շուտով այդպես սկսեց անվանվել նրա ողջ զորքը։ Մի քանի օր հետո Յորքը անձնատուր եղավ։

Ռազմական խորհրդի նիստը ձգձգվում էր։ Թվում էր, թե բոլոր գեներալները դժգոհ էին մեկը մյուսից։ Յուրաքանչյուրն ունի իր հատուկ կարծիքը և չի ուզում ոչ մի բանում զիջել մյուսին։ Բոլորի տրամադրությունը խիստ բռնում էր նոյեմբերյան անձրևոտ երեկոյի տամուկ եղանակի հետ։ Կոմս Մանչեստերը նիստը վարում էր քամահրանքով, վատ թաքցնելով դատապարտման հետ կապված շփոթությունն ու երկյուղը։ Աշնանային կամպանիան, ի տարբերություն ամառայինի, ընթացել էր չափից դուրս վատ։ Ուլերի բանակը հարավում քիչ էր մնացել ենթարկվեր գլխովին ջախջախման։ Լսեքսն արևմուտքում միանգամայն անօգնական էր մնացել։

Կրոմվելը նստել էր խոժոռված, նրա դեմքը կարմիր էր։ Իր ժամանակին նա առաջարկել էր օգնության ձեռք մեկնել Էսեքսին։ Նա պատրաստ էր թռչել այնտեղ հավքի թևով, բայց դեմ ուռավ սառն «ոչ»-ի։ Կոմս Մանչեստերը, նրա անմիջական պետը, թվում էր, թե դիտավորյալ ձգձգում էր պատերազմը, խուսափում էր ճակատամարտ տալ հենց այն ժամանակ, երբ պառլամենտական զորքերը բացահայտ գերակշռություն էին ունենում։ Նա արհամարհանքով էր վերաբերվում միացյալ հրամանատարության ցուցումներին, գործում էր ռազմական խորհրդի կարծիքներին հակառակ, մի խոսքով՝ նա չէր ուզում պառլամենտի հաղթանակը։ Կրոմվելին թվում էր, թե Մարսթոն-Մուրից հետո Մանչեստերն իրենից վախենում է և գիտակցաբար թույլ չի տալիս նախաձեռնություն ի հայտ բերել։

Դեռևս այն ժամանակ, ամառանը, թևավորված հաղթանակների հաջողությամբ, Կրոմվելը փորձում էր համոզել նրան։ «Միտրդ,— ասում էր նա,— վճռականորեն կանգնեք մեր կողմում։ Մի ասացեք, թե հարկավոր է չափավոր լինել խաղաղության հասնելու սիրույն, թե հարկավոր է խնայել լորդերի պալատը,

www.a-pdf.com

վախենալ պառլամենտի մերժումներից. մենք ի՞նչ գործ ունենք խաղաղության ու լորդերի հետ։ Գործը դեպի լավը չի գնա այնքան ժամանակ, քանի դեռ ձեզ չեն կոչել պարզապես միստր Մոնթեքյու։ Եթե դուք մերձենաք ազնիվ մարդկանց հետ, ապա շուտով կկանգնեք մի բանակի գլուխ, որը օրենքներ կթելադրի թե թագավորին, թե պառլամենտին»։ Գուցե և այդ խիզախ խոսքերն էլ հենց այն ժամանակ մահու շափ վախեցրին կոմսին։ Այդ խոսակցությունից հետո նա դարձավ էլ ավելի վախկոտ, անվճռական, անգործնական։

Արդյունքը ողբալի եղավ. Էսեքսի հետևազորը սեպտեմբերի սկզբին զենքը վայր դրեց, իսկ գլխավոր հրամանատարն ինքը նավով փախավ։ Մի քանի օր անց էլ Նյուբերիի մոտ պառլամենտական բանակը, թեպետև ուներ համարյա կրկնակի առավելություն, չկարողացավ հաղթանակ տանել։ Թագավորը գրավեց Դենինգթոնի ամրոցը և տիրացավ զենքի ու հրետանու մեծ պաշարների։

Կրոմվելն զգում էր, թե ինչպես է ծանոթ մոլեգնությունը բարձրանում կոկորդը։ Նա այդ փափկասուն կոմսին դեմ կանի պատին, նրան կստիպի բացեիբաց արտահայտվել։

— Սըր,— նրա ձայնը դարձավ խռպոտ, հոնքերը կիտվեցին սովորականից ավելի։— Դուք խոսում էիք դժվարությունների մասին։ Այո, մեր զինվորները հիվանդ են, ձիերը վատ կերից երերվում են, բայց արդյոք ձեզ հայտնի՞ է, որ ֆրանսիացիները պատրաստ են օգնել թագավորին ոչ միայն փողով ու զենքով։ Ձեզ հայտնի՞ է, որ նրանց զորքերը, բազմահազար զինվորներով, ահա ուր որ է գուրս կգան մեր ափը, որպեսզի կռվեն թագավորի կողմում։ Պե՞տք է, որ մենք դադարեցնենք հարձակումը այդ պայմաններում։

Գեներալները հայացքներ փոխանակեցին։ Հարվածը դիպել էր նպատակակետին։

— Դե, այդ լուրերը զուրկ են որևէ հիմքից,— փորձեց պաշտպանվել Մանչեստերը։

Գեներալներն ազմկեցին։ Ֆրանսիական զորքերի ափհանումը լուրջ վտանգ է։ Այդ մասին արդեն վաղուց էր խոսակցություն գնում բանակում. վերջին ժամանակներս լուրերը ուժեղացել էին։ Արքային հարկավոր էր ջախջախել անհապաղ, քանի դեռ նրան օգնության չեն փութացել մայր ցամաքից։

— Ճակատամա՞րտ, վճռական մարտ, ահա թե ինչ է հարկավոր մեզ,— միաբերան ասացին բոլորը։

Կոմս Մանչեստերը ձգվեց։ Նրա բռնազբոսիկ ալարկոտությունից հետք անգամ չմնաց։ Աչքերը նրա փայլ առան, ձայնը զրնգուն դարձավ։

— Ջախջախել արքային, ասում եք։ Թող այդպես լինի։ Բայց եթե մենք ջախջախենք արքային ինքնունին անգամ, նա, համենայն դեպս, կմնա թագավոր, ինչպես և նրա հետնորդները, իսկ

www.a-pdf.com

մենք՝ նրա հպատակները։ Իսկ եթե նա մեզ ջախջախի թեկուզ մի անգամ, մեզ բոլորիս կկախեն, իսկ մեր հետնորդները ստրուկներ կդառնան։

— Միլորդ,— Կրոմվելն արդեն հանդարտվել էր։ Մանչեստերը թակարդն էր ընկած և պատասխանել նրան արդեն բոլորովին հեշտ էր,— միլորդ, եթե դա իրոք այդպես է, էլ ինչո՞ւ էր հարկավոր առհասարակ զենք բարձրացնել։ Ուրեմն մենք բոլորովին չպետք է կռվեինք։ Եթե այդպես է, եկեք հաշտություն կընքենք թագավորի հետ, ինչքան էլ որ նվաստացուցիչ լինեն դրա պայմանները։

Խաղաղության մասին, իհարկե, խոսք անգամ լինել չէր կարող։ Պատերազմը շարունակվում էր։ Բայց Մանչեստերի ալարկուն, վախկոտ տակտիկան մոտենում էր հանցագործության եզրին։ 1644 թվականի նոյեմբերի 15-ին պառլամենտական զորքերը թողեցին Նյուբերին և նահանջեցին։ Կարլոսը որպես հաղթող մտավ Օքսֆորդ։

Դրան հարկավոր էր վերջ տալ։ Կրոմվելին վրդովում էր ոչ թե Մանչեստերի դանդաղկոտությունը, ոչ թե ծուլությունը, ոչ թե անփութությունը, ոչ թե այն, որ նա մշտապես, ասես դիտավորյալ, ձեռքից բաց էր թողնում թշնամու վրա հարձակվելու հիանալի հնարավորությունը, ոչ թե նրա սխալները՝ ո՞վ պատերազմում սխալ թույլ չի տալիս,— ո՛չ, ամենից ավելի նրան կատաղեցնում էր հարաճուն համոզվածությունն այն բանում, որ բոլոր այդ թուլությունների և արատների ետևում ընկած է անհաղթահարելի անտարբերություն գործի նկատմամբ։ Դրա դեմ զենք չկա։ Մանչեստերը ուղղակի չէր ցանկանում գործել, և եթե անգամ նրան հարկադրեն, միևնույն է, դա կլիներ գործի երևութականություն, խուսանավումը նրանից, այն մինչև ավարտը հասցնելու գիտակցական չկամություն։

Միայն Մանչեստերը չէր, որ այդպիսին էր։ Պարզվում է, որ կործանարար մտավախությամբ, հանցագործ անտարբերությամբ վարակված է պառլամենտի մեծամասնությունը։ Նրանք՝ այդ գուշավոր, մեծաքսակ պրեսբիտերները, թագավորի հետ դաշինք էին ուզում կնքել իրենց համար շահեկան պայմաններով։ Նրանք արդեն սկսել էին բանակցությունները։ Բայց նրանց պայմանների հետ արքան երբեք չի համաձայնի, և պատերազմը կձգվի անվերջ, բանակը աստիճանաբար կրաջջայվի, երկիրը ենթա փլատակների տակ, իսկ գործը, մեծ գործը, որի համար սկսվել էր ճակատամարտը, կկործանվի։

Նոյեմբերի վերջին Կրոմվելը թողնում է բանակը և ուղևորվում Լոնդոն։

Նոյեմբերի 25-ին նա համայնքների պալատում ելնում է իր տեղից և սկսում խոսել։ Նրա հետ են արդարությունը և ուժը, նրա հետ են իր հաղթանակները, իր արյունը, որ հեղվել էր մառերում։ Նրա հետ են նրա զինվորները, որոնց հավասարը չկա

www.a-pdf.com

Եվրոպայում։ Դա նրա խոսքին տալիս է կշիռ, համոզչություն, հաստատակամություն։ Նա թվարկում է պառլամենտական զորքերի բոլոր անհաջողությունները, բոլոր ամոթալի վրիպումներն ու բոլոր պարտությունները։

Եվ այդ անհաջողությունների ու դրանցից բխող վատ հետևանքների մեջ մեղավորն ամենից ավելի կոմս Մանչեստերն է։ Այդ ամենը տեղի են ունեցել ոչ թե ինչ-որ պատահական կամ մասնավոր հանգամանքներում և ոչ էլ սովորական անշրջահայեցության պատճառով, այլ պատերազմը հաղթական ավարտին հասցնելու նորին պայծառափայլության սկզբունքային դժկամության պատճառով։ Նա ինքը մի անգամ չէ, որ հայտարարել է, թե իրեն դուր չի գալիս այդ պատերազմը և ինքը կգերադասեր հաշտությունը թագավորի հետ։

Մանչեստերը նույնպես չի ցանկանում լռել։ Նա ելույթ է ունենում լորդերի պալատում երեք օր հետո։ Նրա զայրույթը վերածվում է Կրոմվելի դեմ մեղադրանքների հեղեղի, իբրև թե նա՝ Կրոմվելը, ամոհասարակ հակված է անհնազանդության, ընդունակ է խռովության, պատրաստ է ոչնչացնել դահն ու արիստոկրատիան։ Նա մի անգամ ասել է իրեն՝ Մանչեստերին. «Գործը դեպի լավը չի գնա, քանի դեռ ձեզ չեն կոչել ուղղակի միստր Մոնթեքյու»։ Նա դեմ է պրեսբիտերներին և շոտլանդացիներին և պատրաստ է զենք բարձրացնել նրանց վրա։ Նա ասել է, թե հույս ունի ապրել մինչև այն օրը, երբ Անգլիայում այլևս չեն լինի արիստոկրատներ։ Նա սպառնում էր, թե կգնդակահարի թագավորին, ուզածդ որևէ թշնամու նման, եթե սա հայտնվի իր դեմ։ Նա փորձում էր դասալքել։ Նա հովանավորում է աղանդավորներին, միստիկներին, տեսիլահարներին, որոնք նույնպես ատում են լորդերին այն բանի համար, որ նրանք լորդ են։

Իրարանցումը պառլամենտում բորբոքվում էր։ Լորդերն, իհարկե, պաշտպանում էին Մանչեստերին։ Համայնքներում պրեսբիտերները պահպանում էին զգուշավոր լռություն, բայց պարզ էր, որ նրանց համակրանքը Մանչեստերի կողմն էր։ Կրոմվելի կողմն էին ինդեպենդենտները։

Կրոմվելն այնքան էր ուժ գտնում իր մեջ, այնքան էր իր իրավացիության վրա վստահ, որ մոռացել էր զգուշության մասին։ Ոչ միայն պառլամենտում, այլև դրանից դուրս, ոչ միայն մոտիկների շրջանում, այլև բոլորովին օտարների և նույնիսկ իրեն բոլորովին անհամակիր մարդկանց շրջանում նա բացահայտ վրդովվում էր Մանչեստերի վարքագծի դեմ, դատապարտում էր շոտլանդացիներին և հավատացնում, թե առանց նրանց էլ կարելի է հաղթանակ տանել, իսկ եթե նրանց մտքով անցնի իրեն խանգարել, նա ինքը նրանց կքշի Անգլիայից։ Վերջապես, նա բորբոքված պահին իրեն թույլ էր տալիս հարձակվել արքայի առանձնաշնորհության դեմ, լորդերի, պետության հիմքերի դեմ...

Պրեսբիտերների տագնապալի կասկածները աճում էին։ Դեկտեմբերի սկզբին Էսեքսի տանը հավաքվել էին Հոլզը, Սթեփլթո-

www.a-pdf.com

նը, շոտլանդացի մի քանի լիազորներ։ Խոսքը գնում էր այն մասին, թե ինչպես ազատվել այնպիսի մի վտանգավոր մարդուց, ինչպիսին նրանց համար դարձել էր Կրոմվելը։ Տնտղեցին բոլոր հնարավոր միջոցները. թույն, դաշույն, պետական դավաճանության մեղադրանք՝ ոչ մեկը հարկ եղածին չափ ներգործուն չէր թվում։ Երկար վեճերից հետո որոշեցին խորհրդակցել իրավաբանների հետ։ Տեղնուտեղը, ուշ երեկոյան, մեծարգո էսեքսի տված ազդանշանով իսկույն մարդ ուղարկեցին Ուայթլոքի և Մեյնարդի ետևից, որոնք հայտնի էին իրենց գիտակցությամբ, փորձով և բանիմացությամբ. նրանց կարելի է վստահել, նրանք, կարծես թե, սրտացավությամբ կվերաբերվեն գործին։

Կես ժամ կամ մոտավորապես այդքան անց Ուայթլոքը և Մեյնարդը, շփոթահար և տագնապած այդքան տարաժամ կանչից, ներս մտան սենյակ։ Մարդկանց դեմքերից, որոնք խիտ նստել էին սեղանի շուրջը, առանձնապես լարված լռությունից և փոքրինչ գողունի նետված հայացքներից նրանք անմիջապես կռահեցին, որ իրենցից կպահանջեն դավագրության մասնակցել։ Նրանցից ներողություն խնդրեցին։ Խոսել սկսեց շոտլանդական կանցլեր լորդ Լոուդենը։ Մի քանի ոչինչ չասող հարգալից խոսքերից հետո նա անցավ բուն էությանը.

— Դուք գիտեք, պարոններ,— ասաց նա,— գեներալ-լեյտենանտ Կրոմվելը չի պատկանում մեր բարեկամների թվին։ Նա ջանում էր ամեն կերպ վնասել մեր զորքերին, երբ մենք մտանք Անգլիա։ Նա հարգանքով չի լցված նորին պայծառափայլություն լորդ-գեներալի հանդեպ։ Ըստ մեր Կովենանտի կանոնների, բոլոր նրանք, ովքեր երկու թագավորությունների միջև հրձիգի դեր են խաղում, ենթակա են անհապաղ դատի։ Հրձիգը շոտլանդական օրենքով այդ նա է, ով սերմանում է երկպառակություն և ջանում է առաջ բերել կործանարար խռովություններ։ Այսպես ասեմն, մենք ցանկանում ենք ձեզնից իմանալ, ունի՞ արդյոք այդ բառը անգլիական օրենքներում նույն նշանակությունը, և արդյոք գեներալ-լեյտենանտ Կրոմվելը ձեր կարծիքով արժանի՞ է «հրձիգ» անվանը։ Եթե արժանի է, ապա ինչպե՞ս պետք է վերաբերվել նրա հետ։

Օ՜հ, ինչպիսի դժվար հարց տվին նրանք։ Ե՛վ Ուայթլոքը, և՛ Մեյնարդը հիանալի հասկանում էին, թե ինչպիսի կարևոր ընտրություն է կանգնած իրենց առջև։ Կրոմվե՞լը, թե՞ պրեսբիտերները։ Կրոմվե՞լը, թե՞ թագավորը։ Նո՞րը, թե՞ հինը։

Լռությունը երկարում էր, էլի մոմեր բերեցին։ Ժամացույցը դարկեց կեսգիշերը։

Իրավաբանները վերջապես հայացքներ փոխանակեցին, և Ուայթլոքը գլուխը բարձրացրեց։ Նրա գործնական, հստակ միտքը աշխատում էր ինչպես լավ կարգավորված մեքենան։

— Քանի որ ոչ ոք չի սկսում խոսել,— տիրարար արտաբերեց նա,— ես ինձ թույլ եմ տալիս ի նշան նորին պայծառա-

www.a-pdf.com

փայլության նկատմամբ իմ նվիրվածության (խոնարհում Էսեքսի կողմը) արտահայտել իմ կարծիքը։ «Հրձիգ» բառը մեզանում ունի նույն այն իմաստը, ինչ որ շոտլանդական օրենքներում։ Բայց արդյոք արժանի՞ է այդ անվանը գեներալ-լեյտենանտ Կրոմվելը, այդ կարելի է իմանալ միայն այն ժամանակ, երբ ապացուցված կլինի, որ նա իսկապես ասել կամ արել է մի որևէ բան, որը միտում ունենար երկպառակություն սերմանել երկու թագավորությունների միջև կամ անմիաբանություն մեր մեջ։ Ես կարծում եմ, որ ոչ դուք, միլորդ գեներալ (կրկին խոնարհում Էսեքսի կողմը), ոչ դուք, Շոտլանդիայի միլորդ կոմիսարներ, չեք համարձակվի գործ հարուցել և առավել ևս մեղադրանք ներկայացնել, լիակատար համոզված չլինելով հաջողության մեջ։ Կրոմվելը խելացի, խիզախ, հնարամիտ և ճկուն մարդ է։ Նրա ազդեցությունը ներքին պալատում վիթխարի է և հենց լորդերի շրջանում շատերը կպաշտպանեն նրան։ Ես չգիտեմ, և դուք էլ այստեղ չբերեցիք ոչ մի փաստ, որն ապացուցեր պալատին, թե Կրոմվելն իսկապես հրձիգ է։ Այդ իսկ պատճառով որքա՞ն է խելամիտ դրանում մեղադրել նրան։ Ինձ թվում է, սկզբում հարկավոր է նրա մասին փաստեր հավաքել, իսկ ապա, եթե անհրաժեշտ կհամարեք, մեզ երկրորդ անգամ հրավիրեք։ Մենք կասենք մեր կարծիքը, իսկ դուք կվճռեք գործն այնպես, ինչպես հարմար կգտնեք։

Ավելի լավը անհնարին էր ասել։ Այստեղ կար ամեն ինչ. հարգանք գլխավոր հրամանատարի և շոտլանդացիների հանդեպ, պատրաստակամություն օգնել խորհուրդներով, խելամիտ, զգուշավոր նախազգուշություններ և անվերապահ հրաժարում մասնակցությունից։ Մենք կքննարկենք զուտ իրավաբանական կողմը, իսկ դուք ինքներդ ամեն ինչ վճռեք ու արեք։ Մեյնարդին մնում էր հայտարարել, թե ինքը համաձայն է միստր Ուայթլոքի հետ։ Նա միայն մի նրբին նկատառում ավելացրեց. «հրձիգ» բառը անգլիական օրենքներում օգտագործվում է հազվադեպ և կարող է առիթ տալ թյուրիմացությունների։

Դավադիրների հույսերը խորտակվում էին։ Զուր էին տաքանում Հոլզը և Սթեփլթոնը, ապացուցելով, թե Կրոմվելը ամենևին էլ պալատում չունի այնպիսի ազդեցություն, որը նրան վերագրում են, թե նա ունի շատ թշնամիներ՝ թաքուն ու բացահայտ։ Զուր էին նրանք հավատացնում, թե հոժարությամբ իրենց վրա կվերցնեն հրապարակային մեղադրանք ներկայացնելու գործը և կբերեն այնպիսի փաստեր և խոսքեր, որոնք հստակորեն կմերկացնեն նրա շարամիտ դիտավորությունները։

Զգուշավոր շոտլանդացիները լռում էին. նրանք հասկացան, որ գործը տանուլ է տրված։ Վիճաբանությունները հետզհետե մարեցին։ Առավոտյան ժամը երկուսին Ուայթլոքն ու Մեյնարդը միաժամանակ, ասես մի հրամանով, ոտքի ելան ու հրաժեշտ տվին։ Դավադրությունը ձախողվեց։

www.a-pdf.com

Այն ունեցավ միայն մի հետևանք. գիշերային խոսակցության մասնակիցներից մեկը (ո՞չ արդյոք ինքը Ուայթլոքը) այդ ամենի մասին տեղեկացրեց Կրոմվելին։ Եվ նա դրանից հետո դարձավ էլ ավելի համարձակ, էլ ավելի եռանդուն։

Դեկտեմբերի 9-ին նա կրկին խոսք է վերցնում պառլամենտում։ Աղմուկը համայնքների պալատում մի ակնթարթում մարում է։

— Այժմ ժամանակն է խոսելու կամ ընդմիշտ լռելու,— հանդիսավոր արտասանում է նա։— Խոսքը վերաբերում է ազգի փրկությանը լիակատար արյունաքամությունից կամ, ավելի լավ է ասել՝ մահից։ Պատերազմի ձգձգումը կարող է հանգեցնել նրան, որ երկիրը կսկսի ատել մեզ և պառլամենտի անունն անգամ։

Նա ամեն ինչ լավ էր կշռադատել։ Խոսքերը իրենք իրենց էին դասավորվում, դառնում ավարտուն դարձվածքներ, ձայնը դղրդում էր, անսասան համոզվածությունը՝ թագավորում։ Նա գիտեր ինչ է պետք հաղթանակի համար։ Այժմ խոսքը ոչ թե հրամանատարության սխալների մասին է և ոչ էլ միայն Մանչեստերի։ Հարկավոր է փոխել պատերազմ վարելու բուն սկզբունքը, հարկավոր է վերակազմել ամբողջ բանակը։

— Ի՞նչ են ասում մեր մասին թշնամիները,— շարունակեց նա,— ի՞նչ են ասում մեր մասին մարդիկ, որոնք պառլամենտի բացման ժամանակ մեր բառեկամներն էին։ Նրանք ասում են, որ պառլամենտի զույգ պալատների անդամները զավթել են բարձր պաշտոնները՝ զինվորական և քաղաքացիական, ի շնորհիվ պառլամենտում ունեցած իրենց կապերի ու բանակում իրենց ազդեցության, անընդհատ մնում են իշխանության գլուխ և չեն թողնում շուտափույթ ավարտել պատերազմը, որպեսզի դրա հետ մեկտեղ չգա նաև իրենց իշխանության վախճանը։ Ես սա ասում եմ ձեր երեսին, այն դեպքում, երբ ուրիշներն այդ անում են ձեր թիկունքում։

Այդպես ուրեմն, ո՞ւր էր նա ծռում։ Նա ուզում էր ցույց տալ, որ հարձակվելով Մանչեստերի վրա, չէր սպասում հասնել որևէ առավելության անձամբ իր համար։ Բայց ամենից գլխավորը,— չատերն անգամ պահեցին շունչները,— դա հո նշանակում է, որ նա կոչ է անում փոփոխել բանակի ողջ հրամանատարությունը։ Ե՛վ Էսեքսը, և՛ Մանչեստերը, և՛ դրանց նման այլ հրամանատարներ պառլամենտի անդամներ էին։ Նա ուզում է, որ նրանք դած դնեն պատերազմի ղեկավարությունը։

— Եթե բանակը,— Կրոմվելը հատուկ շեշտեց այդ խոսքը,— չկազմավորվի այլ կերպ, իսկ պատերազմը չվարվի ավելի վճռականորեն, ապա ժողովուրդը չի կարող այնուհետև հանդուրժել այն և ձեզ կստիպի ընդունել խայտառակ հաշտություն։

Նրան հաջողվեց ոգևորել իր համախոհ ինդեպենդենտներին և համոզել տատանվողներին։ Անգամ պրեսբիտերներից շատերը

www.a-pdf.com

պաշտպանեցին նրան։ Հենրի Վենը հայտարարեց, թե պատրաստ է անմիջապես վայր դնել նավատորմի գանձապահի լիազորությունները, և Օլիվերը նրանից հետո ասաց, որ նույնպես պատրաստ է հրաժարվել բանակում ունեցած հրամանատարական պաշտոնից։ Հաշված օրերում բանը վճռվեց։

Դեկտեմբերի 15-ին համայնքների պալատը ընդունեց ինքնահրաժարման օրինագիծ։ «Այս պատերազմի ընթացքում,— ասված էր նրանում,— զույգ պալատների և ոչ մի անդամ չպետք է զբաղեցնի կամ կատարի ղեկավար որևէ պաշտոն՝ զինվորական թե քաղաքացիական»։ Դա մի հաղթանակ էր, հազիվ թե ոչ ավելի խոշոր, քան Մարսթոն-Մուրը։ Բանակի ողջ պրեսբիտերական ղեկավարությունը, այդ թվում կոմս Մանչեստերն ու կոմս Էսեքսը, պետք է քառասուն օրվա ընթացքում հրաժարվեին իրենց պոստերից։ Կրոմվելի առաջարկությամբ բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց պրոֆեսիոնալ զինվորական, չափավոր պրեսբիտերական, եռանդուն և խիզախ մարտիկ Թոմաս Ֆերֆաքսը։ Նրան իբրև առաջատար օգնականներ դարձան, որպես կանոն, երիտասարդ մարդիկ, որոնք ծանրաբեռնված չէին փքուն տիտղոսներով և երկար տոհմաբանությամբ. աստվածավախ Ֆիլիպ Սքիփոնը, որ քիչ չէր պատերազմել մայր ցամաքում, սրքվայրի որդի երեսունհինգամյա Հենրի Այրթոնը, քսանվեցամյա մայոր-գեներալ Ջոն Լամբերթը, նույնպես սքվայրի որդի։

Մի առաջատար տեղ թափուր էր մնում բանակում՝ հեծելազորի հրամանատարի և միաժամանակ գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալի պաշտոնը։ Այն մասին, թե ում պետք է նշանակել այդ պաշտոնում, առայժմ խոսակցություն չկար։

1645 թվականի հունվարին պառլամենտը որոշում ընդունեց մշտական պառլամենտական բանակ՝ նոր տիպի բանակ ստեղծելու մասին։ Այն պետք է ղեկավարեր մի միասնական կենտրոն՝ ռազմական խորհուրդը, զինվորներին ու սպաներին վճարում են պետական գանձարանից։ «Բանակը պետք է կազմված լինի վեց հազար հեծյալներից,— ասվում էր որոշման մեջ,— որոնք պետք է բաժանված լինեն վեց գնդի... Այդ բանակի համար պետք է հավաքագրվի հազար դրագուն, որը պետք է բաժանված լինի տասը վաշտի։ Այդ բանակում պետք է տասներկու հետևակային գունդ լինի, յուրաքանչյուրում հազար երկու հարյուր մարդ... Յուրաքանչյուր գունդ պետք է բաժանված լինի տասը վաշտի... Յուրաքանչյուր հեծյալ իր ծախսերի համար ստանալու է օրական երկու շիլինգ...»։ Բանակի ընդհանուր քանակը ծրագրում էին հասցնել քսանմեկ ու կես հազար մարդու։ Դրա մեկ երրորդ մասը կազմում էր հեծելազորը։

Կրոմվելն իսկապես դարձավ նոր բանակի ոգին, իսկ նրա «երկաթակողները»՝ նրա կորիզը։ Դարձյալ նրա աշխուրջ, աշառու մասնակցությամբ զինվորագրման հավաքներ անցկացվեցին

www.a-pdf.com

քաղաքներում ու գյուղերում։ Ուսուցում էր գնում ըստ վաշտերի։ Հետևակայիններին տվեցին միատեսակ կարմիր համազգեստ։ Դրանց հրամանատարներն էին դառնում հասարակ արհեստավորները, յոմենները, խանութպանները։ Կրոմվելյան կապիտանները, որոնք մի ժամանակ կոմս Մանչեստերի վրդովմունքն էին հարուցում, այժմ գնդապետներ էին դառնում։ Իսկապես որ Եվրոպայում չկար այդպիսի բանակ։

Չէին մոռացել նաև քարոզիչների մասին. պուրիտանական դասախոսները, որոնք այնքան լավ էին կարողանում աստծու խոսքը կապել օրվա կենսական խնդիրների հետ, ուղևորվում էին յուրաքանչյուր գունդ։ Նրանք չէին հրաժարվում զենք կրել՝ սուսեր, հրացան և սուրբ գիրքը նրանք գործի էին դնում նույնօրինակ արվեստով։

Կանոնագիրքը սահմանում էր խիստ կարգապահություն. «Յուրաքանչյուր ոք, ով կլքի իր դրոշը,— ասված էր այնտեղ,— կամ կփախչի մարտի դաշտից, կդատապարտվի մահվան... Եթե ժամապահը կամ դիտապահակը հայտնաբերվեն քնած կամ հարբած վիճակում... անխնա կդատապարտվեն մահվան... Գողությունը կամ կողոպուտը պատժվում է մահով...»։ Ինչքա՜ն էին զարթեցվում այդ սկզբունքներն այն ժամանակ ամենուրեք ընդունված զինվորական «Պատվի կոդեքսից»։ Տեղական բնակչության կողոպուտը, գողությունը, թալանը համարվում էին սովորական և նույնիսկ պարծանքի գործ։ Դրանում առանձնապես աչքի էին ընկնում արքայազն Ռուփերտի մարդասպանները։ Նրանք չէին խնայում ո՛չ եկեղեցիները, ո՛չ հիվանդանոցները, ո՛չ խաղաղ բնակչությանը։ «Արքայազն Ռոբեր»՝ «Արքայազն Կողոպուտիչ» էր կոչում նրան ժողովուրդը։

Այն ժամանակվանից ի վեր, ինչ պառլամենտական զորքը դարձավ նոր տիպի բանակ, նրա զինվորները կերպարանափոխվեցին. դրանք այլևս սովորական յոմեններ և կիսագրագետ արհեստավորներ չէին՝ իրենց ծննդավայրին կապված և ուրիշ կոմսությունում կռվել չցանկացող մարդիկ։ Մի նոր ոգևորություն էր տիրել նրանց։ Այն գիտակցությունը, որ իրենք մարտնչում են լավ գործի համար, ավելի լավ էր պահպանում կարգապահությունը նրանց շարքերում, քան կանոնադրության խստությունը, ստավորում էր նրանց ավելի լրիվ, քան դպրոցական գիտությունը։ «Նրանց մեջ տարածված չէին այն արատները,— գրել է մի ականատեսի,— որոնք այնքան սովորական էին զինվորական ընտանեկաների համար։ Չկար ո՛չ գողություն, ո՛չ սանձարձակություն, ո՛չ հայհոյանք, ո՛չ աստծու վկայակոչում, այնպես որ նրանց ճամբարում մարդ գալը նույնքան անվտանգ էր, որքան լավ բարքեր ունեցող քաղաքում»։

Այն քարոզները, որ ունկնդրում էին նրանք, նրանց համոզում էին, որ աստված իրենց կողմն է, և նրանք առանց տատանվելու ի մահ էին գնում հանուն նրա։ Թշնամու դեմ տարած հաղ-

www.a-pdf.com

թանակներն ամրապնդում էին այդ համոզմունքը. սուրբ գրվածքների ինքնուրույն ընթերցումն ու քննարկումը (յուրաքանչյուրին տրված էր չափածո սաղմոսների մեկական ժողովածու, շատերն ունեին գրպանի Աստվածաշունչ) նրանց մտքին սնունդ էր տալիս, սովորեցնում էր արտահայտել իրենց կարծիքները, փնտրել արդարն ու բարին։ Նրանք դառնում էին իրենց երկրի քաղաքացիներ։

Հունիսի 14-ի առավոտը ցուրտ էր ու խոնավ։ Ժամը 8-ին մոտ էր։ Կրոմվելը կանգնել էր բլրի գագաթին՝ Նեսբի փոքրիկ գյուղից հյուսիս, որ ինը մղոնի վրա էր Նորթհեմպթոնից, Անգլիայի հենց սրտում, և սևեռուն հետևում էր թշնամու զորքերի շարժմանը, որոնք կազմել էին մի փայլուն մարտական կարգ հակադիր բարձունքի վրա, ծաղկել սկսող որոճի, մասրենիների և փշոտ թփուտի մեջ։ Նրա զինվորները ձիերի սանձատակերից բռնած շարվել էին նրա թիկունքում, կազմելով պառլամենտական ջորադասավորման աջ թևը։ Կենտրոնում կանգնած էր գեներալ Սքիփոնի հետևակը նորագույն կարմիր համազգեստով։ Յոթ հազար մարդ ընդդեմ թագավորի չորս հազարի։ Զախ թևում, ուղղակի Ռուփերտի հեծելազորի դեմ Կրոմվելի հենց նոր նշանակված տեղակալի՝ գեներալ Այրթոնի հեծյալներն են։ Նույնիսկ այդտեղից՝ հեռվից, տեսանելի էր, որ ռոյալիստների հեծելազորը նույնպես քիչ է պառլամենտականից։ Ասենք, թփուտներում դյուրին պիտի լիներ թաքցնել բավական նշանակալից համալրում։

Հենց երեկ էր Կրոմվելը ժամանել այստեղ՝ Ֆերֆաքսի բանակը, և մինչև այժմ նրա ականջներում հնչում էին ողջույնի միահամուռ բացականչությունները, որոնցով զինվորները նրան դիմավորեցին։ Ընդհուպ մինչև վերջին րոպեն նրա դրությունը հստակ չէր. չէ՞ որ «Ինքնահրաժարման ակտը», որ առաջարկվել էր նրա իսկ կողմից պառլամենտում, պահանջում էր նրա վրայից վերցնել զինվորական լիազորությունները։ Բայց նա չէր շտապում այդ անել։ Նա զբաղված էր սկզբում զորքերի կազմակերպմամբ, այնուհետև կավալերների հետ մանր ընդհարումներով։

1645 թվականի ամռանը դրությունը կրկին դարձավ սպառնալի. ռոյալիստները գնում էին Լոնդոնի վրա։ Եվ հենց իրեն՝ Կրոմվելին, և պառլամենտում ու բանակում էլ բոլորին պարզ էր՝ առանց նրան յոլա չէին գնա։ Ֆերֆաքսը ռազմախորհրդի կողմից միջնորդագիր ուղարկեց պառլամենտ. «Համընդհանուր հարգանքն ու սերը, որ տածում են նրա հանդեպ ամբողջ բանակի սպաներն ու զինվորները, նրա անձնական արժանիքներն ու ընդունակությունները... նրա մեծ հոգատարությունն ու նվիրվածությունը, արիությունն ու հավատարմությունը, որ ի հայտ են գալիս պառլամենտին ծառայելու մեջ, ինչպես և աստծո մշտական առկայությունն ու այն օրհնությունը, որն անդավաճան ուղեկցում է նրան, այդ բոլորը նրան նշանակելու մասին մեր

www.a-pdf.com

խնդրանքը դարձնում են մեր պարտականությունը հանդեպ ձեզ և հանդեպ ժողովուրդը»։ Չորս օր անց, ռոյալիստների մոտենալուց ահաբեկված, լորդերը թթված դեմքով հաստատեցին նրա նշանակումը՝ հակառակ ինքնահրաժարման մասին օրինագծի։

Նա աչքի էր անցկացնում իր զորքը։ Խեղճ, անճոռնի զինվորներ գոմշացուլի կաշվից ոտնամաններով։ Որքան լավ գիտեր նա նրանց, որքան էր սիրում, Պարզաբարո, անգրագետ գեղջուկների մի խառնամբոխ՝ արհամարհված կավալերների կողմից. նրանք այսօր ցույց կտան իրենց։ Ժպիտը բացեց նրա մռայլված դեմքը, քամին ողողեց սիրտը։ Նա բարձրացրեց աչքերը դեպի երկինք և շշնջաց ինքն իրեն գոհունակության մի կարճառոտ աղոթք։ Նա հավատացած էր, որ աստված կնշավակի կավալերներին։

Առավոտյան ժամը իններին այն կողմից լսելի եղավ շեփորի ձայն։ Դրան ի պատասխան, ասես հենց դրան էին սպասում, պառլամենտականների բարձունքից ջղայնորեն հնչեցին շեփորները։ Առաջինը, ինչպես միշտ, մարտի նետվեց Ռուփերտի անհամբեր հեծելազորը։ Կրոմվելը թռավ թամբին և գրոհի ազդանշան տվեց։

Նրա «երկաթակողները» սևերես չարին։ Նրանց առաջին իսկ հարվածը տրորեց և ցրիվ տվեց ձախ թևի արքայական հեծելազորին, հալածեց նրան բլրից ներքև, փշաթփերի միջով քշեց հեղեղատից անդին։ Բայց չէ, պետք չէ հրապուրվել հետապնդումով։ Կրոմվելը թույլ տվեց միայն հեծելազորից մի բուռ բաջերի՝ արունակել ավելի հեռուն քշել կավալերներին, իսկ հիմնական մասը շուռ տվեց և հզոր երկաթե բռունցք դարձած ընկավ թշնամու հետևակի վրա։

Հետևակը հրացանային կրակոցներից անցավ ձեռնամարտի։ Ենթերալ Սքիփոնն սկզբում հմտորեն և ճարպկորեն հարձակվեց և անգամ հակառակորդին դուրս հանեց իր դիրքերից, բայց հետո, չգիտես որտեղից, նրա վրա ընկան հեծյալ ջոկատները, և նա ստիպված եղավ նահանջել։ «Կլորագլուխների» շարքերը երերացին, ինքը Սքիփոնը վիրավորված էր, նրա օգնականը՝ սպանված, Լլի մի փոքր և կարմիր համազգեստավորները կդիմեն փախուստի։ Եվ այստեղ էլ, ինչպես Մարսթոն-Մուրում, Կրոմվելը փրկեց դրությունը։ Նրա «երկաթակողները» անսպասելի և թափով հարվածեցին թշնամու հետևազորի թիկունքին, տրորեցին նրան ձիերով, թրատեցին։ Սիրտ առած հետևակը ոգևորվեց, սեղմեց ավելի ուժգին, և ասպետները տեղի տվեցին։

Ֆերֆաքսը՝ առանց սաղավարտի, որն ընկել էր ինչ-որ մեկի թրի զարկից, մխրճվեց արքայական հետևակի գլխավոր ուժերի մեջ, դեսուդեն ցրեց խմբված մարտիկներին, իր ձեռքով սպանեց պրուշակակրին ու վերցրեց դրոշը։

Մինչդեռ ձախ թևում գործը միանգամայն վատ ընթացք ուներ։ Ռուփերտը ետ էր շպրտել Այրթոնի ջոկատները։ Ինքը գեներալը նիզակով վիրավորվել էր ոտքից, ու մեկ էլ՝ դեմքից,

www.a-pdf.com

պառլամենտական հեծելազորը ցրիվ էր տրված։ Բայց որտե՞ղ էր Ռուփերտը։ Ինչպես միշտ, նա հրապուրվել էր հետապնդումով, հասել մինչև Նեսբի և ձեռնամուխ եղել թալանի։ Նա դուրս էր եկել մարտից, որը թանկ նստեց իր վրա. զրկվելով պաշտպանությունից, Սքիփտոնի և Կրոմվելի միահամուռ ճնշման տակ մատնվեց խուճապի, գցելով զենքը, մոլեգնորեն ճեղքել-անցնելով փշաթփուտների միջով, կորցնելով մարդկանց։

Կարլոսն ինքը, տեսնելով իր զորքի անխուսափելի ջախջախումը, ուզում էր նետվել գրոհի. հուսահատության մեջ նա նժույգով առաջ անցավ, մարտի կոչ անելով իր անձնական գվարդիային, բայց ինչ-որ մեկի փրկարար ձեռքը խլեց նրա ձեռքից երասանակը, ուժով շուռ տվեց ձիու գլուխը և այն սուրաց դեպի արևմուտք, գնդակների տարափից հեռու։ Նրա ետևից, անխնա խթանելով, սուրաց նրա ողջ հեծելազորը, որը փրկվել էր ջախջախումից։ Շուտով իր խելակորույս, տանջահար ձիով նրանց հասավ արքայազն Ռուփերտը։ Նա ճակատամարտի դաշտ էր վերադարձել, երբ ամեն ինչ արդեն ավարտված էր, և այժմ նույնպես փրկել էր իր կյանքը։

Երկու բլուրները, որոնց վրա շաղ էին եկած մարդկանց ու ձիերի դիակները, մաքրված էին կենդանի մնացած ասպետներից, որոնք անկանոն փախուս էին տվել մինչև Նոթինհեմ և ավելի հեռուն։ Նրանք թողել էին քաղաքը, լքել էին իրենց ողջ գումակը։ Ճակատամարտը ավարտվեց երեք ժամում։ Պառլամենտի ձեռքն ընկավ մոտ հինգ հազար գերի, ամբողջ հրետանին, զենքեր, հանդերձանք, գումակը։

Օրը թեքվում էր դեպի մայրամուտ, երբ Կրոմվելը, դեռ չհանդարտված ճակատամարտի բորբոքից, դեռևս զգալով նրա պատճառած խանդավառությունն ու տենդը, զեկուցագիր գրեց պառլամենտի նախագահին։

«Սը՛ր։ Երեք ժամ տևած համառ մարտից հետո, որն անցավ փոփոխական հաջողություններով, մենք ցրիվ տվինք հակառակորդին, սպանեցինք և գերի վերցրինք մոտ հինգ հազար, որոնցից շատերը սպտներ են։ Նույնպես ավար վերցվեց երկու հարյուր սայլ, այսինքն՝ ողջ գումակը և ամբողջ հրետանին։ Մենք թշնամուն հետապնդեցինք Հարբորոյից անդին, գրեթե մինչև Լեսթեր, ուր և փախավ թագավորը։

Սը՛ր, դա ոչ այլ ինչ է, եթե ոչ աստծո ձեռքը, և միայն նրան է պատկանում փառքը։ Գեներալ Ֆերֆաքսը ձեզ ծառայեց հավատարիմ ու քաջաբար. ամենից լավ նրան բնութագրում է այն, որ հաղթանակի մեջ նա տեսնում է աստվածային կանխորոշում և ավելի շուտ կմեռնի, քան իրեն կվերագրի ողջ փառքը։ Ազնիվ զինվորները հավատարիմ ծառայեցին ձեզ այդ կռվում, սը՛ր։ Դրանք նվիրված մարդիկ են, և ես երդվում եմ աստծով, մի սառեցրեք նրանց։ Ես կցանկանայի, որ նա, ով իր կյանքը վտանգի*

www.a-pdf.com

է ենթարկում հանուն իր երկրի ազատության, կարող կլինի համարձակորեն ասածուն ապավինել իր խղճի ազատությունը, իսկ ձեզ՝ այն ազատությունը, որի համար նա մարտնչում է»:

Լոնդոնը ցնծում էր։ Պառլամենտի զույգ պալատները Սիթիում կազմակերպեցին ճոխ ճաշկերույթ, որից հետո բոլոր ներկաները հոտնկայս երգեցին սաղմոս։

Գումակի հետ մեկտեղ պառլամենտական բանակի ձեռքն էր ընկել թագավորական գրասենյակը, որ լքել փախել էին պահնորդները։ Արքայի ողջ գրագրությունը, այդ թվում և նրա «ֆրանսիական առանձնասենյակը», այդ անգին փաստաթղթերը, որտեղ թագավորը սևով սպիտակի վրա հայտարարում էր իր պատրաստականությունը և ցանկությունը փողով, զենքով և զորքով օգնություն ստանալու ընդդեմ սեփական ժողովրդի, այժմ դառնում էին ընդհանուրի սեփականությունը։ Այն սկզբում բարձրաձայն կարդացին համայնքների պալատում, այնուհետև Սիթիում՝ Լոնդոնի քաղաքացիների խառնամբոխի առջև։ Յուրաքանչյուր ցանկացող կարող էր մոտենալ և համոզվել դրանց իսկության մեջ՝ ձեռքը վերցնել, զննել ձեռագիրն ու կնիքները։

Աներևակայելի վրդովմունք էր տիրել քաղաքին։ Թագավորն ինքն է դուրս եկել դավաճան։ Պառլամենտի հետ բանակցություններ վարելով, նա միևնույն ժամանակ օգնության էր կոչում Լոթարինգիայի դքսին, ֆրանսիացիներին, դանիացիներին, նույնիսկ իռլանդացիներին։ Նա դրանց կոչ էր անում զենքը ձեռքներին ներխուժել Անգլիա։ Նա, բանից պարզվում է, երբեք էլ չի ուզեցել խաղաղություն, նրա և ոչ մի զիջումը չի եղել անկեղծ, իր ոչ մի խոստումը նա պատրաստ չի եղել կատարելու։ Նա հույս է դրել միայն ուժի վրա և միշտ ձգտել է կառավարել միահեծանորեն։

Արքայի գործը տանուլ էր տրված, թվում էր, մեկընդմիշտ։ Չուր էին լսվում առարկության ձայներ ընդդեմ «ընտանեկան գաղտնիքի» հրապարակման։ Պառլամենտը կարգադրեց հրատարակել այդ նամակները և տարածել ժողովրդի մեջ։ Դրանք շուտով էլ լույս տեսան սույն վերնագրի տակ. «Թագավորի բաց պայուսակը կամ մի քանի նամակներ և գաղտնի թղթեր, գրված արքայի ձեռքով և գրավված 1645 թվականի հունիսի 14-ին Նեսբիի մոտ տրված ճակատամարտի դաշտում, հաղթանակած սըր Թոմաս Ֆերֆաքսի կողմից, որոնցով մերկացվում են բազում պետական գաղտնիքներ, որոնք միանգամայն արդարացնում են այն գործը, հանուն որի սըր Թոմաս Ֆերֆաքսը ճակատամարտ տվեց սույն հիշարժան օրը. ծանոթագրություններով»։

Արևմուտքում, ուր փախել էր թագավորը, պատերազմն ընթանում էր կարճատև ընդհատումներով, Կրոմվելի և Ֆերֆաքսի հաջողություններով։ Մի տարում նրանք վերցրին ավելի քան հիսուն ռոյալիստական ամրոցներ, այդ թվում Բրիսթոլ կարևոր

www.a-pdf.com

հենակետը, որը կատաղի պաշտպանում էր Ռուփերտը։ 1646 թվականի հունիսի 24-ին ընկավ Օքսֆորդը՝ թագավորի գլխավոր կացարանը։ Կարլոսը, կտրելով մազերը և մորուքը ու ծառայի հագուստով ծպտված, երկու մերձավորների ուղեկցությամբ փախավ։ Չհամարձակվելով մտնել Լոնդոն, նա ուղևորվեց Հյուսիս և անձնատուր եղավ շոտլանդացիների ողորմածությանը։ Քաղաքացիական պատերազմը վերջացավ պառլամենտի լիակատար հաղթանակով, սպանծալի ու հզոր գեներալ Կրոմվելի հաղթանակով։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ V

ԴԱՎԱՃԱՆԸ

Թանկագի՛ն Կրոմվել։ Թող աստված բաց անի քո աչքերն ու սիրտը այն գայթակղության առաջ, որին մղել է քեզ համայնքների պալատը՝ ընծայելով քեզ տարեկան երկուսուկես հազար ֆունտ ստեռլինգ։ Դու մեծ մարդ ես, Կրոմվել, բայց եթե դու այսուհետև ևս պիտի հոգ տանես միայն քո ռեփական հանգստության մասին, եթե այսուհետև էլ պիտի արգելակես պառլամենտում մեր հանրագրերին ընթացք տալուն, ապա մեզ բոլորիս՝ կեղեքվածներիս ու ճնշվածներիս համար, ըստ ամենայնի քեզ ապավինածներիս համար փրկությունը գալու է ոչ ձեզանից, մետաքսյա ինդեպենդենտներից։ Հավաքիր քո վճռականությունը, գոչիր. «Եթե ես պիտի կործանվեմ, թո՛ղ լինի այդպես» և եկ մեզ հետ։ Իսկ եթե ոչ, ձեզ կմեղադրեմ ոտոր խաբեության մեջ, այն բանում, որ դու պրեսբիտերների բռնակալ ձեռքը գցեցիր մեզ, նրանց, ումից մենք կկարողանայինք մեզ պաշտպանել, եթե չլիներիր դու, օ՜ Կրոմվել։ Թող ուրեմն անիծվի այն օրը, երբ նրանց հաջողվեց գնել քեզ երկուսուկես հազարով։

Ջոն Լիլբեռն

Շոտլանդիայում գործերը վատ են։ Իբր դրանք լա՞վ են Անգլիայում։ Այստեղ մեզ մոտ լիքն են ամեն տեսակի հանցախմբերը, և դեռ ավելի վատերը։

Կրոմվել

1. ԱԳԻՏԱՏՈՐՆԵՐԸ

Վաղուց նրա հետ այդպիսի բան չէր եղել։ Չտեսնված հաղթանակների հաղթահանդեսից հետո, վերջին տարիների թեթև, բուռն խանդավառություններից հետո, ճակատամարտերի բերկրանքից և աստվածային ողորմածության հրաշափառ նշաններից հետո՝ դարձյալ խավարն ու հուսահատությունը, հիվանդությունները, կրկին մահվան սարսափը։

Պատերազմը վերջացել էր։ Եվ ինչպես ամեն տեսակի լարվածությունից, պոռթկումից հետո, ինքնամոռաց մորմոքումներից հետո, անխուսափելիորեն վրա է հասնում հատուցումը մեծ ուրախության դիմաց, այնպես էլ այժմ վրա էր հասել անկման ու սթափման դառն ժամանակները ոչ միայն Կրոմվելի հոգու և մարմնի մեջ, այլև հոգու և մարմնի մեջ ողջ ազգի։

Շոտլանդացիները 1646 թվականի դեկտեմբերին Կարլոսին ծախեցին անգլիական պառլամենտին չորս հարյուր հազար ֆունտ ստեռլինգով։ Դրանից հետո շոտլանդական բանակը քաշվեց գնաց։ Թագավորին, որին անխղճորեն վաճառել էին պառլամեն-

www.a-pdf.com

տէն, մեծ պատիվներով, թնդանոթների համազարկերի և զանգերի զողանջների տակ ընդունեցին անգլիական կոմիսարները և տեղավորեցին Հոլմբի ամրոցում՝ Անգլիայի հյուսիսում։ Նրա կողմնակիցները վայր էին դրել զենքը, դա ճիշտ է, բայց նրանք դեռևս շատ էին, շատ-շատ, իսկ գլխավորը՝ պառլամենտն ինքն էլ, ինչպես երևում էր, ուզում էր վերջապես համաձայնության գալ նրա հետ։

Թագավորի ցանկությունները անմիջապես կատարվում էին։ Նրան պահում էին պատշաճ պերճաշքությամբ, թույլատրել էին ունենալ մեծ շքախումբ։ Նրան լսում էին ծունկի եկած։ Ինքը Ֆերֆաքսը, Նեսբիի մոտ հաղթողը, համբուրում էր նրա ձեռքը։ Պալատի պրեսբիտերական մեծամասնությունն այժմ ամբողջությամբ նրա կողմն էր։ Այն բանից հետո, ինչ նրանք վերացրել էին իրենց վասալական կախվածությունը թագավորից՝ ասպետական կախումը, և հաստատել էին պրեսբիտերական եկեղեցական կառուցվածք, նրանք լիիրավ տերն ու տնօրենն էին երկրի։ Նրանք իրենք իրենց տալիս էին եկամտաբեր պաշտոններ, անամոթաբար հարստանում, կաշկանդված չլինելով այժմ ֆեոդալական կապանքներով։ Առանց միասլետի նրանք սակայն յոլա չէին գնում. արքայի վիրադարձը, դա վիրադարձն է կարգ ու կանոնի։

Կրոմվելը մի որոշ ժամանակ բոլորովին հեռացել էր պետական գործերից։ 1646 թվականի ամռանը նա ամբողջովին կլանված էր ընտանեկան հոգսերով։ Նա իր ավագ դստերը՝ Բրիջեթին, որը մի կրոնասեր ու վեհերոտ աղջիկ էր, կնության է տալիս մարտական ընկերոջը, իր համախոհին՝ Հենրի Այրթոնին։ Երեսուներկուամյա Այրթոնը՝ հասուն տղամարդը, խիզախ մարտիկը, հուսալի հենարան կդառնա դստեր համար։

Նրա եկամուտները նշանակալիորեն աճել էին. դեռևս անցյալ տարվա աշնանը պառլամենտը նրան պարգևեց տարեկան երկուսուկես հազար ֆունտ՝ «անխոնջ և հավատարիմ ծառայության» համար։ Ժամանակն էր մտածելու այն մասին, որպեսզի Եղիսաբեթին փոքրիկ երեխաների և նանի հետ Իլիից տեղափոխի Լոնդոն։ Աշնանը Կրոմվելը զբաղված է տեղափոխումով՝ նա այժմ բնակություն էր հաստատում Դրուրի-Լեյնում՝ Սիթիի և Վեսթմինսթերի միջև, «Կարմիր առյուծ» պանդոկից ոչ հեռու։

1647 թվականի վերջին նա հիվանդանում է։ Նրան տանջում է գլխացավը, և բժիշկները ուղուցք են հայտնաբերում, մի մեծ վահրակույտ՝ կյանքի համար վտանգավոր։ Մահվան մասին միտքը նորից այցելության է գալիս։ Նա համոզված է, որ հիվանդությունն անտեսանելի թելերով կապված է բարոյական տառապանքների հետ, իսկ դրանք գալիս են անկումայնությունից, անհուսալի ձախողումից այն մեծ ընդհանուր գործի, որի համար պատերազմ էր մղվում։

www.a-pdf.com

Կրոմվելը միապետությանը դեմ չէր։ Նա և մյուս ինդեպենդենտները ցանկանում էին միայն, որ նվաճված իրավունքները և ազատությունը երաշխավորեին, նրանք բարեփոխություններ էին ուզում։ Հարկավոր էր փոխել պառլամենտում ընտրության կարգը, որպեսզի միջին սքվայրները, ջենթրիները, նախաձեռնող վաճառականները զբաղեցնեին ավելի շատ տեղեր և կարողանային նկատելի ազդեցություն ունենալ քաղաքականության վրա։ Հարկավոր էր պրեսբիտերական ավագների ոտնձգություններից ապահովել խղճի ազատությունը, խոսքի ազատությունը, հանրագրերի ազատությունը՝ յուրաքանչյուր անգլիացու անկապտելի իրավունքը, որ գրված է դեռևս ազատությունների Մեծ խարտիայում։ Այդ պայմանների հիման վրա և՛ նա, և՛ Վենը, և՛ Գեղբրիգը համաձայն էին արքային վերադարձնել Ուայթհոլ։

Բայց նրանց ճամբարում հնչում էին նաև այլ ձայներ, ավելի համարձակ, ավելի անհանգստացնող։ Դրանք հնչում էին ներքևից, ժողովրդի միջից։ Մանր արհեստավորները, առևտրականները, գյուղացիները, որոնց համար պատերազմը իսկական աղետ էր եղել, պահանջում էին վճռական բարեփոխումներ։ Պառլամենտական ինդեպենդենտները նրանց համար արդեն դարձել էին մեծամեծներ, մետաքսյա պարոններ։

Ժողովրդի դրությունն իսկապես դժնդակ էր։ Պատերազմը առաջ էր բերել ավերածություն, առևտուրը դադարել էր, հաղորդակցությունը կոմսությունների միջև խախտվել։ Թշնամական բանակները, կռվելով, ոտքի տակ էին տվել ցանքսերը, կերել էին և՛ մարդկանց, և՛ անասունների ամբողջ պաշենամթերքը, խլել էին ձիերը։ Սնունդը թանկացել էր, իսկ արհեստավորների արտադրանքները գնորդ չէին գտնում։ Պատերազմը վերջացել էր՝ ռազմները շարունակվում էին։ Ակցիզների կողմից անխնա հարկեր էին դրված առաջին անհրաժեշտության ապրանքների վրա՝ միս, յուղ, աղ, գարեջուր, գործվածքեղեն, ածուխ։ Բանակը վիթխարի ծանրությամբ նստել էր ժողովրդի ուսերին։ Լորդերը անամոթաբար տնօրինություն էին անում կալվածքներում, հողից քշելով ամբողջ գյուղեր և ցանկապատելով դաշտերն իրենց ոչխարների համար։ Պրեսբիտերական ավագները եպիսկոպոսների պես եկեղեցական տասանորդ էին պահանջում։

Ժողովրդի դժգոհությունն ընդունել էր սպառնալի չափեր։ Կրոմվելը դրա հետ շփվել էր դեռևս պատերազմի ժամանակ, երբ զինված գյուղացիների մի խումբ «մահակավորներ» հարձակվեցին նրա ջոկատների վրա, ինչպես, ասենք, ռոյալիստների ջոկատների վրա։ Նա հասկանում էր, որ դրանք աղքատ, խավար մարդիկ են, հուսահատության հասած, և խիստ չէր նրանց նկատմամբ, թեպետև պաշտպանվում էր, երբ անհրաժեշտություն էր առաջանում։

Այժմ հասարակ ամբոխը խնդրագիր-խնդրագրի ետևից էր տալիս պառլամենտներին։ «Մենք հավատալով ձեր անկեղծու-

www.a-pdf.com

թյանը,— գրում էին նրանք,— ձեզ ընտրեցինք որպես մեր հավատարմատարի և պաշտպանի, մենք ձեզ վստահեցինք խաղաղությունը... ձեր տրամադրության տակ դրինք մեր ունեցվածքը, իսկ դուք կողոպտեցիք ու սնանկացրիք մեզ։ Մենք ձեզ վստահեցինք մեր ազատությունը, իսկ դուք ստրկացրիք ու ճորտացրիք մեզ։ Մենք ձեզ վստահեցինք մեր կյանքը, իսկ դուք մեզ սպանում եք և խոշտանգում ամեն օր...»։ «Իսկապես,— մտածում էր Կրոմվելը,— Անգլիայում գործերը վատթարից վատթար են, բազում հանցախմբեր ծվատում են երկիրը, և աստված գիտի, ինչով կվերջանա այդ բոլորը...»։ Ընդհանուր գործի վախճանը և սեփական վախճանը նրա համար ի մի էին հանգում։ Մահվան դատավճիռը, թվում էր, կարդացված է։

Ապաքինումը ծանր հիվանդությունից ընթանում էր դանդաղ։ Բայց ոգին արդեն կայտառությամբ էր համակվել։ Դեռևս թույլ ձեռքով սեղմելով գրիչը, նա գրում էր Ֆերֆաքսին. «Եվ ես լիակատար վստահությամբ խոստովանում եմ, որ տեր աստված իր այցելությամբ ի հայտ բերեց իր հոր զորությունը: Ես իմ մեջ գիտակցեցի մահվան դատավճիռը, որպեսզի սովորեմ հավատալ նրան, ով հարություն է տալիս մահվանից, որպեսզի շապավինեմ մարմնին իմ...»:

Մի անգամ, զբոսնելով Վեսթմինսթերի պարտեզներում, քայլելով ասես ուրիշի բամբակե ոտներով, նա հանդիպեց Լեդլոյին։ Ռանդուն, խելացի երեսնամյա էդմունդ Լեդլոն, որ աչքի էր ընկել պառլամենտի կազմում մղած մարտերում և անցյալ տարի ընտրվել էր պառլամենտի անդամ, Օլիվերի համար համակրելի անձ էր։ Օլիվերը չգիտես ինչու կուզենար բաց անել սիրտը. նա գիտեր լսել մարդկանց, կարողանում էր ուշագիր նայել զրուցակցի երեսին։ Նա անմիջապես նկատեց, որ Կրոմվելը ինչ-որ բանից ընկճված է, և հարցրեց պատճառը։

Նրանք շուտ եկան կողքի ծառուղին, շտապելու բան չունեին, և Կրոմվելը հայտնեց նրան իր ամենանվիրական գաղտնիքը։ Քաջարի խաչակիրները, փառավոր արշավանք կատարելով տիրոջ գործի համար, դարձել են այժմ ագահ գամփռների ոհմակ, որոնք գզվռտվում են մի կտոր մսի համար։ Ինչքան հասարակ ու լավ էր բանակում։ Ինչքան լավ էր այն օրերին, երբ պատերազմը դեռ չէր սկսվել և պառլամենտի անդամները միասնական էին... Նա հիշեցրեց էդմունդի հորը, սքվայր Հենրի Լեդլոյին, մտաբերեց նրա խոսքերի անսահման համարձակությունը։ 1642 թվականի մայիսին սփիքերը նրան նկատողություն արեց այն բանի համար, որ նա ասել էր, թե իբր թագավորը անարժան է իր կոչմանը։

— Եթե քո հայրն այժմ կենդանի լիներ,— ասաց Կրոմվելը,— կստիպեր նրանց լսել, թե ինչի են արժանի իրենք։ Չէ՞ որ խելոք ճուկներն արժեն ծառայելու այդպիսի պառլամենտին։ Թեկուզ

www.a-pdf.com

դու հավատարիմ ես եղել նրան ավելի քան որևէ մեկը, բայց եթե մի ոմն հաստատուն այնտեղ վեր կենա և սևացնի քեզ, դու էլ մաքրվողը չես։ Այդպես չէ գործը բանակում. եթե դու հավատարիմ ծառայում ես քո զորավարին, դու պատսպարված ես ամեն տեսակ զրպարտանքներից, ամեն տեսակ նախանձից։

Խեղճ բանակ։ Պառլամենտում նրան այնքան էին ատում, ասես նա լիներ ամեն մի անբարեկարգության պատճառը թագավորության մեջ։ Նրան հրամայել են մոտենալ մայրաքաղաքին 25 մղոնից ոչ ավելի։

Զինվորները դժգոհ էին։ Նրանց տրտունջները աճում էին, սպառնալի չափեր ընդունում։ Ճակատամարտերում կոփված, քաղաքական փորձով իմաստնացած, արդեն մտածելու ունակ «երկաթակողները» դարձել էին ահեղ ուժ։ Նրանց մասին ասում էին, թե նրանք դեմ են թագավորին և ամեն մի իշխանության, բացի ժողովրդականից։ Կարլոսին նրանք ուղղակի անվանում էին ունակալ և թշնամի։ Եթե նրանք իրենց զենքը շուռ տան պառլամենտի դեմ, սարսափելի է անգամ պատկերացնել, թե ինչ տեղի կունենա երկրում։

Պալատում դա հիանալի հասկանում էին։ Բանակի մասին արդեն վաղուց էին խոսում։ 1647 թ.-ական փետրվարի 18-ին որոշում ընդունեցին բանակն արձակել, թողնելով միայն տասը գնդ հետևակ և 6400 հեծյալ՝ կայազորային ծառայության համար։ Այդ ուժերի գլխավոր հրամանատար էր նշանակվում Ֆեռֆաքսը, իսկ նրանից բացի բանակում գեներալներ հասարակ չպետք է լինեին։ Ազատված զինվորների թվից ստեղծվում էր նոր բանակ՝ 12 հազար մարդուց բաղկացած, Իռլանդիա ուղարկվելու համար։ Բոլոր սպաները պարտավոր են ստանալ Կովենանտը, այսինքն նաև միավորվել պրեսբիտերական եկեղեցու հետ։ Պառլամենտի անդամ նրանք այլևս լինել չեն կարող։

Ի՞նչ ճարպկորեն էր այդ արված։ Մի շարժումով բոլոր գեներալ-ինդեպենդենտները՝ Կրոմվելը, Այրթոնը, Լամբերթը, բանակից հեռացվում էին։ Մյուս կետը՝ մի այլ հարված էր. Կրոմվելի բոլոր գնդապետներն ու կապիտանները, ինդեպենդենտական գնդի անդամները՝ Օքին, Պրայդը, Հարիսոնը, Հորթոնը՝ դեռ չեն քիչ են դրանք, նույնպես դուրս էին գցվում։ Կույրի համար էլ տեսանելի էր, որ նրանք ոչ մի Կովենանտ էլ չեն ստորագրի։ Իսկ բանակի սպաների մուտքը պառլամենտ, կամ պառլամենտի անդամ լինելը վճռականորեն արգելված էր։ Իսկ ով մի ակնարկարար էր, ով հանդգնում էր դժգոհություն արտահայտել, հեռացվում էր Իռլանդիա՝ որքան հնարավոր է հեռու Լոնդոնից։

Մտածված էր հոյակապ, բայց շղթայից մի օղակ պակասում էր։ Անկությունն ու կամքն իր՝ բանակի։ Դրանք այնպիսի զինվոր չէին, որ ոչխարի հոտի պես անմռունչ ենթարկվեին ավե-

www.a-pdf.com

ից» եկած ամեն մի հրամանի։ Նրանք կռվել էին սրբազան գործի համար և այժմ իրավունք ունեին պահանջել այն, ինչ իրենց հասնում էր։ Երբ մարտի 21-ին պառլամենտական կոմիսարները ներկայացան զորքին, որպեսզի քննարկեն արձակման և Իռլանդիա ուղարկվելիք ուժեր հավաքագրելու նախնական պայմանները, նրանց հանրագիր հանձնվեց։ Այն ստորագրել էին ինդեպենդենտ սպաներ, դրանց թվում Օքին, Պրայդը, Այրթոնը։ Նրանք պահանջում էին ռոճիկի անհապաղ վճարում, պատերազմի ընթացքում կատարած արարքների ներում, զինվորականների այրիների և որբերի ապահովում։ Նրանք պահանջում էին իրենց չհարկադրել կռիվ գնալ Իռլանդիա։

Դժվար էր Կրոմվելի համար այդ օրերին։ Նա հասկանում էր պառլամենտական վճիռների ողջ ստորությունն ու նենգավորությունը և հոգում հավանություն չէր տալիս դրանց։ Նա գիտակցում էր, որ բանակը միակ ուժն է, որն ընդունակ էր պաշտպանել այն գործը, որի համար իրենք պայքարել էին։ Բայց կարգապահությո՞ւնը։ Ինքը չէ՞ր, որ սովորեցնում էր իր զինվորներին անառարկելի հնազանդություն։ Ինքը չէ՞ր, որ անողոքաբար պատժում էր ինքնակամության, ցոփացածության դրսևորման բոլոր արտահայտությունները։ Եվ հետո գլխավորը և ամենից սարսափելին. եթե բանակը խռովություն բարձրացնի պառլամենտի դեմ, ի՞նչ կլինի երկրի վիճակը։ Նոր պատերա՞զմ։ Մինչև ե՞րբ։ Ինչի՞ կհասցնի դա։

Մարտի 22-ին Կրոմվելը համայնքների պալատում վեր կացավ տեղից, և, գիտակցելով իր խոսքերի ողջ նշանակությունը, հաղթանակած առաջնորդի և բանակի կուռքի իր խոսքերի ողջ նշանակությունը, ասաց.

— Ամենազոր աստծո ներկայությամբ, որի առաջ ես հիմա կանգնած եմ, վստահեցնում եմ ձեզ. բանակը կզորացրվի և զենքը ցած կդնի ձեր դռների առաջ, հենց որ դուք նրան հրամայեք։

Նա ձեռքը սրտին էր դրել, աչքերում արցունք կար, խոսում էր անկեղծ։ Նա այդ պահին հավատացած էր, որ այդպես էլ պետք է. հնազանդորեն ենթարկվել այդ հրամանին, որպեսզի կանխվի ավելի վատը՝ քաոսը, խռովությունը, գուցե և արյունահեղությունը։ Բայց սիրտը քարի պես ծանրացած էր. ի՞նչ էր նրան մնացել անել Անգլիայում։ Նրա զինվորների մի մասին քշել էին Իռլանդիա, նրա սեփական գունդը տվել էին մի այլ հրամանատարի։ Գուցե ավելի լավ է բոլորովին գնալ։ Ուղևորվել Գերմանիա՞, դիմել Ֆրիդրիխ Պֆալցացու օգնությա՞նը, որն ահա այդքան քանի տարի է բողոքական զինվորներին պատերազմի է տանում կաթոլիկների դեմ։ Ֆրիդրիխն ինքն էր նրան օգնության կանչում

Բայց իրադարձություններն Անգլիայում ժամանակ չէին տալիս ուշքի գալու։ Իմանալով բանակը արձակելու մասին որոշումը, զինվորներն ու կրտսեր սպաները հնազանդությունից

www.a-pdf.com

դուրս եկան։ Նրանց մեջ հայտնվեցին ագիտատորներ՝ ամենից խիզախները, անզիջում տրամադրվածները։ Նրանք իրենց ետևից տանում էին ամբողջ մասսան։ Զորքերի մեջ միտինգներ սկսվեցին։ «Արձակեցեք բոլորին՝ կամ ոչ ոքի»։ Յուրաքանչյուր գնդից երկուական ընտրեցին ագիտատոր և սրանք զինվորների շահերը պաշտպանող խորհուրդներ կազմեցին։

Նրանք արագ ընդհանուր լեզու գտան Լոնդոնի արհեստավորների, ենթավարպետների. քարոզիչների հետ։ Դեռևս քառասունհինգ թվականին Լոնդոնում հայտնվել էին մի քանի պամֆլետիստներ, որոնք սկսել էին դրել ժողովրդի ազատության և իրավունքների մասին։ Հատկապես աչքի էր ընկնում Ջոն Լիլբեռնը, անցյալում արհեստանոցային ենթավարպետ, այնուհետև բանակի սպա, այն նույն Ջոն Լիլբեռնը, որին անարգանքի սյունին էին գամել դեռևս 1638 թվականին՝ անլեգալ պուրիտանական գրականություն տարածելու համար։ Այդ նրա համար էր պառլամենտի առաջ բաբեխոսել Կրոմվելը։ Այժմ Լիլբեռնի խելահեղ, գրեթե սկանդալային գրվածքները մեծ հաջողություն էին վայելում։ «Ազատածին անգլիացի» էր կոչում նա իրեն։ Նա ապացուցում էր, որ գերագույն իշխանությունը երկրում հանդիսանում է ոչ թե թագավորը, ոչ թե լորդերը, այլ համայնքների պալատը, որն իր իրավունքներն ստացել է ժողովրդից։ Ժողովուրդն էլ գերագույն ինքնիշխան է երկրում և իրավունք ունի փոխելու անպետք տիրակալներին։ Պառլամենտը պարտավոր է անել ոչ այն, ինչ ինքը ուզում է, այլ այն, ինչ օգտակար է ժողովրդի բարօրության համար։ Նա հայտարարում էր, որ բոլոր մարդիկ ի բնե հավասար են և ոչ ոք չունի որևէ առավելություն կամ իշխանություն մյուսների նկատմամբ։ «Ազատությունը,— գրում էր նա,— այն միակ գանձն է, որ արժանի է, որպեսզի մարդիկ իրենց ենթարկեն անլուր վտանգների, պահեն և պաշտպանեն այն ամեն տեսակի բռնակալությունից և կեղեքումից, որտեղից էլ որ դրանք ծագեն»։

Լիլբեռնին արձագանքում էին մյուսները. Օվերթոնը, Ուոլվինը, Ուայլդմանը։ Նրանք դիմում էին համայնքների պալատին և հանդգնում թելադրել դրան իրենց կամքը։ «Մենք ձեզ ընտրել ենք պառլամենտի անդամ,— գրում էին նրանք,— ժողովրդին ամեն մի ստրկությունից ազատելու և պետությունը խաղաղության և երջանկության մեջ պահելու համար... Դրա համար մենք ձեզ օժտեցինք մեր իշխանությամբ... Մենք ձեր տերերն ենք, իսկ դուք մեր վստահված անձերը»։ Իհարկե, նրանք բոլորը միահամուռ մերժում էին իշխանության նկատմամբ լորդերի իրավունքը. չէ՞ որ դրանք ժողովրդի կողմից ընտրված չեն, այլ նիստ են դումարում վերին պալատում իրենց ծննդյան իրավունքով։ Ինչոր մեկը հանդգնել էր այն աստիճան, որ պահանջում էր դատապարտել Կարլոսին և ոչնչացնել միապետությունը։ «Մենք սպասում ենք,— գրում էր Օվերթոնը համայնքների պալատի անդամ-

www.a-pdf.com

ներին,— որ դուք առաջին հերթին ողջ աշխարհի առաջ կբացահայտեք թագավոր Կարլոսի անբարոյականությունը, ու դրանից բացի, ցույց կտաք թագավորական իշխանության անտանելի ծանրությունը, հանցագործությունն ու բռնությունը... Մենք սպասում ենք նաև, որ դուք Կարլոս արքային կհայտարարեք թշնամի և կհրատարակեք ձեր որոշումը՝ այլևս չունենալ թագավորական իշխանություններ...»։

Բանակի հետ այդ մարդկանց միավորման մեջ Կրոմվելը տեսնում էր սարսափելի վտանգ՝ ուղղված երկրում կարգուկանոնի դեմ։ Ագիտատորները բանակում կապվում էին հյուսիսային և հարավային մասերի հետ, նրանք պաշտոնանկ էին անում և հսկողության տակ պահում իրենց հետ չհամաձայնող սպաներին, պառլամենտ էին ներկայացնում սկանդալային հանրագրեր, անընդհատ խռովում էին զինվորներին։ Նրանց թևերին հայտնվում էին ալ ժապավեններ՝ ի նշան այն բանի, որ իրենք պատրաստ են արյունով պաշտպանել իրենց ազատությունը։ Եվ ոչ միայն իրենցը, այլև ամբողջ ժողովրդի ազատությունը։ «Մենք վայր չենք դնի զենքը, մինչև այն ժամանակ,— ասվում էր նրանց հանրագրերից մեկում,— քանի դեռ ժողովրդի իրավունքն և ազատությունը չեն պաշտպանվի և հաստատվի»։ Մայիսին նրանք գրել էին գեներալ Ֆերֆաքսին. «Մենք անցել ենք պատերազմների բոլոր տեսակ դժվարությունների ու վտանգների միջով, հանուն նրա, որպեսզի ազատության շռայլ պտուղներ նվաճենք ժողովրդի համար և անձամբ մեզ համար... Բայց դրա տեղը, ի մեծ վիշտ ու կսկիծ մեր սրտերի, մենք տեսնում ենք, որ ճնշումն այժմ նույնքան մեծ է, ինչպես և առաջներում»։

Հարկ կա՞ ասելու, թե ինչպիսի ատելությամբ էին վերաբերվում պառլամենտական պրեսբիտերներն այդպիսի ճառերի և գործողությունների նկատմամբ։ Ապրիլի 28-ից հետո նրանք որոշում մտցրին զինվորական հանրագրերը արգելելու մասին։ Երեք զինվորներ, որոնք պառլամենտին հանձնեցին հերթական խնդրագրերը, կանչվեցին վանդակապատի մոտ։

Նրանց դեմքերն արտահայտում էին հաստատակամություն և համոզվածություն իրենց իրավացիության նկատմամբ։

— Որտե՞ղ է շարադրվել այս նամակը,— հարցրեց սփիքերը նրանց։

— Գնդերի ընդհանուր ժողովում։

— Ո՞վ է այն գրել։

— Յուրաքանչյուր գնդից ընտրվածները։

— Իսկ ձեր սպանե՞րը։ Նրանք հավանություն տվե՞լ են խնդրագրին։

— Դրա մասին միայն քչերը գիտեն։

— Իսկ գիտե՞ք, որ միայն ռոյալիստները կարող էին թույլ

www.a-pdf.com

տալ իրենց այդպիսի վարմունք։ Դուք ինքներդ երբևէ չե՞ք պատկանել կավալերներին։

— Մենք պառլամենտական բանակ ենք մտել դեռևս մինչև էջհիլը և այն ժամանակվանից դեռ այնտեղ ենք։

— Իսկ ի՞նչ է նշանակում ձեր խնդրագրի այն տեղը, ուր դուք խոսում եք ինչ-որ նոր բռնակալների մասին։

— Մենք ընդամենը միայն մեր գնդերից ընտրված դեպուտատներ ենք։ Եթե պալատին հարմար կլինի անել գրավոր հարցումներ, մենք այն կհասցնենք գնդերին և կբերենք դրանց պատասխանները։

Ի՜նչ խելացի, խիզախ, աներկյուղ էին նրանք։ Դժոխային մի աղմուկ բարձրացավ պալատում, սպառնալիքներ, հայհոյանքներ էին տեղում։ Կրոմվելը թեքվեց դեպի Լեդլոն.

— Այս ժողովուրդը խելքի չի գա, քանի դեռ բանակը չի բռնի նրա ականջներից և դուրս չի նետի պա, տից։

Լեդլոն համակրում էր հերոսներին և ոչինչ չասաց։

Մայիսին Կրոմվելը գեներալներ Այրթոնի, Սքիփոնի, Ֆլիթվուդի հետ գնում էր բանակ։ Անհրաժեշտ էր շուտափույթ պայմանավորվել, այլապես աղետից չես փրկվի։ Խորհրդակցությունը տեղի էր ունենում հին եկեղեցում, Սաֆրոն Ուոլդեն կոչված փոքրիկ գյուղում, այն ղեկավարում է Սքիփոնը, կողքին նստած է Կրոմվելը։ Այստեղ են ապստամբ սպաներ, մոտ երկու հարյուր հոգի։ Ձայները քանի գնում բարձրանում են, վերածվում գոռոցների, բոլորը բորբոքված են։ Սքիփոնը ստիպված է լինում անընդհատ կարգի հրավիրել ամենից տաքացածներին՝ մերթ Լամբերթին, մերթ Ուոլիին կոչ անելով չափավորության. «Դե մինչև վերջ լսեք միմյանց, պարոննե՛ր»։

Բանակայինները պահանջում են ռոճիկների վճարում, մարտյան խնդրագրերի քննարկում, իրենց դիմումները հրապարակելու թույլտվություն։ Առայժմ այս պահանջների մեջ չկա վտանգավոր որևէ բան, բայց դրանց տոնը կտրուկ է, անհանդուրժող։ Կրոմվելը ոտքի է կանգնում։ Նա խոստանում է, որ կհասնի պառլամենտից երկու շաբաթվա համար վճարման։ Բայց սպաները պետք է հասկանան, որ իրենք կանգնած են զորքի գլուխ և օրինակ են տալիս զինվորներին։ Նրանք պետք է հասկանան, որ հենց պառլամենտն է նրանց օժտել լիազորություններով, և համոզեն զինվորներին ըստ ամենայնի պաշտպան կանգնել գերագույն իշխանությանը։ «Եթե իշխանությունն ընկնի,— ասում է նա,— դրանից ոչ մի բան դուրս չի գա, բացի անկարգությունից»։ Նա դեռևս հավատում է, որ պառլամենտը, չնայած պրեսբիտերների ազդեցությանը համայնքների պալատում, երկրում կարգուկանոնի ճշմարիտ պահապանն է։ Հարկավոր է ինչ գնով էլ լինի նրան հաշտեցնել բանակի հետ։

www.a-pdf.com

Բայց պրեսբիտերները հաշտվել չէին ուզում։ Հաշտվել՝ նշանակում է զիջումներ անել, իսկ զինվորների պահանջներին զիջում՝ նշանակում է սպառնալիքի տակ դնել սեփական իշխանությունն ու բարեկեցությունը։ Բանակը ոչ մի կերպ նրանց թույլ չի տա վերադարձնել Կարլոսին, իսկ նրանք այժմ հենց դրան էին ձգտում։ Եվ, խախտելով Կրոմվելին ու գեներալներին տված խոստումները, չբավարարելով զինվորների պահանջներից և ոչ մեկը, պրեսբիտերները անհապաղ վճիռ կայացրին, որ Հունիսի մեկից սկսեն բանակի արձակումը մաս առ մաս, որպեսզի խուսափեն խռովությունից։

Դա արդեն դավաճանություն էր ու կողոպուտ։ Օվերթոնը հերթական իր պամֆլետում հայտարարեց, որ բանակի արձակումը «մի խումբ խաբեբաների, դավաճանների և ստախոսների» ձեռքի գործն է։ Մայիսի 29-ին ագիտատորները Ֆերֆաքսին ուղղված իրենց դիմումի մեջ պաշտոնապես հրաժարվեցին ենթարկվել հրամանին։ Լիլբեռնը հավանություն տվեց բանակի որոշմանը և պառլամենտի իշխանությունն անվանեց անարդար ու բռնակալական։ Հունիսի 1-ին գնդերից մեկի զինվորները մոտեցան սպաներին, որոնք բերում էին բանակն արձակելու մասին հրամանը, և գոչեցին. «Ահա գալիս են մեր թշնամիները»։ Նրանք գրավեցին զենքը, բաց արեցին հանդերձանքով լի նկուղները և լքեցին իրենց ճամբարը, որ տեղավորված էր հարևան գյուղում։ Բանակը համընդհանուր համագումար նշանակեց Նյումարքեթում։

Ի՞նչ պետք է աներ հրամանատարությունը։ Ոչ միայն Կրոմվելը, այլև Այրթոնը, և՛ ինքը Ֆերֆաքսը, և՛ մյուս հեռատես գեներալները պետք է ընտրեին՝ կամ ենթարկվել պառլամենտի իշխանությանը և կապերը խզել մոլեգնած բանակի հետ, որը կոչնչացներ իրենց,— դրանում տարակույս չէր կարող լինել,— կամ կանգնել խռովարարների կողմում։ Ընտրությունը հեշտ չէր։ Եվ, ով գիտե, ինչ ուղի պիտի ընտրեին նրանք, եթե չգար շոտլանդացիների հետ պրեսբիտերների բանակցությունների մասին լուրը։ Վրդովմունքով Կրոմվելն իմացավ, որ լոնդոնյան միլիցիան պատրաստվում է պայքարելու բանակի դեմ, որ պրեսբիտերները գաղտնի բանակցություններ են վարում թագավորի հետ. սա պետք է կանգներ ռոյալիստների միացյալ ուժերի գլուխ և իրեն վերադարձներ գահը։

Այժմ արքայի անձնավորությունը հանկարծ ձեռք էր բերել անհավատալիորեն կարևոր նշանակություն։ Ընդամենը մի տարի առաջ և՛ ինդեպենդենտները, և՛ պրեսբիտերները համերաշխ մարտնչում էին նրա դեմ։ Իսկ այժմ, ինչպես խոստովանեց Ֆերֆաքսը. «Նա դարձել է ոսկե գնդակ՝ նետված երկու կուսակցությունների միջև։ Ո՞վ առաջինը կբռնի այդ գնդակը։ Երբեմն Կրոմվելի մտքով անցնում էր, որ եթե Կարլոսը համաձայներ ժողովրդին խղճի ազատություն շնորհել և երաշխավորեր իրեն՝ Կրոմվելին, անձնական անվտանգություն, այն ժամանակ բա-

www.a-pdf.com

նակը կարող էր նրան վերադարձնել գահին և մեկընդմիշտ տարանջատել պրեսբիտերներից...

Եղիսաբեթը, ինչպես միշտ, լուռ էր, բայց զարմանքն ու տագնապը ավելի ու ավելի էր պատում նրան։ Այն օրվանից ի վեր, ինչ նրանք եկել էին այստեղ՝ Լոնդոն, նա հանգիստ չուներ։ Դրուրի-Լեյնում Օլիվերին միշտ ինչ-որ մարդիկ այցի էին գալիս, նրանք նստում էին մինչև ուշ գիշեր և մի գլուխ ինչ-որ բան էին քննարկում, տաքացած, խլացած ձայներով։ Եղիսաբեթը նրանց համար, ինչպես միշտ, հաց էր բերում, կարագ, մի քիչ տնական գարեջուր և լսում էր ֆրազների պատառիկներ. «Թագավորին կրկին կհանձնեն շոտլանդացիներին...», «Եթե նրանց չխանգարեն...», «Եթե կավալերներն ու պրեսբիտերները պայմանավորվեն շոտլանդացիների հետ...», «Առայժմ մենք ունենք զինվորներ...»։

Երբեմն նրան համակում էր սոսկումը. Օլիվերը ներքաշված է ինչ-որ դավադրության մեջ, և այդ դավադրությունը Թագավորի դեմ է։ Այնուհետև երեխաների մասին հոգսերը, տնտեսուհու առօրյա հոգսերը շեղում էին նրան, և նա մի փոքր հանդարտվում էր։ Օլիվերը, ինչպես միշտ, նրա հետ քնքուշ էր վարվում, նրա հիվանդությունները, որոնցից կինն ամենից ավելի էր սարսափում, տեղի էին տվել։ Երբ կինը նրա վրա էր բարձրացնում աղերսալի ու տագնապալի աչքերը, նա խոսում էր անհասկանալի, բայց հանգստացնող տոնով.

— Ոչինչ, ոչինչ, կսպասե՞նք... Աստված ինքը կառաջնորդի մեզ...

Արեգակը, իջնելով անտառի ետևը, ոսկեզօծել էր քմածին բանդակաղարդերը, որ ծեփված էին ամրոցի քիվերին, ցոլցլում էր ձեղնահարկի պատուհանին, վարդագույնով էր ներկել տանիքի վրայի ծխնելույզները։ Կարլոսը երեկոյան զբոսանքից հետո վերադարձել էր իր բնակարանը։ Ծառաները հոգում էին ընթրիքը, պահապանները հսկում էին անկյունային աշտարակների վրա։

Բլուրների ետևից անակնկալ լսվեց շեփորի կտրուկ մի ձայն և հարյուրավոր սմբակների դոփյունը ցնցեց գետինը։ Պահապանները իրար երեսի նայեցին։ Նրանց հրամայված էր պահպանել Թագավորի անձը, որն այն ժամանակվանից ի վեր, ինչ շոտլանդացիները հանձնել էին նրան պառլամենտին, ապրում էր [illegible] տեղ, հյուսիսում, Հոլմրի ամրոցում։ Նրանցից անբաժան այս[illegible] էին պրեսբիտերական կոմիսարները։ Կայազորի հրամա[illegible]ատարն էր գնդապետ Գրենվիլը։

Սմբակների դոփյունը մոտենում էր։ Շուտով ճանապարհի վրա երևաց հեծյալների աղաջապահ ջոկատը։ Նրանք մոտեցան [illegible]ապաններին։

www.a-pdf.com

— Ո՞վ է գալիս,— ձայն տվին աշտարակից։

Պատասխան չեկավ։ Երեկոյան մշուշի մեջ հայտնվում էին հեծյալների նորանոր շարքեր։

— Հե՜յ, ո՞վ է ձեր գլխավորը,— զգուշավոր գոչեցին աշտարակից։

— Բոլորս էլ գլխավոր ենք,— ձայնը ոչ մի լավ բան չէր խոստանում։ Բանակային կոռնետի փոշեկոլոլ համազգեստով մեկը առաջ եկավ ու բղավեց.

— Իմ անունը Ջոյս է, ինձ հետ են հինգ հաղորդյակ դրագուն։ Ինձ հրամայված է ձերբակալել գնդապետ Գրեյվզին։ Դավադրություն է բացված. թագավորի անձը ուզել են փախցնել և տանել Լոնդոն։ Ինձ հարկավոր է շուտափույթ տեսնել նորին մեծությանը։

Աշտարակի վրա երկմտում էին, լսվեցին փսփսոցներ։ Ապա հարցրին.

— Ո՞ւմ հրամանով եք դուք ուղարկվել։

— Բանակի հրամանով,— եղավ պատասխանը։

Մինչ այդ շարունակ հեծյալներ էին ավելանում։ Նրանք խիտ զանգվածով խոնվեցին դարպասի առաջ, սկսել էին ձգվել պատերի երկայնքով, շրջապատելով ամրոցը։ Արագ մթնում էր։

Աղմկել սկսեցին շղթաները, ճռճռացին անիվները, և կամուրջը, որ արդեն բարձրացած էր գիշերվա համար, սկսեց իջնել։ Առաջապահ ջոկատը, որին գլխավորում էր Ջոյսը, բակ մտավ։

Երբ Ջոյսը ցանկացավ տեսնել բերդակալին, պարզվեց, որ սա անհետացել է։ Պահապանները, իրենց ավելի ազատ զգալով, շրջապատեցին եկածներին, շտապելով իմանալ վերջին նորությունները։ Ինչ-որ մեկը ծանոթի հանդիպեց։ Լսվեցին ողջույնի բացականչություններ։ Պառլամենտական կոմիսարներին խնդրեցին գնալ իրենց սենյակները, դռների առաջ կանգնեցին պահապանները։

Ջոյսը և էլի մի քանի հոգի, ատրճանակները պատրաստ պահած, մտան տուն և վախվորած սենեկապապավորներին հրամայեցին իրենց տանել նորին մեծության մոտ։ Նրանց երկար միջանցքներով տարան երկրորդ հարկ, դեպի ննջասրահ։ Խթանների զնգոցը թաղվում էր փափուկ գորգերի մեջ. կոշիկները փոշոտ հետք էին թողնում։

Թագավորին արդեն զեկուցել էին պատահածի մասին և այն մասին, որ Գրեյվզը փախել է։ Նա, կիսահագնված, անկողնուց վեր կացավ և հրամայեց ընդունել կոռնետին։ Նա ներս եկավ առաջվա պես ատրճանակը ձեռքում սեղմած։

— Ի՞նչ իշխանությամբ եք դուք ներխուժում ինձ մոտ, այդ գիշերային ժամին,— հարցրեց արքան։— Ի՞նչ իշխանությամբ եք դուք պահանջում, որ ես, օրինական միապետս, ենթարկվեմ ձեր հրամաններին։

www.a-pdf.com

Ջոյսը ցույց տվեց իր ատրճանակը։

— Բանակի իշխանությամբ,— դարձյալ կրկնեց նա։

Զինվորներն արդեն ամեն մեկը մի կերպ փռվել էր գորգերին ու ծղոտով լցված դմբիկներին, որ ճարել էին պահեստանոցից, իսկ Ջոյսը դեռևս ոտքի վրա էր։ Նրա ինքնավստահությունից հետք անգամ չէր մնացել։ Թագավորին նա բռնել էր, այդ այդպես է, բայց թե ի՞նչ պիտի աներ այնուհետև, նա ճշգրիտ հրահանգներ այդ մասին չուներ։

Նա վերցրեց մի կտոր թուղթ, թաթախեց գրիչը և գրեց.

«Գեներալ Օլիվեր Կրոմվելին։

Նրա բացակայության դեպքում՝ սըր Արթուր Գեզլրիգին կամ գեներալ Ֆլիթվուդին։

Սը՛ր, մենք կալանել ենք թագավորին, Գրեյվզը փախավ... Շտապեցեք պատասխանել մեզ, ասեք, ինչ անենք մենք այժմ։ Մենք որոշել ենք չենթարկվել որևէ մեկի հրամանին, բացի գեներալ Ֆերֆաքսից։ Քանի դեռ մենք այստեղ ենք, կհետևենք պառլամենտական կոմիսարների ցուցումներին, եթե դրանք խելամիտ համարենք... Աղաչում եմ ձեզ, որքան հնարավոր է արագ քննարկեք այդ հարցը և որոշեք, թե ինչպես վարվենք այսուհետև. ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը մենք հանգիստ չենք ունենա, մինչև ձեզնից լուր չառնենք...»։

Լուսաբացին բոլորն արդեն ոտքի վրա էին։ Կարլոսի դեմքը սովորականից ավելի գունատ էր թվում, երբ նա հագնված, ի միջի այլոց, ինչպես միշտ, խնամքով, դուրս եկավ ամրոցի առմուտքը։ Հեծյալներն արդեն քառանկյուն դասավորությամբ շարված էին նրա առաջ, երկու չորսական ձի լծված, պատրաստ էին ուղևորվելու։ Կոռնետ Ջոյսը առաջ եկավ հարգալիր, բայց արժանահավատությամբ լի խոնարհվելով։ Կարլոսը կրկին հարցրեց.

— Միստր Ջոյս։ Ասացե՛ք, ո՞վ է ձեզ լիազորել ներխուժել ինձ մոտ և տանել ինձ այստեղից։

— Բանակը, ձերդ մեծություն,— մի անգամ էլ կրկնեց Ջոյսը։— Այն բանակը, որը ցանկանում է նախազգուշացնել իր թշնամիներին և խանդարել նրանց առաջ բերելու նոր արյունահեղություններ։

— Բայց բանակը օրինական իշխանություն չէ։ Ես օրինական եմ ճանաչում միայն իմ ժառանգական իշխանությունը, իսկ դրանից հետո՝ պառլամենտի իշխանությունը։ Ասացեք ինձ, ո՞ւր են և ինչպիսի՞ք են ձեր լիազորությունները։

Ջոյսը նայեց հեծյալների շարասյան կողմը և, ձեռքի նշանակալից շարժումով ցույց տալով նրանց, ասաց.

— Ահա իմ լիազորությունները։

Քմծիծաղը աղավաղեց Կարլոսի նուրբ, հեշտալի շրթունքները։

— Այո՛, խոստովանում եմ, ինձ երբեք չի վիճակվել տեսնել լիազորություններ՝ գրված այդքան հստակ ձեռագրով։ Այդ սյուները հրաշալի են զինված և կտրիճ տղերք են երևում։ Մի-

www.a-pdf.com

այն թե խոստացեք, որ ինձ հետ կվերաբերվեն հարգալիր և չեն պահանջի ինձնից ոչինչ, որ հակառակ լիներ իմ խղճին կամ պատվին։

Խոստումը տրվեց, և տարօրինակ երթը, չգիտես կողոպտիչների՞, դավադիրների՞, թե՞ օրինական ու լիազորված իշխանավորների, շարժվեց դեպի հարավ, դեպի Նյումարքեթ՝ բանակի գլխավոր շտաբ։

Հետևյալ գիշերը, այդ իրադարձություններից հետո, մի ոմն գաղտնի հյուր այցի գնաց Դրուրի-Լեյնում գտնվող տանտիրոջ ննջասենյակը։ Նրանց խոսակցության բովանդակությունը մնաց գաղտնի։ Հայտնի է միայն, որ Կրոմվելն իր գիշերային այցելուից շատ կարևոր տեղեկություններ ստացավ։ Պրեսբիտերները դավադրության հոտն առել էին։ Կրոմվելի դեմ գործ է հարուցվում։ Հենց որ նա առավոտյան ներս մտնի համայնքների պալատը, նրան կձերբակալեն և կուղարկեն Թաուեր։

Սպասումի ժամանակը վերջացել էր։ Ընտրության հնարավորություն, որ միշտ տանջալից էր Կրոմվելի համար, արդեն, փառք աստծո, չէր մնացել։ Արագորեն հավաքելով իրերը, վախեցած, բայց խուճապի չենթարկվող Եղիսաբեթի օգնությամբ, Կրոմվելը արշալույսին, միայն ծառայի ուղեկցությամբ, մեկնում է Լոնդոնից։ Նախաճաշում է արդեն Ուերում, Հերթֆորդ կոմսությունում։ Այդ նույն օրը նա հասնում է բանակատեղի։

Բանակը փոթորկվում էր։ Հենց որ Կրոմվելը տեսավ զինվորների բորբոքված դեմքերը, ներշնչեց բերկրալի ազատության և իր նկատմամբ վստահության թարմ օդը, որոնցով շնչում էր բանակը, նա անմիջապես հասկացավ, որ մի փոքր էլ, և այն բոլորովին դուրս կգա հնազանդությունից։ Դրա շարժումը հարկավոր էր դնել օրինական և հանդարտ հունի մեջ և ամուր ձեռքերի մեջ առնել դրա ղեկը, այլապես ուշ կլիներ։ Նրա առաջին առաջարկությունն եղավ ստեղծել բանակի Համընդհանուր խորհուրդ։ Թեև արդեն յուրաքանչյուր գնդում առանց այդ էլ գործում են ագիտատորների խորհուրդներ, դրանց հարկավոր է միավորել և դնել սպաների հսկողության տակ։ Համընդհանուր խորհուրդը պետք է կազմվի հրամանատարներից. ինքը՝ Կրոմվելը, Այրթոնը, Ֆերֆաքսը և մյուս գեներալները կմտնեն դրա մեջ, սպայության ներկայացուցիչները, յուրաքանչյուր գնդից երկու հոգի, ագիտատորներից էլ՝ երկուական։ Որոշումները կկայացվեն միատեղ, լույսի պես պարզ է, որ մեծամասնությունը կստանան սպաներն ու հրամանատարությունը։ Միաժամանակ բանակը կմիավորվի, իսկ խորհուրդը կդառնա պառլամենտին լրջորեն հակակշռող ուժ։

Այդ առաջարկությունը դիմավորվեց հավանության բացականչություններով։ Բանակը հանդիսավոր պարտավորություն ընդունեց չցրվել, քանի դեռ նրա պահանջները չեն բավարարվի։

Պրեսբիտերները պառլամենտում պատասխանեցին հակահարվածով։ Նրանք ստեղծեցին Անվտանգության կոմիտե, որն

www.a-pdf.com

սկսեց վերակազմավորել լոնդոնյան միլիցիան, զինված ուժեր պատրաստել բանակի դեմ պայքարելու համար։ Հետախույզները լուր տարան, որ համայնքների պալատը կապվել է գեներալ Փոյնթզի հյուսիսային բանակի հետ, ցանկանալով այն ուղղել բանակի գլխավոր ուժերի դեմ։

Իմանալով այդ, զինվորները պահանջեցին արշավել Լոնդոնի վրա և հաշվեհարդար տեսնել դավաճան պրեսբիտերների հետ։ Նրանցից տասնմեկին, ամենից ջանադիրներին, նրանց, ովքեր մայիսին հանդես էին եկել բանակի անվերապահ մաս առ մաս արձակման օգտին, մեղադրեցին դավաճանության և նոր պատերազմի հրահրման մեջ։ Հունիսի 23-ին ագիտատորները հրապարակեցին «Նոր ռեմոնստրացիա», մի իսկական վերջնագիր պառլամենտին, որով պահանջում էին վերջ տալ զինված ուժեր հավաքելուն, վճարել զինվորների վարձը և դադարեցնել թագավորի հետ բանակցությունները։ Եթե բանակը երաշխիքներ չստանա, ասվում է ռեմոնստրացիայի մեջ, այն մասին, թե այն ամենը, ինչ ինքը պնդում է, կկատարվի, ապա ստիպված կլինի դիմել արտակարգ միջոցների։

Զինվորներն ուզում են գնալ Լոնդոնի վրա։ Կրոմվելը նորից է կարդում հանրագիրը, որով ագիտատորներն իրեն դիմել էին հուլիսի 16-ին։ «Այլևս անկարելի է դանդաղել,— գրում էին նրանք, — չի կարելի թշնամիներին հնարավորություն տալ ուժեր հավաքելու խռովությունների բորբոքման և դժբախտ թագավորությունը նոր, էլ ավելի արյունահեղ պատերազմի մեջ քաշելու համար։ Լոնդոնից բանակի հեռու գտնվելը թշնամի կուսակցություններին հնարավորություն է տալիս վիրավորել մեզ և մեր դեմ գործել... Քանի դեռ բանակը չի վերցրել մայրաքաղաքը, ոչինչ չի արվի ժողովրդի բարեկեցության և հենց իր՝ բանակի բարեկեցության համար...»։

Նա դարձյալ մտատանջությունների մեջ էր։ Գնա՞լ Լոնդոնի վրա ինքնակամ։ Կատարել նոր անօրինականությո՞ւն, հաշվեհարդա՞ր տեսնել պառլամենտի հետ։ Ավելի լավ չէ՞, արդյոք, նախ պայմանավորվել թագավորի հետ, բարեպատեհություն է, որ նա գտնվում է բանակի ձեռքում, և շարժվել պրեսբիտերների դեմ, արդեն օրինական միապետի գլխավորությամբ։

Նա արդեն մի քանի խոսակցություններ ունեցել էր Կարլոսի հետ, պետք է խոստովանել, որ այդ խոսակցությունները բարենպաստ տպավորություն էին թողել։ Կրոմվելը արքային առաջին անգամ էր տեսնում մոտիկից։ Դա Չիլդերլիում էր, որտեղ Կարլոսը համաձայնեց ընդունել Ֆերֆաքսին և մյուս գեներալներին։ Ղեղեցկադեմ, պերճաշուք հագնված մի մարդ, ոչ բարձր հասակով, խնամքով հարդարված գանգուրներով և դեմքի սարբ-վսեմաշուք արտահայտությամբ նստած էր փարթամորեն կահավորված ընդունարանում։ Գեներալները ներս եկան, և նա համբուրելու մեկնեց իր ձեռքը։ Ֆերֆաքսը քայլ արեց առաջ, խոնարհ-

www.a-pdf.com

վեց, ակնածանքով վերցրեց նրա աջը և հպեց շրթունքներին։ Կրոմվելն ու Այրթոնը լուռ հակեցին գլուխները, բայց ձեռքը չհամբուրեցին։

Թագավորն իրեն պահում էր հարգալից և սիրալիր։ Նա համաձայնեց ուղեկցել բանակին, որը դանդաղ շարժվում էր դեպի Լոնդոն։ Բայց հրաժարվեց ընդունել որևէ որոշակի համաձայնություն։ Նա դեռևս իրեն զգում էր ազգի տիրակալ, նրա ճակատագրի օրինական տնօրենը։ Նա իր գլխավոր պարտականությունը տեսնում էր գահի շահերի պահպանման մեջ։

— Սը՛ր,— բացականչեց Այրթոնը,— դուք ցանկանում եք դատավոր լինել պառլամենտի և բանակի միջև։ Բայց դուք սխալվում եք, այդ բանա՛կը կլինի դատավոր ձերդ մեծության և պառլամենտի միջև։

Կարլոսը քաղաքավարի և սառը ժպտաց։ Բանակային սպաների փաստարկները նրա համար նշանակություն չունեին։

Այնժամ դիմեցին միջնորդների։ Ֆրանսիայից վերադարձավ թագուհու մոտիկներից սըր Ջոն Բերքլին և նրա օգնությամբ բանակցություններն աշխույժ ընթացան։ Կրոմվելը տաքացել էր. նա հանկարծ սկսել էր հավատալ հաջողությանը։ Սենթ-Ջոն էշարմիկը նույնիսկ կշտամբեց նրան, թե նա չափազանց եռանդուն է ձեռնամուխ եղել «արքայական գործին»։ Եվ ճիշտ որ, հուլիսի 4-ի խոսակցության միջոցին երկու կողմերին էլ արդեն թվում էր թե միանգամայն գոհ էին իրարից։ Կրոմվելը կազմակերպեց Կարլոսի հանդիպումն իր կրտսեր երեխաների հետ և խանդաղատանքով դիտում էր, թե ինչպես է այդ պատվարժան հայրը խաղում իր փոքրիկների հետ, որքան քնքշանք ու հոգատարություն է ցուցաբերում նրանց հանդեպ։ «Այո՛, սա ազնվագույն և ամենից բարեխիղճ մարդն է իր երեք թագավորությունների մեջ»,— շշնջաց նա Բերքլիին, սրբելով հայտնված արցունքները։ Դրանից ոչ շատ առաջ Բերքլին տեղեկացրել էր նրան, թե նորին մեծություն Հենրիետա-Մարիան ուզում է, որպեսզի արքան համաձայնի բանակի պահանջներին, որքանով նրան թույլ է տալիս պատիվն ու խիղճը։ Կրոմվելը ջերմորեն պատասխանեց, որ բանակը ցանկանում է սոսկ ենթարկվել նրան, որպես իր օրինական տիրակալի։

— Ոչ մի մարդ,— ասաց նա,— չի կարող հանգիստ վայելել իր կյանքն ու ունեցվածքը, քանի դեռ արքային չեն վերադարձվել նրա իրավունքները։

Նա իսկապես էլ այդպես էր մտածում։ Նոր ընդվզումները բանակում, մի քանի խոովարարների ցանկությունը՝ հիմնել ժողովրդական ղեկավարություն, առանց թագավորի և առանց լորդերի՝ հակառակ դարերով գոյություն ունեցող աշխարհիկ ու հոգևոր օրենքների, հակառակ հենց ազգային ոգու, սարսափեցնում էին նրան։ Այդքան դարեր երկրում գոյություն է ունեցել

www.a-pdf.com

միապետական ղեկավարություն՝ և հանկարծ ձեռքի մի շարժումով այն ոչնչացնե՞լ։

Բայց բանակն այլ կերպ էր մտածում։ Հուլիսի 16-ին, Կրոմվելին զինվորների կողմից խնդրագիր հանձնելու օրը, Ռիդինգում կայացավ զինվորական խորհուրդը։ Ագիտատորները հարձակվում էին։ Սեքսբին ահռելի կատաղությամբ գոռում էր, թե Լոնդոնի վրա արշավը անհրաժեշտ է, այլապես պրեսբիտերները կգավթեն իշխանությունը և ամեն ինչ կկործանվի։ Վոնդել տասնմեկ դավաճաններին պալատից։ Ազատել բանտից Ջոն Լիլբեռնին և ազատության համար պայքարող մյուս մարտիկներին։ Ագիտատորների որոշման նոր եզրակացությունը այսպիսին էր. «Մենք ոչնչի չենք հասնի, մինչև որ չշարժվենք Լոնդոնի վրա»։

Կրոմվելն ու Այրթոնը առարկում էին։ Զինվորական տարերքի հորդումը սարսափեցնում էր նրանց։ Գնալ Լոնդոնի վրա պետք էր, բայց ո՛չ այդպես, ո՛չ կույր կատաղությամբ՝ սրբելով ու կործանելով բոլոր արգելքները։ Նրանց ուղին պիտի լինի խելամիտ, օրինական, Կրոմվելը ելույթ էր ունենում նորից ու նորից։ Նա համոզում էր.

— Այն, ինչ ձեռք է բերվում պայմանագրով, կլինի ամուր և տևական։ Այդպես դա կարելի կլինի փոխանցել սերունդներին։ Այդպես մենք կխուսափենք այն լուրջ մեղադրանքներից, որ առաջ են քաշվում մեր դեմ, թե մենք ուժով ենք զիջումներ կորզել պառլամենտից, իսկ դա լուրջ բիծ է մեզ վրա...

Նա ասում էր, որ հարկավոր է պառլամենտը բարենորոգման ենթարկել, մաքրել դավաճաններից և օգտագործել ժողովրդի բարօրության համար։ Դա իմաստուն, աղնիվ և արդարացի մոտեցում է։

— Իսկապե՛ս չէ՛, իսկապե՛ս,— նա արդեն պատրաստ էր դուրս գալ ինքն իրենից,— այն, ինչ ուժով կգավթենք, դա ինձ համար ոչինչ է։ Ես չգիտեմ ինչպիսի ուժ է հարկավոր այստեղ գործադրել։ Մեր ուժը՝ դա բարօրություն ձեռք բերելն է ողջ երկրի համար առանց որևէ բռնության...

Նրան օգնության է գալիս Այրթոնը։ Նրա զգաստ ու սառը դատողությունը այստեղ ավելի քան տեղին էր։ Խոսքը պետք է գնա ոչ թե Լոնդոնի վրա արշավի մասին և ոչ էլ այն մասին, թե ում ձեռքը կընկնի իշխանությունը։ Հարկավոր է մտածել այն մասին, թե ինչ պիտի անի բանակը իր իշխանությունը, եթե այն ստանա։ Ինչպիսի՞ իրավունքներ և ազատություններ կսահմանի ժողովրդի համար։

Նա առաջարկեց կազմել մի մանիֆեստ, սահմանադրության նման մի բան, որտեղ պիտի շարադրվեին պետական նոր կարգի հիմնական սկզբունքները։ Դա շատ շահեկան քայլ էր. արդեն գիշերվա ժամը 1-ն էր և Լոնդոնի վրա առշավելու հարցը որոշվեց հետաձգել մինչև այն պահը, երբ մանիֆեստը մշակված կլինի։

www.a-pdf.com

Կրոմվելը, Լամբերթը, Այրթոնը հենց հաջորդ օրը ձեռնամուխ եղան մանիֆեստը կազմելուն։ Այն կոչեցին «Առաջարկությունների գլուխներ՝ առաջարկված բանակի կողմից»։ Գոյություն ունեցող պառլամենտը արձակվում է։ Նոր պառլամենտները գումարվում են երկու տարին մեկ։ Ընտրությունները անց են կացվում այնպես, «որ յուրաքանչյուր կոմսություն կարողանա ունենալ պառլամենտի այնքան թվով անդամներ, որոնք համամասնորեն համապատասխանեն թագավորության տուրքերի ու պարհակների ընդհանուր գումարին նրա բերած մասնակցությանը, որպեսզի համայնքների պալատը դառնա (որքան դա հնարավոր է) ճշտիվ կազմված ներկայացուցչությունը ողջ թագավորության»։ Անկում ապրող փոքրիկ քաղաքներից պառլամենտ պատգամավորներ ուղարկելը վերացվում է, որպեսզի ավելի տեղ տրվի նոր մարդկանց։ Ով չի վճարում հարկ առհասարակ, այսինքն՝ չունի սեփականություն, ընտրություններին մասնակցություն չի ունենում։

Միապետական կարգը և լորդերի պալատը պահպանվում են։ «Այն բանից հետո,— ասում էր XIV կետը,— երբ թագավորության մեջ իրավունքների, ազատությունների, խաղաղության ու անվտանգության ապահովման և սահմանման համար մինչ այդ շարադրված առաջարկությունները կիրականանան, նորին մեծության թագավորը, թագուհին և նրանց արքայական սերունդը վերականգնվում են անվտանգության, պատվի և ազատության պայմաններում...»։ Սակայն միլիցիայի և զինված ուժերի ղեկավարությունը տասը տարով տրվում է պառլամենտի ձեռքը։ Եպիսկոպոսները և մյուս այլ եկեղեցական պաշտոնյաները զրկվում են ամեն մի հարկադրող իշխանությունից. ոչ ոք չպետք է ուրիշներին հարկադրի աղոթել ըստ «Ընդհանուր աղոթագրքի», ստորագրել Կովենանտը, կատարել այս կամ՝ այն ձևով ժամասացություն։

Հօգուտ «նոր մարդկանց»՝ նախաձեռնող միջին կարողության տեր ջենտլմենների, վաճառականների, սքվայրների՝ չափավոր ռեֆորմներ ցանկացողների համար կային ձեռնտու կետեր, որտեղ պահանջվում էր սահմանել հանրագրեր տալու ազատություն, որոնք «պետք է արագորեն քննարկվեն և ստանան համապատասխան բավարարում»։ Վերացնել հարկերը առաջին անհրաժեշտության առարկաների, լուծարքի ենթարկել մենաշնորհը և սահմանափակումները առևտրում, բարեփոխել դատական օրենսդրությունը, «որպեսզի դատական պրոցեսները չլինեն այնքան հոգնեցնող և թանկ, ինչպես այժմ»։ Իսկ բանակին պետք է որ դուրեկան լիներ ռոճիկների գծով բոլոր պարտքերը վճարելու պահանջը։ Վերջապես, առաջարկվում էր հայտարարել համընդհանուր ամնիստիա՝ ներել բոլորին քաղաքացիական պատերազմում իրենց պատճառած չարիքների, արյունահեղության, դաժանության համար։

Հուլիսի 23-ին «Առաջարկությունների գլուխները» ոչ պաշտո-

www.a-pdf.com

նապես ներկայացրին Թագավորին։ Նա խոստացավ քննել այն առանց հետաձգելու, բայց նոր իրադարձություններ՝ ահեղ ու տագնապալի, եկան փոխելու գործի ընթացքը։ Լոնդոնում պրեսբիտերները օգնության կոչ արեցին ամբոխին, և խաժամուժը՝ ռոյալիստների տղաներ, տերերից հրահրված անխելահաս պատանի աշկերտներ, փողոցային խառնամբոխը, որ միշտ հակված է տուրուդմփոցի, խուժեցին վեսթմինսթեր, պահանջելով ինդեպենդենտներին վտարել պառլամենտից։ Սփիքեր Լենթալը, կոմս Մանչեստերը և 60 դեպուտատ-ինդեպենդենտներ փախան՝ երկյուղելով իրենց կյանքի համար, և իրենց գցեցին բանակատեղին։ Տասնմեկ պրեսբիտերներ, որոնք հեռացված էին զինվորների պահանջով, վերադարձան իրենց տեղերը, և պառլամենտը շուտափույթ ձեռնամուխ եղավ վերակազմելու միլիցիան և հեծելազոր հավաքելուն՝ մայրաքաղաքը պաշտպանելու համար։ Սենձազերծ ամբոխը, փողոցեփողոց ընկած, պահանջում էին վերադարձնել Թագավորին։

Այդ նորություններից Թագավորն սթափվեց։ Ժողովուրդն ինքն էր եկել ի պաշտպանություն նրա։ Դրա հետ մեկտեղ, քաջալերված շոտլանդացիների աջակցությունից (այդ օրերին նրա մոտ էր ժամանել կոմս Լոդերդեյլը՝ զորեղ մի տոհմի գլխավորը, շոտլանդական պառլամենտից, գաղտնի առաքելությամբ), Կարլոսը վճռեց մերժել բանակի առաջարկները։ Թող այդ կոպիտ մարդիկ հասկանան, որ ինքնակալին վերջնագիր չեն ներկայացնի։

Հուլիսի 28-ին նա Այրթոնի դեմքին նետեց «Առաջարկությունների գլուխները», իրեն թույլ տալով դուրս հորդել միապետական իր զայրույթի ողջ ուժը։

— Դուք չեք կարող դա անել առանց ինձ,— գոչեց նա։— Դուք բոլորդ կկործանվեք, եթե ես չպաշտպանեմ ձեզ։

Նա դեռ երկար գոռաց նրանց վրա, մեղադրում էր, սպառնում։ Ջուր էր Բերքլին փորձում շշուկով հանդարտեցնել նրան, հիշեցնել պատշաճության մասին, որ վայել է նրա բարձր դիրքին։ Թագավորը մոլեգնում էր։ Բանակային կոմիսարները նրա մոտից դուրս եկան կարմրատակած, ստորացված, զայրացած։ Գնդապետ Ռեյնսբորոն, բանակի խորհրդում մի նոր ծագող աստղ, զորքերի մեջ արագ տարածեց նորությունն այն մասին, որ Թագավորը փրփրել է բանակի առաջարկների դեմ։

Հարցը վճռված էր։ Բանակի գլուխ էր այժմ կանգնած ոչ թե Թագավորը, այլ պառլամենտի սփիքեր Լենթալը, որը նրան կոչ էր անում պաշտպանության։ Ֆերֆաքսը Կրոմվելի հավանությամբ հրաման տվեց՝ սկսել։ Օգոստոսի 4-ի գիշերը մի քանի գնդեր Ռեյնսբորոյի հրամանատարությամբ առանց որևէ կրակոցի գրավեցին Սաութուորկը։

Օգոստոսի 6-ի առավոտյան բանակը հաղթական քայլերգով, դափնիներով ընթանում էր Վեսթմինսթեր տանող փողոցներով։

www.a-pdf.com

Կրոմվելը գնում էր հեծելազորի գլուխն անցած։ Հայդ-պարկի մոտ շքերթը դիմավորեցին քաղաքագլուխը և օլդերմեները։ Հեռվից նկատելով Ֆերֆաքսին, նրանք մի քանի քայլ առաջ եկան, հարգալիր ողջունեցին նրան, խոնարհաբար խնդրեցին ներել վերջերս տեղի ունեցած անկարգությունների համար։ Քաղաքի անունից նրան մատուցեցին մի մեծ ոսկյա թաս։

Գեներալը պատասխանեց անբարեհամբույր, հրաժարվեց թասը վերցնել և անցավ գնաց։ Հեծելազորը, հետևակը և հրետանին ընթանում էին նրա ետևից անբասիր կարգով։ Բնակիչներից և իշխանավորներից ոչ մեկին վիրավորանք չհասցվեց, նույնիսկ խոսքով չվիրավորեցին ոչ ոքի։ Դեռ շատ օրեր անց լոնդոնցիները հիացմունքով էին խոսում զինվորների սքանչելի պահվածքի և կարգապահության մասին։ Պառլամենտի որոշման համաձայն Սիթին 100 հազար ֆունտ ստեռլինգի փոխառություն տրամադրեց բանակի ծախսերը ծածկելու համար։ Պառլամենտում ամենից կատաղի թշնամիները թաքնվել էին։

2. «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ»

Պերճաշուք քաղաքամերձ Հեմփթոն-Քորթ ապարանքը, որ կառուցվել էր դեռևս Հենրիխ VIII-ի ժամանակներում, արժանավայել շուքով ընդունեց իր տիրոջը։ Ծառաները դեսուդեն էին ընկել, շորս բոլորը տարածվել էր խորովվող եղնիկների բուրավետ ծուխը, ժամանեցին շքեղ հագնված պալատականները։ Յուրաքանչյուր օր այցելուների բազմությունը ջանում էր ցուցաբերել արքայի հանդեպ իր լոյալությունը, իր հարգանքը։ Ախոռապանները չէին հասցնում առմուտքից հեռացնել շքեղաշուք կառքերը։ Ժամանել էին և՛ նախկին բարձրաստիճանավորները, և՛ օտարերկրյա դեսպանները։ Իսկապես ասած Հեմփթոն-Քորթի արքունիքը 1647 թվականի վաղ աշնանը ներկայանում էր ոչ պակաս շքեղաշուք, քան մինչ պատերազմը Ուայթհոլում։

Բայց սա ի՞նչ է։ Ո՞ւմ են հարգարժանորեն մի կողմ քաշվելով, արդեն ոչ առաջին օրը լինելով, իրենցից առաջ թողնում այս տիտղոսավոր ռոյալիստները։ Այդ ո՞ւմ առաջ են նրանք կորանալով խոնարհվում, մինչև հատակը իջեցնելով գլխարկների ձյունաճերմակ փետրափնջերը։ Ո՞ւմ է հենց այնպես, առանց ձևականության ընդունում Կարլոսը։ Ո՞ւմ հետ է ողորմածորեն զրուցում իր հարկաբաժնում։ Ճերմակ կտավե օձիքավոր զինվորական գորշ զգեստով, անփետուր գլխարկներով, սապոգներով դոփելով հատակը՝ ընդունելության դահլիճների միջով անցնում են Կրոմվելն ու Այրթոնը։ Իսկ տիկինների՝ մարկիզուհիների և կոմսուհիների մեջ, փարիզյան ատլասե հագուստը հագին համեստորեն նորին մեծության դռան առաջ բազմել է կապուտաչյա Եղիսաբեթ Կրոմվելն ու նրա կողքին են դուստրերը. ամաչկոտ ու աստվածավախ Բրիջեթ Այրթոնը, խենթավուն և

www.a-pdf.com

սիրունիկ Բեթթի Քլեյփոլը։ Արքայական խորհրդական Էշբեռնեմը նրանց դուրս էր բերել բարձր հասարակություն և ներկայացրել թագավորին։ Էշբեռնեմն ու Կրոմվելն այժմ հաճախ են հանդիպում և երկար զրուցում։

Չար լեզուները պնդում էին, և ով գիտե, ճշմարտության որքա՞ն բաժին կար դրանում, թե Կրոմվելը շատ շուտով կոմս է դառնալու, գուցե և, նույնիսկ՝ կոմս Էսեքս, նրա որդին՝ Ուելսի թագաժառանգի մանկլավիկը, իսկ փեսան՝ Այրթոնը, Իռլանդիայի լորդ կառավարիչը։

Այս ամենն ի՞նչ էր նշանակում։

Այն ժամանակվանից, ինչ բանակը գրավել էր Լոնդոնը, Կրոմվելը դարձել էր դրա գլխավոր քաղաքական առաջնորդը։ Լոակյաց Ֆերֆաքսը ջանք էր թափում հեռանալ գործերից։ Նա թվում էր տանջահար և տխուր։ Իրադարձությունների ընթացքն անհանգստացնում էր նրան։ Կրոմվելն, ընդհակառակը, գործում էր եռանդուն և վստահ։ Նոր պառլամենտը ձգձգեց սփիքերի բացակայությամբ կայացրած իր որոշումները չեղյալ հայտարարելու հարցը, զայրույթը տիրեց նրան։

— Այդ մարդիկ երբեք ոչինչ չեն անի, եթե բանակը դրանց ականջները չքաշի,— ասաց նա Լեգլոյին։

Օգոստոսի 20-ին նրա հրամանով հեծյալ մի գունդ տեղաբաշխվեց Հայդ-պարկում, Վեսթմինսթերին անմիջականորեն մոտիկ, իսկ ինքը լեյտենանտ-գեներալը, պալատի դռների առաջ թողնելով ազդեցիկ շքախումբը, բարձրացավ նիստերի դահլիճ։ Հարկ եղած որոշումն ընդունվեց։ Դրանից հետո շատ պրեսբիտերներ առհասարակ դադարեցին այցելել պառլամենտ։

— Այժմ բոլորին բանակն է ղեկավարում,— հայտարարել էր նրանցից մեկը։— Պառլամենտը դարձել է զրո։ Նա միայն «ամեն» է ասում այն որոշումներին, որոնք ընդունում է ռազմական խորհուրդը։ Բանակը երրորդ դասն է գարձել թագավորության մեջ...

Կրոմվելը կարող էր այժմ իր կամքը թելադրել և՛ բանակին, և՛ պառլամենտին։ Նա էր այժմ իր ձեռքին պահում նավի ղեկանիվը, որի տախտակամածի վրա գրված էին «Անգլիայի ճակատագիրը» բառերը։ Բայց գո՞հ է այդ նավը, որ սուրում է խռովությունների և անօրինականությունների փոթորկալի ալիքների վրայով։ Ժամանակը չէ՞ արդյոք հանգրվանել կառամատույցում, խարիսխ ձգել և սկսել խաղաղ կյանք։ Խաղաղություն ու անվտանգություն է փնտրում Կրոմվելը թագավորության համար։ Հենց դրա համար է նա թագավորի մոտ գնում, որպեսզի վերջապես հասնի ամուր համաձայնության։ Եվ արքան, թվում է, տեղի է տալիս, նա արդեն պատրաստ է ընդունել «Առաջարկությունների գլուխները», որ այնքան զայրույթով մերժել էր վերցնում։ Գործը փչացնում են Շոտլանդիայից եկած դեսպանորդները։ Նրանք գարձյալ սկսում են իրենց բանսարկությունները։

www.a-pdf.com

Այդ մոլեռանդների համար ամենից կարևորն այն է, որպեսզի թագավորն ընդունի Կովենանտը և համաձայնի եկեղեցու պրեսբիտերական կառույցին։ Սրանց ժամանելու հետ Կարլոսը դառնում է սառն, լռակյաց։ Բայց ահա տարօրինակ բան. այժմ մեղմ համոզում, զիջում է Կրոմվելը՝ բանակի գլխավորը։ Նա պնդում է բանակցությունները շարունակելու վրա. թող արքան համաձայնի կարճ ժամանակով միլիցիային հանձնել պառլամենտի հսկողությանը և երաշխավորել հավատի հանդուրժողություն՝ և նա դարձյալ կլինի երկրի լիակատար տերը։

Բայց բանակը դժգոհ է. Կրոմվելը, քաջարի զորականը, իրենց Կրոմվելը զիջում է նենգ Կարլոսին։ Նա դավաճանում է ընդհանուր գործին, պրեսբիտերների հետ խոսքը մեկ է արել։ Ագիտատորները սկսեցին աշխուժանալ։ Լոնդոնյան արհեստավորների ու ենթավարպետների հետ, նրանց հետ, ում գլխավորում էր Թաուերցի Ջոն Լիլբեռնը, նրանք այժմ հատուկ կուսակցություն կազմեցին։ Այդ կուսակցությունը նրանք անվանեցին լևելերներ կամ հավասարականներ։ Լևելերները կարծում էին, թե բոլոր մարդիկ, լինի դա հասարակ գեղջուկ, լորդ, թե անգամ ինքը թագավորը, հավասար են աստծո և օրենքի առաջ, բոլորն իրավունք ունեն ընտրել իշխանության մարմիններ, մասնակցել օրենսդրությանը, դատվել դատարանի կողմից՝ որպես իրենց հավասարների կողմից։ Իմանալով, որ բարձր սպայությունը բանակցություններ է վարում թագավորի հետ, Լիլբեռնը իր մեկուսարանից գրում էր զինվորներին. «Մի վստահեք գլխավոր շտաբի սպաներին, քանի որ նրանք առհասարակ ծախու են և վերածվել են Անգլիայի ժողովրդի իսկական և օրինական ազատությունների թշնամիների՝ դառնալով մեծամեծ պաշտոնյաներ և մտածելով միայն իրենց մասին...»։

Վրդովմունքն աճեց, Լոնդոնի ծայրամասերից ալիք-ալիք տարածվելով հասավ բանակը, որն այժմ տեղավորված էր Պեյնի քաղաքամերձ շրջանում, արքայական ռեզիդենցիային ավելի մոտիկ, և բանակից կրկին ետ հոսեց դեպի Լոնդոն։ Ինչ-որ մեկը պառլամենտում «Կոչ Անգլիայի ազատ ժողովրդից՝ ուղղված զինվորներին» անստորագիր նամակով հարցնում է. «Ինչո՞ւ են բարձր սպաներն այդքան սիրալիր Էշբեռնեմի և թագավորի մյուս գլխավոր խորհրդականների հետ։ Ինչո՞ւ են նրանք թույլ տալիս, որ Էշբեռնեմը շրջապատվի հոգևորականությամբ։ Ինչո՞ւ են ծունկի գալիս նրա առաջ, համբուրում նրա ձեռքը, կամակատարություն անում նրա առաջ։ Օ՜, ամոթ մարդկանց։ Օ՜, ինչպիսի հանցագործություն աստծո առաջ։ Մի՞թե կարելի է այդպես վարվել մի մարդու հետ, որը ոտից գլուխ ցողված է հենց ձեր ամենանվիրական բարեկամների ու զինվորների արյամբ»։

Իսկական և հարգելի բարի կամեցողները այդ պարսավագրերը բերում էին Կրոմվելին և սա հարաճուն անբավականու-

www.a-pdf.com

թյամբ ու տագնապով կարդում էր անձամբ իրեն ուղղված խոսքերը. «Թանկագին Կրոմվել, թող աստված բաց անի քո աչքերը և սիրտը... Դու մեծ մարդ ես... Հավաքիր քո վճռականությունը և գոչիր. «Եթե ես պիտի մեռնեմ, թող լինի այդպես» և եկ մեզ հետ։ Իսկ եթե ոչ՝ ես քեզ կմեղադրեմ ստոր խաբեության մեջ...»։ Այդ անկոտրում Լիլբեռնն է գոչում Թաուերյան կալանատնից։ Իսկ ահա ինչ է գրում Վայլդմանը, ժողովրդի անունից դիմելով զինվորներին. «Եթե Կրոմվելն այժմ չզլջա և չփոխի իր մտադրությունները, ապա թող իմանա, որ դուք սիրել և հարգել եք արդարամիտ, անկեղծ և քաջարի Կրոմվելին, որն իր կյանքից ավելի է սիրել իր երկիրն ու ժողովրդի ազատությունը և ատել է թագավորին, որպես Արյունարբու Մարդու։ Բայց ի՞նչ. եթե Կրոմվելը դադարի լինել այդպիսին, նա կդադարի օգտվել ձեր հովանավորությունից...»։

Այնպես էր թվում, թե լևելերները պատրաստվում են վճռական գործողությունների։ Նրանք վերընտրել էին բանակի ագիտատորների խորհուրդները և սկսել էին հավաքվել Համընդհանուր խորհրդից մեկուսի։ Նրանք ավելի ու ավելի սերտորեն էին համախմբվում քաղաքացիական լևելերների հետ Լոնդոնում և այլ վայրերում։ Նրանք, թվում է, կազմել էին իրենց սահմանադրությունը։

Խուցը խոնավ էր ու ցուրտ։ Օդը հեղձուկ էր մզլահոտից։ Կրոմվելը նստած էր ճոճվող միակ աթոռակի վրա և ծանր հայացքով նայում էր Լիլբեռնին, որը մերթ վեր էր կենում ու գրրոլված քայլում մի անկյունից մյուսը, խոնավ քարե հատակի վրա, մերթ նստում ծղոտե ներքնակով մահճակալին։ Այդ օրը՝ սեպտեմբերի 6-ին, Թաուերում Կրոմվելն ուրիշ գործեր էլ ուներ՝ պետք էր ստուգել, թե որքան է այնտեղ ղենքի պաշարը, խոսեր ադարետի հետ,— բայց այն գործը, որ բերել էր նրան մենախուց՝ Լիլբեռնի մոտ, հազիվ թե կարևորագույնը չէր։ Նա եկել էր խընդրելու այդ համառ ու անհերկյուղ մարդուն, որ տանջահար էր լինել տասնհինգամյա բանտարկությունից, դադարեցնելու իր կատաղի հարձակումները պառլամենտի դեմ։

— Այ կտեսնեք,— ասաց Կրոմվելը,— շուտով հաշտություն կլինի և ամեն ինչ կհարթվի։

Բայց հորդորները չէին ներգործում։ Դադարեցնե՞լ հարձակումները պառլամենտի դեմ։ Թող նրան, Լիլբեռնին, նախ դատեն բաց դատով, թող մեղադրանք ներկայացնեն։ Նա այստեղ նստած է արդեն մեկ տարուց ավելի, և ոչ ոք չի մտածում քննել նրա գործը։ Լիլբեռնը բորբոքված էր, աչքերը վառվում էին անսովոր կրակով։ Իսկ Օլիվերո՞նը։ Նրան նույնպես պահում են մեկուսի քառասունվեց թվից, և մինչև հիմա դատը չի երևում։ Պառլամենտն էլ, գեներալներն էլ դավաճանել են ժողովրդի գործին, նրանք այժմ մտածում են միայն իրենց շահերի մասին և

www.a-pdf.com

պատրաստ են քծնել խաբերա միապետին, որը ոտից գլուխ ցողված է իր ժողովրդի արյունով։

— Բայց ճիշտ է չէ,— պաշտպանվում էր Կրոմվելը,— որ մենք համենայն դեպս այժմ ավելի լավ դրության մեջ ենք, քան մինչև պատերազմը։ Այն ժամանակ մենք բոլորս հավասարապես տառապում էինք կեղեքումից ու բռնապետությունից։ Իսկ այժմ, ընդհակառակը, եթե պառլամենտը երբեմն շեղվում է ճշմարտության ու արդարության ուղուց, ապա դա ավելի շուտ պատահականություն է կամ դառն անհրաժեշտություն։

Նա խոսում էր, և ինքն էլ էր զգում իր խոսքերի անհամոզիչ լինելը։ Լիլբեռնը, որին նա մի ժամանակ պաշտպանում էր լորդերի կամայականությունից և եպիսկոպոսական դատարաններից, շանթեց նրան այրող, կասկածոտ հայացքով, որի մեջ Կրոմվելը թշնամանք տեսավ և իրավացիության գիտակցում։ Նա կցանկանար այդ հոգնատանջ դեմքին նետել պարզաբանող, համոզիչ խոսքեր, այնինչ ստացվեց ողորմելի քրթմնջոց։

— Բարեփոխումներն արդեն պատրաստվում են... Ողջամիտ մարդիկ պետք է համբերություն դրսևորեն... Խոսքը նրանց բարեկեցության մասին է...

Կրոմվելը տեսնում էր, որ Լիլբեռնը չէր ուզում ողջամիտ լինել և համբերություն դրսևորել։ Նա հարձակվում էր, պահանջում էր դատ և արդարություն՝ անկանխակալ արդարություն ոչ միայն իր, այլև բոլոր մարդկանց համար։

— Միայն այդ ճանապարհով մենք կհասնենք բարեկեցության,— ասում էր նա։

Այդպիսի մարդու հետ մի համոզման գալ դժվար էր։

Իսկ լևելերները անընդհատ հարձակվում էին։ Հոկտեմբերի 18-ին բանակային հինգ գնդերի ագիտատորների անունից գեներալ Ֆերֆաքսին հանձնվեց մի փաստաթուղթ, որը կոչվում էր «Բանակի գործը՝ դրա ստույգ շարադրմամբ», որի հեղինակն էր, ինչպես ասում էին, լևելեր Ջոն Վայլդմանը, երիտասարդ, բայց որպես տաղանդավոր հռետոր ու հրապարակախոս արդեն հայտնի մի մարդ։ Նա կարծես թե կետ առ կետ պատասխանելիս լիներ «Առաջարկությունների կետերին»՝ այն մանիֆեստին, որ կազմել էին Կրոմվելն ու Այրթոնը։

Գոյություն ունեցող պառլամենտը հարկավոր էր անհապաղ մաքրազերծել ռոյալիստներից և ոչ ուշ, քան մեկ տարի անց, արձակել բոլորովին, ասվում էր «Բանակի գործ»-ում։ Նոր պառլամենտը գումարվում է երկու տարին մեկ։ Նրանում պիտի ընտրեին ոչ միայն հարկատուները, այլ 21 տարին բոլորած բոլոր ազատածին անգլիացիները։ Ոչ ոք չի կարող արձակել պառլամենտը առանց իր իսկ համաձայնության։

Ինդեպենդենտական «Առաջարկությունների կետերը» պահպանում էին միապետական իշխանությունը և թագավորին վետոյի իրավունք էին վերապահում։ «Բանակի գործը» հայտարա-

www.a-pdf.com

ռում էր, որ «Թագավորի իրավունքները ոչինչ և անվավերական են օրենքի առաջ»։ «Հարկավոր է հիշել,— ասված էր նրանում,— որ ամեն մի իշխանություն իր ծագմամբ և ըստ էության գալիս է ժողովրդից ընդհանրապես և ներկայացուցիչների նրա ազատ ընտրությունը հիմք է հանդիսանում ամեն մի արդարացի կառավարության»։ Դրա համար էլ, բնական է, որ պառլամենտը պիտի լինի միպալատանի։

Երկրում մտցվում է գրավոր սահմանադրություն՝ օրենք, որ պարտադիր է բոլոր կառավարողների համար, բոլոր քաղաքացիների համար առանց որևէ տարբերության։ «Պետք է վերացվեին բոլոր տեսակի բացառությունները օրենքից՝ ում համար էլ որ այն լինի։ Հատուկ մի կոմիտե վերանայում է գոյություն ունեցող բոլոր օրենքները։ Օրենքների քանակը պետք է նվազեցվի, որպեսզի բոլոր օրենքները տեղավորվեն մի հատորում։ Օրենքները պետք է շարադրված լինեն անգլերեն, որպեսզի յուրաքանչյուր անգլիացի կարողանա հասկանալ դրանք»։

Միայն քաղաքական խնդիրներ չէր, որ շոշափում էր «Բանակի գործը»։ Նրանում կային նաև տնտեսական պահանջներ՝ հօգուտ միջին կարողության վաճառականների, արհեստավորների, գյուղացիների։

«Ամեն տեսակի արտոնագրերը, պատվոգրերը և արտոնությունները, որոնք խանգարում են ժողովրդի իրավունքների իրականացմանը, պետք է վերացվեն...

Պետք է ոչնչացնել բոլոր մենաշնորհները...

Պետք է վերացնել գարեջրի, հագուստեղենի և այլ ապրանքների վրա դրվող ակցիզը...

Արդարացի բաշխել հարկերը ժողովրդի և հարուստների միջև, նշանակալից հարկեր դնելով Սիթիի դրամատերերի վրա։ Հարկերը անհրաժեշտ է գանձել նրանցից, ովքեր ունեն բավականաչափ սեփականություն և ոչնչով չեն տուժել պատերազմի ժամանակ...

Անհրաժեշտ է վերադարձնել նախկինում ցանկապատված հողերը, անկախ նրանից, թե ում են այդ հողերն այժմ պատկանում»։

Դա բանակն էր թելադրել իր կամքը։ Զուր չէ, որ «Գործի» առաջաբանում աներկմիտ ձևով հայտարարված էր, թե բանակը ղենք է վերցրել այն գիտակցությամբ, որ ինքը պայքարում է ժողովրդի արդար իրավունքների և ազատությունների համար։ Այն վարձկանների հավաքածու չէ, որը պարտավորված է ծառայելու բռնապետական իշխանությանը։

Այդպիսի փաստաթղթերի հետ Կրոմվելը չէր ցանկանում որևէ ընդհանուր բան ունենալ։ Որքան էլ որ նա սիրեր իր բանակը, ինչպիսի հույսեր էլ կապեր նրա հետ, նրա գործը չէր միջամտել պետական կարգի հիմքերին, կամեցած ձևով ծռել կառավարության ներդաշնակ կառույցը։ Հոկտեմբերի 20-ին նա

www.a-pdf.com

ճառ արտասանեց ի պաշտպանություն օրինական միապետական իշխանության։ Ինքը, գեներալ Ֆերֆաքսը, և մյուս բարձր սպաները չեն մասնակցում խռովարար գնդերի այդ ձեռնարկումներին,— հաստատորեն ասաց նա պառլամենտին։ Պատերազմի հենց սկզբից իրենց նպատակը եղել է ոչ այլ ինչ, քան հավատարիմ ծառայել թագավորին։ Կարլոսի մասին նա խոսում էր մեծագույն հարգանքով և ճառն ավարտեց կոչ անելով ամենահնարավոր արագությամբ վերադարձնել նրան կառավարման ղեկի մոտ։ Նա դեռևս հավատում էր, թե օրինական իշխանության վերադարձը, չափավոր և խաղաղ պայմաններում, իրականանալի է։

Հենց այսպիսի տրամադրությամբ էլ նա հոկտեմբերի 28-ի առավոտյան ժտալ Պեթնիի սուրբ կույս Մարիա եկեղեցին, ոչ մեծ այն ծխական եկեղեցին, որ գտնվում է Թեմզայի ափին։ Նրա գոթական կամարները խոյանում էին դեպի վեր, ուր թանձրանում էր աղջամուղջը։ Բարձր բեմի վրա դրված էր մի երկար սեղան։ Նրա մոտ նստել էին սպաներ՝ գեներալ Այրթոնը, գնդապետ Ռեյնսբորոն և ուրիշներ։ Ֆերֆաքսը բացակայում էր, դեռևս նախօրյակին նա հիվանդ էր երևում։ Այստեղ կային նաև շարքային զինվորներ՝ բանակի խորհրդի անդամներ, ագիտատորներ Սիքսբին, Ալլենը, Լոքիերը և քաղաքացիական լևելերներ Վայլդմանն ու Պեթին, և քարոզիչներ։ Վիթխարի սուսերը կողքից քարշ, ամբողջապես զինավառ, նստել էր նշանավոր Հյու Պիթերսը։ Քարտուղար Ուիլյամ Քլարկը, քսաներեքամյա ջանասեր մի երիտասարդ, արդեն բաց էր արել իր թղթերը և պատրաստվում էր գրել։

Նրանք այստեղ էին հավաքվել քննարկելու Անգլիայի ապագա պետական կառուցվածքի հիմքերը։ Կրոմվելը համաձայնություն էր տվել այդ հանդիպմանը այն հույսով, թե վերջապես կարելի կլինի համաձայնության գալ։ Թող լևելերներն ասեն սրտանց այն ամենը, ինչ իրենք ուզում են, և ինքն ու Այրթոնը կկարողանան նրանց պատասխան տալ։

Աշտարակի ժամացույցն սկսեց զրնգալ՝ առավոտվա ժամը 8-ն էր։ Կրոմվելն անցավ գնաց նախագահական տեղը։ Նա աչքի անցկացրեց ժողովականներին և անմիջապես հասկացավ, որ խոսակցությունը լինելու է ծանր։ Դա զգացվում էր խոր լռությունից, դեմքերի դաժան արտահայտության մեջ, աչքերի սևեռուն ցոլքում։ Նրանք հավաքվել էին խոսելու ամենից գլխավորի մասին, և յուրաքանչյուրը պաշտպանելու էր իր սկզբունքները մինչև վերջ։

— Պարոններ,— սկսեց Կրոմվելը,— այս ժողովը հրավիրվել է հասարակական հարցեր քննարկելու համար։ Ով որևէ բան ունի անելու այդ մասին, հնարավորություն է տրվում ազատորեն արտահայտվել։

www.a-pdf.com

Անմիջապես տեղից վեր թռավ Սեքսբին։ Սա վաղուց էր պատրաստվում հարձակվելու և այժմ ջարդում էր անխնա։

— Մեր բոլոր դժբախտությունների պատճառն այն է, որ մենք ձգտել ենք բավարարել բոլորին, և միայն զայրույթ ենք հարուցել։ Մենք ջանացել ենք գոհացնել թագավորին, բայց պարզվում է, որ նրան գոհացնել կարելի է միայն բոլորի կոկորդները կտրելով։ Մենք ջանում էինք սատարել պառլամենտին, իսկ այն դուրս եկավ փտած տախտակներից շինված կառույց, բարոյալքված անդամներով խառնաժողով։ Իսկ լեյտենանտ-գեներալ Կրոմվելին և գեներալ-կոմիսար Այրթոնին ես միայն մի բան կասեմ. վստահությունը ձեր նկատմամբ և ձեր հեղինակությունը բանակում խիստ խախտվել է։ Եվ դա թագավորի ու պառլամենտական իշխանության նկատմամբ ձեր վերաբերմունքի պատճառով... Ես կցանկանայի, որ դուք քննության առնեիք այն առաջարկությունները, որ ներկայացված են ձեզ։ Եվ եթե դուք ընդունակ եք հասկանալ խելամիտ փաստարկումները, ապա պետք է որ միավորվեք մեզ հետ, որպեսզի թնթնացնենք երկրի դրությունը և խաղաղեցնենք մեր ընկեր զինվորների ոգին։

Կրոմվելն զգաց, թե Այրթոնն ինչպես լարվելով կուչ եկավ՝ պատասխան հարված հասցնելու համար։ Ով ով, բայց նա ասպարեզ չի տա նրանց։

— Ես տեսնում եմ, որ ագիտատորները,— վստահ և չար տոնով սկսեց Այրթոնը,— հանգել են այն ամուր որոշմանը, որ իրենց համարում են կուսակցություն կամ հատուկ մի խորհուրդ, բանակի համընդհանուր խորհրդից զատ... Նրանք, ըստ երևույթին, համաձայնություն են սպասում գլխավորապես ուրիշների կողմից՝ իրենք քիչ հակված լինելով որևէ զիջմամբ համաձայնության հասնելուն...

Այրթոնից հետո անմիջապես խոսել սկսեց Կրոմվելը.

— Ես միշտ գործել եմ ոչ իմ կամքով, այլ ընդհանուր համաձայնությամբ և բանակի խորհրդի լիազորությամբ։ Իսկ պառլամենտում իմ գործունեության համար ես պարտավոր չեմ հաշիվ տալ բանակի առաջ...

Մինչ Ռեյնսբորոն ու Այրթոնը վիճում էին, Կրոմվելը մտարերեց այն փաստաթուղթը, որ իրեն էին հանձնել առավոտյան՝ «ժողովրդական համաձայնագիրը»։ Այնտեղ կրկնված էին «Բանակի գործ»-ի հիմնական պահանջները, և չնայած այդ մասին չէր ասված ուղղակի, այն, ըստ էության, ոչնչացնում էր և՛ միապետությունը, և՛ լորդերի պալատը՝ ազգի կառուցվածքի հիմքերը։ Երբ հերթական հոետորը լռեց, Կրոմվելը կրկին ոտքի ելավ.

— Այն առաջարկությունները, որոնք այժմ դուք անում եք, մեզ համար նոր են... Մենք բոլորովին հնարավորություն չենք ունենա դրանք քննարկել, քանի որ առաջին անգամ ենք ծանոթանում դրանց հետ... Անկասկած է, սակայն, որ ձեր փաստաթուղթը առաջարկում է արտակարգ խոշոր փոփոխություններ մեր

www.a-pdf.com

երկրի պետական կարգի բուն էության մեջ։ Իմաստուն և աստվածավախ մարդիկ պետք է քննարկեն, թե ինչպիսին են լինելու այդ փոփոխությունների հետևանքները։ Իսկ դրանց իրագործման ուղիները։ Մարդկանց գիտակցությունն ու զգացմունքները պատրաստ են արդյոք ընկալելու այդ առաջարկությունները և դրանք իրականացնել կյանքում։ Հաղթահարվելո՞ւ են այն բոլոր խոչընդոտները, որոնք կկանգնեն մեր ուղու վրա։ Հապա մեր պարտականությունները։ Չէ՞ որ բանակը դեկլարացիա է հրատարակել, որտեղ իր վրա որոշակի պարտավորություն է վերցրել և՛ թագավորի նկատմամբ, և՛ պառլամենտի։ Պե՞տք է մենք դրանք օգտագործենք, թե՞ ոչ։

— Պարտականություններ։— Դա խոսում էր Վայլդմանը՝ «Բանակի գործի» հեղինակը, «ժողովրդական համաձայնագրի» կազմողը։— Դուք առաջարկում եք հիշել, թե ինչպիսի պարտականություններ են դրված մեզ վրա... Բայց եկեք նախ որոշենք, արդյոք ազնի՞վ, արդարացի՞ է ընդունված պարտավորությունը, թե՞ ոչ։ Եթե այն անարդարացի է, ապա մենք պարտավոր չենք կատարել, թեպետ և այն ընդունված է եղել երդմամբ։ Ավելին, այդ դեպքում պատվի գործ կլինի դրանից հրաժարվելը և դրա նկատմամբ նողկանք զգալը։

— Դե ոչ, ես չեմ կարող համաձայնել դրա հետ,— կրկին ձայն տվեց Այրթոնը։— Պարտավորությունը կատարվում է միայն այն ժամանակ, երբ այն արդարացի՞ է։ Բայց, գիտե՞ք, այդպիսի սկզբունքները առհասարակ կործանարար են պետության համար։ Այսպիսի սկզբունքներ ունեցող մարդիկ իրենց կաշկանդված չեն զգա և ոչ մի օրենքով, եթե նրանց գնահատմամբ այդ օրենքներն այնքան էլ լավը չեն։

Հակաճառությունները մի որոշ ժամանակ դեռ շարունակվում էին։ Կրոմվելը լարված ելք էր որոնում, թե ինչպես վերջ տալ այդ երկպառակությանը, ինչպես վերջապես խոսել սկսել խաղաղության և բանականության ոգով։ Գնդապետ Հոֆֆեն առաջարկեց համատեղ մաղթանք կատարել։

— Մենք ոչ մի բանի շուրջ համաձայնության չենք գա,— ասաց նա,— քանի դեռ բոլորս միասին չենք դիմել աստծուն և նրանից օգնություն չենք խնդրել։

Կրոմվելը երախտագիտություն զգաց իր ազգականի հանդեպ։ Միատեղ աղոթքը կմեղմի կրքերը, կուղղի ոգին դեպի բարձրյալն ու հավերժականը, կլուսավորի միտքը։ Նա պատրաստակամությամբ պաշտպանեց այդ գաղափարը, և կրքերը իսկապես որ մի որոշ ժամանակ հանդարտվեցին։ Բոլորը համաձայնեցին, որ այդպիսի գործում անհրաժեշտ է օգնության կանչել աստծուն. համատեղ աղոթքը նշանակեցին հաջորդ օրը, առավոտյան ժամը ութին։

Բայց այնքան էլ հասարակ բան չէր մի քանի խառնակիչների

www.a-pdf.com

կրակը մեղմելը։ Նրանք ասես դիտմամբ առիթ են որոնում կառչելու, պատասխան չարություն հարուցելու համար։ Կրոմվելը երկյուղած նայում է Վայլդմանին, որը դարձյալ կոչ է անում քննարկել «ժողովրդական համաձայնագիրը»։ Նրան պաշտպանում են ագիտատորները, և վեճը նորից է բորբոքվում։ Հարձակման է անցնում Այրթոնը։

— Ես չեմ ուզում,— սպառնալի ասում է նա,— միանալ նրանց, ովքեր որոնում են ոչնչացումը կամ պառլամենտի, կամ թագավորի։

Եվ Կրոմվելը նորից է համոզում, որ հանրապետություն նշանակում է անկում, ազգի կործանում։ Նա դեմ է հանրապետության։

— Արդյոք դա Անգլիան չէր դարձնի Շվեյցարիայի նման, որտեղ մի կանտոն հանդես է գալիս մյուսի դեմ։ Ես հարցնում եմ ձեզ, ո՞վ կվերցնի իր վրա այդպիսի պատասխանատվություն։ Դա չէ՞ որ կտանի դեպի ազգի բացարձակ սնանկացում։ Իսկ մենք միևնույն ժամանակ ասում ենք նրան. «Դա քո ազատության, քո օգտի, քո բարեկեցության համար է»։ Եվ առհասարակ, մի՞թե այժմ այդքան շատ է անհրաժեշտ քննարկել այդ «ժողովրդական համաձայնագիրը»։ Դրա ճանապարհին ընկած են վիթխարի խոչընդոտներ։

— Ո՛չ, այն պետք է հենց այժմ քննարկել,— գնդապետ Ռեյնսբորոն առաջին անգամը չէ, որ խիզախում է վիճել իր հրամանատարի հետ։— Այո՛,— ասում է նա,— մենք գիտակցում ենք, որ այդ սահմանադրության ճանապարհին ընկած են վիթխարի դժվարություններ։ Բայց դա հիմք չէ այն բանի համար, որպեսզի դադարեցվի պայքարը հանուն դրա իրականացման։ Եթե մենք վախենայինք դժվարություններից,— ասում է նա և նայում ուղիղ Կրոմվելին,— ես համոզված չեմ, թե մենք երբևէ կհանդգնենք նայել թշնամու դեմքին։ Եթե դուք համոզված եք, որ այդ գործն արդար է, ես գտնում եմ, որ պարտավոր եք այն իրականացնել։

Կրոմվելը համառորեն հակում է գլուխը, աչքերն արնակալում են։

— Աստծու ողորմածությամբ,— ասում է նա հանդարտ,— ես չեմ վախենում և ոչ մի մարդուց։

Վեճը մի պահ դադարում է, բայց հետո բռնկվում է նոր ուժով։ Մի ոմն բեդֆորշիրցի ջենտլմեն, Կրոմվելն առաջին անգամ է տեսնում նրան, զարգացնում է այն միտքը, թե անգլիական ժողովուրդն առհասարակ ամենևին էլ հակված չէ միապետական կարգի։ Որպիսի՜ համարձակություն։

— Ինձ թվում է,— շարունակում է այդ ոչնչով աչքի չընկնող ջենտլմենը,— եթե դուք պահպանեք կառավարությունն այնպես, ինչպես այն կա, և վերականգնեք թագավորին, դա երկրի համար շատ ավելի վտանգավոր մի բան կլինի, քան կառավարման կար-

www.a-pdf.com

գի մեջ մտցվող փոփոխությունները։ Նա, ով պնդում է միապետության անհասանելիության վրա, դավաճանում է ժողովրդի իրավունքին։

Դա արդեն չափազանց է։ Այրթոնը չդիմացավ. նա մեղադրանքների հեղեղ է տեղում ագիտատորների վրա։ Նրանք ոտնձգություն են կատարում բանակի միասնության դեմ։ Նրանք ուզում են կործանել պետությունը։ Նրա տոնը չափից դուրս կտրուկ է։ Կրոմվելը տեսնում է, թե ինչպիսի զայրույթ են արտահայտում ագիտատորների դեմքերը։ Այդպես նրանք համաձայնության չեն գա։ Նա խոսքն է վերցնում։ Իհարկե, ասում է նա, ագիտատորները իրավունք ունեն մտցնել իրենց առաջարկությունները։ Բայց թագավորական իշխանության վերացումը չափազանց կտրուկ ցատկ է։ Անգլիացիներն արդեն հարաբերություններ են որոշակի պետական կարգ ունեցող կառուցվածքի հետ։ Նա համաձայն չի նրանց հետ, ովքեր ենթադրում են, թե գերագույն իշխանությունը պատկանում է բացառապես ժողովրդին։

— Իսկ հանուն ինչի՞ մենք կռվեցինք։— Այդ դարձյալ Ռեյնսբորոն է տեղից վեր թռչում։— Ես հարցնում եմ. մի՞թե մենք չէինք պայքարում թագավորի դեմ հանուն պառլամենտի... Քաղաքացիական պատերազմ՝ ահա ձեզ օրինակ անպետք պարտավորությունների խախտման։ Եվ այդ օրինակը խելամիտ է։ Իսկ թագավորը... Ինչ վերաբերում է ինձ, ապա կարելի է ասել, ես դեմ եմ թագավորին։ Ես դեմ եմ նրան և դեմ եմ ամեն մի իշխանության, որը հակադրված է ժողովրդին։

Արդեն գիշեր է, մոմերը հալվել են, թերայրուքները ծխում են, հին եկեղեցում խոնավ է ու հեղձուկ։ Ժամանակն է ցրվելու։ Նախքան նիստը փակելը, Կրոմվելը հիշեցնում է, որ հետևյալ առավոտյան սահմանադրության քննարկումը կշարունակվի։

Առավոտյան ժամը տասնմեկն է։ Նախօրեին նշանակված մաղթանքն ավարտված է։ Ժամանակն է անցնել այն բանին, ինչի համար իրենք հավաքվել են այստեղ։ Կրոմվելը խոսքը տալիս է քարտուղարին։ Քլարկը վեր է կենում և սկսում կարդալ։ Նա կարդում է լևելերների կողմից ներկայացված «Ժողովրդական համաձայնագիրը»՝ թագավորության նոր սահմանադրության նախագիծը։

Ի՞նչ են, վերջապես, ուզում նրանք։ Կրոմվելը մի անգամ էլ է աչքի անցկացնում փաստաթղթի տեքստը։ Կրկնված է համարյա այն ամենը, ինչ արդեն ասված է «Բանակի գործում»։ Պառլամենտը սրճակվում է առաջիկա տարվա ընթացքում, իսկ նրան փոխարինելու է գալիս նոր միապալատ պառլամենտ՝ ընտրված բոլոր արական սեռի ազատ անգլիացիների կողմից, որոնց քսանմեկ տարին լրացել է։ Այդ պառլամենտի իշխանությունը ցածր է միայն նրանց իշխանությունից, ովքեր նրան ընտրել են, այսինքն ժողովրդի իշխանությունից՝ երկրում գերագույն ինքնիշխանությունից։

www.a-pdf.com

Այդ նոր պառլամենտն իրավունք ունի առանց որևէ այլ անձանց կամ անձի համաձայնության (ակնարկը արքայի կամ լորդերի հասցեին այնքան թափանցիկ էր, որ իսկույն հասկացվեց ու անմիջապես հայացքների փոխանակման առիթ տվեց) օրենքներ հրատարակել և վերացնել, նշանակել կամ պաշտոնանկ անել պաշտոնատար անձանց, պատերազմ հայտարարել և խաղաղություն կնքել, հարաբերություններ հաստատել օտարերկրյա պետությունների հետ... Մի խոսքով, անել այն ամենը, ինչ ժողովուրդը, գերագույն ինքնիշխանը, չի վերապահել իրեն։

Ժողովրդին է մնում ժամանացության և աստվածապաշտության ձևերն ինքնուրույնաբար ընտրելու անկապտելի իրավունքը, այսինքն՝ խղճի ազատությունը։ Ժողովուրդը չպետք է հարկադրված լինի զինվորական ծառայություն կրել։ Ժողովուրդը պատասխանատվության չի ենթարկվում որևէ բանի համար, որ ասվել կամ արվել է անցյալ պատերազմի ժամանակ։

Օրենքները պետք է հավասար լինեն բոլորի համար։ Դրանք բոլորը պարտադիր են յուրաքանչյուրի համար և ոչ մի կարգի հողային կամ ունեցվածքային իրավունքներ, շնորհագրեր, կոչումներ, ծագում կամ պաշտոն իրավունք չեն տալիս արդարադատության սովորական կանոններից որևէ բացառություն անելու։

— Եվ վերոհիշյալ այդ ամենը մենք հայտարարում ենք,— վերջացնում էր Քլարկը,— մեր բնածին իրավունքները, որոնք որոշել ենք պաշտպանել բոլոր ուժերով ամեն տեսակի ոտնձգություններից։ Մեզ այդ բանին պատրաստում է ոչ միայն մեր նախնիների արյունը, որ հաճախ իզուր հեղվել է ազատություն նվաճելու նպատակով, այլև մեր սեփական դառը փորձը։ Քանի որ, թեպետև մենք երկար սպասել էինք ու թանկ վճարել պետության կառավարման այս պարզ սկզբունքների հռչակման հնարավորություն ստանալու համար, մենք դեռևս հարկադրված ենք ազատություն և խաղաղություն հաստատելու համար կախման մեջ լինել այն մարդուց, որը ձգտում էր մեզ պահել ստրկության շղթաների մեջ և մեր վզին փաթաթեց այս դաժան պատերազմը։

Կրոմվելը կնճռոտեց ճակատը (դարձյալ ակնարկ թագավորի մասին)։ Վեր կացավ Այրթոնը։

— «Ժողովրդական համաձայնագրում» ասված է, որ յուրաքանչյուր ոք, ով մեր երկրի բնակիչն է, պետք է դիտվի որպես քաղաքացիներին հավասար և պետք է հավասարազոր ձայն ունենա ներկայացուցիչներ ընտրելիս։ Եթե դա այդպես է, ապա ես պետք է առարկեմ։

Տեղից վեր թռավ Մաքսիմիլիան Պեթին՝ ագիտատորը։

— Սիանգամայն ճիշտ է։ Մենք ենթադրում ենք, որ բոլոր քաղաքացիները, որոնք չեն կորցրել քաղաքացիական իրավունքը, ասում է Անգլիայում օգտվեն հավասարազոր ձայնի իրավունքից։

www.a-pdf.com

— Ամենից աղքատ մարդն իսկ Անգլիայում,— այդ Ռեյնսբորոն է խոսում,— ամենևին էլ պարտավոր չէ ենթարկվել այն կառավարության իշխանությանը, որի կազմավորմանը նա չի մասնակցել։

Այրթոնը արտահայտիչ նայում է Կրոմվելին և, հենց որ Ռեյնսբորոն լռում է, կրկին ոտքի է ելնում։ Հանաք բան չէ. շոշափվում են հասարակարգի բուն հիմունքները։

— Ես կարծում եմ, որ ոչ ոք իրավունք չունի մասնակցելու թագավորության կառավարմանը և օրենսդիրների ընտրությանը, եթե նա չունի մշտական կայուն շահեր, չունի սեփականություն։ Որպեսզի մարդ միայն Անգլիայում ծնված լինելու փաստը հիմք ունենալով իրավունք ստանար տնօրինելու այլ մարդկանց հոգերը կամ շարժական ունեցվածքը... Դուք ինչպես ուզում եք, բայց ես դրա համար հիմքեր չեմ տեսնում։ Այն անձինք, ովքեր ներկայացուցիչներ են ընտրում երկրի օրենքները հրատարակելու համար, պետք է իմանան այդ երկրի տեղական շահերը, այսինքն պետք է տեր լինեն սեփականության։ Դա յուրաքանչյուր սահմանադրության բուն հիմքն է։ Եվ եթե դուք մերժեք այն, դուք կգնաք ամեն մի սեփականության վերացման ուղիով...

Կրոմվելը համաձայն է. այն, ինչ ասում է փեսան, պարզ է ու հասկանալի։ Նա, ով տեր է հողի, կամ կրպակից ստացվող եկամուտների, կամ մանուֆակտուրայի, իրավունք ունի ընտրելու պառլամենտի անդամ, իսկ ընչազուրկն իր իսկ ծննդյամբ զրկված է այդ իրավունքից։ Բայց կար ինչ-որ մեկը, որ դատում էր այլ կերպ։

— Աստծո օրենքներում ես չեմ գտնում ոչինչ,— ասում է Ռեյնսբորոն,— որը լորդին իրավունք տար ընտրելու քսան ներկայացուցիչ, ջենտլմենին՝ միայն երկուսը, իսկ աղքատին՝ ոչ մեկը։ Ես այդպիսի բան չեմ գտնում ոչ բնության օրենքների մեջ, ոչ էլ երկրի։ Դա մարդկային դրվածք է և այն հարկավոր է փոխել։

Բայց դա ոտնձգություն է սեփականության դեմ։

— Ինչի՞ հիման վրա եք դուք պահանջում,— տաքանում է Այրթոնը,— որպեսզի բոլոր մարդիկ իրավունք ունենան մասնակցելու ընտրություններին։ Բնական իրավունքի՞ հիման վրա։ Եթե դուք պաշտպանում եք այդպիսի հայեցակետ, դուք պետք է բացառեք և սեփականությունը։ Չէ՞ որ նույն այն բնական իրավունքը, որի վրա դուք հենվում եք, մարդուն հնարավորություն է տալիս օգտվելու այն բոլորից, ինչ տեսնում է իր առաջ. սննդից, խմիչքից, հագուստից, հողից և առհասարակ ամեն տեսակի իրերից։

— Դե ո՛չ, ո՛չ,— այժմ պաշտպանվում, ընկրկում է Ռեյնսբորոն։— Ես միտք չունեմ ոչնչացնել սեփականությունը։ Այն սահմանել է աստված իր պատգամով՝ «Մի գողանա»։ Իսկ ինչ

www.a-pdf.com

վերաբերում է ձեզ, ինչո՞ւ եք ուզում բոլորին հավաստիացնել, որ մենք կանգնած ենք անարխիայի կողմում։

— Անարխիան չի բխում «ժողովրդական համաձայնագրից»,— ձայն է տալիս Պեթին։— Ճիշտ է, դրանից կարելի է եզրակացնել, թե մենք դեմ ենք թագավորի և լորդերի իշխանությանը։ Ճիշտ է և այն, որ երբ տեսնեմ, թե աստված ցանկանում է ոչնչացնել և՛ թագավորին, և՛ լորդերին, և՛ սեփականությունը, ես գոհ կլինեմ։ Բայց մինչև արքայի ու լորդերի իշխանության ոչնչացումը, կարծում եմ, կապրենք, իսկ մինչև սեփականության ոչնչացումը՝ հազիվ թե։ Ինչ վերաբերում է ընտրություններին, ինձ թվում է, բոլորը համաձայն են, որ դրանք պիտի լինեն առավել լիակատար ու հավասար։ Դա էլ հենց կօգնի ավելի լավ պահպանելու սեփականությունը։

Սրանում է, վաճառներին վերջ չի լինելու։ Ընտրական իրավունքի հարցը դուրս եկավ նույնքան անլուծելի, որքան միապետության ճակատագրի հարցը։ Այն անտեսանելի թելերով կապված է սեփականության իրավունքի հետ, և դա, ինչպես միշտ, երբ շոշափվում են նյութական շահերը, առանձնապես բուռն ու կատաղի վեճեր հարուցեց։

— Մեղանում, մեր տերության մեջ, մեկի դիմաց հինգն են, որ նրանք չունեն սեփականություն,— գոչեց գնդապետ Ռիչը։— Ի՞նչ է, դրանց բոլորին տալ օրենսդիրներ ընտրելու իրավո՞ւնք։ Այդպես նրանք կընտրեն հենց այնպիսիներին, ինչպիսին իրենք են, և բոլորովին կվերացնեն սեփականությունը։

— Բոլոր կառավարությունները ստեղծվում են ժողովրդի ուրատ համաձայնությամբ,— առարկեց Վայլդմանը։— Ոչ ոք պետք է ենթարկվի այնպիսի կառավարությանը, որի ընտրությանը նա չի մասնակցել։

Տեղից վեր թռավ Սեքսբին։ Նրա դեմքը շառագունել էր, աչքերը վառվում էին, մազերը խռնված էին։

— Մենք կռվել ենք,— սկսեց խոսել նա, հետզհետե ավելի ու ավելի բորբոքվելով և անցնելով ճչոցի,— մենք կյանքներս ենք վտանգի ենթարկել, որպեսզի վերականգնենք ի ծնե մեզ շնորհված իրավունքը։ Իսկ այստեղ արված դատողությունից հետևում է, որ այդպիսի իրավունք ամենևին էլ գոյություն չունի։ Մենք՝ պինվորներս, երկրում չունենք գրեթե ոչ մի սեփականություն, բայց մենք ունենք բնատուր իրավունք։ Իսկ այստեղ դուրս է գալիս այնպես, որ նա, ով չունի սեփականություն, չունի նաև իրավունքներ։ Զարմանում եմ, ինչպե՞ս կարող էին մեզ այդ աստիճան խաբել։

Նա շուռ եկավ դեպի Կոոմվելը և սկսեց բղավել, ասես դիմելով անձնապես նրան, ասես նրան մարտահրավեր նետելով.

— Իսկ ձեզ ահա թե ես ինչ կասեմ. ես որոշել եմ իմ բնատուր իրավունքը ոչ ոքի չտալ, լսո՞ւմ եք։ Ինչ էլ որ դրանից ծագի, ինչ էլ որ դրա մասին մտածեն, ես այն ոչ ոքի չեմ տա։

www.a-pdf.com

Բանը բոլորովին վատ ընթացք առավ։ Գնդապետ Ռեյնսբորոն, որի ողջախոհությանը Կրոմվելը հոգու խորքում միշտ հուսացել էր, նույնպես կորցրեց իր նկատմամբ հսկողությունը։ Սեքսբիից հետո սկսեց նա.

— Ես տեսնում եմ, որ մենք որևէ իրավունք չենք ստանա, մինչև որ չոչնչացնենք սեփականությունը... Եվ իսկապես, ինչի՞ համար էր այդ բոլոր ժամանակ կռվում զինվորը։ Նա կռվել է, բանից պարզվում է, նրա համար, որպեսզի ստրկացնի՞ ինքն իրեն, որպեսզի իշխանություն ձեռք բերի հարուստների՞ համար, կարողություն ունեցողների՞ համար։ Որպեսզի իրեն դատապարտի հավերժական ստրկությա՞ն։

Այդ սուր հարցերը, թվում էր, նույնպես հասցեագրված էին Կրոմվելին։ Նա ոտքի կանգնեց, նրա ձայնը հնչեց անհողդողդ և միևնույն ժամանակ հանդարտեցնող։

— Խոստովանում եմ, բոլոր այստեղ արտասանված ճառերից ամենից ավելի ինձ դուր չեկավ միստր Սեքսբիինը. այն չափից ավելի էր հագեցված կրքոտությամբ։ Ես կուզենայի, որ մենք այստեղ ձեռնպահ մնանք դրանից։ Չէ՞ որ մենք միացանք, որպեսզի համաձայնության գանք հանուն մեր տերության անվտանգության։ Եկեք ժամանակ չկորցնենք անպտուղ վիճաբանությունների վրա, այլ ձեռնամուխ լինենք վճիռներ կայացնելուն։

Նա մի հայացք գցեց նստածների վրա։ Իրեն լսում էին միանդամայն խաղաղ և ուշադիր։ Նա շարունակեց.

— Բոլորը համաձայն են, որ ընտրական օրենքը պիտի փոխվի, բարելավվի։ Բայց ինչպե՞ս անել դա։ Եթե այստեղ մենք բոլորս միասին վիճենք, դա անսահման կերկարաձգվի և մենք ոչնչի չենք հանդի։ Ավելի լավ է այդ գործը հանձնենք համաձայնեցման հանձնաժողովին և նա կմշակի նախագիծ։

Հետևյալ օրն արդեն նիստ էր գումարել համաձայնեցման հանձնաժողովը, որը երկար վիճաբանություններից հետո ընդունեց փոքր ի շատե գոհացուցիչ որոշումներ։ Պառլամենտը արձակվում է եկող տարվա սեպտեմբերին։ Այսուհետև պառլամենտը գումարվում է երկու տարուց ոչ ավելի ժամկետով և չի կարող արձակվել առանց սեփական համաձայնության։ Նստաշրջանների միջև ընկած ընդմիջումների ժամանակ երկիրը ղեկավարում է Պետական խորհուրդը, առանց որի համաձայնության թագավորը չի կարող գումարել արտակարգ պառլամենտ։ Ինքնին հասկանալի էր, որ արքան և լորդերի պալատը պահպանվում են։ Ինդեպենդենտական հայացքը հաղթեց նաև ընտրական իրավունքի հարցում։ Որոշումների համապատասխան կետում, թեպետև խոսվում էր ընդլայնման մասին, ընտրությունների հավասարության ու ազատության մասին, այնուամենայնիվ համընդհանուր ընտրական իրավունք չհուշակվեց։

www.a-pdf.com

Կրոմվելի սիրտն այնքան էլ չթեթևացավ։ Համաձայնեցման կետերն ընդունվեցին նրա պնդմամբ։ Դրանք, իհարկե, ավելի հակված էին ինդեպենդենտական «Առաջարկությունների կետերին», քան լևելերների «Ժողովրդական համաձայնագրին», և կարող էին ընդունելի հիմք հանդիսանալ Կարլոսի հետ բանակցությունների համար։

Նոյեմբերի 1-ին բանակային խորհրդի նիստերը վերսկսվեցին։ Եվ մեկեն պարզ դարձավ, որ հաշտեցման քիչ հույս կա։ Այդ ընթացքում բանակով մեկ շրջում էին շոտլանդացիների հետ թագավորի բանակցությունների մասին լուրերը։ Խոսք էր գնում անգամ այն մասին, թե նա պատրաստվում է փախչել, թե նրան օգնություն է առաջարկված, նա պետք է միայն համաձայնի եկեղեցու պրեսբիտերական կառուցվածքին։ Բանակում սկսել էին ժողովներ անել։ Զայներ էին հնչում, թե Կարլոսին չի կարելի պահել Հեմփթոն-Քորթում, որտեղ նա օգտվում է չափազանց լայն ազատությունից։ Նոյեմբերի 1-ին նրա կացարանի պահպանությունն ուժեղացվեց, նրա մերձավորներից շատերին խնդրեցին թողնել պալատը։ Շոտլանդական հավատարմատարները բողոք հայտնեցին։ Վրա էին հասնում տարակուսելի և վտանգավոր ժամանակներ, ամենուրեք՝ բանակում և պառլամենտում, Սիթիում և գյուղական շրջաններում թունդ խմորում էր զգացվում։ Ինչ-որ բան պիտի տեղի ունենար։

Կրոմվելը հազիվ էր բաց արել նիստը, երբ նրա վրա տեղացան պահանջների հեղեղը։ Դրանք բոլորը վերաբերում էին թագավորին և լորդերին։ Նրանց պետք է զրկել վետոյի իրավունքից։ Վիճարկողներից ամենից ծայրահեղները, թվում էր, պատրաստ էին սրի դիմելու։ Բանակը հնազանդությունից դուրս էր գալիս, նրանք բոլորը չափն անցնում էին։

— Վետոյի իրավունքի հարցը,— ասաց նա,— դա պառլամենտի գործն է։ Իսկ ես այժմ պիտի խոսեմ բանակի մասին։ Նրանից մի քանի դեկլարացիա է ստացվել։ Գերագույն հրամանատարության հրամանները ժողովների վերաբերյալ խախտվում են։ Կարգապահություն, զինվորական կարգապահություն՝ ահա թե ինչն է մոռացության տրվել բանակում։ Ես գտնում եմ, որ ոչ մի առանձին անձ, ոչ մի առանձին խումբ բանակում իրավունք չունի գումարել վաշտի կամ գնդի ժողով և ոչ մի չափով չեն կարող բանակն ազատել գլխավոր հրամանատարության հրամաններից։ Այդ ուղին կործանարար է բանակի համար։— Նա բարձրացրեց ձայնը.— Դուք հասկանում եք, որ մենք ինքներս կկրտենք մեր կոկորդը, եթե չենթարկվենք պատերազմի օրենքներին, և դրա համար էլ ես բոլորին առաջարկում եմ զգաստանալ։ Բանակը պետք է զբաղվի իր գործով, պառլամենտը՝ իր, այլապես [illegible] ընդհանրապես պառլամենտ չէ։ Այդ պատճառով էլ հնարավորություն ընձեռենք, որ նա ինքը ուսուցի, թե զեկավարման ինչ-[illegible]խի կարգ կհաստատի անգլիական թագավորության մեջ։

www.a-pdf.com

Այ թե աղմուկ բարձրացավ։ Կրոմվելը նորից զգաց, որ իր վրա նայում են ատելությամբ, ինչպես դավաճանի վրա։ Նա ինքն էլ հասկանում էր, որ գործը պրեսբիտերական պառլամենտի ձեռքը հանձնելու փորձերը ապարդյուն են։ Այդ ժողովը քանի անգամ է իրենց հուսախաբ արել։ Լևելերները չէին ցանկանում զիջել։ Նրանք բոլորը՝ Վայլդմանը, Ռեյնսբորոն, Պեթին, Սեքսբին՝ ասես կապը կտրած լինեին։ Լորդերը չեն կարող օրենսդիրներ լինել։ Թագավորը չպետք է որևէ իրավունք ունենա։

Օրերը հաջորդում էին իրար, բանավեճերի հաջորդականությանն արդեն դժվար էր հետևել, նիստերը վեր էին ածվում միևնույն բնույթի մեղադրանքների, փաստարկումների, վկայակոչումների, համատարած մղձավանջի։

Եվ Կրոմվելը համոզում էր, հաշտեցնում, սպառնում և կրկին համոզում։ Նրա ամենից դյուրահաշտարար խոսքից հետո հանկարծ ոտքի ելավ բոլորին անճանաչ կապիտան Բիշոփը և հայտարարեց.

— Մենք բոլորս այստեղ ջանում ենք խնայել նույն այն Արյունուուշտ Մարդուն և բռնակալության այն հիմքերը, որոնց դեմ աստված երկնքից տվել է այդքան բացահայտ նախանշանակներ։ Ես հավատացած եմ, դա մեզ կործանման կտանի։

Տեղից վեր թռավ ուրախացած Վայլդմանը։ Իհարկե, նա արտահայտեց իր ջերմ հավանությունը այդ Բիշոփին։

— Մի՞թե խելամիտ է և արդարացի,— փորձված հռետորի սահուն հաստատամտությամբ ասում էր նա,— մահվան դատապարտել նրան, ով, ենթարկվելով հրամաններին, պատերազմ է մղում, իսկ հետո խոսել գթասրտության մասին այն մարդու հանդեպ, ով գլխավոր դերակատարն է եղել այդ խաղում, ով եղել է այդ ամենի մեծ նախաձեռնողը։ Միայն ես չէ, որ կարծում եմ, թե թագավորի ու լորդերի պահպանումը անհամատեղելի է ժողովրդի անվտանգության հետ...

Ահա թե ուր հասցրին նրանք... Եվ ետ պահել նրանց անհնար էր։ Նոյեմբերի 4-ին նրանք հայտարարեցին, որ ընտրական իրավունք պիտի ստանան բոլոր քաղաքացիները, բացի ծառաներից և ողորմությամբ ապրող անձանցից։ Նոյեմբերի 5-ին (Կրոմվելն այդ օրը բացակայում էր) նրանք որոշում մտցրին, որ բանակը չի ցանկանում թագավորի հետ նոր բանակցություններ վարել։ Թերթերում գրել էին. «Կրոմվելն ու լևելերները կարող են նույնքան լավ հաշտվել իրար հետ, ինչպես կրակն ու ջուրը։ Մեկի նպատակը ժողովրդապետությունն է, մյուսներինը՝ միապետությունը»։

Այդ ամենն ավելին էր, քան հարկավոր էր։ Նոյեմբերի 8-ին Կրոմվելը ագիտատորներին ու սպաներին հրամայեց անմիջապես վերադառնալ գնդերը և անցնել իրենց անմիջական պարտականությունների կատարմանը։ Խորհրդի նիստերն ընդհատվեցին, «Ժողովրդական համաձայնագիրը» հանձնվեց կոմիտեին,

www.a-pdf.com

որը կազմված էր սոսկ սպաներից։ Բանակի խորհուրդը դադարել էր գոյություն ունենալ։

Սինչ վիճում էին, նախատում էին, իրար մեղադրում էին սպաներն ու ագիտատորները, ինդեպենդենտներն ու լևելերները, մութ գործեր էին նյութում սուրբ կույս Մարիա եկեղեցուց ոչ հեռու, և այդ գործերն ուղղակի առնչություն ունեին այն բանի հետ, ինչի շուրջը վիճաբանություններ էին գնում։ Կարլոսը, որ չգիտես միասլետ էր, թե գերի Հեմպթոն-Քորթում, չէր մտածում անձնատուր լինել, խաղաղ սպասել, մինչև բանակը որոշի իր ճակատագիրը։ Նա, ինչպես մի ժամանակ Մարիա Ստյուարտը, Մենկուսացման մեջ էլ լեցուն էր եռանդով, և այստեղ էլ նրա շուրջը մշտապես սադրանքների ու դավադրությունների ցանց էր գլուսվում։

Այդ պատմության մեջ ամեն ինչ մութ է, և հաղիվ թե երբևէ հաջողվի կռահել այն ամբողջապես։ Իսկ փաստերը հանգեցնում էին հետևյալին։ Օգոստոսին Կրոմվելի հեռավոր ազգականը, որ ասուսնացած էր նրա զարմիկի՝ Հեմպդենի աղջկա հետ, գնդապետ Ռոբերտ Հեմոնդը խնդրեց իր պաշտոնաթողությունը բանակից, այն հիման վրա, որ «բանակը, ըստ երևույթին, որոշել է խախտել արքայի վերաբերյալ իր խոստումները և ինքը չի ուզում մասնակից լինել այդ ուխտադրժությանը»։ Հեմոնդը, դրանից բացի, թագավորական կապելանի ազգականն էր։ Վերջինիս խնդրանքով նա օգոստոսի 31-ին նշանակվեց Ուայթ կղզու պարետ, որը մի խաղաղ անկյուն էր Անգլիայի հարավային ափին։ Սեպտեմբերի 4-ի և 12-ի արանքում Ուայթ կղզի այցելեց Օլիվեր Կրոմվելը։ Նրա այցելության նպատակը անհայտ մնաց։ Նա եռկար զրուցեց Հեմոնդի հետ և դրանից հետո նրա հետ մշտական նամակագրական կապ էր պահպանում։

Նոյեմբերի 11-ին սպաների խորհրդում մայոր Թոմաս Հարիսոնը՝ աղանդավորն ու միստիկը, համեմելով իր խոսքը Հին կտակարանից արված մեջբերումներով, բացահայտորեն հարձակվեց արքայի վրա, անվանեց նրան Արյունռուշտ Մարդ և պահանջեց դատի տալ նրան իր ժողովրդի դեմ հանցավոր գործունեության համար։ Այդ նույն օրը Կրոմվելը Հեմպթոն-Քորթի լարետին, իր զարմիկ Ուոլիին գրեց մի գրություն.

«Թանկագին զարմիկ Ուոլի։ Այստեղ լուրեր են պտտվում ճարին մեծության անձի դեմ մահափորձ պատրաստելու մասին։ Աղաչում եմ ձեզ, հոգ տանեք պահպանությունը ուժեղացնելու մասին, որպեսզի թույլ չտրվի այդպիսի հրեշավոր արարք»։

Ուոլին անմիջապես այդ նամակը ցույց տվեց Թագավորին՝ ոչ թե բանի համար, ինչպես նա բացատրեց, որպեսզի վախեցնի, այլ որպեսզի վստահեցնի նրան սպաների բարի մտադրությունների մասին։

Նոյեմբերի 11-ի գիշերը, պահակության հերթափոխվելուց ոչ

www.a-pdf.com

շատ առաջ, Կարլոսը աննկատ դուրս եկավ պալատի այգու ետևի գոնակից։ Անտառում, պայմանավորված տեղում, նրան սպասում էին Էշբեռնեմը և Բերքլին լավ նժույգներով, և մի քանի ժամ անց նա արդեն հեռու էր Լոնդոնից։ Դեմքը շարֆով փաթաթած, որպեսզի ոչ ոք չճանաչի, նա սուրում էր հարավ, դեպի ծով։

Կարլոսը գնդապետ Ուոլիին թողել էր մի նամակ, որի մեջ հայտնում էր, որ իր փախուստը չի կապված Կրոմվելի նամակի հետ, այլ նողկանքի այն զգացման հետ, որ առաջացնում էր գերու իր վիճակը։ Նա խնդրում էր նաև հոգալ պալատում հարկ եղած կարգ ու կանոնի մասին, իր սիրելի նկարների և կահավորանքի պահպանման համար։ Պերջինը նման էր ծաղրուծանակի։

Կրոմվելը Բաքուերի փախուստի մասին իմացավ հենց նույն գիշերը։ Նրա ուղերձը պառլամենտի տիրոջերին արքայի փախուստի մասին թվագրված է. «Հեմպթոն-Քորթ։ Գիշերվա 12-ը»։

Երկու օր անց հնձյալները հասան Անգլիայի հարավային ափերը։ Էշբեռնեմը և Բերքլին ամեն ինչում ապավինել էին Ուայթ կղզու պարեսպ Ռորերտ Հեմոնդին, հույսը դնելով նրա աջակցության վրա։ Նրանք խնդրեցին թագավորին ապաստան տալ կղզու Քերիսբրուք ամրոցում կամ նավ տալ նրան մայր ցամաք դուրս գալու համար։ Հեմոնդը մեռելի պես գունատվեց, սարսռաց ոչ մարմնով և բացականչեց.

— Օ՜, ջենտլմեններ, դուք կործանեցիք ինձ։

Այնուհետև, փոքր-ինչ ուշքի գալով, անհողդողդ հայտարարեց, թե ստիպված է թագավորին վերցնել հսկողության տակ։ Պառլամենտի հանդեպ հավատարմությունը (թե՞ Կրոմվելի հանդեպ երկյուղը) հաղթեցին անձնական համակրանքին։ Թագավորը դարձավ Քերիսբրուք ամրոցի գերին, սուրհանդակ թռավ դեպի Լոնդոն՝ լուր տանելով պատահածի մասին։

Մի քանի օր անց Կրոմվելը ոտքի ելավ համայնքների պալատում, որպեսզի հաղորդի այն մասին, թե թագավորը ժամանել է Ուայթ կղզին և վստահելի ձեռքում է։ Նա խոսեց այն մասին, թե ինչ հավատարիմ մարդ դուրս եկավ գնդապետ Հեմոնդը, ինչ ջերմեռանդությամբ է պահպանում արքայի անձը։ Նրա զվարթությունը որոշ խորաթափանց մարդկանց մտածել տվեց. «Արդյոք նրա համար չի՞ ուրախացել, որ արքան ակամա ընկել է այնտեղ, որտեղ ինքը Կրոմվելը պետք է ընկներ»։

Իսկապես, Ուայթ կղզում թագավորը հեռու էր և լեյլերներից, որոնք, արի ու տես, պատրաստ էին գործի գցել իրենց սպառնալիքները, և շոտլանդացիներից, որոնք մտորում էին առևանգել նրան։ Նա Կրոմվելի ազգականի ձեռքում էր, և Կրոմվելին էր մնում վճռական խոսքը։ Այսպես էին, համենայն դեպս, մտածում շատ ժամանակակիցներ։

Կրոմվելն ինքն էլ հասկանում էր, որ վճռական խոսքն այժմ մնում էր իրեն։ Նա իր մեջ վիթխարի ուժ էր զգում։ Նոյեմբերի 15-ին յոթ գնդերի ընդհանուր զորատես էր նշանակված Հեր-

www.a-pdf.com

ֆորդշիրում, Ուեր գյուղաքաղաքի մոտ։ Դեռևս Պեթնիում որոշվել էր, որ զորքերի այս ստուգատեսը տեղի կունենա ըստ զորամասերի՝ այդպես ավելի հեշտ է համաձայնության գալ զինվորների հետ։

Գնդերին արդեն հայտնի էր դարձել Կարլոսի փախուստը, բայց թե որտեղ է, ոչ ոք դեռևս չգիտեր։ Բոլոր նավահանգիստներն ու նավակայաններն ուղարկվեցին հատուկ արգելքներ սահմանող հրահանգներ. ոչ մի նավ չպետք է հեռանա Անգլիայի ափից։ Նրան, ով թագավորին թաքցնի իր տանը և այդ մասին չհայտնի պառլամենտին, սպառնում էր մահապատիժ և գույքի բռնագրավում։

Խմորումները բանակում պատրաստ էին վերաճելու խռովության։ Լևելերական պարսավագրերը ձեռքից ձեռք էին անցնում։ Վայլդմանը գրում էր, թե Կրոմվելն ու Այրթոնը դավաճանել են ժողովրդի գործին և պաշտպանում են նրա թշնամիներին։ Լիլբեռնը կոչ էր անում. «Հասեք ներկայիս պառլամենտի մերժրազերծման։ Պնդեք աշխատավարձի վճարման վրա։ Պահանջեցեք եկեղեցական տասանորդի ոչնչացում, մենաշնորհների վերացում, «Ժողովրդական համաձայնագրի» ընդունում։ Բայց, գլխավորը՝ մի վստահեք գեներալներին, քանի որ նրանք խոսքը մեկ են արել պառլամենտի հետ»։ Կրոմվելին տեղեկացրել էին, որ շատ լևելերներ Կարլոսի դեմ այնքան տրամադրված չեն, որքան իր՝ Կրոմվելի դեմ։ Իսկ պառլամենտում խոտակցություն էր գնում, որ Հենրի Մարթենը պատրաստ է լինել երկրորդ Ֆելթոնը, ինչպես սա դաշույնը խրեց Բիքինհեմի սիրտը, այդպես էլ Մարթենն այժմ ծարավի է իր սուրը ներկել Նեսբիի ճակատամարտում հաղթողի արյունով։

Կրոմվելն ու Ֆերֆաքսը ձիեր հեծած գնում էին կողք կողքի, տագնապած լսում էին այն աղմուկը, որ գալիս էր հեռվից, այն կողմից, դեպի ուր գնում էին նրանք։ Երբ նրանք բարձրացան լեռը և նրանց աչքին բացվեց զորքերով ծածկված հարթությունը, նրանք անմիջապես նկատեցին, որ շատ ավելի զինվորներ են ժամանել, քան իրենք սպասում էին։ Յոթ գնդի փոխարեն եկել էր տասը։ Առանց թույլտվության եկել էին Հարիսոնի և Ռոբերտ Լիլբեռնի՝ «ազատածին Ջոնի» եղբոր գնդերը։ Նրանք եկել էին հակառակ գլխավոր հրամանատարության հրահանգի, դա ինքնին խռովություն էր։ Շատերի գլխարկների վրա ճերմակին էր տալիս ինչ-որ բան։ Դա «Ժողովրդական համաձայնագրի» ոգեշնչումով և «Աղատություն Անգլիային, իրավունքներ զինվորներին» դեվիզով թերթիկներ էին։

Մի ինչ-որ հեծյալ առանձնացավ զորքից և սուրաց գեներալներին ընդառաջ։ Կրոմվելը ճանաչեց Ռեյնսբորոյին։ Նրա ողջ տեսքը անկախություն ու վճռականություն էր արտահայտում, գլխարկի վրա սպիտակին էր տալիս թերթիկը, ձեռքին պահել էր

www.a-pdf.com

«Ժողովրդական համաձայնագրի» տեքստը։ Կրոմվելը նշան արեց թիկնապահին, սա ձիով սուրաց հեծյալին ընդառաջ, ձիով հրեց նրան, խլեց թուղթը, թույլ չտվեց մոտենալ հրամանատարությանը։ Գնդերը սկսեցին աղմկել։

Ֆերֆաքսը, հայացք գցելով Կրոմվելի կողմը, շարժեց ձին։ Նրանք միասին մոտեցան առաջին գնդին։ Ֆերֆաքսը հանդարտ, հրամանատարական տոնով արտասանեց մի քանի խոսք։ Նա զինվորներին կոչ արեց վերջ տալ դժգոհություններին, ստորագրել երդումը հրամանատարությանը և զինվորական խորհրդին։ Ամեն ինչ խաղաղ ընթացավ. զինվորները բացականչեցին միահամուռ «ուռա», երդման տեքստը շարքից շարք անցավ։

Երկրորդ, երրորդ, չորրորդ գնդերը ենթարկվեցին նույնքան անտրտունջ։ Հարիսոնի գնդի առաջ խոսել սկսեց Կրոմվելը։ Բարձրացնելով ձայնը, նա խլացրեց լսվող խռովարարական կանչերը. զինվորները փոքր-ինչ աղմկելուց հետո ենթարկվեցին։ Սպիտակ թերթիկները գլխարկների վրայից անհետացան։

Մոտենալով Ռոբերտ Լիլբեռնի գնդին, Կրոմվելը մի այնպիսի թշնամանք զգաց, որ սիրտը վայրկենապես կատաղությամբ լցվեց։ Վերջ հորդորներին։ Եվ իսկապես, ի պատասխան խուպոտ ձայնով նրա տված հրամանի՝ պոկել թերթիկները գլխարկների վրայից և գնալ դեպի տուն, ոչ ոք տեղից չշարժվեց։ Նա իր դիմաց տեսավ ատելությամբ լցված զինվորների դեմքեր, մոայլ մի վճռականություն՝ չզիջել, չենթարկվել։ Եվ դրանք իր զինվորներն էին, իր բանակը։

Նա դուրս քաշեց սուրը։ Չե՞ք ուզում ենթարկվել, որ այդպես է՝ ես ձեզ կստիպեմ։ Նժույգը ծառս եղավ նրա անխնա խթանումից։ Զինվորների ձիերը վախեցած խրտնեցին, շարքերը խոնվեցին, ինչ-որ մեկն ընկավ։ Կրոմվելը ինքնամոռացության մեջ ընկավ։ Նրա սուրն աղմուկով թրատում էր օդը, իսկ մյուս ձեռքը պոկում, պատառոտում, ճմրթում էր սպիտակ թերթիկները։ Ոմանց դեմքին էր խփում, ոմանց գլխարկներն էր թոցնում։

— Բռնեք խառնակիչներին։ Կապկպեցեք դրանց,— գոչում էր նա։— Ես դրանց խռովություն ցույց կտամ։

Ուշքի եկած թիկնապահները նետվեցին նրան օգնության, զինաթափ արին տասնչորս մարդու։ Այնժամ ձեռքերը իրենք իրենց գնացին դեպի գլխարկները, գլուխները մերկացան, թերթիկներն սկսեցին չքանալ։ Զինվորները չգիտես ամաչեցի՞ն իրենց խռովությունից, թե՞ վախեցան հրամանատարի ամեհի կատաղությունից։

Տեղնուտեղը ռազմադաշտային դատ արվեց։ Կարգապահության հարցում Կրոմվելն անողոք էր։ Զորսին դատապարտեցին մահվան, բայց Ֆերֆաքսի երկյուղալի գունատվածությունը, սպաներից մի քանիսի աղաչական հորդորանքները մեղմացրին Կրոմվելին։ Նա սկսել էր սառչել։ Զորսի փոխարեն որոշեցին գնդակահարել մեկին, նրան, ում կընկներ վիճակը։ Զորս զինվոր-

www.a-pdf.com

ները, արդեն առանց համաձգեստի ու գլխարկի, ձեռքերը մեկնեցին ժողովրդին։ Ամենակարճը՝ ճակատագրականը, դուրս քաշեց շարքային Ռիչարդ Առնոլդը։

Զարկեցին թմբուկների փայտիկները, թնդաց համազարկը և ջահել զինվորը ընկավ՝ թավալվելով արյան մեջ։ Կրոմվելն ու Ֆերֆաքսը, թիկնապահները, խոովարար զինվորները, ձերբակալվածները և այն երեքը, որոնց բախտի կամքով հաջողվել էր խուսափել գնդակահարությունից, լուռ նայում էին հողի վրա ջղաձգվող արյունոտ մարմնին։

Թմբկահարությունը լռեց։ Կրոմվելն ու Ֆերֆաքսը շուռ տվին ձիերը, զինվորների շարքերը, ջանալով չնայել նրանց վրա, ովքեր խառնվել էին սպանվածի շուրջը, սկսեցին հեռանալ դաշտից։

Մյուս գնդերի ստուգայցը մի քանի օր հետո անցավ առանց դիպվածների։

Պառլամենտը, լսելով Կրոմվելի հաշվետվությունը Ուորում տեղի ունեցածի մասին, շնորհակալություն հայտնեց նրան։ Եվ միայն Էդմունդ Լեդլոն էր, որ դեմ քվեարկեց։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ VI

ԱՐՔԱՅԱՍՊԱՆԸ

...Հիշյալ Կարլոս Ստյուարտը եղել և հանդիսանում է ոգեշնչողը, հեղինակն ու շարունակողը վերոհիշյալ հակաբնական, դաժան ու արյունալի պատերազմների, և այդ պատճառով նա մեղավոր է մեր ժողովրդի հանդեպ բոլոր դավաճանությունների, սպանությունների, կողոպուտների, հրդեհների, վնասների և աղետների համար, որոնք նյութվել ու իրականացվել են հիշատակված պատերազմների ժամանակ և դրանց հետևանքն են։

Մեղադրական ակտից

Մենք բռնակալին դահընկեց արինք այնպիսի եղանակով, որը գալիք դարերի քրիստոնյաները կհիշեն հարգանքով, իսկ բռնակալները՝ սոսկումով։

Կրոմվել

1. «ՉԱՐԱՂԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԸ»

Ճանապարհը ապրիլյան անձրևներից հետո դեռ խոնավ էր, ձիերը կայտառորեն վազում էին, շնչելով գարնան բուրումնավետ օդը։ Ետևում էին մնացել Լոնդոնի արվարձանների ծղոտե տանիքները։ Ծանր ղինված հեծելազորի սմբակների դոփյունը չէր կարողանում խլացնել թռչունների հրճվագին ժխորը։ 1648 թվականի մայիսի սկիզբն էր։ Վառ արեգակը, ծաղկող հողի թովչանքը, պուրակների թարմ կանաչը մարդու հոգին լցնում էր բերկրանքով ու հույսով։ Բայց ավելի մեծ ուրախություն էր պատճառում այդ համառ ու արընթաց շարժումը դեպի նպատակը, որ հասկանալի էր ու մոտիկ բոլորին՝ գեներալից մինչև հետևակի ամենավերջին նորակոչիկը։ Բանակը պիտի վերջ տա ռոյալիստներին, որոնք խռովություն են բարձրացրել Հարավային Ուելսում, և պատժի դավաճաններին, որոնք անցել են նրանց կողմը։ Երկրորդ քաղաքացիական պատերազմն սկսվում էր։

Լեյտենանտ-գեներալ Օլիվեր Կրոմվելի համար, որն արդեն քանիերորդ անգամն էր իր զորքերը տանում թագավորի կողմնակիցների՝ կավալերների դեմ, դա մի նոր, վիթխարի հոգս էր, բայց և փրկություն։ Երկու տարի անցավ խաղաղության մեջ։ Բայց դա ի՞նչ խաղաղություն էր։ Վերջին ամիսները նա իրեն զգում էր ոնը որ մի հալածական արջ։ Նրան ատում ու կասկածում էին բոլորը, վրա էին տալիս շների ոհմակի պես բոլոր կողմերից և ջանում էին բռնել ամենացավոտ տեղերից։

www.a-pdf.com

Ռոյալիստները բոլոր եղանակներով կրկնում էին Վեսթմինստերում թագավորի դեմ արտասանած նրա դառը խոսքերը և այժմ էլ մեղադրում էին, թե ինքն է ուզում դառնալ թագավոր՝ մի մեղադրանք, որ այնքան հաճախակի դարձավ այնուհետև։ Կծու ոտանավորներ, պարսավագրեր, ծաղրանկարներ, որ արդեն քանի ժամանակ էր, ինչ տարածում էին նրա վրա Լոնդոնում։

Արքա կգա մեզ մի նոր
Եվ ինչպիսի՜ թագավոր,
Ա՜խ, մեր անուշ Օլիվեր, քաջ ու խիզախ Օլիվեր,
Դու կլինես մեզ նվեր...

Այնուհետև, իհարկե, ինչ-որ բան էր ասվում նրա քթի մասին։ Նրանց աղքատիկ սրամտությունը մի գլուխ դառնում էր նրա դեմքի ամենից արտահայտիչ մասի շուրջը. որևէ նոր բան նրանք հորինել չէին կարողանում՝ անընդհատ քթից էին բռնացնում։ Ոչինչ, Կրոմվելն արդեն մարտերում շատ է դրանց քթից բռնել և հիմա էլ խնայելու միտք չունի։ Կավալերների հետ բանն ամենից հեշտն էր. նրանք բացահայտ թշնամի էին և նրանց դեմ պետք էր սրով մարտնչել և անխնա։

Պառլամենտի հետ բանը շատ ավելի բարդ էր։ Պատվավոր պրեսբիտերների շարքերի մեջ, որոնք նստում են Վեսթմինստերում, մերկացած սուսերով չես մտնի աջ ու ձախ։ Այստեղ ստիպված էր լինում հեգնելով երկար ճառեր ասել, աստծուն վկայակոչել, անգամ արցունքներ թափել։ Եվ, միևնույն է, նրանք նրան ատում էին։ Պրեսբիտերները, այդ խարդախ փողամոլները, որոնք դողում են իրենց կապիտալների վրա, վաղուց արդեն պահանջում են թագավորի հետ խոսքերը մեկ անել և նրան վերադարձնել իր գահը, իսկ դրանք մեծամասնություն էին։ Դրանց հանձնարարել էին «անբարեկարգությունները»։ Հունվարի 3-ին, երբ քննարկվում էր թագավորի հրաժարումը՝ պալատի կողմից նրան արված ամենաչափավոր առաջարկությունները ընդունելու, նրանք պատրաստ էին հրաժարվել բոլոր, այնքան դժվարությամբ ձեռք բերված նվաճումներից՝ միայն թե համաձայնություն գային։ Օ՜, որքան էին վրդովվել այն ժամանակ ազնիվ ինդեպենդենտները, կամայականության հակառակորդները։ Իմմանթ թագավորի դեմ՝ դատական պատասխանատվության հարկել նրան պետական հանցագործությունների համար։ Ահա ինչ ահեղ խոսքեր էին հնչում ի լուր ամենքի։ Ինչ-որ մեկը հրացած պահանջեց գահընկեց անել միապետին առհասարակ։ Այրթոնը,* որ մի ժամանակ ուսումնասիրել էր իրավունքը, առհասարակ հայտարարեց, թե քանի որ թագավորը հրաժարվում է ծառայել իր ժողովրդին, ապա ժողովուրդը իրավունք ունի ազատվել նրանից։ Կրոմվելը լսում էր, լսում այդ ամենը և չգիտես ինքն էլ վեր ելավ տեղից։ Նա փորձեց հա-

www.a-pdf.com

մոգել նրանց, առանց ավելորդ ծայրահեղությունների, որ դադարեցնեն բանակցությունները նենգ ու ողորմելի միապետի հետ։ «Թագավորը,— ասաց նա,— մեծ խելքի և մեծ ընդունակությունների տեր է լինում, բայց նա այն աստիճան երկդիմի, այնքան կեղծուպատիր մարդ է, որ նրան պետք չէ ապավինել։ Հավաստելով մեղ դեպի խաղաղությունը ունեցած իր սիրո մասին, նա գաղտնի բանակցություններ է վարում շոտլանդացիների հետ, որպեսզի ժողովրդին ներքաշի նոր պատերազմի վտանգի մեջ։ Հասել է ժամը, երբ պառլամենտը պետք է ինքը ղեկավարի պետությունը...»։

Նրա ճառը ներգործություն ունեցավ. պառլամենտը որոշում կայացրեց դադարեցնել Թագավորի հետ ամեն մի հարաբերություն։ «Ոչ մի վերաբերմունք»՝ այսպես էլ կոչեցին այդ օրինագիծը։ Այդտեղ թվարկվում էին Թագավորի հանցագործությունները. նա խախտել է պառլամենտի իրավունքը, պատերազմ է սկսել իր ժողովրդի դեմ, հրաժարվել է խաղաղության բանակցություններից։ Այդ պատճառով էլ օրինագծի խախտումը պետք է դիտվի որպես պետական դավաճանություն։ Բայց նրանց վրճռականությունը երկար չտևեց։ Կարլոսը նրանց համար մնում էր ամենից առաջ որպես աստծո օծյալ, և նրանք դաղտնորեն դողդողում էին նրա առաջ, նույնիսկ երբ դիմադրություն էին ցույց տալիս նրան։

Գարնան դեմ հպատակության զգացումը համակեց նրանց նոր ուժով։ Բոլորովին վերջերս, ապրիլի 28-ին, նրանք որոշում կայացրին, որ «Անգլիայի կառավարման հիմունքները», այսինքն միապետական սահմանադրությունը, չպետք է փոփոխություն կրի։ Եվ նրանք վերացրին սեփական «Ոչ մի վերաբերմունք» օրինագիծը։ Ընդհակառակը, որոշում ընդունեցին «նորին մեծության» հետ բանակցությունները վերսկսելու մասին։

Նրանք բանակից էին վախենում ամենից շատ և ջանում էին վնաս տալ նրան, ինչով որ կարող էին։ Մայիսի 2-ին նրանք հրատարակեցին «Օրինագիծ հերետիկոսությունն ու աստվածանարգումը ճնշելու մասին», որտեղ ասված էր, թե մահվան կդատապարտվի յուրաքանչյուր ոք, ով ժխտի ուսմունքը Երրորդության մասին, Քրիստոսի աստվածային բնույթի մասին, սուրբ գրքի աստվածաներշնչվածության մասին, հարության և ահեղ դատաստանի մասին։ Նրանք հիանալի գիտեին, թե բանակում որքան տարածված էին ամեն տեսակի աղանդներն ու հերետիկոսությունները և ուզում էին նրան զգալ տալ իրենց ուժը։ Բայց դա դեռ քիչ էր։ Նրանք միջոցներ էին որոնում առհասարակ արձակելու բանակը՝ հանրապետության հույսերի պատվարը։ Նրանք սկզբում համառորեն հրաժարվում էին տալ բանակի ոռճիկը։ Անգամ նրա, գեներալ-լեյտենանտի և «երկաթակողների» ճանաչված առաջնորդի (թեպետ ձևականորեն գլխավոր հրամանատարը մնում էր Ֆերֆաքսը) օրական հասանելիքը չորսից

www.a-pdf.com

իջեցրել էին երեք ֆունտի։ Կրոմվելը նրանց պատասխանեց նրանով, որ «հանուն ընդհանուր գործի» զոհաբերեց հինգ հազար ֆունտ և հրաժարվեց Իռլանդիայի համար իրեն արվելիք գումարից։ Ի տարբերություն նրանց, Կրոմվելը միանգամայն անտարբեր էր դեպի փողը։ Բայց գաղտնի իրազեկիչները կրկին ու կրկին զեկուցում էին նրան, որ պրեսբիտերները պառլամենտում միայն հարմար առիթի են սպասում, որպեսզի մեղադրեն նրան պետությանը դավաճանելու մեջ, ընդմիշտ զրկեն բոլոր պաշտոններից և բանակում ունեցած ազդեցությունից։ Հենց այդ ժամանակ էլ նա իմացավ իր նկատմամբ նախապատրաստվող մահափորձի մասին։

Պառլամենտական պրեսբիտերներին և Սիթիի «հաստագլուխներին» կարելի է հասկանալ. ռոյալիստները վերջին ժամանակներս հարձակվում էին բոլոր կողմերից։ Ուայթ կղզում նրանք փորձեցին ուժով, զինված ամբոխ հավաքելով արքային ազատել գնդանից։ Մարտի 27-ին, Կարլոսի թագադրման տարեդարձի օրը, նրանք Լոնդոնի փողոցներում բացեիբաց խմում էին թագավորի կենացը։ Եվ պուրիտանական համեստ հագուստով անցորդներին ստիպում էին նույնն անել։ Ոմն մսագործ, ասում են, սպառնացել է ցուլի մսի պես փրթել, կտոր-կտոր անել թագավորի կապիտան Հեմոնդին։ Ապրիլի 9-ին Լոնդոնի խաժամուժը հրազենով, տեգերով, դագանակներով զինված խռնվեց Ուայթհոլի շուրջը, գոչելով «Կեցցե Կարլոս արքան», «Աստված և արքա»։ Տեսնո՞ւմ եք, ի կատարումն պառլամենտական հրահանգի նրանց թույլ չէին տվել. աստծո օրը խմել և գնդակ գլորել։ Հարկ եղավ դրանց դեմ հանել նշանավոր մարտական հեծելազորը, որն արժանի էր ավելի տեղին օգտագործման։ Այրթոնը՝ փեսան ու հավատարիմ զինակիցը, սեփական ձեռքով սպանեց նրանց առաջնորդին ու ցրեց ամբոխը։ Բայց նրանք գլուխ էին բարձրացնում ամբողջ երկրով մեկ։ Լուրեր էին գալիս Ուիլթշիրում տեղի ունեցող խռովությունների մասին, այն մասին, որ Քենթում գնդակախաղը ռոյալիստական լոզունգների տակ վերածվել է աղմկալի իրարանցման, այն մասին, որ թագավորի երկրորդ որդին՝ Յորքի պատանի հերցոգը, փախել է կալանատեղից, Նորիչի գրավման մասին, Իռլանդիայում հերցոգ Օրմանդի շուրջը համախմբվելու մասին...

Բայց ամենից ավելի նրան անհանգստացնում էր բանակը։ Նրա զավակն ու հենարանը, նրա հպարտությունը նույնպես, կարծես թե, պատրաստ էր խռովություն բարձրացնելու իր հրամանատարի դեմ։ Գժտություն սերմանողները հավասարարներն էին՝ լևելերները, ինչպես անվանում էին դրանց։ Բավական չէ, որ նրանք պահանջում էին դատի տալ թագավորին և կառավարումը հանձնել միայն մեկ՝ համայնքների պալատին (լսվա՞ծ բան է), նրանք չէին ցանկանում լսել իրենց սպաներին։ Հենց

www.a-pdf.com

իրեն՝ Կրոմվելին, ոչ այնքան վաղուց, անցած աշնանը դավաճան հայտարարեցին թագավորի հետ հաշտվելու փորձի համար։

Նա փորձել էր մի անգամ էլ հաշտվել նրանց հետ Քինգսթրիթի վրա գտնվող իր տունը ճաշի հրավիրելով նրանց՝ առաջատար սպաների և պառլամենտում ինդեպենդենտների առաջնորդների հետ։ Եղիսաբեթն այդ օրը բավականին շարշարվեց։ Նրա տնարարական շնորհները բարձր էին ամեն տեսակ ջուվենտներից. ճաշկերույթը փառահեղ ստացվեց։ Երբ առաջին քաղցի կգացումը մեղմացավ, խոսքը կրկին դարձավ կառավարման ձևին։ Լեդլոն, Վենը, Հեթչինսոնը, Կեղլրիդը բացեիրաց հայտարարեցին, թե իրենք դեմ են միապետությանը, թե պետք է արքային պատասխանատվության կանչել թափված արյան համար, և սկսեցին պահանջել, որ Կրոմվելն էլ անկեղծորեն խոստովանի իր հայացքները...

Միապետի դե՞մ... Ախր նրանք հասկանո՞ւմ են, թե ինչ են ասում։ Կրոմվելը մանկուց գիտեր, որ կառավարման միապետական եղանակը լավագույնս համապատասխանում է ընդհանուր աշխարհակարգին։ Ինչպես երկնքում միակ տնօրենն աստվածն է, այնպես էլ երկրի վրա, պետության մեջ, պետք է ղեկավարի մեն-մենակ թագավորը՝ աստծո օծյալը։

Նա շուտ ու մուտ էր տալիս, խուսափում և վերջապես, պատին սեղմված՝ անակնկալ ընդհատեց խոսակցությունը. վերցրեց բարձը և նետեց Լեդլոյի գլխին, ապա դուրս վազեց սանդուղքներով։ Լեդլոն էլ բարձը նրա ետևից շպրտեց և նա համարյա թավալգլոր ներքև գլորվեց։ Նա երբեք տեսաբան չի եղել և հանրապետականների վերացական սխեմաները, ազատության, հավասարության բնական իրավունքի մասին նրանց խոսքերը չէին հրապուրում նրան, այլ միայն զզաստացնում էին։ Իսկ սրանց կատաղեցնում էր նրա անվճռականությունը։

Եվ ահա, երբ արդեն ամեն ինչ, թվում էր, պիտի շուտ գար նրա դեմ և ստիպված պիտի լիներ ծայրահեղ հլք փնտրել՝ ոչնչացնել պառլամենտը և ամբողջ իշխանությունը հանձնել բանակի՞ն, անակնկալ հիվանդանա՞լ, փախչել մայր ցամա՞ք,— միանգամից երեք կողմից բռնկվեց քաղաքացիական երկրորդ պատերազմը և նա փրկվեց։

Ապրիլին լուր եկավ, թե Հարավային Ուելսում խռովություն են բարձրացրել գնդապետ Լոգանի ջոկատները։ Խռովարարները բարձրացրել են թագավորական դրոշը և գնացել Փեմբրոքի ամրոցի մոտ միանալու Փոյերի գնդերին։ Փոյերը, այդ ընդդիմադիրն ու հարբեցողը, դեռ փետրվարին հրաժարվեց ծառայել պառլամենտին, մինչև որ իրեն և իր կայազորի ոռճիկը վճարեին։ Շուտով ողջ Փեմբրոքշիրը բռնկվեց խռովությամբ։

Դա դեռ քիչ էր։ Մայիսի 2-ին Լոնդոնում հայտնի դարձավ, որ հինգ օր առաջ շոտլանդացիները, որոնց առաջնորդն էր հեր-

www.a-pdf.com

ցոգ Համիլտոնը, իրենց զորքերը մոտեցրել են սահմանին։ Սըր Մարմադյուկ Լանգդեյլը, անգլիական ռոյալիստների գլխավորներից մեկը, գրավել է Թերվիքը, իսկ այնուհետև Քարլայլը։ Անգլիայի վրա հյուսիսից հարձակվելու համար դարպասները բաց էին։

Կրոմվելը գիտեր շոտլանդացիների գաղտնի բանակցությունների մասին թագավորի՝ Ուայթ կղզում Քերիսբրուքյան ամրոցի այդ կալանավորի հետ։ Զուր չէր, որ նա աշխույժ նամակագրություն էր պահպանում իր եղբորորդու՝ Հեմոնդի հետ։ Դեկտեմբերին շոտլանդացի լորդերը պայմանագիր կնքեցին Կարլոսի հետ, ուր տեքստը անագի մեջ փաթաթված, գաղտնի թաղեցին պարտեզում։ Կարլոսը համաձայնում է պրեսբիտերական եկեղեցական կառուցվածք երեք տարով հաստատել Անգլիայում և ուրիշ շատ զիջումներ էր անում շոտլանդացիներին, իսկ սրանք էլ խոստանում էին զենքի ուժով նրան՝ վերադարձնել իր թագը։ Ապրիլին շոտլանդացիները նյութեցին թագավորին փախցնելու մի նոր դավադրություն։ Այժմ՝ ապրիլի 26-ին, նրանք պառլամենտին վերջնագիր ուղարկեցին, պահանջելով Կովենանտի պարտադիր ներդրում Անգլիայի պետական պրեսբիտերական եկեղեցու հիմքում, պուրիտանական ամեն տեսակի կրոնական հոսանքների արգելում, «աղանդավորների» բանակի ցրում և պատվավոր բանակցությունների վերսկսում թագավորի հետ։ Ավելի համարձակ պահանջներ դժվար էր մտածել։

Բայց պառլամենտական մեծամասնության վախկոտությունը [illegible] ման չուներ։ Ո՞ւր էր կորել հեղափոխության առաջին տարիների նոանց մարտական ոգին։ Նրանք անմիջապես հլու պատասխանեցին. այո՛, իրենք համաձայն են չփոխել Անգլիայի կառուցվածքը թագավորի, լորդերի և համայնքների միջոցով։ Նրանք համաձայն են պաշտպանել Կովենանտը և մի ավորվել շոտլանդացիների հետ, որպեսզի առաջարկեն թագավորին,— արդեն լիակատար անգամ,— իրենց հին պայմանները։

[illegible] արդեն շափից դուրս էր։ Ապրիլի վեցին Կրոմվելը թողնելով Լոնդոնը և հայտնվեց բանակի շտաբում՝ Վինձորում։ Բանտարկյալներից և ոչ պաշտոնական դռուցներից հետո [illegible] ների խորհրդակցություն գումարվեց։ Ներկա էին հրամանատարները, ինդեպենդենտները, լևելերական ագիտատորները, [illegible] միջոցների կողմնակիցները։ Երեք օր անցավ [illegible] ության, աղոթքների և քաղաքական վիճաբանությունների մեջ։ Թագավորն ու նրա կամակատարները հորից ղենք են [illegible] ընդդեմ պառլամենտական բանակի։ Ներկաների [illegible] դա հրեշավոր հանցագործություն է։

Հունիսի 1-ին միահամուռ կերպով «Կարլոս Ստյուարտը, Արքա [illegible] Մարդը, պետք է պատասխանատվության կանչվի իր [illegible] արյան համար և ծանրագույն հանցագործությունների համար ընդդեմ աստծո և ժողովրդի»։ Մայիսի 5-ին բանակի

www.a-pdf.com

խորհուրդը որոշում կայացրեց, որ «ոչ սույն թագավորը և ոչ էլ նրա հետնորդներից որևէ մեկը չեն լինի Անգլիայի թագավոր»։

Ահա արդեն մի քանի օր է, Կրոմվելն արշավում է դեպի արևմուտք, դեպի վայրի Ուելս, որի հողերը, ի դեպ, վերջերս, նրան պարգև է տվել համայնքների պալատը։ Ճանապարհին նա իմացավ, որ ռոյալիստական խռովության ևս մի օջախ է բռնկվել կենտրոնական կոմսություններում, որոնք միշտ հավատարիմ են եղել պառլամենտին։ Մայիսի 4-ին Էսեքսի բնակիչները պահանջեցին թագավորի հետ բանակցությունների վերսկսում և բանակի ցրում։ Մայիսի 16-ին յոթ-ութ հարյուր մարդ Սերրիի կոմսությունից եկել հավաքվել էին Լոնդոնում։ Նրանք ցանկանում էին թագավորին վերադարձնել Ուայթհոլ և լիակատար իշխանություն տալ։ Պառլամենտական պահակախումբը չուզեցավ ներս թողնել նրանց, և կռվի մեջ սպանվեց մի քանի մարդ։ Վերադարձածները ապստամբություն էին բարձրացրել, գրավել Սենգվիչը, Դուվրը, Ռոչեսթերը։ Ի հավելումն դրա՝ խռովություն է բարձրացրել Կենթի առափնյա նավատորմը։ Հարավային և արևելյան կոմսությունների խռովությունները ճնշելու համար այստեղ է ժամանել ինքը՝ գլխավոր հրամանատար Ֆերֆաքսը։ Դեպի Հյուսիս են ուղարկել քսանիննամյա հմուտ գեներալ Լամբերթին։ Դա տագնապալի լուր էր։

Եվ, այնուամենայնիվ, նա գերազանց տրամադրության մեջ էր։ Հենց վերջերս, ապրիլի 25-ին, լրացել էր նրա քառասունին տարին, բայց նա առույգ էր, կենսալի և ուրախ էր թշնամու հետ առաջիկա հանդիպման համար։ Նա թեթև էր ձիավարում, նրա պիրկ մարմինը հիանալի նստում էր թամբի վրա։ Տարիների հետ նա ավելի ու ավելի էր նմանվում մորը. մսալի այտերը, նկատելի ծալքը կղակի տակ, լայներես, ոչ գեղեցիկ, խելացի։ Սակայն, ի տարբերություն մայրական դիմանկարների, այդ դեմքը շատ խիստ էր, հայացքը ծանր էր և հոնքերի միջև երկու շհարթվող կնճիռներ էին գոյացել հոգսերից ու խորը, ծանր մտածմունքներից։

Նորից զգում էր, որ իրեն նախանշված էր կատարելու մեծ առաքելություն։ Նա հասկանում էր պառլամենտական ճամբարի առավելությունները. միասնականությունը արյունռուշտ Կարլոսի դեմ մղվող պայքարում, հավատի միասնությունը, սեփական գործի իրավացիության գիտակցությունը և, վերջապես, ազգային միասնությունը։ Այնինչ դրա դեմ հանդես էին գալիս անջատ-անջատ և իրար թշնամացած ուժեր. իռլանդացի կաթոլիկներ, ուելսցի անգլիկաններ, շոտլանդացի պրեսբիտերներ, անգլիացի ռոյալիստներ, որոնք իրար ատում էին և կասկածում միմյանց։

Մայիսի 8-ի առավոտյան, Գլոսթերից. երկու մղոն այս կողմ, Կրոմվելը կանգնեցրեց զորքը, որպեսզի զորատես անց-

www.a-pdf.com

կացնի։ Մոտավորապես վեցուկես հաղար մարդ՝ հեծյալ և հետևակ, շարվել էին նրա առաջ լայնատարած հովտում։ Շարքերում կանգնած էին նրա սաներն ու ընկերները՝ Գրայդը, Իվերը, Օքին, Հորթոնը։ Այգաբացի արեգակը փայլին էր տալիս հրացանների փողերին, հետևակի թեթև զրահների վրա, դրագունների սաղավարտներին։ Նրանք՝ նրա զինվորները, հիանալի զինված էին. նա չուներ միայն պաշարողական ծանր հրետանի, դումակը հետո էր ժամանելու։

Կրոմվելը խթանեց ձիուն և մոտեցավ առաջավոր ջոկատին.

— Զինվորնե՛ր,— գոչեց նա ու բավականությամբ նկատեց, թե ինչպես վայրկենաբար հավասարվեցին և լռեցին շարքերը։— Ես շատ անգամ կյանքս վտանգել եմ ձեզ հետ միասին և դուք էլ Ինձ՝ ինձ հետ միասին։ Մենք կռվել ենք մեր երկրի ընդհանուր թշնամու դեմ և շատ ավելի հզոր ուժերի դեմ, քան ներկայումս։ Եվ դրա համար եկեք օգնության կանչենք մեր վճռականությունը և մի ընտրեենք նույն այն խիզախությամբ ու հավատարմությամբ, որպես մարտնչել ենք միշտ։ Միասին հաղթե՛նք կամ մեռնե՛նք միասին։

Սաղավարտներն օդ բարձրացան, միահամուռ «ուռռա» եղավ նրան պատասխան։ Վետերաններ Մարսթոն-Մուրը և Նեսբին՝ այդ «երկաթակողները», բարձր գոչյուններով արտահայտեցին իրենց նվիրվածությունը։ Կռվի դաշտում նրանք առանց երկմտելու պատրաստ կլինեին զոհել իրենց, կողք կողքի մարտնչել վերջին հրամանատարի հետ։ Մի զգացումով, որ նման էր զղջումի, նա հիշեց Ուերի թմբուկների զարկերը, արյունաշաղախ Առնդելի վերջին ջղաձգումները։

Փեմբրոքի պաշարումը երկարում էր։ Հնամենի ամրոցը, որ խմնադրվել էր դեռևս նորմանական նվաճումների ժամանակներից, իսկապես անառիկ էր։ Նա մի նեղ հրվանդանի վրա էր, որ խորը խրվում էր ծովի մեջ։ Մակընթացության ժամանակ ալիքները ճողփում էին նրա հենց պատերի մոտ, որոնք վեր էին բարձրանում մինչև 75 ֆուտ։ Ցամաքից նրան բաժանում էր մի խոր անդունդ։ Պատերի լայնքը հասնում էր քսան ֆուտի, բայց գլխավերևում՝ ամրոցը հիանալի մատակարարվում էր խմելու ջրով. մի աղբյուրի շնորհի տակ, որի վրա այն հիմնված էր, կար մի քարանձավ ու նրա մեջ, խորքում՝ աղբյուր։ Դրանից բացի, քաղաքացիները խողովակով հասնում էր այստեղ։ Ամրոցը պաշտպանում էին պառլամենտի մոտ երեք հարյուր զինվորներ՝ ծեր ցիտադելի փոքրերի և մայոր-գեներալ Լոդարնի գլխավորությամբ։ Դրանք գիտեին, որ եթե ամրոցը ընկնի, իրենց՝ ռեներգատներին, իրավունքյուն չկա։ Հուսահատ վճռականությունը և օգնության ուրիշ ծովից կորով էր հաղորդում նրանց։

Ա՛խ, շրջապատումը չնախատեսված կերպով երկարում էր, և Կրոմվելի վստահությամբ առլեցուն կայտառ դեկույցները ամ-

www.a-pdf.com

բոցի շուտափույթ անկման մասին, դուրս եկան, ավաղ, դատարկ խոսքեր։ Նրա ջոկատների վիճակը շատ ավելի ծանր էր, քան նա կուզենար խոստովանել։ Նրանց չէր բավականացնում ամենաանհրաժեշտ բաները։ Գումակը ծանր հրետանիով լուսել, մնացել էր ճանապարհին ինչ-որ տեղ, իսկ թեթև փոքր տրամաչափի կուլերիններրը կարող էին ամենաշատը ավերել մի քանի աղորիք և վառել մի քանի տուն, ոչ ավելին։ Պաշարման սանդուղքները դուրս եկան ոչ պիտանի. դրանք չափազանց կարճ էին, դրանցով գրոհի գնալը անհույսալի է։

Նրա զինվորները նեղ կացության մեջ էին։ Ասում էին, որ պաշարվածներն արդեն ուտում են իրենց ձիերին, բայց և պաշարողների վիճակն էլ մի բան չէր։ Նրանք գոնե ապրում էին տներում, ծածկի տակ, իսկ այստեղ ստիպված էին երկրորդ ամիսը կանգնել շարժական ճամբարում, վրանների տակ, որոնք խոնավացել էին հաճախակի անձրևներից։ Մթերքի բանն ավելի վատ էր։ Երկրում չորս բոլորը աղքատություն էր, իսկ վերջին անբերրի տարիները առավել ևս ամայացրին այն։ Բնակիչները միայն հաց էին բերում, և այն էլ չափից դուրս բարձր գներով։ Իսկ որտեղի՞ց փող ճարել, եթե ռոճիկը Լոնդոնից դարձյալ ուշանում էր։

Շուրջը, մերթ այստեղ, մերթ այնտեղ բռնկվում էին խռովություններ, լուրեր էին պտտվում ինչ-որ դավադրության մասին...

Վերջապես հուլիսի 4-ին ժամանեցին երկար սպասված ծանր հրետանիով նավերը և պաշարումն ավելի հեշտացավ։ Հրանոթները խփում էին մի կետի, խուլ զարկերից գետինը ցնցվում էր և փախչում ոտքի տակից, մուգ կետը պարսպապատի վրա քանի գնում լայնանում էր։ Ամրոցը դատապարտված էր։ Այդ ժամանակ Կրոմվելի մոտ հայտնվեց մի անծանոթ, որն իրեն անվանում էր Էդմունդ։ Ինքը գիտե, թե որտեղով է անցնում այն խողովակը, որով բերդ է գնում խմելու ջուրը, ասաց նա։ Խողովակը փակվեց, և հուլիսի 10-ին Կրոմվելը ուժասպառ կայազորի հրամանատարին վերջնագիր ուղարկեց։ «Առանց ավելորդ սպառնալիքների,— *գրում էր նա,*— ես պետք է ձեզ ասեմ, որ եթե իմ առաջարկությունը մերժվի և այդպիսով դժբախտություն և կործանում բերեք խեղճ զինվորներին և ձեր մարդկանց, ես կիմանամ, թե ում օձիքը պետք է բռնել թափված արյան համար...»։

Հաջորդ օրը ամրոցը հանձնվեց պառլամենտի ողորմածությանը։

Այս ինչ էր կատարվում եղանակի հետ։ Ցոլում է, երկնային ուժերը վերջնականապես դատապարտել են խեղճ Անգլիայի վրա և ուղարկել են ցրտաշունչ անձրևներ, անձրևախառն հողմեր։ Ամառը այդպես էլ չի եկել, թեպետև արդեն հուլիսն է։ Այդպիսի եղանակին, դեխի ու խոնավության մեջ, Կրոմվելն իր զինվորներով գնում էր հյուսիս։ Գլխավոր վտանգը այժմ այդ կողմից

www.a-pdf.com

էր գալիս։ Դեռ հունիսի 1-ին ռոյալիստների ձեռքն էր անցել Պոնտեֆրակտը՝ մի կարևորագույն ստրատեգիական կետ լավ ամրացված ամրոցով։ Խոսակցություններ էին ծագել Նորհեմփթոնշիրում և Լինկոլնշիրում։ Բայց ամենից սարսափելի հարվածը վրա հասավ հուլիսի 8-ին. դուքս Համիլտոնը շոտլանդական 20 հազարանոց բանակով անցավ սահմանը։ Դա արդեն օտարերկրյա ներխուժում էր։

Լամբերթը, չնայած իր բոլոր ունակություններին, չէր կարող դրա հազար մարդով դիմադրել ու սկսեց աստիճանաբար նահանջել դեպի Հարավ, համալրման։ Կրոմվելն ստիպված էր օգնության շտապել։ Չէր կարելի թույլ տալ, որ այն մեծ գործը, որի համար վեց տարի շարունակ այնպես կատաղությամբ մարտնչել էին, ընկներ շոտլանդացիների հարվածների տակ։ Չէ՞ որ, եթե նրանք հաղթանակեն, թագավորը, անկասկած, կվերականգնվի իր գահին, իսկ անգլիական ազգը կստրկացվի։

Կրոմվելը հեծելազորը առաջ ուղարկեց, իսկ ինքը գնաց հետևակի հետ։ Նրա ետևից ցեխ հունցելով քայլում էին քաղցած, հոգնած պաշարումից տանջահար, դադար չառած երեք հազար մարդ։ Ամենից վատը կոշիկների բանն էր. գրեթե բոլորի ոտնամանները մաշվել էին, գուլպաները ծակոտվել. «Իմ խեղճ, հոգնատանջ զինվորները,— զեկուցագրում գրում է Կրոմվելը,— հասան մինչև Գլոսթեր։ Դեպի հյուսիս երկար արշավի համար նրանք ծայրահեղ կարիք ունեն ոտնամանների և գուլպաների»։ Սոճիկը այդպես էլ չէր ստացվում։ Զարանենգ ռոյալիստական խուցիկները պնդում էին, թե նրա հետևակը խրվել է ճահճերում՝ Մոնմութի մոտ և խոովություն բարձրացրել, պահանջելով փող։ «Չէ՞ որ առանց փողի նրանք, ինչպես և նրանց սպաները, չեն կարող մարդ լինելուց կդադարեն,— սրախոսում էին ռոյալիստները։— Նրանք ամենևին էլ չեն ուզում հյուսիս գնալ և դրա համարժան Նոլի քիթն էլ հոտ նայում է արևելք, դեպի Վեսթմինստեր»։

Դրանք կեղծ լուրեր էին։ Կրոմվելի զինվորները, սոված, հոգնած բաճկոններով, զուրկ ամենաանհրաժեշտ բաներից, գնում էին գնում սրբորեն հավատալով իրենց գործի իրավացիությանը։ Նրանք գիտակցում էին, որ իրենց գործողությունից է կախված Անգլիայի ճակատագիրը, հեղափոխության ճակատագիրը։ Դե, Կրոմվելն ինքն էլ հասկանում էր, որ, ինչ գնով էլ լինի, պետք էր շահել ճակատամարտը կամ կործանվել։ Հոկտեմբերի 11-ին Լիդչի մոտ նրա բանակը միացավ Լամբերթի զորքերին։ Կրոմվելը հաշվարկ արեց, որ իր տրամադրության տակ կա 9 հազար մարդ, իսկ շոտլանդացիների ձեռքի տակ (Ինվերաոյալ Մոնրոյի իռլանդական բանակը և անգլիական գնդերը)՝ 24 հազար։ Նա, իհարկե, չափազանցնում էր՝ նրանց տարբերությունը այնքան էլ մեծ չէր։ Դրանից բացի, շոտլանդական զորքերը ոչ մի չափով չէր կարելի համեմա-

www.a-pdf.com

տել նրա «երկաթակողների» հետ։ Դրանց մեծամասնությունը նորակոչիկներ էին. շատերը չէին կարողանում տիրապետել տեգին կամ իրենց վատ էին պահում թամբի վրա։ Զինվածությունն էլ հեռու էր լավ համարվելուց։ Ձիերը չէին հերիքում։ Մատակարարումը վատ էր, և զինվորները կողոպտում էին տեղական բնակչությանը, մի բան, որ Կրոմվելը երբեք թույլ չէր տալիս։ Գեներալները կռվում էին իրար հետ, իսկ նրանց գլխավոր հրամանատարը՝ Համիլտոնների հնամենի տոհմի որդին, միանգամայն զուրկ էր զորքեր ղեկավարելու ունակությունից։

Մինչ Կրոմվելն աճապարում էր դեպի Հյուսիս, որպեսզի ճակատամարտ տա Անգլիայի անկախության թշնամիների դեմ, պրեսբիտերները պառլամենտում շարունակում էին հյուսել իրենց չարամիտ բանսարկությունները։ Մարտական հաղթանակներով թևավորված Կրոմվելը, հաղթական բանակի գլուխն անցած, նրանց ներկայանում էր իբրև շատ ավելի վտանգավոր մի ուժ, քան ինքը թագավորը։ Մտադրվել էին ոչնչացնել նրան։ Օգոստոսի 2-ին ոմն Հանթինգդոն, հենց իր՝ Կրոմվելի սեփական գնդի մի մայոր, պառլամենտ ներկայացավ մատնագրով։ Նա լեյտենանտ-գեներալին մեղադրում էր դավաճանության մեջ։ Կատակ բան չէր, Կրոմվելը, ասված էր թղթում, մասնավոր բանակցություններ է վարում արքայի հետ, իբրև թե խաղաղության հասնելու համար։ Մինչդեռ իրականում նա պատրաստվում էր կործանել նորին մեծությանը և ողջ արքայական ընտանիքը, տապալել պառլամենտը և կանգնել իշխանության գլուխ որպես միանձնյա տիրակալ։

Լորդերն այս կոպիտ զրպարտությունն ընդունեցին հույժ բարյացակամորեն։ Համայնքների պալատում ինչ-որ մեկը նույնպես դեմ չէր ընթացք տալ դրան։ Բայց այ քեզ փորձանք. համաձայն սովորության մատնագիրը պետք է բարձրաձայն ընթերցվեր պալատում նրա անդամներից որևէ մեկի կողմից, միայն այն ժամանակ համայնքները կարող էին ձեռնամուխ լինել քննարկմանը։ Սակայն այդպիսի իգիթ պալատում չգտնվեց։ Ոչ ոք չկարողացավ, սիրտ չարեց հրապարակով դատապարտել Կրոմվելին։ Մեծ մարտիկը վտանգավոր էր թվում անգամ հեռվից։ Մատնությունը այդպես էլ հրապարակով չլսվեց Վեսթմինստերում։ Փոխարենը Հանթինգդոնին թույլատրեցին տպագրել այն, և զրպարտանքը արագորեն տարածվեց։

Հանթինգդոնի հայտնվելու հաջորդ օրը պառլամենտը արեց ևս մի քայլ։ Բնավ չայրվելով լևելերների սիրուց, պրեսբիտերական պարագլուխները նրանց նկատմամբ հանդես բերին անսպասելի սիրալիրություն։ Օգոստոսի 3-ին նրանք բանտից ազատեցին վերջերս Կրոմվելին մեղադրող, լևելերների գլխավոր Ջոն Լիլբեռնին, որի սուր լեզուն և անեռկյուղ գրիչը հայտնի էր ողջ Անգլիային։ Այդ նա էր, որ մի տարի առաջ չվախեցավ Կրոմվե-

www.a-pdf.com

[illegible] մի դադրել դավաճանության մեջ։ Այժմ նրանք հույս ունեին, [illegible] Միրլեանը կվերսկսի իր հարձակումները։

Բայց նրանք սխալվեցին իրենց հաշիվների մեջ։ Ագնիլ Ջոնը [illegible] կացավ իր երբեմնի թշնամու թիկունքը դանակ խփել։ Ընդ[illegible]առակը, ի մեծ զարմանս պրեսբիտերների, նա իրեն հատուկ [illegible] ուղղամտությամբ հայտարարեց, թե պաշտպանում է լեյտե[illegible] գեներալին։ Նա նամակ գրեց Կրոմվելին. «Ես չեմ հրա[illegible]վում ոչ իմ նախկին համոզմունքներից, հանուն որոնց ես [illegible] պատրաստ եմ ենթարկել կյանքս, ոչ ձեզանից, եթե դուք լինե[illegible] եր այն, ինչ պատշաճ է որ լինեք... Ես կարող էի փոխհա[illegible]տել ձեզ, բայց չստորացա մինչև այդ աստիճան, մանավանդ [illegible] իմացա, որ դուք հիմա նեղն եք, և հավատացնում եմ ձեզ, [illegible] ես երբևէ ձեռք բարձրացնեմ ձեզ վրա, ապա դա կպատահի [illegible] այն դեպքում, երբ դուք հուշակավոր դառնաք և շեղվեք [illegible]ության ու արդարության ուղուց։ Բայց քանի դեռ դուք [illegible]խրան ու անաչառորեն գնում եք այդ ուղիներով, ես ձերն եմ [illegible] արյանս վերջին կաթիլը»։

Միայն անակնկալի բերելով թշնամուն, Կրոմվելը կարող էր [illegible]ամանակն ապահովել։ Նրա առաջ կար երկու ուղի. կամ հա[illegible]ամայն ափով գնալ Ռիբլա և հարձակվել Համիլտոնի վրա հա[illegible]ից՝ փակելով նրա ճանապարհը դեպի Լոնդոն և ստիպելով [illegible] դառնալ Շոտլանդիա, կամ շարժվելով հյուսիսից, [illegible]ամուն ղրկել դեպի հայրենիք նահանջելու հնարավորությու[illegible]։ Երկրորդ ուղին բավականաչափ վտանգավոր էր՝ անհաջո[illegible]ության դեպքում ճանապարհը դեպի Լոնդոն բաց կլիներ շոտ[illegible]յացիների առաջ։ Բայց փոխարենը՝ հաղթանակը կնշանակեր [illegible]ական բնակչությամբ շրջապատված շոտլանդական բա[illegible]կի լիակատար ջախջախում։ Կրոմվելն ընտրեց երկրորդը։

Սակայն մառախուղը կախվել էր հարթավայրի վրա, մանրիկ [illegible] մաղվում էր ցանկապատված դաշտի վրա, երբ օգոս[illegible]ի 17-ի արշալույսին նա հարձակվելու հրաման տվեց։ Լանգ[illegible]ի դինվորները, որոնք տեղավորված էին ցանկապատերի միջև [illegible] վրաններում (նախօրյակին նրանք չափչփում էին ողջ [illegible]՝ ավար փնտրելով), դեռևս ոչինչ չկասկածելով, խաղաղ [illegible] «Երկաթակոզների» կատաղի գրոհը անակնկալի բերեց [illegible]։ Մոտ չորս ժամ ձեռնամարտ էր գնում ցանկապատերի [illegible] սարսափելի ցեխի մեջ։ Սիսի քուլաները մառախուղի հետ [illegible]՝ պատում էին հարթավայրը։ Գնդակներ և թեթև [illegible] սուլում օդում։

Կրոմվելը նժույգն ուղղեց ամենից վտանգավոր տեղը։ Նեղ, [illegible] ճանապարհը, երկու բարձր հյուսված ցանկապատերի [illegible] ամրոցջովին պատած ջրալի ցեխով, բռնված էր հեծ[illegible]ներով։ Ճանապարհը տանում էր դեպի Պրեսթոն. այն ան[illegible]ելի էր մաքրել։ «Գեներալը ձին քշեց դեպի մեզ,— վերհի-

www.a-pdf.com

ջում է ճակատամարտի մի մասնակից,— և հրամայեց առաջ շարժվել։ Մեր մարդկանց կեսը դեռ չէր մոտեցել, և մենք խնդրեցինք սպասել։ Նա նետեց միայն մի խոսք. «Առա՜ջ»,— և մենք ցատկ անելով ճահճուտի վրայով նետվեցինք այդ խրամի մեջ։ Թշնամիներն սկսեցին փախչել. դա նորակոչիկների ջոկատն էր։ Նրանք կրակում էին և բոլոր գնդակները անցնում էին կողքից։ Դա այնքան քաջալերեց մերոնց, որ նրանք խիզախեցին ևս մի փորձ անել։ Մայորն ինձ հրամայեց մի քանի զինվորներով թրուչել դեպի հաջորդ ցանկապարիսպը։ Մենք հասանք մինչև դրա ծայրը, և այստեղ թշնամիները՝ նրանցից շատերը, զենքը գցեցին և սկսեցին փախչել։ Մեզ բաժին ընկավ նիզակների մի ամբողջ անտառ և բազում դրոշներ»։

Այդ նույն ժամանակ Համիլտոնը Պրեսթոնում պատրաստվում էր գետանց կատարել Ռիբլի վրայով։ Պառլամենտական զորքերի հանկարծակի հայտնվելը շոտլանդացիներին կտրեց Մոնրոյի հեծելազորից, որն շտապում էր դեպի Հյուսիս։ Շփոթահար, խուճապի մատնված, լողալով և կամրջով նրանք անցնում էին հորդացած ու ալեծուփ գետը։ Համիլտոնը փորձում էր սուսերը ձեռքին կանգնեցնել փախչող զորքին։ Նա կրկին ու կրկին կոչ էր անում «մի անգամ էլ մարտնչել հանուն թագավոր Կարլոսի», բայց բոլորն ապարդյուն։ Մի վերջին կողանցում ևս պղտոր հոսանքի մեջ, և Համիլտոնը հասկացավ, որ իր գործը տանուլ է տրված։

Պրեսթոնը գրավվեց։ «Ոչ մի բան, գիշերից բացի,— գրեց Կրոմվելն այդ երեկո,— մեզ չի խանգարում ջախջախելու թշնամու բանակը»։ Հաղթանակը լիակատար էր. «Թշնամին կորցրեց համարյա բոլոր հանդերձանքը և մոտ 4 հազար հրացան, այնպես որ հետևակի մեծ մասը զինաթափվեց»։ Զինվորները սարսափելի տանջահարված էին։ Օրը վաղ էր բացվել, և սաստիկ քաղցած էին։ Նրանցից շատերի համար չգտնվեց գիշերելու օթևան, քունը նրանց տապալում էր ուղղակի խոտի վրա, բաց երկնքի տակ։ Անձրևը շարունակում էր տեղալ անդադրում։

Հետևյալ առավոտյան, զորքերի մի մասը թողնելով Պրեսթոնը պահպանելու համար, Կրոմվելը փութաց հետապնդելու թշնամուն, որը նահանջում էր դեպի հարավ։ Անձրևն, ասես, վերջ չուներ, և երկու բանակները մեծ փութաջանությամբ շարժվում էին շլոփայի և ճահճի միջով. «Ես կյանքումս երբեք չեմ անցել այդպիսի ճանապարհով»,— խոստովանում էր հետագայում Կրոմվելը։ Միդլթոնը, որ հարավից շտապում էր շոտլանդացիներին օգնության, չնկատելով անցավ նրանց կողքով և դեմ առ դեմ դուրս եկավ Կրոմվելյան հեծելազորի ջոկատին։ Ռոյալիստները դարձյալ ցաքուցրիվ եղան։

Ուիգանի մոտերքում եղանակը փոքր-ինչ պարզվեց, երկինքը բացվում էր, և Համիլտոնը հրամայեց շարժվել դիշերը, հուսալով Ուորինգթոնի մոտ կտրել-անցնել Մերսեյը և միանալ ռոյալիստներին, ովքեր դեռևս իրենց ձեռքում էին պահում Հյուսիսա-

www.a-pdf.com

ին Ուելսը։ Բայց Կրոմվելը կրնկակոխ գնում էր նրանց ետևից։ Ինչ նա Ուորինգթոնից երեք մղոն հեռավորության վրա հասավ նամուն։ «Մենք կարողացանք նրանց ճակատամարտ պարտադրել,— հաղորդում էր նա պառլամենտին,— երբ մոտեցավ մութ ոչ բանակը։ Նրանք ամրացել էին կիրճում և մի քանի ժամ շարունակ այն պահպանում էին մեծ համառությամբ։ Գրոհները հետևում էին մեկը մյուսին, շատ անգամ վերանելով ձեռնամարտի։ Մի պահ եղավ, որ մեր զորքերը ընկրկեցին, բայց այնուհետև սատծու օգնությամբ վերականգնեցին մարտակարգը և դուրս մղեցին թշնամուն գրաված դիրքերից։ Նրանցից մոտ 1000-ը սպանված են և 2000-ը վերցված են գերի։ Մենք նրանց հետապնդեցինք մինչև քաղաք, որտեղ հզոր բարիկադ էր կառուցված։ Երբ մենք մոտեցանք դրան, լեյտենանտ-գեներալ Ինգլիսը ինձ նամակ հանձնեցին կապիտուլյացիայի առաջարկով, ուր հետ ես համաձայնեցի։ Մենք ստացանք նրանց բոլոր հանձնումները, մոտավորապես չորս հազար լրիվ ձեռք զենք ու այդքան էլ գերի։ Այնպես որ նրանց այլևս հետևազոր չմնաց»։

Համիլտոնը հեծելազորի երեք հազարանոց ջոկատով փախավ Չեսթր. և Կրոմվելը չհետապնդեց նրան։ Նա ինքը և իր մարդիկ ամբողջանց տանջահար վիճակում էին։ «Եթե իմ ձեռքի տակ լիներ 500 թարմ հեծյալ և 500 դյուրաշարժ հետևակային,— գոռոզանում էր նա,— ես կոչնչացնեի նրանց։ Բայց մենք այնքան հոգնած էինք, որ հազիվ թե կարողանայինք քայլել նրանց հետևից»։ Ինն օր մարտնչելով, նա անցել էր 140 մղոն։ Նրա առաջադրանքը կատարված էր։ Շոտլանդական ներխուժումը վերջ էր տրված։

Պրեսթոնի մոտ ճակատամարտը երկրորդ քաղաքացիական հրամի ելքի համար ունեցավ նույն նշանակությունը, ինչ Մարսթոնի ճակատամարտը առաջինի համար։ Ռոյալիստների բանակը փլուզվեցին։ Նրանց բանակն այնուհետև դադարեց գոյություն ունենալուց։ Շոտլանդ Կրոմվելի հաղթանակների մասին լուր հասնելու հետ հանձնվեց Քոլչեսթերը։ «Պուրիտան հոգեբանների շրջանում,— սարկազմով գրում էր ռոյալիստական մեկը,— ոչ մի բան լսելի չի, բացի հաղթաղաղվելից և ցնծությունից, երգ ու ուրախությունից՝ իրենց երջանիկ հաջողության պատճառով (հնարավոր է առաջին հերթին՝ սատանայի, և երկրորդը՝ Նոլ Կրոմվելի քթի)»։

Բայց ո՛չ սատանան, ո՛չ էլ առավել ևս քիթը մեղք չունեին։ Ինքնամոռաց հաղթեց Կրոմվելի բարձր զորավարական արվեստը, որպես պահն օգտագործելու և շեշտակի հարվածներ հասցնելու նրա հմտությունը, բանակի միասնությունն ու կարգապահությունը պաշտպանելու նրա ունակությունը։ Նրա զինվորները ամենատարբեր շրջադարձերում կարողանում էին պահպանել բարձր մարտական ոգի, նրանք հնազանդ ու նվիրված էին իրենց հրամանատարին։ Նա ինքն էլ միշտ հայրաբար հոգ էր տանում իր

www.a-pdf.com

դինվորների և նրանց կարիքների մասին, չէր թողնում վիրավորներին, օգնում էր զոհվածների ընտանիքներին։

Թշնամուն հաղթեց ժողովրդական բանակը, որը դեռևս հավատում էր, թե իր պայքարը զուր չէ, թե հեղափոխությունը կհաղթանակի և կթագավորի արդարությունը։

Պառլամենտական պրեսբիտերները ամենևին էլ ցնծությամբ չընդունեցին բանակի հաղթանակի լուրը։ Կրոմվելյան բանակի հարաճուն ուժեղացումը բորբոքում էր նրանց ամենաստորին երկյուղները։ Իշխանություն, խաղաղ կյանք, տռղած դրամապանակ, այն բոլորը, ինչին այնպես ծարավի էին պալատում նիստի բազմած ջենտլմենները և Սիթիի հարգարժան գործարարները՝ բոլորը հայտնվեցին սպառնալիքի տակ։ Հաջորդ օրն իսկ Պրեսթոնի մոտ տեղի ունեցած ճակատամարտի լուրն ստանալու կապակցությամբ համայնքներն սկսեցին քայլեր ձեռնարկել թագավորի հետ բանակցություններ վարելու ուղղությամբ։ Եվս երկու օր անց, հատուկ կոմիտե նշանակվեց բանակցությունների համար։ Որպեսզի պրեսբիտերներին թույլ չտրվի ամբողջ գործը իրենց ձեռքը վերցնել, մի քանի ինդեպենդենտներ ձգտեցին մտնել այդ կոմիտեի կազմի մեջ։ Նրանց մեջ էին՝ Հենրի Վենկրոսերը՝ միստիկ ու Դոն Քիշոտ, անընկճելի Վենը, Կրոմվելի մտերիմ ընկերը, որի մասին ասում էին, թե նա պառլամենտում նույն բանն է, ինչ Կրոմվելը պառլամենտից դուրս։ Կոմիտեն պետք է մեկներ Ուայթ կղզի՝ թագավորի մոտ։

Ժողովրդի վրդովմունքը սահման չուներ։ Դարձյալ բանակցություններ այդ արյունոտ հանցագործի հետ։ Մեկը մյուսի ետևից պարսավագրեր էին հրապարակվում, որոնցում եռում ու փոթորկվում էր դժգոհությունը։ Պառլամենտի և թագավորի միջև վեճը դառնում է այն բանի շուրջը, թե ում ստրուկը պիտի լինի ժողովուրդը, գրում էին լևելերները։ Նրանք ուզում են նորից խոսքը մեկ անել, իսկ չլուծված դժվարությունների ամբողջ բեռը իրենց ուսերին կկրեն նոանք, ովքեր «աշխատում են ֆերմաներում, արհեստանոցներում և ստանում են փոքր վարձ»։

Սեպտեմբերի 11-ին լևելերները պալատին հանրագիր ներկայացրին, որը ստորագրել էին մի քանի հազար մարդ։ Ասում էին, թե դրա հեղինակն է եղել պառլամենտի անդամ, ընդդիմադիր ու սրախոս, համոզված հանրապետական Հենրի Մարթեն։ Հանրագիրը դեմոկրատական ռեֆորմներ էր պահանջում՝ օրենքի առաջ բոլորի իրավունքների հավասարության ընդունում, անձի ազատություն, գույքի անձեռնմխելիություն։ Այն պահանջում էր մենաշնորհների, ակցիզների, եկեղեցական տասանորդի վերացում։ Բայց գլխավորը՝ հանրագիրը պահանջում էր խզել ամեն մի հարաբերություն թագավորի հետ և դատի տալ նրան։ Նա՛, ով կազմել էր հանրագիրը, համարձակվել էր կոչ անել, որ համայնքների պալատն իրեն հայտարարի երկրի գերագույն իշխանություն։

www.a-pdf.com

Կրոմվելը մինչդեռ նորից գնում էր դեպի Հյուսիս։ Լամբերտին երկու հազար հեծյալներով ուղարկելով Համիլտոնին հետապնդելու, նա շուտ եկավ ետ, որպեսզի կտրի Մոնրոյի անգլոլանդական ռոյալիստների ճանապարհը, որոնք փախել էին Պրեսթոնից։ Նա երկյուղ ուներ, թե այդ վեց հազարանոց զորքը կարող է հարձակվել Պրեսթոնի վրա, որտեղ ավելի շատ ռոյալիստական գերիներ էին հավաքված, քան կայազորի զինվորներն էին։ Բայց Մոնրոն միտք էլ չուներ հարձակվել անպարտելիների վրա։ Նա թաքնվել էր Շոտլանդիայի լեռներում։ Համիլտոնը, Լանգդեյլը, Միդլթոնը համախոհների վերջին խղճուկ ջոկատներով ետով ջախջախվեցին և գերի վերցվեցին։

Շոտլանդական սահմանին Կրոմվելը մոտեցավ սեպտեմբերի 12-ին։ Նա զինվորներին տեղավորեց և սկսեց զբաղվել անհետաձգելի գործերով։ Հարկավոր էր բանակցությունների մեջ մտնել շոտլանդացիների հետ, հասնել Բերվիքի և Քարլայլի գրավմանը, վճռել բանակի պարենամթերքի, հագուստի և ռոճկի հարցերը։ Այդ հոգսերին մեկն էլ ավելացավ. նա իմացավ, որ իր զինվորներից մի քանիսը մեղավոր են կողոպուտի մեջ, որի համար նա այնքան խստորեն պարսավում էր շոտլանդացիներին։ Կրոմվելը դա տանել չէր կարող։ Նա հրամայեց կալանավորել մեղավորներին, կողոպտած բարիքը վերադարձնել տերերին։ Ամբողջ գունդը, որտեղ կատարվել էր այլանդակությունը, ուղարկվեց Թիկունք՝ Նորթումբերլենդ։ Բանակային բարձրագույն դատարանումներով մեկ թռավ դայրագին մի թուղթ.

«Որն իմ հրամանատարության ենթակա որևէ սպա կամ զինվոր բնակչությունից փող վերցնի կամ պահանջի ձիեր, ունեցվածք կամ մթերք բռնագրավի, կամ վատ կվարվի մարդկանց հետ, նա կդատվի զինվորական դատարանով։ Մեղավորը կպատժվի մահով»։

Սակայն հայացքը հառած էր դեպի Շոտլանդիա։ Գետից անդին տարածված էր ամայի, միգամած մի երկիր թավ անտառապատ լեռներով, որոնց վրա հառնում էին անառիկ մռայլ ամրոցներ, ուր ապրում էին ուժեղ ցեղերով և խաղաղ, մացառուտների մեջ թաքնված գյուղեր։ Այդ երկրին երբեք չէր կարելի վստահել. մարդասպան գրգռելիությունները պատրաստ էին ապստամբել ամեն մի իշխանության դեմ։ Նրանց միջև մշտապես դաշինք էր կնքվում ու խզվում, նրանք հավերժ թշնամության մեջ էին միմյանց հետ, բայց և միշտ պատրաստ էին արհամարհելով երեկվա երկպառակությունները, միավորվել ու հարձակվել ընդհանուր ու հին թշնամու՝ Անգլիայի վրա։ Մինչև վերջին ժամանակները գոյություն ունեցող ատելությունն էր անում երևելիների կուսակցությունը՝ Համիլտոնների, Լանարկների, Լաուդերդեյլների կուսակցությունը, որը ցանկանում էր թագավորի հետ համաձայնության գալ ոչ շատ մեծ զիջումների գնով։ Այդ նրանք էին,

www.a-pdf.com

որ Կարլոսի մոտ՝ Ռայթ կղզի, դեսպաններ էին ուղարկել, այդ նրանք էլն կնքել դեկտեմբերյան պայմանի համաձայնագիրը։ Բայց Համիլտոնին ջախջախելով մարտի դաշտում, Կրոմվելը անուղղելի հարված հասցրեց այդ կուսակցությանը նաև երկրի ներսում։ Գլուխ բարձրացրին Համիլտոնների և աղնվականության մահացու թշնամիները՝ պրեսբիտերական «կիրկայի» կուսակցությունը, մոլեռանդ վայրենաբարո արևմտյան կալվինիստների՝ «վիգամորների» կուսակցությունը (դրանցից հետագայում առաջացավ վիգեր անվանումը)։

Նրանց գլխավորում էր Արչիբալդ Քեմփբելը, մարկիզ Արգայլը՝ ազդեցիկ մի դեմք, վայել իրեն՝ Կրոմվելին։ Հին, ճյուղավորված տոհմի պետը, «շոտլանդական Կալվին» Ջոն Նոքսի մոլեռանդ հետևորդը, խոժոռադեմ և շիլ այդ մարդ, ընդդիմացավ Կարլոս Առաջինի կողմից Շոտլանդիայում անգլիականություն սերմանելու փորձերին և դեռևս 1638 թվականին դրա համար շնորհազրկման ենթարկվեց։ 1643 թ. նա դաշինք կնքեց անգլիական պառլամենտի հետ, մի տարի անց գլխավորեց շոտլանդական բանակը, որը ներխուժել էր Անգլիա։ Նրա դեվիզն էր՝ անկախություն ինչ գնով էլ լինի, Շոտլանդիայի անկախություն, «կիրկայի» անկախություն։ Նա ապստամբեց թագավորի հետ 1647 թվականին կնքված պայմանագրի դեմ, պարտություն կրեց Մոնրոյից ու Համիլտոնից և միաժամանակ քաշվեց իր լեռնային կալվածքը։

Այժմ հասել էր նրա ցնծալու ժամանակը։ Արևմտյան հավատարիմ կլանները անմիջապես զենքը ձեռքներին ոտքի ելան, հենց որ հայտնի դարձավ Համիլտոնի պարտությունը։ Մի քանի օր նրանք տիրեցին Էդինբուրգին, տապալեցին թշնամական կուսակցության կողմնակիցներին, ցրեցին պառլամենտը, գումարեցին նորը և այժմ հանդարտեցնելով երկիրը, նայում էին Կրոմվելին, սպասում էին, թե նա ինչ կձեռնարկի։

Կրոմվելին հարկավոր էր օգտվել իր համար այնքան բարեհաջող փոփոխության ենթարկված հանգամանքներից։ Հերիք էր պատերազմել, Շոտլանդիայի հետ հարկավոր էր հաշտվել և դաշինք կնքել. աստված գիտե, թե ինչ է սպասում իրեն Լոնդոնում։ Թող շոտլանդացիները ասկվեն և զբաղվեն իրենց ներքին գործերով՝ ինքը նրանց խանգարել չի պատրաստվում, միայն թե նրանք չխանգարեին իրեն։ Բայց այժմ, երբ ուժն իր ձեռքում է, վատ չէր լինի ցույց տալ նրանց այդ ուժը։

Նա բանակին հրաման տվեց սեպտեմբերի 21-ին անցնել Թվիդը։ Լորդերի, «կիրկայի» ներկայացուցիչների հետ նրան ընդառաջ եկավ մարկիզ Արգայլը։ Երկու մեծ մարդիկ, նույնքան տարբեր իրենց խառնվածքով, որքան և կրոնական համոզմունքներով, հանդիպեցին միմյանց, սկսեցին բանակցել։ Կրոմվելը պահանջեց հանձնել անգլիական Բերվիք և Քարլայլ բերդերը և հրաժարվել փախստական ռոյալիստներին ընդունելուց։ Դա մի-

www.a-pdf.com

Նրանց ձեռնտու էր Արգայլին։ Բերդերի պարեսներին հրաման ուղարկվեց, որ զենքերը վար դնեն։ Հոկտեմբերի 4-ին Կրոմվելին հանդիսավորությամբ հրավիրեցին Էդինբուրգ։

Նրան ընդունում էին որպես բարեկամ տերության առաջնորդ։ Ուակապ հնամենի ռունը, որտեղ հյուրընկալել էին նրան, փառահեղ ճաշկերույթները, դոլեստներով համեմված ճառերը,— այդ ամենը խոսում էր այն մասին, որ շոտլանդական նոր իշխանությունները կայուն խաղաղություն են ուզում հաստատել հեղափոխական Անգլիայի հետ։ Հոգևորականությունը նրան շնորհակալություն հայտնեց և անվանեց «աստծո ողորմածությամբ Շոտլանդիայի պահապան»։ «Կիրկան» և դասերի կոմիտեն միաբերան խոսում էին անգլիական ժողովրդի հանդեպ եղբայրական սիրո մասին։ Ըստ էության, հենց այդ էլ հարկավոր էր Կրոմվելին։ Նա միայն մի բան խնդրեց, որ նրանք պետական պաշտոններից հանեն համաձայնագրի բոլոր թշնամիներին։ Այդ պայմանը պատրաստակամությամբ ընդունվեց։ Շոտլանդիայում ռոյալիստական զորքերի մնացորդները իրենք վայր դրին զենքը։ Շոտլանդական «խռովությանը» վերջ տրվեց։

Կրոմվելը հաճախ տեսնվում և երկար զրուցում էր Արգայլի հետ։ Ի՞նչ էին պայմանավորվում նրանք։ Հետագայում ռոյալիստները պնդում էին, թե խոսքը գնում էր միապետությունը տապալելու մասին։ Նրանք ուզում էին, ասում էր Քլարենդոնը, թագային միշտ պահել բանտում, իսկ իրենք առանց նրա կառավարեն երկու տերությունն էլ»։ Միապետության վերականգնումից հետո այդ լուրերին հավատացին և Արգայլը մահապատիժ նշանակվեց «արքայասպանությանը» մասնակցելու համար։ Իսկ Կրոմվելն այդ նույն ժամանակ դժվար թե իսկական թագավորին տապալելու մասին. նա խիստ դրաղված էր պատերազմով։

— Ի՞նչ եք մտածում դուք միապետական կարգի մասին,— հարցրել են նրան մի անգամ շոտլանդացիները։

— Ես միապետական կարգի կողմնակից եմ,— առանց աչք թարթելու պատասխանել է նա,— ընդ որում հանձինս տվյալ թագավորի և նրա ժառանգորդների։

— Իսկ ինչպիսի՞ն է ձեր կարծիքը կրոնական հանդուրժողականության մասին։

— Ես ամբողջովին դեմ եմ հանդուրժողականությանը։

— Իսկ ի՞նչ եք մտածում եկեղեցական կառավարման մասին։

Դա չափազանց դավադիր հարց էր։ Կրոմվելը պատասխաններ, որ իրեն ժամանակ է պետք մտորելու համար։ Նա առանց այդ էլ հոգու մեղք էր արել արտահայտվելով ընդդեմ հանդուրժողության։ Իսկ թե մոլեռանդ պրեսբիտերներին ասի, որ ինքը կողմ է եկեղեցու ազատ, ինդեպենդենտական կառուցվածքին, կնշանակեր խախտել դրության ընդհանուր առմամբ հաշտեցուցիչ, թեպետև լարված բնույթը։

www.a-pdf.com

Դուրս գալով դահլիճից, որտեղ տեղի էր ունենում խորհրդակցությունը, երկու շոտլանդացիներ աչքով արեցին միմյանց։

— Ես շատ ուրախ եմ,— կամաց ասաց միստր Դիքսոնը,— լսելով այդ մարդու շուրթերից նման խոսքեր։

— Իսկ դուք իսկապե՞ս հավատում եք նրան,— ավելի կամացուկ պատասխանեց միստր Բլեյրը։— Եթե դուք նրան ճանաչեիք այնպես լավ, ինչպես ես, դուք չէիք հավատա նրա և ոչ մի խոսքին։ Նա երդվյալ երեսպաշտ է և մեծ ստախոս։

Շոտլանդացիները, իհարկե, չէին վստահում Կրոմվելին։ Նրանց հանգստությունը, բարյացակամությունը, դաշինք կնքելու պատրաստակամությունը՝ այդ ամենը ժամանակավոր բան էր։ Մի փոքր աչքդ թեքեցիր՝ զգուշացիր, Անպարտելի։ Քո երեկվա ընկերները կդառնան քո երդվյալ թշնամիները։

Բայց այժմ նա բավականանում էր նրանով, ինչ որ կար։ Իսկ ինչ վերաբերում էր միապետի ճակատագրին՝ նա դեռ լրջորեն չի մտորել այդ մասին։ Դեռ չէր եկել ժամը, և կարևորն այն էր, որ տվյալ պահին այդ մարդկանց ասեր այն, ինչ պետք էր։ Գլխավորն այն էր, որ նա ուզում էր խաղաղություն և լավ հարաբերություններ հաստատել անգլիական ինդեպենդենտների ու շոտլանդական պրեսբիտերների միջև։ «Ես սրտանց ցանկանում եմ,— գրել է նա ճեռագայում,— ես աղոթում եմ առ աստված, ես երազում եմ տեսնել այն օրը, երբ միասնություն և բարի փոխըմբռնում կհաստատվի բոլոր աստվածավախ ժողովուրդների միջև՝ շոտլանդացիների, անգլիացիների, հրեաների, հեթանոսների, պրեսբիտերների, անարատապիստների և բոլոր-բոլորի... Պե՞տք էր արդյոք նրանց հետ հաշվենկատ լինել և սեր ու բարեկամություն նվիրել նրանց, որպեսզի գործերը նրանց հետ վարեինք ազնվության ոգով և վերացնեինք ամեն կանխակալություն։ Պե՞տք էր արդյոք հարցնել նրանց, թե իրենք ի՞նչ ունեն մեր դեմ, և ազնիվ պատասխան տալ նրանց։ Մենք դա արեցինք և դրանից ոչ ավելին։ Մեր կարծիքով, դա ավելի փառավոր հաղթանակ է, քան եթե մենք զավթեինք ու կողոպտեինք էդինբուրգը և ուժով հպատակեցնեինք ամբողջ երկիրը՝ Թվիդից մինչև Օրքնեյան կղզիները...»։

2. ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՎՐԱ

Պոնտեֆրակտի՝ կավալերների այդ վերջին հենարանի, պաշարումը վաղուց արդեն կորցրել էր ռազմական լուրջ գործողության բնույթը։ Պաշարումը ղեկավարում էր Հենրի Զոլմլին՝ յորքշիրցի մի աղնվական, անասելի մոլեգին ու պարզամիտ, բայց կազմակերպչական ընդունակություններից բոլորովին զուրկ մի մարդ։ Սա հրաժարվեց ընդունել գնդապետ Ռեյնսբորոյի օգնությունը, որ ուղարկել էր Ֆերֆաքսը, և պաշարումը վաբում էր

www.a-pdf.com

անձամբ ինքը՝ դանդաղ, ալաչկոտ, անփույթ։ Բերդն ըստ էության շրջափակված չէր. ռոյալիստները, երբ ուզում էին, ազատ ելնում էին գալիս մերձակայքում, գյուղացիներից անասուն և հաց գողանալով։ Մի քանի անգամ նրանք դուրս էին նետվել և հաջողությամբ գրոհել պաշարողների վրա։ Երբեմն նրանք, ընդհակառակը, եղբայրանում էին պառլամենտի զինվորների հետ և միևնույն ժամանակ «եղբայր կավալերն» ու «եղբայր կլորագլուխները» թաս թասի էին զարկում։

Հոկտեմբերի սկզբին նրանք տեղեկացան, որ ամրոցին է մոտենալ Շոտլանդիայից վերադարձած Կրոմվելը։ Շրջափակումը նկատելիորեն ուժեղացվեց։ Վեց հարյուր հիսուն հոգի, որոնք պաշտպանում էին ամրոցը, հասկացան, որ դատապարտված են, և կատաղի, խենթ խիզախությամբ համակվեցին։ Նրանք հղացան մի խիզախ ելք. առևանգել գնդապետ Ռեյնսբորոյին, որ իր ջոկատով կանգ էր առել Դոնքասթերում, և նրան փոխանակել Նորթինհեմում գերված Լանգդեյլի հետ։

Հոկտեմբերի 29-ի վաղ առավոտյան մի քանի ռոյալիստներ, պառլամենտական հեծելազորայինների համազգեստ հագած, ուղևորվեցան Պոնտեֆրակտից և շուտով արդեն Դոնքասթերում էին։ Պահապանները, որ կանգնած էին Ռեյնսբորոյի կացարանի դռան մոտ, մտքով իսկ չանցկացրին, որ դրանք թշնամիներ են։ Միայն սրանք մտքեր էին փոխանակում լոնդոնյան վերջին նորությունների, երկուսը բարձրացան Ռեյնսբորոյի սենյակը։ Նա դեռ քնած էր։ Նրան արթնացրին և ասացին, որ Կրոմվելի հրամանով եկել են նրան ձերբակալելու։ Ռեյնսբորոն հագնվեց և, շվարած, դուրս եկավ փողոց։ Նրան անմիջապես հասցրին անկյունում սպասող թամբած ձիերին։ Գլխի ընկնելով, թե բանն ինչումն է, և տեսնելով, որ պահակությունը շատ էլ մեծ չէ, նա դուրս պրծավ նրանց ձեռքից և դիմեց փախուստի։ Նրան հասան, և մի քանի մարդ միաժամանակ դաշունահար արին։ Մինչև նրա գվարդիայի զինվորները գլխի կընկնեին, թե ինչումն է բանը, ռոյալիստները թռան ձիերին և սուրացին դեպի ամրոց։

Ոչ թե հեղափոխության աննկուն մարտիկներից մեկի գաղտնի սպանության, և այն էլ՝ կատարված նրա ճամբարից ոչ հեռու գտնվող քայլի վրա, Կրոմվելի հոգին լցրել էր տագնապով և թախիծով։ Այո՛, նա Պեթնիում չէր համաձայնում Ռեյնսբորոյի հետևությունների հետ, նրան շփոթեցնում էր այն ուղղամիտ և սառնարկելի տոնը, որով Ռեյնսբորոն պահանջում էր հավասարեցնել տերության հարուստ և աղքատ բնակիչների իրավունքները։ Բայց այժմ նա զգաց, որ կորցրել է հուսալի ընկերոջը, խիզախ զինակցին, պրեսբիտերների, ռոյալիստների, հենց իր՝ թագավորի անհաշտ հակառակորդին։ Այդ սպանության մեջ նա կարդաց դատի տալու դյուրավոր կողմնակիցներից մեկի նենգամիտ տաշվեհարդարի գիտավորություն տեսավ։

www.a-pdf.com

Լոնդոնում, սակայն, ոչ մի դատի մասին չէին էլ մտածում։ Ընդհակառակը, մի անգամ ևս փուչ արձնց համաձայնության գալ։ Սեպտեմբերի 18-ին Նյուպորտում, Ուայթ կղզու այդ փոքրիկ քաղաքում, սկսվեցին թագավորի հետ բանակցությունները։

Կարլոսը, որ աղատված էր պահակությունից և ուղեկցվում էր չաեւնված փայլուն շքախմբով՝ մեծամեծների, աստվածաբանների, փաստաբանների, կապելանների, կամերգերների, հանձնաժողովների, մանկլավիկների (պառլամենտը նորից թույլ էր տվել նրանց ծառայելու իրենց տիրոջը), Քերիսբրուքյան ամրոցից տեղափոխվեց Նյուպորտի մասնավոր տներից մեկը։ Այդ փոքրիկ քաղաքն էին տեղափոխվել նրա բազմաթիվ կողմնակիցները, դաղտնի ու բացահայտ օգնականները։ Կարճ ժամանակում Նյուպորտը այնքան ողողվեց դրանցով, որ պառլամենտական կոմիսարները երեք օր շարունակ չէին կարողանում իրենց համար վայելուչ բնակարան գտնել։

Թագավորի հետ վերաբերվում էին մեծագույն հարգանքով։ Նրան ներկայացված էին բավականին մեղմ պայմաններ. չեղյալ հայտարարել իր բոլոր հրովարտակները պառլամենտի դեմ, երկրում երեք տարով եկեղեցու պրեսբիտերական կառուցվածք մտցնել, քսան տարով միլիցիայի ղեկավարումը փոխանցել պառլամենտին։

Թագավորը, նստած բարձրադիր գահավորակի վրա, շքեղ ամպհովանու տակ և շրջապատված հաճոյակատար խորհրդականներով, սկսեց խուսանավել։ Նրան հարկավոր էր բանակցությունները հնարավորին չափ ձգձգել, խաբել իր պահպանության զգոնությունը. չէ՞ որ նա հենց այդ ժամանակ, քան երբևէ, հույս ուներ արտաքին օգնության։ Երևնամյա պատերազմները Եվրոպայում ավարտվել էին, և կարելի էր օգնություն սպասել և՛ Ֆրանսիայից, և՛ Իսպանիայից։ Իռլանդիայից Օրմոնդը հուսադրող լուրեր էր ուղարկում։ Եվ Կարլոսը, ամենևին էլ չհամարելով իրեն նենգ, բայց սոսկ ցանկանալով բոլոր միջոցներով փրկել այն, ինչ որ կար և համարում էր իր օրինական ունեցվածքը, գրում էր Օրմոնդին. «Թեպետև դուք կլսեք, որ այս պայմանագիրը մոտ է կնքվելուն՝ մի հավատացեք դրան, այլ գնացեք այն ուղիով, որը դուք ընտրել եք ողջ հնարավոր ջերմեռանդությամբ։ Հաղորդեք իմ այս հրամանը ձեր բոլոր բարեկամներին, բայց՝ գաղտնի։ Իր նշանավոր տատի նման իր հպատակների հետ ոչ մի պայմանագիր թեկուզ և այն վավերացված լիներ իր սեփական արքայական խոսքով, չէր համարում իր համար պարտադիր։ Նա պառլամենտին հանդիսավորապես խոստացել էր փախուստի ոչ մի փորձ չանել քառասուն օրվա մեջ, որի ընթացքում բանակցություններ էին նշանակված և միևնույն ժամանակ գրում էր իր կամակատարներից մեկին։

«Ձեզ հետ անկեղծ կլինեմ, բոլոր կարևոր զիջումները, որ՛ արել եմ եկեղեցու, բանակի և Իռլանդիայի հարցում, սոսկ նպա-

www.a-pdf.com

տակ ունեն դյուրացնել իմ փախուստը։ Առանց այդ հույսի ես լքված չէի զիջի»։

Բայց Կարլոսի հենց այս երկերեսանիությունը, նրա կեղծավորությունը, անվերջանալի ձգձգումները, առավել ևս՝ պրեսբիտերների հաշտվողական դիրքորոշումը, հարուցում էին նոր բուռն տրամադրություն հեղափոխության կողմնակիցների շրջանում։ Շատ տեղություններում ազատ ժողովներ եղան ի պաշտպանություն լևելերների պահանջների։ Պառլամենտում հանրապետականները սկսել էին խոսել ամբողջ ձայնով։ Անգամ հարուստ ազնվականական Դենիս Բոնդը ի լուր ամենքի հայտարարեց. «Շուտով կգա այն օրը, երբ մենք մեր իշխանությամբ կկախենք այդ լորդերից ամենաբարձրին, եթե նա արժանի լինի դրան, առանց նրա պակերների հետ որևէ համաձայնության»։

Վերսկսվեցին հուզումները բանակում։ Թագավորի հետ բանակցությունները դադարեցնելու և նրա դեմ դատ կազմակերպելու վերաբերյալ հանրագրեր էին տվել Այրթոնի, Ֆլիթվուդի և ուրիշ առաջատար սպաների գնդերը։ Սկսել էին հուզվել և Պոնտեֆրակտը պաշարող զինվորները։

Պոնտեֆրակտի տակ դրությունը տագնապալի էր։ Զինվորները չարությամբ ու խեթ էին նայում անառիկ ու մռայլ ամրոցին, որ հառնել էր վհատեցնող հարթության վրա։ Նրանք դարձյալ նստած էին անփող. ոռճիկը Լոնդոնից չէր ստացվել։ Պառլամենտի կողմից տրված ոտնամանները վաղուց մաշվել էին, հագուստը՝ քրքրվել։ Լեյտենանտ-գեներալը թույլ չէր տալիս անդամալուծվել մերձակա բնակիչների տներում։ Նա հոգ էր տանում պրեսբիտերների մասին, որոնք առանց այդ էլ բավականաչափ տուժել էին կավալերներից։ Այն մասին, թե կարելի է քիթը խոթել բանջարանոցից ներս կամ անասունների փարախը, մտածել իսկ չէր կարելի, բոլորը լավ հիշում էին Թալանի մասին անողոք սպառնանքը։ Ստիպված էին մնալ ճամբարում, բաց երկնքի տակ, տնիծելով խոնավ ցուրտ աշունը։ Իսկ խորհրդավոր ամրոցը, որ խլրտոնում էր դեռևս Ռիչարդ II-ի արյունալի ժամանակները, չէր ընդունում ո՛չ պաշարողական հրետանու, ո՛չ էլ ականահատման սարքերի։

Լոնդոնից եկող յուրաքանչյուր տեղեկություն անհագուրդ կլանվում էին, կարդում և ձեռքից ձեռք էին փոխանցում լևելերական տարեգրությունները։ Իհարկե, զինվորներն ամբողջ հոգով նրանց էին, ովքեր պահանջում էին դատ բացել գլխավոր հանցագործների նկատմամբ։ Այդ նրանք՝ փքված ազնվականներն ու նրա այի ստորաքարշ արբանյակներն էին բանակին ստիպել, ասում էին մատնվի, սառչի, արյուն թափի, այդ նրանք են Անգլիան հանձնել Շոտլանդիային։ Էլ ինչի՞ մասին է խոսքը։ Ամեն ինչում մեղավորն արքան ինքն է։ Չլիներ նա՝ չէ՞ր լինի և պատերազմը։ Բոլոր պատասխանատու։ Արյունարբու հանցագործ Կարլոս

www.a-pdf.com

Ստյուարտին դատելու մասին միտքը ոչ ոքի արդեն անհավանական չէր թվում։ Նոյեմբերի 10-ին հյուսիսային բանակի գնդերի ներկայացուցիչները հանդիպեցին, որպեսզի միանան հարավային զորքերի հանրագրին։

Կրոմվելը ավելի էր մոայլվել։ Հոնքամիջյան կնճիռը, որ առանց այդ էլ երբեք չէր հարթվում, ավելի էր ակոսվել։ Միշտ, երբ նա կանգնած էր լինում կարևոր վճիռ կայացնելու առաջ, քաշվում էր ինքն իր մեջ, մի քանի օր լուռ մնում։ Հարկավոր էր հասկանալ տալ նրանց, ովքեր Նյուպորտում ամբողջ սրտով ցանկանում էին համաձայնության գալ թագավորի հետ, որ բանակը չի օրհնի այդպիսի խաղաղությունը։ Բայց դա ինչպե՞ս անել։ Ինչպե՞ս այս իառն ժամանակներում սեփական խոհերը վստահել սուրհանդակին՝ թեկուզ նա լինի բազմիցս վստահելի մարդ։

Նոյեմբերի 6-ի վաղ առավոտյան նա կարգադրեց, որ իրեն թուղթ ու գրիչ տան։ Այրթոնը՝ փնսան, միշտ գրում էր նրան գիշերը, և Կրոմվելը մեկ անգամ չէ, որ դրա համար մեղմ կըշտամբել էր իր սիրելիին. երբ գրում ես գործի մասին, գլխումդ պետք է հստակություն լինի։ Ավելի լավ է գրի հորեղբորորդի Հերմոնդին՝ հենց նրան, որը Ուայթ կղզու պահպանության հրամանատարն է, իսկ պառլամենտական կոմիսարներին ուղղակի չի հիշատակի։ Թող Վենը լինի «եղբայր Հիրոն»՝ այս զավեշտական մականունը նրան հայտնի է, Պայրփոյնթը՝ «թանկագին ընկեր»։ Թագավորին հիշատակել առհասարակ պետք չէ։

«Սիրելիդ իմ Ռոբին,— *գրում էր նա,*— ես վախենում եմ՝ չլինի թե մեր բարեկամները այրեն իրենց մատները, ինչպես որ վերջերս արդեն եղել է ուրիշների հետ, որոնց սրտերը մինչև այժմ նվվում են դրանից... Ինչ հեշտ է կատաղել իրենց լեռներ համարող մարդկանց դեմ և բնկնել մի այլ ծայրահեղության մեջ, խճճվելով չարաբաստիկ գործի մեջ...»։

Հարկավոր է նրանց ասել, որպեսզի նրանք չհամաձայնեն եպիսկոպոսարան հիմնելուն։ Չէ՞ որ դա նշանակում է՝ դարձյալ եկեղեցական դատարաններ, հայածանքներ, չոր միօրինակ ծիսակատարություններ... Բանակը խռովություն կբարձրացնի։ Գրիչը դարձյալ սահում էր թղթի վրայով. «Ասա եղբայր Հիրոնին, մենք հարկ չունենք ո՛չ եպիսկոպոսարանի, ո՛չ էլ պրեսբիտերականության։ Տրամաբանական է ենթադրել, որ նրան *(սրանք կենթադրե՞ն, թե խոսքն արքայի մասին է)* ավելի դյուրին կլինի բռնանալ այն բանին, ինչ ինքը սիրում է, քան այն բանին, ինչը, ինչպես մենք գիտենք, նա ատում է»։

Ինչպե՞ս հիմա որևէ կերպ ակնարկել բանակում եղած տրամադրության մասին... «Թանկագին Ռոբին, ասա եղբայր Հիրոնին, մեր խիղճը վկա է, որ մենք գնում ենք դեպի մամուրը՝ և աստվածային պարզությունը, այլ ոչ թե խորամանկում ու խաբեբայություն ենք անում և որ աստծո օրհնանքն է մեզ վրա։ Ես

www.a-pdf.com

նույն ունեմ, որ նույն այդ զգացումը ետ կպահի նրանց սրտերն ու ուղիները այն բանից, որին աստված այնքա՜ն ակներև դեմ է։ Սա դարձյալ թագավորի մասին է, նրանք դա չեն կարող ասել։ Թող գիտենան, որ բանակը համարյա պատրաստ է թագավորի մեծ մասին հայտարարել ոճրամիտներ, գրել ու նորից ուղարկել պառլամենտը։ «Խորհիր այս մասին և դրա հետևանքների, և թող ուրիշները նույնպես խորհեն»։

Ով գիտե, գուցե կարծեն, թե ինքը նրանց թելադրում է։ Դե այնպես կարող է ինքը նրանց թելադրել, ինչպես կարող է իր կամքով ուղղություն տալ իրադարձություններին։ Զեռքը դարձյալ գրում էր. «Ռոբին, եղիր ազնիվ։ Ունկնդիր եղիր աստծո ձայնին, և նա կբարձրացնի քո ոգին և անսասան կդարձնի քեզ ճշմարտության համար։ Ես մի չնչին արարած եմ, ամենաչնչինն աշխարհում, բայց ես հույսս դնում եմ աստծո վրա և ամբողջ հոգով պանկանում եմ սիրել ժողովրդին նրա...»։

Երդի պաշարումը, զինվորներին պահելու և նրանց կարգապահության ամենօրյա հոգսերը՝ դրանք բոլորը հիմա գլխավորը էին։ Գլխավորը հիմա տեղի էր ունենում Լոնդոնում։ Նոյեմբեր 1-ին Պոնտեֆրակտի մոտ գտնվող զորքերին վրդովեց ևս մի իրադարձություն. հայտնի դարձավ, որ սպաները Սենթ-Օլբանսում (գուցե և ինքը Այրթո՞նը) ռեմոնստրացիա կազմեցին գրում թերթիկների վրա, որով պահանջում էին դատի տալ թագավորին։ Նրանք թվարկել էին Կարլոս Ստյուարտի բոլոր հանցագործությունները՝ պատերազմի սանձազերծում, արյունահեղություններ, դավաճանական դաշինք շոտլանդացիների հետ, փրկական պարտականությունների մեջ թերացում, կամայական գրաքալությունների և անմեղ մարդկանց բանտարկություն, փրկական իշխանությունը բացարձակ դարձնելու փորձ։

Ռեմոնստրացիայի մի քանի կետեր ուղղակի արտագրված էին Լիլբերնի ծրագրից։ Ժողովուրդը հանդիսանում է երկրի գերագույն իշխանությունը, ասված էր դրանում։ Թագավորը այնուհետև պետք է ընտրվի ժողովրդի ներկայացուցիչների կողմից։ Երկրի պառլամենտը հարկավոր է արձակել և նշանակել նոր ընտրություններ, ավելի արդարացի կազմված։ Իսկ եթե այդ ամենը չանցկացվեն, բանակն ինքը կստանձնի հայրենիքի փրկությունը։ Իսկ «մեր բոլոր դժբախտությունների ու տառապանքների գլխավոր մեղավորը՝ թագավորը,— գրել էին սպաները — պետք է ամենակարճ ժամանակում կանգնի դատարանի առաջ. դավաճանության և պատճառած չարիքի համար, որոնցում նա մեղավոր է»։

Ռեմոնստրացիայի ինքնամոռաց համարձակությունը ապշեցրեց բոլորին։ Դրա գլխավոր կետերը տեղնուտեղը արտատպվեցին առանձին թերթիկների վրա, բրոշյուրներով և մի ակնթարթում տարածվեցին երկրով մեկ։ Զինվորներն ու կրտսեր սպա-

www.a-pdf.com

ներն այն դիմավորեցին ոգևորությամբ։ Ավելի զգուշավորները տմբտմբացնում էին գլուխները. նման փաստաթուղթն իսկապես կարող էր հասցնել միապետության տապալման։ Լուրեր էին պտտվում, թե սպաները խոսում էին լևելերների լեզվով ամենևին էլ ոչ պատահաբար։ Լոնդոնյան «Ջիու գլուխ» պանդոկում տեղի ունեցավ առաջատար ինդեպենդենտների՝ Այրթոնի, Հյու Պիթերսի, Հարիսոնի հանդիպումը Լիլբեռնի և լևելերական կուսակցության մյուս առաջնորդների հետ։ Հենց այստեղ էլ նրանք որոշեցին, որ պետք է գլխատել թագավորին, իսկ պառլամենտը հիմնավորապես մաքրազարդել կամ արձակել վերջնականապես։

Այնուհետև հայտնի դարձավ, որ նոյեմբերի 20-ին սպաները գնդապետ Իվերի առաջնորդությամբ խմբովին ներկայացել են համայնքների պալատ և հանձնել իրենց ռեմոնստրացիան։ Ինչ-պիսի՞ փոքրիկ է բարձրացել այդ թուղթն ընթերցելիս։ Ինդեպենդենտները ցատկոտել են տեղներից, նրանք բարձրաձայն պահանջել են, որ պալատը շնորհակալություն հայտնի ռեմոնստրացիան կազմելու համար։ Պրեսբիտերները ոչ պակաս տաքացած պարսավել են այն և առաջարկել թողնել առանց պատասխանի։ Նրանց հաջողվել է պնդել իրենցը, և քննարկումը հետաձգվել էր։ Բայց խմորումները Լոնդոնում ուժեղանում էին, իսկ բանակում հնչում էին ձայներ՝ «Դեպի Լոնդո՞ն։ Գրավե՞նք Լոնդոնը և հիմնենք այնտեղ մեր կարգը»։

Կրոմվելն ղգում էր, որ իրադարձությունները զարգանում են անկասելիորեն։ Բանակի շարժումն անհնարին է կասեցնել, և նրա ընտրությունը կանխորոշված է։ Նոյեմբերի 20-ին նա գրում է Ֆերֆաքսին. «Սր, ես խիստ մեծ հիմնավորում եմ տեսնում մեր դժբախտ տերության տառապանքների ու դժբախտությունների մասին զնդերի ներկայացրած դիմումի մեջ և մեծ ձգտում՝ տեսնելու արդար դատ ու դատաստան՝ ընդդեմ մեղավորների։ Պետք է խոստովանեմ, ես հոգու խորքում դրանց հետ համաձայն եմ»։

Նամակ եկավ Հեմոնդից։ Խեղճ Ռոբին։ Նա պաշտոնաթողություն էր խնդրում։ Նա այլևս չի կարող ծվատվել պառլամենտին հավատարիմ լինելու և բանակի հրամանատարությանը նվիրված լինելու միջև։ Բացի դա, նրա մեջ ապրում էր յուրաքանչյուր ջենտլմենին հատուկ բնական անհաղթահարելի ակնածանքը արքայի հանդեպ։ Դե այդ դեպքում էլ ինչպե՞ս ծառայի որպես բանտապահ, դավադրություններ մերկացնի, հետախուզի, կասկածի... Խեղճ Ռոբին։ Ինչպես բացատրես նրան, որ այժմ տեղի է ունենում մի ինչ-որ չտեսնված, չլսված բան։ Տեղի է ունենում մեծ հեղաշրջում ազգի և՛ ոգու, և՛ ճակատագրի մեջ։

Եվ կրկին Կրոմվելը գրում է Հեմոնդին՝ գրում է ամբողջ օրը, ուտելը մոռացած, հրաժարվելով լրաբերների դեկույցներից։ Ծանր մտածումներ այս աշխարհում իր տեղաքերության մասին,

www.a-pdf.com

Մուկաուաշրի, կամքի մասին, խոհեր արդարության և օրենքի մասին, ժողովրդի մասին, որն ասված ասանում է անհայտ ոգիներով, այս ամենը նա վստահում է թղթին, այլևս ուժ չգտնելով դրանք թաքցնել իր մեջ։

«Թանկագի՛ն Ֆոքին.

Դու ուզում ես իմանալ, թե ինչ ապրումներ ունեմ ես այժմ։ Կարող եմ ասել քեզ. ես էլի նույնն եմ, ինչպիսին գիտեիր առաջ. տմինն իմ մեղսալի է ու մանկանացու, բայց, շնորհած անկարողությանը նրա, ես սպասում եմ մեր տեր Հիսուս Քրիստոսից փրկություն...

Ես տեսնում եմ, որ Ֆոքին տատանվում է։ Բայց այն, ինչը տեսնում ես դու, մի անվանիր տխուր կամ տառապալի բեռ։ Եթե ոգեղեն երկնային հայրը այն դրել է քեզ վրա, նա գիտի ինչ է արել։ Նա փորձության է ենթարկում մեր հավատը և համբերությունը, որպեսզի կատարելության տանի մեզ»։

Աննկատելիորեն, աստվածային իմաստություններից նա ցնում արեց դեպի քաղաքականությունը. «Իշխանությունն ու ազգությունը գալիս են աստծուց, բայց դրանց այս կամ այն ձևը՝ մարդկային ձեռքի ստեղծվածքներն են, և մարդկանցից է կախված նրանց ավել կամ պակաս սահմանափակումները։ Այդ պատճառով էլ ես չեմ կարծում, թե իշխանությունները իրավունք ունեն անել այն, ինչ ուզում են և որ հպատակվելը միշտ պարտադիր է. չէ՞ որ բոլորն են համաձայն, որ դեպքեր են լինում, երբ իշխանություններին դիմակայելը օրինական է»։

Ռոմվելն առաջին անգամ էր այդպես հստակ արտահայտում։ Նա այժմ դառնում էր ճիշտ լեզվերի պես։ Անխախտելի տրամաբանությունը նրան առաջ էր տանում. «Խորհրդածիր հապա այդ հարցերի մասին,— *շարունակեց նա,*— նախ, հարկ չկա՞ր արդյոք խոստովանել, որ «ժողովրդի բարությունը գերագույն օրենք է»՝ ստողջ դրույթ է։ Երկրորդ, չե՞նք խիզախում արդյոք (սուրբի հետ պայմանագիր կնքելու դեպքում) ենթարկել մեր հաղթանակի բոլոր պտուղները և վերադառնալ հակինին, եթե ոչ ավելի վատ պայմանների ու կարգերի։ Երրորդ բանակը չէ՞ արդյոք այն օրինական իշխանությունը, որին տրված կոչել է թագավորի դեմ պայքարելու համար»։

Ահա՛ այն։ Բանակը երկրում միակ օրինական իշխանությունն է։ Կրոմվելը մի նոր ուժով գիտակցեց այն, ինչն աղոտ կերպով զգում էր արդեն քառասունյոթ թվի գարնանը։ Ոչ թե պառլամենտը, որը վաղուց իրեն վարկաբեկել էր՝ փոխզիջողություն ունենալով հին կարգերին։ Եվ ոչ էլ, իհարկե, թագավորը՝ դլխավոր դերակատարը, որ սանձազերծել էր «չարաղետ պատերազմ»։ Բանակը, հաղթական բանակը, որը փախուստի մատնեց ռոյալիստների զորքերը և այժմ միահամուռ պահանջում էր հասարակությունից արդարություն, միապետության վճռական տապալում։

Դիմակայել այդ շարժմանը անհնարին էր։ Միակ ելքը՝ այն

www.a-pdf.com

գլխավորելն էր, խռովարարների հետ միանալը, չէ՞ որ նրանց կողմն էր ուժը։ Իսկ խի ղեը։ Ինքն էլ այդ չնկատելով, հարցում է անում նա արդեն ոչ թե Հեմոնդին, այլ սեփական խղճին. «Ի՞նչ ես մտածում դու նախախնամության մասին, որն այնքան շատ մարդկանց սրտեր է տրամադրել հատկապես դեպի այդ ուղին, մանավանդ այս խեղճ բանակում, որի մեջ մեծագոր աստվածը հանում է ի հայտ բերել իրեն»: Նա կրկին ու կրկին համոզում է իրեն, դիմելով Հեմոնդին, թե աստված այդ բանակի կողմում է, այդ «մի բուռ մարդկանց» կողմը, որն այնքան փայլուն հաղթանակներ է շնորհել։ Եվ այդ պատճառով էլ իրավացի են նրա պահանջները, այդ աստված ինքն է խելքի գցել նրան։

Եվ չպետք է վախենալ նրանցից, ում անվանում են լևելեր, և նրանց «կործանիչ համաձայնագրից», որն իր կողմն է գրավել անգամ բազում լավ մարդկանց։ Հասել է նրանց հերթը՝ ասելու իրենց խոսքը։ Արքայի գործը տանուլ է տրված։ Ի՞նչ լավ բան կարելի է սպասել մի մարդուց, որի դեմ աստված ինքն է վկայություն տալիս։

Նոյեմբերյան կարճատև օրը վերջացավ. վաղուց ժամանակն էր վառել մոմերը և զբաղվել գործով. զորքն առանց այդ էլ բավական ժամանակ մնացել է առանց հրամանատարի։ «Ռոբին, ես վերջացնում եմ: Եկ հարցում անենք մեր սրտերին. մի՞թե մենք կարծում ենք, որ վերջ ի վերջո բոլոր այս մեծ գործերը, որոնց նմանը շատ սերունդներ չէին կարող պատկերացնել, պիտի ավարտվի անարգանքով՝ բարի մարդկանց համար և հաջողությամբ՝ չարագործների համար: Մտորո՞ւմ ես հոգուդ խորքում, որ աստծու մեծ ողորմածությունն է տանում դեպի այդ բանը: Թե՞ դեպի այն, որ իր ժողովրդին սավորեցնի հակատալ նրան և սպասել ավելի լավին: Թող աստված ինքը լինի քո խորհրդատուն»:

Նա ընտրություն արեց։ Նա այսուհետև նրանց հետ էր, ովքեր ձգտում էին լիակատար խզման թագավորի հետ։ Բայց ի՞նչ է լինելու հետո։ Մի՞թե ժողովրդական իշխանություն, որին ձգտում էին լևելերները, և որը միշտ թվում էր իրեն, ինչպես և Այրթոնին, և առհասարակ իրենց համախոհ մարդկանց, անթույլատրելի անարխիա։ Իսկ գուցե և հենց իրեն, Օլիվեր Կրոմվելին է արարիչը ընտրել բարձրագույն ծառայության համար։ Իսկապես, եթե թագավորը մահապատժի ենթարկվի, իսկ նրա ժառանգները զրկվեն իշխանությունից, ո՞վ կլինի նրա փոխարեն։

. . Կգա արքա, բայց ինչպիսի՞,
Ո՞վ կկարողանա դառնալ արքա։

Նամակը չհասցրեց ընկնել Հեմոնդի ձեռքը։ Պառլամենտ եկավ Կարլոսի պատասխանը։ Նա արել էր մի քանի զիջումներ, բայց չէր համաձայնել եպիսկոպոսարանի վերացման հետ և անգլի-

www.a-pdf.com

կանական եկեղեցու փլուզմանը՝ թեկուզ և ժամանակավորապես։ Ոչ կշահի մարդը,— վշտաբեկ վերամբարձությամբ հայտարարում էր թագավորը,— եթե նա ձեռք բերի մի ամբողջ աշխարհ, բայց այդ անելիս կորցնի հոգին»։ Դրանով Նյուպորտյան բանակցություններն ավարտվեցին։ Նոյեմբերի 25-ին Հեմոնդին Արֆաքսի անունից հրաման տրվեց վար դնել լիազորությունները։ 30-ի երեկոյան հորդառատ անձրևի տակ զորքն ափ իջավ, թագավորը առնվեց կալանքի տակ։

Դեկտեմբերի 1-ին նա առանց հատուկ պատիվների Նյուպորտից ուղեկցվեց Անգլիայի հարավային ծովափի Հերսթ մռայլ ու խոնավ ամրոցը։ Ոչ մի շքախումբ՝ ո՛չ ծառաներ, ո՛չ մանկլավիկներ, ոչ ոքի, բացի երկու կամերդիներից, չթույլատրեցին նրան վերցնել իր հետ։ Այն սենյակը, որտեղ տեղավորեցին նրան, այնքան մութ էր, որ անգամ ցերեկը ստիպված էին վառել ջահերը։ Արտաքին աշխարհից թագավորը, պարզվեց, բոլորովին կտրված էր։ Նրա պահակը այժմ ոչ թե փափկասիրտ Հեմոնդն էր, այլ լռակյաց, դաժան Իվերը, «կրոմվելյան գնդապետը», անցյալում «ծառա եղած մի մարդ»։ Ջերբակալման պայմանները թույլ չէին տալիս տարակուսել. թագավորը բանտում էր։

Թագավորին դատի ենթարկելու միակ լուրջ արգելքը այժմ մնացել էր պառլամենտը։ Նա չէր պատրաստվում նահանջել։ Դրա ատելությունը բանակի նկատմամբ օրըստօրե աճում էր։ Նոյեմբերի 22-ին համայնքները որոշում ընդունեցին բանակի մասնակի զորացրման մասին։ Սպաների համբերությունը հատավ։ Վինձորում սկսեցին պատրաստվել, որ գրավեն Լոնդոնը և դուրս անցկացնեն պառլամենտում։

Իմանալով այդ մասին, Լիլբեռնը ձիով սուրաց Վինձոր, ուզիզ Լորդ Այրթոնը։ Քանի դեռ չի ընդունվել նոր սահմանադրություն, չի կարելի սպաներին ազատություն տալ, այլապես նրանք կգրավեն իշխանությունը և մոռացության կտրվեն ժողովրդի պահանջները։ Լիլբեռնն արդեն պատրաստ էր Լոնդոնյան լևելերներին ոտքի հանել սպաների դեմ։ Այրթոնը անհամբերությամբ ու վրդովմունքով լսեց այդ հավերժ անհանգիստ մարդու ենթագին ճառը։ Նա արդեն պատրաստ էր պոռթկալու, երբ խոսքին միջամտեց հաշտարար Հարիսոնը։ Սա առաջարկեց տեղծել նոր «ժողովրդական համաձայնագիր». դրա մշակմամբ զբաղվեն բանակի ներկայացուցիչները՝ պառլամենտի և լևելերների հետ միասին։ Լիլբեռնը սուս մնաց. լևելերների աջակցությունն ապահովված էր։

Համայնքները, ասես ցանկանալով արագացնել իրենց հաստատուն կործանարար հանգուցալուծումը, 125 ձայնով ընդդեմ 15-ի մերժեցին բանակային ռեմոնստրացիան։ Պրեսբիտերաականների կատաղի առաջնորդ Ուիլյամ Փրինը, որը կորցրել էր ականջները դեռևս Աստղային պալատի օրոք, առաջարկեց զին-

www.a-pdf.com

վորներին «խոովարարներ» հայտարարել և նրանց հրամայել ետ քաշվել Լոնդոնից պատշաճ հեռավորության վրա։ Բայց դա դատապարտված պալատի վերջին ջղաձգությունն էր արդեն։ Նոյեմբերի 30-ին մամուլում տպագրվեց բանակային խորհրդի դեկլարացիան, որտեղ խոսվում էր, որ պալատի մեծամասնությունն այժմ կազմում են դավաճանները. ի շահ ժողովրդի պետք է պառլամենտը մաքրել դրանցից։

Դեկտեմբերի 2-ին բանակը հանդիսավոր և մռայլ մտավ Լոնդոն։ Ֆերֆաքսը հրամանատարության հետ զբաղեցրեց թագավորական պալատը՝ Ուայթհոլը, զինվորները հորդառատ անձրևի տակ ճամբար զարկեցին Հայդ-պարկում։

Կրոմվելը դեռևս գտնվում էր Պոնտեֆրակտի մոտ, չնայած իրադարձությունները հրամայաբար պահանջում էին նրա ներկայությունը Լոնդոնում։ Ֆերֆաքսին ուղղված նամակում նա հույս էր հայտնում, որ շուտով կհանդիպեն և նոյեմբերի 28-ը նշում էր որպես իր մեկնման օր։ Բայց 23-ին էլ նա դեռ մնում էր իր տեղում։ Այդ օրը Ֆերֆաքսը նրան շտապ կանչեց և ուղարկեց, խնդրելով իրեն միանալ «հնարավորին չափ արագ»։ Սուրհանդակը այդ լուրը կարող էր նրան հասցնել 48 ժամում, և այնուամենայնիվ Օլիվերը դուրս եկավ դեկտեմբերի 1-ից ոչ շուտ՝ Լոնդոնի վրա բանակային արշավի և Կարլոսին Հերսթ ամրոց տեղափոխելու օրը։ Եվ չնայած գլխավոր հրամանատարության անընկմիտ հրամանին, չնայած այն բանին, որ նրան սպասում էին Վինձորում արդեն ամսի 2-ին, նա Լոնդոն ժամանեց միայն դեկտեմբերի 6-ի երեկոյան, երբ կարևորագույն ակտը, որ տանում էր դեպի հանդուգնությունում, արդեն կատարված էր։ Այդպիսի դանդաղկոտության բացատրությունը կարող էր լինել միայն մեկը. նա դիտակցաբար չէր ուզում մասնակցել պառլամենտի զոմանը։

Նա ինքը պառլամենտի անդամ էր։ Նա մինչև այժմ հարգանքով էր վերաբերվում սահմանադրական սկզբունքներին, որոնց վրա կառուցված էր պետական իշխանությունը, մասնավորապես պալատի անդամների անձնական անձեռնմխելիության սկզբունքին։ Բռնություն պառլամենտի վրա՝ ղտումը կամ նրա հալածումը ռազմական ուժով, նողկանք էր առաջացնում նրա մեջ և պատրաստ վախենում։ Բանակը, հալածելով պառլամենտին, կարող էր հսկողությունից դուրս գալ։ Եվ ի՞նչ կլինի այն ժամանակ։ «Ժողովրդական համաձայնագրի» հաստատումը՝ դրա նույնիսկ կրճատված տեսքով, սպառնում էր ջնջել նրան ոչ միայն որպես հրամանատարի, այլև սպառնում էր բարեկեցությանը նրա ողջ դասակարգի՝ միջին սեփականատերերի, որոնք ապրում են ոչ այնքան ճոխ, բայց և «ոչ անհայտության մեջ»։ Մի անգամ բռնություն գործադրելով պառլամենտի վրա, ապստամբած ժողովուրդը կարող է ստեղծել իր կարգը և այն ժամանակ վրա

www.a-pdf.com

կհասներ հենց այն անիշխանությունը, որից այնքան վախենում էր նա։ Բայց այլևս ոչնչի խանգարել նա չէր կարող։ Դրա համար էլ ամենից լավ էր թողներ, որ իրադարձություններն ընթանային իրենց հունով, իսկ ինքը առայժմ մնար ստվերում։

Այդ հինգ ցրտաշունչ օրերի ընթացքում, մինչ Կրոմվելը Պոնտեֆրակտից անշտապ շարժվում էր դեպի Լոնդոն, կոնֆլիկտը պառլամենտի և բանակի միջև ոչ միայն հասավ իր գագաթնակետին, այլև լուծվեց։ Դեկտեմբերի 4-ին, իմանալով Կարլոսին Հերսթի ամրոց տեղափոխելու մասին, պառլամենտական պրեսբիտերներն ընդունեցին մի բանաձև, որտեղ ասված էր, թե Լագավորը «տեղափոխվել է առանց պառլամենտի գիտության և համաձայնության»։ Դրանից հետո սկսեցին քննարկել արքայի հետ պայմանագրի պայմանները։ Նիստն ընթանում էր ողջ ցերեկը և ողջ գիշերը։ Փրինը դարձյալ խոսեց մի քանի ժամ շարունակ։ Նրա դեմքը, այտին դահճի խարանի սպին, սարսափելի էր։ Առավոտյան դեմ 140 ձայնով ընդդեմ 104-ի որոշեցին, որ Լագավորի պատասխանները գոհացուցիչ են և բավականաչափ լիմք են հանդիսանում խաղաղություն կնքելու համար։

Նույն այդ օրը ինդեպենդենտների և լևելերների միացյալ կոմիտեն վերջացրեց աշխատանքը «Ժողովրդական համաձայնագրի» նոր տարբերակի վրա։ Դեկտեմբերի 5-ին սպաների խորհրդակցությունը, որոնց միացել էին զինվորական նիստից ուղարկի այստեղ եկած պառլամենտական ինդեպենդենտները, որոշեց պրեսբիտերների ճակատագիրը։

Հաջորդ օրվա քամոտ, խոնավ առավոտը դեռ չէր հասցրել լուսանալ, երբ Լոնդոնի բնակիչներն արդեն արթնացել էին հազարավոր զինվորների քայլերից, որոնք բոլոր կողմերից մոտենում էին Վեսթմինսթերին։ Ժամը 7-ին մոտ պառլամենտի շենք տանող բոլոր անցուղիները բռնված էին զինվորներով։

Համայնքների պալատի դռանը կանգնել էր գնդապետ Պրայդ՝ ձեռքին ցուցակ։ Նա, ինչպես ասում են, սկսել էր իր կյանքը որպես սայլապան թե՞ բարապան, այնուհետև առաջ էր քաշվել որպես Կրոմվելի զինակիցը երկու քաղաքացիական պատերազմներում. աչքի էր ընկել Նեսբիի և Պրեսթոնի մոտ։ Այժմ նա բանակի արմատական թևի հայտնի գործիչ էր։ Նրա թիկունքում անդնած էր, միշտ ժպտացող, լորդ Գրեյը։ Երբ պալատի անդամներից որևէ մեկը մոտենում էր դռանը, Գրեյը հիշատակում էր նրա անունը, իսկ Պրայդը գրանցում էր ցուցակում։ Ոմանց խնդրվում էր գնալ նիստերի դահլիճ, մյուսներին Պրայդն ասում էր. «Դուք ներս մի գնացեք» և փակում էր մուտքը։ Բաղադրածներն այսպիսով քանի գնում դառնում էին ավելի ու ավելի շատ։ Աղմուկ բարձրացավ։ «Ես՝ իմ կամքով ոչ մի քայլ ետ չեմ անի»,— գոռաց Փրինը, որին նույնպես չէին թողել դահլիճ։ Մի քանի սպաներ, զինվորների բարձր քրքիջների տակ, պառլամենտական վետերանին ցած գլորեցին աստիճաններից։

www.a-pdf.com

Ուրիշ «խոովարարների» հետ միասին Փրինին հրեցին հարևան սենյակը։ Այնտեղ հավաքվել էր մոտ քառասուն մարդ։ Կեսօրից հետո եկավ Հյու Պիթերսը՝ կողքից սուրը կախած, և սկսեց բոլորին ցուցակագրել։

— Ի՞նչ իրավունքով եք,— վրա տվին նրան դեսպուտատները,— դուք մեզ ձերբակալել և պահում փակի տակ։ Դուք ի՞նչ իրավունքով չեք թույլ տալիս, որ մեր տեղն զբաղեցնենք պառլամենտում։

Քարոզիչը, ինչպես երկու տարի առաջ կոռնետ Ջոյսը, ցույց տվեց կողքից քաշ արած երկար սուսերը։

— Ա՛յ այս բանի իրավունքով,— ասաց նա և դուրս եկավ։

Այնուհետև զինվորները նրանց դուրս տարան Վեսթմինսթերից. ամբողջ մնացած ցերեկն ու գիշերը նրանք ստիպված անցկացրին փակի տակ, մոտակա պանդոկի ցրտաշունչ նկուղում, որ հայտնի էր «Դժոխք» անվանումով։

Պալատի բողոքները, որտեղ դեռևս շատ պրեսբիտերներ էին մնացել, նրա դիմումները Ֆերֆաքսին և բանակի խորհրդին, նրա պահանջները՝ իրենց տեղերը վերադարձնել վտարված անդամներին, ոչնչի չհանգեցրին։ Հետևյալ օրը պառլամենտի զտումը շարունակվում էր։ Ընդհանուր առմամբ վտարվեց 143 մարդ։

Դա պառլամենտի նշանավոր պրայդյան զտումն էր, որն այնտեղից հեռացրեց այն պրեսբիտերներին, որոնք դիմադրում էին հեղափոխությանը։ Այսուհետև Երկարատև պառլամենտում ըստ ցուցակի մնաց մոտ ութսուն անդամ, դրանք բոլորը ինդեպենդենտներ էին, թագավորի դեմ դատ բացելու և ֆեոդալական կարգերի ոչնչացման կողմնակիցներ։ Տարօրինակ կերպով լորդերի պալատը, որտեղ վերջին ժամանակներս ժողովվում էր ոչ ավելի քան տասը մարդ, մնացել էր անձեռնմխելի։ Նրա վրա պարզապես դադարել էին ուշադրություն դարձնել։

Դեկտեմբերի 6-ի երեկոյան, երբ զտումը հիմնականում արդեն ավարտված էր, Լոնդոն ժամանեց Օլիվեր Կրոմվելը։ Նրան հաղորդեցին կատարվածի մասին, և նա ասաց.

— Ես ոչինչ չեմ իմացել դրա մասին։ Բայց քանի որ այն կատարվել է, ես ուրախ եմ դրա համար և կաշխատեմ պաշտպանել այն։

Հնարավոր է, որ նա իսկապես ուրախ էր, որ կատարվել է զտում, ոչ թե պառլամենտի ցրում։ Նա շարժվեց ուղղակի դեպի Ուայթհոլ՝ բանակային հրամանատարության զորակայանը, և տեղավորվեց թագավորի հարկաբաժնում։

Հետևյալ օրը Կրոմվելն իր տեղը գրավեց պալատի նիստերում և սպաների խորհրդում։ Վիճաբանությունները ծիծաղելիության չափ կրճատված պալատում (երբ ժողովվում էր Երկարատև պառլամենտը, այն հաշվվում էր ավելի քան հինգ հարյուր մարդ) սկսվեցին Հենրի Մարթենի շարախինդ մի կատակով։

www.a-pdf.com

Քանի որ թագավորին վիճակված է Տոփերը,— ասաց նա,— միանգամայն տրամաբանական է, որ նրա բարեկամները (նա նկատի ուներ պանդոկում փակված պրեսբիտերներին) ուղարկվեն «Դժոխք»։ Իսկ Կրոմվելին պետք է պատշաճը հատուցել իր ծառայությունների համար։ Ոչ ոք չպաշտպանեց Մարթենի խեղկատակային տոնը։ Կրոմվելի ծառայությունները նշելու առաջարկը ամենայն լրջությամբ պաշտպանություն գտավ Նյուպորտից վերջերս վերադարձած Հենրի Վենի կողմից։ Կրոմվելին տանդիսավորապես շնորհակալություն հայտնեցին։

Այսուհետև թագավորին դատի տալու ոչ մի խոչընդոտ չմնաց։ Տարբեր կոմսություններից, բանակային գնդերից, Լոնդոնի քաղաքացիներից եկող հանրագրերը, որոնք թափվում էին, ինչպես առատության եղջյուրից, պահանջում էին պատժել երկու պատերազմներում արյունահեղության մեղավորներին։ «Արդարություն՝ արդարություն»,— այս կոչը բարձրաձայն հնչում էր երկրով մեկ։ Ամբողջ բանն այժմ մեղադրանքը ձևակերպելու և բուն դատավարությունը կազմակերպելու մեջ էր։

Կրոմվելն առաջվա պես ջանում էր մնալ ստվերում։ Պառլամենտի նիստերում նա լռում էր։ Իսկ պառլամենտը, որտեղ ժողովվում էին այժմ հիսուն մարդուց ոչ ավելի, և նրանցից շատերը, ինչպես և Կրոմվելը, սպաներ էին, ընդունում էր կարևոր որոշումներ. դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում այն կրկին հաստատեց «Ոչ մի համաձայնագիր» օրինագիծը, անվավեր հայտարարեց այն բոլոր դրույթները, որոնք առաջարկվել ու ընդունվել էին Նյուպորտում, քվեարկեց հօգուտ այն պրեսբիտերների ձերբակալման, ովքեր խառնված էին շոտլանդական զորքերի Անգլիա հրավիրման մեջ։

Դեկտեմբերի 15-ին Կրոմվելի ներկայությամբ որոշում կայացվեց արքային տեղափոխել Վինձորի ամրոցը։ Այդ կարևորագույն գործը հանձնարարեցին գնդապետ Հարիսոնին, անցյալում հուսգործի և փաստաբանական գրագրի որդուն, իսկ այժմ բանակային պահանջների ամենակրակոտ ջատագովին, սպաների ամենաանկաշառին և նույնքան նախանձախնդիր մեկին՝ քաղաքական, ինչպես և կրոնական գործերում։

Երկու հարյուր հեծյալներից կազմված ջոկատը, որոնցից մեկն երկուսը՝ թագավորն ու նրա ծառան՝ Հերբերտը, չէին հասնում մինչև ատամները, արագորեն շարժվում էին դեպի հյուսիս։ Հերսթ ամրոցից նրանք դուրս էին եկել դեկտեմբերի 19-ին։ Միշտ փութաջան արքայազն Ռուփերտն այս անգամ ուշացավ։ Նա իր թռչող տորմիղով ժամանեց, որպեսզի ծովից հարձակվի ամրոցի վրա և առևանգի արքային, այնտեղ արդեն ոչ ոք չկար։ Դերի արքան գնում էր Հարավային Անգլիայի ճանապարհներով և փոքրիկ քաղաքներում, որտեղ հեծյալները ճաշում ու հանգստանում էին, առաջվա պես հավաքվում էր ազնվական և

www.a-pdf.com

հասարակ մարդկանց ամբոխը. ոմանք միայն մսիկ տալու, ոմանք՝ իրենց կարեկցությունն ու զայրույթն արտահայտելու, իսկ ոմանք էլ՝ ապաքինվելու համար։ Քանի որ միամիտ գյուղացիները մինչև հիմա էլ հավատում էին, որ աստծո օծյալի ձեռքի հպումը իրենց կբուժի հիվանդությունից, նրա մոտ տանում էին գեղձախտավոր երեխաներին, կաղերին ու անդամալույծներին։ Պահապանները հալածում էին դրանց։

Ինչ-որ տեղ կես ճանապարհին հեծյալների մի նոր ջոկատ միացավ թափորին։ Նրանց այժմ առաջնորդում էր վայելչակազմ, գեղատեսիլ և հոյակապ զինված մի սպա՝ գոմշի կաշուց կարած կոլետով, թավշյա բերետով և վառ կարմիր շարֆով, որ գոտևորվում էր բարեկազմ մեջքը։ Դա գնդապետ Հարիսոնն էր։ Կարլոսը հատուկ ուշադրությամբ ու երկյուղով էր նայում նրան։ Նյուպորտի բանակցությունների ժամանակ նրան տեղեկացրել էին, որ Հարիսոնը, և ոչ ուրիշ ոք, որոշել է սպանել նրան։ Այդ նա էր, որ այն ժամանակ առաջին անգամ լինելով, նրան անվանել էր «Արյունարբու Մարդ»։ Գնդապետի բաց, սղնիվ դեմքը դուր էր եկել արքային։ Սա ընտրեց պահը և դիմեց իր ուղեկցորդ պահակին։

— Ես լսել եմ,— ասաց Կարլոսը,— որ դուք մասնակցում եք այն դավադրությանը, որը նպատակ ունի սպանել ինձ։

— Օ՜, մի վախեցեք,— քաղաքավարությամբ պատասխանեց Հարիսոնը,— պառլամենտի անդամների մոտ կգտնվի այնքան ազնվություն և արդարամտություն, որպեսզի չդիմեն կեղտոտ միջոցների։ Եթե նրանք որևէ բան վճռելու էլ լինեն ձեր նկատմամբ, դա բացահայտ կանեն, դատարանի միջոցով, ամբողջ աշխարհին ի տես։

Այդ խոսքերը փոքր-ինչ հանգստացրին Կարլոսին, թեպետև նա ոչ մի կերպ չէր պատկերացնում, որ իրեն՝ Անգլիայի թագավորին, իր հպատակները, իր ծառաները կարող են դատել և բացեիբաց մեղադրել ինչ-որ բանում... Նրանք չեն հանդգնի այդ բանն անել։

Ուրախ և հարմարավետ Վինձորյան ամրոց տեղափոխվելը արքայի սիրտը լցնում էր հույսով։ Նա կարծում էր, թե քամին այլ կողմից է փչում և պատրաստվում են նոր բանակցություններ սկսել։ Դրա համար էլ չէր համարձակվում փախուստի դիմել, մի բան, որ ճանապարհին իրագործելը այնքան էլ հեշտ չէր։ Նրա կամակատարների դավադրությունը, որոնք գաղտնորեն հետևում էին հեծելախմբին, կայանում էր հետևյալում. լորդ Նյուբերդի կալվածքից ոչ հեռու, որի ձիանոցում գտնվում էր Անգլիայում ամենաարագավազ վարգաձին, թագավորի նժույգը պետք է կաղար։ Դրա փոխարեն կարող էին առաջարկել այդ վարգաձին. դրանով Կարլոսը հեշտորեն կարող էր փախչել ու ազատվել ուզածդ հետապնդումից։ Սակայն երբ հասան կալվածք,

www.a-pdf.com

յայտնվեց, որ վարգաձին նախօրեին վնասել է ոտքը, և դավաճանությունը ձախողվեց։ Արքան, ասենք, այնքան էլ չվշտացավ. դա համար անակնկալ չէր, թե ինչ էին մատուցելու իրեն Լոնդոնում։

Դեկտեմբերի 23-ին հասան Վինձորի ամրոցը, և թագավորի վրա կրկնակի հսկողություն սահմանեցին։ Պարեկին տրված հրահանգում ասված էր, որ պահակախումբը ամրոցի և Կարլոս Մայուարտի կացարանի շուրջը պետք է հսկի զոր ու գիշեր, որ նրա անձնական ծառաների թիվը պետք է ծայրահեղորեն կրճատվի, որ սպաներից մեկը պարտավոր է օրը բոլոր թագավորի հետ լինել։ Զբոսանք թույլատրվում էր միայն ամրոցի տեռատում։ Ամեն մի տեսակցություն արգելված էր։ Քաղաքից հեռացվում էին բոլոր «նենգամիտները», ռոյալիստներին համակրելու մեջ կասկածելիները, բոլոր անբաններն ու շրջմոլիկները, որոնք կարող են խառնակչություն սարքել և թագավորին օգնել փախչելու։

Լոնդոնը հիշեցնում էր ռազմական ճամբար՝ վճռական մարտից առաջ։ Ավագ սպաները նիստ էին անում պալատում, իսկ զինվորները՝ բանակի խորհրդում, որը փոխադրվել էր Ուայթհոլ։ Սոսկին արքայական պերճաշուք ամրոցը, որ շռայլորեն կահավորված էր անդրծովյան գորգերով, թանկարժեք կտավներով և ֆանտաստիկական նրբակերտ կահույքով, այժմ դարձել էր ոչ այն է որանոց, ոչ այն է պետական հիմնարկություն։ Իրենց տներից դուրս՝ ահեղ իրադարձությունների այս կենտրոնն էին տեղափոխվել պառլամենտի անդամները և նրանց հետ մեկտեղ բանակի սպաները՝ Հարիսոնը, Ֆլիթվուդը, Հեթչինսոնը, Այրթոնը, Ուոդսրին, Հեգլոն։ Քնում էին ընդհատումներով, հաճախ ցերեկը, արքայական պերճաշուք անկողիններ մեջ, ամպհովանիի տակ։ Այստեղ էր հավաքվում բանակային խորհուրդը, այստեղ էին դալիս լեգեոները՝ սպաների հետ «ժողովրդական հաճայնագիրը» քննարկելու համար։

Այս քննարկումները ոչ մի էական որոշումների չէին հանգեցնում։ Զուր էին ագիտատորները կրկին ու կրկին կոչ անում ժողովրդին թույլ տալ մասնակցելու պետության կառավարմանը։ Զորքում մեծամասնությունը կազմում էին «մետաքսե ինդեպենդենտները», նրանց ձայներն ավելի բարձր էին հնչում, ավելի միահամուռ, նրանք ասես մշուշապատում էին հավասարությունների պարզ ու մեկին պահանջները, և դրանցից մնում էին միայն դատարկ խոսքեր։ Վերջ ի վերջո գործը ներկայացվեց պառլամենտ և մերժվեց, նկատի ունենալով թագավորի դեմ կատարելիք դատավարությունը։

Ժողովուրդը ալեկոծվում էր։ Քարոզիչների ճառերը քանի գնում ավելի ու ավելի սպառնալից էին դառնում։ «Վա՜յ քեզ, երկի՛ր,— ասում էին նրանք,— որ թագավորդ մանուկ է»։

www.a-pdf.com

Դրանք տագնապալի օրեր էին Կրոմվելի համար։ Նա հասկանում էր, որ Կարլոս Ստյուարտի ժամը հասել է, և միապետի նկատմամբ առաջիկա դատի վրա նայում էր միանգամայն պատշաճ լրջությամբ։ Բայց նա և՛ ժողովրդի առաջ, և՛ պատմության, և՛ իր իսկ խղճի առաջ փնտրում էր արդարացումն այն բանի, ինչը պետք է կատարվեր։ Մի քանի անգամ նա թաքուն այցելել էր բանտում ձերբակալված լորդ Համիլտոնին, նույն այն Համիլտոնին, որը վաղուց չէր, ինչ մարտնչում էր իր դեմ՝ շոտլանդական զորքերի գլուխն անցած։ Կրոմվելը, ինչպես ասում էին, ձգտում էր այն բանին, որ Համիլտոնը մատներ, թե ով է իրեն հրավիրել զորքով ներխուժելու Անգլիա։ Գուցե և երկրի դեմ այդ ծանրագույն հանցագործությունների մեջ մեղավորը թագավորն ի՞նքն է, կամ նրա մերձավոր խորհրդականնե՞րը՝ ռոյալիստ լորդերը։ Այդ դեպքում նրանց դեմ եղած մեղադրանքները բավականաչափ հիմնավորում կստանան։ Բայց Համիլտոնը անդրդվելի էր։ Անգամ մահվան դեմ հանդիման նա հրաժարվեց մատնել դաշնակիցներին։

Դեկտեմբերի 18-ին Կրոմվելը գաղտնի խորհրդակցություն ունեցավ պառլամենտի և բանակի մի քանի առաջնորդների հետ։ Հաջորդ օրը նա նրանց ընդունեց Ուայթհոլում, արքայական անկողնում պառկած։ Նա դեռ տատանվում էր։ Երբ խոսքը գնում էր թագավորին դատի տալու մասին, նա պահանջում էր նախ դատել գլխավոր հանցագործներին՝ լորդ Նորիչին, Կեփելին և ուրիշների, որոնք սանձազերծել էին երկրորդ քաղաքացիական պատերազմը։ Կավալերներից մեկը դեկտեմբերի 21-ին գրել է. «Զանազան ողորմելիներ լևելերների միջից ամենից ավելի են ծարավի արքայի մահվանը, բայց այժմ, տարօրինակ է ասել, ինձ հավատացրել են, որ Կրոմվելը նահանջել է նրանց դիրքերից, նրա և նրանց ծրագրերն անհամատեղելի են, ինչպես ջուրն ու կրակը։ Սրանք որոշում են մաքուր դեմոկրատիա, իսկ նա՝ օլիգարխիա. պարզվում է, որ նրանց վայրի ռեմոնստրացիան և պլանները՝ զրկել արքային կյանքից, նա պաշտպանում է միայն նրա համար, որ լևելերներին ստիպի ի հայտ բերել իրենց բոլոր չարաղետ սկզբունքներն ու մտադրությունները, որոնք բացահայտվելով կդառնան ավելի վանող և նողկալի, և այդպես ավելի հեշտ կլինի ճնշել նրանց... Նույնիսկ դատն սկսվելու օրը, հունվարի 8-ին, ոմանք փսփսում էին. «Կրոմվելն ունի մի քանի սպաներ, որոնք ուզում են փրկել արքայի կյանքը։ Միայն թե կարելի լիներ այդ անել՝ առանց վնասելու այն գործին, որի համար նրանք մարտնչել են...»։

Մինչև մի ինչ-որ պահ նա իսկապես գտնվում էր անվճռականության մեջ։ Դեկտեմբերի 25-ին նա առաջարկում էր պահպանել թագավորի կյանքը, եթե նա ընդունի իրեն առաջարկված պայմանները։ Նա գիտակցում էր, որ եթե թույլ տա դատ բացել արքայի դեմ և գլխատել նրան, ապա դրանով իսկ կստեղծի շատ

www.a-pdf.com

վտանգավոր նախադեպ, և ոչ մի միապետ այսուհետև չի կարող ապահով զգալ իր իշխանությունն ու կյանքը։ Նա ձիգ էր տալիս մինչև վերջին հնարավորությունը, բայց նրա վրա հարձակվում էին, նրանից վճիռ էին պահանջում։ Այդ ովքե՞ր էին, որ գործում էին այդպես եռանդով։ Սպանե՞րը, բանակից դրդված սպանե՞րը, գարուամենտական հանրապետականնե՞րը Հենրի Մարթենի կամ Լեդլոյի տիպի։ Դա մինչև այժմ մնում է անորոշ։ Բայց ճնշումն ուժեղ էր (շատ անգամ է Կրոմվելը դա զգալու իր վրա), և նա համարձակություն առավ։ Հետևյալ օրը նա արդեն պալատի առաջ խոսում էր այսպես. «Եթե որևէ մեկը նախկինում առաջարկեր տապալել թագավորին և նրա ժառանգներին, ես նրան մեծագույն դավաճան և խռովարար կհամարեի։ Բայց նախախնամությունը մեզ վրա է դրել դա, և ինձ ոչինչ չի մնում անելու, քան հպատակվել աստծո կամքին, թեպետև ես դեռևս պատրաստ էլ չեմ ասելու իմ կարծիքն այդ մասին»։ Նա դարձյալ հենարան էր որոնում նախախնամության մեջ, որը ղեկավարում էր իրադարձությունների անկասելի զարգացումը։ Այդպիսի ճառերի համար թշնամիները (և՛ աջից, և՛ ձախից) հետո մեղադրում էին դրան երկերեսանության մեջ։ Սակայն դա երկերեսանություն չէր, այլ իմաստուն քաղաքական դիրքորոշում։ Իր վրա վերցնել պատասխանատվությունը մի այդպիսի չլսված ու չտեսնված գործի, դատ՝ գերագույն իշխանությունը կրող անձի, աստծո օծյալի դեմ։ Դա չէր համարձակվում այդ բանն անել։ Մոր կաթի հետ յուրացված համոզմունքները թույլ չէին տալիս նրան արքայասպան դառնալ։

Այլ բան, եթե նախախնամությունն ինքն էր մահապատժի ենթադրում անարժան միապետին։ Այդ դեպքում աստծո հնազանդ ստրային ոչինչ չի մնում անելու, քան ենթարկվել։ Բայց նախախնամությունը պիտի ի հայտ բերի իրեն ի տես բոլորի և աներկբայելի պարզորոշությամբ. եթե դատն ու մահապատիժը պետք է կայանան, դրանք պիտի տեղի ունենան բաց, ամբողջ ժողովրդի առաջ, օրինականության ընթացակարգը ըստ ամենայնի պահպանելով։

Իսկ ժողովրդի կամքը (հենց դա չէ՞ր միթե այդ ժամանակ Կրոմվելի գիտակցության մեջ նույնանում նախախնամության հետ) անշեղորեն տանում էր դեպի դատ և դեպի մահապատիժ։ Դեկտեմբերի 23-ին համայնքների պալատը որոշեց կոմիտե ստեղծել թագավորին դատական պատասխանատվության ենթարկելու համար։ Աստծո օծյալը, «աստվածային օրենքով» հաստատված գերիշխան անձը, ենթարկվում էր բաց դատի իր հանցագործությունների համար։ Դա նախադեպ չունեցող բան էր։ Աշխարհի պատմության մեջ միայն մի անգամ էր նման կործանարար հարված հասցվել միապետության և հենց նույն այդ տոհմածառին, Ստյուարտների՝ աստծու անիծած տոհմածառին։

www.a-pdf.com

Վաթսուն տարի առաջ անգլիական պերերի և անգլիայի թագուհու դատարանը քննում էր մոլորյալ ոչխար Մարիա Ստյուարտի գործը։ Բայց նրան դատում էր թագուհի-քույրը, որը դիրքով նրան հավասար էր, նրան դատում էր ամուսնական անհավատարմության, ամուսնասպանության մեղսակից լինելու և նրա իշխանության դեմ հանցափորձ կատարելու համար։ Այժմ գործն այլ բնույթ ուներ։

Հպատակները՝ ցածր արարածները, անտոհմ ու անցեղ վասալները, հավաքվել են դատելու իրենց ինքնիշխանին՝ հորը և տիրակալին։ Եվ հանցագործությունն էլ այլ բնույթի էր. ոչ թե պարզապես մարդկային ցանկասիրության կամ մարդասպանության մեջ էին մեղադրում թագավորին, այլ սեփական ժողովրդի դեմ թշնամական գործողությունների, զանգվածային արյունահեղության, հպատակների դեմ պատերազմ սանձազերծելու մեջ։

Բայց ո՞ր դատարանը կհանդգնի դատել արքային։ Ի՞նչ իրավունքով։ Ի՞նչ մեղադրանքներ կարող են ներկայացվել նրան։ Ինչպիսի՞ն կլինի պատիժը և ո՞ր իշխանությամբ կիրականացվի այն։ Նույնիսկ ամենահամարձակ և հետևողական հեղափոխականները դժվարանում էին պատասխանել այդ հարցերին։

Իսկ դատը մոտենում էր։ Հանրագրերը, լեցուն հատուցման և դատապարտման ոգով, բազմապատկվում էին օրըստօրե։ Դրանց ճնշման տակ 1649 թվականի հունվարի 1-ին համայնքների պալատը որոշում կայացրեց. «Կարլոս Ստյուարտը... նպատակ էր դրել ամբողջովին ոչնչացնել այս ազգի հին և հիմնական օրենքներն ու իրավունքները և դրանց փոխարեն հիմնել կամայական և բռնակալական կարգ, հանուն որի նա դաժան պատերազմ սանձազերծեց ընդդեմ պառլամենտի ու ժողովրդի, պատերազմ, որն ամայացրեց երկիրը, սնանկացրեց գանձարանը, կասեցրեց օգտակար զբաղմունքներն ու առևտուրը և հազարավոր մարդկանց կյանք խլեց... Ուստի թագավորը պետք է պատասխանատվության ենթարկվի ներկա պառլամենտի կողմից նշանակված, 150 անդամից բաղկացած հատուկ դատական պալատի կողմից, երկու գերագույն դատավորների նախագահությամբ»։ Հրապարակեցին այդ արդարության Գերագույն դատարանի անդամների ցուցակը. այն պետք է գլխավորեին թագավորության գլխավոր դատավորները՝ Սենթ-Ջոնը, Ռոլլը և Ուիլդը։

Եվ Գերագույն դատարանի անդամների մեծամասնության համար, որ հավատարիմ էին մնացել պերերի պառլամենտին, համայնքների պալատի դեպուտատներին, ունևոր սքվայրներին, հանկարծակի անհետաձգելի գործեր ծագեցին հեռավոր կալվածքներում։ Սկսվեց դատարանի անդամության թեկնածուների անկասելի փախուստը Լոնդոնից։ Մեկնել էին իրավաբաններ Ուայթլոքը, Սելդենը, Ուլդրինգթոնը՝ նրանք, ում ծառայությունների կարիքն ամենից ավելի էր զգում բանակի խորհուրդը դատական ընթացակարգի և բանաձևումները մշակելու համար։

www.a-pdf.com

Լ. Էին «գլխավոր դատավորներ» Ռոլլը, Սենթ-Ջոնը, Ուիլդը։ Այդ հանկարծակի անկողին ընկան։ Նրանք վախենում էին թագավորից, որին պետք է դատեին, և՛ ժողովրդից, որ նրանց ուզում էր ջնջական գործողություններին։

Դրանց առջև, ովքեր հեղափոխությունն առաջ էին տանում, հացավ ևս մի արգելք։ Որպեսզի համայնքների որոշումը ունքի ուժ ստանար, պահանջվում էր լորդերի համաձայնությունը։ Լորդերը չցանկացան դա տալ։ Կոմս Մանչեստերը հայտարարեց, թե միայն թագավորն իրավունք ունի գումարել կամ արձակել պառլամենտը, և այդ պատճառով էլ անհեթեթություն է դրան մեղադրել պառլամենտին դավաճանելու մեջ։ Կոմս Նորթամբերլենդն ավելացրեց, որ դեռևս հայտնի չէ, թե ով է առաջիր սանձազերծել քաղաքացիական պատերազմը. թագավո՞րը, թե՞ պառլամենտը։ Լորդ Դենբին բացականչեց, թե՝ ավելի լավ է իրենն մաս-մաս անեն, քան թե մասնակցի այդ անփառունակ գործին։ Լորդերի պալատն իր տասներկու անդամներով հունվարի 2-ին միաձայն մերժեց թագավորին դատի տալու մասին օրինագիծը, և նիստը հետաձգեց մի շաբաթով։

Ի պատասխան համայնքների պալատը հունվարի 4-ին ընդունեց երեք նշանավոր բանաձև.

«1. Ժողովուրդը, գտնվելով աստծո առաջնորդության տակ, անդիսանում է ամեն մի արդարացի իշխանության աղբյուր։

2. Անգլիայի համայնքները, որ հավաքված են պառլամենտում, լինելով ժողովրդի ընտրյալները և ներկայացնելով նրան, գերագույն իշխանություն ունեն պետության մեջ։

3. Այն, ինչը համայնքները պառլամենտում կ՞ուզակեն որպես դրանք, պետք է ունենա օրենքի ուժ, եթե նույնիսկ ո՛չ թագավորը, ոչ լորդերը չհամաձայնեն դրա հետ»։

Այսպես հին, դարերով գոյություն ունեցող պետական կարգը ոչնչացված էր և ժողովուրդը՝ հայտարարված ամեն մի իշխանության աղբյուր։ Ըստ էության այդ ակտը Անգլիայում հանրապետություն էր հաստատում։

Իրադարձություններն սկսեցին ավելի սրընթաց զարգանալ։ Մարդուն մերժեցին հանդիպել ամուսնու հետ։ Թագավորը զրկված էր իր շքախմբի մեծ մասից՝ պալատականներից, մանկլավիկներից, ծառաներից։ Պալատական վարվելաձևը դադարեցրին պահպանել. նրան սկսել էին կերակուր մատուցել ոչ ծածկված սուրացարաններով, ուտելիքը մինչև Կարլոսին տալը ոչ ոք համտես չէր անում, ոչ ոք նրա առաջ ծնկի չէր գալիս։

Գերագույն դատարանի անդամների թիվը կրճատվելով հասավ 135 մարդու, իսկ քվորումն ապահովում էր ասպետցուցիչ մի խումբ՝ 20։ Դատը կազմակերպողները գիտեին, որ իրենց համար դժվար կլինի այդպիսի գործի համար պատրաստակամ մարդիկ գտնել։ Դատավորների ցուցակում առաջինը Ֆերֆաքսն էր, երկրորդը՝ Կրոմվելը, երրորդը՝ Այրթոնը։

www.a-pdf.com

Բայց դատարանի անդամների փախուստը Լոնդոնից այժմ էլ շարունակվում էր։ Մեկնում էին նաև հանրապետականները։ Նրանցից ոմանք, ինչպես Ջոն Լիլբեռնը, կորցրել էին հավատը բարձր սպանների դեմոկրատականության նկատմամբ, ոմանց, ինչպես Հենրի Վենին, զզվեցրել էր «բռնությունը պառլամենտի վրա», որ գործադրվում էր Պրայդի կողմից։ Նրանք ոչ առանց հիմքի երկյուղ էին կրում ռազմական դիկտատուրայի հաստատումից։

Թագավորի դատապարտումը պահանջող հեռագրերի հետ մեկտեղ պառլամենտ և բանակի խորհուրդ էին գալիս բողոքներ. Թագավորի դեմ դատը փորձում էին կանխել և՛ ֆրանսիական դեսպանորդը, և՛ Շոտլանդիայի ներկայացուցիչը, և՛ պրեսբիտերական քարոզիչները, և՛ ռոյալիստական պարսավագրեր հորինողները։ Լոնդոնը տագնապում էր հակասական լուրերից, կանխագուշակություններից, երկյուղից։ Միայն մայրաքաղաքում տեղավորված հեղափոխական բանակի զինվորներն էին, որ պահպանում էին հանգստություն։ Նրանք վստահ էին իրենց իրավացիության մեջ։

3 ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Հունվարի 8-ին, ցերեկվա ժամը 2-ին, արդարության Գերագույն դատարանը գումարվեց Վեսթմինսթերի Նկարազարդ պալատում։ Դատը Թագավորի դեմ դադարել էր մոլեռանդների սպառնալիք լինելուց. անհավատալի իրականություն էր դարձել։

Վեսթմինսթերի հնամենի պալատի՝ Հենրիխ III Պլանտագենետի նախկին ննջարանի՝ Camera Depicta-ի, պատերը մի ժամանակ դարբամորեն զարդարված էին աստվածաշնչյան տեսարաններով և սրբերի կյանքը պատկերող որմնանկարներով։ Ոսկին և ծիրանագույնը վաղուց խունացել էին։ Պատուհանների որմնախորշերի երկայնքով արված քանդակները պոկվել թափվել էին, բայց Նկարազարդ պալատը առաջվա պես մնում էր Վեսթմինսթերի ամենանշանավոր դահլիճներից մեկը։ 1558 թվականի աշնանը Եղիսաբեթը հենց այստեղ էր բերել այն դատավորներին, որոնք Մարիա Ստյուարտին մեղադրում էին ամուսնասպանության և դատապարտելի կապի մեջ։ Կայանքի ենթարկված շոտլանդական թագուհու նկատմամբ հենց այստեղ էր կայացվել նախնական դատավճիռը. «Մեղավոր է»։

Այժմ որմնանկարները ծածկված էին Կարլոս Ստյուարտի սեփականությունը հանդիսացող Հերակլեսի սխրանքները պատկերող ֆրանսիական շքեղ գոբելեններով։ Այստեղ էր կոկին վիճակված նախնական դատավճիռ կայացնել Թագավորի նկատմամբ։

Կրակը հուրհրատում էր վիթխարի բուխարու մեջ, մոմերը թրթռում էին ճյուղավոր աշտանակների վրա, ներս ու դուրս էին

www.a-pdf.com

ունում ենմռունչ կղերականները։ Հիսուններեք մարդ խիզախել էին այդ օրը դատել արքային։ Այդ մարդիկ «զտված» համայնքների պալատի անդամներն էին և բանակային սպաները։ Դրանց մեջ էին «կրոմվելյան գնդապետներ» Ուոլին, Օքին, Պրայդը, Հարիսոնը, Հյուսոնը, Իվերը, Հորթոնը, Հոֆֆեն։ Հետագայում նրանց թիվը կլինի մերթ ավել, մերթ պակաս, բայց երբեք չի բարձրանա վաթսունյոթից։ «Ի՞նչ կարելի է սպասել այդպիսի դատարանից»՝ արհամարհանքով նետում էին ռոյալիստները։ Պրեսբիտերները վեր էին քաշում ուսները։ Դնդապետ Պրայդն անցյալում եղել էր բեռնակիր, Իվերն ու Հորթոնը՝ ծառաներ, Հարիսոնը՝ գրագիր։ Նախագահ էր ընտրվել Ջոն Բրեդշոուն՝ Ջեսթերի դատավորը, մինչ այդ ոչնչով իրեն չդրսևորած և բավականաչափ անդեմ մի մարդ։ Նրան տվել էին մի հոյակապ ալ կարմիր լիկնոց և մի գլխարկ՝ բարձր գագաթամասով, որտեղ զգուշավոր դատավորը տեղավորել էր պողպատե շերտեր։

Դատարանի աշխատանքի մասին, որ տեղի էր ունենում Նկարազարդ պալատում հունվարի 8-ից մինչև 20-ը, ոչ ոք ոչինչ չգիտեր։ Այն, ինչի մասին միմյանց հետ խորհրդակցում էին դատավորները, մնում էր գաղտնի։ Հունվարի 9-ին դատարանի կողմից ընտրված սարջենթը շեփորների ղողանջների տակ ժողովրդի առջև Վեսթմինսթեր-հոլում, և ապա Ջիփսայդում ու Լոնդոնի Բորսայում կարդաց մի հայտարարություն, որով Կարլոս Եռյուարտին մեղադրող կողմի վկաներին հրավիրում էր ներկայանալ Նկարազարդ պալատ և ցուցմունք տալ։ Հայտնի դարձավ նաև, որ բաց դատավարության համար ընտրվել է Վեսթմինսթերը՝ թագավորության ամենից մեծ հասարակական դահլիճը։

Կրոմվելն այդ օրերին խիստ զբաղված էր։ Հարկավոր էր մոտենակցել երեք մարմինների նիստերին՝ բանակի խորհրդի, պարլամենտի և Գերագույն դատարանի։ Այսպես թե այնպես, բարությունը կատարված էր։ Նա ձեռնամուխ եղավ դատարանի կազմակերպմանը նույն վճռականությամբ, զգաստամտությամբ ու կորովով, որով պլանավորում էր խոշոր ճակատամարտերը։ Նա բանակցություններ վարեց Սիթիի պրեսբիտերների հետ, տանելով, եթե ոչ իր կողմը գրավել նրանց, բայց գոնե չեզոքացնել։ Նա պնդում էր դատավարության բաց լինելու վրա. ժողովուրդը պետք է տեսնի, որ դահլիճում կատարվում է արդարադատություն և ոչ թե դավադրություն։ Պալատի անդամներից մեկը առաջարկեց լուծարքի ենթարկել լորդերի պալատը։

— Դուք, ի՞նչ է, խելքներդ թոցրե՞լ եք,— նրա վրա հարձակվեց Կրոմվելը, չփորձելով սքողել զայրույթը։— Դուք ուզում եք պերներին մեր դեմ հանել հենց այն ժամանակ, երբ մեզ ամենաանհրաժեշտ դաշի՞նք է պետք։

Այս բոլորի հետ նաև Սիդնեյը՝ կոմսի անձնապաստան որդյակը, հայտարարում է. թագավորը չի կարող դատվել ոչ մի դատարա-

www.a-pdf.com

նի կողմից։ Եթե թագավորին դատեն ու մահապատժի ենթարկեն, ապա ժողովրդի զայրույթը երկրի երեսից կսրբի և՛ դատավորներին, և՛ հենց իշխանությանը։

— Ոչ ոք տեղից չի՛ շարժվի,— կրկին կրակ կտրեց Կրոմվելը։— Ասում եմ ձեզ, մենք կթոցնենք նրա գլուխը թագի հետ միասին։

Նա հիմքեր ուներ այդպես ասելու։ Բողոքների հեղեղը՝ դատելու և մահապատժի ենթարկելու պահանջով, չէր դադարում։ Միջազգային դրությունը բացառիկ բարենպաստ էր։ Ֆրանսիան, թագավորի գլխավոր դաշնակիցը, ինքն էր երկպառակտված և ցնցված Ֆրոնդայից։ Ռեգենտուհի-թագուհին արդեն փախել էր Փարիզից անչափահաս թագավորի հետ, Լուվրն ամայացել էր, Հենրիետա-Մարիան ոչ ոք չուներ, որի վրա կարելի լիներ հենվել։ Հոլանդիան ձգում էր, սպասում էր, և մեծ սառնությամբ էր վերաբերվում Ուելսի արքայազնի համառ աղաչանքներին։ Նա իմաստ չէր տեսնում խառնվել ուրիշի կռվի մեջ։ Արքայազն Ռուփերտի տորմիղը այնքան էր խղճուկ, որ չէր համարձակվի յոթ փականքի տակ դրված թագավորին փրկելու փորձ անել։

Բոլորին այժմ թվում էր, որ հենց նա՝ Կրոմվելն է վճռում գործը։ Նա դարձել էր թագավորի միակ հզոր հակոտնյան։ Հանրապետականներն ու լևելերները նայում էին նրան հույսով, ռոյալիստները՝ ատելությամբ և վախով։ Անգամ օտարերկրյա պետությունները լուռ խոնարհում էին գլուխները՝ նրա առաջ։ Մի թուղթ եկավ հոլանդական գլխավոր նահանգներից նոր դեսպանին ներկայացնող հանձնարարականով՝ այն հասցեագրված էր ոչ թե թագավորին, ոչ թե պառլամենտին, ոչ թե բանակի խորհրդին, այլ անձամբ իրեն՝ Կրոմվելին։

Ջափաղանց շատ են մարդիկ, չափազանց շատ են գործերը, իսկ նա կենտրոնանալու պահանջ է զգում։ Ինչպե՞ս տանել այդ բեռը, ինչպե՞ս դիմանալ։

Այդ օրը նա փակվեց տանը։ Սպասին, որ հերթապահում էր (այժմ նրա մոտ միշտ հերթապահում էր սպաներից որևէ մեկը), հրամայեց ոչ ոքի ներս չթողնել և չասել, թե որտեղ է ինքը։

Դուռը թակեցին։ Տանն էլ նա դադար չունի։ Ո՞վ է հանդգնել։

— Ես չէ՞ որ հրամայել եմ ինձ չանհանգստացնել,— սկսեց նա հանդիմանել սպային և ձայնը կտրեց. սպայի կողքին կանգնած էր Ջոն Կրոմվելը, նրա հորեղբոր որդին, գլխարկը ձեռքին։ Ինչպե՞ս է նա այստեղ ընկել, չէ՞ որ նա Հոլանդիայում էր, ռոյալիստների հետ... Կրոմվելը չոր ողջունեց։

— Գեներալ,— արտասանեց հորեղբորորդին, խոր խոնարհվելով և կրծքին սեղմելով գլխարկը,— ես կցանկանայի ձեզ մի երկու խոսք ասել առանձին։ Ես արտակարգ կարևոր բան ունեմ ասելու։

Կրոմվելը ետ գնաց, նրան ներս թողնելով իր առանձնասենյակը։

www.a-pdf.com

— Գեներալ,— ասաց Ջոն Կրոմվելը,— ես ձեզ հետ անկեղծ եմ։ Զգիտեմ, կհամաձայնե՞ք դուք լինձ հետ...— Նա ձայնն իջեց և ավելի մոտեցավ։— Այն, ինչ որ ահա, ուր որ է, պիտեղի ունենա արքայի հետ՝ դա սխալ մեծադույն նողկալիությունն է։ Արտասահմանում (ես հենց հիմա այնտեղից եմ գալիս) բանին նայում են նողկանքով։

Կրոմվելը շուռ եկավ և մի քանի քայլ այն կողմ գնաց, ասես ցանկանալով ավելացնել իր և խնդրարկուի միջև եղած տարությունը։ Ահա թե ի՞նչ։ Սա էլ մի նոր միջնորդություն է յուարտի գործով։ Նրան ուղարկել են նեղուցի այն կողմից, և մենքը կրկին իր մոտ են գալիս։

— Գեներա՛լ,— ազգականի խուլ ձայնը քանի գնում ավելի ստատակամ էր հնչում։— Ես երբեք չէի կարող պատկերացնել, որ դուք կարող եք մասնակցել այդպիսի գործի։ Զէ՞ որ դուք լսեցիք, ինքս եմ լսել, հավատացնում էիք, որ չեք ուզում նրան ոչ պատճառել։ Դուք ասում էիք...

— Գնդապե՛տ,— խստորեն ընդհատեց Կրոմվելը,— Պետք չէ այդ մասին։ Դա իմ կամքը չէ, դա բանակի կամքն է։ Այո՛, մի անգամ ես ասում էի... Բայց ժամանակները փոխվում են, դիրքախնամությունն այլ կերպ վճռեց։ Դուք տեսնում եք, ես մի այնպես եմ, վշտի մեջ։ Ես խղճում ու տրտնջում եմ արքայի համար։ Բայց ետ դառնալ մենք չենք կարող։

Գնդապետը արագ, դեռևս գլխարկը կրծքին սեղմած, վազեց դեպի դուռը և թափով փակեց այն, կրկին շուռ գալով և ընդհուպ մոտենալով Կրոմվելին, ջերմորեն շշնջաց նրա ուղղակի ականջին.

— Բարեկամս, թանկագին բարեկամս, այժմ ժամանակը չէ այստեղի խոսքեր վատնելու, հասկացեք ախր։ Այստեղ նայեք։— Նա գլխարկը շուռ տվեց և սկսեց պոկել աստառը։— Ահա... Տեսեք։

Այն, ինչ նա բացեց Կրոմվելի առաջ և դողդողացող ձեռքերով մատներից համարյա նրա քթին՝ մի մաքուր թուղթ էր։

— Ի՞նչ է սա։

— Դե նայեք, է՛։ Դուք ճանաչո՞ւմ եք այս ստորագրությունը՝ տեսնում։ Հա, հա, Ջաուլզ Ռեքս. ճիշտ այդպես էր միշտ ստորագրում նորին մեծությունը։ Իսկ այս ստորագրությունը ձեզ ոնի՞ է։

Նրա ցատկոտող մատը սահեց Ուելսի արքայազնի անվանումի։

— Իսկ այս կնիքը տեսնո՞ւմ եք։ Սա Անգլիայի պետական կնիքն է։ Այժմ որոշեցեք։— Հուզմունքից գնդապետի ձայնը խլացավ.— վճռեցե՛ք։ Ձեր կամքն է այժմ գրել այս թերթի վրա ձեռ ցանկացած պայմանները, որոնցով դուք համաձայն եք փրկել արքայի կյանքը։ Հասկանո՞ւմ եք, ցանկացա՛ծ պայմանները։ Ձեզնից է այժմ կախված ամեն ինչ։ Ձեր ձեռքին է՝

www.a-pdf.com

երջանկացնել և՛ ձեզ անձնապես, և՛ ձեր բոլոր երեխաներին, դե ոչ միայն երեխաներին, ձեր ամբողջ սերնդին՝ դարեդար, ձեր բոլոր մերձավորներին։ Բայց եթե դուք մերժեք՝ այնժամ զգուշացեք։ Ձեր նախահայրը մի ժամանակ Վիլյամս համեստ ազգանունը փոխեց Կրոմվելների պանծալի անվամբ, տեսեք, հա՞, նորից փոխել չտան, ձեր ազգանունը։ Որովհետև եթե դա տեղի ունենա (դուք հասկանում եք, ինչի մասին եմ ասում), և՛ ձեզ վրա, և՛ ձեր սերունդների վրա կընկնի մի այնպիսի անպատվություն, որը ոչինչ չի մաքրի։ Վհռե՛ք

Կրոմվելը լռում էր։ Նա շանթահար էր եղել։ Կես ժամ առաջ նրա համար ամեն ինչ պարզ էր։ Նա արդեն պատրաստ էր կատարել նախախնամության կամքը։ Իսկ հիմա կրկին՝ վճռե՛ք։ Մինչև ե՞րբ, ո՞վ ասված...

— Եղբորորդի,— ասաց նա փափուկ,— այժմ ինձ մենակ թողեք։ Ես պետք է մտածեմ։ Գնացեք ձեր հյուրանոցը և սպասեք մինչև երեկո։ Մի պառկեք քնելու մինչև պատասխան ստանալը։ Ինձ հարկավոր է խորհել և խորհրդակցել։

Գիշերվա մեկին մոտ էր, երբ Ջոն Կրոմվելը, որը դեռ չափչփում էր հյուրանոցի իր ննջասենյակը, վերջապես դռան թակոց լսեց։ Նրա առաջ կանգնած էր մի անծանոթ սպա։

— Դուք կարող եք գնալ քնել, գնդապետ,— ասաց նա։— Եվ ձեզ համար հանդիստ քնեք. պատասխան չի լինելու։ Սպանների խորհուրդը դիմեց աստծուն և որոշում կայացրեց, որ թագավորը պետք է մեռնի։

Մինչև դատը հաշված օրեր էին մնացել։ Նկարազարդ պալատում քննարկում էին դատավարության վերջին մանրամասները։ Կարլոսին որոշել էին տեղափոխել Ռորևրտ Քոթոնի տուն. այն անմիջականորեն հարում էր Վեսթմինսթերի շենքին, իսկ դրա պարտեզը դուրս էր գալիս դեպի Թեմզա։ Հունիսի 19-ին նրան ուժեղացված պահակության տակ տեղափոխեցին Լոնդոն, այնուհետև բեռնանավով հասցրին Քոթոնի տուն։ Կրոմվելը մոտեցավ Նկարազարդ պալատի պատուհանին և տեսավ, թե ինչպես է թագավորը քայլում պարտեզում հրացանակիրների երկու շարքերի միջև։ Կարլոսի դեմքը մթնած էր, ծածանվող մազերը վհատորեն իջած էին այտերի վրա։ Եվ, այնուամենայնիվ, դա թագավորն էր։ Կրոմվելը գունատվեց։

— Դարոններ,— ասաց նա՝ դառնալով դատավորներին,— նա այստեղ է գալիս, և մենք այժմ պիտի կատարենք այն մեծ գործը, որին նայում է հիմա ողջ երկիրը։ Մենք պիտի վճռենք հենց հիմա, թե ինչ պատասխան պիտի տանք թագավորին, երբ նա կանգնի մեր առջև, քանի որ նրա առաջին հարցը կլինի՝ ի՞նչ իշխանությամբ և ինչ լիազորություններով ենք դատելու իրեն։

Բոլորը լուռ էին։ Հետո ճարտասան Մարթենը պատասխանեց.

www.a-pdf.com

— Հանուն հանրային բարեկեցության, և՛ ընտրողի պառլամենտի, և՛ բարեկեցություն Անգլիայի ժողովրդի։

Հունվարի 20-ին, շաբաթ օրը, կեսօրին, ժամը մոտ 2-ին, սարսափելի թագավորի դեմ սկսվեց։ Վաթսունյոթ դատավորներ, տարբերանշանագրերով զինված պահապանների ուղեկցությամբ, հանդիսավորապես բարձրացան փայտամածի վրա, որ պատրաստված էր նրանց համար Վեսթմինսթեր-հոլում, և նստեցին կարմիր սեղանով պատած նստարաններին։ Բրեդշոուն տեղավորվեց գլխավորում՝ մուգ կարմիր թավշապատ բազկաթոռին։ Կրոմվելը իր սովորության համաձայն տեղ զբաղեցրեց վերջին շարքերից մեկում։ Նա լավ էր տեսնում սեղանը, որ ծածկված էր գորգով, որի վրա դրել էին գերագույն իշխանության նշանները՝ սուրը և մուրճերը։ Նախագահողի դիմաց, թիկունքով դեպի դահլիճ, դրված էր բոսոր թավիշով պատած բազկաթոռ մեղադրյալի համար։ Տախտակամածը հանդիսատեսի համար հատկացված տեղից բաժանվում էր երկու փայտամիջնորմներով, որոնց միջև կանգնած էին զինված մարտիկներ։ Տախտակամածի երկու կողմերում, դրա վերևում, շինված էին օթյակներ երևելի պարոնների տիկնանց համար։

Այնուհետև Վեսթմինսթեր-հոլի լայն դռները բացվեցին և հասարակությունը ներխուժեց դահլիճ։ Թույլատրվել էր ներս թողնել բոլորին, առանց սեռը, տարիքը, սոցիալիստական դրությունը հաշվի առնելու, և բազմաբազմաթիվ, խուռներամ, անսովոր կերպով լցվեց ամբոխը մի քանի րոպեում լեփ-լեցուն դարձրեց դահլիճը։ Օթյակներում տեղավորվեցին ունևոր քաղաքացիները, տիկնայք, օտարերկրյա դեսպանները։ Շատերը գիմակներով էին։ Հանդիսավոր լռության մեջ, որ կախվել էր հազարավոր մարդիկների վրա, հնչեցին ծանր քայլեր և զենքերի ղնգոց. տախտակամածի վրա բարձրացան քսան պահապան, զինվորներ, իսկ ետևից, սպաների ուղեկցությամբ՝ արքան։ Սա քայլում էր ուղիղ, ոչ բարձր հասակը չէր խաթարում մանկությունից մնացած վսեմաշուք կեցվածքը։ Սև էր հագուստը ոտից մինչև գլուխ. սև էր գլխարկը, որը նա չհանեց դատավորներին տեսնելիս՝ նշան նրանց հանդեպ արհամարհանքի։ Խիստ հայացք գցեց նրանց վրա, Կարլոսը նստեց, այդպես էլ չհանելով գլխարկը։ Այնուհետև, փոքր-ինչ բարձրանալով տեղից, մտիկ տվեց քարացած դահլիճին և կրկին ընկավ բազկաթոռին։ Նրա դեմքին ուներ արհամարհական ժպիտը։

Սկսվեց ներկայության ստուգումը։ Առաջինը արտասանվեց Կարլոսի անունը, երկրորդը՝ Ֆերֆաքսինը։ Եվ այստեղ տեղի ունեցավ փոքրարինում՝ գեներալը դահլիճում չէր գտնվում։

Նա չափազանց խելացի է, որպեսզի ներկա գտնվի այս դատաստանին, դիմակով մի կին։ Դա լեդի Ֆերֆաքսն էր։

Մտորի ելավ դատարանի նախագահ Բրեդշոուն։

Կարլոս Ստյուարտ, Անգլիայի թագավոր,— արտասանեց

www.a-pdf.com

նա։— Անգլիայի համայնքները ժողովված պառլամենտում, համաձայն արդարության հանդեպ, աստծու հանդեպ, ազգի ու օրենքի հանդեպ իրենց պարտքի, համաձայն այն իշխանության, որը նրան վստահել է ժողովուրդը, սահմանել են արդարադատության այս բարձրագույն պալատը։ Լսեցեք ձեզ ներկայացվող մեղադրանքը։

Գլխավոր դատախազ Ջոն Քուկը սկսեց կարդալ մեղադրական ակտը։

— Սպասեցեք,— Կարլոսը ուզեց ընդհատել նրան։ Նա երկարեց ձեռնափայտը և նրա արծաթյա գլխիկը դիպավ Քուկի ուսին։ Քուկը կտրուկ շուռ եկավ, ծանր արծաթյա գլխիկն ընկավ ու գլորվեց տախտակամածի վրայով։ Ոչ ոք տեղից չշարժվեց։ Կարլոսը հասցրեց մի փոքր, ապա կռացավ ու վերցրեց գավազանագլխիկը։ Այդ ստորացումը նկատելի եղավ բոլորի կողմից։ «Վատ նախանշանակ է արքայի համար»,— շշունջ անցավ դահլիճով մեկ։

Մինչդեռ Քուկը շարունակում էր կարդալ։ Միապետը օժտված էր սահմանափակ իշխանությամբ, ասվում էր մեղադրական ակտում, և պարտավոր էր երկիրը ղեկավարել համաձայն նրա օրենքների։ Բայց, տրվելով բռնակալական իշխանություն նվաճելու նենգամիտ նպատակին, նա ոչնչացրեց ժողովրդի իրավունքներն ու արտոնությունները և նրա դեմ չարամտորեն սանձազերծեց արյունահեղ պատերազմ։ Նա փորձում էր վարել այդ պատերազմը օտարերկրյա ներխուժման օգնությամբ։ «Եվ այդ բոլորը ձեռնարկվում էր միայն մի նպատակով՝ պաշտպանել իր սեփական շահերը, կամայականություն և հավակնություն իր և արքայական ընտանիքի տոհանձնաշնորհումների պահպանման նկատմամբ՝ ի վնաս ժողովրդի շահերի, ընդհանուր օրինականության, ազատության, արդարության և խաղաղության այս երկրի»։ Ժողովրդի անունը հիշատակում էր բազմիցս։ Բայց մաշված ազատության, արդարության, խաղաղության մասին սովորական ֆրազների ետևում ենթադրվում էր այլ բան. ոմանք Կարլոսին չէին կարող ներել այն, որ նա շափազանց անամոթաբար ոտնահարում էր դրամական շահերը, հարձակվում էր ունևոր դասի սեփականատիրական իրավունքի վրա։ Եվ այդ պատճառով էլ Կարլոսը պատասխանատու էր հայտարարվում «բոլոր տեսակի դավաճանությունների, սպանությունների, բռնությունների, հրդեհների, կողոպուտների համար, որ պատճառվել էր ազգին հիշատակված պատերազմներում» և «որպես բռնակալ, դավաճան ու մարդասպան, Անգլիա երկրի անսքող ու անողոք թշնամի» կանչվում էր պատասխանատվության ողջ ժողովրդի անունից։

Վերջին խոսքի վրա Կարլոսը բարձրաձայն քրքջաց, իսկ սրահից հնչեց նույն այն ձայնը.

— Դա սո՛ւտ է։ Անգլիայի ժողովրդի ո՛չ կեսը, ո՛չ էլ նույնիսկ մի քառորդը համաձայն չէ դրան։ Օլիվեր Կրոմվելը սրիկա է և դավաճան։

www.a-pdf.com

Օլիվեր Կրոմվելը երկու տարեկան հասակում (ճավանոռեն):

Եղիսաբեթ Կրոմվել՝ Օլիվերի մայրը:

Տարրական դպրոց Հանթինգդոնում:

Մաղրանկար, որ պատկերում է Թոմաս Բիդին:

www.a-pdf.com

Եղիսաբեթ Կրոմվել՝ Օլիվերի կինը:

Կրոմվելի տունը Իլիում:

Հերցոգ Բեֆիլդեմ:

Հենրիետա Մարիա թագուհին:

www.a-pdf.com

Կարլոս I Սթյուարտը:

Թոմաս Ռենբվորը՝ կոմս Սարաֆորդ

www.a-pdf.com

Արքեպիսկոպոս Ուիլյամ Լոդ:

Երկարատև պառամենտը: Համայնքների պալատը: 1641 թվական:

www.a-pdf.com

Զոն Հեմփդեն:

Զոն Փիմ:



Սարաֆորդի մահապատիժը Թաուերի առջևի հրապարակում:

www.a-pdf.com

Կոմս Էսեքս:

Կոմս Մանչեստեր:

www.a-pdf.com

www.a-pdf.com

Արքայազն Ռուպերտ

Սաֆրոն-Ուոլդենի տունը, որտեղ հավաքվում էին սպաները և ազիտատորները:

www.a-pdf.com



Նեսբիի ճակատամարտի սխեման:

Թոմաս Ֆեռֆաքս:

www.a-pdf.com

Օլիվեր Կրոմվելը 1645 թվականին Բրիսթոլի գրոնի ֆոնի վրա:

www.a-pdf.com

Հյու Պիքերս:

Թագավորի մահվան դատավճիռը՝ դատավորների ստորագրությամբ:

www.a-pdf.com

Հեների Այրթոն:

Ջոն Բրեդշոու

www.a-pdf.com



Դատ թագավորի դեմ:

www.a-pdf.com

Կարլոս I-ի գլխատումը:

Հոն Լիլբեռն

www.a-pdf.com

The second Part

OF

ENGLANDS New-Chaines

DISCOVERED:

Or a sad Representation of the uncertain and dangerous condition of the

COMMON-WEALTH:

DIRECTED

To the Supreme Authority of *England*, the Representors of the People in Parliament assembled.

By severall wel-affected persons inhabiting the City of *London*, *Westminster*, the Borough of *Southwark*, *Hamblets*, and places adjacent, presenters and approvers of the late large Petition of the Eleventh of *September*. 1648.

All persons who are assenting to this *Representation*, are desired to subscribe it, and bring in their Subscriptions to the Presenters and Approvers of the foresaid Petition of the 11 of *Sept.*

London, Printed in the Year, 1649.

Վիլիեռնի «Անգլիայի նոր շղթաների երկրորդ մասը» պարտավարի անվանաբերքը:

www.a-pdf.com

Oliver Cromwell

www.a-pdf.com

— Կրակեցե՛ք այդ կնոջ վրա,— հնչեց պահպանության պետի հրահանգը։

Բայց կրակոց չեղավ. շրջապատողները փութացին լեդի Ֆերֆաքսին դուրս բերել գահլիճից։

Օրը կարգը վերականգնվեց, թագավորն սկսեց խոսել.

— Ես կցանկանայի իմանալ,— պարզորոշ, գրեթե չկակազելով, արտասանեց նա,— ի՞նչ իշխանության կողմից եմ կանչվել այստեղ։ Դեռ վերջերս Ուայթ կղզում ես բանակցություններ էի վարում պառլամենտի երկու պալատների հետ, և ինձ վստահում էին։ Մենք համարյա որոշեցինք խաղաղության բոլոր պայմանները։ Ես կցանկանայի իմանալ, ի՞նչ իշխանության կամքով,— ես նկատի ունեմ օրինական իշխանությունը, և ոչ թե ավազակների և գողերի իշխանությունը,— ինձ հանեցին այնտեղից ու բերեցին այստեղ։

Բրեդշոուն պատասխանեց.

— Անգլիայի ժողովրդի և նրա իշխանության կամքով, որը Ձեզ ընտրել է թագավոր։

— Ես մերժում եմ դա, սըր,— հաղթական հրճվանքով արտասանեց Կարլոսը։ Զուր չէր, որ նա որդին էր Հակոբ I-ի՝ թագավորական իշխանության աստվածային ծագման տեսության համոզված պաշտպանի։ Այդ տեսությունը, որ զարգացրած ու հիմնավորված էր նրա հոր տրակտատներում, Կարլոս Ստյուարտը դիտեր նույնքան լավ, որքան կիրակնօրյա պատարագի խոսքը։— Անգլիան երբեք չի եղել ընտրովի միապետություն,— արտասանեց նա,— Այն եղել է ժառանգական միապետություն վերջին հազարամյակում... Ցույց տվեք ինձ ձեր դատարանի օրինական հիմունքները, որոնք հենված լինեն աստծո խոսքի վրա, սուրբ գրոց կամ տերության սահմանադրության վրա, և ես կպատասխանեմ։

Ութսուն տարի առաջ Եղիսաբեթ մեծ թագուհին, շոտլանդացի լորդերի առաջ իր «սիրեցյալ քրոջ» Մարիա Ստյուարտի, իշխանությունը պաշտպանելիս գրեթե բառ առ բառ նույն կերպ էր արտահայտվում։

Եվ այժմ թագավոր Կարլոս I-ը, անդրդվելի, հանգիստ, անդրդվող կանգնած էր այդ նույն դիրքերում։

— Հիշեցե՛ք,— ասաց նա,— ես ձեր թագավորն եմ, ձեր օրինական թագավորը։ Իմ լիազորությունները, որ ժառանգված են ինձանից, ինձ են հանձված իր՝ աստծու կողմից։ Ես չեմ դավանի դրանց, պատասխանելով նոր անօրինական իշխանությանը։

Բրեդշոուն հասկացավ, որ վրիպել է. չպետք է թագավորի դեմ տար այդ հաղթաթուղթը։ Իսկապես ասած, դեռևս երբեք մինչև այդ պահը, միապետական տերության գոյություն ունեցող

www.a-pdf.com

ոչ մի օրենքով, ժողովուրդը չէր դատել իր թագավորին, և ոչ մի դատարան այդ օրենքներով չէր կարող իրավասու լինել։ Օրակարգում այսուհետև ծառանում էր նոր, բոլորովին ուրիշ օրենքների ստեղծման հարցը, այլապես թագավորը իրավացի դուրս կգա ժողովրդական դատարանի օրինականության իր չճանաչումով։ Իսկ շարունակել դատական ընթացակարգը շատ կարևոր էր. դատավորները միայն այդպես կարող են ժողովրդին ցույց տալ իրենց գործողությունների օրինականությունը։

Բայց անգլիացիների իրավագիտակցությունը այս ութսուն տարիների ընթացքում շատ էր առաջ գնացել, և հպատակները բոլորովին չէին պատրաստվում նահանջել, ինչպես նահանջել էին շոտլանդացի լորդերը, ամաչելով Եղիսաբեթի միապետական հանդիմանություններից։

— Սըր, դուք հարց տվեցիք և ձեզ պատասխանեցին։ Այժմ դատարանը ձեզնից սպասում է որոշակի պատասխան,— ասաց Բրեդշոուն։— Ձեզ համար մեր լիազորությունները թերևս գոհացուցիչ չեն, բայց մենք գիտենք, որ դրանք հիմնված են աստծո և Անգլիայի ժողովրդի կամքի վրա։

Թագավորը, սակայն, պնդում էր իրենը։ Ի՞նչ գործ ունի այստեղ ինչ-որ մեկի կամքը։ Գոյություն ունի իրերի մեկընդմիշտ սահմանված կարգ։ Մարդը իրավասու չէ խախտել այն։ Հակաճառությունները կարող էին շարունակվել անսահմանորեն, բայց այստեղ ձայն բարձրացրին զինվորները։ «Արդարությո՜ւն, արդարությո՜ւն...»,— գոչեցին նրանք։ Նիստը հետաձգեցին մինչև երկուշաբթի։

Օգտվելով Բրեդշոուի վրիպումից, Կարլոսը դատարանի հետևյալ նիստին, հունվարի 22-ին, պատրաստվել էր հարձակման։ Հենց սկզբից նրան զգուշացրին, որ իր լռությունը կգնահատվի որպես մեղավորության խոստովանություն։ Եվ նա սկսեց խոսել։ Նա ապացուցում էր և ինքն էլ հավատում, թե հանդիսանում է ժողովրդական իրավունքների պաշտպանը։

— Եթե խոսքը միայն իմ անձին վերաբերեր,— ասաց նա,— ես կսահմանափակվեի իմ կողմից առաջին օրն արված հայտարարությամբ՝ այս դատարանի անօրինական լինելու մասին։ Բայց բանը միայն ինձանում չէ, խոսքը վերաբերում է Անգլիայի ժողովրդի ազատություններին և իրավունքներին։

Բրեդշոուն լարված լսում էր՝ խոցելի տեղ փնտրելով թագավորի գատողություններում։

— Սըր,— առաջարկեց վերջապես նա,— մենք թույլ չենք տա վիճարկել արդարության Գերագույն դատարանի իշխանությունը. նա այստեղ նիստ է անում ստորին պալատի կամքով, որի առաջ դուք պատասխանատու եք։

— Ո՛չ, ես մերժում եմ այդ,— պնդեց թագավորը։— Բերեք ինձ թեկուզ մի նախադեպ։ Մի՞թե այդպիսի որևէ բան երբևէ պատահել է Անգլիայում։

www.a-pdf.com

Այստեղ նա իրավացի էր։ Այո՛, նախադեպը գոյություն չուներ։ Այն ամենը, ինչ կատարվում էր այստեղ, Վեսթմինսթեր-Հոլի կաղնե հեսաների տակ, շատ բան տեսած դահլիճում, կատարվում էր առաջին անգամ։ Հպատակներն իրենք, բաց դատավարությամբ, դատում էին իրենց թագավորին պետական դավաճանության համար։

Բայց Բրեդշոուն այս անգամ գլուխը չկորցրեց։

— Թե ժողովրդի ազատության և իրավունքի որքան մեծ բարեկամ եք դուք հանդիսանում, թող դատեն ամբողջ Անգլիան և ամբողջ աշխարհը,— ասաց նա։— Մարդու դիտավորություններին մասին խոսում են նրա գործերը, և ձեր դիտավորությունները արյունոտ հետքեր են դրոշմել ողջ երկրով մեկ։

«Արդարությո՛ւն, արդարությո՛ւն», նորից գոչեցին զինվորները։ Նիստը ավարտվեց առանց արդյունքի։

Երրորդ օրը, հունվարի 23-ին, ամեն ինչ կրկնվեց։ Կարլոսը հրաժարվում էր ճանաչել դատարանի օրինականությունը և պատասխանել մեղադրանքներին։ Այդ օրը համայնքների պալատը որոշում ընդունեց, որ այսուհետ նա պիտի գործի «Անգլիայի պառլամենտի իշխանության» անունից։ Դրանով իսկ թագավորական իշխանությունը վերջնականապես մերժվեց։

Հունվարի 24-ին և 25-ին Վեսթմինսթեր-Հոլում նիստեր տեղի չունեցան. դատարանը վկաներին հարցաքննում էր Նկարազարդ պալատում։ Ոմանք պատմում էին, թե ինչպես արքան, պատերազմ սկսելով պառլամենտի դեմ, բարձրացրեց իր դրոշը Նոթինհեմում, մյուսները զրահավորված արքային տեսել էին ճակատամարտի դաշտում, որտեղ նա հանդես էր գալիս իր հպատակների դեմ, երրորդները լսել էին, թե ինչպես թագավորը հրամայել է չխնայել գերիներին... Եվ այսպես, Կարլոսը ճանաչվեց «բռնակալ, դավաճան և մարդասպան, անգլիական պետության բացահայտ թշնամի»։ Հունվարի 26-ի առավոտյան դատարանի վեցհարյուրերկու անդամները Նկարազարդ պալատում որոշում ընդունեցին, որով թագավորը դատապարտվում է մահվան՝ «գլուխը մարմնից անջատելու միջոցով»։

Շաբաթ օրը, հունվարի 27-ին, Վեսթմինսթեր-Հոլը դարձյալ լեցուն էր ժողովրդով։ Թագավորին ներս բերին «Արդարությո՛ւն։ Արդարությո՛ւն» և «Մահապատի՛ժ։ Մահապատի՛ժ» գոչյունների ուղեկցությամբ։

Այս անգամ թագավորը առաջվա պես, առանց գլխարկը հանելու, չնստեց իր բազկաթոռին, այլ դիմեց Բրեդշոուին։

— Սըր,— ասաց նա,— թույլ տվեք ինձ մի խոսք ասել։ Ես հուսով եմ, որ առիթ չեմ տա ընդհատել ինձ. միայն մի՛ խոսք։

— Բայց, սըր, ձեզ կլսեն իր ժամանակին,— եղավ պատասխանը։— Նախ լսեք դատարանին։

— Ես ցանկանում եմ, որ ինձ լսեն,— իրենն էր պնդում թագավորը,— դա վերաբերում է այն բանին, ինչ պատրաստվում է

www.a-pdf.com

ասել դատարանը։ Հապճեպ արված դատավճիռն այնքան էլ հեշտ չէ փոխել։

— Ձեզ կլսեն նախքան վճիռ արձակելը։ Պարոննե՛ր,— Բրեդշոուն դիմեց դահլիճին։— Մեղադրյալը արդեն մի քանի անգամ կանգնել է դատարանի առաջ, որպեսզի պատասխանի իր գործած ծանր հանցագործությունների համար, որոնք հայտնի են ողջ երկրին։ Սակայն նա համառորեն չէր ցանկանում խոստովանել իր մեղքը։ Նրա դատավճիռն արդեն կայացված է, բայց մենք համաձայն ենք նրան խոսելու իրավունք ընձեռել, եթե նա կասկածի չի ենթարկի դատարանի օրինականությունը։

Բոլորը շունչները պահեցին։

— Ես ցանկանում եմ,— հանդիսավոր տոնով ասաց թագավորը,— որպեսզի լորդերը և համայնքներն ունկնդրեն ինձ լրիվ կազմով։ Ես ուզում եմ նրանց մի առաջարկություն անել, որը շատ ավելի կարևոր է տերության խաղաղության և իմ հպատակների ազատության համար, քան թե իմ փրկության։

Դահլիճն ալեկոծվեց։ Այդ ի՞նչ առաջարկություն է։ Ի՞նչ է թագավորի մտքինը։ Գուցե նա ուզում է գահից հրաժարվե՞լ հօգուտ իր որդու, թե՞ առաջարկելու է խաղաղության նոր, ավելի արմատական պայմաններ։ Իսկ գուցե և սա հերթական թակա՞րդ է։

Իրավաբանական նրբությունների մեջ հմտացած դատավորները հասկանում էին, որ թագավորի խնդրանքը ոչ ուղղակի, այլ անուղղակիորեն բացասում է իրենց իրավասությունը։ Բայց ոմանք տատանվում էին։ Ետին շարքերից հնչեց բարձր շշնջոց։

— Ինչ է, մեր սիրտը քարի՞ց է։ Մենք մա՞րդ ենք, թե՞ ոչ։— Այդ գնդապետ Դաունսն էր խոսում։ Նրան սսկեցրին, բայց նա ձայնն ավելի բարձրացրեց.— Թող ես դրա համար կյանքով հատուցեմ, բայց թույլ տվեք ասեմ։

Կրոմվելը, որ նստած էր նրա առաջ, կտրուկ շուռ եկավ։ Նրա աչքերից կրակ էր թափվում։

— Ձեր խելքը տե՞ղն է,— կոպիտ հարցրեց նա։— Ինչի՞ մասին եք մտածում, գնդապետ։ Ի՞նչ է, հանգիստ չե՞ք կարող նստել։

— Ո՛չ, չե՛մ կարող,— Դաունսը տեղից վեր թռավ։— Միլորդնե՛ր,— գոչեց նա։— Ականջ դրեք ձեր խղճի ձայնին, մի՛ մերժեք բանտարկյալի խնդրանքը։ Խնդրո՛ւմ եմ, որ դատարանը գնա խորհրդակցելու։

Դահլիճում աղմուկ բարձրացավ։ Դատավորները անվճռականորեն ելան տեղներից և գնացին հարևան-սենյակը։

— Ինչո՞ւ խանգարեցիք նիստի ընթացքը։— Կրոմվելը շատ էր զայրացած,— Դուք չե՛ք հասկանում, որ գործ ունեք ամենադաժա՛ն, ամենանե՛նգ մի մարդու հետ։ Նրան պետք չէ՛ խնայել։ Նրա համառությունը չպե՛տք է խրախուսել։ Նրա ոչ մի խոսքին

www.a-pdf.com

չպե՞տք է հավատալ... Խոստովանե՞ք, իսկ գուցե և գուք ուզում եք փրկե՞լ ձեր հին տիրոջը։

Դաունսը պատասխանեց հանդուգն։ Նա, կարծես թե, իսկապես էլ չէր ուզում հասկանալ իրադարձության ողջ լրջությունը։ Կրոմվելը համբերությունը կորցրեց։

— Բավակա՞ն է,— ասաց նա։— Ձենք լսելու այս անկայուն մարդու ճամարտականությունները։ Ավելի լավ է վերագառնանք պահլիճ և կատարենք մեր պարտականությունը։

Նրա հեղինակությունն անվիճելի էր, և դատավորները նստեցին տեղերը։ Բրեդշոուն մերժեց արքայի պահանջը և, այդպես էլ նրան խոսք չտալով, մի երկար ճառ արտասանեց, որը լի էր իրավաբանական տերմիններով, Աստվածաշնչի վկայակոչումներով և Էդվարդ II-ի, Ռիչարդ II-ի, Մարիա Ստյուարտի ժամանակների իրադարձությունների հիշատակումներով։

— Գոյություն ունի մի պայմանագիր,— ասաց Բրեդշոուն,— որ կնքվել է թագավորի և նրա ժողովրդի միջև, և այն պարտավորություններ է դնում երկու կողմերի վրա. ինքնակալի պարտքն է՝ պաշտպանել իր ժողովրդին, ժողովրդի պարտքը՝ հավատարմություն ինքնակալին։ Եթե թագավորը երբևէ խախտել է իր երդումը և իր սեփական պարտականությունները, նա ոչնչացրել է իր ինքնակալությունը... Մենք արդարության մեծ գործն ենք իրականացնում։ Եթե անգամ մեզ վիճակված է կործանվել՝ իրագործելով այն, մենք աստծո ողորմածությամբ չենք նահանջի դրանից։

Կարլոսը վեր-վեր թռավ, փորձելով պատասխանել, բողոքել։ Ո՛ւշ է։ Դատավճիռը կարդացին.

— Հիշյալ Կարլոս Ստյուարտը, որպես բռնակալ, դավաճան, մարդասպան և բացահայտ թշնամի, դատապարտվում է մահապատժի՝ գլուխը մարմնից անջատելու միջոցով։

Դատարանի անդամները տեղներից վեր կացան՝ ի նշան դատավճռի հավանության։ Կարլոսը վեր թռավ տեղից։

— Դուք ինձ վերջապես խոսք տալո՞ւ եք, սըր,— դիմեց նա Բրեդշոուին։

— Սը՛ր, ձեզ խոսք չի տրվում,— պատասխանեց նա։

— Չի՞ տրվում, սը՛ր։

— Ձեր թույլտվությամբ, ո՛չ, սը՛ր։ Պահակախո՛ւմբ, դուրս տարեք բանտարկյալին։

— Բայց թույլ տվեք։ Ես չե՞մ կարող խոսել դատավճռից հետո։ Ձեր թույլտվությամբ, սըր, ես կարող եմ խոսել ամեն տեսակ դատավճռից հետո էլ...

Կարլոսը շփոթում էր խոսքերը, կակազում։ Մահվան գունատությունը պատել էր նրա դեմքը։ Զինվորները շրջապատեցին նրան և ուժով դուրս տարան դահլիճից։ Նրա հենց ուղղակի մանչների մեջ գոչում էին. «Արդարությո՛ւն։ Մահապատի՛ժ։ Արդարությո՛ւն...»։

Եվ այսպես, դատավճիռը ձևակերպված ու աղդարարված էր

www.a-pdf.com

ժողովրդի առջև։ Այժմ հարկավոր էր դատավորների ստորագրությունները հավաքել։ Եվ կրկին դժվարություններ ծագեցին. շատերի համար սարսափելի էր իրենց ստորագրությունը դնել թագավորի մահավճռի տակ։ Մի բան է՝ լուռումունջ վեր կենաս, դահլիճում բոլորի հետ մեկտեղ արտահայտես քո համաձայնությունը դատավճռին, և միանգամայն այլ բան՝ սեփական ձեռքով այն ստորագրելը։ Անգլիայի թագավորի մահապատժի դեմ բացահայտ հանդես եկան Հոլանդիայի գլխավոր նահանգները, Արգայլի շոտլանդական կառավարությունը, Լյուդովիկոս XIV թագավորը։ Պառլամենտին, բանակի խորհրդին, դատարանին, Կրոմվելին, Ֆերֆաքսին էին ուղարկվում բազում նամակներ՝ դատավճիռը փոխելու խնդրանքով։ Ամեն օր ի հայտ էին գալիս բողոքագրեր։ Ասում են, որ նույնիսկ լորդ Ֆերֆաքսը փորձել է մեղմացնել դատավորներին, ակնարկելով նոր քաղաքացիական պատերազմի վտանգը, եթե դատավճիռը ի կատար ածվի։

Ոչ մի բան չկարողացավ սասանել կրոմվելյան սպաների վրճռականությունը. դնդապետներ Ուոլին, Օքին, Հևթչինսոնը, Հոֆֆեն, Պրայդը, Հարիսոնը, Իվերը, Հորթոնը առաջինը ստորագրեցին դատավճիռը։ Չէին հապաղում և պառլամենտական հանրապետականները՝ Լեղլոն, Մարթենը, լորդ Գրեյը։ Բայց շատերին հարկ էր լինում համոզել, անգամ ստիպել։ Նրանք ոչ մի կերպ սիրտ չէին անում իրենց գրավոր համաձայնությունը տալ դատավճռին և ջանում էին դուրս սողոսկել զանազան պատճառաբանումներով։ Եվ հարկ եղավ, որ այդ գործը Կրոմվելը վերցնի իր ձեռքը։

Հունվարի 27-ին, շաբաթ օրը, նա եկավ համայնքների պալատ և սկսեց համոզել նրա այն անդամներին, ովքեր միաժամանակ նաև դատարանի անդամ էին, որպեսզի ստորագրեն դատավճիռը։ Այդ նույն օրը նա պահանջեց, որ բոլոր դատավորները դնեն իրենց ստորագրությունները։ Նա արտակարգ զրդված էր. խոսում էր բարձր, ծիծաղում։ Նրա դրեթե սրբապղծության հասնող, համարյա խելահեղ զավեշտախոսությունները տարակուսանք էին հարուցում։ Քչերն էին հասկանում, թե որքան լարված էին նրա ուժերը։ Նա երրորդն էր ստորագրել դատավճռի տակ, և այդ անելիս չգիտես ինչու թանաքով ցողել էր Հենրի Մարթենի դեմքը, որը նրան նույն կերպ էր փոխհատուցել։ Այսպես կեղտոտված դեմքով, տենդագին վառվող աչքերով, աղմկալի, անհողդողդ՝ նա անցնում էր մեկից մյուսին, թախանձելով, սպառնալով, ծանակելով։

Երկուշաբթի ստորագրությունների հավաքումը շարունակվում էր համայնքների պալատում։ Նրա անդամներից մեկը, որ չէր ներկայացել դատական նիստին, ներս նայեց և ուզում էր աննկատ հեռանալ։

— Օ՜, ո՜չ,— գոչեց Կրոմվելը,— Նա, ով մտել է այստեղ,

www.a-pdf.com

պետք է դնի իր ստորագրությունը, ես ուզում եմ, որ նրանք հենց իմա իրենց ստորագրությունները դնեն։

Տեսնելով գնդապետ Ինգոլդսբիին, որը նույնպես չէր ներկայանում դատական նիստին, վաղքով մոտեցավ նրան, բռնեց ձեռքը, քարշ տվեց սեղանի մոտ, որի վրա դրված էր դատավճիռը և, գրիչը դնելով նրա մատների արանքը, բարձր քրքիջով ձեռքը տրժելով տառ-տառ գրեց. «Ռիչարդ Ինգոլդսբի»։

— Թեպետ դուք թաքնվում էիք ինձնից այս ամբողջ ժամանակ,— ինքն իրեն խոսեց նա,— այժմ դուք պետք է ստորագրեք այս թուղթը, ինչպես և մենք բոլորս...

Այսպես հավաքվեց 59 ստորագրություն։ Եվ որքան դյուրին էր այդ բոլորից հետո Կրոմվելին ներկայացնել որպես կատարվածի գլխավոր մեղավոր, միանձնյա «արքայասպան»։ Քշերն էին տասկանում, որ նրա հեղինակությունից, նրա խանդավառությունից և անընկճելի եռանդից օգտվում էին շատ ավելի հզոր ուժեր։ Նա ինքը չէր եղել հրահրողը, նա միայն կատարում էր ուրիշի կամքը։

Ուայթհոլի առջևի հրապարակում չխկչխկում էին մուրճերը, տախտակամած էր կառուցվում։ Այն, ինչպես և ամբողջ կառափնակոճը, պատեցին սև մահուդով։ Բաց դատավարությունը պիտի եզրափակվեր բաց համաժողովրդական մահապատժով։ Դահիճ գտնվեց մեծ դժվարությամբ. նույնիսկ դահիճները չէին համաձայնում այդ շլսված մահապատիժն ի կատար ածել։

Հունվարի 30-ին վաղ առավոտյան Կրոմվելը և նրա հետ մի քանի սպաներ մտան Ուայթհոլի սենյակներից մեկը, որտեղ Այրթոնն ու Հարիսոնը անքուն գիշերից հետո դեռևս պառկած էին անկողնում։

— Հարկավոր է դահճի համար հրաման պատրաստել,— ասացին նրանք։

— Գնդապե՞տ,— Կրոմվելը դարձավ դեպի Հանքսը։— Այդ պարտավոր եք անել դուք. այդպես է նշված դատարանի որոշման մեջ։

Հանքսը փորձեց հրաժարվել, թեպետ գիտեր, որ գեներալը ի հանդուրժում առարկություն։ Ներկաները շունչները պահեցին։ Կրոմվելը լուռ նայեց նրան, այնուհետև գնաց փոքրիկ սեղանի մոտ, որի վրա գրելու սարք կար, վերցրեց մի թերթ թուղթ և սկսեց գրել։ Վերջացնելով, նա գրիչը տվեց մի ուրիշ սպայի՝ Հելերին։

— Դո՛ւք ստորագրեք, գնդապետ։ Հույսներս չդնենք այսպիսի համառ ու անհուսալի փոքրոգու վրա։

Հելերը վերցրեց գրիչը, կռացավ և, ոչ մի խոսք չասելով, ստորագրեց։

Իսկ այդ ժամանակ Ուայթհոլի առջևի հրապարակը արդեն լցվում էր մարդկանցով։ Քանի գնում ավելի ու ավելի էին խմբ-

www.a-pdf.com

վում պատշգամբներում։ Տանիքները ճռռում էին հանդիսատեսների ծանրության տակ։ Ավելի ճարպիկները բարձրացել էին ծառերին։ Լսելի եղավ սմբակների դոփյուն և «երկաթակողների» ընտիր ջոկատները խիտ շարքով շրջապատեցին տախտակամածը, շարվեցին պալատի պատի երկայնքով։

Կեսօրին, ժամը 2-ին, Կարլոսը ոտից գլուխ սևերի մեջ, Բանկետի դահլիճի ուղղակի պատուհանից Ջեկսոն եպիսկոպոսի և մի քանի սպաների ուղեկցությամբ դուրս եկավ տախտակամած։ Այնտեղ արդեն սպասում էին դահիճը և նրա օգնականը՝ ծովային համազգեստներ հագած։ Նրանք կեղծամերով էին, դեմքերը ծածկված էին դիմակներով ու դնովի մորուքներով։ Թագավորը նկատել տվեց, որ կոճղը չափից դուրս ցածր է, գլուխը դրա վրա գնելու համար հարկ կլինի շատ ցածր կռանալ։ «Այդպես է պետք, սըր», պատասխանեց դահիճը։ Անհարմար էր բացատրել թագավորին, որ դա արված էր դիտավորյալ, այդպես դահճին հեշտ կլինի գործել ղոհի դիմադրության դեպքում։ Հենց նույն այդ նպատակով տախտակամածի հատակին կոճղի մոտ ամրացված էին երկաթե կեռեր։

Օրը ցուրտ էր։ Կարլոսը թերթիկին նայելով մի փոքրիկ ճառ արտասանեց։ Նա խոսում էր իր անմեղության մասին։ Պառլամենտին նա մեղադրում էր պատերազմ սանձազերծելու մեջ, բանակին՝ կոպիտ ուժ գործադրելու մեջ։ Անձամբ իրեն նա կշտամբում էր միայն նրա համար, որ թույլ էր տվել մահապատժի ենթարկել կոմս Ստրաֆորդին։ Նա հայտարարում էր, որ կանգնած է «ժողովրդի ազատության» կողմը, բայց «հպատակների գործը չէ,— ասում էր նա,— մասնակցել պետության կառավարմանը»։ Արքան մնացել էր արքա և խոսում էր որպես ողորմած միապետ, խրատելով իր հպատակներին որպես անխելամիտ և չար երեխաների։ Նա հաստատ գիտեր, որ իշխանությունը իրեն ընձեռված էր ի վերուստ և իր մեղքը չէ, որ այն խլում են այդպիսի դաժան եղանակով։

Այդ համոզվածությունը նրան ուժ էր տալիս պահպանելու արքայական արժանապատվությունը նաև իր վերջին, մահվան ժամին։ Նա թագադրված արքաների մեջ Մարիա Ստյուարտից հետո երկրորդն էր, որ հարկադրված էր գլուխը խոնարհել կոճղի վրա։

Ցրտաշունչ քամին սուրում էր պոռթկումներով, արցունքոտելով արքայի աչքերը։ Նրա խոսքերը լսելի չէին պապանձված ամբոխին՝ ժողովրդին, որն իր լռությամբ հավանություն էր տալիս իր աչքի առջև կատարվածին։ «Ես մեռնում եմ,— ասում էր Կարլոսը,— հանուն ազատության, ես նահատակվում եմ ժողովրդի համար...»։ Ոչ ոք, բացի պահակախմբից, չլսեց այդ բառերը։ Ոչ ոք այլևս չէր հավատում Անգլիայի միապետին։

Ավարտելով խոսքը, Կարլոսը եպիսկոպոսի օգնությամբ գլխարկի տակ հավաքեց իր երկար, ճերմակող մազերը, հանեց

www.ā-pdf.com

Միկնոցը, ընկավ ծնկների վրա, գլուխը դրեց կոճղին և կարճ աղոթքից հետո առաջ պարզեց ձեռքերը, ի նշան այն բանի, որ պատրաստ է մահվան։ Դահիճը կացնի մի հարվածով թռցրեց գլուխը։ Դահճի օգնականը վերցրեց գլուխը և բարձրացրեց։

— Ահա՛ դավաճանի գլուխը,— ասաց նա։

Հոգո՞ց էր, թե՞ հառաչանք, որ անցավ ամբոխի միջով։ Մի տոգի հոգի նետվեցին դեպի տախտակամածը, որպեսզի թաշկինակները թրջեն արքայական արյունով։ Հեծյալ զինվորներն ետ մղեցին ամբոխին ետ մղել կառափնարանից։ Շուտով հրապարակն ամայացավ։

Կրոմվելը ներկա չէր հրապարակային մահապատժին։ Մի քանի մոտիկ սպաների հետ նա, ինչպես ասում էին, խորասուզված էր աղոթքների մեջ։ Թագավորի մարմինը դրել էին խնջույքի դահլիճում՝ հանդիսավոր ճաշկերույթների դահլիճում, որն ունկանատես էր եղել բազում փայլուն և ցնծալի սեղանների։ Մահապատժից հետո գիշերը լորդ Սաութհեմփթոնը ընկերոջ հետ, որը մտատանջությունների մեջ, նստել էր դագաղի մոտ։ Գիշերվա ժամը 2-ին, այն սանդուղքի վրա, որ տանում էր դեպի ներքին հարկաբաժինները, խուլ, համր քայլերի ձայն լսվեց։ Ինչ-որ մեկը բարձրանում էր խնջույքի դահլիճ։ Դուռը ետ գնաց և ներս մտավ ոտից գլուխ թիկնոցի մեջ պարուրված մի մարդ։ Նա մոտեցավ դիակին և երկար կանգնեց նրա գլխավերևում՝ նայելով պիտակավորված դեմքին։ Այնուհետև գլուխն օրորեց և հառաչելով ասաց. «Դաժան անհրաժեշտություն»։ Լորդ Սաութհեմփթոնը ճանաչեց. նա ճանաչեց Կրոմվելի ձայնը։ Կանգնելով էլի մի քիչ, ներս մտածը շուռ եկավ և՛նույն դանդաղ, ծանր քայլերով դուրս եկավ։ Հետագայում նա միշտ խոստովանում էր, որ մահապատիժը իրավացի էր և երբեք ափսոսանք չէր արտահայտում։ Նա հպարտությամբ հայտարարում էր, որ այդ արված էր ոչ թե «մեկ անկյունում», ոչ թե ծածկաղմփոց անելով, այլ հրապարակով, դատ ու դատաստանով, ամբողջ ժողովրդի աչքի առաջ։ Արքայի մահապատիժը նա համարում էր «պատերազմի մեծագույն արդյունքը», «օրինակելի արդարադատության իրականացումը պատերազմի գլխավոր հրահրողի դեմ»։

Այդպես էին մտածում նաև նրա մերձավորագույն զինակիցները, որոնց համար թագավորի մահապատիժը «արդարության վերջավոր գործն» էր։ Պատմության մեջ առաջին ժողովրդական դատաստանի այդ ակտը բուրժուական հեղափոխության գլխավոր լուսաբանական նվաճումն էր, հեղափոխականության բարձրագույն Ոգին նրա առաջնորդների և առաջին հերթին իր՝ Կրոմվելի։ Լրջորդ դասի մարդիկ հաղթանակ տարան ընդդեմ միապետության և արիստոկրատիայի։ Նրանք խորապես հավատում էին այն բանին, որ թագավորի մահապատիժն անհրաժեշտ է քաղաքական և կրոնական ազատության համար։

www.a-pdf.com

Թագավորի մահապատիժը այսուհետև մեկընդմիշտ ցրեց միապետ անձի անձեռնմխելիության, նրա վերերկրային նշանակելիության պատրանքը։ Մեծագույն նախադեպը կյանքի էր կոչվել. չլիներ դա, չէր կարող իրականացվել և Լյուդովիկոս XVI-ի ու Մարիա Անտուանետի մահապատիժը, չլիներ դա, հանրապետության վերաբերյալ գաղափարները չէին կարող տիրապետել ժողովուրդների գիտակցությանը։ Հին, դարեր ապրած հիերարխիական աշխարհակարգը կործանվեց. մկսվեց նոր ժամանակը, նոր պատմությունը։

Վերին աստիճանի խիզախ և հեղափոխական ակտեր ուղեկցեցին նկարագրված իրադարձություններին։ Մահապատժի օրը, հունվարի 30-ին, համայնքների պալատը պետական հանցագործ հայտարարեց բոլոր նրանց, ովքեր կփորձեն գահի ժառանգորդ հռչակել Կարլոս Ստյուարտի սերնդից որևէ մեկին։ Երևում է ահեղ անեծք կար կախված Ստյուարտների տոհմի գլխին, և այժմ եկել էր այն իրագործելու ժամանակը։ Փետրվարի 6-ին ոչնչացվեց լորդերի պալատը։ Եվ վերջապես, փետրվարի 7-ին հաջորդեց նշանավոր օրինագիծը.

«Փորձով ապացուցված է, և դրա հետևանքով էլ պալատի կողմից հայտարարվում է, որ արքայական կոչումը այս հողի վրա անօգուտ է, դժնդակ ու վտանգավոր է ազատության, անվտանգության և ժողովրդի բարեկեցության համար, ուստի հետայսու այն վերացվում է»։

Դա նշանակում էր հանրապետության հռչակում։ Պետական նոր կնիքի վրա թագավորի կիսադեմի փոխարեն պատկերված էր խաչ և տավիղ՝ Անգլիայի և Իռլանդիայի դինանշանային խորհրդանիշը, և մակագրված էր. «Ազատության առաջին տարի՝ վերականգնված աստծո ողորմածությամբ»։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ VII

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԸ

Ո՞ւր է այն բարիքը, որտե՞ղ է այն ազատությունը, որի մասին այնքան շատ էին խոսում, և որի համար այնքան թանկ վճարվեց։

Լիլբեռն

Ես ասում եմ ձեզ, սըր, որ դուք չունեք այլ միջոց ձերբազատվելու այդ մարդկանցից, քան միայն դրանց ջախջախելը, այլապես նրանք կջախջախեն ձեզ և ձեր զլուխների և ուսերի վրա կդնեն ամբողջ պատասխանատվությունը թափված արյան և տերության հարստությունների վատնման համար։ Նրանք զուր և ապարդյուն կդարձնեն այն ամենը, ինչ դուք ստեղծել եք բազում տարիների աշխատանքով, զրկանքներով ու տառապանքով, և կհասնեն այն բանին, որ խելամիտ մարդկանց աչքին ամբողջ աշխարհում դուք կներկայանաք իբրև ողորմելի սերունդը թուլակամ ու փսքրոգի մարդկանց, որոնց կոչնչացնի և կընկճի նողկալի և ստոր մարդկային վիժվածքը, ինչպիսին նրանք են հանդիսանում։ Այդ պատճառով էլ ես դարձյալ կրկնում եմ, սըր, ձեզ անհրաժեշտ է ջախջախել նրանց։

Կրոմվել

Անգլիայում չկար այլևս թագավոր։ Չկար և լորդերի պալատը։ Այն լուծարքի էին ենթարկել մարտի 17-ի արձանագրությամբ, որպես «անօգուտ և վնասակար»։ Երկրում բարձրագույն իշխանությունը դարձել էր համայնքների պալատը, որը մեծ գործ էր կատարել, չկային այլևս Գաղտնի խորհուրդը, Աստղային պալատը, դատարանը՝ արքայական խնամատարությամբ, գոյություն չունեին արքայական մենաշնորհներն ու վետոյի իրավունքը։

Վրա էր հասել օրենսդրական շինարարության ժամանակը։ Ժողովրդին հարկավոր էր տալ նոր սահմանադրություն, սահմանել իշխանության կազմը և լիազորությունները, վերանայել օրենքները։ Մարտի 19-ին պալատը պաշտոնական արձանագրություն ընդունեց միապետությունը վերացնելու մասին։

Մայիսի 19-ին Անգլիան հանդիսավորապես հռչակվեց հանրապետություն և ազատ պետություն։ Այսուհետև այն պետք է կառավարվեր պառլամենտում հավաքված ժողովրդի ներկայացուցիչների կողմից։ Հայտարարված էր նաև հետևյալը. «Հանրապետության մեջ արդարադատությունը իրականացվում է հարկ եղած ձևով. հզորներն անկարող են ճնշել թույլերին, և աղքատները զոհացվում են անհրաժեշտ եկամուտով։ Խղճի, անձի և

www.a-pdf.com

ունեցվածքի արդարացի ազատություն է տրված բոլոր մարդկանց»։

Դեռևս փետրվարին որոշում կայացրին Պետական խորհուրդ ստեղծելու մասին՝ գերագույն գործադիր իշխանություն, որ պիտի ենթարկվի համայնքների պալատին։ Նա վճռում է արտաքին քաղաքականության հարցերը, ղեկավարում բանակը, նավատորմիղը, գործերը Իռլանդիայում, տնօրինում է դելինքվենթների՝ Կարլոս Ստյուարտի փախած կամ դատի տրված կողմնակիցների, ունեցվածքը։ Արքայական աթոռի դատարանը փոխարինեցին Գերագույն աթոռի դատարանով։

Դրանք խիզախ հեղափոխական ակտեր էին. դրանց միջոցով Անգլիան, թվում էր, իսկապես կարող էր դառնալ արդարացի դեմոկրատական հանրապետություն։ Բայց մի բան է՝ բարձր սկզբունքների հռչակումը թղթի վրա, մի այլ բան՝ դրանց իրականացումը կյանքում։ Համայնքների պալատը կազմված է ինքնիշխան ժողովրդի ներկայացուցիչներից՝ «Անգլիական ազատության պահապաններից» — այսպես էր նշված լինում փաստաթղթերում։ Բոլորն իրենց համարում էին, բոլորը իրենց պատկերացնում էին ժողովրդի ներկայացուցիչ. և՛ դատավորները, և՛ բանակի սպաները, և՛ պառլամենտը։ Նրանք մահվան դատավճիռ կայացրին թագավորի դեմ «հանուն ժողովրդի», բայց չէ՞ որ թագավորն ինքն էլ իրեն պատկերում էր իբրև ժողովրդի իրավունքների պաշտպան. նա ենթադրում էր, թե ժողովուրդը խաբված է։ Այո՛, ժողովուրդը պայքարում էր ատելի թագավորական միապետության դեմ։ Լոնդոնի քաղաքացիների վիթխարի բազմությունը պահանջում էր մահապատժի ենթարկել Ստրաֆորդին։ Ժողովուրդը՝ հասարակ գյուղացիներն ու արհեստավորները, զենքը ձեռքին կռվում էր կավալերների դեմ, որոնք պաշտպանում էին արքայական առանձնաշնորհումները։ Բայց այժմ ժողովրդական շարժման ուսերին նստած ո՞վ է եկել տիրացել իշխանությանը։ Ո՞վ է օգտվել ժողովրդական հաղթանակի պտուղներից։ Իրականում դրանք մի խումբ մարդիկ էին՝ 50—60 հոգի, ոչ ավելի, որոնք մնացին պալատում բազմաթիվ փախուստներից հետո, լքված, հալածված, պրայդյան ավերիչ զտումից հետո։ Պետական խորհուրդ էին մտել նույն մարդիկ։ Բանակի գեներալներն ու սպաները (նրանց մեջ Կրոմվելը, Ֆերֆաքսը, Սքիփոնը, Լեգլոն, Գիզլրիգը), նշանավոր դատավորներ ու իրավաբաններ Բրեդշոուն, Ուայթլոքը, Սենթ-Ջոնը։ Ցուցակով այնտեղ հաշվվում էր 41 մարդ և նրանցից 31-ը միաժամանակ պառլամենտի անդամներ էին՝ Հենրի Վենը, Հենրի Մարթենը... Հեղափոխության եռանդուն գործիչներից այնտեղ չեն ընկել միայն Այրթոնը և Հարիսոնը. չէ՞ որ սրանք դեռ մինչև զտումը հանդես էին գալիս պառլամենտի շուտափույթ արձակման օգտին։ Պետական խորհրդի քարտուղար նշանակեցին մեծ բանաստեղծ Ջոն Միլտոնին։

www.a-pdf.com

Կրոմվելն այժմ իրեն զգում էր երկրի լիակատար տերը։ Նա այդպես զգում էր անձամբ, նա տեսնում էր, որ ուրիշներն էլ լռելյայն խոստովանում էին, որ նրան է պատկանում առաջնորդությունը, վախով ու հարգանքով գլուխ էին խոնարհում հաղթական բանակի առաջնորդի առաջ, գլխավոր «արքայասպանի» առաջ։ Պետական խորհրդի գոյության առաջին ամսին նա էր դրա ավտոկրատ նախագահը և միայն հետագայում այդ պաշտոնին դրեց Ջոն Բրեդշոուին, որը դատել էր արքային։

Կրոմվելն այդ օրերին զբաղված էր որդուն՝ Ռիչարդին, գյուղական այդ պարզամիտ ու ծույլ տղային ամուսնացնելու պատրաստությամբ։ Սա որքան տարբեր էր վսեմ, շնորհաշատ Ռոբերտից՝ նրա վաղաժամ մահացած առաջնեկից։ Որքա՜ն էր դանդաղանվում և աննկուն զինվոր Օլիվերից, որ ծաղկից վախճանվել էր քառասունչորս թվականին։ Ռիչարդը օժտված չէր ո՛չ տաղանդով, ո՛չ զինվորականի, ո՛չ էլ ուրիշ որևէ ընդունակությունով։ Նա ամենից ավելի սիրում էր ձիեր ու որսորդություն, և պատրաստ էր օրերով ընկնել թռչունների ետևից՝ ճահճուտից ճահճուտ։ Նա մեղմ բնավորություն ուներ, զիջող էր, հակում չուներ դեպի գիտությունները, հակում չուներ և առհասարակ որևէ գործի նկատմամբ։ Բայց այդ փխրուն կավե ամանը դարձել էր այժմ ավագ որդի և, ուրեմն, ժառանգորդ։ Նրա մասին պետք էր առանձնապես հոգալ։

Արդեն փետրվարի 1-ին, գլխատումից մեկ օր հետո, Կրոմվելը մեկի միջնորդությամբ դիմում է ապագա բարեկամին, հարսի հորը՝ դրամատեր Ռիչարդ Մերին։ Նա պայմանավորվում է հնեցվածքային հարցերի և երկու կողմերի պարտավորությունների առնչությամբ։ Նրա համար հատկապես կարևոր է, որ հարսնացուն՝ Դորոթի Մերը, բարեխնամ նեցուկ դառնա Ռիչարդին։ Նա հույսը դրել էր աղջկա բարեմտության, հավասարակշռության և անսասան առաքինության վրա։ Ամուսնության վերջնական ձևակերպումը տեղի ունեցավ ապրիլին։ Դորոթին արտացրեց իր սկեսրայրի հույսերը՝ նա լավիկն էր և խելամիտ։ Մի նա զննում էր հարսին, այնքան դուր էր գալիս իրեն, մանկեղծորեն կապվեց նրա հետ։ Իսկ Ռիչարդ Մերին խնդրում էր հատկապես հետևել, որ իր երիտասարդ փեսան ավելի շատ տրվի կարդա պատմության և աշխարհագրության գծով՝ գուցե մի քիչ ավելի լրջանա և նախապատրաստվի ապագա, ով գիտե, մի մեծ գործի համար։

Իսկ Ռիչարդին էլ նա գրում էր այսպես. «Դու, գուցե, կարծում ես, թե ես հարկ չունեմ քեզ խորհուրդ տալ սիրել կնոջդ։ Դու ասված սովորեցնի քեզ այդ բանը, այլապես ամեն ինչ ապարդյուն կլինի։ Թեպետ և ամուսնությունը ռահմանված չէ որպես խորհուրդ, այնուհանդերձ նրանում կա անապական մանիկ սեր»։ Նա ինքը ողջ կյանքում ջանում էր ազնվորեն սիրել իր Էլիսաբեթին։ Եվ գտնում էր, որ հենց այդպիսի սերը՝ ոչ թե ան-

www.a-pdf.com

հավասարիմ, անակնկալ հանկարծահաս հրապուրանքի պտուղը, այլ բարի պտուղը ամենօրյա գիտակից ջանքերի, տառապալից ջանքերի՝ սիրել, ներել, խղճալ և տանել առաջ, առ աստված՝ ամուսնության միակ ամուր հենարանն է։

Մինչդեռ ամպերը քաղաքական հորիզոնում նորից սկսել էին խտանալ։ Անգլիացիների չտեսնված հանդգնությունը՝ աստծո օծյալի հրապարակով գլխատումը, հարուցել էր միապետական Եվրոպայի սարսափն ու զայրույթը։ Նորահայտ հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններն ընդհատվեցին։ Ֆրանսիան, Իսպանիան, Ավստրիան պաշտոնական բողոք հայտնեցին «արքայասպան» հանրապետությանը։ Անգամ բողոքական հանրապետություն Հոլանդիան իրեն պահում էր զգրգռիչ կերպով՝ նա ապաստան տվեց Ուելսի արքայազնին։ Անդադար տեղեկություններ էին ստացվում ֆրանսիական կամ իսպանական զորքերի պատրաստվող ինտերվենցիայի մասին։ Շոտլանդիայում Ուելսի արքայազնը հռչակվեց թագավոր։ Դա բացահայտ մարտահրավեր էր։ Բուն Անգլիայում դեռևս պահպանվում էր անառիկ ամրոց Պոնտեֆրակտը՝ կավալերների վերջին հենարանը։ Հյուսիսային և արևմտյան կոմսություններից տեղեկություններ էին ստացվում ռոյալիստական անկարգությունների մասին, էքսեթերում ինչ-որ մարդիկ բոլորի աչքի առաջ պատռել էին որևէ մեկին թագավոր հռչակելն արգելող արձանագրությունը։

Լույս էր տեսել մի անպատկառ, անստորագիր պարսավագիր։ Այն անվանված էր «Արքայական դեմք» և գրված էր իբր իր՝ թագավոր-նահատակի կողմից։ Դա այնքան վառ գույներով էր պատկերում գլխատված միապետի հեզաբարո բարեպաշտությունը և մյուս անթիվ-անհամար արժանիքները, որ կարճ ժամանակում, միայն մի տարվա ընթացքում ունեցավ քառասունյոթ հրատարակություն։ Եվ չնայած, որ պարսավագրին պատասխանեց ինքը Ջոն Միլտոնը, սակայն նրա խստաշունչ կոքոտ հանճարն էլ չկարողացավ խլացնել հանրապետության թշնամիների ֆշշոցը։

Բայց գլխավոր վտանգն այժմ Իռլանդիայից էր գալիս։ Այդ ամենամոտիկ հարևանը դարձել էր ռոյալիստների չարագուշակ բույնը։ Կոմս Օրմոնդը փետրվարին դաշինք կնքեց իռլանդական կաթոլիկների հետ և զորքեր պատրաստեց Անգլիա ափհանման համար։ Իր տորմիղի մնացորդներով այստեղ հասավ արքայազն Ռուփերտը, այստեղ էլ հենց հրավիրվեց ապագա Կարլոս II-ը, որպեսզի գլխավորի գործը։ Իռլանդիան դարձել էր ամենահարմար հենադաշտը ամեն տեսակի ներխուժում կազմակերպելու համար, հանրապետությանը թշնամի բոլոր ուժերի կենտրոնատեղին։

Հարկավոր էր անհապաղ մտածել Իռլանդիա զորք ուղարկելու մասին։ Բայց հենց որ Կրոմվելն ու նրա մերձավորներն

www.a-pdf.com

կում էին խոսել այդ մասին, նրանց առաջ հառնում էին նույն ...ն խնդիրները, որոնք քիչ էր մնացել կործանման հասցնեին 1917 թվականին։

Իսլանդիայի վրա արշավանքի բանակ կազմավորելու համար արկավոր էր սրճակել, վերակազմել հին զորքերը։ Իսկ ինչ...ն անել դա, երբ բանակի ռոճիկների գծով պարտքերը մինչև ...մ չէին վճարված։ Դրանք փորձել էին մարել, թեպետև մաս...անիորեն, վաճառելով թագավորի գեղանկարները, կահավո...ները, զարդեղենը, գրադարանը։ Ասենք, շուտով նոր Պետական ...բիուրդը գտավ, որ շատ ավելի հարմար ու հաճելի է այդ ...հենը օգտագործել սեփական բնակարանները հարդարելու ...մար։ Դրամի կարիքը չէր նվազում։ Որտեղի՞ց դրամ վերցնել, ...բր Սիթին մեծ անվստահությամբ ու, կարելի է ասել, թշնամու...մբ էր վերաբերվում թագավորի գանձարանին և հանրա...ությանը հաստատմանը։ Երբ ժողովուրդը կքել է չափազանց ...ծ հարկերի ու տուրքերի ծանրությունից և ահա, ուր որ է, ...պահություն կբռնկի։

Դժգոհություն ժողովրդի մեջ՝ ահա թե նաև ինչն էր անհան...տացնում։ Պատերազմը լճացում էր առաջացրել արհեստա...ծությունի մեջ և առևտրում, բազմահազար մարդիկ սնանկա...ել էին։ Աշխատանքի տեղ չկար, և աղքատների ամբոխը թա...ռում էր ճանապարհներին։ Երեք տարի անընդմեջ անբերրիու...նը քայքայել էր հողագործությունը, հացը թանկացել էր, ...ասունների անկում էր։ Քառասունհազարանոց բանակը ծանր ...ի պես ընկել էր ժողովրդի վրին։ Հարկերն աճել էին։ Եկեղեցա...ն տասանորդը շարունակում էր գործել, չնայած խղճի ազա...թյան հռչակելուն։ Պատերազմը սկսվելու հետ անշեղորեն ...ր թանգացել էին մսի, աղի, մոմի, գործվածքի, ածուխի գները։

Մարդիկ սովահար էին լինում։ Ապրիլի 30-ին Ուայթլոքը ...ագրում նշել է. «Վանկաշիրից հաղորդում են հացի մեծ պա...ակության մասին, որի հետևանքով շատ ընտանիքներ մեռել են ...սովահարությունից... Նյուքասլից հայտնում են, որ Քամբեր...լենդում և Ուեսթմորլենդում շատերը մեռնում են մեծ ճանա...ապարհներին հացի պակասության հետևանքով, ոմանք լքում են ...ենց տները և իրենց կանանց ու երեխաների հետ անցնում են ...ուրիշ բնակավայրեր՝ օգնություն ստանալու հույսով, բայց ոչ մի ...ոչ օգնություն չեն ստանում... Աղքատների բողոքները հեղե...ում էին պառլամենտը։ Նրանք տրտնջում էին գների և հարկերի ...սրթրացումից, ծայրահեղորեն ցածր աշխատավարձից, ցրտից և վառելիքի պակասից։ «Ո՞վ պառլամենտի անդամներ և զին...վորներ,— կոչ էին անում նրանք,— կարիքը օրենք չի ճանա...ում... մայրերն ավելի շուտ կոչնչացնեն ձեզ, քան թույլ կտան սովամահ լինել իրենց արգանդի պտղին, իսկ սովի դեմ սուրն ու ...ինդանոթը ոչինչ են։ Ականջ դրեք մեր դռների մոտ, տեսեք, թե

www.a-pdf.com

ինչպես են մեր երեխաները «հա՜ց, հա՜ց...» կանչում։ Մենք աղաղակում ենք. գթացե՜ք ճնշված և կեղեքված ժողովրդին»։

Ժողովո՞ւրդ։ Ժողովուրդը Կրոմվելի համար բարեպաշտ պուրիտանն էր, ամրակուռ տնտեսատերը, վարձակալը, արհեստավորը, բոլոր նրանք, ովքեր իրենց ազնիվ աշխատանքով և ունեցվածքով պահում են պետությունը։ Ժողովուրդը նրա բանակն էր։ Իսկ այդ ողջ խաժամուժն աղքատներին ու թափառաշրջիկներին, սնանկացած կոտերներին և քաղաքային ամբոխին Կրոմվելը ժողովուրդ չէր համարում։ Կրոմվելը նրանց կամ պարզապես հաշվից դուրս էր նետում, մտածելով ազգի բարօրության մասին, կամ զգուշանում էր նրանցից։ Աղանդավորները, որոնց նա նախկինում հաճույքով էր վերցնում իր բանակը, այժմ վրդովում էին նրան, և այժմ բնավ էլ նրա հոգը չէր, երբ իմանում էր, որ նրանց հետապնդում են, հալածում, բանտ են նետում։ Նա մատը մատին չէր խփում, որպեսզի պատասխաներ նրանց հանրագրերին, կատարեր նրանց պահանջները։ Նրանց ընտրելու իրավո՞ւնք տալ բոլորի հետ հավասար։ Այդ մասին չէր կարող խոսք իսկ լինել։ Լևելերների «ժողովրդական համաձայնագիրը», որ տրված էր պառլամենտին դեռևս հունվարին, դրվել էր մահուդի տակ և մոռացության տրվել։

Բայց իրենք՝ լևելերները, չէին պատրաստվում զենքերը վար դնել։ Նրանք այժմ սկսել էին խոսել ամբողջ ձայնով, սկսել էին խոսել ժողովրդի անունից։ Նրա ազատությունները հափշտակված են, իսկ նրա բերանն էլ փորձում են փակել, որպեսզի աղմուկ չհանի։ Բանակին բանի տեղ չեն դնում. Կարլոս Ստյուարտի մահապատժից անմիջապես հետո, փետրվարի 2-ին, սպաները համայնքների պալատին առաջարկեցին հրապարակել մի օրենք, որը կախաղանով սպառնա նրանց, ովքեր խառնակություն կսերմանեն բանակում։ Զինվորական միտինգներն արգելվեցին, իսկ բողոքագրեր թույլատրվում էր տալ միայն սպաների միջոցով։

Փետրվարի 26-ին ռեմոնստրացիա է ստացվում Լոնդոնի և Սաութուորկի քաղաքացիներից։ Նրա հեղինակը դարձյալ նույն այն անխոնջ Լիլբեռնն էր, և այն անվանված էր՝ «Անգլիայի նոր շղթաների մերկացումը»։

Ինդեպենդենտական հանրապետությունը նոր շղթաներ է կռել ժողովրդի համար հների փոխարեն, որոնք ջարդվել էին թագավորի մահապատժով։ Ժողովուրդը ստորացված է ոչնչության աստիճանի, մինչդեռ նրան շոյում, շողոքորթում են, հավատացնելով, թե նա արդարադատ իշխանության միակ աղբյուրն է։ Այնինչ ամբողջ իրական իշխանությունը երկրում հանձնված է Պետական խորհրդին, և նրա անդամները «կունենան վիթխարի հնարավորություն իրենց իշխանությունը դարձնելու բացարձակ և անսպառասխանատու»։ Ուստի պառլամենտը պետք է ցրել և անմիջապես էլ հրավիրել նորը, լրիվը, ներկա-

www.a-pdf.com

յայտնի ցուցչականը։ «Ինքնահրաժարման արձանագրությունը», որ հրատարակվել է դեռևս 1645 թվականին և այժմ մոռացված է բոլորից, պետք է իրագործվի։ Մեծ բանսարկությունները, որոնք պատվավոր տեղեր են զավթել և՛ բանակում, և՛ պառլամենտում, Հանրապետությունն ստրկացնելու պլաններ են որոճում։ Նրանք արդյոք վերջ ի վերջո չե՞ն դառնա «բացարձակ տիրակալներ, պարոններ ու իշխանավորներ, ինչպես պառլամենտի, այնպես էլ ժողովրդի վրա»։

Իսկ ժողովրդին լևելերները բացատրում էին. «Դուք թեթևացում և ազատություն եք սպասում նրանցից, ովքեր կեղեքում են ձեզ, որովհետև ովքե՞ր են ձեզ կեղեքողները՝ եթե ոչ բարձր դասի մարդիկ ու ջենթրիները, և ովքե՞ր են հարստահարվողները, եթե ոչ յոմենները, վարձակալները, արհեստավորները ու բանվորները։ Այժմ խորհեցեք, արդյոք դուք ձեր հարստահարողներին չե՞ք ընտրել որպես ձեր ազատարարների»։

Հանրապետությունը նոր էր միայն հաստատվել, իսկ լևելերներն արդեն հրահրում էին ժողովրդին նոր պայքարի. «Ապրստամբեցեք մի մարդու պես,— գրում էին նրանք,— ձեր ազատության համար պայքարի ելեք ընդդեմ նրանց, ովքեր չարաշահել են ձեր վստահությունը և ցանում են մշտապես հարստահարել ձեզ... Եթե դուք այժմ չօգտագործեք այս հնարավորությունը, հաստատապես իմացեք, որ դուք ձեր սեփական վիճն եք ունում լուծը, որը կկործանի ինչպես անձամբ ձեր, այնպես էլ ձեր ժառանգների կյանքը, իրավունքն ու ունեցվածքը»։ Մարտի 1-ին ութ զինվորներ հանրագիր ներկայացրին սպաների խորհրդին, պահանջելով թույլատրել զինվորական միտինգները, թույլատրել ազատորեն բողոքագրեր հանձնելու իրավունքը, ստեղծարքի ենթարկել Պետական խորհուրդն ու դատական տրիբունալը։ Հանրագրում դատապարտվում էր սպայական վերնախավի կառավարումը, հանրագիրն ակնարկում էր, թե բանակը չի պատկանում ծառայել «առանձին մարդկանց փառասիրական նպատակներին»։

Կատաղությունը տիրել է Կրոմվելին։ Նրանք հանդգնում են խռովություն սարքել հաղթանակից հետո, որ ձեռք էր բերվել ինչքան դժվարությամբ։ Նրանք համարձակվում են հարձակվել իրենց հրամանատարների վրա, պահանջելով պաշտոնազրկել նրանց։ Մարտի սկզբին, պալատում վեճի բռնվելով Հենրի Մարթենի հետ խռովարարների այդ լևելերական խառնախմբի մասին (Մարթենը, իհարկե, պաշտպանում էր նրանց), Կրոմվելը պարզապես դուրս քաշեց։ Հանրագիր ներկայացնող ութը զինվորների ռազմադաշտային դատարանին հանձնեցին։ Նրանցից հինգը, որոնք չցանկացան զղջալ, մեղավոր ճանաչվեցին՝ բանակը, Պետական խորհուրդը զրպարտելու և խռովություն հրահրելու մեջ։ Մարտի 6-ին շարված գնդերի առջևով անցկացրին նրանց՝ ձիե-

www.a-pdf.com

ին թարս նստեցրած, ջարդեցին նրանցից ամեն մեկի թուրը իր գլխի վրա և վտարեցին բանակից։

Բայց Լոնդոնում ժողովրդի բաղմությունը նրանց դիմավորեց ցնծությամբ և համակրանքով։ Պարտվածները հաղթողներ դարձան, անարգանքը՝ հաղթահանդես։ Երկու շաբաթ անց, հինգ զինվորների հետ կապված այս ամբողջ պատմությունը շարադրվեց մի սուր ծաղրական պարսավագրի մեջ այսպիսի վերնագրով. «Աղվեսի որս Նյումարքեթից և Թրիպլո Հիտայից մինչև Ուայթհոլ՝ կատարված հինգ փոքրիկ թաղիների կողմից (որոնք նախկինում եղել էին բանակում), կամ պոկված են խաբեբաբրանդների դիմակները (այնպես որ դուք կարող եք ճանաչել նրանց)»։ Աղվեսներին ճանաչելը իսկապես որ դժվար չէր։ Կրոմվել, Այրթոն, Ֆերֆաքս՝ ահա այդ նենգ աղվեսները։ Նրանք ձգտում են իրենց ձեռքը վերցնել իշխանությունը և հարստահարել ժողովրդին։ «Եղե՞լ է երբևէ այսքան խարդախ, դավաճան ու երդմնազանց մարդկանց մի սերունդ, որքան այս մարդիկ են, նրանց աղոթքները, պասը, քարոզները, նրանց հավիտենական վկայակոչումները սուրբ գրքից, աստծո և Քրիստոսի անունները, որ չեն իջնում նրանց շուրթերից... Բավական է, որ դուք սրևէ մի բանի մասին խոսեք Կրոմվելի հետ, նա ձեռքը կդնի կրծքին, աչքերը կհառի երկինք և վկա կկանչի աստծուն։ Նա արցունք կթափի, կհառաչի ու կթառանչի ձեզ նույնիսկ դաշույնի հարվածի տակ ուղարկելիս... Այժմ պարզ է ողջ աշխարհին, որ սպաների շահերը ուղղակի հակադարձ են զինվորների շահերին, նրանց միջև տարբերությունը ավելի մեծ չէ, քան տարբերությունը Քրիստոսի և Բելիալի միջև, լույսի և խավարի միջև... Մինչ այդ մեզ կառավարում էին թագավորը, լորդերն ու համայնքները, այժմ՝ գեներալը, դաշտային դատարանը և համայնքների պալատը։ Ձեզ ենք հարցնում. ի՞նչ է փոխվել...»։

Պամֆլետը լեցուն էր հարձակումներով՝ ուղղված անձամբ իրեն՝ Կրոմվելին։ Նրան անվանում էին նոր թագավոր, նրան հարցնում էին. «Օ՜, Կրոմվել։ Ինչի՞ ես դու հետամուտ»։

Նա հետամուտ էր կարգ ու կանոնի, երկրի բարօրությանը (ինչպես նա այդ հասկանում էր), արդարությանը և հեղափոխության նվաճումների պահպանմանը։ Հեղափոխությունն ավելի առաջ տանել նա չէր ուզում, երկյուղում էր, բայց պահպանել այն, ինչը նվաճված էր, այստեղ նա չուներ տարակույս։ Մարտի 15-ին նա նշանակվեց իռլանդական բանակի գլխավոր հրամանատար։ Նրան առաջարկեցին բանակային խորհրդի պետի պաշտոնը։

Ի՞նչ էր մնում նրան անել։ Անձնական իշխանության ձգտման մեջ, «նոր արքա» դառնալու ձգտման մեջ նրան մեղադրում էին և՛ աջից, և՛ ձախից, և՛ ռոյալիստները, և՛ լևելիրները։ Նա կարող էր նշանակվելուց հրաժարվել, չգնալ Իռլանդիա։ Բայց

www.a-pdf.com

առանց նրա կհաղթե՞ն արդյոք։ Առանց նրա չի՞ տապալվի պառլամենտական ճամբարը, իրար չե՞ն գզվռտի կուսակցությունները։

Հարկավոր էր պատասխանել, և մարտի 23-ին նա ոտքի ելավ սպաների խորհրդի առջև։ Նրա համար, անգլիական սքվայրի համար, որն Իռլանդիայի վրա նայում էր որպես հասույթի, որպես իր և իր նմանների հարստանալու միջոցի, իռլանդացիները բարբարոսներ էին, և արժանի չէին բարեհաճության։ Նա հիշեց 1640 թվականի խռովությունը, մտաբերեց կաթոլիկական դավերը և իռլանդացիների և ռոյալիստների միջև մշտական կապերը։

— Եթե մենք չջանանք,— ասում էր նա,— այնտեղ պաշտպանել մեր շահերը, ապա դրանք ոչ միայն արմատախիլ կարվեն, այլև, բացի դրանից, իռլանդացիներն ամենանվազագույն ժամանակում կկարողանան անգլիական ափը հանել իրենց զորքերը։

Եվ մի այլ միտք էլ կար նրա ճառի մեջ. պետք է մտածել զինվորների մասին։ Պառլամենտը և հրամանատարները մեծ պարտք ունեն նրանց հանդեպ։ Իռլանդիայի նվաճումը կարող է նրանց նշանակալից փոխհատուցում տալ այն վնասների ու տառապանքների, այն կորուստների համար, որ կրել են նրանք։ Նրանց հարկավոր է վճարել, նրանց հարկավոր է լավ հանդերձավորել, զինել, հագցնել, և այն ժամանակ՝ «եկեք գնանք, եթե աստված կգա մեզ հետ...»։

Ճառը ներգործություն ունեցավ։ Վճռվեց 120 հազար ֆունտի փոխառություն խնդրել Սիթիից։ Իռլանդական արշավանքը ապահովելու համար բաց թողնվեց ակտ՝ վանքապատկան և արքունի հողերը վաճառելու մասին։

Իսկ Կրոմվելի ճառի հաջորդ օրը, մարտի 24-ին, հրատարակվեց ևս մի լևելերական պարսավագիր, որն անվանված էր. «Անգլիայի նոր շղթաների երկրորդ հատվածը, կամ տխուր ներկայացում հանրապետության անհուսալի և վտանգավոր դրության մասին՝ ուղղված Անգլիայի բարձրագույն իշխանությանը՝ ժողովրդական ներկայացուցիչներին...»։ Եվ կրկին նույն մեղադրանքները. «Անարդարացիությունը, ագահությունը և փառասիրությունը նրանց, ում ժողովուրդն ընտրել է որպես իր ներկայացուցիչը...»։ «Այդ մարդիկ, որոնք նախկինում ցույց էին տալիս, թե պայքարում են ազատության համար՝ հասարակական աղետները ոչնչացնելու նպատակով, ընդունակ դուրս եկան արագորեն վերասերվելու և յուրացնելու նախկին բռնակալների վատթարագույն սկզբունքներն ու գործելակերպը...»։ «Ուխտադրուժ ու դավաճանական գործողություններ բանակի, պառլամենտի ու պետության հանդեպ...»։ Եվ սպառնալիքներ. նրանք, ովքեր զավթել են հանրապետության իշխանությունը, «ցած կնետվեն

www.a-pdf.com

իրենց բռնատիրած իշխանության բարձրությունից», քանի որ «նրանք արդեն կորցրել են ամբողջ ժողովրդի բարեհաճությունը և իրենց իշխանությունը պահում են միայն ուժին ապավինելով»։

Նոր պարսավագիրը կառավարության մեջ միանգամայն հասկանալի վրդովմունք առաջ բերեց։ Այն հայտարարվեց «խայտառակող, զրպարտչական, խռովության և նոր պատերազմի կոչ անող» գիրք։ Հեղինակներին և հրատարակիչներին մեղադրեցին դավաճանության մեջ։ Մարտի 29-ին պարսավագիրը հորինողները՝ Լիլբեռնը, Ուոլվինը և էլի երեք հոգի կանգնեցին Պետական խորհրդի առջև։

Լիլբեռնին հարցրին, թե մասնակցե՞լ է խայտառակ պարսավագրի հրատարակմանը։ Պատասխանել այդ հարցին՝ կնշանակեր նահանջել խոսքի ազատության սկզբունքից։ Պատասխանի փոխարեն նա նորից սկսեց մեղադրել գրանդներին։ Նայելով ուղիղ Կրոմվելի աչքերին, թեպետև հարցերը տալիս էր նախագահ Բրեդշոուն, Լիլբեռնը հայտարարեց, որ խորհրդի իշխանությունը համարում է անօրինական և անիրավազոր։ Որ նրանք իրենք են իրենց դարձրել Անգլիայի կառավարողներ՝ անկախ ժողովրդի կամքից, փակ դռների ետևում։ Որ Պետական խորհուրդը, որի մեջ նա տեսնում է այդքան շատ պառլամենտի անդամներ, չի կարող օժտված լինել դատական իշխանությամբ, օրենսդիրները չպետք է լինեն դատավորներ, այլապես ո՞ւմ մոտ պաշտպանություն փնտրել անարդարացի դատավորներից։

Նա դեռ երկար խոսեց, շտապով, բառերը շփոթելով, վախով, որ ահա ուր որ է կընդհատեն իրեն։ Եվ ընդհատեցին էլ։ Բրեդշոուն հրամայեց նրան տանել հարեան սենյակը և կանչել Ուոլվինին։ Այնուհետև մնացածներին։ Հետո ձերբակալվածները երկար նստեցին՝ միասին ունկնդրելով այն բառերը, որոնք գալիս էին լավ չփակված դռան արանքից։ Բառերը տեղ էին հասնում մերթ պարզայուր, մերթ աղմուկի հետ, ժամանակ առ ժամանակ լսվում էին առանձին բացականչություններ։ Պետական խորհրդի անդամները ինչ-որ բան էին հարցնում, կոքերը բորբոքվում էին, աղմուկն ուժեղանում էր։ Հանկարծ հզոր բռունցքի մի հարված իջավ սեղանին և ամեն ինչ կորավ Կրոմվելի որոտալի ձայնի մեջ.

— Ես ձեզ ասո՛ւմ եմ, սը՛ր, դուք այլ միջոց չունեք այդ մարդկանցից ազատվելու, քան նրանց ջախջախելը։ Այլապես նրանք կջախջախեն ձեզ... Ամբողջ պատասխանատվությունը թափված արյան համար կընկնի ձեր խղճի վրա։

Ձերբակալվածները ձգվեցին, լարվեցին։ Հենց նրանց կողքին, պատի ետևում մոլեգնում, հուր ու կայծակ էր թափում այդ հզոր մարդը, որին նրանք մի ժամանակ իրենց ընկերն էին համարում, իսկ այժմ «դավաճան» պիտակն էին փակցրել և որին ատում էին իրենց գործից հեռանալու համար։ Նա էլ իրենց էր ատում։ Բռունցքն էլի մի քանի անգամ իջավ սեղանին։

www.a-pdf.com

— Կրկնո՛ւմ եմ, սը՛ր, դուք պետք է ջախջախեք նրանց։

Եվ ամեն ինչ լուեց։ Լևելերները հասկացան, որ այդ երեկոյթենք տուն չեն վերադառնա։ Եվ իսկապես գիշերը նրանց բոլորին տեղափոխեցին Թաուեր։

Մի քանի օր անց Կրոմվելը համաձայնեց ընդունել իռլանդական բանակի հրամանատարությունը, և մարտի 30-ին նրա նշանակումը հաստատվեց համայնքների պալատում։

Բայց նրա ոգին խռովահույզ էր։ Նա փնտրում էր իր վարմունքների ներքին արդարացումը։ Ապրիլի 1-ին նա որոշեց հրապարակային քարոզով հանդես գալ Ուայթհոլում։ Դրանից մեկ ժամ առաջ նա անցկացրեց մենության մեջ աղոթելով, այնուհետև հաստատուն քայլերով ամբիոն բարձրացավ։ Նրա աչքերը հառված էին երկինք, ձեռքերը խաչված էին կրծքին, դլուխը թեքված էր ուսին։ «Աստված,— ասաց նա,— վերցրու ինձնից իշխանությունը, որ ունեմ այս հզոր ժողովրդի վրա, Անգլիայի ժողովրդի, քանզի շատ է ծանր այդ բեռը, որպեսզի ուժերը իմ կարողանան կրել այն...»։

Լիլբեռնի և նրա ընկերակից լևելերների ձերբակալությունը առաջ բերեց նոր հուզումներ։ Հանրագիր հանձնողների բազմությունները աղմկում էին Վեսթմինսթերի շենքի առջև։ Մարտի 30-ին պառլամենտին հանձնված հանրագրի տակ դրված էր 30 հազար ստորագրություն։ Ապրիլին տեղի ունեցավ նաև միանգամայն արտասովոր մի ցույց. խռովություն էին բարձրացրել լոնդոնցի կանայք։ Առաքինի տնտեսուհիները, կանայք և մայրերը պատրաստ էին դուրս եկել պահանջելու ժողովրդական իրավունքների դյուրաշխավորում և բանտարկյալների՝ Լիլբեռնի, Ուոլվինի, Փրինի, Օվերթոնի ազատում։ Հավաքվել էին մի քանի հազար կանայք։ Դրագունները, որ պահպանում էին պառլամենտի դռները, զանց կատաղությունից բարեսրտորեն պաշտպանվում էին խզակոթերով։

Վերջապես քսան կին ներկայացուցիչների թույլատրվեց ներս գալ։ Նրանց ընդառաջ եկավ դեպուտատներից մեկը։ Տղամարդու դերազանցությունը ընդգծելով, նա ասաց։

— Կանանց գործ չէ հանրագիր հանձնելը։ Ավելի լավ է դուք տուն և ձեր կաթսաները լվացեք։

Կանանցից մեկը առաջ եկավ.

— Եթե որևէ մեկի մոտ կաթսա դեռևս մնացել է,— ասաց նա,— ապա ոչինչ չի մնացել մեջը լցնելու։

Մոտեցավ մի ուրիշ դեպուտատ։

— Զլսված բան է, որ կանայք հանրագիր ներկայացնեն պառլամենտ։

— Զլսվա՞ծ բան է, ասում եք,— վրա բերեց մի այլ կին, մեկի ճարտար մեկը, ձեռքը թափահարելով նրա հենց քթի տակ — Սը՛ր, այն, ինչ անսովոր է, դեռևս չի նշանակում, որ ան-

www.a-pdf.com

օրինական է։ Դուք հո գլխատեցիք թագավորին՝ դա էլ չլսված բան էր։ Այնուհանդերձ դուք հո արդարացնո՞ւմ եք դա։

Կրոմվելը դուրս եկավ շեմքը։ Աղմուկը, բղավոցը, հայհոյանքը ուժեղանում էին։ Իրեն միանգամայն մոտիկ նա տեսավ կատաղած դեմքեր, ղզզված մազեր, թեքված լաչակների տակից ատելությամբ վառվող աչքեր։

— Ինչո՞ւ չեք ուզում մեզանից հանրագրեր ընդունել։ Երբ ձեզ պետք էին մեր փողերն ու մեր արյունը, դուք մեզ լսում էիք։ Կարծում եք, թե մենք այլևս ոչինչ չունե՞նք։ Բայց ինչ-որ բան մնացել է, այն էլ ձեզ համար չի։

Կրոմվելն անհարմար դրության մեջ էր։ Սուր հանելու տեղ չի, ոչ էլ ամբոխի հետ բռնցքամարտի մեջ մտնելու։ Մարտնչի կանանց դե՞մ, նա՞, ռազմի՞կը։ Նա հարցրեց։

— Ի՞նչ եք ուզում։

Ինչ-որ կնոջ կառչուն ձեռքեր բռնեցին նրա թիկնոցից։

— Ինչ ենք ուզո՞ւմ։ Մենք ուզում ենք ազգին տաք այն իրավունքներն ու ազատությունները, որոնք դուք խոստացել եք մեզ։ Դուք պատասխան պիտի տաք։ Մենք ձեր հախից կգանք, եթե դուք թեկուզ մատով դիպչեք ձերբակալվածներին։ Դուք պարտավոր եք ազատել նրանց։

Զուր էր նա խոսում, որ նրանք ձերբակալված են օրենքով, որ դրա համար պառլամենտի հատուկ հրահանգ կա, որ նրանց դատելու են բաց և ըստ իրավունքի։ Նրանք չէին լսում։

— Սըր, մենք չենք հանդարտվի, մինչև չզրկենք կյանքից նրանց, ովքեր արել են դա։ Սըր, մենք կզրկենք կյանքից ձեզ էլ, եթե դուք սպանեք նրանց։

Այլընտրանք Կրոմվելի համար, ամբողջ հանրապետության կառավարության համար չէր մնացել. այդ մարդկանց իսկապես որ հարկավոր էր ջախջախել ինչ էլ որ լիներ։ Այլապես նրանց անվեհերությունը և նրանց նկատմամբ ցուցաբերվող համաժողովրդական աջակցությունը կսրբեն, կտանեն նոր կարգը, իշխանությունն ու պետությունը։ Նրանց դեմ պետք է գործել իրենց իսկ զենքով. հրատարակել պարսավագրեր, մերկացնել, մեղադրել։ Եվ պարսավագրերը ի հայտ եկան։ Դրանցում ասված էր, որ լևելերները անաստվածներ են, որ նրանք չեն հավատում հոգու անմահությանը, իսկ սուրբ գիրքը համարում են հորինաբանություն։ «Նրանք ուզում են, որ ոչ ոք ոչ մի իր չհամարի իրենը։ Նրանց խոսքերով, մարդու որևէ իշխանություն աշխարհիս երեսին բռնակալություն է, նրանց կարծիքով, մասնավոր սեփականությունը սատանայի ձեռքի գործն է։ Նրանք աշխատողին հանում են գործատիրոջ դեմ, վարձակալին՝ հողատիրոջ դեմ, գնորդին՝ վաճառողի, պարտապանին՝ պարտատիրոջ, աղքատին հարուստի դեմ...»։

Լևելերները նույնպես պարտքի տակ չէին մնում։ Բանտից

www.a-pdf.com

Դրանք այդ մեղադրանքներին պատասխանեցին մանիֆեստով։ Ահա մասին տարածում են ամենաանհավատալի լուրեր,— գրում էին նրանք։— Իբրև թե մենք ցանկանում ենք հավասարություն մարդկանց ունեցվածքը, իբրև թե մենք չենք ուզում, որ ոչ մի շերտավորում և կոչում լինի մարդկանց միջև, իբրև թե մենք չենք ընդունում ոչ մի ղեկավարություն, այլ ձգտում ենք տիրան համատարած անիշխանության...»։ Որպեսզի վերջ տալն այդ ամբողջ զրպարտանքին, լևելերները հայտարարում էին. «Ահա մտքով երբեք չի անցել հավասարեցնել մարդկանց ունեցվածքը, և մեր մեծագույն ձգտումն է եղել հանրապետության ինչպիսի դրվածք, երբ յուրաքանչյուրը առավելագույն ապահովությամբ օգտվի՝ իր սեփականությունից... Մեր նպատակն է՝ կատարելագործել կառավարությունը, ոչ թե կործանել այն, և մենք բռնապետությունը բացառապես վատ է, սակայն երկու ծայրահեղություններից անիշխանությունը վատթարագույնն է...»։

Մայիսի 1-ին Թաուերից բաց է թողնվում «ժողովրդական ատաձայնագրի» մի նոր տարբերակ՝ լևելերները շարունակում են պայքարը։ Գնդերում ուժեղանում է ադիտացիան, նրանք բողոքում են Իռլանդիա ուղարկելու դեմ, հրաժարվում են թողնել Լոնդոնը, մինչև իրենց պահանջները չբավարարվեն։ Ապրիլի վերջին ապստամբություն է բռնկվում Ուոլիի դրագունյան գնդում։

Բիշոփգեյթ-սթրիթի զորանոցներում սղմուկ էր։ Ապրիլի 23-ին գեներալ Ֆերֆաքսի կողմից հրաման էր եկել գունդը Լոնդոնից դուրս բերելու մասին, բայց մինչև այժմ սպաներին չէր հաջողվում այն ի կատար ածել։ Զինվորները բացեիբաց հրաժարվում էին հնազանդվել, իրենց հանդուգն էին պահում։ Ֆերֆաքսին իմաց տվին։ Ապրիլի 24-ին հետևեց երկրորդ հրամանը, բայց դարձյալ ապարդյուն։ Երեսուն զինված զինվորներ դուրս եկան զորանոցներից, խուժեցին «Բուլ» հյուրանոցը՝ նույն փողոցի վրա, և գենքի սպառնալիքով ղավթեցին իրենց էսկադրոնային բոլոր դրոշները։ Հաջորդ օրը խռովությունը շարունակվում էր։ Զինվորները մնում էին զորանոցներում՝ հրաժարվելով ենթարկվել սպաների հրամաններին, կարգապահությունն ընկել էր։ Նրանք իրենց կացարաններում նստած ինչ-որ բանի մասին էին խորհրդակցում և ժամանակ առ ժամանակ դուրս էին գալիս փողոց, որտեղ արդեն բավականին մեծ բազմություն էր հավաքվել։ Նրանց և ամբոխի միջև ծայր էին առել ինչ-որ հարաբերություններ, և արդեն զինվորներից ոմանք բազմությանը դիմում էին ճառերով։

Ապրիլի 25-ին լուր տարածվեց Կրոմվելի և Ֆերֆաքսի ժամանման մասին։ Ջերբակալություններ եղան։ Հետևյալ օրը Ուոլիի գնդից տասնհինգ զինվորներ կանգնեցին զինվորական դատարանի առաջ։ Նրանցից տասնմեկը մեղավոր ճանաչվեցին։ Վեց հոգի դատապարտվեցին մահապատժի։

Դարձյալ մահապատիժներ, գնդակահարություններ։ Արդյոք չափազանց մոայլ սկիզբ չէ՞ հանրապետության համար։ Մի ար-

www.a-pdf.com

յունահեղություն իր ետևից բերում է մյուսը։ «Հողը այլ կերպ չի մաքրվում իր վրա թափված արյունից, քան իր վրա թափված արյամբ...»։ Կրոմվելը պնդեց, որ դատապարտվածներից հինգին ներում շնորհվի։

Մահապատիժը բաժին ընկավ միայն Ռոբերտ Լոքիերին։ Նա քսաներեք տարեկան էր, իսկ կռվել սկսել էր տասնվեց տարեկանից։ Խիզախ, սրտաբաց մի պատանի, լավ ընկեր, բոլորի սիրելին։ Հենց որ լեգեոները բանակում բարձրացրին իրենց դրոշը, սա առանց երկմտելու միացավ նրանց, իր հոգու ողջ ուժով ու կորովով պաշտպան կանգնեց «ժողովրդական համաձայնագրին», տաք-տաք վեճի բռնվելով Պեթնիի գրանդների հետ։ Ուիբրում նա նրանց հետ էր, ովքեր սահմանադրությունից քաղված թերթիկ էին ամրացրել իրենց գլխարկներին։ Այժմ նա պետք է մեռներ, որպես խռովության գլխավոր մեղսակից։

Թաուերի կալանավորները նամակ ուղարկեցին Ֆերֆաքսին։ Ռազմական դատարանը և մահապատիժը խաղաղ ժամանակ անօրինական են, գրում էին նրանք։ Դա ոչ այլ ինչ է, քան պարզապես մարդասպանություն։ Այդպիսի բաներ էր անում Ստրաֆորդը Իռլանդիայում, իսկ ո՞վ չի հիշում, թե ինչ տեղի ունեցավ նրա հետ։ Զինվորական դատարանի և մահապատժի կիրառումը խաղաղ ժամանակներում նրա մեղադրանքի գլխավոր կետերից մեկն էր։ Հենց այդ պատճառով էլ նրանք զրկվեցին իրենց գլուխներից, թող հիշեն այդ Անգլիայի ներկայիս կառավարողները։ Չլինի թե նրանց էլ վիճակվի նույնը։

Բայց այդ նամակը չփրկեց Լոքիերին։ Ապրիլի 27-ին Լյուդհեյթ-հիլի վրա, Լոնդոնում, սուրբ Պողոս եկեղեցու գավթում տեղի ունեցավ հրապարակային մահապատիժը։ Գունդը շարված էր մարտական կարգով, հրացանների փողերը ուղղված են առաջ։ Երբ թմբուկների զարկերը խլացան, դատապարտյալին թույլատրեցին ասել իր վերջին խոսքը։ Նա բարձրացրեց գլուխը.

— Բարեկամնե՛ր, ի՞մ զինվոր բարեկամներ։ Ինձ հետ հաշվեհարդար են տեսնում, որովհետև ես հանդես եմ եկել հանուն Անգլիայի ժողովրդի և հանուն ձեր արտոնությունների ու ազատության, և եթե խորհելու լինենք, դուք պետք է որ միավորվեիք նրանց հետ, ովքեր դրանց համար պայքարում են։ Ես հասկանում եմ, որ սպաներն են հրամայում ձեզ կրակել ինձ վրա... Դուք հո չե՞ք կարող չափսոսալ այն մարդու մահը, որը ձեզ միայն բարիք էր ցանկանում։

Շարքերը հաղիվ նկատելի դողացին, ինչ-որ շարժում անցավ նրանց միջով։ Խոսողը նկատեց այդ.

— Օ՜, ոչ, թող իմ մահը չվախեցնի ձեզ,— ասաց նա,— թող այն, ընդհակառակը, քաջալերի ձեզ, քանի որ դեռևս երբեք ոչ մի մարդ չի մեռել այնքան հանգիստ, որքան ես։

Հնչեցին թմբուկների զարկերը, այնուհետև համազարկի հրամանը՝ և ամեն ինչ վերջացած էր։

www.a-pdf.com

Ապրիլի 29-ին սգո թափորը շարժվում էր Լոնդոնի փողոցներով։ Անմիջապես կարելի էր նկատել, որ թաղումը սովորական չէր. հազարավոր մարդիկ էին գնում դագաղի ետևից, իսկ տներից, կողքի փողոցներից նորանոր բազմություններ էին դուրս գալիս ու միանում թափորին։ Նրանք քայլում էին հինգ-վեց ոգիանոց շարքերով։ Վեց փողհարներ անընդհատ նվագում էին թաղման զինվորական քայլերգը։ Դագաղը ծածկված էր հազարավարդերով, ալ ծաղկաթերթերը կաթիլ-կաթիլ թափվում էին սարկված ճանապարհի վրա, ուղղակի ննջեցյալի ձիու ոտքերի տակ, որին, ինչպես լինում էր մեծատոհմիկ ազնվականների թաղման ժամանակ, տանում էին դագաղի ետևից՝ ամբողջովին սև սթարով։ Ամբոխի մեջ շատերի ղլխարկների վրա սև ժապավենի կողքին ամրացված էին կապտականաչավունները՝ ծովային ալիքը, լևելերների գույնը։

Երկար թափորը, որ ձգվում էր շատ թաղամասերով, շարժվում էր դեպի Վեսթմինսթերյան նոր գերեզմանատուն։ Լուռ էին։ Շեփորների աղեկտուր ձայներից բացի, չէր լսվում ո՛չ խոսակցություն, ո՛չ հառաչանք, ո՛չ էլ անգամ լացի ձայն։ Ասես փոխառնելով տղամարդկանց արիությունն ու դաժանությունը, քարացություն էին պահպանում մի քանի հարյուր կանայք, որոնք ուղեկցում էին թափորը։

Գերեզմանատան մոտ սպասում էին էլի մի քանի հազար մարդ, և էլի բազում հազարավորներ պատրաստ էին միանալ դրանց։ Լոքիերի զնդակահարությունը չվախեցրեց, չցրեց դրժոհների շարքերը, այլ, ընդհակառակը, համախմբեց նրանց, դրանց սրտերը լցրեց ատելությամբ ու պայքարը շարունակելու վճռականությամբ։ Կրոմվելը սխալ թույլ տվեց՝ մտածելով, թե միայն մահապատժով կարելի է ընկճել շարժումը։ «Շատերն այդ թաղումը դիտում էին որպես ապստամբ պառլամենտին և բանակին»,— գրանցել է իր օրագրում Ուայթլոքը։ Շարժումը գնալով գնում թափ էր առնում։

Լևելերները Կրոմվելի գլխավոր հոգսն էին այդ ժամանակ։ Այդ նրանք՝ հավասարարականները, պսակազերծողները, խոսարարներն էին ամենից ավելի սպառնում հանրապետությանը ներսից, նրա գոյության առաջին ամիսներին։ Նրանց թիկունքում կանգնած էր բանակը. ահա թե ինչն էր ամենից վտանգավորը։ Եվ դրա համար էլ նրանց հախից գալը անհրաժեշտ էր։ Բացի այդ օրերին հայտնվել էին ուրիշ, էլ ավելի տագնապող շարժումներ։ Դրանք էլ էին հանրապետությանը ձախից սպառնում, ճիշտ է, առաջին հայացքից ոչ այնքան ուժգին։ Փետրվարին Նորիչից հանրագիր տրվեց այն մարդկանց կողմից, ովքեր իրենց անվանում են «Հինգերորդ միապետության մարդիկ»։ Նրանք հավատում էին, որ երկրային չորս մեծ արքայություններից՝ Ասորա-Բաբելականից, Պարսկականից, Հունականից և Հռոմեականից

www.a-pdf.com

հետո, որը շարունակվում է մինչև այսօր, գալու է Հինգերորդ արքայությունը՝ Հիսուս Քրիստոսի կայսրությունը, որը հազար տարի երկրի վրա կհիմնի բարություն, արդարություն, երջանկություն։ Թագավորի մահը ուժեղացրեց նրանց հույսերը։ «Տեր Հիսուս Քրիստոսը գալու է,— գրում էին նրանք։— Պատրաստվե՛ք նրա գալուն։ Հանե՛ք պիղծ քահանաներին, վերացրե՛ք եկեղեցական տասանորդը»։

Իսկ ապրիլին Պետական խորհրդին տեղեկություն տրվեց, որ մարդկանց ինչ-որ խումբ՝ երեսուն-քառասուն հոգի, որոնք իրենց «իսկական լևելերներ» են կոչում, Վինձորից ոչ հեռու, սուրբ Գեվորգի բլրի Քոբհեմ համայնքում սկսել է փորփրել ոչ ոքի չպատկանող հողերը՝ հասարակական պարապուտները, և ցանել շաղգամ, լոբի և գազար։ Բոլոր ցանկացողներին նրանք առաջարկել են միանալ իրենց և խոստացել են տալ անվճար սնունդ, խմիչք ու հագուստեղեն։ Նրանք գուցե մտադիր են եղել ոչնչացնել ցանկապարիսպները և շարունակել են վարելը, ներխուժելով ուրիշի ցանքատարածություններ։ «Երկյուղ կա,— ասված էր զեկույցում,— որ նրանք ինչ-որ մտադրություն ունեն»։

Տեղի բնակիչները գալիս էին նրանց մոտ, նայում։ Փորողների մտադրությունը թվում էր ընդհանուր առմամբ խաղաղասիրական, թեպետև նրանց խոսակցությունները զգաստացնող էին։ Հետաքրքրասերների հարցերին նրանց տված պատասխաններից ստացվում էր այնպես, որ իբր թե շուտով մարդիկ ընդհանրապես պիտի ընկնեն սար ու քար, պիտի հերկեն հողը և այդ կերպ հոգան իրենց սնունդը։ Որպես թե երկրիս երեսին ցուտով չի լինելու ո՛չ հարուստ, ո՛չ աղքատ, ո՛չ աշխատողներ և ո՛չ տերեր, որ բոլորը աշխատելու են, ոչ ոք տեր չի լինելու սեփականության. ամեն ինչ դառնալու է ընդհանուր։

Հայտնի դարձավ, որ այդ հերկողները՝. դիգերները, արդեն հրապարակել էին մի քանի պարսավագրեր։ Դրանց մեջ ամենից աչքի ընկնող հորինաբանողը ոմն Ջերարդ Ուինսթենլին էր՝ լանկաշիրցի առևտրականի որդի, գրագետ, բայց սնանկացած մի մարդ։ Մի անգամ նա առեղծվածային տեսիլք է տեսնում. նա լսում է ի վերուստ ասվող խոսքեր. «Աշխատեք միասին և միասին կերեք ձեր հացը, հայտարարեք այդ համայն աշխարհին»։ Դրանից հետո նա ամենուրեք կոչ է անում, որ մարդիկ ապրեն միասնաբար, չբաժանեն հողը «իմի» և «քոնի», չգնեն և չվաճառեն, այլ միասին աշխատեն և միասին էլ օգտագործեն իրենց ձեռքի արդյունքը։ «Ես հաստատում եմ,— գրում էր նա,— որ երկիրը ստեղծված է, որպեսզի լինի նրա վրա ապրողների համընդհանուր սեփականությունը, իսկ եթե դա այդպես է, ապա ոչ ոք չպետք է տեր լինի մյուսներին, երկիրը ստեղծված է նրա համար, որ մարդկային ցեղի բոլոր որդիներն ու դուստրերը ազատորեն ապրեն այնտեղ»։

Մյուս պարսավագրերն էլ խոսում էին նույնի մասին։ Դրան-

www.a-pdf.com

դիր մեկը վերնագրված էր. «Լույս, որ ճառագայթում է Բեքինհեշիրում, կամ Համայն աշխարհում ամեն մի ստրկության գլխավոր հիմքի և սկզբնական պատճառի բացահայտումը»։ Ամենայն չարիքի գլխավոր աղբյուրն աշխարհում, պնդում էին նրանք, մասնավոր սեփականությունն է։ Բոլոր մարդիկ ծնվել են հավասար ու ազատ և միասնաբար են օգտվել բնության բոլոր բարիքներից։ Բայց ագահությունն ու իշխելու տենչը հասցրին հողի դավթման, դրա հետևանքով էլ և՛ հողը, և՛ ծառերը, և՛ գազանները, և՛ թռչուններն ընկան սակավաթիվ մարդկանց շահագրական ձեռքը, իսկ մնացած բոլորը մնացին ընչազուրկ և պարձան նրանց ստրուկները։

«Անգլիայի խեղճ, ճնշված ժողովրդի դեկլարացիա»-ում, որը մյուսների հետ ստորագրել էր նաև Ուինսթենլին, դիգերները գրում էին. «Մենք հայտարարում ենք ձեզ, որ ձեզ կոչում եք երկրի լորդեր ու տերեր, որ արդարության արքան մեր սրտերն այնչափ լուսավորել է, որ հասկանայինք, թե երկիրը չի ստեղծվել հատկապես ձեզ համար, որպեսզի դուք լինեիք նրա տերերը, իսկ մենք՝ ձեր ստրուկները, ծառաներն ու աղքատները, այլ, որ երկիրն ստեղծվել է նրա համար, որպեսզի լինի ընդհանուրի կենսական սեփականությունը... Մեր սրտերը սկսում են ազատագրվել ձեզ նման մարդկանց նկատմամբ ստրկական վախից... Մենք վճռականություն ենք ձեռք բերել, որ վարենք ու մշակենք համայնքային հողերը և պարապուտները համայն Անգլիայում...»։

Բայց կսխալվի նա, ով կմտածի, թե դիգերները պատրաստվում են ուժով պատասխանել ուժին։ Ո՛չ, այդ ուղին, ինչպես գույց է տալիս պատմությունը, դեպի բարին չի տանում։ Քանի՞ դար է արդեն մարդիկ իբրև թե քրիստոնեական գաղափարախոսություն են դավանում, իսկ մինչև այժմ էլ դեռ չգիտեն, չեն ուզում վարվել ավետարանի ոգու համաձայն։ Մենք ուժով չենք խլելու ձեր տիրույթները, հավաստիացնում էին լորդերին դիգերները։ Մենք մշակելու ենք միայն համայնքային, ոչ ոքի չպատկանող դաշտերը։ Եվ մեր օրինակը կոգևորի ու դարձի կբերի ձեզ, և դուք, լորդերդ, կգաք աշխատելու մեզ հետ միասին։

Ստանալով բոլոր այս տեղեկությունները, Պետական խորհուրդը անմիջապես հրամայում է Քոբհեմ ուղարկել հեծյալների մի ջոկատ և ցրել խռովարարներին։ Գրանդները իրենց ողջ միս ու մաշկով զգում էին, որ խռովարար մարդկանց այդ ապօրինի խառնաժողովը կարող է շատ հեռուն գնացող վտանգավոր հետևանքներ ունենալ։ Նրանք կխախտեն հանրապետության հանգիստն ու անդորրը այն աստիճան, որպիսին մինչ այդ ոչ ոք չի արել։ «Միջոցներ ձեռնարկեք այն ուղղությամբ,— ասված էր հրամանում,— որպեսզի Քոբհեմ ուղարկվի մի քանի հեծյալ ջոկատ, որոնք կցրեին այդպիսի խառնաժողովներ սարքող մարդկանց և կխոչընդոտեին նման գործողությունների դրսևորմանն ապագայում, որպեսզի դժգոհ որևէ կուսակցություն չկարողանա

www.a-pdf.com

խմբվել նման մարդկանց քողի տակ, խմբվել նշանակված տեղում և ավելի խոշոր վնաս պատճառել պետությանը»։

Ապրիլի 19-ին դեպի սուրբ Գեորգ բլուրը սուրաց երկու հեծելավաշտ։ Տաք գարնանային օդում լսվում էին բրիչների միապաղաղ թակոցը։ Երեսուն կամ քառասուն մարդ լայնարձակ դաշտում փորում էին հողը արտույտների համերգի տակ։ Խոովարարական, վտանգավոր ոչ մի բան չէր երևում աշխարհի պես հին այդ ոգեպարար տեսարանի մեջ։ Հեծելավաշտի հրամանատարը ուսերը վեր քաշեց. և ինչո՞ւ են պատվիրել իրենց ցրել այս երիցս խեղճ փորողներին, որոնք ոչ ոքի վնաս չեն տալիս։

Նա խոսքի բռնվեց դրանցից երկուսի հետ, որոնք իրենց գլխավոր էին համարում (նրանց անուններն էին Ուինսթենլի և Էվերարդ, նախկին զինվորներ), և այդ խոսակցությունը միայն ամրապնդեց նրա համոզումը, որ փորողների մտադրությունները ավելի քան խաղաղ են։ Նրանք հայտարարեցին, որ չեն պաշտպանվելու զենքի օգնությամբ։ Հրամայելով փորողներին ցրվել, նա Ուինսթենլիին և Էվերարդին պատվիրեց ներկայանալ Լոնդոն՝ գեներալ Ֆերֆաքսին, և բացատրել իրենց արարքը։ Սրանք համաձայնեցին և մեկնեցին անհապաղ։

Բայց այստեղ սկսվեցին անախորժություններ։ Երբ բանակի գերագույն գլխավոր հրամանատար Ֆերֆաքսը ապրիլի 20-ին գուրս եկավ այդ մարդկանց ընդառաջ, նրանք չբարեհաճեցին նրա առաջ հանել իրենց գլխարկները։ Գեներալը տարակուսանքով նայեց շրջապատողներին.

— Դուք ինչո՞ւ գլխարկ չեք հանում նորին գերազանցության առաջ,— խստորեն հարցրեց համհարզը քրչոտներին։

— Որովհետև նա նույնպիսի աստծո արարած է, ինչպես և մենք,— եղավ պատասխանը։

Այն հարցին, թե նրանք ինչ են ուզում, ինչո՞ւ են փորում հողը, դիգերները պատասխանեցին, թե իրենք, ինչպես և Անգլիայի բոլոր աղքատ մարդիկ, իրավունք ունեն աշխատելու ոչ ոքի չպատկանող հողերի վրա, խաղաղ մշակել այն և օգտվել իրենց աշխատանքի պտուղներից։

Նրանց թույլատրվեց վերադառնալ տուն։ Եվ նրանք կրկին ձեռնամուխ եղան իրենց գործին։ Իշխանությունները կարծես ժամանակավորապես հանգիստ թողեցին նրանց, և սուրբ Գեորգի բլրի ու հին, բարի Անգլիայի ուրիշ բլուրների վրա վխտալ սկսեցին նոր երազողների և իդեալիստների կռացած կերպարանքները։

Ապրիլի 26-ին հրատարակվեց Ուինսթենլիի պարսավագիրը, որը վերնագրված էր. «Իսկական լևելերների դրոշը բարձրացված է, կամ Ընդհանրության կարգ, որ բացվել և հրամցվում է մարդկային որդիներին»։ «Ո՜վ դու, Անգլիայի իշխանություն,— գրում էր Ուինսթենլին,— թեպետև դու խոստացել էիր նրա ժողովրդին դարձնել ազատ ժողովուրդ, բայց դու քո եսասիրական

www.a-pdf.com

...ության համաձայն այդ հարցն այնպես դրեցիր, որ մեզ գցեցիր ...ավելի մեծ ստրկության մեջ... Նույն այն ժողովուրդը, որին ... խոստացար ազատություն տալ, ճնշված է դատարաններից, ...տարար դատավորներից և կոմիտեներից, նրան բանտ են ...ուղարկում.. Լենդլորդերը հասնում են դատավորների, կառավարողների և պետական չինովնիկների պաշտոնների... Մարդիկ, որոնք հավակնում են սրի ուժով պահպանել ժողովրդական ...վստահությունը, բարձր ոռճիկներից, բազմաթիվ ռազմական ...հանձնարարություններից և այլ տեսակի եկամուտներից շատ փող են կուտակում, դրանով հող են գնում և դառնում են լենդլորդեր»։ ...Ուրբաթավագրում խոսվում էր ցանկապատումների անհիծյալ ...գրկության մասին, հարկերի ծանրության, հարկահավաքների, ...գանձապետերի, մեծամեծների, իրավաբանների կողմից ժողովրդի կեղեքման մասին... Ուինսթենլին կանխատեսում էր, որ ...ստով «բոլոր համայնքապատկան հողերը և պարապուտները Անգլիայում և ողջ աշխարհում պիտի արդարացիորեն վերցվեն ...ն մարդկանց կողմից, ովքեր ունեցուրկ են»։

Այո՛, իշխանությունները միաժամանակ դիգերներին հանձնում թողեցին՝ հասունանում էին ուրիշ, ավելի ահեղ իրադարձություններ. պատերազմ Իռլանդիայում, խռովություններ ...տնակում... Բայց քնած չէին հարևանները՝ բարեկեցիկ, ճարտակալած ֆրիգոլդերներն ու յոմենները։ Այդ պինդ տնտեսատերերն ապրում և ուզում էին ապրել իրենց աշխարհիկ հեզբրքրություններով. նրանք կոպեկ առ կոպեկ հաշվում էին, փականություն էին դրստում և չէին ցանկանում որևէ մեկի հետ կիսել. ո՞ր օրենքով։ Նրանց համար քոբհեմցի երաշխները իսկական թշնամիներ էին. սրանք այնպիսին չէին, ինչպես բոլորը, սրանք չէին հասկանում, ավելին՝ մերժում ...այս աշխարհի շահերը։ Հետաքրքրասերների ամբոխն աճում ...հող փորողների շուրջը, նրանց տրամադրությունը քանի գնում ...արտական էր դառնում, նրանք փորձում էին վիճել, սպառնալ ...գափորներին։ Նրանք դնում էին բողոքելու բեյլիֆներին ու ...դերին, նրանք չէին կարողանում հանդուրժել այդ խաղաղ ...ռնակիչներին, որոնք ավելի բարձր ոգու տեր մարդիկ էին, ...և նրանք իրենք։ Այդ պատվավոր մարդկանցից ավելի փուչտաններն սկսեցին անցնել գործողությունների. դիգերների ...ռիթները ինչ-որ մարդիկ գիշերներն ավերում էին, նրանց ...տունը կոխկրճում էին, գույքը փչացնում։ Տեղական իշխանությունները, որ ծայրագավառներում միշտ ավելի սահմանափակ ...են լինում և դաժան, բռնում էին վարողներին, ծեծում էին ...նց, բանտ նետում, տուգանում։

Բայց նրանք դաշտ էին դուրս գալիս կրկին ու կրկին, և արդեն՝ ոչ միայն սուրբ Գևորգի բլրում, այլև Նորթհեմփթոնում, ...ենթում և այլ կոմսություններում։ Այդ խաղաղ, արտաքնապես այնքա՞ն խղճուկ, այնքա՞ն անվնաս շարժումը ինդեպենդենտա-

www.a-pdf.com

կան հանրապետության համար դառնում էր գրեթե ավելի վտանգավոր մի ուժ, քան բացեիբաց չհնազանդվող բանակը։

Երևում էր, որ նոր քաղաքացիական պատերազմը, արդեն թվով երրորդը, այնուամենայնիվ կբռնկվի։ Երկրում հանգստություն չկար, զենքը վայր չէր դրվում, չէին հանդարտվում կրքերը։ Միայն թե ատելությունն այժմ մոլեգնում էր ոչ թե ռոյալիստների ու պառլամենտի կողմնակիցների միջև, այլ հենց պառլամենտական ճամբարի ներսում, բանակի ներսում։

Խռովություն էին բարձրացնում բանակի ցածր խավերը։ Մերթ այստեղից, մերթ այնտեղից լսվում էին բացահայտ անհնազանդության, խռովարարական ելույթների, բողոքների մասին։ Լոքիերի գնդակահարությունը ոչ ոքի չհանդարտեցրեց, ընդհակառակը՝ միայն ուժեղացրեց պայքարը։ Եվ իհարկե, այդ դժգոհությունները գլխավորում էին լևելերները։ Մայիսի 1-ին Թաուերի կալանավորները՝ Լիլբեռնը, Օվերթոնը, Ուոլվինը, Փրինսը հրապարակեցին «Ժողովրդական համաձայնագրի» ևս մի խմբագրված տարբերակ, որտեղ պահանջում էին նոր պառլամենտի անհապաղ գումարում՝ համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա։

Մայիսի 6-ին ապստամբեցին Սոլսբերիի զինվորական ստորաբաժանումները՝ սպաները հեռացվել էին, Իռլանդիա ուղարկվելու մասին հրամանը որոշել էին չկատարել։ «Մենք դիմում ենք բոլոր խելամիտ մարդկանց,— հայտարարում էին նրանք,— և հարցնում. մի՞թե արդարացի է և օինաչափ մեզ ուղարկել մի այլ երկիր՝ մեր տան համար դեռ մի լավ բան չարած»։

Նրանց միացան Այրթոնի դինվորները. ապստամբները միասնական միտինգի միացան Սոլսբերիի մոտերքում և այստեղ էլ մայիսի 11-ին դեկլարացիա կազմեցին. «Մենք որոշել ենք մեր բոլոր ջանքերն ի սպաս դնել,— գրում էին նրանք,— որպեսզի աստծո օգնությամբ հասնենք այս դժբախտ ազգի կազմակերպվածությանը, վերականգնենք խախտված խաղաղությունը և երկիրն ազատագրենք բռնակալության իշխանությունից... Թող ողջ աշխարհն իմանա, որ մենք մտադիր ենք իրականացնել այս հուսահատված ազգի վերջնական կազմավորումը, ըստ «Ժողովրդական համաձայնագրի» ձևերի ու միջոցների, որը որպես խաղաղության հաստատման միջոց է առաջարկված փոխգնդապետ Ջոն Լիլբեռնի, ինչպես և Ուիլյամ Ուոլվինի, Թոմաս Փրինսի և Ռիչարդ Օվերթոնի կողմից 1649 թվականի մայիսի 1-ին... Թող հայտնի լինի Անգլիայի ողջ ազատասեր ժողովրդին և համայն աշխարհին, որ մենք, նախընտրելով ավելի շուտ մեռնել՝ ազատության համար, քան ապրել որպես ստրուկներ, համախմբվել ու միավորվել ենք իրար հետ, որպես անգլիացիներ, որպեսզի սուրը ձեռքներիս մեզ և մեր հայրենիքն ազատագրենք ստրկությունից և կեղեքումից...»։

Ապստամբության երկրորդ օջախն առաջացավ Բենբերիում,

www.a-pdf.com

Օրսֆորդից ոչ հեռու։ Նրան գլխավորում էր Ուիլյամ Թոմփսոնը, մի եռանդուն, խելամիտ առաջնորդ։ Նա զինվորներին անմիջապես հայտարարեց, որ գործի հաջողության համար հարկավոր է միավորվել մյուս ապստամբների հետ և գործել միասին։

Ինչպե՞ս մարել, ինչպե՞ս վերջ տալ այդ հուզումներին, ինչպե՞ս գոհացնել զինվորներին, չսասանելով պետության հիմքերը։ Իշխանությունները միջոցներ ձեռք առան. զինվորական մի ջոկատ՝ բաղկացած չորս հարյուր մարդուց, մտավ Թաուեր, որպեսզի ուժեղացնի կալանավորների պահպանությունը և Լոնդոնում լեգեոնների խռովություն բարձրացնելու դեպքում երաշխավորի բերդի անվտանգությունը։ Արգելեցին Լիլբեռնին և նրա ընկերներին որևէ մեկի այցելությունը՝ ով էլ որ լինի, անգամ կանանց, երեխաների, ծառաների։ Գեներալ-մայոր Սքիփոնին հրաման տրվեց մայրաքաղաքի ուժերը բերել լիակատար մարտական պատրաստության։

Մայիսի 9-ին Կրոմվելը ստուգայցի ժամանակ ելույթ ունեցավ Հայդ-պարկում տեղավորված զինվորական ստորաբաժանումների առաջ։ Նա սկսեց մեղմորեն։ Նա ամեն ինչ հասկանում է. զինվորների կարիքները իսկապես մեծ են։ Նա գիտե, որ շարքային հետևակայինը 30 անգամ պակաս ռոճիկ է ստանում, քան գեներալը, մի քանի անգամ պակաս, քան սպան։ Եվ այդ աղքատիկ վճարն էլ հետևակայինը չի տեսնում. ռոճիկները չեն վճարվում ամիսներ շարունակ։ Եվ այժմ նրանց քշում են Իռլանդիա, չտալով ոչինչ, ինչ նրանք պահանջել էին տանը։ Այդպես ուրեմն, բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին թողնել բանակային ծառայությունը, կարող են դա ազատորեն անել, և նրանց կվճարվի ան բոլոր փողերը, ինչ նրանք պետք է ստանային։ Միայն այսօր, մայիսի 9-ին, պառլամենտը որոշում ընդունեց վճարել զինվորների պարտքերը՝ թագավորի և նրա ընտանիքի ունեցվածքի վաճառքի հաշվին։ Դրանից բացի, տասը հազար ֆունտ ստեռլինգ, որը նախատեսված էր նավատորմի համար, տրված է բանակի կարիքներին։

Բայց դրանով բանը չի սահմանափակվում։ Կրոմվելը գիտեր, թե ինչ են սպասում իրենից և խոսում էր հաշվենկատ, ծանրակշիռ։ Պառլամենտը մտադիր է արձանագրություն հրատարակել ինքնարձակման մասին և նոր ներկայացուցչական ժողովի համար ընտրություններ նշանակել որքան հնարավոր է արագ։ Հավատացեք ձեր փառապանծ գեներալներին։ Նրանք թույլ չեն տա ընդհանուր թշնամուն հաղթանակ տոնել։

Զինվորների տրամադրությունը մնում էր թշնամական։ Կրոմվելը տեսնում էր խոժոռված դեմքեր, չվստահող աչքեր, արհամարհական քմծիծաղ, ինչ-որ մեկը ետևի շարքերից փորձեց անգամ առարկել նրան, բայց սպաները արագորեն սսկեցրին։ Հայացքով խուզարկելով շարքերը, Կրոմվելը իրենից բոլորովին ոչ հեռու կանգնած զինվորների գլխարկներից մի քանիսի վրա

www.a-pdf.com

կապտականաչավուն ժապավեններ նկատեց։ Դարձյալ լևելերն՝ ե՛ր։ Ծանոթ կատաղությունը խփեց գլուխը, նա նորից, ինչպես Ուերում, խթանեց ձիուն, շարքերը սեղմելով, ձգվեց մինչև ատեի այդ լաթը և ձեռքի կտրուկ շարժումով պոկեց այն։

— Գնդին հրամայում եմ անհապա՛ղ ճանապարհ ընկնել,— գոչեց նա, այդ խոսքի մեջ ներդնելով չպարպած կատաղության ողջ մնացորդը։

Իսկ մի քանի օր անց նա և Ֆերֆաքսն արդեն վարվում էին դեպի հարավ-արևմուտք. ապստամբությունը Սոլսբերիի շրջակայքի զորամասերում ընդունել էր այնպիսի թափ, որ միայն կանոնավոր զորամասերը կարող էին ճնշել այն։ Կրոմվելի ետևից շարժվում էին «երկաթակողների» ընտիր ուժերը՝ չորս հազար հեծյալներ։ Նրանք այժմ գնում էին մարտնչելու իրենց արյունակից եղբայրների՝ իրենց սեփական բանակի զինվորների դեմ, լևելերների, հանրապետականների դեմ։

Ապստամբների մոտ բանակցությունների համար ուղարկված մայոր Ուայթի՝ նախկին լևելերի, միջոցով Կրոմվելն իմացավ, որ Թոմփսոնի հիմնական ուժերը, թողնելով պառլամենտական այլ ուժերին հետապնդելը, Բենբերիից շարժվում են դեպի Սոլսբերի տեղի ապստամբներին միանալու համար։ Որսորդի մոլեգնոտ ինքնամոռացությունը, զորավարի վարպետությունը, ճակատամարտի ու հաղթանակի այրող ծարավը, նորից այդ ամենն արթնացան Կրոմվելի մեջ։ Նա հրամայեց դնալ արագ քայլքով, շատ արագ, սրընթաց, գրեթե աներևակայելի։ Մայիսի 14-ին, շաբաթ օրը, նրանք կայծակնային ցատկ կատարեցին՝ քառասունհինգ մղոնը մի քանի ժամում ցոլաց ու անցավ սմբակների տակից և կնսգիշերին մոտ, լիակատար մթնում մոտեցան Բերֆորդին։

Խուվարարները, երկար ճանապարհից տանջահար, խաղաղ քուն էին մտել, տեղավորվելով քաղաքի տներում, ձեղնահարկերում, ձիանոցներում։ Լծից արձակված ձիերը նիրհում էին։

Դա հենց այն էր, ինչ հարկավոր էր։ Ամեհի, ամեն ինչ սրբող լավայի պես կրոմվելյան հեծելազորը վրա պրծավ քնած քաղաքին, ոտքի տակ տալով բանջարանոցները, ներխուժելով ձիանոցները, կրակելով պատուհաններից ներս։ Արթնացած ապրստամբները սկզբում ոչինչ չհասկանալով սկսեցին անկանոն կրակել։ Մարտը քանի գնում սաստկանում էր, հետզհետե ավելի հաճախակի էին դառնում հրաձգությունները՝ պատուհաններից, անկյուններից, ցախատներից։ Ուժերը չափազանց անհավասար էին։ Հարձակվողների առավելությունը չափից ավելի մեծ էր։

Առավոտյան դեմ մարտը դադարեց, և չորս հարյուր կիսահագնված գերիների փակեցին քաղաքային եկեղեցում։ Ավարը կազմում էր մոտ ինը հարյուր ձի և տասներկու դրոշ։ Սպանված էր բնդամենը մի քանի մարդ և շատերին, այդ թվում և կապիտան Թոմփսոնին, հաջողվել էր գիշերվա քողի տակ փախչել ու թաքնվել անտառում։

www.a-pdf.com

Օլիվեր Կրոմվել:

www.a-pdf.com

Ջորջ Մոնք:

Մեդալ ի պատիվ Դենբարի մոտ տարած հաղթանակի:



Վուսթերի մոտ ճակատամարտի սխեման:

www.a-pdf.com

Անգլիական հանրապետության Մեծ կնիքը:

Ջոն Միլտոն:

www.a-pdf.com

Հեղինակը «Գեղեցկուհու գլուխ»-ի դիմաց

Հեղինակը Վիկտորիայի գլուխ-դիմանկարի դիմաց

www.a-pdf.com

www.a-pdf.com

Զարլզ Ֆիրվոտ:

Հեների Կրոմվել:

www.a-pdf.com

Օլիվեր Կրոմվելը՝ պրոտեկտոր

Ջոն Թերլո:

www.a-pdf.com

Եղիսաբեթ Կրոմվել՝ պրոտեկտորի
կինը:



Ուայթհոլ՝ լորդ պրոտեկտորի ռեզիդենցիան:

www.a-pdf.com

«Ապոքեոզ Կրոմվելին» անվանումով թերթիկ:

www.a-pdf.com

Եղիսաբեթ Փլեյփել։

Ռիչարդ Կրոմվել։

www.a-pdf.com

Օլիվեր Կրոմվելը՝ լորդ-պրոտեկտոր:

www.a-pdf.com

Կրոմվելի նոմանու դիմակը:

Կրոմվելի ինքնագրերը 1651 և 1657 թվականներին:

www.a-pdf.com



Կրոմվելի անձնական զինանշանը:

Կրոմվելների տոհմական զինանշանը:



Կրոմվելը դագաղում:

www.a-pdf.com

Մեդալ դրոշմված Կրոմվելի մանվան տարում:

www.a-pdf.com



Կրոմվելի կիսանդրին, պատրաստված XVII դարի 50-ական թվականներին:

www.a-pdf.com

Հուշարձան Կրոմվելին Վեսթմինսթերում:

www.a-pdf.com

Առավոտյան նիստ արեց ռազմադաշտային դատարանը։ Չորս արդու՝ կոռնետ Թոմփսոնին, անհետացած կապիտանի եղբորը, սպրալներ Դաննին, Չերչին և Պերքինսին մահվան դատապարտեցին։ Դաննը հանդես եկավ զղջումով. սկսեց խոովության դեմ ուղղված պարսավագիր գրել, և վերջին պահին նրան ներում շնորհեցին։ Երեքին գնդակահարեցին Եկեղեցու բակում, և նրանք բժանապատվությամբ դիմավորեցին մահը։ Մյուսներին, եկեղեցում փակվածներին, մի քանի օր անց այցելեց Կրոմվելը։ Նա գտավ, որ նրանք, իհարկե, անպայման արժանի են մահապատժի, բայց ինքը նրանց ներում է։ Օրինակելի ծառայությամբ նրանք պիտի ջանան քավել իրենց մեղքը և օգտակար լինել հանրապետությանը։ Նրանց ցրեցին տարբեր գնդերի վրա։

Կապիտան Թոմփսոնը երկու հեծելավաշտով հայտնվեց Նորթ-Համփթոն կոմսությունում։ Բոլոր կողմերից գալիս, նրան էին միանում ապստամբների մնացորդները, բայց շուտով պառլամենտական հեծելազորի ջոկատները Ուելինգբորոյի մոտ վրա հասան նրանց և ջախջախեցին։ Սակայն վիրավոր Թոմփսոնը, տեսնելով, որ իր գործը տանուլ է տրված, փախավ անտառ, բայց թփերի միջից նրա վրա հարձակվեցին քսան հեծյալներ։ Կռիվը երկար չտևեց։ Երկուսին, ճիշտ է, նրան հաջողվեց պառկեցնել, բայց մնացածները սաստիկ շատ էին։ Նրան շրջապատեցին և շուտով ապրելու, փրկվելու հուսահատ փորձերը դադարեցին։ Հերոսական մահը մարտում պատվավոր է անարգ մահապատժից։

Կրոմվելը կրկին, արդեն քանի՞երորդ անգամ Լոնդոն էր վերադառնում որպես հաղթող։ Այս անգամ էլ երախտագիտությունն ու ցնծությունը քաղաքում սահման չունեին։ Եվ մի՞թե միայն Լոնդոնն էր ցնծում ու շնորհակալություն հայտնում իր փրկարարին՝ փրկարարին խառնակչություններից, այն խռովարարներից, որոնք ուզում էին հափշտակել իրավունքները և, ասված ոչ նի մարդկանց ունեցվածքը Օքսֆորդում՝ ռոյալիստների նախկին մայրաքաղաքում, ուր նա ու Ֆերֆաքսը մտան հաղթանակից հետո, նրանց դիմավորեցին չափանիշված պատիվներով ու ընծաներով։ Համալսարանի հանդիսավոր ժողովում նրանց ուսերին դրեցին իրավունքի պատվավոր դոկտորի ալ թիկնոցը։ Գնդապետներին և կապիտաններին բաժանեցին մագիստրոսի, բակալավրի աստիճաններ։

Պառլամենտը հատուկ որոշման մեջ «սրտագին շնորհակալություն» հայտնեց Կրոմվելին, Ֆերֆաքսին և նրանց սպաներին, պառլամենտն ու ազգը դրանց սպառնացող լուրջ վտանգից փրկելու համար։ Մի քանի օր շարունակ եկեղեցիներում գոհության մաղթանքներ էին կատարվում, քարոզիչները բոլոր եղանակներով հանդիսավոր խոսքեր էին կրկնում հաղթանակի սաղմոսներից։

www.a-pdf.com

Իսկ Սիթի՛ն։ Բոլորովին վերջերս նրա պատվարժան պարագլուխները Կրոմվելին ատում էին որպես արքայասպանի, անարգանքի սյունին էին գամում որպես իշխանությունը բռնատիրողի։ Այժմ նրանց դեմքերին ծաղկել էր ժպիտը։ Կրոմվելն ազգի փրկիչն է, Կրոմվելը խռովության հաղթողն է։ Հունիսի 7-ին Ներան հրավիրեցին հաղթանակած գեներալների պատվին տրվող ճոխ ճաշկերույթին։

Ճաշկերույթի գնալիս, կառքում նստած, նա մտածում էր, որ այդ անկարգությունների, նոր երկպառակտչական պատերազմի, գնդակահարությունների մեջ մեղավորը Լիլբեռնն է։ Այդ նա է, որ պարսավագրերով խառնակություններ է սերմանում, այդ նա է զինվորներին հրահրում նոր խռովություններին։ Ծիծաղելի է խոսել այն մասին, թե խառնակությունները վերջացել են, քանի դեռ այդ մարդը կենդանի է, քանի դեռ չի հնազանդեցված, չի ոչնչացված։ Օրերս քննարկելով այդ գործերը խորհրդի անդամներից մեկի հետ, նա կրկին դուրս նկալ ինքն իրենից, բռունցքով խփեց սեղանին և գոչեց. «Մեզնից մեկը պիտի մեռնի՝ կամ Լիլբեռնը, կամ ես»։ Մայիսի 14-ի պառլամենտական որոշումը, որով բանակում խռովության հրահրման ամեն տեսակի փորձ դիտվում էր իբրև դավաճանություն, նա ընդունեց գոհունակությամբ։

Կառքը հանդարտ գնում էր քաղաքի փողոցներով, ավարանների ամբոխը, ինչպես միշտ, կանգնել էին տների երկայնքով և մտիկ էին տալիս թափորին, բայց նրանց դեմքերից Կրոմվելին թվում էր սպառնալիք է կաթում և ողջույնի բացականչությունների միջից նա որսում էր այլ ձայներ՝ համառ, բողոքող, ատելությամբ լի ձայներ։ Մեկ էլ մի ճայթյուն լսվեց, ճռինչ, կառքը կտրուկ թեքվեց, և Կրոմվելը ուժգնորեն ինչ-որ հարված զգալով քունքին, թռավ մի անկյուն։ Ձիերը տագնապալի վրնջացին, թափորը կանգ առավ, շուրջն աղմուկը սաստկացավ։ Կառքի դռները լռվեցին, մնացին փակված, պահպանության զինվորները դրսից տեղահան արին դրանք։ Վերջապես նրան օգնեցին դուրս պրծնել։ Դողդողացող, գունատ կառապանը բացատրեց, որ ինչ-որ մեկը ճուլկին հանել է առջևի անիվի սոնու միջից և այն դուրս է թռել։

Փոխարենը ճաշկերույթը փառահեղ ստացվեց։ Մեծ դահլիճի սեղանները, որոնք համեմունքներ վաճառողների ընկերությանն էին պատկանում, ճռռում էին բազմազան ուտելիքներից, նրբընտիր գինիներից, արծաթյա սպասքից։ Սփիքեր Լենթալը, Պետական խորհրդի ու պառլամենտի անդամները, գեներալները, բարձրաստիճան սպաները, օլդերմեները և Սիթիի երևելի դրամական տուզերը՝ բոլորն այնտեղ էին։ Հնչում էին ռազմի շեփորներն ու թմբուկները, գինին հոսում էր գետի նման, բաժակաճառերը մեկը մյուսից հանդիսավոր էին, մեկը մյուսից գովաբանական։ Լևելերների շարժման ջախջախման առիթով փառաշեղ

www.a-pdf.com

հոգեհաց էլ տրվում, և որքան ծանր էր Կրոմվելի սրտին նախկին ընկերներին ջախջախելը, այնքան նրան ավելի փարթամ ու հոյակապ էր թվում տոնախմբությունը, այնքան ավելի հարուստ էին այն նվերները, որոնք մատուցվում էին նրան և Ֆերֆաքսին. խոշոր ոսկյա թասեր, ափսեներ, սկահակներ, սկուտեղներ։ Կառավարողները ցնծում էին ու հրճվում, իսկ ժողովուրդը, այն ժողովուրդը, որի շնորհիվ նրանք հաղթանակ էին շահել թագավորի դեմ, մնում էր զրկված, կեղեքված, առաջվա պես իրավազուրկ։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ VIII

ՆՎԱՃՈՂԸ

Մի ժողովուրդ, որ ստրկացնում է մի այլ ժողովրդի, կռում է սեփական շղթաները։

Կարլ Մարքս

Ես ավելի շատ կգերադասեի պարտություն կրել կավալերներից, քան թե շոտլանդացիներից։ Ես կգերադասեի շախշախվել շոտլանդացիներից, քան թե իռլանդացիներից։

Կրոմվել

1. ԻՌԼԱՆԴԻԱ

Այժմ, երբ խաղաղությանը սպառնացող վտանգը հանրապետության ներսում ոչնչացված էր, երբ լևելերները իրենց վրա զգացել էին նրա սրի ուժը, Կրոմվելը կարող էր իր եռանդը տալ այն բանի նախապատրաստմանը, ինչը վաղուց նրան տագնապահար էր անում. արշավանքը Իռլանդիայի վրա։ Դեռևս մարտին նա նշանակված էր իռլանդական բանակի գլխավոր հրամանատար և միաժամանակ Իռլանդիայի լեյտենանտ-գեներալ։ Պալատը չէր զլացել. երկու պաշտոնները նրան բերում էին տարեկան մոտ տասներեք հազար ֆունտ։ Նյութական դժվարություններին մեկընդմիշտ վերջ էին տրված։

Այն բանակը, որ պետք է նվաճեր Իռլանդիան, բաղկացած էր 12 հազար մարդուց։ Այն, ինչի դեմ զինվորներն այնպես մոլեգնորեն ապստամբեցին դեռևս 47 թվականի գարնանը, այն, ինչը հանգեցրեց 49 թվականի Մայիսյան ապստամբությանը, այժմ, այնուամենայնիվ, պետք է կատարվեր։ Նրանց պիտի տանեին Իռլանդիա ինչ էլ որ լիներ. միայն այդպես կարելի էր մեղմել գժգոհությունը, հանգցնել այն խանդավառությունը, որ բոցկլտում է զինվորների սրտերում, և այն մղել այլ հունով։ Եվ այնպես, ինչպես այն ժամանակ՝ քառասունյոթի շարաբաստիկ գարնանը, միայն Կրոմվելը կարող էր վնասազերծել բանակը՝ վնասազերծել գլխավորելով այն և տանելով իր ետևից, այնպես էլ այժմ նա ստիպված էր կանգնել իռլանդական արշավանքի գլուխ, իր վրա վերցնելով այդ ծանրությունը և կրկին հնազանդեցնել բանակը իր հանճարին։

Բայց այդպիսի արշավանքը պետք է ուներ ուժեղ հենարան։ Բավական է, անցան այն ժամանակները, երբ զինվորները, գրեթե ոտաբոբիկ, քաղցած ու ազքատ, ոտքի տակ էին տալիս հարյուրավոր մղոններ, ապավինելով մի մեծ նպատակի. հազիվ թանակ տանել կավալերների դեմ, հասնել ազատության ու ար-

www.a-pdf.com

գարության։ «Ազատություն ու արդարություն...»— այս հասկացություններն այժմ այնքան հեղհեղուկ էին դարձել, այնքան հարաբերական։ Թագավորը մեռած է, կավալերները տապալված են, Անգլիայում հանրապետություն է հաստատված, մեծագույն նպատակը, կարծես թե, իրականացված է, ուրեմն էլ ինչո՞վ այժմ ոգևորել բանակին։ Հասել է ժամանակը մտածել շատերի մասին. դա և՛ խաղաղ է, և՛ վստահելի։ Իռլանդական արյունանքը պետք է ընթանա «հարստացեք» լոզունգի տակ՝ հնազույն և հուսալի միջոց։

Հիանալի միտք. զինվորներին քի՞չ են վարձատրում, նրանց ոսկիկը հետաձգո՞ւմ են։ Թող ուրեմն նրանք գնան Իռլանդիա, սպանեն այն և վարձի հաշվին ինչքան ուզում են իռլանդական հողի հող ստանան։ Թող նրանք կոտորեն իռլանդացիներին թեկուզև բոլորին, մինչև վերջին մարդը, և գաղութացնեն հարուստ, արդավանդ կղզին ի փառս Անգլիայի և հօգուտ իրենց և իրենց ընտանիքների։ Այն, ինչ Կրոմվելը խստագույնս արգելում էր Անգլիայում՝ կողոպուտը, ինքնին թույլատրվում ու խրախուսվում էր Իռլանդիայում։ Ի գեպ, իռլանդական հողերով կարելի էր վարձատրվել և Սիթիից։ Դեռևս 1642 թվի փետրվարին, ապստամբությունն սկսվելուց անմիջապես հետո, անգլիական պառլամենտը օրինագիծ ընդունեց իռլանդացիներից երկուսուկես միլիոն ակր ընտիր հող բռնագրավելու մասին՝ խռովությունը ճնշելու համար փոխառություն ապահովելու նպատակով։ Այդ փոխառությունը բաժանորդագրվողների ցուցակում էր նաև այն ժամանակ համեստ, շատերին անհայտ սքվայր Օլիվեր Կրոմվելի անունը, որը մուծեց հինգ հարյուր ֆունտ իր խնայողություններից։ Հասել էր այդ փողերը վերադարձնելու ժամանակը։ Կարճ ասած, իռլանդական ռազմարշավը խոշոր օգուտներ էր խոստանում բոլորին։ Իսկ էլ ինչի՞, եթե ոչ շահի մասին պետք էր մտածել այժմ, երբ «ազատությունն ու արդարությունը» նվաճված էին։

Կար էլի մի նկատառում Կրոմվելին Իռլանդիա ուղարկելու համար։ Միանգամայն հնարավոր էր, որ պառլամենտի շատ անդամներ, որոնք այնքան պնդում էին, որպեսզի նա ընդուներ հրամանատարությունը, թաքուն հույս ունեին դրանով իսկ հեռացնել հզոր մրցակցին, լոնդոնցի պոտենցիալ դիկտատորին։ Եվ նա իրոք Իռլանդիայում, ավելի լավ. պառլամենտը կկարողանա զործել առանց նրա հսկողության, առանց բանակի հսկողության։ Եվ, ով գիտե, կարող է պատահել, որ այդ ընթացքում Անգլիայում իշխանության գլուխ անցնեն բոլորովին այլ մարդիկ։

Բացի այդ, ռոյալիստական վտանգն Իռլանդիայում սաստկանալ էր, ինչպես երբեք։ Թագավորի մահապատժից հետո այդ երկիրը դարձավ բոլոր ռոյալիստական ուժերի ձգողության կենտրոնը։ Անգլիայից լիակատար անջատումը հռչակել էին դեռևս 1643-ի սեպտեմբերին։ Անգլիական ռոյալիստներին գլխավորում

www.a-pdf.com

էր Կարլոս I-ի էմիսար կոմս Օրմոնդը։ 1649-ի սկզբում, երբ դատ էր գնում թագավորի դեմ, նա բանակը փութաջան պատրաստում էր անգլիական ափ հանելու համար։ Նա պայմանագիր ստորագրեց իռլանդական ապստամբությունը գլխավորող միավորված կաթոլիկների Համընդհանուր ասոցիացիայի հետ, և նրանք միասին պառլամենտական զորքերից եռանդուն կերպով ետ էին նվաճում բերդը-բերդի ետևից։ Նրանց հետ մեկտեղ գործում էր օլսթերական կաթոլիկ կլանների առաջնորդ Օուեն Օ'Նեյլը, որը ատում էր բոլոր անգլիացիներին որպես իր ժողովրդին ստրկացնողների։ Նրան օգնում էր պապական նվիրակը։ Հենց այստեղ՝ Օլսթերում, կային նշանակալից թվով շոտլանդացի պրեսբիտերներ, որոնք կաթոլիկների թշնամիներն էին, բայց ատում էին նաև անգլիական «արքայասպաններին»՝ ինդեպենդենտներին, որոնք քարոզում էին կրոնական հանդուրժողականություն։

Ժամանակավորապես բոլոր այդ այլազան ուժերը միավորվել էին անգլիական հանրապետության դեմ։ Նրանց ղեկավարում էր ատելությունը՝ միավորման հզոր, բայց ոչ տևական զենքը։ Մի որոշ ժամանակ այդ ատելությունը Իռլանդիայում ոգեշնչում էր բոլորին և ստեղծեց մի միասնություն, որ պատրաստ էր կենաց ու մահու պայքար մղելու։ Չարլզը՝ Ուելսի արքայազնը, թագավոր Կարլոսի մահից հետո հռչակվեց օրինական միապետ՝ Կարլոս II։ Հունվարի վերջին Հոլանդիայից ժամանեցին ռոյալիստական ռորմիզի մնացորդները՝ ութ մարտական նավեր, որոնց հրամանատարն էր արքայազն Ռուփերտը։ Պառլամենտական ջոկատները հուզվում էին, նրանց նեղում էին բոլոր կողմերից։ Միայն Դուբլինը, Դերրին (Լոնդոն-դերրին) և Դենդալքն էին մնացել նրանց ձեռքում, երկրի ինը տասներորդ մասը անցավ ռոյալիստների ձեռքը։

Այդ երկրի գլխին, պառլամենտի ու բանակի հանդեպ այրող ատելությամբ լցված այդ կղզու գլխին, Կրոմվելն այնքան ծանր, այնքան հզոր մուրճով պիտի խփեր, որպեսզի մի զարկով ջախջախեր, ճզմեր, ոչնչացներ. պատերազմը պետք էլիներ արագ և հաղթական։ Դեռևս մարտին նա անառարկելի պայման դրեց բանակը լավ, առաջնակարգ կերպով մատակարարելու վերաբերյալ։ Նա արդեն չէր խնդրում, ինչպես քաղաքացիական պատերազմի սկզբում էր, այլ հանգիստ դրամ էր պահանջում ռազմարշավի համար, և դրամը գալիս էր առանց դժվարության։ Ապրիլին Սիթին 120 հազար ֆունտի փոխառություն տվեց, հուլիսին՝ ևս մի փոխառություն. այս անգամ 150 հազար ֆունտ։ Պարտված ռոյալիստների՝ դելինքվենթների, հողերը վաճառելու գծով կոմիտեին առաջարկվեց արագացնել դրամական միջոցների հավաքումը և դրանց նշանակալից մասը տրամադրել իռլանդական արշավի կարիքներին։

Զինվորներին պետք է խրախուսել և հուսադրել. վճարում են նրանց բոլոր ռոճիկներն ամբողջովին։ Աղքատ ռազմիկները հան-

www.a-pdf.com

Լարծ գառնում են հարուստներ, նրանց ձեռքն են տալիս մի ամբողջ կապոց փող՝ ծառայության շատ ամիսների վարձը միանգամից։ Դեռ էլ ավելին են խոստանում. անթիվ-անհամար գանձ արգավանդ ձրի հողեր Իռլանդիայում։ Ո՛վ կդիմանա այդքան խայծին, ո՛վ դեմ կլինի լավ հող ստանալ վերջապես, դառնալ հարուստ։ Գայթակղությունը մեծ է, տրամադրությունը զորքի մեջ բարձրանում է, և շատ քչերն են արդեն լսում ջախջախված լևելիերներին։ Թող նրանք ասեն, որ Անգլիայի և Իռլանդիայի ազատությունները պետք է միավորվեն նոր լենգլորդերի դեմ։ Թող ասվինը համոզի, թե ազատության ձգտող իռլանդացիների գործն նույն գործն է, հանուն որի պայքարում են և իրենք՝ անգլիացիները, ձգտելով ազատվել շահագործումից ու բռնակալությունից։ Թող նրանք հիշեն բանակային սրբազան երդումը, տրված 1647 թվականի հուլիսի 5-ին՝ չցրվել, քանի դեռ անգլիացիների ազատությունը չի ապահովված, և թող գոչեն, թե Իռլանդիա ուղարկելը՝ խախտումն է այդ երդման։ Զինվորի գրպանում փող կա, սիրտը թեթև է. առջևում՝ արագ հաղթական արշավ ու հարստություն է սպասվում, և կուշտ, հանգստավետ կյանք իռլանդական արգավանդ հողերում։ Կեցցե՛ լեյտենանտ-գեներալ Կրոմվելը։

Եվ ահա հուլիսի 11-ին տեղի է ունենում հրաժեշտի արարողություն։ Ուայթհոլում հավաքվել են սպաները, Սիթիի ներկայացուցիչները, պառլամենտի անդամները։ Երեք քահանաներ հանդիսավորաբար աստծո օրհնությունն են հայցում փառապանծ արշավի համար։ Ճառերով հանդես են գալիս Հոֆֆեն, Հարիսոնը, Կրոմվելը ևս ելույթ է ունենում, համեմելով իր ճառը Հին կտակարանից արած մեջբերումներով. դրանք պետք է ցուցադրեն առաջիկա ռազմարշավի բարձրագույն իմաստն ու աստվածային լույսը։ Եվ միայն երեկոյան հինգին են ներկաները պալատից դուրս գալիս, որպեսզի վերջապես ճանապարհ ընկնեն։

Համաչափ, ծանր քայլքով Կրոմվելը մոտենում է պերճաշուք կառքին։ Անցել են ձիով ճանապարհ կտրելու տանջալի ժամանակները. նա այժմ կուղևորվի հարմարավետության, անգամ պերճաշքության մեջ։ Կառքին լծված են վեց ֆլանդրիական մոխրագույն, պտավոր ղամբիկներ։ Նրա վրա քամուց փողփողում է ապիտակ դրոշը՝ խաղաղ մտադրության նշանակը։ Հենց սկզբից երկերեսանությունը իր կնիքն է դրել այդ առշավի վրա։ Հրամանատարի կառքին հետևում են բազում ուրիշ կառքեր, դրանցով գնում են բանակային բարձր պաշտոնյաներ և դրանց մեջ առաջինը Կրոմվելի փեսան՝ գեներալ Այրթոնը, որին Կրոմվելը հետո վերցրել որպես տեղակալ։ Գլխավոր հրամանատարի անձնական գվարդիան բաղկացած է ութ-տասը սպաներից՝ նրանցից շատերը գնդապետի աստիճան ունեն։ Պառլամենտի անդամները նույնպես նստած են կառքերում, նրանք ուղեկցելու են Կրոմվելին մինչև Բրենտֆորդ։

www.a-pdf.com

Շեփորները հաղթական կոչ են հնչեցնում։ Թափորը ճանապարհ է ընկնում։ Այժմ զգուշացեք, կոմս Օրմոնդ։ Դուք գործ ունենալու քաջարի մարտիկների հետ։ Հաղթել նրանց մեծ պատիվ կլինի ձեզ համար, բայց և պարտված լինել նրանցից՝ նույնպես պակաս պատիվ չէ։ Դուք ասում եք՝ «Կեսար կամ ոչինչ», իսկ նրանք՝ «Հանրապետություն կամ ոչինչ»։ Այդպես էին գրում թերթում։ Եվ Կրոմվելը՝ միշտ անտարբեր պերճաշքության հանդեպ, ա՛յս անգամ այդպիսի հոյակապ ուղևորությունն ընդունեց ինչպես պետք էր, ըստ պատշաճի. դա ոչ թե նա, այլ Անգլիայի հանրապետությունն էր մարտի գնում իր թշնամու դեմ։ Թող բոլորը տեսնեն, թե ինչպես նա, Անգլիայի չնչին ծառան, որին Օրմոնդը և նմանները կոչում են Յոհան Լեյդենցի[1] անունով, գնում է ծառայելու մեծ գործի, և փառքը նրա՝ փառքն է նոր Անգլիայի։

Բրիսթոլում Կրոմվելն ստիպված եղավ հապաղել։ Նա զինվորներին խոստացել էր տեղից չշարժվել, քանի դեռ չի եկել բանակային ողջ հանդերձանքը, քանի դեռ զինվորների վարձը չի վճարվել մինչև վերջին պենին։ Այստեղ նա անդրդվելի էր։ Սպասելով թնդանոթներ, ոտնամաններ, վառոդով լի տակառներ, պարեն բերող գումակին, իսկ գլխավորը՝ հարյուր հազար ֆունտ առձեռն դրամին, որ խոստացել էր պառլամենտը, նա այցելություններ էր ընդունում և շրջագայում Ուելսի նավահանգիստներում։ Նրա մոտ եկավ Եղիսաբեթը ավագ որդու՝ Ռիչարդի հետ, հրաժեշտ տալու և բարի երթ մաղթելու։ Ռիչարդը՝ նրա այժմյան մշտական հոգսը, նրան հիշեցրեց Դորոթիին՝ իր հարսին, որի նկատմամբ Կրոմվելը մի փոքր թուլություն ուներ և կոչում էր «աղջիկս»։ Նրա հորը՝ Ռիչարդ Մերին, այդ օրերին նա գրեց.

«Ես շատ գոհ եմ՝ իմանալով, որ ձեզ մոտ ամեն ինչ լավ է և որ մեր երեխաները պատրաստվում են գնալ հանգստանալու և բալ ուտելու, աղջկա համար դա միանգամայն ներելի է, ես հույս ունեմ, որ նա դրա համար ունի զոհացնող հիմքեր։ Հավատացնում եմ ձեզ, սիր, ես բարին եմ ցանկանում նրան և կարծում եմ, որ նա դա գիտե։ Խնդրում եմ հաղորդեք, որ ես նրանից հանախակի նամակներ եմ սպասում, որոնցից հույս ունեմ իմանալու, թե ինչպես է ապրում ձեր ամբողջ ընտանիքը... Հանձնում եմ ձեզ իմ որդուն և հույս ունեմ, որ դուք կլինեք նրա բարեխնամ առաջնորդը... Ես ուզում եմ, որ նա դառնա ավելի լրջմիտ, ժամանակն այդ է պահանջում...»։

Բայց ընտանեկան հոգսերը երկար չէին զբաղեցնում Կրոմվելին։ Շուտով նա, պատրաստվելով արշավանքին, ուղևորվեց Միլֆորդ Հեվեն՝ նավահանգիստը նույն այն Փեմբրոքի, որը նա այնքան երկար պաշարել էր մի տարի առաջ։ Այստեղ էլ նա մի

[1] Յոհան Լեյդենցի (1509—1536)— Նիդեռլանդական անաբապտիստների առաջնորդը, խոովարար, հավասարարական, Մյունստերյան կոմունայի գլխավորը։

www.a-pdf.com

անսպասելի այցելու ունեցավ։ Սա մի թիկնեղ, պնդակազմ մարդ էր, մթին, անըմբռնելի։ Դա գնդապետ Ջորջ Մոնքն էր։ 1647 թվականից նա պառլամենտի կողմից նշանակված էր Օլսթեր գավառի կառավարիչ։ Այդ մարդու բուն կերպարանքում, նրա լռակացության մեջ ինչ-որ հանելուկային բան կար։ Նրա անցյալը, պարզվեց, որ փոքր-ինչ արատավորված էր նվել քաղաքացիական պատերազմին թագավորի կողմում մասնակցելու և գերի ընկնելու պատճառով. ճիշտ է, հետագայում նա քավել էր իր մեղքը՝ պառլամենտին հավատարիմ ծառայելով։

Այժմ Մոնքը ներկայացել էր բացատրություններ տալու համար։ Նրա վիճակը Իռլանդիայում տարեսկզբից սարսափելի էր դարձել։ Բոլոր կողմերից նեղվելով, նա ստիպված էր վախով և տիսկի դիմելով վինադադար կնքել Օ'Նեյլի՝ իռլանդացի պապականի հետ։ Միաժամանակ նա թաքցնում էր այդ և ճիշտ էր անում։ Բարեպաշտ պուրիտանների աչքում յուրաքանչյուր պայմանագիր իռլանդացու, այն էլ կաթոլիկի հետ, մի մարդու, որի կարկատանների տակ հետագայում հայտնաբերվեց դոմինիկյան վանականի զգեստ, ինքնին ահավոր հանցագործություն էր։ Ապրիլին Մոնքը, զիջելով լորդ Ինչիքուինի ջոկատների ճնշմանը, իր զորքերի մնացորդների հետ ետ քաշվեց դեպի Դենդալք բերդը և պատսպարվեց այնտեղ։ Պարենը վերջանալու վրա էր, զինվորները դժգոհություն էին արտահայտում ոռճիկների ուշացման առթիվ, և Մոնքը ուրիշ ելք չտեսնելով, Օ' Նեյլից օգնություն խնդրեց՝ ի կատարումն զինադադարի պայմանների։ Օ'Նեյլը հրաժարվեց, վկայակոչելով վառոդի բացակայությունը, և նա անջեց Դերրիի կողմը։ Ջուր էր Մոնքը դիմում Ջոնսին՝ Դուբլինի լայազորի հրամանատարին. սա նույնպես ջախջախված էր հակառակորդի կողմից։ Մոնքի զինվորները, քաղցած, ունեզուրկ, հրաժարվում էին կռվել, և նա ստիպված եղավ Դենդալքը հանձնել Օրմոնդի զորքերին։

Խոսակցությունը դյուրին չեղավ։ Պառլամենտը Մոնքին դատապարտել էր այն բանի համար, որ հանդուրժել է դաշինք կնքել «պապական հրեշի» հետ։ Գոնե՞ այդ դաշինքը հաջողությամբ պսակվեր... Բայց քանի որ գործը տանուլ էր տրված, բերդն ընկել էր, որոշում ընդունվեց ազատել իր հաշիվներում վրիպած ապային։

Կրոմվելը հասկանում էր, որ Մոնքը չէր կարող վարվել այլ կերպ։ Մոայլ գնդապետի պատմածը, անգամ նրա պերճախոսությունը, վկայում էին այն մասին, թե որքան լուրջ է դրությունը Իռլանդիայում։ Որպես զինակից եղբայր Կրոմվելը չէր կարող մեղադրել Մոնքին։ Բայց նա չէր մտածել զինվորների մասին։ Հենց Օ'Նեյլի հետ կնքած պայմանագրի մասին լուրն էր, որ դանդվածային դասալքություն առաջացրեց զորքերի մեջ, որոնք արդեն պատրաստ էին Իռլանդիա ուղևորվելու։ Կրոմվելը Մոնքին ասաց, որ նա պետք է կրի իր արարքի ողջ պատասխանատվու-

www.a-pdf.com

թյունը, և խիզախ զնդապետը համաձայնեց։ Նրա դեմքը, նրա ազնվությունը, խելամտությունը, մեղքն իր վրա վերցնելու պատրաստակամությունը Կրոմվելն ամուր պահեց իր հիշողության մեջ։ Մոնքը դեռ կծառայի նրան հավատով ու ճշմարտությամբ։ Դրանում նա չէր տարակուսում։

Իսկ Իռլանդիան, որն այնքան մոտ էր Անգլիային, որ պարզ եղանակին Փեմբրոքի ամրոցի աշտարակներից կարելի էր հշմարել նրա ափերի ուրվագծերը, քանի գնում ավելի ու ավելի էր տագնապում Կրոմվելին։ Բանակի ընտիր զորամասերն այնտեղ ուղարկելը դեռևս քիչ էր, քիչ էր մինչև ատամները դրանց զինելը փողով, պարենամթերքով, հագուստով, դեղորայքով ապահովելը։ Լավ կլիներ դրա հետ մեկտեղ ներսից պառակտել իռլանդական ուժերը, նրանց տարաձայնություններից օգտվելը, գաղտնի նրանց միջից ի հայտ բերել դավաճանների և ոմանց գրավել իր կողմը։ Ո՛չ միայն սրով է կռվում այժմ Կրոմվելը։ Իմաստնացած մարտական բազմամյա փորձով, նա գիտե, որ կան միջոցներ, և ավելի ուժեղ, քան բաց ճակատամարտը։

Դեռևս Լոնդոնում Կրոմվելին հաջողվեց չհայտարարված դաշինք կնքել լորդ Բրոգհիլի հետ, որն արդեն մի քանի անգամ թագավորական զորքերից անցել էր պառլամենտականներին և վերադարձել։ Այժմ, ինչպես տեղեկացրին Կրոմվելին, նա ուղևորվել էր Կարլոս II-ի մոտ նոր լիազորություններով, որպեսզի նրա կողմից այնուհետև կռվեր Իռլանդիայում։ Կրոմվելն այնժամ ինքը ներկայացավ անծանոթ ազնվականին և շշմեցրեց նրան, ասելով առանց այլևայլի, որ նրա մտադրությունները հայտնի են Պետական խորհրդին և արդեն հրաման է ստորագրված նրան Թաուերում բանտարկելու մասին։ Սա խոստովանեց ամեն ինչ և խորհուրդ հարցրեց։ Կրոմվելը նրան մեծահոգաբար գեներալի պաշտոն առաջարկեց իռլանդական արշավախմբում։ Նա կաղատվի բոլոր տեսակի երդումներից ու պարտականություններից, բացի ազնիվ խոսքով երդվելուց, և կարող է պատերազմում սպանել միայն իռլանդացիներին։ Փոքր-ինչ տատանվելուց հետո Բրոգհիլը համաձայնեց և անհապաղ ուղարկվեց Բրիսթոլ։ Այժմ Կրոմվելն անբաժան էր նրանից։ Նա հանձին Բրոդհիլի գտավ ոչ միայն խելամիտ ու գործիմաց օգնականի, այլև մոտիկ և հավատարիմ ընկերոջ։

Դիտելով զորքերի շարժումը, պարենամթերքի ու հանդերձանքի բեռնումը նավերի վրա, մինչև կոկորդ խրված առաջիկա արշավանքի հոգսերի մեջ Կրոմվելն հենց այստեղ էլ իմացավ, որ Լիլբեռնը իր վրա է հարձակվել մեղադրանքների մի նոր տարափով։ Նրա հերթական պարսավագիրը կոչվում էր ոչ ավել, ոչ պակաս՝ «Պետական դավաճանության մեղադրանք Օլիվեր Կրոմվելի ու նրա փեսա Հենրի Այրթոնի դեմ»։ Անմիտ մարդ, նա աղմուկ է բարձրացնում այնպիսի մի պահի, երբ Կրոմ-

www.a-pdf.com

վելը պատրաստվում է երկրում զավթել գերագույն իշխանություն։ Պետական խորհուրդն անձամբ հոգ տարավ գլխավոր հրամանատարի պաշտպանության մասին և օգոստոսի 20-ին Կլրենդոնը կրկին ձերբակալվեց և բանտարկվեց Թաուերում։

Եվ հանկարծ ուրախալի նորություն։ Կրոմվելի ուղարկած հաջին նավերը դեռ չէին հասցրել մտնել Դուբլինի նավահանգիստը, երբ արդեն էքսպեդիցիան հաջողությամբ պսակվեց։ Երկարատև հյուծիչ պաշարումից հուսահատված, բերդի կայազորը հանձնվեց՝ իմանալով նոր համալրում գալու մասին և օգոստոսի 11-ին իր նահանգապետի՝ Միթչել Ջոնսի հրամանատարությամբ ոչ արտագրոհ կատարեց Ռալթմանս գյուղակի մոտ, որտեղ հավաքված էին կոմս Օրմոնդի գլխավոր ուժերը՝ մոտ 19 հազար մարդ։ Թշնամին, հանկարծակիի եկած, խուճապի մատնվեց. պառլամենտական ոչ մեծաթիվ ջոկատների դյուրաշարժ, հպարտ հարվածը (Ջոնսի ձեռքի տակ կար չորս հազար հետևակ (260 հեծյալ) ետ շպրտեց նրան և թշնամու կողմում լիակատար խառնաշփոթ առաջացրեց։ Սպանվեց մոտ չորս հազար մարդ, երկուսուկես հազարը գերի հանձնվեցին։ Ջոնսի ձեռքն էր ռոյալիստական ամբողջ հրետանին և գումակը։

Ալդիսի խորտակիչ պարտությունից հետո Օրմոնդը ստիպված եղավ նահանջել։ Ճանապարհը դեպի Դուբլին, պարզվեց, բաց է, և օգոստոսի 13-ին Օլիվեր Կրոմվելը բարձրացավ «Սուրբ Հովհաննես» նավի սանդուղքով, որպեսզի կյանքում առաջին անգամ անգլիական ափերից լողալով գնա օտար երկիր։

«Սուրբ Հովհաննեսը» լողում էր 35 նավից բաղկացած տորիսի գլուխ անցած։ Այրթոնը ևս 77 նավով պետք է տեղ հասներ մի քանի օր հետո։ 18 նավ էլ գնդապետ Հորթոնի հրամանատարությամբ պատրաստվում էին ճանապարհ ընկնելու։ Ընդհանուր հաշվով այդ նավերով շարժվում էր ավելի քան տասը հազար մարդ՝ հանդերձանքով, պարենամթերքով և հրետանիով. ամբողջ ֆլոտիլան գնում էր նվաճելու «Կանաչ կղզին»։ Սկզբում ամեն համընթաց էր, և Կրոմվելը իջավ նավախցիկ. հարկավոր էր նամակներ գրել։ Կրկին նա գրում է Ռիչարդ Մերին, նրան տեղեկանելով «թանկագին եղբայրս» և խնդրում է աղոթել իր համար և նրան է հանձնում ավագ որդու հոգացողությունը. «խնդրում եմ մի զլացեք տալ նրան ձեր խորհուրդները... Ես կցանկանայի, որ նա ավելի շատ խորհեր և զբաղվեր գործով, մի քիչ ուսումություն կարդար, ուսումնասիրեր մաթեմատիկան և տիեզերագիտությունը. դրանք լավ բաներ են, որովհետև գույց են տալիս, թե ինչպես ամեն ինչ աշխարհում ենթարկված է աստվածային հոգացմանը։ Դա ավելի լավ է, քան անբանությունը կամ պարզապես առօրյա աշխարհիկ վտելքները։ Դա անհրաժեշտ է քան հասարակական ծառայությունների համար, որի համար էլ ծնվել է մարդը...»։

www.a-pdf.com

Ալեկոծումն ուժեղանում էր, երևում է փոթորիկ է սկսվում։ Նավախցիկը մի կողմից մյուսն էր թեքվում, աչքերի առաջը մթնել էր, սառը քրտինքը պատել էր ճակատը։ Կրոմվելն այլևս չէր կարող գրել։ Գլխապտույտը հաղթեց նրան։ Մնացած ամբողջ ճանապարհը նա անցկացրեց մահճակալին պառկած, տառապելով ծովային հիվանդությունից։

Դուբլին ժամանեցին միայն օգոստոսի 15-ին։ Թնդանոթները հարվածում էին բերդի պարիսպներից, ողջունելով պառլամենտական նավատորմիղին, և Կրոմվելը, դեռևս գալկագեմ ու թույլ, բայց անսահմանորեն երջանիկ, որ նավարկությունը մնացել էր ետևում, ոտք դրեց իռլանդական ամուր հողին։ Նա անկեղծորեն հավատում էր, որ մինչև 41 թվականի ապստամբությունը Իռլանդիան խաղաղություն և բարօրություն էր վայելում։ Նա, հավանորեն, չգիտեր, թե Իռլանդիայի բնակչությունը ինչ-ս իսի անմարդկային դաժանություններ էր ենթարկվել հավերժահիշատակ Եղիսաբեթ թագուհու օրոք։ Նա, հավանորեն, մոռացել էր, թե Ստրաֆորդն այդ երկրից ինչպիսի միջոցներով էր արքայի համար եկամուտներ քամում։ Նրան թվում էր, թե նախքան ապստամբությունը ամեն ինչ Իռլանդիայում լավ է եղել և միայն այդ երկրի դաժան ու բարբարոս ժողովուրդն է մեղավոր, որ ստիպված են կրկին նվաճել այն։

Մի քանի օր անցավ գործերը կարգի գցելու վրա. նոր ժամանածներին դիմավորելու և տեղավորելու, նեղուցն անցնելուց հետո հանգստանալու վրա։ Մինչդեռ հավաստի աղբյուրներից հայտնի դարձավ, որ Կարլոս Ստյուարտը, որն իրեն անվանում էր անգլիական թագավոր Կարլոս II, պատրաստ է եղել ճանապարհվելու դեպի Իռլանդիա, բայց լսելով այնտեղ Կրոմվելի ափ իջնելու մասին, կանգ է առել Ջերսի կղզում, Բրետանի ափերի մոտ։ Նրա հետագա ծրագրերը կախված էին այն բանից, թե ինչպես կծավալվեին իրադարձությունները Իռլանդիայում։ Այդ նույն ժամանակ պառլամենտական նավատորմիղի նոր ծովակալ Բլեյքը Իռլանդական ծովն էր մտել շատ ազդեցիկ մի նավակազմով և արքայազն Ռուփերտի տորմիղը շրջափակել Քինսեյլ նավահանգստում, Իռլանդիայի հարավում։

Նվաճողի վիճակը և, ուղղակի ասենք, պատժիչի վիճակը Կրոմվելին մղում էր խստության և միաժամանակ՝ օրինականության ու անկանխակալության երևութականություն պահպանելուն։ Օգոստոսի 24-ին Կրոմվելը դեկլարացիա է հրապարակում ուղղված իր բանակի սպաներին և այն կղզու բնակիչներին, որը նա պատրաստվում էր նվաճել։ Ասենք, այդ դիմումը, այնուամենայնիվ, ուղղված էր ավելի շուտ Իռլանդիայի ժողովրդին, նրան նախազգուշացնում էին և միաժամանակ հավատացնում, թե զավթիչներն ամենաբարեմիտ մտադրություններով են գալիս։ «Ես ասյնով նախազգուշացնում եմ,— ասված էր դեկլարացիա-

www.a-pdf.com

և զարտուղորեցնում իմ հրամանատարության տակ գտնվող բոլոր սպաներին, զինվորներին և այլ անձանց, որևէ վիրավորանք չհասցնել, որևէ բռնություն չգործադրել գյուղական բնակչության կամ այլ անձանց նկատմամբ, եթե հրանք գործում մասնակցություն չեն ունենում մեր դեմ զինված պայքարի կամ ծառայության մեջ չեն հակառակորդի կողմում. նմանապես չդիպչել այդպիսի անձանց ունեցվածքին՝ առանց հատուկ հրամանի»:

Տեղական բոլոր բնակիչներին, որոնք ժամանած բանակներին լեն պարենով, երաշխավորում էր, «որ հրանք չեն ենթարկվի որևէ ենշման կամ վիրավորանքի, այլ կօգտվեն ազատ առևտրի բոլոր բարիքներից և առձեռն կստանան դրամ իրենց պարենավորման և ապրանքների դիմաց»: *Մյուս բնակիչներին խոստանում էին, որ եթե նրանք իրենց պահեն «խաղաղ ու հանգիստ» և մուծեն անգլիական բանակը պահելու համար իրենց վրա դրված վճարումները,* «ապա հրանք անարգել թույլտվություն կունենան ապրելու իրենց սեփական հարկի տակ ընտանիքներով ու ունեցվածքով»:

Այսպես էր ուրվագծված նվաճողների քաղաքականությունը։ Սկզբում այն առանձին սպառնալիք չէր պարունակում։ Հետագա դեպքերը ցույց կտան, թե ինչպես կատարվեցին այդ խոստումները։

Եթե Անգլիայում XVII դարում ճանապարհները վատ էին, ապա Իռլանդիայում դրանք բոլորովին բանի պետք չէին։ Ճառուռ, անմատչելի լեռներով, հովիտներով, ափերից դուրս գրված գետերով չէր կարելի անցնել անգամ ամռանը։ Եթե Անգլիայում կլիման խոնավ էր և անառողջարար, դրա լավագույն ապացույցը՝ 48 թվի ամառը, ապա Իռլանդիայում կլիման ավելի վատն էր։ Խոնավությունը չէր անցնում հորքը, այն ներծծվում էր տները, հագուստի մեջ, ոտնամանները, մարմանդ ու կպչուն նստում էր հրանոթների փողերին, գնդինը դարձնում էր փխրուն ու անվստահելի։ Դեռևս Դուբլինում Կրոմվելն իրեն լավ էր զգում, այնուամենայնիվ, հիսուն տարին, որ լրացել էր նրան, զգացնել էր տալիս։ Իսկ այժմ, երբ նրանք առաջանում էին դեպի հյուսիս, դեպի Դրոգեդ բերդը, որտեղ դադար էին անում ջախջախված Օրմոնդի ջոկատները, պարզ դարձավ, որ հաղթությունը լինելու է դժվարին, համարյա ուժից վեր և՛ իր, և՛ ողջ բանակի համար։ Նեխած ճահճուտների ժանգահոտը, որոնց միջով գնում էին զինվորները, միախառնվում էր քրտնած մարմինների ու թաց հագուստների կպչուն գոլորշու հետ։ Ցերեկը քայլելը հեղձուցիչ էր, խոնավությունը ներծծվում էր թոքերի մեջ, առաջացնելով խոպոտ հազ։ Բայց արդեն սեպտեմբեր ամիսն էր, վաղ էր մթնում, և գիշերները երկար էին ու ցուրտ, թաց հագուստները չէին հասցնում չորանալ խարույկների մոտ։ Իրենց դրությունը զգացնել էին տալիս համաճարակի առաջին նշանները։ Ոմանք արդեն պառկած էին՝ դողէրոցքով բռնված, մյուս-

www.a-pdf.com

ների վկի դեղձերն էին ու�, իսկ մի քանիսի մաշկի վրա թարախապալարներ էին գոյացել՝ կայծուռուցքներ, որոնք մեծատառապանք էին պատճառում։

Սեպտեմբերի 3-ին, կտրելով երեսուն մղոն, մոտեցան Դրոգեդին և սկսեցին ամրություններ կառուցել բերդի պատերից մի հրացանազարկի հեռավորության վրա։ Ծովից սկսեցին ափ իջեցնել թնդանոթները և դրանք ուղղեցին քաղաքի վրա։

Դրոգեդը, թերևս, ամենից ուժեղն էր իռլանդական բերդերից։ Նրա մասին ասում էին. «Գրոհել Դրոգեդի վրա, նույնն է թե գրոհել դժոխքի վրա»։ Գետը այն բաժանում էր երկու մասի՝ հյուսիսային և հարավային. վերջինը ամրացված էր 12 ֆուտից ոչ պակաս բարձրությամբ հին ու հաստ պարիսպներով։ Նրա հարավարևելյան մասում սուրբ Մարիայի եկեղեցին էր, որտեղից կարելի էր լավ դիտել հակառակորդի շարժումները և կրակի տակ առնել նրան։ Քաղաքի գլխավոր՝ հյուսիսային, մասը կարելի էր հասնել Միլ Մաունթ միջնաբերդը տիրելուց հետո միայն, որը մի բլրի վրա էր՝ բարձրադիր հողապատնեշներով ու ցանկապարիսպներով ամրացված։

Կայազորի հրամանատարն էր սըր Արթուր Էսթոնը՝ մի մոայլ ու անսասան կաթոլիկ զինվորական։ Նա Լեհաստանի տափաստաններում կռվել էր թուրքերի դեմ։ Մարտնչել էր նա Գուստավ Ադոլֆի դրոշի տակ, իսկ այնուհետև պաշտպանել էր Կարլոս I-ին Էշհիլի և Ռիդինգի մոտ, նա Օքսֆորդի պարետն էր եղել։ Մարտերում կորցրել էր մի ոտքը և այժմ փայտե ոտքով էր քայլում։ Դրոգեդի պաշտպանները գրեթե բոլորն էլ իռլանդացիներ էին և, ինչպես և Էսթոնը, կաթոլիկներ։ Բերդը կարող էր դիմանալ մեկ ամսից ոչ պակաս, մինչև որ գնդապետ Սովը և մայոր Ախտը, ինչպես կծու կատակում էր Օրմոնդը, նրան ստիպեն անձնատուր լինել։

Անգլիացիները պաշարման պատրաստվել էին փութաջանորեն՝ ամբողջ վեց օր։ Լրտեսները տեղեկացրել էին, որ բերդում մոտ երեք հազար զինված պաշտպաններ կան, բայց փոխարենը հրետանի բոլորովին չունեն։ Կրոմվելն ուներ ավելի քան տասը հազար մարդ և մի քանի խոշոր մարտկոց։ Դրոգեդը ինչ գնով էլ լիներ պետք է վերցվեր. այն բանալի էր դեպի Հյուսիսային Իռլանդիա։ Եթե պառլամենտական զորքերը, ինչպես մի տարի առաջ Ջոնսի ուժերը, հետ շպրտվեին Դրոգեդի պատերից, նրանք Իռլանդիային չէին հաղթի։

Սեպտեմբերի 10-ին բոլոր նախապատրաստությունները ավարտվեցին և առավոտյան ժամը 8-ին Կրոմվելը Էսթոնին մի կարճ նամակ ուղարկեց՝ պահանջելով անձնատուր լինել։ «Սր,— գրում էր նա,—որպեսզի կանխվի արյունահեղությունը, ես նիշտ եմ համարում պահանջելու հանձնել բերդը։ Մերժման դեպքում դուք հիմքեր չեք ունենա ինձ մեղադրելու։ Ես ապասում եմ ձեր պատասխանին և մնում եմ ձեր ծառան։ Օ. Կրոմվել»։

www.a-pdf.com

Ինչպես և պետք էր սպասել, Էսթոնը սերժմամբ պատասխանեց։ Կրոմվելը պատվիրեց ռազմական սպիտակ դրոշը փոխել կարմիրով և գրոհի ազդանշան տվեց։

Հարվածեցին ծանր մարտկոցները, գետինը ցնցվեց, վառոդի փոսը սկսեց տարածվել խոնավ օդում։ Դրոգեդի հին պարիսպների վրա երկու տեղից ճեղքեր գոյացան։ Ամբողջ օրը Թնդանոթները որոտում էին անդադրում, որոտում էին միայն մի կողմից. Էսթոնը դրանց պատասխանելու ոչինչ չուներ։ Ավելի քան երկու հարյուր զարկերը վերջապես երկու տեղից ծակեցին հինգ ֆունտանոց հաստ պարիսպները։ Սուրբ Մարիա եկեղեցու զանգակատունը երերաց ու փուլ եկավ։

Հետևյալ առավոտյան հրետակոծությունը շարունակվում էր։ Կրոմվելին թվում էր, թե այն ընթանում էր չափազանց դանդաղ ու ալարկոտ։ Միայն կեսօրից հետո գլխատված եկեղեցու կողմում հարվածներից առաջացած բացվածքը բավականաչափ լայնացավ և այս էլ ոչ թե հեծելազորի համար, այլ՝ հետևակի։ Ցրելի ու ավելի բրբրոքված ու մոլեգնած, Կրոմվելը երեկոյան նորից հինգին գրոհի ազդանշան տվեց։

Հետևակի երեք գոկաները նետվեցին դեպի բացվածքը և պարզ դարձավ, թե պաշտպանների միահամուռ կրակի տակ ինչպես էին նոսրանում նրանց շարքերը, ինչպես էր գետինը ծածկվում սպանվածներով ու վիրավորներով։ Առաջին գրոհը միանգամայն անհաջող էր։ Իռլանդացիները կատաղի կրակով պատասխանում էին պարսպի վրայից, հրակնատներից և ավերված անդակատան վալվածքներից։ Նրանց հետևակն ու հեծելազորը հրացել էին բացվածքի մոտ և հարձակվողները չէին կարողանում ներխուժել։ Նրանք մեծ կորուստներ տալով նահանջեցին, ոչ ոք ուզենալով, թե գուցե մարտը կհետաձգվի վաղվան։ Բայց Կրոմվելը, անհաջողությունից էլ ավելի զայրացած, գրոհի երկրորդ ազդանշանը տվեց։ Եվ դարձյալ հետևակայինները, կորցնելով մարդկանց, վաղեցին դեպի անկյունային աշտարակը և մինչև նրանց ջանքերն ապարդյուն անցան։ Պաշտպանները կրում էին մահն աչքերն առած։ Գնդապետ Քասլը, որ ուրիշ երեք սպաների հետ գլխավորում էր գրոհը, սպանվեց, հանրապետականների շարքերը խառնվեցին և անկանոն նահանջեցին, ետ փոփոխան նապաստակների պես շուրջները նայելով, ընկնելով, քարերի ու թփերի ետևում պահվելով։

Խայտառակությո՞ւն, անպատվությո՞ւն։ Նրա անպարտելի բանակն այդ ումի՞ց է փախչում. իռլանդացիների՞ց, որոնց իսկի մարդ էլ չի համարում քաջարի անգլիացին։ Ամոթի ու կատաղության պոռթկումը Կրոմվելին նետեցին ձիու վրա։ Նա ինքը կառաջնորդի գրոհը։ Նա ցույց կտա նրանց, թե ինչպես պետք է կռվել։ «Իմ ետևի՞ց...»։

Երրորդ գրոհը հաջող դուրս եկավ։ Պաշտպանները ետ մղվեցին բացվածքից. նրանք մարանչելով նահանջում են Միլ Մաունթ

www.a-pdf.com

միջնաբերդի կողմը։ Ոմանք արդեն գթություն են աղերսում, ոմանք փրկվում են նեղ կամրջակով քաղաքի հյուսիսային մասն անցնելով։ Դարպասները բաց են, և «երկաթակողների» մարտական նժույգները հեղեղի պես լցվում են բերդ, սմբակներով դոփելով հին սալաքարերը։

Էսթոնն իր մարդկանցով ամրացել էր Միլ Մաունթում, և Կրոմվելն այնտեղ է առաջնորդում իր այրուձին։ Նրա կատաղությունը մոլեգնում է։ «Ոչ ոքի չխնայե՛լ,— հրամայում է նա։ Խղճահարությունը տեղ չունի այս մարտում։ Նրա զինվորները, նրա սպաներն ընկնում են տասնյակներով, և խելահեղ զայրույթը մթագնում է նրա գիտակցությունը. «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման», Աստվածաշնչի հնամենի կոչը հնչում է որպես արդարացում։

Էսթոնի մի բուռ մարդկանց նրա հրամանով գլխովին ոչնչացնում են. Իր՝ Էսթոնի գլուխը ջարդում են իր իսկ սեփական փայտե ոտքով։ Միլ Մաունթը վերցված է։

Կրոմվելն ավելի է մոլեգնում. նա հրամայում է սրի քաշել բոլոր նրանց, ում որ տեսնեն թաղարում դենքը ձեռքին, և ճակատամարտը վերածվում է կատաղի կոտորածի։ Անգլիական զինվորները Դրոգեդի պաշտպաններին հետապնդում են նեղլիկ փողոցներում, բռնում են կամրջի վրա, և նրանք ահա արդեն քաղաքի հյուսիսային մասում են։ Նրանք շրջապատում են սուրբ Պետրոսի եկեղեցին և փողոցային կռվում սպանում ավելի քան հազար մարդ։ Ջանգակատանը թաքնվել են հարյուր իռլանդացիներ, կամ մոտավորապես այդքան, մյուսները ապաստան են գտել պատերին կպած փոքրիկ գմբեթներում։ Անձնատուր լինելու կոչին նրանք՝ ջանգակատանը պատսպարվածները, պատասխանում են մերժումով. այնժամ Կրոմվելը հրամայում է հրդեհել ջանգակատունը։ Եկեղեցուց քարշ են տալիս նստարանները, կուտակում են ներքևում, շտապ բերում են ծղոտի խրձեր, և ահա արդեն խարույկի լեզուները իրենց մեջ են առնում սրբազան պատերը, կրակը լիզում է հին փայտյա ծածկոցները, դրանք բռնկվում են և բոցեղեն լեզուները շարագուշակ լույսով բարձրանում են դեպի իրիկնացող երկինքը։ Ոմանք փորձում են դուրս թռչել պատուհաններից, նրանց վրա կրակում են, գետնին հասածներին սրախողխող են անում։

Գիշերվա վրա հասնելու հետ մարտը դադարեց։ Անգլիացիները կորցրել էին ընդամենը վաթսունչորս մարդ։ Բայց սպանությունները շարունակվում են հաջորդ օրը։ Նրանց, ովքեր պատսպարվել էին աշտարակներում, գիշերը պահել էին ուժեղ հսկողության տակ։ Առավոտյան դեմ աշտարակներից մի քանի կրակոցներ լսվեցին. սպանվեցին երկու թե երեք անգլիացի զինվորներ։ Իմանալով այդ, Կրոմվելը հրամայեց աշտարակների վրա եղած բոլոր սպաների գլուխները ջախջախել, յուրաքանչյուր

www.a-pdf.com

ասներորդ զինվորին սպանել, մյուսներին որպես նորություններ ուղարկել Բարբադոսի պլանտացիաները։

Հաջորդ բոլոր օրերին Կրոմվելի զինվորները, ասես թե արդեն համոզված, վիսում էին քաղաքում, փնտրում թաքնված ավառակորդներին։ Գտնելով սպանում էին նրանց։ Եվ կոտորում էին ոչ միայն նրանց, ովքեր զենքը ձեռքին պաշտպանել էին բերդը։ Նվաճողների գազանային կատաղությունը չէր խնայում նաև անզեններին. ո՛չ կանայք, ո՛չ երեխաները, ո՛չ վանականները չխուսափեցին նրանց անողորմ զայրույթից։

Մի քանի օր անց, արդեն Դուբլին վերադարձած, Կրոմվելը Կրոգեդի գրավման մասին հանգամանալի զեկուցագիր գրեց ափիքեր Լենթալին։ Նրա աչքերի առջևով նորից անցան գրոհի ահավոր ու այլանդակ տեսարանները, զանգվածային սպանությունները, արյունը։ Կրկին աչքի առաջ կանգնեց սուրբ Պետրոսի լանգակատան շուրջը նստարաններից արված կենդանի խարույկը, նա հիշեց բոցերի մեջ խորովվողների աղաղակները և այրվող մսի հոտը։ Նա ջանում էր ճշմարտացի ու անկանխակալ նկարագրել ամբողջ պատկերը, բայց այն անկանխակալ չէր ստացվում, չոր զինվորական հաշվետվության տակից անընդհատ դուրս էր սողում ինչ-որ բան. փորձ էր անում արդարանալ... ուզում էր ապացուցել, որ այդպես էլ հարկավոր էր։ Ինչի խա՞յթն էր հանգստացնում։

«Ճշմարիտն ասած,— գրել է նա,— ես մարտի թեժ պահին զինվորներին արգելեցի խնայել ով էլ որ լինի բռնված քաղաքում գենքը ձեռքին, և ես կարծում եմ, որ նրանք այդ գիշեր արի Լուշեցին մոտ երկու հազար մարդ... Ես համոզված եմ, որ դա արդարացի ատվածային դատաստան էր այդ բարբարոսների ու սիկաների նկատմամբ, որոնք իրենց ձեռքերը ներկում են հարավորների անմեղ արյունով, և որ դա կհանգեցնի ապագայում արյունահեղությունների վերացմանը, մի բան, որ բավարար կլինի հանդիսանում նման գործողությունների համար, որոնք հակառակ դեպքում չէին կարող հարուցել ուրիշ ոչինչ, բան լինի խայթ և ափսոսանք։ Այդ կայազորի սպաներն ու զինվորները կազմում էին բանակի ծաղիկը, և նրանք շատ մեծ հույս էին, որ մեր զորքը այդ բերդի վրա մեզ կործանման կտանի։»։

Եվ արդարանալու էլի մի փորձ, այս անգամ արդեն ատածո վրա դնելով կատարվածի պատասխանատվությունը.

«Այժմ ինձ բույլ տվեք ասել, թե ինչպես եղավ, որ այդ գործն գլուխ եկավ։ Մեզնից մի քանիսի աչքում նստած էր այն հավատը, թե մեծ գործերը պետք է կատարվեն ոչ թե իշխանության կամ ուժի, այլ ատվածային ոգու միջոցով։ Եվ մի՞թե դա պարզ չէ. Այն, ինչը մեր մարդկանց ստիպում էր զոհի գնալ այդպիսի խիզախությամբ, ատածո ոգին էր, որը տոգորում էր մեր մարդկանց արիությամբ, և դրանից զրկում մեր թշնամիներին, ի շնոր-

www.a-pdf.com

հիվ որի մեջ հաստատ հաջողության: Եվ այդ պատճառով ասում, միայն նրան է պատկանում ողջ փառքը...»:

Նա գրոհի երկու անհաջողությունից զայրացած էր, սրտնեղած էր մարդկանց կորստից. նա «տաքացած» վիճակում հրամայեց չխնայել հակառակորդին... Բայց մի՞թե զայրույթն արդարացումն է դաժանության: Նա բանը ներկայացնում էր այնպես, որպես թե Դրոգեդի կոտորածը վրեժխնդրություն էր անգլիացիների արյան դիմաց, որը թափվել էր 1641 թվականի ապստամբության ժամանակ: Բայց մի՞թե նա ինքը չէր հասկանում, որ Դրոգեդի կայազորը մեղավոր չէր այդ վաղեմի սպանությունների համար: Նա ենթադրում էր, թե այն արյունը, որ թափվեց դժբախտ բերդում, կկանխի արյունահեղությունը հետագայում: Բայց մի՞թե նա՝ բազում մարտերով իմաստնացած և անգամ թագավորին կառափնարան առաջնորդած մարդը, չգիտեր այն մեծ ու ահավոր օրենքը, թե հեղված ամեն մի արյուն բերում է նոր արյունահեղություն. «հողն այլ կերպ չի մաքրվում իր վրա թափված արյունից, քան իր վրա թափված արյամբ»:

Մնում էր բոլորը վերագրել աստվածային ոգուն. այդ նա էր զինվորներին տանում, այդ նա էր ուղղություն տալիս հենց Կրոմվելի ձեռքին, այդ նա էր պատասխանատու դիակների կույտերի համար: Իսկապես ասած, ոչ թե քրիստոնեական, այլ հին կտակարանի ոգին, մարտաշունչ ու վրիժառու ոգին կարող էր այդպիսի միտք ներշնչել: Հենց այդ ոգին էլ և իրեն՝ Կրոմվելին, իր զինվորներին, որոնք ինչ-որ ժամանակ ոգեշնչված էին բարության և հանդուրժողականության լուսավոր իդեալներով, այժմ դարձրել էր անողոք:

Սկզբում թվում էր, թե Դրոգեդի սահմռկեցնող օրինակը ներգործություն ունեցավ. անգլիացիների ձեռքը հանձնվեցին Դենգալքը, Թրիմը և մի քանի մանր բերդեր: Կրոմվելի ուղարկած ջոկատները շուտով հնազանդեցրին երկրի ողջ հյուսիսը: «Դժվար է պատկերացնել,— գրել է Օրմոնդը Կարլոս II-ին,— խռովարարների (այսինքն անգլիացիների) այդ հաջողությունն ու ուժը մեր մարդկանց ինչ մեծ սարսափ ներշնչեց: Նրանք այնպես են շվարած, որ ես նրանց միայն մեծ դժվարությամբ կարող եմ հարկադրել ինչ-որ բան անել անգամ իրենց անվտանգության համար»:

Կրոմվելը, մի որոշ ժամանակ անցկացնելով Դուբլինում, ուր եկել էր Եղիսաբեթը, պետք է այժմ ճանապարհվեր դեպի հարավ, դեպի Ուեքսֆորդ: Եկել էր անձրևոտ ու մռայլ սեպտեմբերը: Եղանակը օրըստօրե վատանում էր. ծովափից սուր քամի էր փչում: Ուեքսֆորդին մոտեցան հոկտեմբերի 1-ին, ճամբար զարկեցին նրա պատերի մոտ և սկսեցին բանակցություններ վարել այն հանձնելու մասին: Արշավային վրանները չէին չո-

www.a-pdf.com

բանում, զինվորները դողում էին հագուստների խոնավությունից, հիվանդությունները տարածվում էին։ Բոլորը երազում էին որքան հնարավոր է շուտ վերցնել Ուեքսֆորդը՝ կարևորագույն անգուցային նավահանգիստը, մերձավորագույնը Անգլիայի ափերին, ծովահենության հնամենի կենտրոնը։ Այնտեղ հույս ունեին տեղավորվել ձմեռային բնակարաններում, չորանալ, հանգստանալ։

Բանակցությունները ձգձգվում էին. բերդի ներսում, ինչպես և ամենուր Իռլանդիայում, միասնություն չկար հրամանատարների միջև։ Կայազորի պարետը մեկ համաձայնում էր հանձնել բերդը ընդունելի պայմաններով, մեկ էլ, համալրում ստանալով Օրմոնդից, հրաժարվում էր, ձգձգում էր, տատանվում։ Կրոմվելի զինվորների համբերությունը հատել էր, կատաղել էին։ Եվ այստեղ տեղի ունեցավ այն, ինչ Կրոմվելը հետագայում գնահատեց՝որպես «նախախնամության անսպասելի ողորմածություն». բերդականներից մեկը դավաճանեց... Հոկտեմբերի 11-ին պառլամենտական կատաղած զորքը՝ յոթ հազար հետևակ և երկու հազար այրուձի, հնարավորություն ստացավ առանց տանջալի պաշարման կամ արյունալի գրոհի ներխուժել բերդ։

Երբ Ուեքսֆորդի պաշտպանները ճանկնկալի եկած տեսան, որ իրենց դավաճանել են, որ ամրոցը հեղեղվում է անգլիացի զինվորներով, շփոթահար եղան և պարիսպներից իջնելով նետվեցին դեպի քաղաքի կենտրոն։ Իսկ գրոհը այդ միջոցին արգեն սկսվել էր։ Սանդուղքները հենված էին պաշտպաններից զուրկ պարիսպներին, անգլիացիները կատաղած, արագ մագլցում էին վեր։ Մի բանի րոպեում նրանք տիրացան արտաքին ամրություններին։ Բայց քաղաքում նույնպես ամրություններ կային, փողոցային բարիկադներ, և այնտեղ իռլանդացիները, ուշքի գալով անակնկալից, սկսեցին համառորեն դիմադրել։ «Մեր զորքերը,— գրում էր Կրոմվելը սփիքերին ուղղված զեկուցագրում,— ջախջախեցին նրանց, իսկ ապա սրի քաշեցին բոլոր նրանց, ովքեր կանգնած էին իրենց ճանապարհին: Երկու նավակներ, թշնամիներով լեփ-լեցուն, փորձում էին հեռանալ, բայց նրանք խորտակվեցին, այդ կերպ զոհվեց մոտ երեք հարյուր մարդ: Ես ենթադրում եմ, որ հակառակորդը ընդհանուր առմամբ կորցրած պետք է լինի ոչ պակաս երկու հազար մարդ և կարծում եմ, որ սկսած օպերացիայի սկզբից մինչև վերջը մեզնից սպանվեցին ոչ ավելի քան քսան մարդ»:

Եվ տարօրինակ բան, այդքան կարգավարժ, այդքան մեծահոգի իրենց տանը, կրոմվելյան զինվորները այստեղ՝ Իռլանդիայում, ասես թոկից փախած լինեին։ Նրանք սկսել էին կողոպտել։ Կրոմվելը ոչ թե դա թույլ էր տալիս նրանց, այլ աչքաթող էր անում, չէր կանխում, չէր պատժում։ Խաղաղ տներն էին

www.a-pdf.com

ներխուժում գաղանացած մարդասպանները՝ գնում վիրջերս իրենց հպարտորեն նոր տիպի բանակ անվանողները։ Նրանք Դահճակալների վրայից պոկում էին ծածկոցները, նկուղներից դուրս էին բերում գինի և ապուխտ, իսկ թե բնակիչներից մեկնումեկը համարձակվեր բողոքել՝ լիներ դա կին, ծերունի թե երեխա, նրան անողոքաբար սրախողխող էին անում և դրա հետ մեկտեղ ծանակում էին ու կրակի տալիս դատարկված, տակնուվրա եղած բնակարանը։

Իսկ եթե վանական կամ որևէ քահանա էր պատահում նրանց ճանապարհին, ջախջախում էին նրա գլուխը։ Նրանցից շատերը հատկապես թաքնվել էին վանքերում, բայց նրանք էլ չխուսափեցին ընդհանուրի ճակատագրից։ Ոմանք զինվորներին դիմավորում էին խաչելությունը ձեռքներին պահած և աղերսելով խնայել իրենց կյանքը, բայց խաչելությունը խլվում էր նրանց ձեռքից. մեղմաբարոյության ու թողության խորհրդանիշը դառնում էր սպանության զենք։

Կրոմվելին մնում էր ձեռքերը տարածել։ Նա ուզում էր պահպանել քաղաքը, օգտագործել ձմեռելու համար, բայց քաղաքը փլատակների էր վերածվել։ Նրա սեփական զինվորները բարբարոսական ավերման էին ենթարկել քաղաքը։ Ի՞նչ էր մնում անելու. «Այո՛, դա իսկապես որ շատ ողբալի բան է,— գրում էր նա Լենթալին ճակատամարտից երկու օր անց,— մենք բարիք էինք կամենում այս քաղաքին, հուսալով օգտագործել այն ձեր և ձեր բանակի կարիքների համար, այլ ոչ թե այդպես սաստիկ ավերել։ Բայց ասված դատեց այլ կերպ։ Նախախնամությունն անապատելի իր ողորմածությամբ, իր արդարացի գաստամբ դրա վրա ուղղեց իր վրեժխնդրության սուրը և քաղաքը դարձրեց զինվորների ավար, որոնք շատերին ստիպեցին արյամբ հատուցել այն դաժանությունների դիմաց, որ պատճառել էին խեղճ բողոքականներին»։ Եվ այստեղ, ինչպես և Դրոգեդում, մնում էր ողջ պատասխանատվությունը գցել աստծո վրա և խղճի խայթից դույզն-ինչ պաշտպանվել՝ վկայակոչումներ անելով երբեք, ինչ-որ տեղ, ինչ-որ մեկի կողմից կատարված դաժանությունները։

Քաղաքը մաքրված էր ոչ միայն պաշտպաններից, այլև բնակիչներից։ Հազիվ թե քսանից մեկը, հենց Կրոմվելի խոստովանությամբ, ողջ մնացած լիներ։ Կենդանի մնացածների մեծամասնությունը լքել էր քաղաքը և սպանվել էր արդեն նրա պատերից դուրս։ Ուեքսֆորդը դարձել էր անգլիական սեփականություն։ Եվ Կրոմվելն արդեն դրա վրա նայում էր տանտիրոջ պես, որպես իր ունեցվածքի, և երազում էր. «Ա՜յ թե լավ կլիներ, եթե ազնիվ մարդիկ (նա նկատի ուներ, իհարկե, անգլիացիներին) գային այստեղ և սկսեին մշակել հողը և ապրեին այստեղ, որտեղ այնքա՜ն շատ լավ տներ և ուրիշ շինություններ ու այլ հարմարություններ կան գործ սկսելու համար, և լավ կլիներ, եթե

www.a-pdf.com

ել խրախուսելիք դրանց: Այստեղ կծաղկեին արհեստներն ու գրականությունը՝ քաղաքից դուրս և նրա մեջ, հրաշալի հնարավորություններ կբացվեին ծովատառեխի որսի և ձկնորսության համար»:

*Մի որոշ ժամանակ անց, արդեն հունվարին, ի պատասխան լանդական կաթոլիկ հոգևորականության կողմից ընդդեմ Միլների հռչակված «սրբազան պատերազմի», ի պատասխան գալիին բոլոր ուժերը միավորելու, մի միություն կազմելու անց կոչին, Կրոմվելը հրապարակում է մի դեկլարացիա՝ շատ ունակալից մի փաստաթուղթ, սեղմ տպատառի տասը էջից զկացած. «Միությո՞ւն եք ուզում դուք,— գրում է նա։— Ասա- ողորմածությամբ մենք չենք վախենում ոչ մի միությունից: Ձեր միությունը մահի հետ է, դժոխքի... Դուք անգլիացիներին մարում եք ձեր թշնամիները: Անգլիացիներին: Հիշեցեք դուք, ասպաշտներ, չէ՞ որ Իռլանդիան մի ժամանակ միավորված էր Անգլիայի հետ: Անգլիացիներն այնտեղ ունեին իրենց հողերը, ժառանգված իրենց հայրերից, որ նրանք գնել էին իրենց սեփական փողով... Նրանք ձեր մեջ ապրում էին խաղաղ ու բարեպաշտ. դուք ավերեցիք այդ միությունը: Դուք, անհայտ է, թե ինչու անգլիացիներին ենթարկեցիք ամենաանլուր և ամենաբարբարոսական կոտորածի (չնայելով ո՛չ սեռ, ո՛չ հասակ), որ երբևէ կատարվել է լուսնի տակ... Մի՞թե ես իրավացի չեմ... Մի՞թե ասված կարող է ձեր կողմը լինել: Ես հավատացած եմ, որ ոչ»:

Այդպես ուրեմն, պարզվում է, թե ով է մեղավոր անգլիական ունակի դաժանությունների համար. իրենք՝ իռլանդացիները: Ոչ այն Կրոմվելը, այլև պառլամենտի անդամներն այնտեղ՝ Լոնդոնում, ամբողջ սպայությունը և Սիթիի դրամատերերը, բոնրանք ովքեր կազմակերպել էին արշավանքը, իրենց խսկան նպատակները քողարկում էին իր լկտիությամբ՝ ու իր վ նմանը չունեցող այս բացատրությամբ:

Իսկ իռլանդացիներին ուղղություն տվող ձեռքը, որ դրդում է ությունն, նրանց կարծիքով, կաթոլիկ հոգևորականությունն Այդ նրանք են խոովել ժողովրդին, այդ նրանք են ի խախ- մն օրենքների, որոնք հրատարակվել են դեռևս Եղիսաբեթ ուհու կողմից, իրենց դիվային պատարագներն անում: նք եկանք այստեղ,— շարունակում է Կրոմվելը,— պատաս- ան պահանջելու թափված անմեղ արյան համար... Մենք եկանք նչացնելու խոռոչարարների անօրեն իշխանությունը... Մենք նք (ասածս օգնությամբ) պահպանելու և ամրացնելու անգլիական ազատության փայլուն փառքը այն ազգի մեջ, որտեղ մենք դրա համար ունենք անտարակուսելի իրավունք...»:

Իսկ ինչպե՞ս է հանդուրժողականության հարցը: Գովաբանված ինդեպենդենտների կրոնահանդուրժողականությունը, որի համար այնքա՞ն նիզակներ են կոտրվել, այնքա՞ն արյուն է հեղ-

www.a-pdf.com

վել բուն Անգլիայում։ Դա մոռացությա՞ն է տրված։ Ո՛չ բոլորովին։ «Դուք հիշատակում եք խղճի ազատության մասին։ Ես երբեք չեմ միջամտում խղճի գործերին։ Բայց եթե խղճի ազատության տակ դուք նկատի ունեք պատարագ անելու ազատությունը, ես կարծում եմ, որ ավելի լավ է այստեղ ուղղակի ասել, և թող հայտնի լինի ձեզ. քանի դեռ իշխանությունը Անգլիայում պառլամենտի ձեռքում է, այդ չի թույլատրվի»։

Ուեքսֆորդում ձմեռելու հարկ չեղավ, և Կրոմվելը ավելի առաջ գնաց՝ նվաճելու կղզու արևմուտքն ու հարավը։ Մի քանի բերդեր նրան անձնատուր եղան առանց կռվի, մյուսները համառորեն դիմադրում էին և հարկ էր լինում գրավել գրոհով։ Նոյեմբերին նա ամբողջ բանակով պաշարեց Ուոթերֆորդը՝ Շուրի գետաբերանի նավահանգստային քաղաքը։ Եվ այստեղ նրան մեծ անհաջողություն պատահեց. քաղաքացիների պաշտպանությունն այնքան ուժեղ էր, որ քաղաքը ոչ մի կերպ չհաջողվեց վերցնել։ Դրան ավելացրած և այն, որ նվաճողների մեջ հիվանդություններ սկսվեցին։ Սառն ճահճուտների ժանտահոտը տարածում էր դողէրոցք։ Արշավային ճամբարների կեղտն ու անբարեկարգ վիճակը պատճառ դարձավ դիզենտերիայի բռնկման։ «Իմ ապաներից մառասունից գրեթե մեկն այժմ հիվանդ է, և ինչ-մա՞ն շատ արժանավորների կորցրինք մենք, որ մեր սրտերը կսկիծով է լցնում»,— գրել է Կրոմվելը նոյեմբերի 14-ին։ Մեռավ դնդապետ Հորթոնը, երկրորդ քաղաքացիական պատերազմում նրա մարտական ընկերը, զոհվեցին էլի շատ սպաներ ու զինվորներ։

Կրոմվելն ինքը վազուց արդեն անտանելիորեն վատ էր զգում։ Մեկամ կշտամբելով իր սիրելի Դորոթիին՝ հաճախ գրելու մասին իր խոստումը խախտելու համար («Դիկի մասին էլ չեմ խոսում, ես նրանից դա չեմ էլ սպասում, գիտենալով նրա ծույլ լինելը»), Կրոմվելը խոստովանում էր նրա հորը, որ իր առողջությունը քայքայվում է։ Հենց այստեղ՝ Իռլանդիայի հոտած ճահիճներում տիրացավ նա այդ հյուծիչ հիվանդությանը, որը այնուհետև մինչև կյանքի վերջը իրեն զգացնել տվեց նեղքին դժոխային դողի անսպասելի նոպաներով, դող, որից ծնոտները էին դափկափում, և ձեռքերը չէին ենթարկվում, այնուհետև ջերմը՝ համառյա մինչև գիտակցության կորուստ, առատ քրտինք թուլություն, լիակատար անտարբերություն։

Նոյեմբերին բոլոր այդ ազետներին ավելացավ և գեղձուռուցքի ժանտախտը, որ հնձեց զինվորներին։ Բայց Կրոմվելն օր ու դադար չէր տալիս ոչ զինվորներին, ոչ իրեն. նա գիտեր, որ յուրաքանչյուր րոպե կարող է որևէ բան պատահել տանը, այնտեղ, որին նվիրված էին նրա բոլոր խոհերը։ Եվ այդ դեպքում հարկ կլինի դեն նետել բոլոր գործերը և սուրալ այնտեղ՝ Լոնդոն։ Դրա համար էլ պետք է հասցնել քանի դեռ այստեղ է, անել որքան

www.a-pdf.com

պարելի է ավելին, ամրապնդել հաղթանակը, մաքրել գլխավոր կետերը խոովարարներից։

Բայց Ուոթերֆորդը անձնատուր չէր լինում։ Զբաղվելով դրա-նով մոտ մեկ ամիս և իրեն զգալով այնքան թույլ, որ անկարող էր դրոհի ձեռնարկել, Կրոմվելը վերացրեց պաշարումը և քաշվեց ձմեռային կացարանները։ Կարելի էր և հանգստանալ. Իռլանդիայի ամբողջ արևելյան և հարավարևելյան ափերը հյուսիսի Լոնդոնդերրիից մինչև հարավի (չհաշված Ուոթերֆորդը) Քլեր բլանդանը նրա ձեռքին էր։ Հոկտեմբերին Օ'Նեյլը մահացել էր, պլխատվել էր իռլանդացիների բանակը։ Հենց հոկտեմբերին էլ Քորքի կայազորը խոովություն բարձրացրեց և միացավ պառլամենտական զորքերին։ Նրա օրինակին հետևեցին էլի մի քանի ոնոշան բերդեր։

Դեկտեմբերը բերեց ևս մի կորուստ. ժանտախտը տարավ Միթչել Ջոնսին՝ փորձառու և անվեհեր մի զորականի։ «Ասել, թե ինչ կորուստ կրեց Անգլիան,— մորմոքվում էր Կրոմվելը,— վեր է իմ ուժերից։ Ես համոզված եմ, որ կուրցրի մի վեհանձն բարեկամի և աշխատանքային ընկերոջ... Այո՛, իսկն ասած, մեր ընկերական միությունը փլուզվում է...»։

1650 թվականի հունվարին արդարացան Կրոմվելի կանխազգացումները. լուր տարածվեց, թե նրա ներկայությունը Անգլիայում անհրաժեշտ է և նրան շուտով ետ կկանչեն։ Հարկավոր էր հասցնել նվաճել Մենսթեր գավառը, և Կրոմվելը հունվարի 29-ին դուրս է գալիս ձմեռային կացարանից և կրկին իր հոգնատանջ զորքերով արշավի գնում։ Նա առանց դժվարության գրավում է մի քանի մանր բերդեր։ Բայց դեռ վաղ էր ամբողջ երկիրը նվաճված համարել։ Հարկավոր էր թափանցել երկրի խորքը՝ կտրվելով առափնյա նեղ շերտից, իսկ դա էլ հենց ամենից դժվարն էր։ Իռլանդիայի կենտրոնն ու արևմուտքը՝ այդ անանցանելի վայրի շրջանները, մասամբ լեռնային, մասամբ ճահճային, ջրառատ գետերով ու լճերով կտրված, հիանալի պայմաններ էին ստեղծում պարտիզանական հանկարծակի հարձակման համար, անակնկալ վնասարարումների համար։ Եվ կարելի էր չտարակուսել. այդպիսի պատերազմը առավել ևս հյուծիչ կլինի նվաճողների համար։ Իսկն ասած, այն արդեն սկսվել էր։ Որքան ավելի էր Կրոմվելը խորանում կանաչ բլուրների երկրի խորքը, նրա զորքերն այնքան ավելի էին զգում բնակիչների դիմադրությունը։ Դրոգեդի բոցը վառում էր նրանց ատելությունը, և այժմ դրանից չէր կարելի գլուխն ազատել։ Լեռնային ու հարթավայրային տոհմերը ուրի էին եկել ոգեշնչված կելտական հինավուրց կանչերով։ Գյուղացիները պաշտպանում էին իրենց յուրաքանչյուր թիզ հողը։ Անգլիացի դինվորներն սպանում էին կանանց ու երեխաներին, այժմ կանայք ու երեխաներն էին պատերազմի մեջ մտել իրենց ստրկաց-

www.a-pdf.com

նողների դեմ։ Նրանք բոլորը դարձել էին տորիներ՝ ավազակներ, որոնք իրենց ատելությունն ուղղել էին ընդդեմ անգլիացիների։

Կրոմվելը փոխել էր տակտիկան։ Այժմ նա արգելում էր կողոպտել, խնայում էր տեղական բնակիչներին, կյանք էր պարգևվում հպատակվող կայազորներին։ Նա ներում շնորհեց նույնիսկ կաթոլիկ հոգևորականությանը։ Լորդ Օրմոնդին և Ինչիքուինին՝ հակառակորդ զորքերի երկու հրամանատարներին, նա թույլատրեց անարգել թողնել Իռլանդիան և նավարկել դեպի մայր ցամաք (ուղած երկիրը,-բացի Անգլիայից, Ուելսից ու Շոտլանդիայից, ասված էր թույլատրության փաստաթղթում)։ Բայց պայքարը սաստկանում էր։ Կիլքենիի կառավարիչը, որից Կրոմվելը պահանջեց հանձնել բերդը, պատասխանեց, թե ավելի շուտ կմեռնի իր ողջ կայազորով, քան թե անձնատուր կլինի։

Հարկ եղավ խորամանկության դիմել։ Մարտին Լեյնսթերում շրջապատեցին Գաուրան ոչ մեծ բերդը։ Անձնատուր լինելու առաջարկին պարեսը պատասխանեց մերժումով։ Կրոմվելն սկսեց կրակ տեղալ, և երկու օրվա կործանիչ հրետակոծությունից հետո պարեսը համաձայնեց հանձնել բերդը որոշակի պայմաններով։ Նրան առաջարկեցին հանձնվել՝ առանց «հաղթողի ողորմածությանը ապավինելու» պայմանագրի ստորագրման։ Բերդը հանձնվեց, իսկ հետևյալ օրը բոլոր սպաներն անխտիր գնդակահարվեցին, կաթոլիկ քահանան կախաղան հանվեց։

Այդ ամենի համար իռլանդացիները վրեժ էին լուծում ինչով որ կարող էին։ Քլոնմել բերդի պաշտպանները, որն անգլիացիները պաշարել էին ապրիլ-մայիսին, հենց անմիջապես բերդապարիսպների տակ, կրակի գծի երկայնքով փորել էին խորը խրամներ, դրանց վրա էին շարել քարե վիթխարի բարիկադներ և տեղադրել թնդանոթներ։ Այստեղ էլ, ինչպես և շատ այլ տեղերում, դավաճանի պակաս չդգացվեց։ Մի ոմն Ֆեննել, որ կաշառված էր Կրոմվելից հինգ հարյուր ֆունտով, պետք է կեսգիշերին դարպասը բաց աներ անգլիական զինվորների առաջ։ Դավադրությունը, սակայն, բացվեց, և Կրոմվելի զինվորները, մոտ հինգ հարյուր մարդ, որոնք կեսգիշերին, ինչպես և պայմանավորված էր, մտել էին բերդ, բոլորը, մինչև վերջին մարդը մորթոտվեցին։ Մայիսի 17-ին, այն բանից հետո, երբ արտաքին պարսպի մեջ բաց արվեց բավականաչափ մեծ ճեղքվածք, Կրոմվելը գրոհի ազդանշան տվեց։ Բայց երբ անգլիական հետևակայինները սալմոսներ երգելով ներխուժեցին պարսպից ներս, թնդանոթները, որ սքողված էին բարիկադների ետևում, հարվածեցին սարսափելի կրակով, և երկու հազարից ավելի անգլիացիներ պառկեցին նեղ միջանցքում, բարիկադների և պարսպի արանքում։ Կրոմվելը աչալուրջ հետևում էր, նստած նժույգին, գլխավոր դարպասի մոտ։ Այն չէր բացվում։ Գլխի ընկնելով, թե բանն ինչումն է, նա սաստիկ զայրացավ և հրամայեց կոկնել գրոհը՝ այս անգամ դործի դնելով իր այրուձին։ Եվ կրկին հարյուրավոր զին-

www.a-pdf.com

վորներ ընկան, իսկ բերդը դեռևս կանգուն էր։ Ստիպված էր նահանջել։ Առավոտյան դեմ պաշարողներին այցելեց քաղաքապետը՝ քաղաքը հանձնելու մասին առաջարկով։ Կրոմվելը պատասխանում էր հանձնել բոլոր զենքերն ու հանդերձանքը և խոստանում էր խնայել խաղաղ բնակիչներին, պահպանել նրանց իրավունքները և ազատ պահել ունեցվածքը թալանից։ Պայմանները ստորագրվեցին, և կեսօրին մոտ նա մտավ քաղաք։ Բայց քաղաքը դատարկ էր. ամբողջ կայազորը և բնակիչներից շատերը գիշերվա քողի տակ լքել էին Քլոնմելը։ Կրոմվելին հիմարացրել էին։

Խորհել փոխհատուցման մասին այժմ արդեն ուշ էր։ Ապրիլի 1-ին Պետական խորհուրդը հրաման արձակեց Կրոմվելի Անգլիա վերադառնալու մասին։ Նրան ճակատամարտի նոր դաշտ էր սպասում, այս անգամ հյուսիսում՝ Շոտլանդիայում։ «Պրեզիդենտ» նավն ուղարկվեց նրա ետևից Բրիսթոլից, և մայիսի 26-ին սքանչողը թողեց «Կանաչ կղզու» ափերը, դրա հետագա նվաճումը վստահելով Այրթոնին։ Իռլանդիայի ինքնուկես ամիս տևած արյունալի հպատակեցումը մնաց ետևում։

Բայց դեռ երկար ժամանակ պիտի արյուն հեղվի Իռլանդիայի տնտառներում ու դաշտերում, լեռներում ու քաղաքներում, դեռ երկար պիտի որոտան անգլիական թնդանոթները իռլանդական բերդերի պարիսպների տակ, և ավերեն ու ավերեն այդ պարիսպները երկիրը ցնցող հարյուրավոր հարվածներով։ Դեռ երկար պիտի փոխադարձ ատելությամբ վառվեն անգլիացիների ու իռլանդացիների սրտերը, բողոքականների ու կաթոլիկների, ստրկացնողների և ապստամբների սրտերը։ Այրթոնն այդ պատերազմը կվարի կյանքի գնով, հնազանդեցնելով ազատասեր ժողովրդին, կռիվ տալով սովի ու համաճարակների դեմ իր զորքերի մեջ. նա կմեռնի ժանտախտից, այդպես էլ չվերադարձած, չտեսած իր կնոջը՝ Բրիջեթին, Կրոմվելի դստերը։ Եվ միայն երկու ձիգ տարի հետո երկիրը կհնազանդվի, վերջին բերդը կընկնի, և մի նոր լեյտենանտ-գեներալ՝ Չարլզ Ֆլիթվուդը, որ կփոխարինի Այրթոնին ոչ միայն Իռլանդիայում, այլև Բրիջեթի սրտում, կտանի հաղթանակը։

Այդ պատերազմը իռլանդացիներին երկար դարերի ստրկություն, կախում բերեց Անգլիայից։ Երկիրն ավերակների էր վերածվել։ Բնակչության մեկ երրորդը զոհվել էր, հազարավոր բնակիչներ հեռացել էին երկրից, բախտ փնտրելով մայր ցամաքում կամ օվկիանոսից անդին։ Հազարավոր մարդկանց վաճառել էին ստրկության։ Երկրի տնտեսական զարգացումը երկար ժամանակ արգելակված էր, քաղաքականապես այն դարձել էր իրավազուրկ։ Համաձայն «Իռլանդիայի կառուցվածքի մասին ակտի», որ ընդունվել էր Երկարատև պառլամենտի կողմից 1652 թվականին, բոլոր նրանք, ովքեր մասնակցություն էին ունեցել անգլիացիների դեմ պայքարին, զրկվում էին հողից և ունեցված-

www.a-pdf.com

քից ու արտաքսվում էին երկրից կամ տեղափոխվում կղզու արևմըտյան անբերրի շրջանները։ Շատ քաղաքներ և ամբողջ գավառներ լրիվ «մաքրված» էին իռլանդացիներից։

Իսկ Անգլիա՞ն։ Նա, թվում էր, թե շահեց. նվաճված տարածությունները անցան անգլիացիների ձեռքը։ Հողի վերավաճառքով զբաղվողներն սկսեցին մանր հողակտորներ գնել, որոնք բաժանված էին զինվորներին, և շուտով Իռլանդիան դարձավ խոշոր լենդլորդերի բուծարան։ Բայց լենդլորդերի համար չէին կարող նվիրական լինել հանրապետության իդեալները։ Դրա համար էլ, երբ ժամանակ անցավ, երբ Կրոմվելի ահեղ անունը դադարեց զսպել ու ահաբեկել նրանց, նրանք պատրաստակամորեն ողջունեցին Ստյուարտների հին տոհմի «օրինական» միապետին՝ նախկին Ուելսի արքայազն Կարլոս II-ին։ Իսկ միակ ո՞ւժը, որ ընդունակ էր դիմակայել դրան՝ փառասլանծ անհաղթելի բանա՞կը, որ կառափնարան էր տարել Կարլոս I թագավորին և Անգլիայում հանրապետություն հաստատել. որտե՞ղ էր այդ բանակը։ Այն այլևս Անգլիայում չէր։ Նրա փոխարեն փառապանծ նվաճող Կրոմվելի ետևից գնում էր լկտի, ավազակաբարո մի բանակ, պատրաստ կողոպտելու, սպանելու, բռնանալու հանուն շահառության, հանուն բարձր վճարումների, հողերի, հարստությունների։ Իռլանդիան վերասերեց կրոմվելյան զինվորներին։ Բայց հենց նա էլ դարձավ հանրապետության գերեզմանը։ «Անգլիական հանրապետությունը Կրոմվելի ժամանակ ըստ էության ջախջախվեց Իռլանդիային զարնվելով»,— գրել է Կարլ Մարքսը երկու հարյուրամյակ անց։

2 ՇՈՏԼԱՆԴԻԱ

Եվ կրկին թնդում էին ողջույնի կանչերը, և կրկին Կրոմվելը հաղթանակած անցնելով իրեն փառաբանող ամբոխի միջով, իրեն զգում էր ասածո դատաստանն իրականացնող, երջանիկ կրողը նրա ողորմածության ու շնորհների։ Բրիսթոլում՝ անգլիական հողում, ուր նա ամի իջավ իննամսյա բացակայությունից հետո, ողջ քաղաքը հավաքվել էր կառամատույցում, որպեսզի դիմավորեր նրան։ «Վիվատ» ցնծագին կանչերից ասես ավելի զվարթ էին փողփողում դրոշները, ավելի գունեղ էր շողշողում գենք ու զրահը, ավելի բարձրաձայն էին որոտում հրանոթները։ Վինձորում նրան դիմավորեց Ֆերֆաքսը բարձր սպայության հետ, պառլամենտի անդամները։ Լոնդոնում, Հայդ-պարկում, սպասում էին քաղաքագլուխն ու օլդերմենները՝ շքերթային շարքով անշարժ կանգնած միլիցիայի հետ։ Այստեղ ևս որոտաց հրետանային ողջույնը։

Նրա ժամանման տեղը նշանակված էր Սենթ-Ջեյմսյան պալատը, և նրա ողջ ճանապարհին ողջունում էին ցնծագին բնակիչները։

www.a-pdf.com

— Տեսե՛ք, թե ինչպիսի ամբոխ է հավաքվել նայելու ձերդ ներազանցության հաղթահանդեսը,— ետևից նրա ականջին հասավ ինչ-որ մեկի քծնական շշնջոցը։ Նա տիրապետում էր հումորի զգացմանը և պատասխանեց.

— Երբ ինձ կախելու լինեն, էլ ավելի մեծ ամբոխ կհավաքվի։

Բայց այդպիսի ընդունելությունն իր հայրենիքում, այնուամենայնիվ, ուրախացնում էր նրան։ Էնդրյու Մարվելը՝ հայտնի բանաստեղծը, Կրոմվելի պատվին հորինել էր մի հանդիսավոր ներբող.

Ինչքան բարի է նա, ինչքան մարդամոտ,
Նախանձախնդիր՝ ճշմարտության հանդեպ,
Ինքը չէ, որ հրաման է արձակում
Հանրապետությունն է նրան առաջնորդում։
Նա է միայն ընդունակ զեկավարելու,
Ով կարողանում է ինքն իրեն զեկավարել։

«Քաղաքական Մերկուրի» կառավարական լրագիրը հիանում էր Իռլանդիայում նրա ունեցած սքանչելի հաջողություններով, որոնք ի լրումն նրա անգլիական հաղթանակների ծաղկաշրջիկի, ողջ աշխարհի աչքում նրան պսակեցին որպես ամենահմաստունը և ամենակատարյալ առաջնորդը այժմ ապրող և անցած բոլոր սերունդների մեջ»։

Բայց նրան վիճակված չէր երկար լինել տանը։ Նոր մեծագործություններ էին սպասում նրան՝ մի նոր գժվարին արշավանք։ Դրա համար էլ նրան Իռլանդիայից ժամանակից շուտ էտ կանչեցին։ Վտանգն այժմ դարձյալ հյուսիսից էր գալիս։ Շոտլանդիայում մոայլաղեմ պրեսբիտերականները, որոնցից, իսկն ասած, սկիզբ էր առել ողջ այդ շփոթն Անգլիայում, չէին հաշտվում Կարլոս Մայուսյուի մահապատժի հետ։ Նրանք վրդովմունքով նրեսը շուռ էին տվել հանրապետությունից՝ և՛ Արգայլը, որի հետ Կրոմվելին հաջողվել էր պայմանավորվածության գալ քառասունութ թվականին, և՛ գլխատված Համիլտոնի կուսակցությունը՝ բոլորն այժմ ռոյալիստներ էին։ Հենց որ միապետի գլխատման լուրը հասավ Էդինբուրգին, անմիջապես, 1649 թվի փետրվարի 5-ին, նրա որդին և Կարլոսի ժառանգորդը թագավոր հռչակվեց, թագավոր՝ ոչ միայն Շոտլանդիայի, այլև Անգլիայի և Իռլանդիայի։ Լոնդոնում շոտլանդական լիազորները մի անգամ ևս հայտնելով իրենց գժգոհությունը՝ նավարկեցին դեպի Հոլանդիա, նոր թագավորի հետ բանակցություններ վարելու համար։ Նրան առաջարկեցին ամենից առաջ ճանաչել Կովենանտը և պրեսբիտերականությունը դարձնել Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի պետական կրոն։

Երիտասարդ արքայազնը ժառանգել էր հոր կեղծավորությունը, ճարպկությունը և նենգությունը, բայց զուրկ էր նրան հատուկ բարեպաշտությունից և արժանապատվությունից։ Քանի դեռ հույս կար կաթոլիկական Իռլանդիայում հաջողության հաս-

www.a-pdf.com

նելու, նա շոտլանդացիների գլուխներն էր յուղում՝ չասելով ո՛չ հա, ո՛չ չէ, իսկ երբ Կրոմվելի դաժան սուրը խորտակեց նրա հույսերը, նա հենվեց Շոտլանդիայի վրա։ 1650 թվականի մայիսի 1-ին հոլանդական Բրեդա քաղաքում, որտեղ նա վերադարձավ Ջերսի կղզուց, համաձայնագիր ստորագրեցին. Կարլոսը ընդունում էր Կովենանտը և պարտավորվում էր հիմնել պետական պրեսբիտերական եկեղեցի բոլոր երեք թագավորություններում, Շոտլանդիային տալիս էր համեմատական ինքնուրույնություն և հրաժարվում էր իր նախկին դաշնակիցների՝ կոմս Օրմոսդի և մարկիզ Մոնթրոզի հետ ամեն տեսակի հարաբերություններից։ Հունիսի 10-ին նա վերադարձավ Շոտլանդիա։ Անգլիային սկսեց ներխուժում սպառնալ հյուսիսից։

Հանրապետության կառավարությունը ստիպված էր գործել շուտափույթ և վճռական։ Գեներալ Ֆերֆաքսին առաջարկեցին առաջվա պես լինել նոր էքսպեդիցիայի գլխավոր հրամանատարը, Կրոմվելին՝ նրա տեղակալը։ Բայց Ֆերֆաքսը հանկարծ հրաժարվեց։ Հավանորեն, դատավճռից ու մահապատժից ստացած տպավորությունը, իսկ գուցե և կնոջ և համախոհ պրեսբիտերների հորդորները՝ սասանեցին նրա հավատարմությունը։

Կրոմվելին դա մտահոգություն պատճառեց։ Նա սովոր էր զորքերը շարժման մեջ դնող շողշողուն զսպանակ լինել պատվավոր, բոլորից հարգված գեներալի թիկունքում։ Պաշտոնապես համարվելով բանակում երկրորդ դեմքը, գործնականում հանդիսանում էր նրա գլխավոր հրամանատարը. այդպես ավելի հարմար էր։ Լամբերթի, Հարիսոնի, Սենթ-Ջոնի և Ուայթլոքի հետ նա փորձեց համոզել Ֆերֆաքսին։ Նա իրեն պահում էր հարգալիր, արժանապատվությամբ, հավատացնում էր, թե ինքը նվիրված է պառլամենտին ու սպայությունը, բայց շոտլանդական արշավանքը գլխավորելուց կտրուկ հրաժարվեց։ Ներխուժել Շոտլանդիա՞։ Նա դրա համար չէր տեսնում բավարար հիմքեր։

— Մենք շոտլանդացիների հետ կապված ենք Աղգային լիգայով և Կովենանտով,— ասաց նա։— Հակառակ դրա և նրանց կողմից առանց որևէ ծանրակշիռ պատճառի հարձակվել նրանց վրա զորքերով և պատերազմ փաթաթել նրանց վզին՝ ես չեմ կարող դրա համար արդարացում գտնել ոչ աստծո, ոչ էլ մարդկանց առաջ։

— Ես համաձայն եմ, միլորդ,— համոզում էր Կրոմվելը,— որ եթե նրանք մեզ ներխուժման առիթ չտային, մենք իրավունք չէինք ունենա այդ անելու։ Բայց, միլորդ, նրանք ախր ներխուժել են մեր երկիրը, ինչպես լավ հայտնի է ձերդ գերազանցությանը, Կովենանտի կնքումից հետո և հակառակ դրա պայմանների։ Իսկ այժմ նրանք մեզ շատ հիմքեր են տալիս կասկածելու, որ մտադրվել են երկրորդ ներխուժումը կատարել իրենց արքայի հետ միասին, որի հետ նրանք դաշինք են կնքել... Նրանք արդեն դրա համար զորքեր ու փող են հավաքում։ Վախենում եմ,

www.a-pdf.com

Լրտեսը նրանց հետ անխուսափելի է. դե ուրեմն ավելի լավ
ոչինը մենք սկսենք։

Լրիվաքսը չէր կիջում, նա ասում էր, որ Համիլտոնն արդեն
գրած է, որ շոտլանդական նոր պառլամենտը չի ճանաչել
Լրիվաքս, որ հավաստի տեղեկություններ ներխուժման մասին
Կրոմվելը աղաչում էր մտածել բանակի մասին, քծնում էր՝
տալով գեներալի ծառայությունը, մատնանշում էր այն
դեպքերը, որոնց ենթարկում էր նա հանրապետությանն իր
հավատարմությամբ։ Բայց բոլորն ապարդյուն անցան։

Ես պատասխանատու եմ միայն իմ խղճի առաջ,— ասաց
Լրիվաքսը։— Ես չեմ կարող անել այն, ինչը թվում է կասկածելի։
Կոմիսարները հեռացան նրանից ձեռունայն, և անգլիական
հանրապետության բոլոր զինված ուժերի գլխավոր հրամանա-
տար նշանակվեց Կրոմվելը։ Նրա հետ մեկտեղ, որպես գնդերի
մոնիտորներ, Շոտլանդիա պիտի ուղարկվեին կոիվներում
փորձված գեներալ Լամբերթը, Ռոբերտ Լիլբեռնը՝ «աղատածին
Լ» եղբայրը, և Չարլզ Ֆլիթվուդը, մի ջենտլմեն-հողատիրոջ
տարեց որդին, մի ընդունակ զորական, որը քառասունյոթ թվին
բանկից եղավ ագիտատորներին և, ինչպես ասում էին, սերտ
կապեր էր պահպանում բանակի աղանդավորների հետ։ Թափուր
մնացած տեղերից մեկի համար Կրոմվելը հրավիրեց ծառայու-
թյունից արձակված գնդապետ Ջորջ Մոնքին։

Մեկնելուց առաջ Կրոմվելը հասցրեց անել մի քանի կարևոր
գործ. գլուխ բերեց իր նախկին ընկերոջը, իսկ այժմ գրեթե
թշնամուն, Էդմունդ Լեդլոյին Իրլանդիայում նշանակելու գործը։
Սակայն հանրապետականը չէր կարողանում Կրոմվելին ներել
դավորի հետ 48 թվականի աշնանը բանակցություններ վարելու
համար։ Դեմոկրատ ու հումանիստ Լեդլոն նրան դատապարտում
էր Ռիչարդ Առնոլդին գնդակահարելու և լևելերական շարժը
ճնշելու համար։ Կրոմվելը նրան հրավիրեց սրտաբաց
զրույցի, բացատրեց, որ ինքն այլ կերպ չէր կարող և խոստա-
նում ապագայում աջակցել ռեֆորմներին, հատկապես իրավունքի
գրմանը։ Լեդլոյին խնդրեց ընդունել իր նշանակումը Իրլան-
դիա. այնտեղ հենց այդպիսի աղնիվ, ողջամիտ, գործարար
մարդիկ են հարկավոր։ Լեդլոն տեղի տվեց, համաձայնեց, և շու-
տով այդ վտանգավոր օպոզիցիոնները հեռու էր Լոնդոնից։ Հենց
նաև էլ՝ Իրլանդիա ուղարկեց Կրոմվելը նախկին ագիտատոր
Իրիին։

Գերջին երեկոյան մեկնելուց առաջ Կրոմվելն ընթրեց Լիլ-
բեռնի հետ։ Աղմկալի դատից և իր փայլուն պաշտպանությունից
հետո անցած տարի աշնանը Լիլբեռնը փոքր-ինչ խաղաղվել էր։
Ամարդեն Կրոմվելին չէր խարանում դավաճանի անունով, մե-
ղադրանքների տարափ չէր տեղում հանրապետական իշխանու-
թյան վրա, բայց նա դեռևս վտանգավոր էր։ Հրաժեշտի խոսակ-

www.a-pdf.com

ցությունը, սակայն, խաղաղ ստացվեց։ Բաժանվելիս նրանք ողջագուրվեցին, և Կրոմվելը հանդիսավոր խոսքեր ասաց.

— Իմ ողջ ուժն ու ազդեցությունը, որ ես ունեմ այս աշխարհում, ես կօգտագործեմ այն բանի համար, որպեսզի Անգլիային հնարավորություն տրվի ճաշակել բանակի կողմից արված խոստումների ու դեկլարացիաների իրական պտուղները։

Լիլբեռնի սիրտը վառվեց մի հույսով. դա կնշանակեր, ինչպես նա կարծում էր, որ Կրոմվելը Շոտլանդիայից վերադառնալուն պես Անգլիայում կհաստատի հետևողականորեն փոփոխվող պառլամենտների իշխանություն, որոնք կընտրվեն ամբողջ ժողովրդի կողմից, ընտրական հավասար իրավունքի հիման վրա։ Հետագայում նա այդ խոսքերը կգետեղի իր պարսավագրերից մեկում։

1650 թվականի հուլիսի 22-ին Կրոմվելն իր զորքերով մոտեցավ շոտլանդական սահմանին։ Նրան սպասվում էր մի անգամ ևս կռիվներով անցնել անբարեհամբույր լեռնային երկրով, կրել բոլոր դժվարությունները, նվաճողական արշավանքի բոլոր զրկանքները։ Նա գիտեր, որ Կարլոս Ստյուարտն արդեն այստեղ է։ Շոտլանդացիները նրան պահում էին խիստ հսկողության տակ, նախկին մերձավորներին չէին թողնում այցելեն նրան։ Բայց նրա ներկայությունն իսկ ահեղ վտանգ էր անգլիական հանրապետության համար։ Այդ վտանգը պետք էր վերացնել՝ և որքան շուտ, այնքան լավ։ Հոգու խորքում Կրոմվելը հույս ուներ, թե պատերազմն արագ ու հաղթական է լինելու. Նա ուներ տասը հազար հետևակ և հինգուկես հազար հեծելազոր՝ խստիվ վարժված, լավ հանդերձավորված, մարտերում փորձված զորք։ Շոտլանդացիներն ունեին 26 հազար մարդ, բայց Օլիվերը հիշում էր Պրեսթոնը և երազում էր արշավանքն ավարտել նախքան ցրտերն ընկնելը։ Մեկ-երկու ճակատամարտ, և ամբողջ երկիրը ծունկի կգա իր առաջ։

Նա շոտլանդացիների հանդեպ չուներ այնպիսի այրող ատելություն, ինչպիսին իռլանդացիների նկատմամբ։ Շոտլանդացիները հավատակից-կալվինականներ են. նրանք հավատում են նույն աստծուն, միայն թե ինչ-որ բանում մոլորվում են։ Շոտլանդական ժայռերը և անտառապատ ձորակները պիտանի չէին բնակեցման համար, դրանք չէր կարելի դարձնել գաղութ՝ «Կանաչ կղզու» պես։ Դրա համար էլ տեղական բնակչությանը հարկ չկար կոտորել կամ քշել հեռավոր շրջանները. պետք էր միայն նրանց ցույց տալ իր սրի զորությունը, իսկ ապա հաշտության պայմանագիր կնքել։

«Պատվարժան սր Արթուր Ինգլիգին, հույժ շտապ.

Թանկագին սր, մենք շատ դժվարին կացության մեջ ենք։ Հակառակորդը կտրել է մեր՝ դեպի Քոպերսպաթյան լեռնանցքը տանող ճանապարհը, որի վրայով մենք կարող ենք անցնել մի-

www.a-pdf.com

այն հրաշքով: Նա շրջապատել է մեծակա բոլոր բլուրները, այնպես որ չգիտենք, թե ոնց պիտի դուրս պրծնենք այստեղից, դա կարելի է անել միայն գարմարդկային ջանքերով, իսկ այստեղ մնալը ամեն օր բնում է մեր մարդկանց, որոնք աներևակայելի տառապանքներ են կրում:

Ես հասկանում եմ, որ դուք այժմ չեք կարողանա մեզ օգնել, բայց այնուհանդերձ, ինչ էլ որ մեզ հետ պատահելու լինի, հավաքեք բոլոր ուժերը, որքան որ հնարավոր է, և օգնեք հարավից ինչով որ կարող եք: Դա մի գործ է, որ վերաբերում է բոլոր բարի մարդկանց: Եթե ձեր զարքերը կարողանային հարվածել Քոպերսպաթի այն կողմից, դա ինձ համար մեծ օժանդակություն կլիներ: Բոլորը պետք է աշխատեն հանուն բարի գործի: Մենք ոգով չենք ընկնվում (փառք աստծո), չնայած այսպիսի վիճակին: Եվ, իրավ, մենք ամենից ավելի հույսներս դնում ենք աստծո վրա, որից արդեն այնքան շատ ողորմածություն ենք ստացել:

Ճիշտ որ, հավաքեցեք բոլոր ուժերը, որքան որ կարող՝ եք. Ուղարկեցեք հարավ՝ բարեկամներին մոտ, օգնություն խնդրեք: Տեղեկացրեք Հենրի Վենին, ինչ ես գրում եմ: Ես չեմ ցանկանա, որ սա հայտնի լինի բոլորին, որովհետև վտանգը միայն կմեծանա: Դուք ինքներդ գիտեք, թե ինչպես ավելի լավ է գործել: Ինձ տեղեկություն հաղորդեցեք ձեր մասին: Մնում եմ ձեր խոնարհ ծառա Օ. Կրոմվել

2 սեպտեմբերի 1650 թվական»:

Շոտլանդական արշավանքը դուրս եկավ շատ ավելի ծանր, քան նա կարծում էր: Խորամանկ պրեսբիտերները իրենց զորքերի գլուխ էին դրել Դեյվիդ Լեսլիին՝ նույն այն Լեսլիին, որը Կրոմվելի հետ մի ժամանակ կողք կողքի մարտնչել էր Մարսթոն-Մուրի մոտ: Այն ժամանակ նրանք զինակիցներ էին, ընկերներ, ամարյա բարեկամներ: Նրանք խորհրդակցում էին իրար հետ, խոսում իրենց ծրագրերի մասին: Նրանք գիտեին իրենց բանակների արժանիքներն ու թերությունները, իրենց մարտարվեստը: Այժմ Լեսլին թշնամի էր, և պետք է ասել, հմուտ, ընդունակ թշնամի: Նա հասկանում էր, թե Կրոմվելն ինչ է ուզում՝ տալ վճռական ճակատամարտ: Եվ հրաժարվում էր ճակատամարտ տալուց: Հենց սկզբից, երբ Կրոմվելը կտրեց անցավ Թվիդը, Լեսլին կարծես թե նրան գայթակղում էր դեպի երկրի խորքը, տրծում էր նրա բանակը, խաբելով մանր կողային հարվածներով, բայց իր բանակը նրան դեմառդեմ չէր հանում, խուսափում էր մեծ ճակատամարտ տալուց:

Հուլիսի վերջին Կրոմվելը մոտեցավ Էդինբուրգին: Քաղաքն ուժեղ ամրացված էր և՛ ցամաքից, և՛ ծովից. շոտլանդացիներն այդ մասին հոգացել էին վաղօրոք: Նրա պատերի տակ կանգնած էր երեսուն հազարանոց հզոր մի բանակ: Կրոմվելն այստեղ

www.a-pdf.com

ասես ճամբար դարկեց, մտածելով, թե ճակատամարտ կուա բաց դաշտում, բայց Լեսլին չէր ուզում կռվել։ Անձրևի տակ, թշնամու աչքին ի տես երկու օրվա տառապալի կանգառից հետո Կրոմվելն Էդինբուրգից ետ քաշեց իր հոգնած, թրջված, քաղցած զինվորներին։ Նահանջը հապճեպ էր, Լամբերթի գունդը հապալեց, և շոտլանդացիներն անակնկալ հարվածեցին նրա թիկունքին։ Լամբերթը վիրավորված էր, նրա մարդիկ կորցրել էին ղեկավարումը և կջախջախվեին, եթե Կրոմվելը իր գունդը չուղարկեր նրանց օգնության։

Դեռ չէին հասցրել ետ քաշվել, կռվով գոնե մի փոքրիկ բերդ գրավել, հանգիստ առնել, երբ շոտլանդացիները կրկին հարձակվեցին ճամբարի վրա, կրկին արյունահեղ ընդհարման մեջ շատ անգլիացիներ սպանվեցին։

Այսպես անցավ ողջ օգոստոսը՝ հյուծող մանր մարտերում։ Վճռական ճակատամարտ տալ այդպես էլ չհաջողվեց։ «Չկա ոչ մի հնարավորություն,— գրել է այդ օրերին Ֆլիթվուդը,— դրանց մարտի մեջ քաշելու։ Այստեղ այնքան շատ կիրճեր կան, նրանք այնքան մեծ են, որ հենց որ մենք մտնում ենք մի կողմից, շոտլանդացիները դուրս են գալիս մյուսից»։ **«Ինչանի հույս ունեին,— գանգատվում էր Կրոմվելը Բրեդշոուին,— որ մենք սովամահ կլինենք պարենամթերքի պակասից։ Երևում է, այդպես էլ կլինի, եթե մեզ ժամանակին չապահովեն»։**

Շոտլանդիայի խստաշունչ բնությունը վախեցնում էր իր ցրտերով, գիշերային վաղնջ սառնամանիքներով, հանկարծահաս տեղատարափներով։ Լեռները դժվարանցանելի էին, հովիտները՝ անպտղաբեր։ Գյուղերում, ուր ոտք էր դնում Կրոմվելն իր զինվորների հետ, գրեթե չէին մնացել բնակիչներ. տղամարդիկ զորակոչվել էին Արգայլի վիթխարածավալ բանակը, կանայք ու երեխաները դեսուդեն էին փախել անգլիացիների մոտենալու հետ։ Արդեն նրանց էին հասել Դրոգեդի և Ուեքսֆորդի մասին լուրերը, իսկ խավարամիտ շոտլանդացի քարոզիչներն էլ ավելի էին վախեցրել ժողովրդին, հավատացնելով, թե անգլիացիները իրենց ճանապարհին մնկիկ-մնկիկ սպանում են բոլոր տղամարդկանց, կտրում են վեցից մինչև տասնվեց տարեկան տղաների աջ ձեռքը, կանանց կրծքերն այրում։ Զուր էր Կրոմվելը մեկը մյուսի ետևից կոչեր հրապարակում, որտեղ բնակիչներին խոստանում էր անդորր, նրանց իրավունքների և ունեցվածքի պահպանում, զուր էր նա վստահեցնում, որ չի եկել արյուն հեղելու, որ ինքը կիտև, թե շոտլանդական ժողովուրդը, ի տարբերություն իռլանդացիների, լի է բարեպաշտությամբ և աստծո հանդեպ երկյուղածությամբ, բայց միայն «խաբված է»։ Զուր էին խստագույն հրամաններն անգլիացի զինվորներին արգելում կողոպտել ու վիրավորել տեղական բնակիչներին։ Ամենուրեք, որտեղով անցնում էր Կրոմվելը, հանդիպում էր մրայն մի բանի խղճուկ պառավների ու մանուկների, որ ծիկրակում էին անկյուններից, իսկ

www.a-pdf.com

դլխավորը՝ երկիրն աղքատ էր, և Կրոմվելը իր բանակի համար ուտելու որևէ բան չէր գտնում։ Դրա համար նա ջանում էր որ-բան հնարավոր է մոտիկ մնալ ծովեզրին, որտեղ երբեմն նավե-լով մթերքներ էին հասցվում։ Բայց դրանք էլ չէին բավականաց-նում, և նոր բեռնանավերի սպասելով զինվորները թաքուն աչք էին ածում բանջարանոցները, հում բանջարեղեն էին ուտում։ Լույծի համաճարակ էր սկսվել։ Սեպտեմբերին մոտ տասնվեց հազար մարդուց մնացել էր հազիվ տասնմեկ հազար։ Այդ տան-ջահար, կեղտի մեջ կորած, հյուծված զորքով Կրոմվելը քաշվեց դեպի Դենբար։

Եվ այստեղ էլ, Դենբարի մոտ, նա ընկավ այն անելանելի դրության մեջ, որի մասին հաղորդում էր Գեղլրիգին։ Նրա բա-նակը իսկապես որ թակարդի մեջ էր։ Նահանջելով, նրանք գի-տեին, որ Լեսլին իր 22 հազարանոց վիթխարի զանգվածով շարժվում է իրենց ետևից կրնկակոխ։ Նա նրանց մշտապես տագնապահար էր անում մանր թևային հարձակումներով։ Շոտ-լանդացիները հայտնվում էին անակնկալ՝ նրանք դուրս էին թռչում ճանապարհների կեռմաններից, անտառային խոր ձորակ-ներից, նրանք անտառապատ թեք լեռնալանջերից հեղեղի պես վրա էին տալիս հոգնատանջ, թափառող զինվորներին։ Նրանք նետվում էին թշնամու վրա նաև գիշերը՝ լուսնի լույսի տակ, և անգլիացիք աստված էին կանչում, որ ամպ լինի, որ անձրև գա, որպեսզի թաքնվեն այդ հաճախակի, սրընթաց, նյարդեր ծվատող հարվածներից։ Իսկ երբ հասան Դենբար, Լեսլին շրջապատեց նրանց և գրավեց Անգլիա տանող միակ նեղ լեռնանցքը՝ նույն այն Քոպերսպաթը, որին մի տասնյակով պաշտպանելն ավելի հեշտ էր, քան մեկ հարյուրակով գրավելը։

Ի՞նչ անել։ Կրոմվելի թիկունքում աղմկում էր անսիրալիր ծովը. կարելի էր նավատորմիղ կանչել, մի կերպ դիմանալ մինչև նրա ժամանելը, իսկ ապա նավ բառձրանալ և անփառունակ կերպով լքել անհյուրընկալ երկիրը։ Բայց կարո՞ղ էր այդպես վարվել անհաղթելի Կրոմվելը. Կարո՞ղ էր խոստովանել իր պար-տությունը, հեռանալ չհպատակված Շոտլանդիայից, անգլիական հանրապետությունը դնել սպառնալիքի տակ։ Նա գիտեր, որ երի-տասարդ Կարլոս Ստյուարտն արդեն մեղայական դեկլարացիա է ստորագրել, որն այնքան ցանկալի էր շոտլանդական իշխանու-թյուններին։ Այնտեղ Կարլոսը խոստովանում և ողբում էր հոր մոլորությունները, դատապարտում էր մոր հեթանոսական կռա-պաշտությունը, զղջում էր Իռլանդիայի հետ հարաբերություննե-րի մեջ մտնելու համար և կրկնում էր իր նախկին խոստումները։ Իր դաշինքը շոտլանդացիների հետ անքակտելի է, վերջնական, եթե անգլիական բանակը հեռանա ձեռնունայն, ճանապարհը դե-ռլի Լոնդոն բաց կլինի և այդ հոծ զանգվածը հենց թագավորի դիմավորությամբ կթափվի հանրապետության վրա և կարբի կտա-նի նրան։ Ո՛չ, Կրոմվելը չի զիջի։ Ինչպես հին հերոս, նա ավելի

www.a-pdf.com

շուտ կմեռնի ճակատամարտի դաշտում, բայց այն չի լքի կամավոր։

Սեպտեմբերի 2-ի առավոտյան Կրոմվելը Լամբերթի հետ, չնայած բուռն փոթորկալի եղանակին, ձիերով մտան անտառ՝ թարմանալու և ցրուցելու։ Նրանց առաջ դաժան անտառապատ լեռներն էին՝ թշնամիներով բռնված։ Կրոմվելը բարձրացրեց հեռադիտակը, հպեց աչքերին, ուղղեց դեպի լեռները... Եվ՝ օ՜ հրաշք. Լեսլիի բազմահազարանոց բանակը չկար, այն դուրս էր եկել կիրճերից ու թաքստոցներից և իջնում էր դեպի հարթավայրը։ Ահա արագորեն դեպի հովիտն են վարգում հեծյալ գրնդերը։ Նրանք ձախից թևանցում են կատարում դեպի աջ, նրանք իջել են արդեն բլրի կեսը և դեռ շարունակում են իջնել ու իջնել դեպի ծով, ասես ցանկանալով շրջապատել անգլիական ճամբարը նաև այս կողմից։ Փոքր-ինչ դանդաղ, հոծ դանգվածով շարժվում է հետևակը՝ ավելի ու ավելի ներքև։ Կասկած չկա. Լեսլիի զորքը վերջապես լեռներից իջնում է հովիտը։

— Նայեցե՛ք,— Կրոմվելը Լամբերթին է մեկնում հեռադիտակը,— հապա մի նայեցեք, աստված նրանց մեր ձեռքն է տալիս։ Նրանք ներքև, դեպի մեզ են իջնում։

Լամբերթը հեռադիտակը դրեց աչքերին. Լեսլիի ամբողջ վիթխարի բանակը վայր էր իջնում Դենբարի առջև տարածվող հովիտը։ Ճակատամարտը կկայանա։

Ի՞նչն էր ստիպել Լեսլիին փոխել իր զգուշավոր տակտիկան։ Գուցե նա համոզված էր իր հաղթանակի մեջ. թշնամին չափից ավելի թո՞ւյլ էր, ուժերը չափից դուրս անհավասա՞ր։ Բայց որքան ավելի փայլուն հաղթանակ պիտի լիներ հարկադրել Կրոմվելին, հիվանդ, ստորացված, պարտված Կրոմվելին, հեռանալ առանց մարտի։ Եվ, ով գիտե, եթե Լեսլին ամուր կանգնած մնար այդ դիրքում, գուցե և նրան հաջողվեր կոտրել հզոր հակառակորդին։ Բայց գործը Լեսլին մենակ չէր որոշում։ Շոտլանդական կառավարությունը դժգոհ էր նրա խուսափողական գործելակերպից. ուզում էր, որ Լեսլին հաստատ և շուտափույթ հաղթանակ տաներ։ Պրեսբիտերական քարոզիչները, որ ուղարկված էին Էդինբուրգից, օր չկար, որ նրա զինվորներին կոչ չանեին ճակատամարտի։ Նրանք հրապարակով մեղադրում էին Լեսլիին ավելորդ թույամորթության մեջ, և նա տեղի տվեց։ Չէ՞ որ զինվորների համար նույնպես ծանր էին անպտուղ վայրի լեռները և նրանց չէր հերիքում կերը և պարենը։ Նրա ականջին հասավ, թե անգլիացիներն արդեն թնդանոթները բեռնում են նավերին, թե նրանք իրոք ճողոպրել են ուզում։ «Վաղը,— ասաց նա այդ օրն իր սպաներին,— անգլիական բանակը, կենդանի թե մեռած, բայց մերը կլինի»։

www.a-pdf.com

Թշնամու տեղաշարժման մասին լուրը վայրկենարար տարածվեց անգլիացիների ճամբարում։ Անմիջապես ռազմական խորհուրդ գումարվեց։ Որոշեցին, որ, ինչ էլ լինի, վաղնևթ լուսադրացին պետք է գրոհել շոտլանդացիների վրա. անակնկալ անվերջ հարձակումը միայն կարող է փրկություն բերել։

Կրոմվելը նկատեց, որ թշնամու հեծելազորի հիմնական ուժերը կենտրոնացվում են աջ թևում։ Նրանց ձախ թևն անգործություն է դատապարտված, այն սեղմված է լեռան և գետակի արանքում, որ փոթորկուն իջնում է խորը ձորի միջով։ Հարկավոր է ձևացնել, թե գլխավոր ուժերը գնում են այդ ձախ թևին ընդդեմ, իսկ իրականում ամենից հզոր հարվածը հասցնել աջ թևին։ Եթե այն ճնշվի, հետևակը կմնա առանց պաշտպանության, իսկ նահանջելու տեղ նա չունի, ետևում լեռների անտառապատ ղառիվափերն են։

Քամին ոռնում էր, մինչև գետին կորացնելով ծառերի կատարները, ծովը փոթորկվում էր, բայց անգլիացիների ճամբարում ոչ ոք չէր էլ մտածում հանգստի մասին, պատսպարվելու մասին։ Ողջ գիշեր զորքերի խուլ, բայց համառ տեղաշարժ էր կատարվում։ Ողջ գիշեր զինվորները աչք չփակելով պատրաստվում էին առաջիկա ճակատամարտին, որ գուցե վերջինն էր լինելու իրենց կյանքում։ Կրոմվելը չէր իջնում ձիուց. նա անձամբ կրկին ու կրկին շրջում էր զորքերի մեջ, ցուցումներ տալիս, քաջալերում, ճշգրտումներ էր անում։ Մոտակա մարտի նկատմամբ անհամբերությունը և տենդագին հույսը վառվում էին նրա սրտում։

Շոտլանդացիներից նրանց բաժանողը մի նեղ լեռնային վտակ էր, որը հարմար կլիներ անցնել միայն մի տեղից, այդտեղից էլ հենց պետք էր սկսել գրոհը։

1650 թվականի սեպտեմբերի 3-ի առավոտյան ժամը մոտավորապես վեցը կլիներ։ Արեգակը դեռ դուրս չէր եկել բլուրների հետևից։ Շոտլանդական ճամբարը քնած էր։ Տեղաշարժից տանջահար եղած զինվորները մեկնվել էին հանգստանալու ուղղակի գետնին, սպաները ցրվել էին մերձակա տնակները։ Եվ հենց այն վայրկյանին, երբ ամեն ինչ թվում էր թե մեռած է և քամին անգամ խաղաղվել է՝ ողջ գիշեր մի կուշտ նվագելուց հետո, անգլիական կողմից հարվածեցին հրանոթային առաջին զարկերը, և շուտով թնդանոթաձգությունը վերածվեց միալար բվվոցի։ Կեղծ գրոհը ձախ թևում շեղեց շոտլանդացիների ուշադրությունը, և անմիջապես էլ աջ թևում, արագ անցնելով վտակը, հարվածեց Լամբերթի հեծելազորը։ Բայց ուժերն այնուհանդերձ անհավասար էին։ Շոտլանդացիներն արագ ուշքի եկան, թռան ձիերի վրա, Լամբերթին դիմավորեցին իրենց հեծելազորի ողջ զորությամբ, և Լամբերթը երերաց։ Կարգը նրա գնդերում խախտվեց, նրանք սկսեցին դանդաղ ետ քաշվել դեպի գետը։ Գործին խառնվեց անգլիական հետևակը. այն ղեկավարում էր

www.a-pdf.com

Մոնքը։ Հետևակը նույնպես ճնշվեց, և նրան չհաջողվեց հենց սկզբից նեղել Թշնամուն։ Կատաղի ձեռնամարտ էր տեղի ունենում։

Պահը ծանր էր ու վճռական։ Այժմ մարտի մեջ պիտի նետել բոլոր ուժերը։ Կրոմվելը տենդագին գրգռվածության մեջ զննեց իր հին ու փորձված զինվորներին, դուրս քաշեց սուրը և խթանները սեղմեց անհամբերությունից իր տակը պար եկող նժույգին։ «Երկաթակողների» ընտիր պահեստազորայինները նետվեցին առաջ, թափով կարեցին անցան վտակը և մխրճվեցին մարտնչողների շարքերը։ Անակնկալ համալրումը տատանապատկեց Լամբերթի հեծյալների ուժերը, սրաշեղբերը գնդում էին էլ ավելի կատաղի, և շոտլանդացիներն սկսեցին նահանջել։ Նրանց հեծելազորի շարքերը քանի գնում ավելի ու ավելի էին քաշվում դեպի լեռը՝ ուղիղ անկյան տակ ծռվելով իրենց հետևակի գծի հետ, մերկացնելով նրա թևը։ Այժմ այս կողմ, հետևակի վրա ուղղեց Կրոմվելն իր «երկաթակողների» հարվածը։ Եվ Մոնքն արդեն վերաշարել, հավասարեցրել էր հետևակը։ Նա նորից գրոհի է գնում, և քայքայվում է Թշնամու զորքը, անկանոն նահանջում է լեռան կողմը։

Այդ պահին մառախուղը քաշվում է, արեգակը շողշողում է ծովի վրա, լուսավորելով բլուրները, շողացնելով սաղավարտները։ Կրոմվելը ձին կանգնեցրեց, շուրջը նայեց։ Շոտլանդացիների բազմահազարանոց զանգվածը, ոչխարի հոտի պես, անօգնական, դեսուդեն էր նետվում լեռնալանջերում, չորս կողմից կոտորում էին նրանց, թրատում էին, շամփոում էին տեգերով, անգլիացիները նեղում էին։

Մարտը տևեց երեք ժամից պակաս։ Շոտլանդացիներից տասը հազար հոգի սպանվեց։ Մոտ տասը հազարը զենքը գցեց և գերի ընկավ։ Անգլիացիները, որ անըմբռնելի կերպով համարյա կորուստ չէին տվել,— Կրոմվելի հաշվով, իրենց կողմից սպանված էր ընդամենը քսան մարդ,— ինքնամոռացության մեջ նետվել էին հետապնդելու նրանց, ովքեր փորձում էին փախչել գետի հոսանքն ի վեր, դեպի Հանթինգդոն։ Կրոմվելը թույլ տվեց հետապնդել Թշնամուն, իսկ ինքը մնաց մարտի դաշտում՝ հետևակի և գումակի հետ։ Նրա աչքերը փայլում էին, շրթներին թրթռում էր ժպիտը, նա հարբածի էր նման։ Պարզ էր, որ նա լիակատար, մեծ հաղթանակ էր տարել, գուցեև՝ մեծագույնը իր էյանքում։ Միանգամից նա անկարող էր գնահատել այդ հաղթանակի չափը։ Այն, իսկապես ասած, հրաշք էր։

Հետևյալ օրը նա կնոջը գրեց. «Թանկագինս։ Ես ժամանակ չունեմ քեզ մանրամասն գրելու։ Դու քո շատ նամակներում գրում ես, որ ես պետք է ուշադիր լինեմ քո և քո որդիների նկատմամբ։ Եվ ես կարող եմ քեզ հանդիմանել դրա համար։ Եթե ես այժմ քեզ չեմ սիրում ավելի շատ, քան առաջ, ապա կարծում եմ, որ,

www.a-pdf.com

մյուս կողմից, մի փիչ մեղավոր եմ, և դա իսկապես այդպես է: Դու ինձ համար աշխարհում ամենաթանկն ես, և դա բավական է:

Աստված անսահման ողորմած է գտնվել մեր հանդեպ: Ո՞վ կարող է գնահատել նրա մեծությունը: Իմ տկար հավատն ամրապնդվեց: Իմ հոգին հրաշալի կերպով վերակենդանացավ: Թեպետև ես, հավատացնում եմ քեզ, որ ծերանում եմ և զգում եմ, թե ինչպես է ծերունական տկարությունը գաղտնորեն տիրում ինձ: Երանի թե մեղքերս էլ այդպես նվազեին: Մեր վերջին հաջողության մանրամասները քեզ կհաղորդեն Հարրի Վենը կամ Ջ. Փիքերինգը: Բոլոր թանկագին բարեկամներիս հանդեպ սիրով մնամ՝

Քո Օլիվեր Կրոմվել»:

Սեպտեմբերի 5-ին Կրոմվելը, դեռևս չխաղաղված, հրաման տվեց ճանապարհ ընկնելու: Յոթին նա արդեն Էդինբուրգում էր: Քաղաքն անձնատուր եղավ գրեթե առանց կռվի, նրա ձեռքն ընկավ նաև Էդինբուրգի նավահանգիստը. միայն հին ամրոցը շարունակեց դիմանալ էլի մի քանի ամիս: Ջախջախված, արյունաքամ եղած Լեսլին իր զորքերի մնացորդներով՝ երեսունի փոխարեն մի ինչ-որ չորս թե հինգ հազար զինվորով, նահանջեց դեպի Ստերլինգ, դեպի հյուսիս-արևելք: Այնտեղ նա ամրացավ, հուսալի պաշտպանություն ունենալով ճահիճներն ու գետերը: Կարլոս թագավորը և շոտլանդական կառավարությունը տեղափոխվեցին հյուսիս՝ Պերտ:

Քաղաքական իրադրությունն Իռլանդիայում Դենբարից հետո նկատելիորեն փոխվել էր: Վիգամորների՝ ծայրահեղ պրեսբիտերների, կուսակցությունը մոլեգին Արգայլի գլխավորությամբ երերում էր: Նրանք դեռևս մեծամասնություն ունեին պառլամենտում և եկեղեցական համաժողովում, բայց նախկին չափավորները՝ գլխատված դուքս Համիլտոնի կուսակցության կողմնակիցները, սկսել էին գլուխ բարձրացնել: Նրանք սկսել էին Կարլոսի հետ հարաբերությունների մեջ մտնել, հույս ունենալով նրա օգնությամբ ընկճել իրենց հակառակորդներին: Կոմս Լանարկը, որն այժմ ընդունել էր դուքս Համիլտոնի տիտղոսը, և Լոդերդեյլը նորից մերձեցել էին թագավորին, որը լավ հիշում էր այն ստորացումը, որը նրան հարկադրել էին կրել, երբ ինքն ստորագրել էր մեղալական դեկլարացիան: Ռոյալիստների դիրքերն ամրանում էին: Դրան ի պատասխան Արգայլը արքային առաջարկեց ամուսնանալ իր՝ Արգայլի դստեր հետ: Ֆրանսիա, թագուհի-մոր մոտ ուրհանդակ ուղարկվեց խորհուրդ հայցելու համար: Մինչդեռ Կրոմվելն առաջ էր գնում: Էդինբուրգում նա համալրում, պարենամթերք ստացավ, և այժմ շարժվում էր դեպի Ստերլինգ: Լեսլին, սակայն, նույնպես հասցրել էր փոքր-ինչ շտկվել պարտությունից: Ստերլինգը հյուսիսից բաց էր, և դեպի այնտեղ էին նետվում բոլոր նրանք, ովքեր դեռ ցանկություն ունեին մարտն-

www.a-pdf.com

չելու նվաճողների դեմ։ Լեսլիի բանակը անարգել ստանում էր պարենամթերք, ռազմամթերք և կարող էր հաջողությամբ դիմակայել հակառակորդին, որը նորից կտրվել էր իր հենակետերից և արդեն սկսել էր ճաշակել նախկին նյութական դժվարությունները։ Եղանակն անտանելի էր՝ սառն անձրև էր մաղում. ճանապարհները, պարզվեց, ձեռքից գնացած էին։ Մանր բերդերը կատաղի գիմադրություն էին ցույց տալիս։

Ստերլինգին մոտեցան սեպտեմբերի 18-ին և անմիջապես էլ սուրհանդակ ուղարկեցին քաղաքը հանձնելու պահանջով։ Լեսլին բանբերին հրաժարվեց ընդունել և Կրոմվելից պահանջեց որպես փրկագին ազատել շոտլանդական մի քանի սպաների։ Սա պատասխանեց հակիրճ և գրգռված.

«Մենք այստեղ ենք եկել ոչ թե նրա համար, որ մարդկանցով առևտուր անենք կամ ինչ-որ օգուտներ ստանանք, այլ անգլիական հանրապետության շահերը պաշտպանենք»։

Նա հրաման էր տալիս սկսել գրոհը, բայց վերջին պահին փոխեց այն։ Քաղաքն ուժեղ պաշտպանված էր. չհաջողվեց հրետանին քարշ տալով մոտեցնել անասելի ցեխի պատճառով. ափսոսաց մարդկանց։ Նա ռազմական խորհուրդ արեց և այնտեղ որոշեցին, որ Ստերլինգի վրա չարժե ժամանակ վատնել, ավելի լավ է, քանի ձմեռը վրա չի հասել, հակառակորդից մաքրել Շոտլանդիայի հարավային հողերը։

Աշնան մնացած մասն անցավ հարավային և արևմտյան բերդերի ու փոքրիկ քաղաքների գրավումով, որը ինչպես պետք է ուժասպառ արեց և՛ բանակը, և՛ իրեն՝ Կրոմվելին։ Հոկտեմբերին նրա զորքերը մտան Գլազգո, ծննդյան տոներին նրան ենթարկվեց ողջ Ներքին Շոտլանդիան և նրա արևելյան մասը, որտեղ վերջապես ընկավ Էդինբուրգյան ամրոցը, և արևմտյանը։ Կարելի կլիներ դադար առնել մայրաքաղաքում ձմեռային բնակարաններում, հանգստանալ, ապաքինել վերքերը, մտածել այն մասին, թե ինչ պետք է անել այնուհետև։

Մինչև շոտլանդական ճամբարում տեղի էին ունեցել խոշոր փոփոխություններ։ Կրոմվելյան հաղթանակների սպառնալիքի տակ տարաձայնությունները պրեսբիտերների, չափավոր ռոյալիստների և բացահայտ կավալերների միջև հարթվել էին։ Ռոյալիստների դեմ օրենքները վերացվեցին՝ բավական էր նախկին մոլորություններից ձևական հրաժարումը, և նրանք դարձյալ կարող էին ընդունվել արքունիք, կառավարության մեջ և բանակում։ Հունվարի 1-ին Կարլոս II-ը հանդիսավոր թագադրվեց Սքոնում, Պերտի մոտ։ Շոտլանդական հնամենի եկեղեցու կամարների տակ, որ լիքն էր ժողովրդով, հնչեցին թագադրման երդման հնամենի խոսքերը։ Պրեսբիտերական քարոզն աչքի էր ընկնում գաժանությամբ և կրքոտությամբ։ Թագավորը տվեց պահանջվող բոլոր խոստումները, կաշկանդեց իրեն Կովենանտի վերջնական ընդունումով և այժմ պետք է ուղևորվեր Էբերդին, բարձրացներ

www.a-pdf.com

իր դրոշը և դրա տակ բանակ հավաքեր 20 հազար մարդուց ոչ պակաս։ Կրոմվելի մոտ Էդինբուրգում համարյա նույն այդ ժամանակ հայտնվեց նշանավոր գծանկարիչ Թոմաս Սայմոնը, որպեսզի էսքիզներ ուրվագծի նրա դիմանկարի համար։ Պառլամենտը որոշում կայացրեց հուշամեդալ դրոշմել ի պատիվ Դենբարի տակ տարած հաղթանակի։

Աշնանային արշավը ցույց տվեց, որ Լևսլին շարունակում է և կշարունակի պահպանել նախկին մարտաեղանակը. նա այլևս վճռական ճակատամարտ չի տա, այլ կբռնի մանր գրոհներով թշնամուն հյուծելու ուղին։ Հունվարի վերջերին Կրոմվելը վերսկսեց հարձակումները շոտլանդացիների դեմ և վերցրեց Էլի մի քանի բերդեր։ Արշավանքներից մեկից հետո, Էդինբուրգ վերադառնալիս՝ կարկուտի և ձյան տակ, նա խիստ մրսեց և հաջորդ օրը սաստիկ տենդի մեջ անկողին ընկավ։ Դա նա էր, իռլանդական հիվանդությունը. մի տարի առաջ դա ցնցել էր նրան և գցել տենդի մեջ։ Այս անգամ հատկապես անողոք էր բռնել, նա այրվում էր, զառանցում, թվում էր, գտնվում է մահվան շեմին։ Բայց հիվանդությունն անակնկալ նահանջեց։ Կրոմվելը դեռևս չգիտեր, որ դա «եռօրյա տենդ» էր, նենգ ու դավադիր հակառակորդ, որ ընդունակ է վերադառնալ կրկին ու կրկին շատ ու շատ անգամ, անխղճորեն հալումաշ անելով իր զոհին։

Փետրվարի 11-ին նա արդեն լավ էր զգում իրեն և զբաղվում էր գործերով։ Զինվորը, որ սովորել է դժվարությունների և զրկանքների, չի կարող պառկել անկողնում։ Սակայն հետևեց երկրորդ կատաղի նոպան, նա անկողին ընկավ։ Ամսի 18-ին նա արդեն կրկին ոտքի վրա էր և հաղորդում էր, թե միանգամայն ապաքինվել է։ Այնինչ չարաղետ տենդը կրկին զգացնել տվեց և միայն 23-ին նա նորից կարող էր նամակ գրել, կարգադրություններ անել, սպաների հետ քննարկել նոր արշավանքների պլանները։ Քսանհինգին նա նույնիսկ ուղևորվեց նավահանգիստ, ծովի կողմը, նայելու նոր ամրությունների կառուցումը, բայց հարկադրված էր վերադառնալ. հիվանդությունը կրկին նենգ ու ուժեղ թշնամու նման նրան վար բերեց թամբից, գամեց մահճակալին, այս անգամ ամբողջ տասն օր։

Կրոմվելը նրանցից չէր, ովքեր հեշտությամբ անձնատուր են լինում, նա կրկին նետվեց գործերի մեջ, մոռացավ հանգիստը, մոռացավ բժշկի խորհուրդները, զգուշությունը։ Բայց հարաբերական առողջության պարբերականությունը քանի գնում կարճատև էր դառնում։ Մարտի 11-ին նա կրկին վատացավ, և բժիշկն արգելեց նրան նամակներ տալ։

Լոնդոնում նրա հիվանդությունը մեծ տագնապ առաջացրեց. գլխավոր հրամանատարի անաշխատունակությունը ինքնին հղի էր վտանգներով, և դրանից բացի, շոտլանդական արշավանքի ծայրը չէր երևում։ Պետական խորհուրդը սուրհանդակ ուղարկեց Էդինբուրգ՝ ցավակցություն հայտնելու և միաժամանակ տեսնե-

www.a-pdf.com

լու, թե ինչպես են ընթանում գործերը։ Բանբերը գեներալին գտավ ճաշասրահում, որտեղ նա ճաշում էր իր սպաների հետ։ Նրա բանակը պատրաստ էր մարտնչելու։ Սուրհանդակին անմիջապես էլ ետ վերադարձրին այդ նորություններով և Կրոմվելի նամակով, որ հասցեագրված էր Բրեդշոուին։

«Միկուրդ, իսնարհագին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ նվաստիս նկատմամբ հոգատարության և քնքուշ ուշադրության համար... Ձեր գործերը չեն զգում իմ կարիքը. ես, ոդորմելի արարածս, դեռ վերջերս նման էի կմախքի։ Եվ այժմ էլ դեռևս անօգտակար մի ծառա եմ։ Ես կարծում էի, թե չեմ դիմանա հիվանդության վերջին նոպային, բայց աստծուն հաճո եղավ այլ կերպ դատել...»։

Կրոմվելը բանբերին բանավոր պատվիրեց ասել, որ իր առողջությունը հիմա ավելի լավ է, քան երբևէ։ Նա իսկապես էլ առողջանում էր և սկսել էր արդեն խորամուխ լինել բոլոր գործերի մեջ և նոր արշավանքների ծրագրեր մշակել։ Ապրիլի 7-ին և 8-ին նա կառքով ուղևորություն կատարեց և ընդունեց այցելուներ։ Գարունն ասես նրան ապաքինում էր բերում։ Եվ ահա նա գարձյալ ձիու վրա է, մասնակցում է կարճատև մարտերի, սուրում է Գլազգո՝ ճնշելու համար ռոյալիստական խռովությունը, պաշարում է շոտլանդական մշուշապատ ամրոցները։ Բայց գարնանային օդը խաբուսիկ է։ Մայիսի 16-ին Կրոմվելը դարձյալ մահացու սառնություն է զգում ձեռքերում ու ոտքերում, հենց սրտում։ Նրան պառկեցնում են անկողնում, ծածկում են վերմակներով, տաք գինի են խմեցնում, նա տաքանում է, աչքերը վառվում են չոր փայլով, ջերմն ավելի ու ավելի է տիրում նրան։ Նա գրեթե կորցնում է գիտակցությունը։ Հաջորդ երեք օրում նրան մեկը մյուսի ետևից ցնցում են հինգ նոր նոպաներ։ Շրջապատողները երկյուղ են կրում, թե նա արդեն ոտքի չի կանգնի։

Լոնդոնում լրջորեն անհանգստանում են։ Կրոմվելի մոտ են ուղարկում նրա երկու բժիշկներին։ Նրանք գալիս են հենց իր՝ լորդ Ֆերֆաքսի անձնական կառքով։ Պալատը որոշում է. «Լորդ գեներալի հիվանդության կապակցությամբ և այն երկրի խիստ կլիմայի պատճառով, որտեղ նա գտնվում է, նրան առաջարկվում է առողջությունը պահպանելու համար տեղափոխվել Անգլիայի մի որևէ մաս, որտեղ աստծո օգնությամբ և բժշկական ուժեղ միջոցների գործադրմամբ նա կարող կլինի վերականգնել իր առողջությունը և ուժերը, որպեսզի հնարավորություն ունենա բանակ վերադառնալ։ Նրան իրավունք է վերապահվում առայժմ ժամանակավոր հրամանատար նշանակել իր հայեցողությամբ»։

Բայց երբ բժիշկները ժամանեցին, Կրոմվելն արդեն լավ էր զգում։ Ամուր կազմվածքը և, ինչպես ինքն էր հավատում, ոգու ուժը հաղթեցին։ Հունիսին նա սկսեց պատրաստվել նոր ռազմական գործողությունների։

www.a-pdf.com

Դա հիմա հույժ անհրաժեշտ էր։ Տագնապալի լուրեր էին ստացվում Անգլիայում ռոյալիստական խռովությունների մասին։ Դեկտեմբերին ապստամբություն բռնկվեց Նորֆոլքում, մարտին խոշոր դավադրություն բացվեց Լանկաշիրում. դրա մասնակիցներն իրենց հույսը դրել էին շոտլանդացիների օգնության վրա. հունիսին գլուխ բարձրացրին Ուելսի կավալերները։ Շոտլանդական արշավանքը հարկավոր էր ավարտել, ինչ գնով էլ որ լիներ, և ավարտել անվրեպ, հաղթական հարվածով, ի փառս հանրապետության և ի սարսափ նրա բոլոր թշնամիների։

Բայց ինչպե՞ս անել դա։ Ինչպե՞ս ջախջախիչ հարված հասցնել Լեսլիին, որն այդ ընթացքում արդեն բավականաչափ զորք էր հավաքել և դարձյալ չէր ուզում ճակատամարտ տալ. նա հիշում էր անցած տարվա տակտիկայի հաջողությունը։ Հյուսիսից նա տեղեկություններ ստանում էր պարենամթերք և համալրում։ Ինչպե՞ս փակել կավալերների հաշիվը, երբ Պերտում Կարլոսի դրոշի տակ շարունակում էին հավաքվել նորանոր ուժեր և արքան ուզում էր անձամբ գլխավորել դրանց։ Անհնազանդ հյուսիսային լեռներում ենք էին ճոճում ռազմատենչ տոհմերը, աչքդ թեքեցիր թե չէ՝ նրանք պարտիզանական պատերազմ կսկսեն Անգլիայի դեմ։ Եվս մի ձմեռ Շոտլանդիայում, և հանրապետությունն այլևս բանակ չի ունենա, իսկ, գուցե, գլխավոր հրամանատարը էլ չլինի։

Եվ Կրոմվելը վճռում է։ Նրա գլխում ծնվում է չտեսնված հանդուգն մի ծրագիր. գնալ հյուսիս և շրջանցել ռոյալիստներին այնպես, որ փակվեն կենսաբեր երակները, որոնցով լեռնային շրջաններից նրանց մոտ են հոսում զենք, մարդիկ և ուտելիք։ Նրանց մեկուսացնել հյուսիսից, այն ժամանակ կտեսնենք՝ նրանք ինչի դուրս կգա՞ն, թե՞ ոչ։ Բայց այդ դեպքում նրանց համար մնում է միայն մի ուղի. դեպի հարավ, Անգլիա, դեպի Լոնդոն։ Ափազանց հանդուգն չէ՞ դա արդյոք։ Թագավորն արդեն քանակազարանոց բանակ ունի։ Նա երաշխավորում է միայն այն մասին, որ ռազմերազմը տեղափոխի հայրենիք և թագադրվի անգլիական և ոչ թե շոտլանդական թագով։ Եթե նա մտնի Անգլիա, բոլոր ռոյալիստները կշտապեն մտնել նրա դրոշի տակ, բոլոր մութ ուժերը կհամախմբվեն միատեղ և կնետվեն անպաշտպան մայրաքաղաքի վրա. ի՞նչ պիտի անեք դուք այդ դեպքում, լորդ-գեներալ Ֆեյրֆաքս։

Պլանը հանդուգն է, բայց միակ հնարավորը։ Կրոմվելը դարձյալ տենդի մեջ է, ոչ թե հիվանդագին տենդի, այլ գործելատենդի։ Նա Պետական խորհրդից զենք է պահանջում, մթերապաշար, ֆամբեր, և գլխավորը՝ մարդիկ, բայց ոչ վարձկաններ, ոչ թե անտարբեր աշխատավորներ, կամ արորից բռնի պոկած-բերած զորակոչիկներ, այլ կամավորներ, որոնք գիտեն, թե ինչի համար են կռվում։

Հուլիսին նա Լամբերթին ուղարկում է Ստերլինգը հյուսիսից շրջանցելու, իսկ քիչ ավելի ուշ, Էդինբուրգից հանելով ամբողջ

www.a-pdf.com

բանակը, գնում է նրան օգնության։ Կապը լեռնային Շոտլանդիայի հետ ռոյալիստների համար կտրված է, անմիջապես սկսվում են մթերքի հետ կապված դժվարությունները։ Նրանք ծուղակի մեջ են։ Նրանց առաջ երեք ճանապարհ կա. կամ պետք է դուրս գան Կրոմվելին դեմառդեմ և թույլ տան, որ նա իրենց ջախջախի բաց մարտում, կամ մնան տեղում և դանդաղ մեռնեն սովից և կամ գնան Անգլիա։ Բոլոր այդ վճիռներին Կրոմվելը պատրաստ էր։ Նա արդեն տիրել էր Հյուսիսի հիմնական բերդերին և օգոստոսի 1-ին մոտեցավ Պերտին, որտեղից բարեպատեհ ժամանակ ճողոպրել էր արքունիքը բոլոր զորքերի և կայազորի հետ միասին։ Այդ օրը, բանագնաց ուղարկելով քաղաք անձնատուր լինելու պահանջով, Կրոմվելն իմացավ, որ շոտլանդական ռոյալիստների միացյալ բանակը իր՝ Կարլոսի գլխավորությամբ և Դևիդ Լեսլիի հրամանատարությամբ դուրս է բերվել Ստերլինգից և սլանում է դեպի հարավ՝ դեպի Անգլիա։ Նրա համարձակ, բայց վտանգավոր ծրագիրն սկսում էր իրականանալ։

Նա տեղնուտեղը հրաման ուղարկեց Էդինբուրգ՝ Հարիսոնին. «Հետևել հակառակորդի շարժումներին և փորձել դանդաղեցնել նրա առաջխաղացումը»։ Պերտը հաջորդ օրը հանձնվեց։ Կրոմվելն այնտեղ կայազոր թողեց, Մոնքին հրամայեց հինգ հազար հոգով շրջապատել ու գրավել Ստերլինգը, իսկ ինքը իր ընտիր հեծելազորի գլուխն անցած շտապեց դեպի հարավ՝ թշնամու ետևից։

Սկսվեց կրոմվելյան բանակի ամենազարմանալի, ֆանտաստիկորեն արագ, փայլուն կազմակերպված արշավը՝ մի արշավ, որ մինչև այժմ, ըստ կենսագիրների արտահայտության, ռազմական պատմաբանների հիացումն է հարուցում։ Թագավորն ու Լեսլին քսանհազարանոց զորքով շտապում էին Համիլտոնի հին ուղիով՝ Քարլայլի, Ուիգանի և Ուորինգթոնի վրայով, հյուսիս-արևմտյան կոմսություններով, որտեղ ուժեղ էին ռոյալիստական տրամադրությունները և որտեղ, ինչպես հույս ուներ թագավորը, պիտի զենքը ձեռքներին նրան միանար համախոհների ամբոխը։ Կրոմվելը Հարիսոնին ուղարկեց հակառակորդին հետևելու ձախ թևից, Լամբերթին՝ շոտլանդական զորքերի թիկունքից, իսկ ինքը գնաց արևելյան կողմը, որպեսզի համալրի իր ուժերը Յորքշիրում։ Նրա հետևակը օրը քսան մղոն ճանապարհ էր կտրում։ Նրանք բոլորը պետք է միավորվեին Լոնդոն չհասած, այնպես, որ առաջ անցնելով արքայից, փակեին նրա մուտքը դեպի մայրաքաղաք։

Թագավորի հաշիվները չարդարացան, ռոյալիստներն Անգլիայում այնքան թույլ էին, այնպես խորն էին ընկճված, որ չէին կարող քիչ թե շատ նշանակալի ապստամբություն բարձրացնել։ Կոմս Դերբին հաղար հոգով շարժվելիս է եղել դեպի նա, բայց ճանապարհին ջախջախվել է Ռոբերտ Լիլբեռնից։ Հատուկենտ, վատ զինված ջոկատներ՝ ահա այն ամբողջ համալրումը, որ նա

www.a-pdf.com

ատանում է իր ամբողջ ճանապարհին։ Նրան կրնկակոխ հետևում էր Լամբերթի և Հարիսոնի հեծելազորը, տագնապալի դարձնելով թիկունքը, տանջահար անելով մանր, անակնկալ հարձակումներով. Կրոմվելը նույնպես ընդունակ էր հակառակորդից սովորելու։ Ընդհակառակը՝ հանրապետականները ամենուր համառ դիմադրություն էին ցույց տալիս Կարլոսին։ Հավաքում ու զինում էին տեղական միլիցիան, հանդես էին գալիս աշխարհազորայինները. թագավորը, որ առաջնորդում էր շոտլանդական զորքերին, որ ցանկանում էր թագը վերադարձնել օտարերկրյա ներխուժման օգնությամբ, թշնամի էր բոլորի համար։ Ազգային հպարտությունը և ատելությունը նոր ուժով էին բորբոքել անգլիացիների սիրտը, նրանք նորից պատրաստ էին մարտնչելու հանրապետության համար, թեկուզև թույլ, անկատար, նրանց սպասելիքները իրերև հանած, բայց և այնպես՝ հանրապետության։ Այստեղ արդեն լորդ Ֆերֆաքսն էլ ընդունեց, որ Անգլիայի վրա հարձակում է կատարվել։ Յորքում նա անձամբ հավաքեց մի մեծ ջոկատ և հանձնեց Կրոմվելին որպես օգնություն։

Լոնդոնում սարսափելի տագնապ սկսվեց։ Պառլամենտում և Սիթիում սկսել էր ծայր առնել հին անվստահությունը Կրոմվելի նկատմամբ։ Չլինի՞ թե նա համաձայնության է եկել թագավորի հետ։ Ճիշտ է, նրա նամակները հանգստացնում էին, հուսադրում. նա ամեն ինչ գիտի, ամեն ինչ կանխատեսում է և միջոցներ ձեռք առնում։ Նա հույս ունի շուտով հասնել թշնամուն և խնդրում է նրա դեմ շարժել բոլոր ուժերը, որպիսիք որ կարելի է հավաքել մայրաքաղաքում։

Գործի են կպչում ճարպիկ ու խիզախ հանրապետականները՝ Վենը, Սքոթը, Մարթենը։ Նրանք պատրաստում են բանակը, զինում են միլիցիային, հավաքագրում կամավորներ։ Պառլամենտը հայտարարություն է հրապարակում, որտեղ Կարլոս Ստյուարտը և նրա կողմնակիցները մեղադրվում են պետական դավաճանության մեջ, բոլորին, ովքեր օգնում են նրանց, սպառնում է մահապատիժ։ Գեներալ Ֆլիթվուդը իր նոր կազմավորված ուժերով շտապում է ռոյալիստների զորքերին ընդառաջ։

Եվ ահա օգոստոսի վերջին օրերին, երբ Կարլոսը հաստատվեց Վուսթերում և, հոր նման, այնտեղ պարզեց արքայական դրոշը՝ հավատարիմ հպատակներին պայքարի կոչելով խռովարար վասալների դեմ, բոլոր հանրապետական ուժերը՝ Կրոմվելի բանակը, Լամբերթի ու Հարիսոնի զորքերը, Ֆլիթվուդի ուժերը, միավորվեցին ու դարձան մի ձույլ երկաթե բռունցք, որպեսզի վերջապես ջախջախեն և՛ շոտլանդացիներին, և՛ Կարլոսին, և՛ անգլիական բոլոր ռոյալիստներին վերադիր։ Ռազմական գործողությունների այդպիսի ճշգրտությունը հիացած կենսագրին հիասքանչ է թվում նույնիսկ հեռագրի դարում, իսկ նրանց հաջողությունը վկայում է ինչպես Կրոմվելի, այնպես էլ նրա ամենամերձավոր օգնականի՝ Լամբերթի արտասովոր-ռազմական

www.a-pdf.com

տաղանդի մասին։ Երեք առանձին կորպուսներ, որոնք շարժվում էին երեք տարբեր տեղերից, գնալով իրարից մեծ հեռավորության վրա, միանում են հենց այնտեղ, որտեղ պետք է»։ Երեսուն հազարից ավելի զինվոր ու սպա էր հաշվվում պառլամենտական բանակում՝ կրկնակի ավելի, քան անհաջողությունից բզկտված հոգնատանջ շոտլանդական զորքը։

Կրոմվելը իր բանակը բաժանեց երկու մասի. մեկը Ֆլիթվուդի և Լամբերթի գլխավորությամբ անցավ Սևերնը և կտրեց թագավորի ճանապարհը դեպի Ուելս։ Մյուսը՝ խոշորը, փակեց Լոնդոն տանող ճանապարհը։

1651 թվականի սեպտեմբերի 3-ի առավոտն էր. նույն այդ օրը, ուղիղ մեկ տարի առաջ, մեծ հաղթանակ տարան Դենբարի մոտ։ Երկինքն այս անգամ անամպ էր, օդը ջինջ և արևը շողում էր այնպես վառ, ինչպես միայն կարող էր շողալ վաղ աշնան օրը բարենպաստ եղանակին։ Լույսը բացվելու հետ զինվորները զբաղված էին լողացող կամուրջներ գցելով լայնահուն ու ջրառատ Սևերնի և նրա վտակ Թիմի վրայով, որ գալիս էր արևմտյան կողմից։ Արեգակն արդեն բարձրացել էր հորիզոնի վրա, երբ ամեն ինչ պատրաստ էր, և Ֆլիթվուդի գնդերը, անցնելով Թիմի վրա գցված նոր կամրջով, հարավից հարվածեցին շոտլանդացիների ճամբարին։ Նրանց օգնության շտապեց Կրոմվելն իր «երկաթակողներով»՝ գետանց կատարելով Սևերնի վրայով։ Նա ինքն էր առաջնորդում իր զինվորներին։ Չէր խնայում ինքն իրեն։ Նա հայտնվում էր կռվի ամենավտանգավոր տեղերում և, մերկացնելով սուրը, առաջինն էր հարձակվում թշնամու վրա։ Նման կայծակնային հարվածներից շփոթահար շոտլանդացիներն սկսեցին ետ քաշվել, համառ դիմադրություն ցույց տալով ցանկապարսպի ետևից։ Անգլիացիներն իրենց հրամանատարին հետևելով՝ ավելի ու ավելի էին նեղում նրանց և շուտով քշեցին Վուսթերի ծայրամասը, որտեղ Սևերնի վրա կար մի կամուրջ։ Սա տանում էր դեպի քաղաքի դարպասները։

Կեսօրից քիչ անց Կարլոս թագավորը, որն ինքն էր ցանկացել կատարել գլխավոր հրամանատարի պաշտոնը, բարձրացավ մայր տաճարի զանգակատան աստիճաններով և տեսավ, որ շոտլանդական զորքը փախչում է դեպի քաղաք, հետապնդվելով թշնամուց։ Հենց այդ պահին զանգակատունը ցնցվեց. արևելքից հարվածում էր հակառակորդի ծանր հրետանին։

Շուտափույթ իջնելով, արքան հրամայեց մոտեցնել ձին, և, անհամբերությունից դողալով, սուրաց դեպի արևելյան դարպասը, որպեսզի անձամբ գլխավորի դուրս գալը։ Նրա ետևից գնում էին հեծելազորայինների էսկադրոնը և հետևակի լավագույն ուժերը։

Թագավորը երիտասարդ էր, նրա երակներում հոսում էր ֆրանսիացու տաք արյունը։ Նա հիշում էր Ռուփերտի փայլուն

www.a-pdf.com

...ները։ Նրա հեծելազորի անակնկալ հարվածը փոքր-ինչ սա-
...նեց ձախ ափին առանց հրամանատարի մնացած պառլա-
...տական զորքը։ Ձեռնամարտը անասելի թեժ էր։ Ձնգում էին
...գերը, չխկում էին նիզակները, գործի դրվեցին հրացանների
...դակոթները։

Պառլամենտական նորակոչիկները և միլիցիայի անփորձ
...ատներն սկսեցին ետ քաշվել, լքելով հրանոթները։ Բայց
...նց հրամանատարն այնպիսին չէր, որ աչքաթող աներ մար-
...ր թեկուզ մի որևէ տեղամասը։ Երբ պարզ դարձավ, որ շուտ-
...դացիների դիմադրությունը աջ ափին կոտրված է, Կրոմվելը,
...վաքելով «երկաթակողներին» և դարձնելով բռունցք, շուտ
...ավ դեպի գետանցը և սրընթաց անցավ կամուրջով, և նույն
...ն պահին, երբ թվում էր նրա զորքերն ուր որ է խուճապի
...ատնվեն, նա, ինչպես պատերազմի աստվածն ինքը, հայտնվեց
...ջանց մեջ հաղթական կոչով և ոգեշնչեց ու տարավ նրանց իր
...տևից մի այնպիսի հանդարտ ու զվարթ վստահությամբ, ինչպես
...միայն նա կարող էր մարտի տանել իր զինվորներին։

Թագավորական ջոկատները նահանջեցին. արքան կորցրել էր
...ր ձին, հետիոտն փախչում էր դեպի քաղաք... Նրա հետևակը
...ր կրակում վառոդի պակասության պատճառով։ Հրամանա-
...արներից Համիլտոնը և Դուգլասը մահացու վիրավորված էին։
...ակ Կրոմվելն անընդհատ հարձակվում էր։ Ահա նա տիրում է
...ինամու թնդանոթներին և դրանք ուղղում քաղաքի վրա, ահա
...ն արդեն պարիսպների տակ է, որտեղ ճարպկորեն ետ են քաշ-
...ել հեծելազորայինները. ահա նա պահանջում է, որ բերդի պա-
...ոն անմիջապես անձնատուր լինի։ Նրան պատասխանում են
...ոնոթների կրակոցներով։ «Դրոհի» — հրաման է տալիս նա, և
...ոցը գրավված է։ Կայազորի զինվորները մեկը մյուսի ետևից
...նում են՝ չդիմանալով Ձեռնամարտի սարսափելի ճնշմանը։

Պառլամենտական զորքերը մարտով ներխուժում են քաղաք,
...ակելով և սրերը ճոճելով։ Փողոցները լցվում են սպանվածնե-
...ով և վիրավորների դիակներով, շուռ տված սայլերով, նետված
...նքերով։ Ճակատամարտը շարունակվում է փողոցներում։ Դո-
...լիստները փախչում են։ Արևմտյան դարպասներից էլ են սա-
...ն ներխուժել հանրապետական գնդերը։ Կարլոսն ընդունում է
...ամոթալի պարտությունը. նրա զինվորներն ամբողջ խմբերով
...ի են հանձնվում։ Նա ցատկում է ուրիշի ձիու վրա ու հուսա-
...ատ գոչում յուրայիններին.

— Ավելի լավ է կռակե՛ք ինձ վրա. լավ է մեռնել, քան կենդ-
...ի մնալ։ Ես չեմ ուզում տեսնել այս ճակատագրական օրվա-
...ը։

Բայց պաթետիկ բացականչությունները չեն օգնի, և դրա ժա-
...մանակն էլ չէ. հարկավոր է փրկել սեփական կյանքը և հարկա-
...ր է մի կերպ խուսափել գերվելուց։ Կես հարյուրյակ հոյա-
...ները շրջապատում են թագավորին և, հուսահատ դիմադրա-

www.a-pdf.com

վելով, նահանջում են դեպի քաղաքի հյուսիսային դարպասները, որտեղ դեռ ճանապարհը բաց է։ Վերջապես կովի թոհուբոհի մեջ արյունաշաղախ քաղաքը մնում է ետևում. Կարլոսը մի խումբ մարդկանցով արշավում է դեպի հյուսիս և հանկարծ հասնում է շոտլանդական երեք հազարանոց հեծելազորին, որին գլխավորում է Դևիդ Լեսլին։ Նախկին գլխավոր հրամանատարը մի անբացատրելի սարսափով բռնված փախչում է Կրոմվելի սրից՝ անգամ փորձ չանելով մարտի մեջ մտնել։ Կարլոսն այլևս հույս չի դնում շոտլանդացիների վրա. նա պետք է մտածի միայն սեփական անձը փրկելու մասին։ Նա հագնում է գյուղացու շոր և գնում դեպի հարավ, դեպի Բրիսթոլ, խուսափելով մեծ ճանապարհից, շրջանցելով քաղաքները, շարժվելով միայն գիշերները։ Մի քանի ամիս անընդհատ թափառելուց հետո միայն նա բարեհաջող հասնում էր ֆրանսիական ափերին։

Դաժան մարտը Վուսթերի նեղլիկ թաղամասերում հետզհետե մարում է։ Հրետանին, որ դղրդում էր փողոցներով մեկ և կոտորում էր շոտլանդացիներին ամբողջ վաշտերով, կրակում է ավելի ու ավելի սակավ։ Ջեռնամարտի աղմուկը դեռևս լսվում է մերթ այստեղ, մերթ այնտեղ, բայց դա էլ քանի գնում մեղմանում է։ Եվս մի փայլուն հաղթանակ է տարված Կրոմվելի կողմից։ Շոտլանդական բանակը համարյա գլխովին ոչնչացված է։ Սպանված է գրեթե երեք հազար մարդ, ինը հազարը վերցված է գերի։ Նրանց, ում հաջողվել է ազատվել՝ հյուսիսային դարպասներից դուրս պրծնելով, մոտակա օրերին պիտի հանդիպեն միլիցիայի ջոկատները, որոնք բոլոր կողմերից շտապում են դեպի Վուսթեր, նույնպես պիտի սպանվեն կամ գերի վերցվեն։ Կբռնվեն բոլոր հրամանատարները՝ Լեսլին, Համիլտոնը, Լոդերդեյլը, կոմս Դերբին։ Ռոյալիստների բանակը դադարեց գոյություն ունենալուց։

Դա Կրոմվելի վերջին ճակատամարտն էր, նրա վերջին հաղթանակը պատերազմի դաշտում։

Այդ ճակատամարտը աշխարհին ցույց տվեց, որ Կրոմվելը հիրավի մեծ զորավար է, հիանալի կազմակերպիչ, ռազմավար ու մարտավար։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ IX

ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉԸ

Կրոմվելին, նրա սպաներին և բանակին տարբեր կոմսություններից ներկայացվել են մի շարք հանրագրեր, որոնց մեջ շնորհակալություն է հայտնվում նրանց մեծ ծառայությունների համար և թվարկվում են այն անլուր դժվարությունները, որոնք ընկած են երկրի վրա։ Այդ դժվարությունները վերացնելու համար նրանք խնդրում են գեներալ Կրոմվելին, նրա սպաներին և բանակին՝ զենք ծառայել շարիքը վերացնելու համար։

Ուայթլոքի հուշագրություններից

Այժմ, երբ նախկին թագավորը վախճանված է, իսկ նրա որդին ջախջախված, հարկավոր է զբաղվել պետական գործերը պատշաճ կարգ ու կանոնի բերելու խնդրով։

Կրոմվել

1. «ԳԼԽԱՆՔԸ»

Սեպտեմբերի 3-ի օրը, որ երկու անգամ պսակվել էր մեծ հաղթանակներով, դարձավ անգլիական հանրապետության ազգային տոնի օր։ Պառլամենտը որոշում կայացրեց այսուհետև այն համարել գոհության օր։

Այդ օրն արգելվում էր աշխատել։

Կրոմվելի հաղթանակները հռչակ բերին Անգլիային ողջ աշխարհի աչքում։ 1649 թվականի ամռանը, երբ նա հեռացավ Անգլիայից, բոլոր պետությունները, թվում էր, թե թշնամաբար էին տրամադրված այդ երկրի հանդեպ։ Այժմ՝ երկու տարի անց, երբ հաղթանակով վերադառնում էր Լոնդոն, ակներև էր, որ Անգլիան արդեն իրեն պատշաճ տեղն էր գտավել եվրոպական տերությունների շարքում. դրանցից շատերը նրա բարեկամությունն էին հայցում, մյուսները երկյուղում էին նրանից։ Կարլոսի հետ արդեն ոչ ոք լուրջ հույսեր չէր կապում, նրա դիրքը տարբեր թագավորների արքունիքներում իսկապես խղճալի էր։

Հանրապետությանը առաջինը ճանաչեց, որքան էլ տարօրինակ լինի, կաթոլիկ Իսպանիան՝ Անգլիայի վաղեմի, ավանդական թշնամին։ Շուտով նրա օրինակին հետևեցին Գերմանիայի, Վենետիկի, Ջենովայի կայսրերն ու իշխանները, շվեյցարական կանտոնները, Դանիայի և Պորտուգալիայի թագավորները, Շվեդիայի թագուհի Քրիստինան և, վերջապես, երկու տարի անց՝ Ֆրանսիան ինքը, որը սասանված էր Ֆրոնդայից։ Միայն ռուսական ցար Ալեքսանդր Միխայլովիչը չէր ցանկացել ճանաչել «ար-

www.a-pdf.com

քայասպաններին» հանրապետությունը։ Նա խզել էր բոլոր տեսակի հարաբերությունները և իր պետության սահմաններից դուրս էր քշել անգլիացի բոլոր վաճառականներին։

Իռլանդիայից և Շոտլանդիայից հետո, որոնք 1651 թվականի վերջերին վերջնականապես դադարեցրին ամեն տեսակ դիմադրություն, անգլիական հանրապետությանը հնազանդվեցին շրջակա կղզիները՝ ռոյալիստների նախկին հենակետերը, և անդրօվկիանոսյան գաղութները՝ Նոր Անգլիան, Նյուֆաունդլենդը, Վիրջինիան, Մերիլենդը։

Հանրապետության ներսում ռոյալիստական խռովության վտանգն արմատախիլ արվեց։ Ռազմական հոգսերի ու հայրենասիրական վերելքի մեջ գրեթե մարեց նաև լևելերական շարժումը։ Այժմ թվում էր, հասել է պատուղները հավաքելու ժամանակը՝ խաղաղ ու երջանիկ կյանքի ժամանակը նոր, մաքրված ու բարեփոխված երկրում։ Բայց, ինչպես գրել է բանաստեղծը, «...այնուհանդերձ շատ բան է մնում դեռ նվաճելու. չէ՞ որ խաղաղ ժամանակներն ունենում են իրենց հաղթանակները, ոչ պակաս փառավոր, քան պատերազմականները...»։

Երկիրը քայքայված էր։ Առևտուրն ու արհեստագործությունը գտնվում էին անկման մեջ, հողագործությունը՝ նույնպես։ Լիակատար ազատություն ստացած հողատերերն անամոթաբար թալանում էին գյուղացիներին, և սրանք սնանկանում էին, զրկվում շնչին հողաբաժնից և մի կտոր հացից։ Հին նահապետական լորդերի փոխարեն, որոնք փախել էին թագավորական բանակ կամ արտասահման, հայտնվում էին նոր պարոններ, ավելի անպատկառ, ավելի շահառու։ Սրանք ավելի մեծ եռանդով էին պարբսպապատում դաշտերը, գյուղացիներին քշում հայրենի վայրերից և դրանք գնում էին համալրելու թափառաշրջիկների վիթխարի բանակը, որոնք վխտում էին անգլիական ճանապարհներին ու քաղաքներում։ Գործազուրկներն այնքան շատ էին, որ հանրապետության առաջ լուրջ հարց կանգնեց. ինչպե՞ս կերակրել նրանց, ինչպե՞ս խուսափել նրանց դժգոհությունից։ Բանտերը պայթում էին անվճարունակ պարտապաններից։ Օրենքները չէին պահպանվում կամ ի չարն էին օգտագործվում անամոթ իրավաբանների կողմից, որոնք հեքիաթայնորեն ուռճանում էին դժբախտ, սնանկացած մարդկանց հաշվին։ Հարկերը հասնում էին վիթխարի թվերի։ Ուռճացած, մինչև 50 հազարի հասած բանակը ոռճիկ էր պահանջում և պարեն։ Սկեղեցական գործերում տիրում էր լիակատար անկարգություն։ Իսկապես որ դեռ շատ բան էր մնում հաղթահարելու այդ երկրում...

Կրոմվելի համար սեպտեմբերի 3-ը նույնպես դարձավ հատկանշական օր։ Ամբողջ հետագա տարիներին նա սրբորեն հարգում էր և նշում այն։ Ավելի ուշ, արդեն նրա մահից հետո, նրա թշնամիների շրջանում ծնվել էր մի լեգենդ, թե այդ օրը Վուսթերի ճակատամարտից առաջ անտառում նրան հայտնվել է ոմն

www.a-pdf.com

խորհրդավոր պարոն՝ մագաղաթի փաթեթը ձեռքին։ Սա Կրոմվելին խոստացել է յոթ տարի կատարել նրա բոլոր ցանկությունները, իսկ այդ ժամկետը անցնելուց հետո իրավունք էր ստանում ամբողջովին տիրանալ նրա հոգուն և մարմնին։ Կրոմվելը պայման է կապել այդ սատանայի հետ, իսկ սա, հասկանալի է, եղել է ոչ այլ ոք, քան իր արյունը և նա, դժոխային ոգևորությամբ լի՝ նետվել է ճակատամարտի։ Ահա թե ինչով է բացատրվում նրա փայլուն հաղթանակը։ Անտարակուսելի իսկությունը այս ողջ պատմության մեջ միայն այն փաստն է, որ Կրոմվելը կմեռնի ուղիղ յոթ տարի անց և հենց այդ օրը՝ սեպտեմբերի 3-ին։

Վուսթերում տարած հաղթանակը ոչ միայն պսակեց Կրոմվելին որպես հաղթական առաջնորդի, ոչ միայն ամրապնդեց նրա համոզվածությունը իր գործի նկատմամբ, այլև նրա հոգու վրայից վերցրեց բազում տարիների ծանրությունը՝ ծանրությունը հոգսերի, վախը հանրապետության բախտի համար, անվստահությունը իր կոչվածության նկատմամբ։ Այժմ հարկավոր էր հանգստանալ, թոթափել թախիծը, նույնիսկ զվարճանալ։ Նա Հայրենիքում էր։ Հարազատ դաշտերն ու անտառները շոյում էին նրա հայացքը։ Նա գնում էր տուն, դեպի սիրեցյալ կինը, դեպի երեխաները։ Նա շնչում էր հայրենի օդը։ Լոնդոն տանող ճանապարհին նրան նվիրել էին որսի բազեներ, որոնց նա այնքան սիրում էր. նա մի կողմ նետելով ամեն ինչ, տրվեց իր պատանեկան օրերի կրքերին՝ բազեներով որսորդությանը։

Լոնդոնում նրան դիմավորեցին դարձյալ հաղթական ցնծությամբ և հրետանային համազարկով։ Պառլամենտը շնորհ արեց նրան նաև թագավորի ամառային պալատը, փառահեղ Հեմփթոն-Փորտը ընդարձակ զբոսայգով, որի մեջ ճեմում էին բազում եղջերուներ։ Նրա եկամուտներին ավելացրին ևս տարեկան չորս հազար ֆունտ։ Հագիվ էր նա ժամանել, երբ նրա մոտ սկսեցին հայտնվել օտարերկրյա դեսպաններ։ Հեռագրերը պառլամենտի բնությանն էին հանձնվում նրա անունով։ Պալատը պաշտոնական շնորհավորանքի մեջ գրում էր նրան. «Այժմ, երբ շնորհիվ օրհնության, որ աստծուց իջել է քեզ վրա և բանակի վրա, հակառակորդը լիովին ոչնչացված է և գործերի վիճակն ինչպես Անգլիայում, այնպես էլ Շոտլանդիայում ազատում է ձերդ գերազանցությանը արշավանքը շարունակելու անհրաժեշտությունից, պառլամենտը ցանկանում է, որ դուք հանուն ձեր առողջության լիակատար վերականգնման ու ամրապնդման նվիրվեք հանգստի, որքան որ անհրաժեշտ կհամարեք, այդ նպատակով ձեզ համար հարմար մի տեղ ընտրեք Լոնդոնից ոչ հեռու, որպեսզի կարևորագույն խորհրդակցություններում, որոնցով պառլամենտը նկատի ունի զբաղվել հանրապետությունը վերջնականապես հաստատելու խնդրով, նա կարողանա օգտվել ձեր ներկայությունից, ձեր խորհուրդներից»։

www.a-pdf.com

Կրոմվելն այնուհետև դարձավ Անգլիայի գլխավոր դեմքը։ Հյու Պիթերսը, մի քարոզիչ, որ դիտել է նրա հաղթահանդեսը, նույնիսկ ասել է. «Այս մարդը կդառնա Անգլիայի թագավորը»։ Բայց հաղիվ թե Օլիվերը այժմ մտածում էր այդ մասին։ Ընդունելով մեծարանքները, նա իրեն պահում էր օրինակելի համեստությամբ. խոսում էր միայն իր զինվորների անվնասությունի ու արվեստի մասին, երբեք՝ ինքն իր մասին։ Նա ապրում էր առաջվա պես առանց հավակնությունների, թեպետև նրա պաշտոնատեղին գտնվում էր Ուայթհոլում, շինությունների մի խմբում, որ ստացել էր Քոկփիթ անունը։ Օտարերկրյա դեսպանները քիչ զարմանք չէին արտահայտում, տեսնելով նրա կահավորանքի և ապրելակերպի սպարտական պարզությունը։ Նա հիմա չէր մտածում իր մասին, նրա հոգում այժմ խաղաղություն էր, մարմինն առողջություն էր վայելում։ Մարտնչելու, արյուն հեղելու, ռիսկի դիմելու ժամանակներն անցել էին։

Այժմ պետք է շուրջը նայեր, վերջապես ձեռնամուխ լիներ պետության գործերը կարգի գցելուն, այն վերջնական կարգավորմանը, որին սպասում էր ժողովուրդը։

Կրոմվելն ազգի ներքին կառույցը վերափոխելու անհրաժեշտությունն զգում էր վաղուց, դժբախտ միապետի գլխատման պահից ի վեր։ Այդ մտքից չէր բաժանվում նա ո՛չ Իռլանդիայում, ո՛չ հյուսիսային խստաշունչ երկրի ճակատամարտի դաշտերում։ 49 թվականի օգոստոսին նա ստորագրեց մի հանրագիր, որ պառլամենտին էր հասցեագրված սպաների խորհրդի կողմից և որի մեջ ասված էր. «Բոլոր նախկինում հրատարակված քրեական օրենքները, և նմանապես վերջին ժամանակներս հրապարակված հրամանագրերը, որոնց միջոցով շատ աստվածավախ մարդիկ ենթարկվում են հալածանքի, պետք է վերացվեն... Անհրաժեշտ է որքան հնարավոր է արագ ենթարկել բազմաթիվ անհարկի օրենքների հետևանքով առաջացած մեծ անհարմարությունների, դրանց խճճվածության ու քաշքշուկի հարցը, օրենքներ, որոնք օգուտ են բերում առանձին մարդկանց, վնաս հասցնում ու ավելորդ ծախսերի տակ գցում հասարակությանը...»։ Մի տարի անց, ուղևորվելով հյուսիս, նա Լեգլոյին ասում էր, որ ցանկանում է իր բոլոր ուժերը ի սպաս դնել եկեղեցու և իրավունքի արմատական բարենորոգման գործին։ Բայց իրավաբանները դրան դիմադրություն են ցույց տալիս։ Հենց որ բանը գալիս է իրավունքի բարենորոգմանը, նրանք գոչում են, որ դա նշանակում է վերացնել սեփականությունը։ «Մինչդեռ,— սրտաբաց խոստովանում էր Կրոմվելը,— իրավունքը այն տեսքով, ինչպես որ գոյություն ունի, ծառայում է միայն իրավաբանների շահերին և խրախուսում է հարուստներին՝ աղքատներին ճնշելու համար»։

Իսկ Դենբարից հետո, դեռևս իր հոգնատանջ զորքերի հրաշ-

www.a-pdf.com

քով ձեռք բերած հաղթանակի տպավորության տակ, նա գրել է սփիքերին. «Աստված ձեր միջոցով մեծ գործեր արեց պատերազմում: Մարդիկ ձեզանից մեծ գործեր են սպասում նաև խաղաղ օրերին: Հրաժարվեք ինքներդ ձեզանից, բայց պահպանեք և ուժեղացրեք ձեր իշխանությունը, որպեսզի սանձահարեք ամբարտավաններին ու լպիրշներին, որոնք ատելություններ են անում Անգլիայում անդորրության դեմ, թեթևացրեք հնչվածների տառապանքները, ունկնդիր եղեք թշվառ բանտարկյալների հառաչանքներին, հոգացեք, որպեսզի վերացվեն շարաշահումները բոլոր խավերի մեջ: Հանրապետությանը սազական չէ, որ քչերի հարստանալու համար սնանկանում են շատերը»:

Կրոմվելն այդպիսի մտադրություններով վերադարձավ Անգլիա: Երեք գլխավոր խնդիր էր ծառացած երկրի առաջ: Դրանցից առաջինը իրավունքի բարեփոխումն էր, որը նրա աչքին և նրա ժամանակակիցների աչքին նշանակում էր ոչ միայն փոփոխություններ օրենսդրության մեջ, այլև սոցիալական վերակառուցումներ: Դաժան պատերազմները երկիրը հասցրել էին քաոսի: Փոխհարաբերությունները լենդլորդի ու վարձակալի, պարտապանի և պարտատիրոջ միջև, աշխատողի և վարձողի միջև կարիք էին զգում կարգավորման: Ամենից ծանրը գյուղացիների համար, ամենից կեղեքիչը ֆեոդալական հաստատություններից կոպիգոլդը՝ հողի ճորտական կախվածությունը լորդից, վերացված չէր. գյուղացին չէր դարձել իր հողի սեփականատերը, իրավունք չէր ստացել նաև համայնքի հողերի վրա: Երկրորդ խնդիրը՝ եկեղեցական գործերի կարգավորումն էր, որտեղ նույնպես խառնաշփոթ էր տիրում, վանքերը ամայացված էին, թալանված, սրբապատկերներից ու զարդերից զուրկ, ջարդված ապակենկարներով և այլակերպված երգեհոններով. զինվորները ժամանակ առ ժամանակ վանքերն օգտագործել էին որպես զորանոց, երբեմն էլ որպես ձիանոց կամ բանտ: Անգլիկանական քահանաները լքել էին դրանք. պրեսբիտերները ապարդյուն ջանում էին ի մի բերել և վերահսկել իրենց հոտը. նրանց լսում էին միայն բարեկեցիկ վաճառականներն ու դրամատերերը: Իսկ ժողովուրդը ամբողջովին գտնվում էր անտարբեր աղանդների, հաճախ զվարճահնար, հաճախ ուղղակի ֆանտաստիկ աղանդների իշխանության տակ: Քաղաքից քաղաք անցնելով, թափառաշրջիկ քարոզիչներն իրենց գլխին էին հավաքում ամբոխին:

Դրանք բոլորը մի բանում համախոհ էին. եկեղեցական տաճարները վերացնելու խնդրում: Այստեղ ևս եկեղեցական, կրոնական պահանջները վերածվում էին սոցիալականի: Իսկն ասած, եկեղեցին որպես միասնական կազմակերպություն վաղուց ի վեր գոյություն չուներ: Նրա ունեցվածքը նշանակալի չափով ընկել

www.a-pdf.com

էր աշխարհիկ սեփականատերերի, նույն այդ գործառու ջենթրիների, նոր հողատերերի ձեռքը։ Իսկ ամբողջ բնակչությունը ներքևից վերև պարտավոր էր չգիտես ինչու վճարել վաղեմի, խիստ ծանր այդ հարկը։ Կրոմվելը վաղուց էր խորհում դրա վերացման մասին։

Երրորդ կարևոր խնդիրը՝ ներկա պառլամենտի ցրումն էր և ընտրությունների նշանակումը մի նոր պառլամենտի՝ ավելի ներկայացուցչական, ավելի բազմանդամ։ Եվ իսկապես, այն վաթսուն մարդիկ, որ նիստ էին անում Վեսթմինսթերում, տարակուսանք էին հարուցում։ Փախուստներից, մաքրագործումներից, դավաճանություններից, պատերազմներից մի կերպ ազատված մարդկանց այդ խումբը վաղուց արդեն ոչ ոքի չէր ներկայացնում, բացի ինքն իրենից։ Առաջներում համայնքների պալատը հաշվվում էր մոտավորապես հինգ հարյուր մարդ։ Միայն այդպիսի ժողովը կարող էր պառլամենտ կոչվելու արժանի լինել, կառավարել արժանապատվորեն, հրապարակել արդարացի օրենքներ։

Կրոմվելը որքան ավելի էր խորամուխ լինում իր երբեմնի հեղափոխական պալատի, ինդեպենդենտների պալատի գործերի մեջ, այնքան ավելի էր զարմանում։ Ո՞ւր չքացան նրա անդամների՝ Վենի, Գեզլրիգի, Մարթենի խանդավառ իդեալականությունը։ Ո՞ւր կորավ նրանց անկաշառ ծարավը արդարության հանդեպ, նրանց հոգատարությունը ժողովրդի բարօրության նկատմամբ, օրինականության ու ազատության նկատմամբ։ Նրանք այդ մասին այլևս չէին խորհում։ Նրանք, ինչպես և բանակը, այժմ վերասերվել էին և երկրպագում էին այլ աստվածների։ Ագահությունը, հարստանալու անհագուրդ կիրքը այժմ տիրել էր նրանց։ Նրանք հարստություն էին դիզում Իռլանդիայի հաշվին։ Նրանք իրենցով էին արել և իրար մեջ բաժանում էին հողը, անտառները, քարածխի հանքերը, ռոյալիստներից բռնագրավված դանձերը, եկամտաբեր պաշտոնները, տաքուկ տեղերը, մենաշնորհները։ Այժմ նրանց գլխավոր խնդիրն էր՝ պահպանել իրենց իշխանությունը, բազմապատկել հարստությունը։ Նրանց օրենսդրությունն ուղղված էր հենց այն բանին, որպեսզի նպաստեր «շատերի սնանկացմանը հանուն քչերի հարստացման»։

Նրանց մոտ կեսը իրավաբաններ էին։ Իրավունքի ի՞նչ բարեփոխման մասին կարող է խոսք լինել հօգուտ ճնշվածների։ Նրանց մեծ մասը նախկին եկեղեցական հողերի սեփականատերեր էին, որոնք եկամուտներ էին ստանում տասանորդից։ Կարո՞ղ էին նրանք վերացնել տասանորդը։ Բոլորը հողերի էին տիրացել լենդլորդական իրավունքի հիման վրա։ Կարո՞ղ էին նրանք վերացնել կոպիգոլդը։ Նրանք բոլորն էլ դողում էին իրենց իշխանության համար, իրենց եկամտաբեր պաշտոնների և հարստության համար կարո՞ղ էին նրանք դեմոկրատական բարեփոխումներ անցկացնել, վերջապես կարո՞ղ էին նրանք կամավոր կեր-

www.a-pdf.com

պով ցած դնել իրենց լիազորությունները և նոր պառլամենտի ընտրություններ նշանակել։

Արդյունքում ոչ տասանորդը, ոչ էլ կոպիգոլդը չվերացվեցին. իրավունքի բարեփոխումը չիրականացավ, չնայած նիստ գումարեցին զանազան կոմիտեներ, գործի տպավորություն ստեղծելով։ Հարկերը չպակասեցրին, խոսքի, մամուլի ազատություն, հավատի հանդուրժողություն չհաստատվեց։ Դրա փոխարեն օրենքներ էին հրապարակվում աքլորակռիվը, արջահալածը, ձիարշավներն արգելելու մասին, որպեսզի խուսափեն ժողովրդի խմբվելուց և, ասված ագատի, խռովություններից։ Ամուսնական դավաճանության համար նշանակված էր մահապատիժ, պոռնկությունը պատժվում էր մտրակահարությամբ, ճակատի խարանմամբ և ուղղիչ տանը կալանավորելով։ Երկրորդ անգամ պոռնկությունը՝ մահով։ Հարբեցողությունը համահավասարեցվում էր քրեական հանցագործության հետ։

Արտաքին քաղաքականությունը նույնպես վարում էին շահադիտական, զավթողական միտումներով, ծառայեցնում նոր դասակարգերի հարստացմանը։ Ամենից առաջ նրանք ընդհարվում էին Հոլանդիայի ծովային տարածություններում իրենց լուրջ մրցակցի հետ։ Նրա առևտրական նավատորմը անգլիականից ավելի հարուստ էր ու ավելի շատ։ Նա տնօրինություն էր անում ծովերի վրա և բազմաթիվ գաղութներ ուներ։ Նա իր նավերով Անգլիա էր բերում ապրանքներ աշխարհի բոլոր ծայրերից և ընդ որում մեծ շահույթներ ստանում։

Վեսթմինսթերյան պարագլուխները պապական սպառնալիքի դեմ բողոքականության ուժերի միավորման քողի տակ առաջարկում էին պաշտպանահարձակողական դաշինք, իսկ իրականում կամենում էին կլանել հոլանդական առևտուրը և օգտագործել հոլանդական գաղութները։ Բայց Հոլանդիան չկամեցավ դառնալ բրիտանական ետ ընկած ծայրագավառ և մերժեց դաշինքը։

Այնժամ պառլամենտը 1551 թվականի հոկտեմբերին հրատարակեց նշանավոր «Նավագնացության ակտը», համաձայն որի բոլոր ապրանքները Անգլիա կարող են բերվել միայն անգլիական նավերով կամ այն երկրների նավերով, որտեղ դրանք արտադրվել են։ Արդյունքը եղավ այն, որ հոլանդական առևտուրը, որ կատարվում էր հիմնականում ուրիշի ապրանքներով, քայքայվեց։ Իսկ Անգլիան սկսեց տենդորեն նավատորմիղ կառուցել, պատրաստվելով պատերազմի՝ ծովերի վրա տիրապետության հասնելու համար։

Այդ ամենը Կրոմվելին դուր չէին գալիս։ Երբ հաղթանակների առաջին արբեցումն անցավ, երբ ապրում էր Լոնդոնում, նա ավելի սթափ դիտեց շուրջը և տեսավ, որ գործերը ամենևին էլ այնպես չեն, ինչպես ինքը կցանկանար։ Իսկն ասած, նրա մրտրերն ու ցանկությունները ապագա պետական կառուցվածքի վե-

www.a-pdf.com

բաբերյալ հակասության մեջ էին պալատի անդամների ձգտումների հետ, որոնց ժողովուրդը վաղուց արդեն անվանում էր ոչ այլ կերպ, քան «Rump»՝ «գլխանք»։ Նա փայփայում էր բոլոր բողոքական պետությունները Անգլիայի տիրապետության տակ միավորելու միտքը, իսկ նրանք շահառության նկատառումներով պատերազմ էին պատրաստում բողոքական Հոլանդիայի դեմ և սեթևեթում էին կաթոլիկ Իսպանիայի հետ։ Նա խոստացել էր և ուզում էր անցկացնել իրավունքի ոեֆորմ, իսկ նրանք դրանում շահագրգռված չէին։ Նա դեմ չէր լինի վերացնելու եկեղեցական տասանորդը, իսկ նրանք ոչ մի դեպքում չէին համաձայնում։

Նա չէր վախենում աղանդավորներից, հովանավորում էր նրանց իր բանակում։ «Ես ավելի շուտ կհամաձայնեի,— ասում էր նա,— որ մեր մեջ թույլատրվեր մահմեդականությունը, քան թույլատրվեր աստծո զավակներից թեկուզ մեկի նկատմամբ հալածանքը»։ Վերջին ժամանակներս նա հատկապես մտերմացել էր միլենար-աղանդավորական Հարիսոնի հետ, իսկ «գլխանքը» վախենում էր աղանդավորներից և հետապնդում էր ժողովրդական աղանդներին։ Կրոմվելը շահախնդիր չէր, թեպետև գնահատում էր բարեկեցությունը և քրտնաթոր աշխատում էր դրա բազմապատկման համար, բայց նա հեշտությամբ հրաժարվեց Իռլանդիայի լորդ-լեյտենանտի եկամտաբեր պաշտոնից։ Այն, ինչ նա արդեն ուներ, իրեն բավական էր։ Հետագայում նա հպատակական կարիքներին կհատկացնի իրեն շնորհված արքայական պալատը, իսկ նրանք՝ «գլխանքի» պարագլուխները, առանց խտրության խլում ու զավթում էին բոլոր պաշտոններն ու հողերը, պալատներն ու մենաշնորհները և չէին ճանաչում չափ ու սահման։ Նրանք չէին խորշում նաև կաշառքներից։ Նա սիրում էր և գնահատում բանակը, իր զավակին ու իր ուժը, իսկ նրանք բանակն ատում էին։ Վերջապես նա պառլամենտից ինքնահրաժարում պահանջեց, որը նրանք այդպես էլ ոչ մի կերպ վճռականություն չունեցան տալու։

Այդ վերջին կետն էլ հենց դարձավ գլխավոր փորձաքարը։ Զիջելով Կրոմվելի հեղինակությանը, որից այժմ ավելի քան երբևէ վախենում էին, «գլխանքի» անդամները նոյեմբերին համենայն դեպս նշանակեցին իրենց ինքնահրաժարման ամսաթիվը՝ 3-ը նոյեմբերի 1654 թվականի։ Երեք երկար տարիներ պիտի անցնեին, նախքան նրանք հրաժեշտ կտային իրենց իշխանությանը։ Եվ այն էլ լրիվ կհրաժարվեի՞ն արդյոք։ Մի՞թե արդեն հիմա նրանք չեն որոճում այնքան խորամանկորեն շուռումուռ տալ ընտրական օրենքը, որպեսզի իրենց համար ցմահ տեղեր և զևկավար դերեր ապահովեն նոր պառլամենտում։

Պետական կառուցվածքի կարգավորումը պահանջում էր անհապաղ լուրջ քննություն։ Դեկտեմբերի 10-ին Կրոմվելը սփիքեր

www.a-pdf.com

Լենթալի տանը խորհրդակցություն հրավիրեց։ Հրավիրված էին պալատի անդամներն ու բանակի առաջատար սպաները՝ մի բավական ստվար կազմ։ Կրոմվելը առայժմ ուզում էր իմանալ միայն, թե նրանցից ով ինչ է մտածում, և, գուցե թե, պարզի, որ տեսակետի կողմն է իրավացիությունն ու ուժը։

Եվ երբ բոլորը նստեցին և աղմուկը մարեց, Կրոմվելն ասաց.

— Պարոններ, ներկայումս, երբ նախկին արքան մեռած է, իսկ նրա որդին ջախջախված, հարկավոր է զբաղվել պետական գործերը պատշաճ կարգի բերելով։ Մենք պետք է միասնաբար քննարկենք այդ հարցը և մտածենք, թե ինչ է հարկավոր ձեռնարկել։

Բոլորը լռում էին։ Հարցը այնքան կարևոր էր, որ սիրտ չէին անի խոսել հանպատրաստից։

Ոտքի ելավ զգուշավոր Ուայթլոքը, որը քաջ գիտակ էր իրավաբանական նրբություններին։

— Ես համարձակվում եմ հարցնել, ի՞նչ հիման վրա է ենթադրվում կառուցել կառավարական հիշյալ ձևերը։ Այսինքն, լինելու է այն լիիրավ հանրապետությո՞ւն, թե՞ փոքր-ինչ միապետության խառնուրդով։

Դա հենց այն էր, որ հուզում էր բոլորին։ Նախքան մանրամասների քննարկումը, հարկավոր էր պարզել պետական կառուցվածքի հիմնական սկզբունքը։ Կրոմվելը խրախուսարար գլխով արեց.

— Միլորդը ճիշտ հարց դրեց։ Մենք իսկապես պետք է քննարկենք, թե ո՞րն է ավելի լավ. հիմնել հանրապետությո՞ւն, թե՞ սահմանափակ միապետություն։ Իսկ եթե դա պիտի լինի միապետություն, ապա ո՞ւմ վրա պիտի դրվի իշխանությունը։

Հարցը դրված էր, ինչպես ասում են, շեշտակի, և վիճաբանություններն սկսվեցին։ Մեկը մյուսի ետևից ելույթ ունեցան իրավաբաններ Ուայթլոքը, Ուիդրինգթոնը, Սենթ-Ջոնը։ Նրանք բոլորը հանգում էին այն բանին, որ Անգլիայում կառավարման կերպը համենայն դեպս պետք է լինի միապետական։ Թերևս, ամենից ճիշտ կլիներ այդ իշխանությունը հանձնել հանգուցյալ Լոգավորի որդիներից մեկին, բայց ոչ ավագ որդուն՝ Կարլոսին, որն իրեն արատավորել էր վերջին պատերազմով։ Ո՛չ, ավելի լավ է իշխանության գլուխ դնել ամենից կրտսերին՝ անչափահաս Գլոսթերի դուքսին։ Օրինականությունը կպահպանվի, իսկ գործավարությունը կմնա նախկին ձեռքերում՝ չէ՞ որ մանուկ-արքային հարկավոր կլինեն խնամակալներ ու խորհրդատուներ։ Ուիլիքեր Լենթալը բարձրաձայն ասաց այն, ինչ որ կար բոլորի մտքում։

— Կարող են լուրջ երկպառակություններ տեղի ունենալ, եթե մեր ժողովրդի կառավարումը հիմնվի՝ առանց դրա մեջ միապետական իշխանություն ներմուծելու։

www.a-pdf.com

Ոտքի ելավ հաղթահասակ Դեսբորոն, որին մասավորական իրավաբանները փոքր-ինչ արհամարհում էին նրա զինվորական կոպտության և շիտակության համար։ Հիմա նա որևէ ընդդիմադիր բան կասի։ Եվ իսկապես էլ, իրավաբանների գլուխները վրայով դիմելով իր աներորդուն՝ Կրոմվելին, նա բամբ ձայնով ասում է.

— Ես ձեզ խնդրում եմ, միլորդ, բացատրել, թե ինչու Անգլիան չի կարող ունենալ հանրապետական կառավարում։ Չէ՞ որ այլ երկրներ ունեն։

Անմիջապես արձագանքում է Ուայթլոքը։ Նա չի ուզում կռվի մեջ մտնել, նա ուզում է միայն բացատրել այդ բոի զինվորականին.

— Անգլիայի օրենքներն այնքան սերտ են կապված կառավարման միապետական ձևին, որ կառավարություն կազմել առանց միապետական սկզբունքների՝ այդ կնշանակեր էական փոփոխություններ մտցնել օրենսդրության և դատարանակազմության մեջ։ Մի բան, որ կարճ ժամանակում մենք չենք կարող անել։ Բացի այդ, անկարելի է կանխատեսել, թե ինչպիսի անհարմարություններ ի հայտ կգան նմանօրինակ փոփոխությունից։

Վիճաբանությունը բորբոքվում է մի նոր թափով։ Այժմ արդեն պարզ է. սպաները ցանկանում են հանրապետություն, իրավաբանները՝ սահմանափակ միապետություն։ Ամենից բարվոքը մանկահասակ Գլոսթերին թագավոր դարձնելն է, ծայրահեղ դեպքում՝ արքայի երկրորդ որդուն, Հակոբ Յորքին, կամ նույնիսկ Կարլոսին, նշանակելով նրան որոշակի ժամանակամիջոց «ուղղվելու» համար։ Կրոմվելը հասավ նպատակին։ Նա պարզեց կարծիքներն ու տրամադրություններն այն մարդկանց, որոնցից այժմ կախված էր Անգլիայի ճակատագիրը։ Դրանով կարելի էր և ավարտել։ Նա ծանրորեն ոտքի է ելնում և ամփոփում։

— Այսպես ուրեմն, ես կարծում եմ, որ ամենահարմարը կլիներ միապետության որոշ գծերի հետ միախառն իշխանության ձևը։ Եթե իհարկե այն կարողանա ապահովել մեր՝ ինչպես անգլիացիների, այնպես էլ քրիստոնյաների աղոտությունների անվթարությունն ու անվտանգությունը։

«Գլխանքի» անդամների դիրքը Կրոմվելը պարզեց, բայց ինչպե՞ս ստիպել նրանց գործել, ինչպե՞ս անցկացնել անհրաժեշտ բարենորոգումները։ Խմորումները երկրում ուժեղանում էին։ Խորհրդակցության հետևյալ օրը նա հանրագիր ստացավ մի քանի կոմսությունների բնակիչներից. սրանք պահանջում էին վերացնել եկեղեցական տասանորդը և իրավունքի ռեֆորմ անցկացնել։ Նրանց գոռուն-գոչյունը զնգում էր Կրոմվելի ականջներում. «Մենք հնարավորություն չունենք մեր երեխաներին և ընտանիքներին անհրաժեշտ կենսամիջոցներ ընձեռել, նրանց

www.a-pdf.com

որպես ստրուկների հանձնում ենք կղերականների և տասանորդի տնօրենների իշխանությանը, որոնք դաժանորեն կեղեքում են մեզ...»։ Բողոքագիրն ուղարկված էր նրան՝ գլխավոր հրամանատար Կրոմվելին և նրա բանակի սպաներին։ Որևէ ռեֆորմ անցկացնելու «գլխանքի» ընդունակությանը մարդիկ արդեն դադարել էին հավատալ...

Կրոմվելը գիտակցում էր այն ծայրագույն պատասխանատվությունը, որն ընկած էր իր վրա։ Ժողովուրդը նայում էր նրան ոչ միայն իբրև հաղթական զորավարի և ազատարարի. նրա հետ ավելի մեծ, ավելի հեռուն գնացող հույսեր էին կապում։ Նա, ինչ նա ինքը պետք է ստեղծեր արդարացի պետական կարգ, վերջ տար հարստահարմանն ու կեղեքմանը, անցկացներ բարեփոխումներ։ Անգամ լևելերները կրկին հավատով էին լցվել նրա հանդեպ։ Անգամ Ուինսթենլին՝ աղքատ հող փորողների առաջնորդը, նրան իրազեկ դարձրեց հասարակությունը վերակառուցելու իր ծրագրին՝ «Ազատության օրենքին»։ Եվ Կրոմվելը դարձյալ պետք է վճռեր (օ՜, որքան ծանր է այդ ընտրությունը), թե ում հետ գնար. արդյոք նախկին զինակիցների՞, որոնք ներկայումս Երկարատև պառլամենտի «գլխանքն» են դարձել, բանակի սպաների հե՞տ, թե՞ ժողովրդի, որն ամեն օր և ամենուրեք հիշեցնում է նրան իր հավատի ու հույսերի մասին։

Կրոմվելը դեռևս մտածում էր, թե պալատի անդամներին, որոնք երեք տարի առաջ մեծ գործ կատարեցին, կարելի կլինի այսպես թե այնպես համոզել շարունակելու այն, որպեսզի երկրի դժբախտ զավակների հառաչանքները վերջապես դադարեն։ Բայց «գլխանքի» այդ քաջշուկարարներին բան հասկացնելը դժվար գործ էր։ Հենց որ խոսք էր բացվում իրավունքի ռեֆորմի մասին, սրանք գոչում էին, թե յուրաքանչյուր միջոցառում կհանգեցնի սեփականության վերացման։ Հաջողվեց պառլամենտից դուրս ստեղծել մի կոմիտե՝ օրենսդրության ուսումնասիրման համար, բայց սրա աշխատանքը նույնպես դժվար էր առաջ գնում։ Եկեղեցու կարգավորման գործը, հետևաբար և տասանորդի վերացման հարցը, նույնպես սահմանափակվում էր միայն նախագծեր կազմելով։ Միակ բանը, որ պառլամենտը իրականացրեց գովելի եռանդով, ռոյալիստների հողերի բռնագրավումն էր։

Այստեղ նրա անդամներն անձնական շահագրգռվածություն ունեին, և գործն առաջ գնաց հաջող։ Կրոմվելը մի անգամ նկատեց, որ մարդկանց ունեզրկում են, ոնց որ ոչխարի հոտին, օրը մի ուսումնական մարդ, չմտահոգվելով անգամ բռնագրավման դատաձառները նշելու մասին։

Այո, Կրոմվելն ստիպված էր թաքուն կսկիծով խոստովանել, որ «գլխանքը» վերասերվել էր վերջնականապես, վերածվել — վերածվել է մի լկտի օլիգարխիական հանցախմբի, որը ոչ մի կերպ չի ուզում հրաժեշտ տալ իր իշխանությանը։

www.a-pdf.com

Մի ինչ-որ բան անկասելիորեն պիտի տեղի ունենար։ Տարածվում էին ամենազանազան լուրեր, կանխագուշակություններ, մշուշոտ սպառնալիքներ։ Աստղագետները հայտարարեցին, թե 1652 թվականի մարտին, «սև երկուշաբթի» օրը տեղի կունենա արևի խավարում, խավար կտիրի երկրին օրը ցերեկով, լուսատուն կծածկվի սև սկավառակով և երկնքում աստղեր կերևան։ Ահա թե ինչ. միլենար աղանդավորներն այդ օրն սպասում էին երկրորդ գալստյանը, քաղքենիները դողում էին սարսափից։ Ոմանք ջանում էին վաղօրոք հեռանալ Լոնդոնից, որպեսզի խուսափեն տիեզերական աղետից։ Պետական խորհուրդը հարկադրված էր հրատարակել հայտակոչ, որտեղ պարզաբանված էր, որ արեգակի խավարումը՝ բնական երևույթ է և բնակիչները երկյուղելու բան չունեն։

Մայիսին սկսվեց պատերազմը Հոլանդիայի դեմ։ Ծովակալ Բլեյքը՝ նոր աստղ անգլիական նավատորմի զորավարների համաստեղության մեջ, բռնագրավեց հոլանդական տասնվեց առևտրական նավեր, որոնք բեռնված էին թանկարժեք ապրանքներով։ Դարձյալ երկիրը պետք է լարեր ուժերը, նավատորմ կառուցեր, խստացներ հարկերը, բայց ոչ թե ընդհանուր թշնամու դեմ պաշտպանության համար, այլ զավթելու համար, քշերի հարստացման համար։

Կրոմվելն այդ պատերազմին անբարյացակամ էր վերաբերվում։ Նա դրան չէր խոչընդոտում բացահայտորեն. պառլամենտի գործն էր վճռել, թե ինչպիսի քաղաքականություն պետք է վարել, բայց պայքարը բողոքական եղբայրների դեմ շահառության համար նա նողկալի էր համարում։ Պատմում են, որ հոլանդացիներին, որոնք դիմել էին խաղաղության բանակցություններ սկսելու խնդրանքով, նա ասել է. «Ինձ այս պատերազմը դուր չի գալիս, ձեր քրիստոնեական հորդորանքը ամենայն գովեստի է արժանի։ Ես կանեմ այն ամենը, ինչ կախված է ինձանից, որպեսզի հասնեմ խաղաղության»։

Ամռանը բանակում ի հայտ եկան դժգոհության առաջին նշանները։ Սպաներն ու զինվորները սկսել էին կրկին, ինչպես 47 թվականին, հավաքվել մեկտեղ, քննարկել զանազան քաղաքական գործեր։ Դա արդեն ինքնին ահեղ նախանշանակ էր։ Օգոստոսի 13-ին «գլխանքին» հանրագիր ներկայացվեց բանակի սպաների կողմից։ Այդտեղ մի անգամ ևս թվարկված էին այն բարենորոգումները, որոնք պետք է անցկացներ պառլամենտը. տասանորդի վերացում, օրենսդրության կարգավորում, պետական պաշտոններից հեռացնել «ոչ պիտանի, իրենց վարկաբեկած և շփացած անձանց», ակցիզների ու հարկերի կարգավորում, պետական պարտքերի վճարում՝ «առաջին հերթին աղքատ մարդկանց»։ Նրանում կային և այսպիսի կետեր.

«6. Պետք է հաշվետվություններ ներկայացվեն պետական միջոցների ծախսման և զինվորների ապառքը վճարելու մասին...

www.a-pdf.com

8. Պետական եկամուտները պետք է հավաքվեն մի գանձարանի մեջ. գանձարանի կառավարիչը պետք է նշանակվի պառլամենտի կողմից, իսկ մուտքն ու ելքը պետք է հրապարակվի կես տարին մեկ։ 9. Անհրաժեշտ է պալատի անդամներից կազմել մի կոմիտե, ավելորդ պաշտոնների ու դրույքների հարցը քննելու համար»։ «Գլխանքին» համարյա ակնհայտ կշտամբում էին պետական գանձարանը կողոպտելու համար։

Պառլամենտի ինքնացրման պահանջը, այն, ինչի վրա հատկապես պնդում էր Կրոմվելը, հանրագրում չկար։ Միայն մի զգույշ արտահայտություն կար, որը, ըստ էության, ակնարկում էր, թե «գլխանքը» պետք է մի նոր ներկայացուցչական ժողովով փոխարինել. «Անհրաժեշտ է ճշտորոշել, թե ինչ հատկություններով պիտի օժտված լինեն նրանք, ովքեր պետք է նիստ անեն հաջորդ պառլամենտներում»։

Հանրագիրը ստորագրված էր բանակի առաջատար սպաների կողմից։ Կրոմվելի անունը դրա տակ չկար, բայց նշված էր նրա բոլոր զինակիցների ազգանունները՝ նրա ազգական Ուոլիի, Օքիի և, իհարկե, Լամբերթի, որը, ինչպես ասում էին, բանակային օպոզիցիայի առաջնորդն էր։ Հաղորդում էին, որ հանրագիրը հանձնելուց առաջ Կրոմվելը սպաների հետ մի քանի խորհրդակցություն է անցկացրել։

Հոկտեմբերին Կրոմվելը մի անգամ էլ փորձեց պայմանավորվածության հասնել «գլխանքի» և սպաների միջև, բայց խորհրդակցությունները չհանգեցին ցանկալի արդյունքների։ Պառլամենտական իրավաբանները, ինչպես գրել է այդ օրերին Լեդլոն, «շահագրգռված էին, որ իրենց ձեռքում պահեն ամբողջ ազգի կյանքը, ազատությունը և ունեցվածքը»։

Նոյեմբերյան մի հազվադեպ բարենպաստ երեկո պետական կնիքի լորդ-պահապան Բալսթրոդ Ուայթլոքը ճեմում էր սուրբ Հակոբի զբոսայգում՝ խորհելով զանազան բաներ, երբ հանկարծ նրան ձայն տվեցին։ Նրա առջև կանգնած էր Կրոմվելը։ Մի հարգալիրությամբ, որ արտասովոր էր նրա համար և որը ստիպեց անակնկալի եկած Ուայթլոքին զգուշանալ, լորդ-լեյտենանտը նրան առաջարկեց միասին զբոսնել։ Խոսակցությունը սկսվեց վերացական սիրալիրություններով։

Ուայթլոքին անընդհատ թվում էր, թե Կրոմվելը հատկապես չանում է նրան հաճելի բան ասել, հորդորելով՝ վստահել իրեն։ Ակներև է, որ լուրջ խոսակցություն էր լինելու։ Ահա և վերջապես բուն գործը. Կրոմվելը սկսեց խոսել պառլամենտի մասին։

Ուայթլոքն աշխատում էր բաց չթողնել և ոչ մի խոսք. այն, ինչ կասի ամենակարող Կրոմվելն այսօր, վաղը կարող է դառնալ իրադարձություն՝ պատմական իրադարձություն։ Ահա նա ասում է, որ չի կարելի նորից ամեն ինչ ռիսկի տակ դնել հանուն

www.a-pdf.com

գատարկ բանակովի։ Խորամանկ Ուայթլոքը հասկանում է, որ խոսքը «գլխանքի» մասին է, բայց պատասխանում է.

— Այո, գլխավոր հարցն այժմ այն է, թե ինչպես պահպանել խաղաղությունը բանակում։

— Դուք իրավացի եք,— համաձայնում է Կրոմվելը,— բանակը սկսում է վրդովմունքով նայել պառլամենտին։ Ես կցանկանայի, որ նա դրա համար ավելի քիչ հիմքեր ունենար։

Ուայթլոքը ի պատասխան լռեց, և Կրոմվելն սկսեց զարգացնել իր միտքը։ Նա խոսում էր «գլխանքի» դեմ ..ոեն կողմից ստացվող գանգատների մասին, նրա անձեռնահասության ու անգործնականության մասին, իր իշխանությունը ավելի ներկայացուցչական պառլամենտին հանձնել չցանկանալու մասին, նրա անդամների մեծամասնության խայտառակ վարքի մասին. գանձագողություն, եկամտաբեր պաշտոնների հափշտակում...

— Բայց պառլամենտը ծանր դրության մեջ է,— փորձում էր պաշտպանվել Ուայթլոքը, սակայն նա միայն ավելի բորբոքեց Կրոմվելին։ Սա բարձրացրեց ձայնը.

— Հույս չկա, թե դրանք պետության մեջ կարգ կհաստատեն, չեղած բան է, իսկապես, չեղած բան է...

Եվ այսպես, ինչպես հասկացավ Ուայթլոքը, «գլխանքը» հարկավոր է վերացնել բոլորովին կամ գոնե ստիպել, որ գործի։

— Բայց չէ՞ որ մենք ինքներս ճանաչեցինք այդ պառլամենտը որպես օրինական իշխանություն,— շարունակեց վիճել նա։— Եվ ինչպե՞ս դրանից հետո վերացնել կամ զսպել։ Դժվար կլինի դրա համար որևէ միջոց գտնել, շատ դժվար։

— Իսկ ի՞նչ կլիներ, եթե...— Կրոմվելը խոսում էր ակնհայտ ճիգեր գործադրելով, ասես հարցը առաջադրում էր ոչ թե Ուայթլոքին, այլ ինքն իրեն։— Իսկ ի՞նչ կլինի, եթե ինչ-որ մեկը այդ բանը վերցնի իր վրա՝ համաձայնի դառնալ թագավոր։

— Դա չեղավ,— տաքացած առարկեց Ուայթլոքը,— ես կարծում եմ, որ այդ դեղն ավելի վատը կլինի, քան հիվանդությունն ինքը։

Կրոմվելն զգուշորեն իրենն էր պնդում։ Նա խոսում էր հարցի այդպիսի լուծման նպատակահարմարության մասին. Անգլիայում միապետությանն իրոք սովոր են, այն հարգանք է ներշնչում, հեշտ է այն դնել օրինական իրավական հիմքի վրա...

— Բայց դա մեղանից կվանի մեր բոլոր բարեկամներին, որոնք հավատում են հանրապետությանը,— վրդովվեց Ուայթլոքը,— երկիրը կառավարելու մասին եղած բոլոր բանակցությունները կհանդեն մի հարցի. Կրոմվե՞լը, թե՞ Ստյուարտը։ Գուցե շատ ավելի պարզ ու հասարակ կլիներ ուղղակի բանակցություններ սկսել Կարլոս II-ի հետ։

Կրոմվելը լռեց։ Նրա դեմքը շառագունել էր՝ չգիտես նոյեմբերյան խոնավ քամո՞ւց, թե՞ զրուցակցի կտրուկ խոսքերից։

www.a-pdf.com

Շ ։ ։ով նրանք սաունորեն գլուխ տվեցին իրար ու բաժանվեցին։ ։։ խոսակցությունից հետո Ուայթլոքին թվում էր, որ Կրոմվելը ։ սափում է իրենից և նրան այլևս իր անկեղծությանը չի արնացնում։

Իսկապես, իսկ ի՞նչ կլինի, եթե որևէ մեկը համաձայնի դառ։ թագավոր։

Գուցե ավելի լավ է երկիրը կարգի բերել միապետական իշ։ ։։նության պես մի բանի օգնությա՞մբ։

Կրա արքա, բայց ինչպիսի՞,
Ո՞վ կարող է դառնալ արքա ..

Ծաղրաբան ռոյալիստները դեռևս 48 թվին կասկածում էին, ։։։ Կրոմվելը թագ դնելու ցանկություն ունի։ Այժմ նույնը կաս։։։ածում է Ուայթլոքը, դե հավանաբար ուրիշ շատ-շատերն էլ։ ։։ափազանց մեծ էր նրա իշխանությունը բանակում, չափազանց ։։ ։։ արագ էր նրա հեղինակությունը երկրում։

Վենետիկյան մի դեսպանորդ այդ օրերին ասում էր, թե միայն Կրոմվելի ձեռներեցությունն ու ազդեցությունը կարող են ։։։ ։։ անխել հետագա երկպառակությունները Անգլիայում։ Ճակատագրիրը նրան նորից պիտի կանգնեցնի երկընտրանքի առջև. ո՞ւմ ։։։ ։։ ետ լինել, ո՞ր ուժերը գլխավորել։ «Երկու ընդդիմադիր ուժեր ։։։ ։։ ։։

www.e-pdf.com

անհապաղ արձակել պառլամենտը։ Հատկապես մարտական էին տրամադրված Լամբերթն ու Հարիսոնը։

Փետրվարի վերջին Բլեյքը նոր փայլուն հաղթանակ տարավ հոլանդական նավատորմիղի դեմ, և «գլխանքը» իրեն ավելի վստահ զգաց։ Գարնանը նա վերջապես ձեռնամուխ եղավ նոր պառլամենտի ընտրությունների կարգի քննարկմանը։ Բայց դե դա ի՞նչ կարգ էր որ... Իրականում ավելի մեծ անպատկառություն դժվար էր պատկերացնել։ Նոր ընտրական օրենքի նախագիծն ազդարարում էր, որ ներկայումս գոյություն ունեցող պառլամենտի բոլոր անդամները վերընտրության ենթակա չեն։ Նրանք մեքենաբար ընդգրկվում են նոր և հաջորդ բոլոր պառլամենտների կազմում։ Թե ո՞վ է նոր պառլամենտում «օրինականորեն» և ով՝ «ապօրինի», դա որոշելու իրավունքը դարձյալ պատկանում է նրանց՝ տխրահռչակ «գլխանքի» անդամներին։ Այդ նշանակում է, որ նրանց օլիգարխիական իշխանությունը հաստատվում է ընդմիշտ։ Նախագիծն արդեն երկու անգամ հաստատվել էր պալատում. ևս մի ընթերցում՝ և այն կդառնա օրենք։

Ապրիլի 19-ին Կրոմվելի մոտ հավաքվել էին սպաները։ Հրավիրված էին նաև պառլամենտի լիդերներ Ուայթլոքը, Սենթ-Ջոնը, Վենը, Գեզլրիգը։ Կրոմվելը դեռևս հույս ուներ խաղաղ պայմանավորվածության հասնել։ Չէր կարելի թույլ տալ, որ «գլխանքը» վերածվի անփոխարինելի օլիգարխիայի, բայց չէր կարելի խրախուսել նաև սպաների պառլամենտի վրա ոռնություն գործադրելու նկրտումները։

Նրա ծրագիրը հստակ էր. թող պալատի անդամները խոստանան հետաձգել ընտրական օրենքի քննարկումը, թող նրանք իրենց իշխանությունը հանձնեն ժամանակավոր կառավարությանը՝ պատվարժան և հեղինակավոր մարդկանց, որոնք հայտնի են որպես հանրապետության պաշտպաններ և ընդհանուրի գործի մարտիկներ, իսկ իրենք անհապաղ ցրվեն։ «Գլխանքի» անդամները առարկում էին։ Գեզլրիգը կատաղաբար վրա պրծավ այդ նախագծին։ Վենը նախագիծը քննադատեց ավելի հանգիստ։ Ուայթլոքն այն անվանեց անխիղճ ու պետական իմաստությանը հակասող։ Սպաները պնդեցին իրենցը և պառլամենտական առաջնորդների մեջ տատանում սկսվեց։ Առաջինը նախագծի հետ համաձայնեց Սենթ-Ջոնը, այնուհետև անձնատուր եղավ Վենը։

Վենն այժմ Կրոմվելի հակառակորդների ճամբարում էր. ահա թե ինչն էր հատկապես դառնություն պատճառում։ Բոցաշունչ հանրապետականը, անկաշառ մարտիկը, երբեմնի ընկերը, հուսալի օգնականը, համախոհ մարդը այժմ սառն ու թշնամաբար էր խոսում իր գեներալի հետ։ Այդ նա, հենց նա էր անպատկառ օրինագծի հեղինակը։ Իշխանությունը, փաստարկում էր նա, պիտի գտնվի հենց այն մարդկանց ձեռքին, ովքեր վտանգելով իրենց կյանքն ու պատիվը, պայքարել են թագավորական կա-

www.a-pdf.com

մայականությունների դեմ 47 և 48 թվականներին, ովքեր իրենց ձեռքով ստեղծել են իրենց հանրապետությունը և պահպանում էին այն խառնակ տարիներին։ Կրոմվելը գիտեր, որ վենը կատաղի հանրապետական է և ոչ մի դեպքում չի համաձայնի մասնակցել միապետական նմանօրինակ որևէ կառավարության։ Նա կողմնակից էր Իսպանիայի հետ բարեկամությանը, չէր սիրում լանակը և ջանում էր դրան հակադրել հզոր նավատորմը։ Նա երկյուղ էր կրում Հարիսոնի տիպի մարդկանցից և կանխատեսում էր ռազմական դիկտատուրայի հնարավորությունը։

Խոսակցությունը ձգվեց մինչև ուշ գիշեր, վենը բորբոքվում էր։ Ուայթլոքը և էլի մի քանիսը, որ ի վիճակի չէին պայքարելու հոգնածության դեմ, արդեն աննկատ դուրս էին եկել սենյակից ու ուղևորվեցին իրենց տները, նրը վերջապես համաձայնության պես մի բանի հանգեցին։ Վենը անձնատուր եղավ։ Նա և նրա ընկերները խոստացան հետաձգել ընտրական օրինագծի քննարկումը և հաջորդ օրը հանդիպել սպաների հետ՝ հետագա բանակցությունների համար։ Կրոմվելը հուսադրվել էր. «Մենք միանգամայն գոհացանք դրանով,— ասում էր նա հետագայում,— և համաձայնեցինք ու սկսեցինք հուսալ, որ հետևյալ օրը այդ հարցը կվճռենք ի գոհունակություն համընդհանուրի»։

Առավոտյան դեմ, հազիվ էր հասցրել նախաճաշել, նրա մոտ եկան Ուայթլոքը, պառլամենտի էլի մի քանի անդամներ և սպաներ։ Երեկվա խոսակցությունը շարունակվեց։ Բոլորը կարծես թե ասում էին մի եզրակացության. պառլամենտը պետք է նշանակի քառասուն հոգու, որպեսզի նրանք ղեկավարեն։

Դրանց մեծավորապես կեսը պետք է պառլամենտի անդամներ լինեն, կեսն էլ սպաներ։ Այնուհետև անմիջապես կկազմեն «խանքիթ» արձակումը։ Սկսեցին կազմել մոտավոր ցուցակներ, թե ով պետք է մտնի կառավարության մեջ։ Այդ ժամանակ արդեն պառլամենտի հերթական նիստը սկսվել էր, և նրա անդամները հրաժեշտ տալով շտապեցին վեստմինստեր։ Բոլորը համոզված էին, որ այդ առավոտ պալատում որևէ էական բան տեղի չի ունենա, և Կրոմվելը հանգիստ էր։

Բայց կես ժամ հետո գրգռված Ինգոլդսբին վազեց նրա մոտ և, հևասպառ մոտենալով նրան, հանեց գլխարկը, հաղորդեց ապշեցուցիչ նորությունը. պառլամենտը լեփ-լեցուն է, ներկա է մոտ հարյուր մարդ, նրանք ձեռնամուխ են եղել այն նույն ընտրական օրենքի մասին օրինագծի քննարկմանը, որը նախորդ օրը խոստացել էին հետաձգել։

Կրոմվելը ապշահար եղավ։ Նա չէր ուզում հավատալ։ Այդպե՞ս ուխտադրուժ կերպով խախտել երեկ այդ նույն սենյակում տրված խոստումը։ Նրանք այդ չէին կարող անել։

Բայց ահա ներս է վազում երկրորդ բանբերը։ Սա նույնպես նույնպես հաստատում է անհավատալին. պառլամենտը առավոտվանից քննարկում է այն օրինագիծը, որը պետք է ընդմիշտ

www.a-pdf.com

հավերժացներ նրա իշխանությունը։ Դրա նախաձեռնողը Գեզելրիգն է, նա համոզում է անհապաղ ընդունել օրինագիծը և ցրվել մինչև նոյեմբեր, որպեսզի չպահանջեն վերացնել նոր օրենքը։

— Չի կարող պատահել,— քրթմնջում է Կրոմվելը,— ես չեմ հավատում, որ այդ կարգի մարդիկ կարող էին այդպես վարվել...

Բայց ահա արդեն երրորդ բանբերն է գալիս պառլամենտից։ Ի՞նչ կասի նա։ Ահա թե ինչ. պալատը ամբողջապես պաշտպանում է Գեզելրիգին։ Կրոմվելի փոխարեն գլխավոր հրամանատար որոշվեց նշանակել Ֆերֆաքսին։ Նոր օրինագիծը, ահա ուր որ է, կդրվի քվեարկության։

Դե մի՞թե հիմա ժամանակն է մտածելու, թե ինչպես վարվել։ Չէ՛, ուշ է։ Պետք է գործել այժմ։ Այո՛, Կրոմվելն այժմ չի էլ կարող սառնորեն դատել։ Նրա աչքերը ասես սևանում են՝ վիրավորանքի զգացումից, կատաղությունից, դառնությունից։ Ահա նրանք՝ նախկին բարեկամներն ու զինակիցները։ Այդպես շարաշահել իր վստահությունը, այդպես ծանակել իր խաղաղասիրությունը։

Բայց կատաղությունը եռում է ներսում, նա պոռթկալու ազատություն չի տալիս դրան, չի ճչում անզորությունից, ինչպես խելահեղ կին։ Շուտափույթ, ժլատ խոսքերով նա հրամայում է կանչել հրաձիգների ջոկատը. թող նրանք հետևեն իրեն։ Իսկ նա ինքը ինչպես որ կար՝ տնային սև զգեստով և բրդյա գորշ գուլպաներով, հասարակ քաղաքացու տեսքով ուղևորվում է պառլամենտ։

... Աշխույժ վիճաբանություն է տեղի ունենում, և ոչ բոլոր դեպուտատներն են անմիջապես նկատում, որ լայն քայլերով դահլիճ է մտնում Կրոմվելը և սովորականի պես նստում վերջին նստարաններից մեկի վրա։ Հրաձիգները նրա նշանի համաձայն մնացել էին դրսում՝ դռների ետևում։

Քառորդ ժամ Կրոմվելը լռում էր ու լսում։ Դահլիճի մյուս ծայրում նկատում է Հարիսոնին և ձեռքի շարժումով կանչում։ Երբ նա մոտեցավ, Կրոմվելը կամաց ասաց.

— Ժամը հասել է, ես պիտի անեմ այդ։

Բացատրելու հարկ չեղավ. Հարիսոնը անմիջապես հասկացավ նրան։

— Հանաք բան չէ,— ասաց նա։— Եվ վտանգավոր է։ Լավ մտածեք, սըր, նախքան սկսելը։

— Դուք իրավացի եք,— պատասխանեց Կրոմվելը և էլի կես ժամ լուռ նստեց, խոժոռված ունկնդրելով ելույթ ունեցողներին։ Նրա հոնքերը կիտված էին։ Քունքերում երակները զարկում էին արագ ու հաճախակի։

Սփիքերը մուրճը խփեց սեղանին. օրինագիծը դրվեց քվեարկության։

— Այժմ արդեն ժամանակն է,— ասաց Կրոմվելը ոչ այնքան

www.a-pdf.com

...ին, որքան ինքն իրեն։ Նա ոտքի ելավ ու հանեց գլխ-
...ոց։

...ը հայացքները վայրկենապես ուղղվեցին նրա կողմը, և
...ին մի ակնթարթում լռեց։ Նրա տուգումը, դեռևս թաքուն,
...իր ուժգնությամբ սարսափելի, փոխանցվեց նրանց։ Անմի-
...ենդաձուկ տիրեց, ինչպես լինում է ամպրոպից առաջ, երբ
...ինչ պասպանձվում է՝ անխուսափելի փոթորիկից սարսա-
...։

...ոս խոսքի սկիզբը դեռևս իր տոնով խաղաղ էր, բայց պա-
...ակում էր դառն, դաժան կշտամբանքներ։

— Օրկարատև պառլամենտը,— ասում էր նա,— իր առա-
...ն օրերին մեծագործություններ կատարեց, նա աշխատում էր
...մբնդհանուր բարօրության համար։ Նա հոգում էր ժողովրդի
...ին։ Դուք,— նա մի հայացք գցեց պալատի վրա, ասես առա-
...ն անգամ էր տեսնում այն,— դուք կոչվել էիք առաջ տանել
...ի պատվավոր գործը։ Իսկ ի՞նչ արիք դուք։

...նա քայլեց առաջ, ասես նեղվելիս լիներ նստարանների միջև,
...ուրս եկավ դահլիճի կենտրոն։ Նա կրկին սկսեց զննել դեմ-
...ը, ասես առաջին անգամ էր տեսնում, և դրանք ապշեցրին
...ն. կուշտ, տոգած, արդեն երիտասարդությունն անցրած, ցո-
...ության ու կրքերի կնիքը վրաները, խաղացող, անհանգիստ
...երով՝ դրանք ամենևին այն մարդկանց աչքերը չէին, ովքեր
...ներեք տարի առաջ այրվելով արդարության ծարավից,
...ոգին իրենց վիթխարի պայքարը միապետության ահեղ հրե-
...ելմ։ Ոչ թե դեմքեր, այլ խորամանկ, դժնի, չար դիմակներ
...ալ նա իր առջև, և դայությունը նրա, մինչև այդ դասված,
...թափ առած դուրս հորդաց փոթորկի պես։

...նա թուք ու մուր էր թափում այդ դիմակների վրա. նրանք
...ենակ չեն ոչինչ անելու ընդհանուրի բարօրության համար.
...նք որդեգրել են նեղճակատ պրեսբիտերների և խաբեբա իրա-
...ների վնասաբեր սկզբունքները, որոնք պաշտպանում են
...կալությանը, նրանք հոգ են տանում միայն մի բանի մասին,
...որ հավերժացնեն իրենց իշխանությունը, նրանք միտումնա-
...որ կերպով չեն կատարում իրենց խոստումները, դրանք
...և ուղն ու ծուծը ծախված մարդիկ են, այո, այո ծախու մար-
...որոնք պատրաստ են ամեն ինչի՝ հանուն փողի ու շահի։

...ատաղությունը խնդրում էր նրան։ Նա գրեթե խելակորույս
...յարձել, համարյա կուրացել։ Նրա աչքի առաջ դեմքեր են,
...ոտ, քրտնաթոր, որոնց վրա կաթիլները դատնալով կեղտա-
...մակավուն բծեր, նողկանք են հարուցում և էլ ավելի են գրգ-
...ռ նոա ատելություն։ Ցանկանալով ստորացնել նրանց, որքան
...նարավոր է խորը վիրավորել, նա ակռաները ցաշեց գլխարկը
...շարունակեց գոռալ ետ ու առաջ քայլելով դահլիճում, դոփելով
...ները և մատով ցույց տալով այդ նողկալի դեմքերը։ Նա այդ
...մքերի վրա կարդում էր դրանց տերերի անձնական թաքուն

www.a-pdf.com

մեղքերը։ Դրանց մասին լսել էր նա. սա հարբեցող է, մյուսը՝ վատնող, երրորդը՝ կնամոլ...

— Դուք պառլամենտ լինելու համար այլևս պիտանի չե՛ք,— ոռոտում էր նա։— Դուք առանց այդ էլ չափազանց երկար մնացիք։

Ինչ-որ մեկը վեր կացավ պատասխան տալու նրան և դողացող ձայնով սկսեց.

— Մենք առաջին անգամ ենք լսում այսպիսի՝ պառլամենտին ոչ վայել ճառ... Առավել ևս սարսափելի է, որ այն արտասանում է պառլամենտի ծառան, որին մենք բոլորս այնքան վստահել ենք...

Դա վերջին կաթիլն էր։ «Վստահե՛լ ենք»։ Նրանք իրեն վստահե՛լ են։ Իսկ նրանք ինչպե՞ս վարվեցին իր վստահության հետ։ Կրոմվելը չթողեց, որ նա ավարտի իր ասելիքը, և ինքն իրեն կորցրած, գոչեց տասնապատկված ուժով.

— Բավակա՛ն է։ Ես վե՛րջ կտամ ձեր շաղակրատանքին։ Դուք պառլամենտ չեք։ Ձե՛զ եմ ասում, դուք պառլամենտ չե՛ք։ Ես դադարեցնում եմ ձեր նիստերը։— Նա դարձավ դեպի Հարիսոնը։— Կանչեցե՛ք դրանց։ Կանչեցե՛ք։

Դռները բացվեցին, և երեսուն հրացանավորներ շղթաները զնգացնելով ներս մտան դահլիճ և երկշարք կանգնելով, սպասեցին հրահանգի։ Կրոմվելը ցույց տվեց սփիքերի կողմը.

— Վերցրե՛ք դրան։

Լենթալը փորձեց դիմադրել։ Այնժամ Հարիսոնը, ենթարկվելով հրամանին, բռնեց նրա թիկնոցից և քաշեց բազկաթոռի վրայից։

Վենը վերջապես խոսելու ընդունակություն ձեռք բերեց։

— Դա ազնիվ բան չէ,— գոչեց նա տեղից։— Դա հակառակ է ամենայն պատվի ու բարոյականության։

Օլիվերը կտրուկ շուռ եկավ։ Օ՜, այդ Վենը։ Խռպոտ ձայնը լցվեց դառնությամբ.

— Հե՜յ, դու, սրբ Հենրի Վե՜ն, սրբ Հենրի Վե՜ն... Աստված, ազատիր ինձ Հենրի Վենից։

Մինչդեռ դահլիճում ամեն ինչ խառնվել էր իրար։ Պալատի անդամներից ոմանք նետվում էին դեպի ելքը։ Հրացանակիրները քայլում էին շարքերի միջով և թեթևակի հրում դիմադրողներին։

Կրոմվելը մոտեցավ դահլիճի կենտրոնի սեղանին, որի վրա դրված էր գայիսոնը՝ պառլամենտական իշխանության խորհրդանիշը։ Նա ձեռքը տարավ դեպի գայիսոնը։

— Ի՞նչ ենք անելու այս խաղալիքը,— ասաց նա և արհամարհական քմծիծաղը ծոմռեց նրա դեմքը։— Տարե՛ք սա։

Զինվորները դուրս տարան գայիսոնը։ Դեպուտատները, վախեցած տխմար հոտի պես, խռնվել էին ելքի մոտ։ Կրոմվելը նորից դարձավ նրանց կողմը։ Նրա ատելությունը դեռ չէր մա-

www.a-pdf.com

բել, բայց իր կատաղության պատճառած ամոթի զգացումն արդեն արթնացել էր և դրանից առելությունը սաստկացել։

— Դո՛ւք, դո՛ւք ինձ ստիպեցիք այս բանն անել,— գրեթե արցունքն աչքերին գոչեց նա։— Ես զոր ու գիշեր աղոթում էի աստծուն, որ ինձ ավելի լավ է մահ ուղարկի, քան այս բանին արժանացնի։

Նա տեսավ Մարթենին և նրա երեսին շպրտեց, թե՝ նա ծեր անառակ է, և դա ճիշտ էր։ Մի ուրիշի անվանեց շնացող, երրորդին՝ գող, չորրորդին՝ հարբեցող։ Անգամ Ուայթլոքին նա մեղադրեց անարդարացիության մեջ, իսկ Վենի ետևից գոռաց.

— Ողորմելի՜ խեղկատակ։

Նա գրագրից խլեց շարաբաստիկ օրինագիծը, և այնուհետև ոչ ոք չիմացավ, թե այդ օրինագիծը ինչ եղավ։

Ամեն ինչ վերջացած էր. դահլիճը դատարկվեց։ Դռները փակեցին, և Կրոմվելը դժժացող գլխով և ամայացած սրտով գնաց տուն՝ Ուայթհոլ, որտեղ նրան սպասում էին սպաները։ Երկրում այլևս պառլամենտ գոյություն չուներ։

Երեկոյան, նույն այդ օրը, նա Պետական խորհրդին հայտարարեց, որ վերջինիս լիազորություններն այսուհետև դադարեցվում են։ Բրեդշոուն փորձեց պաշտպանվել, նախազգուշացնել, բայց ապարդյուն։ Եվ նա ինքը, և նրա խորհրդատուներ Գեզլրիդը, Լավը, Սքոթը տեսան, որ գործը տանուլ էր տրված։ Պետական խորհուրդը նույնպես լուծարքի ենթարկվեց։

Պառլամենտը ցրելու մասին լուրը ակնթարթորեն տարածվեց երկրով մեկ։

Բայց դեպուտատներից ոմանք զուր էին հույս դնում ժողովրդական վրդովմունքի վրա։ Ժողովուրդը ոտքի չելավ։ Արդեն վաղուց ոչ ոք չէր հավատում անպատկառ «գլխանքին», շահառուների ու խաբեբաների այդ խմբին։ Փողոցներում անընդհատ լրգեր էին հնչում կրկներգերով.

«Պառլամենտականների մի տասնյակը կարելի է գնել մի պենիով»։

Այդ սրիկաների խիզախ վռնդումը ընդունվեց ցնծությամբ։ Կրոմվելը կրկին դարձավ օրվա հերոսը, կեղեքվածների պաշտպանն ու ռազմիկների աստվածը, որ ստեղծված է փառապանծ հաղթանակների համար։

2. «ՍՐԲԵՐԸ» ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ

«Քանի որ վերջին պառլամենտի արձակումից հետո անհրաժեշտ է հոգ տանել խաղաղությունը, տնվտանգությունը և հանրապետության լավ ղեկավարումն ապահովող միջոցառումների մասին, դրա համար իմ կողմից և իմ սպաների խորհրդի գիտությամբ նշանակված են տարբեր անձինք, որոնք հայտնի են

www.a-pdf.com

իրենց աստվածավախությամբ և ազնվությամբ, որոնց վրա դրվում են մեծ խնդիրներ և բարձր վստահություն... Վստահ լինելով առ աստված ձեր սիրույն, ձեր արիությանը հանուն նրա և նվիրվածությանը գործին նրա և մեր հանրապետության ժողովրդի ամենայն բարօրությանը, ես՝ Օլիվեր Կրոմվելս, այդ հանրապետության բոլոր բանակների և զինված ուժերի գլխավոր հրամանատարս, սույնով կոչ եմ անում և պարտավորեցնում եմ ձեզ անձամբ ներկայանալ և ներկա լինել խորհրդի դանլինում, որ կոչվում է Վեսթմինսթերի Սիթիի Ուայթհոլ, առաջիկա հունիս ամսվա 4-ին... Եվ դրանից դուրս չպետք է խուսափեք:

Տրված է իմ անձնական ստորագրությամբ և կնիքով. 6-ը հունիսի 1653 թվականի:

ՕԼԻՎԵՐ ԿՐՈՄՎԵԼ»:

Այդպիսի հրավերք Անգլիայում ստացան հարյուր քսանութ մարդ, վեցը Իռլանդիայում և հինգը՝ Շոտլանդիայում։ Նշանակված օրը նրանք ներկայացան Վեսթմինսթեր և սկսեցին ղեկավարել հանրապետությունը և իրենց «պառլամենտ» անվանել։ Նրանց այդ բանին լիազորել էր, ինչպես երևում է հրավիրագրից, անձամբ Օլիվեր Կրոմվելը։

Երկարատև պառլամենտի «գլխանքի» ցրումից հետո Կրոմվելը դարձավ Անգլիայի միանձնյա տիրակալը։ Եվ այժմ ինքը պետք է հոգ տաներ պետական իշխանության կազմավորման մասին։

Անամոթ «գլխանքի» ցրումը երկրում համընդհանուր գոհունակություն հարուցեց։ «Անգամ ոչ մի շուն չհաչեց, ուր մնաց որ հնչեր քիչ թե շատ նկատելի տրտունջ»՝ հետագայում հիշում էր Կրոմվելը։ Կյանքը երկրում ընթանում էր իր հունով. Սիթիում աշխույժ առևտուր էին անում խանութպանները, աշխատում էին դատարանները և մունիցիպալ իշխանությունները, քարոզիչները ամբիոններից ժողովրդին կոչ էին անում ապաշխարել։ Օտարերկրյա դեսպաններին հավաստեցին անգլիական հանրապետության անխախտ բարեկամությունը։

Կրոմվելին նայում էին հիացմունքով ու երկյուղով։ Նրա ամենից կատաղի թշնամիները՝ ռոյալիստներն ու պրեսբիտերները, այժմ լցված էին ակնածանքով և շշուկով միմյանց ասում էին, թե հիմա Կարլոս Ստյուարտը կամուսնանա Կրոմվելի աղջկա հետ, և Կրոմվելը կդառնա Իռլանդիայի հերցոգ ու փոխարքա։ Չէ, առարկում էին ուրիշները, նա ինքը թագը կդնի իր գլխին, այդ մասին արդեն պայմանավորվածություն կա սպանների հետ։

Նրա մյուս թշնամիները ևս՝ ձախակողմյան թշնամիները, լևելերները, ոգի առան։ Վտարանդի Ջոն Լիլբեռնը, որ դեռ վերջերս որոտ ու կայծակ էր տեղում «բռնակալի» դեմ, նրան Հոլանդիայից ուղարկեց հույսով ու ոգևորությամբ լի նամակ։ Երկարատև պառլամենտի ցրումը, գրում էր նա, մի միջոցառում է, որ

www.a-pdf.com

տանում է դեպի Անգլիայի աղատագրումը։ Այդ իրադարձությունը «աղատածին Ջոնին» այնքան նպաստավոր հեղաշրջում էր թվում, որ նա, հակառակ դատարանի վճռի, նավ նստեց և թռավ դեպի հայրենիք՝ իր նորոդ ու ազատ հայրենիքը։

Միայն Սիթիի քաղաքային իշխանությունները բողոք հայտնեցին և պահանջեցին պառլամենտը վերադարձնել։ Բայց դրան ոչ ոք ուշադրություն չդարձրեց։

Կրոմվելը, սակայն, հեռու էր այն բանից, որ գոհանար միանձնյա դիկտատորի իր դրությունից։ Ընդհակառակը, նա կարծում էր, որ ինքը չի տանի այդ բեռը։ Իշխանությունը երկրում պիտի օրինական լինի։ Նա անհրաժեշտություն էր զգում որքան հնարավոր է շուտ հանձնել իր լիազորությունները ներկայացուցչական մարմնին։

Բայց ո՞ւմ։ Պարզ է, որ համընդհանուր-ընտրություն նշանակել չէր կարելի։ Եթե պառլամենտ գումարվի հին, թագավորական սահմանադրության հիման վրա, նրա բարձր ունեցվածքային ցենզով և օկրուգների անհավասարաչափ բաշխումով, ապա, մեկ էլ տեսար, նորից իշխանության գլուխ անցան պրեսբիտերները և քողարկված ռոյալիստները, և այն ժամանակ երկարատև պայքարով ողջ ձեռք բերածը զուր կանցնի։ Իսկ եթե հիմք վերցվի լևելերյան «ժողովրդական համաձայնագիրը», իշխանությունը կստանան հրահրիչ-հավասարարականները, այն ժամանակ երկիրը կընկնի խռովության ու անարխիայի մեջ։

Ոչ, Անգլիան պետք է կառավարեն բարեպաշտ, չափավոր մարդիկ, աստծուն նվիրված, որոնք միաժամանակ ապացուցել են իրենց հավատարմությունը հանրապետությանը։ Չէ՞ որ «գլխանքիչ» ևս պահանջում էր, որ նա իր իշխանությունը տար «ճանաչված անձանց, աստվածավախ, անբասիր վարքով մարդկանց»։

Մերձավորների հետ երկար խորհրդակցություններից հետո Կրոմվելը պարզեց, որ Լամբերթը՝ սպայության առաջնորդը, ուզում է որպես պետության գլուխ տեսնել մի ոչ մեծ խորհուրդ՝ բաղկացած տասը-տասներկու մարդուց. նրանց մեջ առաջատարները պետք է պատկանի սպաներին։ Այդ խորհուրդը կկազմի գրավոր սահմանադրություն և կսշանակի նոր պառլամենտի ընտրություններ։ Հարիսոնը՝ աղանդավորների առաջնորդը, երազում էր «իմաստունների խորհրդի» մասին, յոթանասուն մարդուց բաղկացած, հրեական Սինեդրիոնի նման։

Կրոմվելը տատանվում էր, նրա դրությունը հիմա ավելի դժվարին էր, քան երբևէ։ Այժմ խոսքն այն մասին չէր, թե ում հետ գնալ, ում գլխավորել, ում խոցել իր անպարտելի սրով, այլ այն մասին, որ պետք է ընտրվի երկրի նոր պետական կարգ, ստեղծվի օրինական և արդարացի իշխանություն։ Ինչպե՞ս ձեռնամուխ լինել դրան։ Ի՞նչ ուղի ընտրել։ Ո՞ւմ անսալ։

Հավանորեն, Կրոմվելը երբեք այդքան ջերմեռանդ չէր աղո-

www.a-pdf.com

թել, ինչպես այդ շաբաթներին։ Եվ վճիռը եկավ. նա հակվեց դեպի Հարիսոնի կարծիքը։ Նոր կառավարական մարմինը կազմվեց հետևյալ կերպ. Կրոմվելի և սպաների խորհրդի պահանջով տեղական ինդեպենդենտական կոնգրեգացիաները յուրաքանչյուր կոմսության ներկայացրին առավել հարմար անձանց ցուցակները։ Դրանցից հաստատվեցին 189 հոգի, որից հետո Կրոմվելը, գիտակցելով իր պատասխանատվության ողջ ծանրությունն ու մեծությունը, իր ստորագրությամբ նրանց հրավիրատոմսեր ուղարկեց հուլիսի 4-ին Վեսթմինսթեր ներկայանալու համար, որպեսզի կատարեն գերագույն իշխանության ֆունկցիաները։

Նշանակված օրը Ուայթհոլի խորհրդի մեծ դահլիճում հավաքվել էին նոր օրենսդրական ժողովի անդամները։ Նրանք նստել էին երկար սեղանի շուրջը։ Դահլիճը լեցուն էր սպաներով։ Կրոմվելը ներս մտավ զինվորի լայն, ամուր քայլերով և կանգ առավ մեջտեղում, պատուհանի մոտ։ Նրա ծանր դեմքը այրվում էր ոգևորությունից, հայացքը վեր էր հառել։ Դահլիճը լռեց։ Կրոմվելը մտովի օգնության կանչեց աստծո անունը և սկսեց խոսել։

Նա ազնվորեն, ջերմությամբ նրանց պատմեց, թե ինչն էր պառլամենտի «գլխանքի» ցրման շարժառիթը, ժողովրդի դժգոհության մասին այդ անազնիվ ժողովից և նրա նկատմամբ վերջին անխուսափելի բռնության մասին՝ հանրապետությունը փրկելու համար։ Ամոթը իր խելահեղ վարմունքի համար դեռևս այրում էր նրան, և նա ասաց.

— Ես միանգամայն անկեղծորեն, ինչպես տեր-աստծո առաջ, կարող եմ ասել. որևէ բռնության թույլ տալու մասին միտքն անգամ մեզ համար ավելի է ծանր եղել, քան որևէ ճակատամարտ, որին մենք երբևէ մասնակցել ենք...

Այո, բանակը, որին ժողովուրդը վստահել է իր իրավունքների պահպանությունը, կատարեց այդ դաժան գործողությունը, բայց հո բանակը այժմ ընձեռում է նրանց՝ աստծո ընտրյալներին, լիակատար իշխանություն, որպեսզի նրանք այն ի սպաս դնեն ժողովրդի բարօրությանը։ Սպաների խորհուրդն այժմ վայր է դնում իր լիազորությունները։ Այն կդադարեցնի իր նիստերը, հենց որ նրանք հրամայեն։ Կրոմվելն ընդգծեց, որ դա միանգամայն այլ ժողով է։ Եվ դրա համար էլ նրանք պետք է հետևեն իրենց կոչումին և լինեն «խելամիտ, մաքուր, հանդարտաբարո, բարի, գթասիրտ, բեղուն, անկողմնակալ, աներեսպաշտ»։

— Մենք պետք է լինենք կարեկցող,— նորից ու նորից կրկնում էր նա,— համբերատար ու հանդուրժող բոլորի նկատմամբ։ Սիրել ամենքին, ներել, հոգալ և պաշտպանել բոլորին... Եվ եթե ամենից աղքատ, ամենից մեղսավոր քրիստոնյան կցանկանա խաղաղ ու հանգիստ ապրել ձեր իշխանության տակ,— ես ասում եմ, եթե որևէ մեկը կուզենա բարեպաշտ ու խաղաղ կյանք վարել,— թող նրան հովանավորություն ցույց տրվի։

www.a-pdf.com

Մի քանի ժամ տևեց այդ չկապակցված, խանդավառ, մարդարեներից ու առաքյալներից արված վկայակոչումներով լեցուն ճառը։

Հրաժեշտ տալով, Կրոմվելը հաղորդեց ժողովրդին, որ այն կգործի մինչև 1654 թվականի նոյեմբերը։ Իր արձակումից երեք ամիս առաջ ժողովը պետք է ընտրի նրանց, ովքեր ժառանգելու են նրա իշխանությունը հաջորդ տասներկու ամիսներին։ Ի պատասխան ժողովը հրավիրեց Կրոմվելին, Լամբերթին, Դեսբորոյին և էլի երկու սպաների՝ մտնել իրենց խորհրդի կազմի մեջ։

Այդ մարդիկ դուր չէր, որ այդպիսի ոգևորությամբ էին դիմավորել Կրոմվելի հայտնության նման ճառը, նրանք իրենք էլ լին համակված միստիկական տրամադրություններով։ Դրանք Լոնդոնի և կոմսությունների կրոնական համայնքների անդամներ էին՝ մեծ մասամբ խանութպաններ, ոչ հարուստ սքվայրներ, առևտրականներ։

Նրանց թվում էին Կրոմվելի ազգականներն ու մերձավորները. նրա որդին՝ Հենրին, աները՝ Դիք Ռիչարդ Մերը, հանգուցյալ Հենրի Այրթոնի եղբայրը՝ Ջոն Այրթոնը։ Կային և զինակից պաներ. գնդապետ Մոնքը, լորդ Բրոգհիլը։ Վենը և Ֆերֆաքսը դրավիրվեցին, բայց դրանք հրաժարվեցին մասնակցել ժողովին։

Իշխանության նոր մարմնի ամենից եռանդուն անդամն իրեն ի հայտ բերեց հետագայում. մի ոմն Փրեյզգոդ Բերբոն, կաշեվաճառ և կրկնակնունքների աղանդի քարոզիչ։ Նրա անունն իսկ, որ անգլերեն նշանակում է «աստվածաշունչ», խոսում է աղանդավորների այն միջավայրի մասին, որից նա ծնունդ էր առել։ Բերբոնը մի այնպիսի աչքի ընկնող անձնավորություն էր, որ ողջ պառլամենտը շուտով սկսեցին կոչել ոչ այլ կերպ, քան Բերբոնյան։

Մեծամասնությունը տրամադրված էր խիստ չափավոր։ Բայց նրանց մեջ կային և մոլեռանդներ, որոնք պատրաստ էին անհապաղ նետվել նոր Արմագեդոնի մեջ և Անգլիայում Մովսեսի կոչեքսն ընդունել հռոմեական իրավունքի վրա հիմնված օրենսդրության փոխարեն։

Նոր ասամբլեան իր գործունեությունն սկսեց այն բանից, որ հուլիսի 12-ին իրեն հռչակեց պառլամենտ։ Նրանք՝ այդ «սրբերը», առլեցուն էին մեծ ձգտումներով, նրանք հայտարարում էին, թե հավատում են այն բանին, որ իրենց երկրի վրա «սաղմնում է ազատության առշալույսը»։

Նրանք իսկապես պատրաստ էին կատարել վիթխարի աշխատանք և ձեռնամուխ էին եղել դրան հասարակ մարդկանց հատուկ միամիտ ջերմեռանդությամբ, որոնց անծանոթ է իրավասությունը, անծանոթ է տատանումը, մարդիկ, որոնք ուղղակի գնում են դեպի նպատակ։ «Իրավունքի ռեֆորմը,— ասում էր նրանց Կրոմվելը,— որն այնքան ուժգնորեն հուզում էր մարդ-

www.a-pdf.com

լանց մտքերը, այժմ էլ է հերթի դրված»։ Նրանք էլ հենց ամենից առաջ ձեռնամուխ եղան իրավունքի ռեֆորմին։ Բառացիորեն մի քանի օրում կոմիտե նշանակեցին Անգլիական օրենքների ամբողջ խճճված զանգվածը մի ոչ մեծ դրպանի գրքի չափով օրենսգրքում ամփոփելու համար։ Կանցլերի դատարանը, որ գոյություն ուներ դարեր ի վեր (դրա թղթարարականությունն ու անօրինակ քաշքշուկը մտել էր ասացվածքների մեջ) հապճեպ որոշվեց իսպառ վերացնել։ Նրանք լուծարքի ենթարկեցին նաև եկեղեցական ամուսնությունը և այն փոխարինեցին քաղաքացիականով։ Մտցրին քաղաքացիական կացության ակտերի գրանցում, առաջարկեցին չդատել գրպանահատներին ու ձիագողերին՝ առաջին անգամվա հանցանքի համար, վերացրին կանանց խարույկի վրա այրելը։

Առաջ քաշվեցին առավել անհավատալի նախագծեր. իրապես, ոչ կարծեցյալ, սնանկացածներին չպետք է բանտարկել պարտապանների բանտում։ Պետական տուրքերը պետք է վերաբաշխել և համապատասխանեցնել բնակչության եկամուտներին։ Գանձատունը չունի բավականաչափ միջոցներ՝ թող ուրեմն բարձր ռոճիկ ստացող սպաները մի տարի ծառայեն անվճար։

Այդպիսի քաղաքականությունը Կրոմվելին սկսում էր թվալ անձնապաստան և ոչ խելացի։ Դուրս էր գալիս, որ ոչ թե «սրբերը», այլ տխմարներն են կառավարում Անգլիան, և այդ տխմարները շուտով սկսեցին նրան ավելի անհանգստացնել, քան այն սրիկաները, որոնք նստած էին «գլխանքում»։ Սրանք դեռ այդքան բան չէին անում։

Եվ իսկապես, նրանց բարենորոգչական ավյունը նրա աչքին քանի գնում ավելի ու ավելի լպիրշ էր երևում։ Ահա նրանք արդեն վերացրել են հարկերի հավաքման վարձակալման կարգը. ահա նրանք քննարկում են ցանկապատումների հետևանքով առաջացած աղքատների վնասների փոխհատուցման հարցը. ահա նրանք ուզում են բոլորովին վերացնել ակցիզները...

Դեռ ավելի վատթարը՝ բերբոնյան պառլամենտի անդամները նույնպիսի խիղախությամբ ձեռնամուխ եղան եկեղեցական բարենորոգումների։ Նրանք վերացրին պատրոնատի իրավունքը, այսինքն լենդլորդ-հողատերերին եկեղեցական պաշտոնների թեկնածուներ տալու իրավունքը։ Այդպիսով եկեղեցական կառույցը դուրս էր գալիս սեփականատերերի հսկողության տակից։ Այնուհետև կպան տասանորդին։ Այն, ինչը այնքան համառորեն պահանջում էին բազմաթիվ հանրագրերը Երկարատև պառլամենտից, արդեն մոտիկ էր լուծման։ «Թող եկեղեցականներին,— հայտարարեցին «սրբերը»,— պահեն նրանք, ովքեր նրանց կարիքն զգում են»։ Իսկ քանի որ տասանորդի եկամուտը վաղուց արդեն իր մեծ մասով անցել էր խոշոր սեփականատերերի և նոր լենդլորդերի ձեռքը (ինքը Կրոմվելը իր եկամուտների մի

www.a-pdf.com

նշանակալի մասն ստանում էր տասանորդից), ոչ ոքնոր Անգլիան ալեկոծվեց. նոր պառլամենտը, թվում էր, ոտնակոխություն է անում սեփականության դեմ։ Պրեսբիտերականները ու ինդիպենդենտները սկսել էին ընդհանուր լեզու գտնել. նրանք միասին վրդովվում էին նոր օրենսդիրների տրամաբանական վրա, որոնք պառլամենտ իսկ կոչվել չեն կարող. չէ՞ որ նրանք ժողովրդի կողմից ընտրված չեն, այլ նշանակված են վերևից։ Հասկանալի է, զարհուրում էին սպաները. դե ո՞վ կուզենար ոչ ոքի ոտքի տակ գալ։

Կրոմվելն այժմ տանջալիորեն կարդում էր, երբ վերադառնում էր իր ոգեշունչ ճաքը պառլամենտի բաժանման առթիվ։ Դա հիմարություն էր, դա աններելի թուլություն էր՝ բարձր հույսեր կապել պարզունակ, անձնապաստան գեղջուկների հետ։ Ջանքերով և խելամիտ ռեֆորմների փոխարեն, որոնք պիտի օրինականություն և հանգստավետություն հաստատեին երկրում, նրանք հավակնում էին, ինչպես իրեն թվում էր, բոլորովին վերացնելու օրենքներն ու սեփականությունը։

Հուլիսի կեսերին տարագրությունից ինքնակամ Լոնդոն վերադարձավ գլխավոր խոռվարար Լիլբեռնը։ Նրան կալանքի տակ առան և որոշեցին դատի տալ։ Հեղեղի պես հանրագրեր էին գալիս պառլամենտ՝ ի պաշտպանություն նրա։ Դատի ժամանակ բազմամարդ ամբոխը շրջապատում էր երդվյալներին։ Կրոմվելն ստիպված եղավ պատրաստի վիճակում պահել երեք գունդ՝ խուսափելու համար ամեն տեսակի անակնկալներից։ Օգոստոսի 20-ին դահլիճի բարձրագոչ ողջույնների տակ (անդամ մուրը պահպանող զինվորները շեփորում ու թմբկահարում էին ուրախությունից) Լիլբեռնն արդարացվեց։ Կարող էր թվալ, թե նորից գալիս են ազիտատորների և լևելերների օրերը։ Ժողովրդի մեջ ուրախ արձագանքում էր. «Լենդլորդեր ի և տասանորդների ոչնչացման պետք է միանգամից ոչնչացնել....»։ Կրոմվելը հասկանում էր, անուղղելի սխալ է թույլ տվել։ Չորս տարի անց նա դեռ պիտի ամոթով հիշի այն, ինչը կանվանի «իր սեփական թուլության ու հիմարության պատմությունը»։ «Իսկ ապես որ,— կասի նա այն ժամանակ,— դա արված էր պարզ ու միամիտ հոգով։ Այն ժամանակ թվում էր, թե մեր կոփվածքի մարդիկ՝ ավարտուն, պայծառում փորձված, պիտանի կլինեն այդ գործի համար և կկարողանան հասնել այն նպատակին, որն իրենց առաջ կանգնած էր։ Մենք բոլորս այն ժամանակ այդպես էինք մտածում, և հա նույնպես՝ դժբախտաբար։ Ահա այսպիսի մարդիկ էին ընտրվում և դրվում մոտ թողնվում։ Եվ դառն ճշմարտությունն այն է, որ արդյունքը, ինչպես պարզվեց, չէր համապատասխանում հոգացման մաքրությանն ու պարզասրտությանը»։ «Սրբերը» իրենց այնպես էին պահում, որ դուրս էր գալիս, թե եթե մի մարդ ունի տասներկու կով, իսկ նրա հարևանը՝ ոչ մեկը, ապա

www.a-pdf.com

ունեորը պետք է բաժին հանի իր կարողությունից։ «Ո՞վ կարող էր որևէ բան իր սեփականությունը համարել, եթե նրանք բանը հասցրել են մինչև այդտեղ»։

Դա Կրոմվելը հետագայում կասեր, իսկ այժմ՝ 1653 թվականին, նա խորը մտածմունքի մեջ, սևամաղձ տրամադրությամբ, որ տիրել էր նրան, գրում էր փեսային՝ Ֆլիթվուդին, Բրիջեթի ամուսնուն, Իռլանդիա. «Իսկն ասած, երբեմ ավելի, քան այժմ, ես չեմ զգացել իմ քրիստոնյա բարեկամների կարիքը»։ Գիտակցելով իր ջանքերի ապարդյունությունը, նա ցանկանում էր հեռանալ ամեն ինչից, քաշվել անապատ։ «Օ՜, եթե ես թևեր ունենայի, ինչպես ստղավնին»,— տրտնջում էր նա։

Ուրիշ տարակուսանքներ էլ էին տիրել Կրոմվելին։ Արդյոք գլխավոր իշխանությունը այդ մարդկանց հանձնելու իր ցանկությունը պարզապես թուլության արտահայտություն չէ՞ր, վախկոտ մի փորձ՝ խուսափելու այն պատասխանատվությունից, որ դրվել է իր վրա աստծո կողմից։ Դա արդյոք, ինչպես ինքն էր ասում, «հույժ մեղսալի մի ցանկություն չէ՞ր իր վրայից գցելու այն իշխանությունը, որն աստված միանգամայն պարզորոշ հրահանգման միջոցով ընձեռել էր իրեն... Դեն նետել՝ չսպասելով, մինչև մեր պայքարի ազնիվ նպատակները իրականանան ու ամրապնդվեն»։

Բայց մի բան է տարակուսանքը, մի այլ բան՝ բացահայտ գործողությունը։ Կրոմվելը միշտ երկար տատանվում էր, նախքան որևէ բանի ձեռնամուխ լինելը։ Եվ այժմ էլ, նոյեմբերի վերջին, երբ նրա մոտ սպանների անունից եկավ Լամբերթը պառլամենտը ցրելու և նրա՝ Կրոմվելի, գլխին թագը դնելու առաջարկով, նա տատանվեց։ Լամբերթը նրան ասաց, որ քանի դեռ նա երկրի ղեկավարման գործը ամբողջապես չի վերցրել իր ձեռքը, անկայունությունը կշարունակվի, նորից խռովություններ կսկսվեն, արյուն կհեղվի... Բայց Կրոմվելը համառորեն հրաժարվում էր։ Ինչպե՞ս ընդունել թագավորի տիտղոսը օրինական միապետին մահապատժի ենթարկելուց և հանդիսավոր հանրապետություն հռչակելուց հետո։ Ինչպե՞ս ցրիվ տալ բարեպաշտ քարոզիչների ժողովը, եթե նրան հաստատ խոստացվել է խաղաղ գործունեություն մինչև եկող տարվա վերջը։ Գուցե նրանք դեռ կխորհեն և կվարվեն ավելի՞ խելամիտ։

Սակայն «սրբերը» (նույն այդ «տիմարները») չէին պատրաստվում նահանջել։ Դեկտեմբերի 10-ին, շաբաթ օրը, երկու ձայնի մեծամասնությամբ նրանք որոշեցին առաջ քաշել տասանորդի վերացման հարցը։ Հարկավոր էր գործել շուտափույթ՝ հակառակ դեպքում նրանք ամեն ինչ տակնուվրա կանեն։

Լամբերթը ամեն ինչ վերցրեց իր վրա։ Դեկտեմբերի 11-ին, կիրակի օրը, նա խորհրդակցություն հավաքեց պառլամենտի չափավոր անդամներին և առաջատար սպաներին։ Նա հատկա-

www.a-pdf.com

պես ծանրացավ այն բանի վրա, որ եթե պառլամենտը նիստ անի, թեկուզ ևս մեկ օր, «բոլոր ազնիվ մարդկանց» սեփականությունը վտանգի տակ կդրվի։ Այսպիսի հարցադրումը համոզեց բոլոր ներկաներին։ Նրանց ցրվելուց հետո Լամբերթը դեռ ամբողջ օրը հանդիպում էր զանազան մարդկանց հետ, բանակցություններ էր վարում, համոզում էր տատանվողներին։ Օրվա վերջում համաձայնությունը ձեռք բերվեց և, որ ամենագլխավորն է, սփիքեր Ռաուզը՝ Իթոնի բարեպաշտ ռեկտորը, նախկին պրեսբիտերների անունից Լամբերթին հավաստեց իր աջակցությունը։ Որոշվեց Կրոմվելին այդ գործին իրազեկ չդարձնել։

Հետևյալ առավոտյան, երկուշաբթի օրը, բերբոնյան պառլամենտի ոչ ծայրահեղական կեսը նիստերի դահլիճ ներկայացավ շատ վաղ՝ արմատականների գալուց շատ առաջ։ Նիստը բացելուն պես խոսքը տրվեց սըր Չարլզ Ուոլսլիին՝ նախկին ռոյալիստին, որը մեղադրանքների հեղեղ տեղաց պառլամենտի հասցեին։ Տասանորդը վերացնելու փորձը,— ասում է նա,— ոտնձգություն է սեփականության դեմ։ Ներկա գտնվող վաթսուն թե յոթանասուն անդամներ համաձայնողաբար գլխով արեցին։ Այնուհետև խոսք վերցրեց գնդապետ Սայդենհեմը։ Նա հայտարարեց, որ «նշանակյալները» փորձում են ոչնչացնել բանակը, ուշացնելով նրան ռոճիկ վճարելու համար տրվող հարկերը, ձգտում են տապալել օրենքները, եկեղեցին ու սեփականությունը։ «Անգլիացիների օրենքներն ու իրավունքները,— ասաց նա,— նրանք ցանկանում են փոխարինել սեփական օրենսգրքով, որ կազմված է համաձայն Մովսեսի օրենքի»։ Ներկաները հայտնեցին իրենց համաձայնությունը։ Հապճեպ, քանի դեռ չէին ժամանել մոլեռանդ ազանդավորները, որոշում ընդունվեց. «Ներկա պառլամենտի հետագա նիստերը իր տվյալ կազմով չի ծառայի հանրապետության բարօրությանը և դրա համար անհրաժեշտ է լորդ գեներալ Կրոմվելի ձեռքը տալ այն լիազորությունները, որոնք պառլամենտի անդամներն ստացել են նրանից»։

Սփիքերը վեր կացավ իր բազկաթոռից, հրամայեց սարջենթին իր ձեռքն առնել մականը, պառլամենտի իշխանության խորհրդանիշը և հանդիսավոր ուղղվեց դեպի Լլքը։ Սարջենթը մականը ձեռքին քայլում էր առջևից, սփիքերին հետևում էր ատենագիրը, իսկ նրա ետևից գնում էին 50 թե 60 դեպուտատներ։ Այդպիսի շքերթով նրանք ժամանեցին Ուայթհոլ, ներկայացան Կրոմվելին և հանձնեցին նրան մականը մի նամակի հետ, որով հրաժարվում են իրենց իշխանությունից հօգուտ նրա։ Երբ արմատական անաբապտիստները, միլենարները և ժողովրդական այլ ազանդների անդամներ ներկայացան պառլամենտի իրենց տեղերը, ամեն ինչ արդեն վերջացած էր։ Բերբոնյան կամ Փոքր պառլամենտը գոյություն չուներ։ Նրանք զբաղեցրին իրենց տեղերը և նստեցին այնքան, մինչև հրացանակիրների ջոկատը ներխուժեց դահլիճ։

www.a-pdf.com

— Դուք ի՞նչ եք անում այստեղ,— հարցրեց գնդապետը՝ ջոկատի հրամանատարը։

— Փնտրում ենք աստծուն,— խաղաղ պատասխանեցին «սրբերը»։

— Դե ուրեմն գնացեք մի ուրիշ տեղ,— կոպտաբար հրահանգեց գնդապետը։— Որքան ես գիտեմ, աստված այստեղ չի եղել վերջին տասներկու տարիներին...

Չորս օր անց, 1653 թվականի դեկտեմբերի 16-ին, ցերեկվա ժամը 1-ին Ուայթհոլից դուրս եկավ մի հանդիսավոր թափոր։ Տոնական համազգեստով սպաները, թիկնոցներով դատավորները, աստիճանավորները, Սիթիի լորդ-մերը ու օլդերմենները՝ թավշյա կապաներով և իրենց արժանապատվությունը հավաստող նշաններով, հանդիսավոր դեպի Վեսթմինսթեր էին քայլում երկշարք կազմած զինվորների միջով։ Կանցլերյան դատարանի մեծ դահլիճում շքեղ գորգի վրա դրված էր թավշով պարուրված գահը։ Թափորը արժանավայել փառահեղությամբ մուտք գործեց դահլիճ, քարացավ տեղում. փաթաթած գորգի վրայով, ծանր զինվորական քայլերով դեպի մեջտեղ, դեպի ալ կարմիր գահը եկավ Անգլիայի գերագույն կառավարիչը։ Նա հագած էր հասարակ սև զգեստ և սև սերթուկ։ Միայն լայն ոսկեթել տրեզով կարված գլխարկն էր, որը նա չհանեց ողջ ալտարողության ժամանակ։ Նրա ոչ գեղեցիկ, խելացի հիսունչորսամյա տղամարդու դեմքը լուրջ էր, հոնքերը կիտած։ Նոր մեծ առաքելությունը որպես ծանր բեռ ընկել էր նրա լայն ուսերին։

Նա կանգնեց գահի մոտ։ Առաջ եկավ գեներալ Լամբերթը թղթագլանը ձեռքին։ Ներկաների սանունից նա խնդրեց Կրոմվելին ընդունել Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի լորդ-պրոտեկտորի տիտղոսն ու պարտականությունները։ Անմիջապես էլ կարդաց «Կառավարման միջոց» նոր գրավոր սահմանադրությունը։

Դրա համաձայն Կրոմվելը ցմահ ստանում էր երեք միացյալ հանրապետությունների լորդ-պրոտեկտորի (խնամակալի) պաշտոնը։ Այդ պաշտոնը ժառանգական չէր, այլ՝ ցմահ։ Պրոտեկտորը օրենսդրական իշխանություն էր ստանում պառլամենտի չորս հարյուր անդամների հետ միասին, որը, պետք է ընտրվեր երեք տարին մեկ։ Նստաշրջանը շարունակվում էր հինգ ամսից ոչ պակաս։ Պառլամենտի անդամ կարող էին ընտրվել միայն նրանք, ովքեր ունեին 200 ֆունտ ստեռլինգից ոչ պակաս՝ հողով կամ շարժական գույքով հաշված եկամուտ։ Դա մի ցենզ էր, որ նշանակալիորեն ավելի բարձր էր, քան նույնիսկ Ստյուարտների ժամանակ։ Պրոտեկտորատը հենվում էր բացառապես միջակ և խոշոր սեփականատերերի պաշտպանության վրա։ Մյուս կողմից, ընտրական օկրուգները վերաբաշխված էին հօգուտ քաղաքների և բնակիչների միջին խավերի. իրականացվել էր այն, ինչը պա-

www.a-pdf.com

հանջում էին և՛ Երկարատև պառլամենտը իր նիստերի սկզբում, և՛ «Առաջարկությունների գլուխները» և՛ լևելերյան «Ժողովրդական համաձայնագիրը»։

Գործադիր իշխանությունը հանձնվում էր պրոտեկտորին 15 տարուց բաղկացած ցմահ Պետական խորհրդի հետ միասին, որոնց ցուցակը առաջադրված էր սպանների խորհրդի կողմից և անդնուտեղն էլ ընթերցվեց։ Նրա մեջ էին Կրոմվելի ազգականները՝ գեներալ Դեսբորոն, Ռիչարդ Մերը, գնդապետներ Սայդենհեմը և Մոնթեբյուն, նույնիսկ մի քանի ներկայացուցիչներ հին արիստոկրատական գերդաստաններից, սակայն՝ միանգամայն լայներից։ Այդ խորհուրդը, ինչ խոսք, ամեն ինչում հնազանդ էր լինելու Կրոմվելին։ Ո՛չ պառլամենտը, ո՛չ խորհուրդը իրավունք չունեին փոխել պետական կառավարման ձևը, որ նա թողել էր ներկա սահմանադրությունը։

Ակներև էր, որ և՛ պառլամենտը, և՛ խորհուրդը միայն մի-մի դերեր էին այն վիթխարի բուրգի, որի գագաթին բազմել էր նա՝ Օլիվեր Կրոմվելը, հանթինգդոնցի սքվայրի համեստ ընտանիքի զավակը։ «Ամեն տեսակի հրահանգները,— կարդում էր Լամբերթը,— դատարան կանչելը, լիազորությունները, արտոնագրերը, շնորհումներ տալը և այլ կարգադրությունները, որոնք մինչև այժմ հրատարակվում էին... պառլամենտի իշխանության կողմից, պետք է հրատարակվեն լորդ-պրոտեկտորի տիտղոսով և նրա անունից, որի կողմից ապագայում պետք է կատարվի բոլոր պաշտոնյաների նշանակումը և պատվավոր կոչումների շնորհումը վերը հիշատակված երեք ազգությունների համար... Նա իրավունք ունի ներում շնորհելու և ստանալու հասարակական նպատակներով արված բոլոր բռնագրավումները... Նա պետք է ունորինի և ղեկավարի միլիցիան և բանակը, ինչպես ցամաքում, նույնպես և ծովում... Նա պետք է ղեկավարի այն բոլոր գործերը, որոնք վերաբերում են բարիդրացիական հարաբերությունների պահպանմանն ու ամրապնդմանը օտար երկրների թագավորների, ղեկավարների և պետությունների հետ, ինչպես և խորհրդի անդամների մեծամասնության համաձայնությամբ իրավունք ունի պատերազմ վարելու և խաղաղություն կնքելու։ Օրենքները չեն կարող փոփոխվել, հարկերը չեն կարող ուժի մեջ մտնել առանց նրա համաձայնության...»։

Բարձրագույն իշխանությունը, թագավորականի նման, հանձնվում էր այդ կոպտավուն, անտաշ, հողմահարված, կարմիր դիմքով, ծալ-ծալ կախ ընկած մսալի կզակով զինվորին, կոշտուկոպիտ ձեռքերով զինվորին։ Բարձրագույն այդ իշխանությանը նա հասավ իր խելքի ու բնավորության, իր հաստատակամության և ռազմական տաղանդի շնորհիվ։

Ցանկանո՞ւմ էր նա արդյոք այդ իշխանությունը։ Նա դրան ձգտո՞ւմ էր որպես նվիրական գայթակղիչ նպատակի, աջ ու ձախ սրբելով, կամ ընդհակառակը, նենգորեն, սուսուփուս վերացնե-

www.a-pdf.com

լով իր ճանապարհին կանգնած խոչընդոտները։ Հազիվ թե։ Ավելի շուտ նա ընդունեց այն որպես մի անխուսափելի ու պատվավոր, բայց ծանր բեռ, որ դրվում է իր ուսերին, բայց ոչ այն մարդկանց կողմից, որոնք շողում ու քծնաբար նայում էին իր աչքերի մեջ, այլ հենց աստծո կողմից։ Պատվավոր տիտղոսն ընդունելուց առաջ նա արցունքներն աչքերին ասում էր, որ ավելի լավ էր վերցնել հովվական մահակը, քան պրոտեկտորական գավազանը, քանի որ աշխարհիկ փառքը նողկանք է առաջացնում իր հոգում։ Բայց նա տեսնում էր, որ այդ բեռն իր վրա վերցնելն անհրաժեշտ է, որպեսզի ազգը պահպանի անկումից, արտաքին ու ներքին թշնամիներից, որոնք պատրաստ են վերացնել այնքան դժվարությամբ նվաճված ազատությունները։ «Սրբերի» կառավարումը եղավ նրա վերջին և, գուցե, ամենից դառն հիասթափությունը դեմոկրատիայի հնարավորությունների հարցում։ «Ուրիշներին ոչինչ չի կարելի վստահել, ստիպված ես ամեն ինչ ինքդ անել»,— ահա թե ինչ զգացում էր համակել նրան այն օրը, երբ հրապարակավ համաձայնեց ընդունել իր նոր, բարձր արժանապատվության նշանները։

Լամբերթն ավարտեց ընթերցումը։ Օլիվերին, որ չէր հանել գլխարկը (այդպես էր սահմանված ըստ ծիսակարգի), մատուցեցին պետական կնիքը։ Նրան բազմեցրին գահին։ Այնուհետև մոտեցավ լորդ-մերը և, խոնարհվելով, նրան հանձնեց պետական սուրը և թագադրման գլխարկը՝ հնամենի խորհրդանիշներ, որոնք առաջներում հանձնվում էին թագավորին թագադրման ժամանակ։ Կրոմվելը քաղաքավարությամբ ընդունեց դրանք և ապա վերադարձրեց քաղաքագլխին։ Այնուհետև նա ստորագրեց երդման գիրը։ Միսակատարությունն ավարտված էր։ Հերթով նրան էին մոտենում մարդիկ բաց գլուխներով՝ հաղորդելու իրենց շնորհավորանքները, խոնարհվելու, հաճոյախոսելու, իրենց մասին հիշեցնելու։ Երբ նրանց երկար շարանը ընդհատվեց, Կրոմվելը ոտքի ելավ և կանգնելով այդ բազմադեմ, խայտաբղետ, զարդարուն, շողոմախոս պալատական ամբոխի գլուխը, շարժվեց դեպի Ուայթհոլ, դեպի Խնջույքի դահլիճ։ Լորդ քաղաքագլուխը գլխաբաց նրա ետևից տանում էր պետական սուրը։ Ջինվորներն ուղեկցում էին նրան ողջույնի բացականչություններով։

Մինչ տոնակատարությունը շարունակվում էր Խնջույքի դահլիճում, մունետիկները Սիթիում, Պալաս-յարդում և Լոնդոնի այլ հրապարակներում ժողովրդի առաջ բարձրաձայն կարդում էին նոր տիրակալի հռչակման վերաբերյալ հրովարտակը։ Ժամը չորսին, կեսօրին, որոտացին հրանոթները՝ ողջույնի եռակի համազարկերը ավետեցին մեծ օրը։

Գերագույն իշխանությունը Կրոմվելն ստանձնեց հոգնած, հիասթափված, գրեթե ծերացած։ Նա դեռևս համոզված էր իր վրա աստծո կողմից դրված հատուկ առաքելության մեջ, բայց

www.a-pdf.com

հավատը հանգեպ «աստծո ժողովուրդը» կորցրել էր վերջնականապես։ Այսուհետ նրա խնդիրն էր՝ պահպանել կարգուկանոն, հետևել, որպեսզի անգլիացիները միմյանց կոկորդ չկտրեն։ Նա այժմ ո՛չ պառլամենտի առաջնորդն էր, ո՛չ հեղափոխության, ո՛չ արդար գործի համար մարտնչող մարտիկ, ո՛չ բանակի գլուխ, որ գնում էր դեպի ազատություն ու փառք, ոչ էլ սահմանադրության շինարար։ Նա, իր խոսքերով ասած, այժմ դարձել էր պարզապես միայն «կոնսթեբլեմ»՝ կարգի պահապան։

www.a-pdf.com

ԳԼՈՒԽ X

ԼՈՐԴ-ՊՐՈՏԵԿՏՈՐԸ

Այդ ճանապարհով և առանց որևէ ակնառու ջանքերի այդ արտասովոր մարդը առանց աչակցության և հակառակ բոլոր աղնվարարո և պատկառելի մարդկանց ցանկության, բարձրացրեց իրեն երեք տերությունների գահին, չընդունելով թագավորի կոչում, բայց տիրանալով մեծ իշխանության ու հզորության, քան երբևէ ունեցել կամ պահանջել էր իր համար որևէ թագավոր։

Քլարենդոն

Ոչ ոք չի բարձրանում այնքան վեր, որքան նա, ով չգիտե, թե դեպի ուր է գնում։

Կրոմվել

1. ԿՈՆՍԹԵԲԼԸ

Բաց ճակատ թավ հոնքերի վերևում, խելացի, սառն աչքեր, սեղմած շուրթեր։ Կամքով տոգորված այդ դեմքի վրա թաքնված է զսպված եռանդ և այնուհանդերձ այն անվրդով է։ Այդպիսի մեկին չես կարող զայրացնել, գթաշարժ անել, անկեղծության կոչել։ Նրան անվանում են Ջոն Թերլո, նա երեսունութ տարեկան է։ Որոշ ժամանակից ի վեր նա, թեպետ չզննող աչքի համար անանկատ, սակայն վիթխարի դեր է խաղում Օլիվեր Կրոմվելի մոտ։

Նրա զարմանալի պետական ընդունակությունները նկատել էր դեռևս տասը տարի առաջ Սենթ-Ջոնը՝ Կրոմվելի աղդականն ու ընկերը։ Թերլոն նրա ղեկավարությամբ ուսանում էր իրավագիտություն և 1645 թվականից սկսեց ծառայել պառլամենտում որպես քարտուղար։ Նա երբեր չէր եղել աղմկարարների՝ հանրապետականների, լևելերների, դեմոկրատների հետ։ Նա չէր պահանջում իրավունք և ազատություն ժողովրդի համար։ Նա չէր մասնակցել թագավորի դատին և չէր հարել որևէ կուսակցության, նրա հակումները միանդամայն ուրիշ բնույթի էին։

1651 թվականին նա Սենթ-Ջոնի հետ գնաց Հոլանդիա, իսկ հաջորդ տարի նշանակվեց Պետական խորհրդի քարտուղար մի բավական պատկառելի ոճիկով և Ուայթհոլում պետական բնակարանով։ Եվ այստեղ նրա հիանալի ընդունակությունները ծավալվեցին լիսկատար թափով։ Նա իրեն դրսևորեց ոչ միայն որպես ջանադիր ու խելացի աստիճանավոր, այլև մարդկային հոգեբանության զարմանալի գիտակ մի մարդ։ Նա կարող էր գտնել յուրաքանչյուր երևույթի բանալին, պարզել ամենածածուկ ամենամութ մարդու բոլոր խորագաղտնիքները և շուտով նրա ձեռքում կուտակվեց մի անգնահատելի ու ծավալուն նյութ՝ տեղեկանք ամեն մեկի մասին, ով հանդիպում էր նրա ճանապար-

www.a-pdf.com

հին։ Նա ուներ ուրիշների նամակները ձեռք գցելու զարմանալի ճարպկություն, գաղտնի մտադրություններն իմանալու, փակ դռների ետևը թափանցելու ընդունակություն։ Դրա հետ մեկտեղ նրա անձնական նվիրվածությունը Կրոմվելին տարակուսանք չէր հարուցում։

Պրոտեկտորատի հաստատումից քիչ անց նա ստացավ ևս մի պաշտոն՝ արտաքին գործերի գծով գրագիր, այստեղ էլ դրսևորեց արտասովոր, գրեթե աներևակայելի ունակություններ։ Նա իր գոտու տակ, ինչպես արտահայտվել է ժամանակակիցներից մեկը, կրում էր Եվրոպայի բոլոր տիրակալների գաղտնիքները։ Նրա գործակալները թափանցում էին ամենուրեք և նրանցից մի քանիսը մեծ վստահություն էին վայելում տարագրության մեջ գտնվող Կարլոս Ստյուարտի մոտ։ Ոչ մի դավադրություն Բրյուսելում կամ Հաագայում չէր վրիպում նրա ուշադրությունից. չի եղել մի դեպք, որ Փարիզում կամ Մադրիդում տեղի ունեցող որևէ գաղտնի բանակցություն անմիջապես հայտնի չդառնար նրան։ Ոչինչ չէր սպրդում նրա աչալուրջ աչքից, լիներ դա ռոյալիստների կողմից նյութված ծրագիր՝ կյանքից զրկելու լորդ-պրոտեկտորին, իսպանական արծաթե նավատորմի տեղաշարժ, թե գավառական քաղաքի շուկայի հրապարակում կվաքերների կողմից հրահրված անկարգություն։ Նրա աչք ու ականջը իսկապես որ ամեն ինչի ունկնդիր էին և ամենուրեք թափանցող։

Այդ մարդը դարձավ նոր վարչակարգի խորհրդանիշը։ Լինելով պետական քարտուղար, գաղտնի ոստիկանության շեֆ և գաղտնի հետախուզական ծառայության գլխավորը, արդյոք նա՞ չէր այն դ

, որն այժմ հավատարմորեն և ճշմարտացի ծառայում էր Օլիվեր Կրոմվելին։ Արդյոք այդ նվիրվածության ու ծառայությունների համար չէ՞ր, որ պետք է վճարեր Օլիվերը սեփական հոգով։ Համենայն դեպս, նա Կրոմվելից իր կասկածելի գործունեության համար ստանում էր մի վիթխարի գումար՝ 70 հազար ֆունտ տարեկան։

1653 թվականի դեկտեմբերի 23-ին Թերլոն գրել է Ուայթլոքին, որն այժմ ծառայում էր շվեդական Քրիստինա թագուհու պալատում որպես անգլիական դեսպան. «Տեղի ունեցած փոփոխությունը համընդհանուր ճանաչում գտավ հատկապես իրավաբանների շրջանում՝ սյուրիտանական հոգևորականության և վաճառականության մեջ, որոնց համար, ինչպես նրանք իրենք էին գիտակցում, վերջին պառլամենտի տրամադրվածությունը կրում էր առավել վտանգավոր բնույթ»։ Արդեն ում-ում, բայց Թերլոյին այդ հարցերում պետք էր լիակատար հավատ ընծայել։ Նրա իրազեկությունը գերազանց էր։

Այսպես ուրեմն, պրոտեկտորատի վարչակարգն ընդունվեց գոհունակությամբ և՛ բանակի, և՛ իրավաբանների, և՛ վաճառականների, և՛ սքվայրների, և՛ պուրիտանական կղերականների կողմից։ Վերջապես Կրոմվելի երկաթե ձեռքում հաստատվեց կենտրոնացած

www.a-pdf.com

կայուն կառավարում։ Երկիրն ուներ գրավոր սահմանադրություն, օրինականությունն ապահովված էր, բանակը հանդարտված, խռովարարների դեմ ձեռք են առնված համապատասխան միջոցներ։ Ահա թե երբ է ունևոր Անգլիայի համար վերջապես եկել խաղաղություն ու բարգավաճում վայելելու ժամանակը։

Ուայթհոլում մեծ հոգսեր կային. հարկավոր էր բանակային գլխավոր հրամանատարության գործնական սպարապետական նստավայրից այն դարձնել «նորին մեծության» իսկական պալատ, նոր կառավարչի փառքի ու մեծության կենտրոնատեղին։ Քանի որ նա արդեն դարձել է երկրի օրինական տիրակալը, քանի որ արդեն օտարերկրյա դեսպանները նրա առաջ գլխաբաց են կանգնում, իսկ Լյուդովիկոս XIV-ը, Ֆրանսիայի թագավորը, նրան կոչում է «եղբայր», քանի որ նրա համար փորագրված է մի նոր խոշոր պետական կնիք նրա պատկերով, ապա նրա պալատն էլ պետք է կահավորվի արժանավայել պերճությամբ։ Այդպես էին մտածում շրջապատողները. այդպես էր կարծում Եղիսաբեթը, և Կրոմվելը համաձայնեց։

Եղիսաբեթն այժմ դարձավ «նորին մեծության լեդի Կրոմվել» կամ «պրոտեկտորուհի», ինչպես պարզապես անվանում էին նրան երկրում։ Նա ընտանիքով 1654 թվականի ապրիլին տեղափոխվեց Ուայթհոլի գլխավոր շենքը և ձեռնամուխ եղավ հարկաբաժինները, ճաշասրահները, հյուրասրահները, ննջարանները և հանդիսավոր ընդունելությունների դահլիճները կահավորելուն։ Վերջերս լքված օթարաններում սկսեցին ելումուտ անել պալատականներ, աղախիններ, մատուցողներ, գրումներ, մանկլավիկներ, ֆրոյլաններ։ Պահոցներից հանվեցին և բարեպատշաճ կարգով դասավորվեցին ֆրանսիական կահույքը, սկահակները, արձանիկները, որ մի ժամանակ ծառայել էին արքային, կախվեցին թանկարժեք գոբելեններ, մետաքսյա վարագույրներ։ Սեղաններին հայտնվեցին արծաթյա և հախճապակյա ամանեղեն, պատերին՝ գեղանկարներ։ Զիանոցներում սմբակներն էին դոփում հոյակապ, լավ խնամված ձիեր, կառասրահներում կանգնած էին ոսկեփայլ նրբակերտ կառքեր, պատած թավշով և զարդարված զարմանահնար ծոփքերով։ Զգեստապահարանները պայթում էին տոնական, իրիկնային, կեսօրյա, առավոտվա հագուստներով ու արդուզարդով։

Հնամենի իրերի հետ մեկտեղ աստիճանաբար Ուայթհոլ էին վերադառնում նաև պալատական վարվելաձևերի հին սովորությունները։ Արտասահմանյան դեսպաններին այժմ ընդունում էին նույն արարողություններով, որ սահմանված էր Ստյուարտների պալատում։ Ուտելիքը մատուցվում էր ճիշտ այնպես, ինչպես հնում. անգամ խոնարհվել սկսեցին հին սովորության համաձայն. ծնկածալումով և ձեռքի պաճուճավոր հնարամիտ շարժումով։ Եվ երկիրը հետևում էր կառավարողներին. 1654 թվականի

www.a-pdf.com

դարնանը նրբամիտ դիտորդ Ջորջ Էվելինը մի որոշ զարմանքով գրանցել է իր օրագրում, թե լոնդոնցի կանայք դարձյալ սկսել են ներկել դեմքերը։

Լորդ-պրոտեկտորի հանգստի և գյուղական զվարճանքների համար նախատեսված էր մի սքանչելի քաղաքամերձ պալատ՝ Հեմպթոն-Քորթը, Լոնդոնից քսան մղոն հեռու։ Մի ժամանակ Կրոմվելը հրաժարվել էր այդ պալատից, համարելով ավելորդ շքեղություն, մարտիկի խստակյաց կյանքի հետ անհամատեղելի։ Այժմ յուրաքանչյուր ուրբաթ նա ուղևորվում էր այնտեղ և վերադառնում էր միայն երկուշաբթի։ Մաքուր, քաղաքային աղտոտություններից զերծ Թեմզան, կիսավայրի զբոսապուրակը, որտեղ առատորեն վխտում էին որսի համար բաղմացրած կենդանիներ, գյուղական թարմ օդը՝ ամեն ինչ այստեղ նրան անդորր ու հանգստություն էր բերում։ Երեկոները նա բավականություն էր զգում երաժշտություն լսելով. Հեմպթոն-Քորթում երգեհոն էին տեղադրել, այնտեղ էին գալիս երգիչներ ու երաժիշտներ։

Օլիվերը սիրեց նաև երիտասարդ գեղեցիկ կանանց հասարակությունը։ Ոչ այնպես, որ նա երբևէ վիրավորած լիներ Եղիսաբեթին անվայել կապով՝ ոչ, իհարկե, խիղճը նրան երբեք թույլ չէր տալիս նման բան անել։ Բայց քնքուշ, հայրական վերաբերմունքը շողշողուն սալոնի տիրուհու՝ Եղիսաբեթ Մերիի, կոմսուհի Դայզարթի, որ ավելի հայտնի էր որպես «Բեսս» կամ գեղեցկուհի Ֆրենսիս Լամբերթի՝ գեներալի կնոջ, կամ թե հարս Դորոթիի նկատմամբ՝ նրան պատճառում էր իսկական բավականություն։ Նա մատների արանքով էր նայում անգամ այն հանգամանքի վրա, որ Բեսը պապական էր և կապեր ուներ ռոյալիստական շրջանների հետ։

Կրոմվելն, ընդունելով պրոտեկտորի աստիճանը, առհասարակ սկսեց ավելի հանդուրժողություն ի հայտ բերել ռոյալիստների հանդեպ։ Ի՞նչ էր դա. վերահաս ծերությո՞ւն իր բնական պահպանողականությամբ, հնաղանդությո՞ւն իրադարձությունների սրինաչափ ընթացքին, որն ամեն ինչ իր շուրջն էր դարձնում։ Կամ, դուցե, պետական գործչի իմաստուն քաղաքականությո՞ւն, որն այժմ իր խնդիրը տեսնում էր նրանում, որ հնարավոր բոլոր միջոցներով ամրապնդի երկրի միասնությունը, միավորի և ոչ թե բաժանի, հաշտեցնի և ոչ թե կռվեցնի, ներում շնորհի և ոչ թե պխատի։ Ինչ էլ որ լիներ, միասնության ձգտումը և պահպանողականությունը նրա՝ որպես լորդ պրոտեկտորի, ղեկավարման առաջին ամիսների հատկանշական գծերն էին։ Նրան մոտիկներ էին դարձել ազնվական, տոհմիկ ընտանիքներից սերող մարդիկ՝ Էդվարդ Մոնթեքյուն, կոմս Մանչեստերի աղգականը (նա նշանակվել էր ադմիրալ), լորդ Բրոգհիլը՝ նախկին ռոյալիստ, լորդ Գոդոնբերդը, որը հետո դարձավ դատեր՝ Մերիի ամուսինը, Ռոբերտ Ռիչը, կոմս Ուորիկի թոռը՝ նրան Կրոմվելը կտա մյուս աղջկանը, Ֆրենսիսին։

www.a-pdf.com

Այդ մարդկանց հետ մեկտեղ, իր խորհրդի հետ միասին, որը նույնպես կազմված էր իրենց չափավորությամբ և ուժով հայտնի դեմքերից, Կրոմվելը կառավարել սկսեց Անգլիան։ Նա հոգ տարավ, որպեսզի վերացնի Փոքր պառլամենտի «սրբերի» վայրենի որոշումները՝ ամենից առաջ իրավունքի ռեֆորմի մարզում։ Կանցլերի դատարանի վերակազմավորումը հանձնվեց երեք դիպլոմավոր իրավաբանների հուսալի ձեռքը։ Վերացվեց մահապատիժը բոլոր հանցանքների համար, բացառությամբ մարդասպանության և պետական դավաճանության։ Կարգավորվեց վարած գործի համար դատապաշտպաններին տրվող վճարը. դատական ընթացքի դիտավորյալ երկարաբանումը և փաստաթղթերի լեզվի բարդացումը՝ հոնորարը բարձրացնելու նպատակով, այժմ արգելվում էր։

Կրոնական գործերում Կրոմվելն իրեն դրսևորում էր իբրև լայն հավատահանդուրժողի, բայց ոչ լիակատար անարխիայի կողմնակցի։ Նա գտնում էր, որ երկրում պիտի գոյություն ունենա պետական եկեղեցի և որ Հիսուս Քրիստոսի աստվածային բնույթի ճանաչումը բոլոր կոնգրեգացիաների համար պարտադիր է։ Տասանորդը հոգևորականության պահպանման լավագույն միջոցը չէ, բայց քանի դեռ չի հայտնաբերվել ավելի կատարյալը, թող այն շարունակեն գանձել։ Ինչ վերաբերում է եկեղեցական քարոզիչներին, ապա պաշտոնի անցնելու համար հարկավոր է, որ նրանք այժմ վկայականներ ներկայացնեն իրենց բարեպաշտության մասին՝ ստորագրված երեք հարգալիր անձանց կողմից։ Աղանդավորները հետապնդվում էին միայն բացահայտ հակակառավարական ելույթների համար, կաթոլիկներին առանձնապես նեղություն չէին տալիս։

Հատուկ հրամանագրով ազդարարվեց երեք թագավորությունների՝ Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի լիակատար քաղաքական միաձուլումը լորդ-պրոտեկտորի ղեկավարությամբ։ Ծայրամասային հանրապետությունների պառլամենտները լիկվիդացվել էին. փոխարենը՝ յուրաքանչյուրը անգլիական միացյալ պալատ էր ուղարկում 30 ներկայացուցիչ։ Մաքսային արգելքները ոչնչացվում էին, ամենուրեք ներմուծվում էին անգլիական օրենքներ, դատարանակազմության կարգ, հարկեր, տուրքեր։ Իռլանդիայի բնակչությունը, համաձայն դեռևս Փոքր պառլամենտի կողմից կազմված ակտի, հարկադրաբար արտաքսվում էր առավել զարգացած և բարեբեր մարզերից դեպի ցրտաշունչ հյուսիսարևմտյան կոմսությունները. այդ ձևով ազատված հողերն ստանում էին անգլիական զինվորներն ու վաճառականները։ Շոտլանդիայի կառավարիչ էր նշանակվել լորդ Բրոդհիլը։ Անգլիացիների տասներկուհազարանոց բանակը, միաձույլ ու հնազանդ (նա դեռ կկատարի իր դերը Անգլիայի պատմության մեջ) ղեկավարում էր գնդապետ Ջորջ Մոնքը։

Կարևոր իրադարձություններ էին տեղի ունենալ արտաքին

www.a-pdf.com

հարաբերությունների մարդում։ 1654 թվականին վերջապես հաշտություն կնքվեց Հոլանդիայի հետ։ Պատերազմն ավարտվեց Անգլիայի օգտին. Միացյալ գավառների հանրապետությունը ճանաչեց «Նավագնացության ակտը» և համաձայնեց անգլիական վաճառականներին փոխհատուցել վնասները։ Օրանցիների տոհմը, որը մտիկ է Ստյուարտներին, պայմանագրի գաղտնի կետի համաձայն, պետք է հեռացվի երկրի ղեկավարությունից։ Կրոմվելը, որին դուր չէր գալիս այդ պատերազմը հավատակից եղբայրների միջև, գոհ էր։ Հոլանդական դեսպանի հետ փաստաթղթի փոխանակման արարողության ժամանակ նա դեսպանին տվեց սաղմոսի մի տեքստ և, մատնացույց անելով այն, ասաց.

— Մենք փոխանակել ենք շատ թղթեր, բայց ես կարծում եմ, որ դրանց մեջ սա լավագույնն է։

Նա վաղուց էր փայփայում Բրիտանիայի հովանու տակ եվրոպական բոլոր բողոքական պետությունների միավորման երազանքը և այժմ այդ երազանքն իրականացնում էր։

Հոլանդիայի հետ խաղաղություն կնքելուց մի քանի օր անց Ուայթլոքին հաջողվեց շահեկան առևտրական պայմանագիր կնքել Շվեդիայի հետ։ Քրիստինա թագուհին շատ սիրալիր վերաբերվեց պրոտեկտորի դեսպանին։ «Ձեր գեներալը,— ասաց նա Ուայթլոքին,— այնպիսի մեծագործություններ կատարեց, ինչպիսիք աշխարհում ոչ մի մարդ չէր արել, անգամ արքայազն Քոնդեն զիջում է նրան»։ Նա Կրոմվելին համեմատեց իր նախահոր՝ Գուստավ Վազի հետ, որի երակներում նույնպես թագավորական արյուն չէր հոսում. նա առաջ էր գնացել բացառապես շնորհիվ իր անձնական արիության, ջախջախել էր դանիացիներին, ազատագրել հայրենիքը և վերջ ի վերջո ընտրվել միապետ։ «Այ, կտեսնեք,— ասաց թագուհին,— նա նույնպես ձեր թագավորը կդառնա»։ Նա Կրոմվելին ուղարկեց իր դիմանկարը։ Եղիսաբեթը՝ «Լեդի Կրոմվելը», երկար նայել էր նկարին և վերջապես շշնջացել. «Եթե ես մեռնեմ, սա կդառնա Կրոմվելի լինը...»։

Շվեդիայի հետ պայմանագրին հետևեց պայմանագիրը Դանիայի հետ, որ կնքվեց սեպտեմբերին։ Շնորհիվ այդ պայմանագրի Անգլիան Իռլանդիայի հետ հավասար մուտք ստացավ դեպի Բալթիկ ծովը։ Երկու երկրներն էլ Շվեդիային հավաստիացրին, որ ոչնչով չեն օգնի վտարանդի Կարլոս Ստյուարտին։

Կրոմվելն է՛լ ավելին էր երազում։ Անգլիական ազդը բողոքական տերությունների գլուխն անցած պետք է հնազանդեցնի ողջ աշխարհը. և՛ Եվրոպան կհպատակեցնի, և՛ օվկիանոսից այն կողմը, հեռավոր Վեստ-Ինդիան, և՛ Հյուսիսային Ամերիկայում կարմատավորի իր հզոր կամքը։ «Եթե ես լինեի նույնքան ջահել, որքան դուք,— ասում էր նա Լամբերթին,— ես առանց տատանվելու, նախքան իմ մեռնելը, կթակեի Հռոմի դարպասները»։ Նրա ջանքերով ամռանը պայմանագիր կնքվեց Պորտուգալիայի հետ՝

www.a-pdf.com

նույնպես խիստ շահեկան պայմանագիր. Անգլիան այժմ կարող էր անարգել առևտուր անել Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի պորտուգալական գաղութների հետ։ Խաղաղության բանակցություններ էին վարվում Իսպանիայի և Ֆրանսիայի հետ։ Անխոնջ ու հմուտ ծովակալ Բլեյքը իր շարժունակ նավատորմիղով ակոսում էր Լա Մանշը։ Նրան հաջողվեց համարյա ամբողջապես այն մաքրել ծովահեններից։ Այժմ հարկավոր էր գնալ ավելի առաջ, դեպի իսպանական ջրերը և Միջերկրական ծովը։

Հիրավի, պրոտեկտորատի սկիզբը նշանավորվեց խաղաղությամբ, հաջողություններով և հույսերով։ Անգամ ռոյալիստների դավադրությունները, որոնք միջոցներ էին որոնում պրոտեկտորին սպանելու և պատրաստում էին պետական նոր հեղաշրջում, սկզբում ահեղ վտանգ չէին թվում։ Ջոն Թերլոն հմտորեն հյուսում էր խարդավանքների մի նուրբ ոստայն. պրոտեկտորի անձնական գվարդիան՝ նրան նվիրված մի քանի հարյուր կտրիճները, զոր ու գիշեր պահպանում էին նրա անձը։ Տարեսկզբին հրապարակեցին մի օրդոնանս, որտեղ պրոտեկտորի դեմ և նրա կառավարության դեմ դավադրությունները կամ նույնիսկ պարզապես նրանց քննադատությունը հավասարեցվում էր պետական դավաճանության։

Եվ այսպես, ամեն ինչ խաղաղ էր։ Ունևոր Անգլիան վայելում էր խաղաղություն ու բարօրություն։

Բայց հենց այն բանի համար էր հիմնված Անգլիայի գրավոր սահմանադրությունը՝ «Կառավարման միջոցը», որպեսզի այն կատարվեր։ Եվ դրա կատարման համար էլ հարկավոր էր պառլամենտ գումարել։

Ժողովրդական ներկայացուցչությունը, նույնիսկ այնպիսի բարձր ընտրական ցենզով, ինչպիսին է 200 ֆունտ ստեռլինգը, էլի մի բան էր։ Իհարկե, պառլամենտ էին ընկնում արժանավոր, դրական մարդիկ. խոշոր ու միջին սեփականներ, վաճառականներ, դրամատերեր, լենդլորդեր։ Բայց նախօրոք կանխագուշակել, թե ինչպես կվարվեն նրանք, ինչ կպահանջեն պրոտեկտորից, ինչպես կվերաբերվեն սահմանադրության հետ, անհնարին է։ Բացի սպաներից ու Կրոմվելին մոտ մարդկանցից, այնտեղ, օրինակ, բազմաթիվ պրեսբիտեր պահպանողականներ կային, որոնք նրա գաղտնի թշնամիներն էին։ Պարզվեց, որ ընտրվել էին նաև «գլխանքի» մի քանի հանրապետականներ՝ Բրեդշոուն, Սքոթը, Գեզլրիգը, Լենթալը, Սքիփոնը։ Նրանցից կարելի էր օպոզիցիա սպասել։

Պառլամենտը բացվեց Կրոմվելի համար հիշարժան օրը՝ սեպտեմբերի 3-ին։ Չորս տարի առաջ այդ օրը մայր մտավ Դենբարի շողշողուն արեգակը, հաջորդ տարին ընծայեց Վուսթերյան մեծ հաղթանակը։ Գուցե թե վերին օրհնությունը հովանի կլինի և այս նոր ձեռնարկին։

www.a-pdf.com

Սեպտեմբերի 3-ին Կրոմվելը նոր ընտրված դեպուտատներին ողջունեց Վեսթմինսթերի Պատկերազարդ դահլիճում։ Իսկ հաջորդ օրը, իր ողջ պալատական փայլք ու շուքով շրջապատված, գնաց պառլամենտ, որպեսզի նրանց առաջ ճառ արտասանի։ Նա գնում էր մի մեծ բաց կառքով Լամբերթի և իր որդի Հենրիի հետ։ Կառքն ուղեկցում էին ճոխ հագնված մանկլավիկներ և սպասավորներ, իսկ հիանալի ձիերով սիգարշավում էր պատկառազդու լեյբ-գվարդիան։ Կառքի ետևից շարժվում էր մի թափոր՝ կազմված խորհրդի անդամներից, սպաներից և գլխաբաց ջենտլմեններից։

Քարոզից հետո, որի թեման աստծո կողմից սահմանված իշխանություններին ենթարկվելու անհրաժեշտության գաղափարն էր, Կրոմվելն սկսեց խոսել։ Նա խոսում էր ավելի քան երեք ժամ, և առաջին հայացքից կարող էր թվալ, թե նրա ողջ ճառը անկապ, քիչ հասկանալի ֆրազների մի հավաքածու է՝ չափից ավելի համեմված Աստվածաշնչի ասույթներով, կրքոտ պոռթկումներով և ինքնաոչնչացումով։ Չէր կարելի ասել, թե Կրոմվելը լավ էր խոսում։ Նա օգտագործում էր կոպիտ, հաճախ ոչ ճիշտ դարձվածքներ, կմկմում էր, երբեմն ուղղակի թլվատանում։ Բայց նա միշտ կարողանում էր խոսել այնպես, որ նրան լսում էին համակ ուշադրություն դարձած։ Ականատեսը գրել է. «Երբ Կրոմվելը ճառ արտասանեց պառլամենտում, այն տոգորված էր ուժեղ և առնական պերճախոսությամբ... Նրա արտահայտությունները կարուկ էին, կարծիքները վճռական, պնդումները ծանրակշիռ էին ու անվերապահ, և խոսքը միշտ համեմում էր ուրբ գրքից արված մեջբերումներով, որպեսզի դրան մեծ կշիռ տար և լավագույնս հասցներ ունկնդիրների գիտակցությանը։ Նա խոսում էր կրքոտ, բայց միևնույն ժամանակ այնպիսի ինքնատիրապետումով, այնքան իմաստուն ու հմտորեն, որ կարող էր իր ցանկությամբ ամբողջովին տիրապետել ու կառավարել պալատը...»։

Նա այժմ էլ խոսում էր այնպես, համարյա այնպես, ինչպես միշտ, բայց ինչպե՞ս էր զանազանվում այդ խոսքը՝ լորդ-պրոտեկտորի խոսքը գեներալի խոսքից, որը մի տարի առաջ Անգլիան ղեկավարելու համար հրավիրում էր «սրբազան և աստվածավախ մարդկանց»։ Ո՞ւր կորան այնքան հախուռն խանդավառությունը, մեծ ու բարերար փոփոխությունների շուտափույթ դալստյան հավատը, հույսը։ Դրանց փոխարեն քաղաքական դիրքորոշման պարզություն, զգաստություն, իրատեսություն, չափավորություն։ Նա լավ գիտեր ունկնդիրներին, որոնց դիմում էր. դրանք մոլեռանդներ ու միստիկներ չէին, այլ քաղաքագետներ էին ու գործամոլներ, որոնք ցանկանում էին բազմապատկել իրենց հարստությունը. Եվ նրանց ձգտումներին համապատասխան էլ նա կոչ էր անում կարգապահության, ողջամտության, կարգուկանոնի։ Ազգի նպատակը այժմ, ասում էր նա, կործա-

www.a-pdf.com

նելը չէ, այլ ամրապնդելը, նրա նպատակը խաղաղությունն ու բարգավաճումն է, շահավետ բարեկամությունը հարևան տերությունների հետ, ծովերի վրա տիրապետությունը։ «Այդ բոլորը ես ասում եմ,— վերջացրեց նա,— ոչ թե նրա համար, որ ցանկանում եմ իշխել ձեզ վրա, այլ որպես մի մարդ, որը որոշել է ձեզ հետ միասին ծառայել մեծ նպատակների...»։

Եվ վիճաբանություններ սկսվեցին։ Սկսվեցին ամենևին ոչ այնպես, ինչպես պատկերացնում և կամենում էր Կրոմվելը։ Սկսվեցին՝ օ՜, խայտառակություն, օ՜, նվաստացում՝ լորդ-պրոտեկտորի բարձր սահմանադրական լիազորությունների քննարկումով և դատապարտումով։ Հանրապետականները, որ այդքան տարիներ պայքարել էին միապետի միանձնյա իշխանության դեմ, չէին կարող հաշտվել պրոտեկտորի արտակարգ իշխանության հետ։ Նրանք ձեռնամուխ եղան «Կառավարման միջոցը» քննարկելուն՝ հակառակ դրա նկատմամբ սահմանված սրգելքի, և սկսեցին պրոտեկտորի և պառլամենտի փոխհարաբերությունների հարցից։ «Երբեք ազգերի կառավարումը գտնվում է մեկ անձի և պառլամենտի ձեռքերում» ձևակերպման փոխարեն նրանք առաջարկեցին նոր ձևակերպում. իշխանությունը կենտրոնացված է «պառլամենտի և մեկ անձի ձեռքում՝ օժտված այնպիսի լիազորություններով, որոնք պառլամենտն անհրաժեշտ կհամարի»։ Եվ այսպես, կրկնվում էր հին պատմությունը. պառլամենտը ուզում էր վեր դասվել միանձնյա ղեկավարից։

Կրոմվելը չէր տատանվում։ Այդ վտանգավոր մտադրությունները հարկավոր էր արմատախիլ անել, որպեսզի դարձյալ չկրկնվի Երկարատև պառլամենտի պատմությունը՝ խառնակչությունները, պատերազմները, սիալները... Սեպտեմբերի 12-ի առավոտյան դեպուտատները պալատ գալով դռները փակ տեսան։ Զինվորները, որոնք պահպանում էին մուտքը, հաղորդեցին, որ պրոտեկտորը նրանց սպասում է Պատկերազարդ դահլիճում։ Այնտեղ, բարձրանալով թավշյա գահի վրա՝ շքեղ ամբիոնանու տակ, Կրոմվելը նրանց դիմեց մի ճառով՝ այս անգամ պարզ, խիստ անառարկելի ճառով։ Դա հանկարծական ու հուժկու հարված էր, նման իր հեծելազորի հարվածին կռվի դաշտում։ Նա հիշեցրեց, որ իր իշխանությունն ստացել է աստծուց և Անգլիայի ժողովրդից։ Նա երբեք չի ձգտել գրավել այդ տեղը, բայց քանի որ իր վրա է դրված երկրի կառավարումը, նա թույլ չի տա փոխել սահմանադրությամբ հաստատված հիմքերը։ «Բախտի քմահաճույքին թողնել այդ կառավարումը, որ սահմանվել է աստծո կողմից և մարդկանց հավանությանն է արժանացել,— ասաց նա,— դա ես ոչ թե իմ սեփական շահի համար, այլ երկրի և սերունդների շահի համար երբեք թույլ չեմ տա, ավելի լավ է թող ինձ նետեն գերեզմանափոսը և թաղեն անփառունակ»։ Պահանջեց, որ բոլոր դեպուտատները, նախքան հետագա նիստերն սկսելը, հանրապետությանը և առանձնապես իրեն հավա-

www.a-pdf.com

տարմության երդում տան և խոստանան չփորձել փոխել «կառավարման միջոցը»։

Դա ահեղ կանխանշանակ էր։ Պառլամենտի նկատմամբ Կրոմվելի վերաբերմունքը այժմ հիշեցնում էր գլխատված Կարլոսին։ Զուր չէ, որ խոսակցություն էր գնում, թե Ուայթհոլում վերջերս սկսել է հայտնվել մի չարագուշակ ուրվական՝ վրին արյան շերտոզակ՝ մեռած միապետի ուրվականը։ Հանրապետականները վրդովված հրաժարվեցին հնազանդվել, և մոտ հարյուր՝ արդ դուրս եկավ պառլամենտի կազմից։ Դրանց թվում՝ Բրեդշոուն, Գեզլրիգը, Վայլդմանը։ Դա նման էր մաքրագործման։

Մնացածները ստորագրեցին երդմնագիրը և շարունակեցին նիստը։ Բայց վիճաբանության ոգին առաջվա պես վտանգ էր թաքցնում իր մեջ։ Մերթ նրանք ինքնակամ օրդոնանսներ էին հրատարակում հերետիկոսների դեմ և դրանով իսկ խախտում սահմանադրությամբ նախատեսված հանդուրժողականությունը, մերթ քվեարկում էին պրոտեկտորի ընտրելիության մասին որոշման օգտին (Կրոմվելը, ինչպես խոսում էին, հույս ուներ, որ իր պաշտոնը կդարձնեն ժառանգական), մերթ Երկարատև պառլամենտի նման վավերացնում են այնպիսի մի որոշում, ըստ որի ընակչության վրա չի կարող հարկ դրվել առանց պառլամենտի համաձայնության, և դրանով իսկ պրոտեկտորին դնում էին նյութական կախման մեջ իրենցից։

Սեպտեմբերի վերջին տեղի ունեցավ մի դեպք, որը քիչ էր մնացել կյանքից զրկեր Կրոմվելին։ Օլդենբուրգյան դուքսը նրան էր նվիրել ֆրիսլանդական երեք զույգ հիանալի ձիեր, և Օլիվերը որոշեց ինքն անձամբ փորձել դրանք Հայդ-պարկում։ Նա ինքն էր քշում լծվելու անսովոր կրակոտ ձիերին, և նստիքին նստած մարակում էր դրանց։ Նրա ետևում կառքի մեջ նստած էր Թերլոն։ Նրանք քանի գնում ավելի ու ավելի արագ էին ընթանում, Կրոմվելը մոլուցքի մեջ ընկավ՝ լավ ձիեր էին, բայց չգիտես ճարմանդնե՞րը լավ չէին հագցրել, թե՞ նրա ձեռքերն էին արդեն կորցրել նախկին ուժն ու վարժվածությունը, մեկ էլ ահա նժույգները դարձան անսանձահարելի։ Կրոմվելը չէր հիշում, թե ինչպես ինքը պոկվեց նստիքից, ողջ թափով դիպավ առեղին, իսկ ապա ոտքերը լծափոկերի մեջ խճճվելով քարշ եկավ հողի վրա։ Թերլոն, աչալուրջ ու զգոն Թերլոն անմիջապես կառքից թռավ նրա ետևից, վայր ընկավ, և ատրճանակը նրա գրպանում ինքն իրեն կրակեց, որ քիչ մնաց վիրավորեր պրոտեկտորին։

Երբ Կրոմվելին վերջապես վեր կացրին, նա ամբողջովին ցախջախված էր, հագուստը պատառոտված, դեմքի վրա արյունոտ այտուցներ կային։ Նա քայլել չէր կարողանում, ոտքը լրջորեն վնասվել էր։ Մի քանի շաբաթ նա ստիպված եղավ տանը նստել։ Այդ դեպքը ցույց տվեց, թե նա ինչքան պետք է զգույշ լինի. չէ՞ որ այդ կատաղած վեցյակի պես նա վարում էր ողջ

www.a-pdf.com

երկիրը, և չպետք է թույլ տար, որ իրեն գցեին նստիքից, թե չէ ամեն ինչ կորած էր։

Նոյեմբերի սկզբին ծանր հիվանդացավ մայրը՝ ծեր Եղիսաբեթ Կրոմվելը։ Նա արդեն իննսունին մոտ էր, բայց պահպանել էր մտքի հստակությունը, խորը հավատը և ջերմագին, անձնուրաց, ինքնամոռաց սերը որդու նկատմամբ։ Ապրելով արդեն Ուայթհոլում, լինելով արդեն բոլորից հարգված պրոտեկտորի մայրը, նա ամեն անգամ հրացանի կրակոցի ձայն լսելով ցրնցվում էր։ Նրան թվում էր, թե կրակում են իր որդու վրա։ Կրոմվելը փոխհատուցում էր մորը իր քնքշալի կապվածությամբ, սրտառուչ հոգատարությամբ և անկեղծությամբ։ Դեռ չէր պատահել, որ նա գնար քնելու, առանց մոր սենյակը մտնելու և առանց նրան բարի գիշեր մաղթելու։ Նրա կինը անընդհատ խրված էր լինում անտեսության հոգսերի մեջ, զբաղված երեխաների դաստիարակությամբ։ Նա գործնական, բարի և ոչ մեծ խելքի տեր մի կին էր։ Իսկ մայրը վաղեմի հանթինգդոնյան ժամանակներից ի վեր մինչև մահը նրա համար ընկեր էր, հավատարմատար, հոգևոր ղեկավար։ Անհուն սերը նրան տվել էր իմաստություն, և Օլիվերը հաճախ էր անսում նրա խորհուրդներին՝ ինքն էլ լինելով արդեն տարիքն առած մարդ և երկրի ղեկավար։

Նոյեմբերի 19-ին ծեր Եղիսաբեթը, վերջին օրհնությունը տալով որդուն, մեռավ։ Օլիվերը շատ վշտացավ, իրեն որբացած զգալով։ Թաղումը տեղի ունեցավ մեծ հանդիսությամբ, չնայած պերճության հանդեպ տածած puրիտանական խորշանքին, որը միշտ ուղեկցել էր հանգուցյալին։ Նրան թաղեցին Վեսթմինսթերյան աբբայությունում, անգլիական թագավորների հանգստարանում։

Պառլամենտն ավելի ու ավելի էր զայրացնում Օլիվերին։ Այժմ դեպուտատները ձեռնամուխ էին եղել ղինված ուժերի հարցի քննարկմանը։ Նրանք ուզում էին իրենց ձեռքը վերցնել միլիցիայի նկատմամբ հսկողությունը, իսկ բանակի թիվը կրճատել համարյա երկու անգամ՝ 57 հազարից իջեցնել 30 հազարի։ Նրանք հրաժարվում էին քվեարկել հարկերից ղինվորներին ռոճիկներ վճարելու օգտին։ Իսկ հունվարին պահանջեցին վերադառնալ ընտրական ավելի լայն ցենզի՝ քառասուն շիլինգ տարեկան եկամուտի։ Դրան ավելացրած, նոյեմբերին մի քանի գնդապետներ, որոնք կապված էին լևելերների հետ, հանրագիր կազմեցին, որով պահանջում էին սահմանափակել պրոտեկտորի իշխանությունը և գումարել «լրիվ ու ազատ պառլամենտ»՝ «ժողովրդական համաձայնագրի» հիման վրա։ Խոսում էին, որ հանրագրի հեղինակն է եղել Լիլբեռնի բարեկամը՝ Ջոն Վայլդմանը։

Կրոմվելի աչքին երևաց անարխիայի ուրվականը։ Այս պառլամենտն էլ չկատարեց իր խնդիրը՝ չծառայեց Կրոմվելին որպես կարգի պահպանման հենարան։

Որպեսզի տեղիք չտար ասեկոսեների, Օլիվերը սպասեց սահ-

www.a-pdf.com

մանագրությամբ սահմանված ժամկետին՝ պառլամենտի հինգ-ամսյա նստաշրջանին։ Այստեղ նա, ճիշտ է, թույլ տվեց մի փոքրիկ խորամանկություն. քանի որ «Կառավարման միջոց»-ի մեջ չէր հիշատակված, թե ինչպիսի ամիսներ են նկատի առնված՝ օրացուցային, թե՞ լուսնային, նա հաշվեց հինգ լուսնային ամիս (դրանք ավելի կարճ են) և բացումից ուղիղ 140 օր հետո, հունվարի 22-ին, ներկայացավ պալատ՝ մտադիր լինելով վերջ տալ նրա նիստերին։

Ծայրահեղ զայրույթը տիրել էր նրան։ Նա դիմեց նրանց մի ճառով, որն այս անգամ լի էր զայրույթով ու ցասումով։ Նա պառլամենտին մեղադրեց կավալերների ու լևելերների շահերին նեցուկ դառնալու մեջ, որոնք ուզում են նորից երկիրը գցել արյունահեղության մեջ։

Նա հարձակվեց բանակն իրեն ենթարկելու պառլամենտի փորձերի վրա. դա տանում է բռնակալության և անիշխանության։ Նա այժմ չէր հավատում պառլամենտներին։ Նա վաղուց արդեն հավատ չուներ ժողովրդի նկատմամբ։ Մնում էր միայն հավատալ ինքն իրեն։ Եվ սրտում անսահման ծանրություն, բայց և լի վստահությամբ հանդեպ իր անխորտակելի իրավացիությունը, նա այդ մարդկանց, որոնք մի անգամ ևս այդպես դաժանորեն հիասթափեցրել էին նրանց, ասում էր. «Թող չկարծեն, թե վերցնելով իր վրա պարտականությունների ողջ բեռը, պրոտեկտորը մտածում է այն մասին, որ փառաբանի իրեն և իր ընտանիքին. թող չշազակրատեն ազատության մասին։ Նրանք ի՞նչ իրավունք ունեն խոսելու ազատության մասին, երբ խաղաղ քաղաքացիների կյանքն ու կայքը վտանգի տակ էին դրված»։ Նրա աչքերում արցունքներ երևացին, երբ նա վերջին խոսքերն էր արտասանում սակված ժողովականներին.

«Ես իմ պարտականությունն եմ համարում ձեզ ասել, որ այդ աղգերի օգտի համար, ժողովրդի ընդհանուր բարօրության համար դուք այլևս չպետք է նստեք այստեղ։ Եվ դրա համար էլ ես հայտարարում եմ, որ ես ցրում եմ այս պառլամենտը»։

Այժմ ո՞վ էր նա։ Բռնակալ, լիիշխան բռնակալ։ Սպաներից մեկը փորձել էր նրան կոչել կայսր։ Անգլիական հանրապետության ողջ շինությունը այժմ պսակված էր նրա հզոր առանձնակի կերպարանքով, կերպարանք, որը հարկադրված էր, ինչպես նա ինքն էր վշտացած կարծում, կառավարել միանձնյա։ Եվ բնական է, որ այդ կերպարանքը դարձավ գլխավոր, պարզորոշ երևացող թիրախ տարբեր կարգի թշնամիների համար՝ և՛ աջից, և՛ ձախից, և՛ արտասահմանից, և՛ ամենամոտիկ շրջապատից...

Դավադրությունները նրա հանդեպ շատանում էին։ Դեռևս 1654-ի ամռանը երկու ռոյալիստներ, Կարլոս Ստյուարտի գիտությամբ, փորձում էին դարանակալել Հեմփթոն-Քորթ տանող ճանապարհին և նրան զրկել կյանքից։ Միայն Թերլոյի զգոնու-

www.a-pdf.com

թյունն էր, որ այն ժամանակ փրկեց Կրոմվելին։ Նրա խորհրդով էր, որ Կրոմվելը մերձքաղաքային իր պալատը գնաց ոչ թե կառքով, այլ նավակով, գետով։ Դավադիրները, իհարկե, բռնվեցին։ Այժմ, մարտին, կավալերները փորձեցին ապստամբություն բարձրացնել միանգամից մի քանի կոմսություններում։ Բայց նրանց առաջին իսկ նլույթը պատմական Մարսթոն-Մուր դաշտում ցրվեց տեղական միլիցիայի կողմից։ Գլխավորողներին վերցրին գերի և շուտով սարկուիչան ծախեցին Բարբադոսի պլանտացիաներում։

Միջոցներ ձեռնարկվեցին նաև ձախից եկող վտանգի դեմ։ Հարիսոնին ազատեցին և բանտարկեցին Քերիսբրուքյան ամրոցում, Ուայթ կղզում՝ նույն այն ամրոցում, որտեղ մի ժամանակ տանջվել էր թագավոր Կարլոսը։ Վայլդմանին վտարեցին պառլամենտից, իսկ փետրվարի 10-ին «բռնապետ Օլիվեր Կրոմվելի» դեմ պարսավագիր գրելու պահին ձերբակալեցին։ Ռոբերտ Օվերթոնին բռնեցին Շոտլանդիայում և առան կալանքի տակ։ Զուր չէր, որ Կրոմվելը այդ երկիրը վստահել էր իր հավատարիմ ծառա Մոնքին։

Բայց Օլիվերին միշտ թվում էր, որ իր կառավարությունը վտանգի մեջ է։ Պառլամենտը կրճատեց բանակի ռոճիկը և այնտեղ հասունանում էր դժգոհությունը։ Արտաքին քաղաքականությունը, ոստիկանությունը, արքունիքը՝ այդ ամենը փող էին պահանջում. հարկ էր լինում տապալված դինաստիայի արքաների պես սաստկացնել ակցիզները, պարտքեր խնդրել դրամատերերից, անգամ բաց թողնել հանգանակության թերթեր, որոնք բաց էին թողնվում պրոտեկտորի անունով։ Դա ծնում էր տրտունջներ, ասեկոսեներ, խեթ հայացքներ։ Ժողովրդի մեջ շատանում էին աղանդները։ Ի հավելումն «Հինգերորդ միապետության մարդկանց»՝ սիքերների, ռանտերների, անաբապտիստների, ի հայտ եկան նաև կվաքերները. սրանք ձգտում էին Քրիստոսի հետ միստիկական միավորման և բոլորը խոսում էին այն «ներքին լույսի» մասին, որը կարող է հայտնվել յուրաքանչյուր մարդու, միայն թե նա դեն նետի այս աշխարհի բոլոր դայթակղությունները և իր սիրտը բաց անի աստծուն։ Նրանք ասում էին, որ բոլոր մարդիկ հավասար են, իշխանություն ունեցողներին դիմում էին «դու»-ով, հրաժարվում էին գլխարկ հանել նրանց առաջ և երդում տալ։ Կրկին, ինչպես հեղափոխության նախօրյակին, քաղաքից քաղաք, գյուղից գյուղ էին շրջում թափառական քարոզիչները, դլիններին հավաքում ժողովրդին, առատորեն սփռում էին մշուշապատ, հին կտակարանային պատկերներ, քողազերծ էին անում, կանչում իրենց եռևիդ...

Ի հայտ եկան նաև ուրիշ վտանգավոր նշաններ, որոնք հիշեցնում էին հեղափոխության նախօրեն։ Կրոմվելին քաջ ծանոթ վաճառական Ջորջ Կոնին հանկարծ հրաժարվեց վճարել պառլամենտի կողմից չհաստատված մաքսային տուրքերը։ Գլխավոր դա-

www.a-pdf.com

տավոր Ռոլլը խնդրեց ընդունել իր հրաժարականը, քանի որ չէր կարող և չէր ուզում ընդունել այդպիսի տուրքերի օրինականությունը։ Իրավաբաններ Ուայթլոքը և Ուիդրինգթոնը նույն այդ պատճառաբանությամբ հրաժարվեցին ծառայել որպես Մեծ կնիքի պահապաններ։

Կրոմվելը վաղուց արդեն, թերևս «սրբերի» հետ հենց այն դատմությունից հետո, իր հիմարության ու թուլության այդ արտահայտությունից հետո չէր հավատում, թե ինքը կարող է որևէ բան փոխել երկրում, ժողովրդին տալ նոր պետական կառուցվածք, նրան բարիք բերել։ Չէ, այժմ նա ոչ այնքան հույս ուներ բարիք գործելու, որքան ցանկանում էր կանխել երկրին բոլոր հողմերից սպառնացող չարիքն ու աղետը։ Եվ նա պատրաստ էր ծառայել իր ժողովրդին եթե ոչ որպես թագավոր, ապա որպես կոնսթեբլ, ոստիկան, կարգ ու կանոն պահպանող։ Բայց մի մարդն ինչպե՞ս կարող է հանգստություն պահպանել մի այնպիսի մեծ համայնքում, ինչպիսին Անգլիան է, դեռ Շոտլանդիան ու Իռլանդիան էլ վերադիր։ Եվ Կրոմվելը որոշում է Անգլիան և Ուելսը բաժանել տասնմեկ օկրուգների և յուրաքանչյուրի գլխին տեղավար նշանակել մի-մի փոքրիկ պրոտեկտոր՝ մայոր-գեներալ։ Այդ անձնավորությունը հենց իր՝ գերագույն կոնսթեբլի, նեմսն պետք է պատասխան տա ամեն ինչի համար. միլիցիայի ու հարկերի, կրոնի և բարոյականության, դատավորների և դատապարտյալների համար։ Նա պարտավոր է, ինչպես ասվում էր պրոտեկտորի հրահանգում.

«— ճնշել խռովություններն ու ապստամբությունները.

— միջոցներ ձեռնարկել մեծ ճանապարհների վրա անվտանգությունն ապահովելու համար այն մարդկանցից, ովքեր զբաղվում են կողոպուտներով ու գողությամբ.

— խստիվ հետևել կառավարությունից դժգոհ մարդկանց մարքին և արգելել նրանց հավաքները, թող չտալով ո՛չ ձիարշավ, ո՛չ աքլորակռիվ, ո՛չ արջահալած կամ ապօրինի ժողովներ, քանի որ խռովությունը սովորաբար առաջանում է այդպիսի տոներից.

— հայտնաբերել պարապ-սարապ թրևողներին, որպեսզի հարավոր լինի նրանց հարկադրաբար աշխատանքի տեղավորել կամ աքսորել, միջոցներ ձեռք առնելով լավագույնս ապահովել աղքատներին ու ի կատար ածելով համապատասխան օրենքները.

— պայքարել անազնվության դեմ, միջոցներ ձեռք առնելով հաշտարար դատավորների և հոգևոր անձանց հետ մեկտեղ՝ ընդդեմ հարբեցողության, աստվածանարգման և այլն, զգուշացնել անփույթ հաշտարար դատավորներին, որ նրանք կարող են հանվել պաշտոնից»։

Այդպիսի իշխանություն իրականացնելու համար մայոր-գեներալներին վերապահվում էր՝ հրահանգել տեղական միլիցիա-

www.a-pdf.com

յին, ի հավելումն՝ նրանց տրամադրության տակ էին դրվում հեծյալ ջոկատները։ Նրանց իրավունք էր տրվում գանձել իրենց օկրուգներում բացառիկ հարկ՝ 10 տոկոսի չափով ռոյալիստների բոլոր եկամուտներից։ Նրանք պետք է ցրեին ժողովրդի բոլոր հավաքները, լիներ դա զվարճանք, արջախաղ կամ աքլորակռիվ թե պանդոկում փոքրիկ խնջույք, կամ թե աղանդավորների հավաք աղոթատեղիում։ Յուրաքանչյուր տանտիրոջից նրանք գրավոր երաշխավորություն էին պահանջում տնեցիների և ծառաների լավ վարքի վերաբերյալ։ Ամեն մի եկվոր, հատկապես ծովի այն կողմից եկած, պարտավոր էր ներկայանալ մայոր-գեներալին, և նրա վրա սահմանվում էր ոստիկանական խստիվ հսկողություն։ Ոչ մի պանդոկ կամ կրպակ չէր կարող բացվել առանց մայոր-գեներալի թույլտվության, կիրակի օրվա ոչ մի լոտոտում, ոչ մի աղանդավորական միտինգ չպետք է վրիպի նրա ուշադրությունից։

Մայոր-գեներալների պաշտոններում Կրոմվելը նշանակեց քաղաքացիական պատերազմի մասնակից իր հավատարիմ զինակիցներին, բարձր արժանիքներ և ոչ պակաս բարձր աստիճան ունեցող մարդկանց։ Դրանց թվում էին և նրա ազգականները, հմուտ սպաներ Դեսբորոն, Ուոլին, Հոֆֆեն, Ֆլիթվուդը, նաև Լամբերթը, որին վստահված էր հյուսիսային կոմսությունների կառավարումը։ Բայց նրանց մեջ կային նաև հաստագլուխ, սահմանափակ կատարածուներ, որոնք գավառներում մանր և դաժան բռնապետություն էին հիմնում։ Դրա հետևանքով հսկողությունը մանրախնդիր էր դառնում, լրտեսելը, փոխադարձ ունսկությունն ու աչքը վրան պահելը, զազիր չարախոսությունը սովորական բան էր դառնում։ Պատիժներում իշխում էր կամայականությունը։ Փակվում էին գինետները, խաղատները, հյուրանոցները։ Այլևս չէին կազմակերպում աքլորակռիվներ, վազքի ու ձիարշավի մրցումներ։ Հին զվարթ Անգլիան սկսել էր հիշեցնել Կալվինի ժամանակների ժնևը՝ մռայլ, լռակյաց, կասկածանքի և տիրացուական ոգով տոգորված երկիրը։ Բանտերը լեփ-լեցուն էին։

Պրոտեկտորական արքունիքն էր ուղղություն տալիս ու սատարում այդ քաղաքականությանը։ Խղճի ազատությունը, մամուլի ազատությունը, որ հռչակված էին սահմանադրությամբ, գարձել էին դատարկ հնչյուններ։ Հատուկ հանձնաժողովը ստուգման էր ենթարկում ծիսական քարոզիչների պաշտոններում առաջադրված բոլոր թեկնածուներին։ Մասնավոր, ընտանեկան քարոզիչներ պահելը, ինչպես մի ժամանակ անում էր բարեպաշտ սքվայր Օլիվեր Կրոմվելը, այժմ արգելված էր։ Պաշտոնից հանված ոչ մի քարոզիչ չէր կարող դառնալ անգամ տնային ուսուցիչ։ Մտցված էր խստագույն գրաքննություն, որի դեմ մի ժամանակ այնքան մոլեգին իր ձայնն էր բարձրացնում Ջոն Միլտոնը։ Այդ շատ լուրջ գործը՝ ամբողջ տպագրական արտադրանքի բարեհուսությունը ստուգման ենթարկելը, հանձնարար-

www.a-pdf.com

վեց իրեն՝ պետական քարտուղար Ջոն Թերլոյին, և կարելի էր չտարակուսել. ոչ մի չարամիտ կամ պրոտեկտորի իշխանության համար վտանգավոր գրվածք չի տպագրվի Անգլիայում։ Բոլոր տպարանատերերին վերցրին ոստիկանական հաշվառման։ Փակվեցին բոլոր թերթերը, բացի կառավարական երկու լրագրերից՝ «Քաղաքական Մերկուրիից» և «Հասարակական լրաբերից»։

Բոլոր այս միջոցառումները որոշ ժամանակով ճնշեցին դժգոհությունը, և Անգլիայում հաստատվեց մռայլության աշխարհը, հարկադրանքի ու երկյուղի աշխարհը։ Բռնությունը, սակայն, անկարող եղավ ծաղկման հասցնել երկիրը։ Այն բառացիորեն ավելի թանկ նստեց, քան նախկին ազատությունը։ Մայոր-գեներալների վարչակարգը, բազմաճյուղ ոստիկանական ցանցը պահելը թանկ էր նստում։ Կառավարության դրամական դեֆիցիտը աճեց կործանարար թափով։ Իսկ պրոտեկտորի տընտեսական քաղաքականությունը նույնքան հետադիմական էր, որքան և նրա ոստիկանական կարգը։

1656 թվականի հրովարտակով ֆեոդալական «ասպետական պահումը» վերացվեց, բայց վերացվեց միայն սքվայրների համար։ Նրանք ազատագրվում էին վասալական կախումից և իրենց հողերն ստանում էին որպես լիակատար սեփականություն։ Բայց դա վերաբերում էր միայն սքվայր-հողատերերին։ Գյուղացիները շարունակում էին կրել ստորացուցիչ պարհակների ու վճարումների բեռը. նրանց վրա այդ «ազատության ակտը» չէր տարածվում։ Եկեղեցական տասանորդը, սեփականատիրական իրավունքի այդ խորհրդանիշը, մնաց անձեռնմխելի։ Վերածնվեց մենաշնորհական իրավունքների վարձակալման և բաշխման պրակտիկան՝ այս կամ այն արտադրության կամ առևտրի վրա։ Ցանկապատումները, որոնցից այնքան տուժում էին գյուղական աղքատները, ոչ միայն շարունակվում էին, այլև խրախուսվում։ Պրոտեկտորն ինքը, հավանորեն, մոռանալով Իլիում ճահիճները չորացնողների դեմ իր պայքարը, այժմ մտավ չորացնելու գծով նույն այն հանձնաժողովի մեջ, որը գլխավորում էր կոմս Բեդֆորդը, և հետագայում որպես անձնական սեփականություն ստացավ տասը ակր չորացրած հող։

Յոթ տարի առաջ, այն անմոռանալի լարված օրերին, երբ Անգլիան ընթանում էր դեպի անկասելի ու ահեղ վախճան, երբ ստեղծվում էր արդարության Գերագույն դատարանը և վճռվում էր շարաբաստիկ միապետի ճակատագիրը, սպանների հորհուրդն ստացավ ուշագրավ մի փաստաթուղթ։ Դա հանրագիրն էր եբրայական համայնքի, որ վաղուց արդեն կիսալեգալ դրության մեջ (եբրայեցիները պաշտոնապես արտաքսված էին Անգլիայից դեռևս 1290 թվականին) գոյություն ուներ Լոնդոնում։ Դուք պաշտում եք մեր գրքերը, ասված էր այդ ուղերձում, դուք վկայակոչում եք մեր մարգարեներին, հապա էլ ինչո՞ւ եք շա-

www.a-pdf.com

ռունակում հետապնդել մեր ժողովրդին։ Դադարեցրեք հալ
ծանքները, բաց արեք սինագոգները, թույլատրեք մեզ աղաղ
բեն առևտուր անել ձեր երկրում։ Դրա համար մենք սուրբ Պ
ղոսի տաճարը կմուծենք 500 հազար ֆունտ ստեռլինգ։

Գայթակղությունը մեծ էր։ Համագործակցությունը հրեա վ
ճառականների հետ նյութական մեծ շահ էր խոստանում։ Ա
նկատառումներին հազիվ թե որևէ մեկը ընդդիմանար, և ա
գործով հետաքրքրվեցին սպայության ամենից բարձր շրջան
-ները։ Բազմափորձ իրավաբանները հնամենի օրենսդրություն
ում գտան համապատասխան տեղեկանք։ Բանից պարզվում
որ Էդուարդ I-ը որոշում է կայացրել Անգլիայից արտաքսել
բոլոր եբրայեցիներին, այլ միայն եբրայական դավանություն
պատկանող վաշխառուներին։ Հայտնի է, որ XIII դարում Եվրո
պայի խոշորագույն աստվածաբանները, համակողմանի քննել
հարցը, եկան այն եզրակացության, որ վաշխառուական տոկ
վերցնելը պարտք տված փողի դիմաց՝ այնքան էլ մեծ մեղք
քրիստոնյայի համար, ինչպես համարվել էր առաջներում, վա
միջնադարյան ժամանակներում։ Սակայն քրիստոնյա-վաշխա
ռուների անաշխատ եկամտի վրա գրեցին խիստ սահման. նրան
չէին կարող գանձել վեց տոկոսից ավել։ Եթե քրիստոնյա-պա
տատները պահանջում էր ավելին, նրա դեմ կարելի էր գործ հ
բուցել դատարանում։ Բայց եբրայական կրոնին պատկան
վաշխառուները եկեղեցական դատարանի իրավասությանը չէ
ենթարկվում և, հետևաբար, կարող էին վերցնել (և վերցնո
էին) շատ ավելի մեծ տոկոսներ (թագավորը ապարդյուն կե
պով փորձում էր վաշխը սահմանափակել մինչև 43 տոկոս
Բնականաբար վաշխառու-քրիստոնյաները սնանկանում էի
իսկ վաշխառու-հրեաները հարստանում ի հաշիվ թագավոր
խոշոր լենդլորդերի, մանր ու միջին ասպետների, վաճառակա
ների ու գյուղացիների, որով և համընդհանուր ատելություն էլ
հարուցում։ Սիթիի մի քանի ազդեցիկ վաճառականների ճնշմ
տակ Էդուարդ I-ն ինքը, ինչպես և ուրիշ թագավորներ, որոն
բազմիցս օգտվել էին հրեա վաշխառուների ծառայությունների
որոշում հրատարակեց Անգլիայից նրանց արտաքսելու մասի

Իսկ այժմ, հեղափոխության տարիներին, թագավորական ի
խանության և եպիսկոպոսական եկեղեցու վերացման հետ, վա
խի տոկոսի գանձման մասին գործերը հանձնված էին քաղաք
ցիական դատարանների իրավասությանը։ Այդ պատճառով
հրեա վաշխառուների վերադարձը Անգլիա չէր բերում անգլի
ցիներին այնպիսի վնասներ, ինչպես նախկինում. նրանք իրա
վունքներով և հնարավորություններով հավասարվել էին։ Ի պ
տասխան Հյու Պիթերսի և Հենրի Մարթենի հանրագրի՝ եբր
յական ներկայացուցիչներից պահանջեցին 700 հազար ֆունտ
իսկ պառլամենտում հայտարարեցին, որ հրեաների հետ
պնդման մասին հին որոշումը պետք է վերացվի։ Բայց պառլ

www.a-pdf.com

մենտը այդ օրերին զբաղված էր այլ, շատ ավելի կարևոր գործերով, և հանրագիրն ընթացք չստացավ։

Եվ ահա այժմ, 1655 թվականի սեպտեմբերին, Ամստերդամի հրեական համայնքի առաջնորդ, գիտնական-աստվածաբան Մանասիա բեն Իսրայելը երեք ռաբբիների հետ ժամանեց Կրոմվելի մոտ, որպեսզի բարեհաջող վախճանի հասցնի հրեաների Անգլիա վերադառնալու գործը։

Կրոմվելն ընդհանուր առմամբ մեծ հանդուրժողության կողմնակից էր, և որպես կանոն, բարյացակամորեն էր վերաբերվում այլ ազգերի ներկայացուցիչներին։ Ճիշտ է, հրեաները ժխտում էին Քրիստոսի աստվածայնությունը, և սկզբում Կրոմվելը անվստահությամբ էր վերաբերվում նրանց հետ։ Սակայն Թերլոն, որը հանդիպել էր Մանասիա բեն Իսրայելին և որոշ գործեր արել նրա հետ դեռևս 1651 թվականին Ամստերդամ իր ուղևորության ժամանակ, պրոտեկտորին համոզեց, թե որքան օգուտներ կբերեր՝ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական բարեկամությունն այդ ժողովրդի հետ։ Պետական քարտուղարը, դրանից բացի, վաղուց էր օգտագործում իսպանական հրեաներին, որոնք անլեգալ կերպով ապրում էին Անգլիայում, որպես լրազրկիչների ու լրտեսների, որոնք կարողանում էին ճարպկորեն սողոսկել եվրոպական արքունիքների բոլոր գաղտնիքների մեջ, բոլոր տեսակի դավադրությունների ու բանսարկությունների մեջ։ Պրոտեկտորը դրա համար համաձայնեց ընդունել Երրայական պատվիրակին։ Բարեկամությունը նրա հետ, թերևս, կծառայի Բրիտանիայի փառքին։

Դեկտեմբերի 4-ին Կրոմվելը խորհրդում հանդես եկավ ճառով, որով ապացուցում էր, որ Երրայեցիներին Անգլիայից արտաքսելու մասին 1290 թվականի օրենքը արքայական առանձնաշնորհման ակտ է և այն կարելի է ու պետք է վերացնել։

Սակայն շատերն առարկեցին։ Այնժամ Կրոմվելը դադարեցրեց վիճաբանությունները և հետաձգեց հարցի քննարկումը։ Ոչ մի օրենսդրական որոշում այդ առթիվ չհրատարակվեց, բայց հրեաները դրանից հետո Անգլիայում իրենց ավելի ազատ զգացին։ Նրանք իրենց գրասենյակները Ամստերդամից տեղափոխեցին Լոնդոն և սկսեցին եռանդուն մասնակցել բրիտանական առևտրին։ Պրոտեկտորին նրանք նայում էին հույսով և հավատում էին նրա հովանավորությանը։ Բայց միայն ութը տարի անց, երբ Կրոմվելն արդեն կենդանի չէր, իսկ անգլիական գահը կառավարում էր Կարլոս II Ստյուարտը, նրանց վերջապես պաշտոնապես թույլատրվեց ազատորեն ապրել Անգլիայում։

1654 թվականի ամռանը, Հոլանդիայի հետ շահավետ հաշտություն կնքելուց հետո, Օլիվեր Կրոմվելը Պետական խորհրդում հայտարարեց, թե այժմ հարկավոր է մտածել Իսպանիայի հետ պատերազմի մասին։ Անգլիան մեծ նավատորմ ունի, և այն

www.a-pdf.com

պետք է օգտագործել, «որովհետև ասված չի պահանջում մեզնից նստել տեղում։ Մենք պետք է մեղ հաշիվ տանք, թե ինչ աշխատանք կարող ենք անել աշխարհում նույնպես, ինչպես տանն ենք անում»։ Կրոմվելի հավատը պասսիվ և անձնուրաց չէր, ինչպես որևէ կվաքերի։ Ոչ, նրա բողոքականությունն ուներ ռազմատենչ, պալիոդական բնույթ։ Անգլիացու առաջին պարտականությունն, ինչպես երևում էր նրա խոսքերից, պետք է լինի հոգ տանել բողոքականության հաստատմանը, և այստեղ գլխավոր թշնամին Իսպանիան է։

Լամբերթն ասարկեց.

— Բայց մենք բավականաչափ հոգսեր ունենք տանը. հեռավոր և վտանգավոր ձեռնարկումները վատ ծառայություն կմատուցեն բողոքականությանը։ Բացի այդ, դրանք չափազանց թանկ են։

— Նավերն արշավանքի պատրաստելը,— պատասխանեց Կրոմվելը,— ավելի թանկ չէ, քան այն անգործության մեջ պահելը։ Իսկ այդպիսի արշավանքները օգուտներ շատ կբերեն. իսպանական տիրույթները նոր Աշխարհում շատ են. մենք կարող ենք գրավել դրանք։ Իսկ իսպանական արծաթյա նավատորմը։ Դա նույնպես կարող է ընկնել մեր ձեռքը։

Լամբերթը տատանվում էր։ Պատերազմն իր հետ կբերի հարկերի ուժեղացում. հեռավոր գաղութների նվաճումը հագիվ թե մեծ օգուտներ բերի։ Որտեղի՞ց գտնել մարդիկ հեռավոր արշավանքների համար և օվկիանոսի այն կողմում հող մշակելու համար։ Դրանից բացի, Իսպանիայի հետ շահութաբեր առևտուրը կդադարի։

— Ինչո՞ւ,— պատասխանել է Կրոմվելը։— Ամենևին էլ պարտադիր չէ հարաբերությունները խզել Իսպանիայի՝ հետ Եվրոպայում, եթե պատերազմում ես Ամերիկայում եղած նրա գաղութների դեմ։ Դրա օրինակը թագուհի Եղիսաբեթի փառավոր գործերն են։

— Բայց դա բավական թանկ կնստի,— անձնատուր չէր լինում Լամբերթը։— Գանձարանը կդատարկվի։

— Դրա համար արժե։— Կրոմվելի անվեհերությունը հիշեցնում էր եղիսաբեթյան ծովակալների՝ Ռեյլիի ու Դրեյքի խիզախությունը։— Վեց արագընթաց ֆրեգատներ, ակոսելով Մեքսիկական ծովածոցը, կբերեն ավարը։

— Բայց հոլանդացիները։ Նրանք իրենց ձեռքը կվերցնեն իսպանական առևտուրը, իսկ Անգլիան կկորցնի այն։ Նրանք կհարստանան և փոխվրեժի կդիմեն։

— Deus providebit,— պատասխանեց Օլիվերը լատիներեն։— Բոլորն ասածո կամքով է։

Կրոմվելի արտաքին քաղաքականությունը ներկայացնում էր վերացական երազանքների մի քմահաճ խառնուրդ՝ բոլոր կաթոլիկական ուժերի դեմ բողոքականների խաչակրաց արշավանքի

www.a-pdf.com

մասին, սթափ գործնական հաշիվներ՝ իր ազգի շահույթի համար, իր դասակարգի համար և ձգտում համաշխարհային տիրապետության։ Նա Լամբերթին ակնարկում էր «Հռոմի պարիսպները թակելու անհրաժեշտության մասին»։ Նա ասում էր. «Եթե ես տասը տարով երիտասարդ լինեի, չէր լինի Եվրոպայում մի Բագավոր, որին ես չստիպեի դողալ»։ Բայց օգուտը, նյութական «հետաքրքրությունը»՝ դա, թերևս, ամենից գլխավորն էր։ Նոր Անգլիան, որ գլխաասել էր Բագավորին, որ ազատագրել էր իր վաճառականներին և նախաձեռնող աքվայրներին ֆեոդալական սահմանափակումներից, ելք էր պահանջում դեպի համաշխարհային ասպարեզ, ձգտում էր զարգացած առևտրի, նախաձեռնողականության, գաղութային գավթումների և ծովի վրա տիրապետության։ Նրա նպատակն էր գարձել ռազմական, քաղաքական, առևտրական գերակշռության հասնել աշխարհում։ Եվ Կրոմվելն իր արտասովոր տաղանդի ողջ թափով օժանդակում էր հասնելու այդ նպատակներին։

Նրա առաջին խնդիրը բողոքական երկրների՝ Անգլիայի, Հոլանդիայի, Շվեդիայի, Դանիայի միջև անքակտելի դաշինք ստեղծելն էր. Անգլիան այդ դաշինքում պետք է առաջատար դեր խաղար և այն ուղղեր Հռոմի ու կաթոլիկական պետությունների դեմ։ Հաշտություն Հոլանդիայի հետ պայմանագրերը Դանիայի և Շվեդիայի հետ անգլիացի առևտրականներին ազատ մուտք էին ապահովում Բալթիկ ծով։

Բայց Հոլանդիան շարունակում էր սրգակից նայ։ Այնժամ Կրոմվելը ցինիկաբար առաջարկեց նրան բաժանել աշխարհը. Եվրոպայում և Աֆրիկայում նրանք կօգտվեն առևտրական հավասար հնարավորություններից, Ամերիկը կլինի Հոլանդիայի առևտրի ոլորտը, իսկ Վեստ-Ինդիան և Ամերիկան կանցնեն Անգլիային։ «Երկու երկրների շահերը,— ասում էր նա,— կայանում են առևտրի և նավագնացության ծաղկման մեջ։ Աշխարհը բավականաչափ լայն է երկուսի համար։ Եթե երկու ժողովուրդները կարողանան ինչպես հարկն է հասկանալ միմյանց շահերը, նրանց երկրները կդառնան աշխարհի կանձարաններ»։

Բողոքական երկրների ընդհանուր դաշինքը, սակայն, ուտոպիա էր։ Այն չուներ գլխավոր՝ անհաղթահարելի հիմքեր, և ճաք տվեց բոլոր կարևորից։ Հոլանդիան իր անբավականությունն էր արտահայտում Անգլիայի բռնապետական ձգտումների առթիվ, Դանիայի և Շվեդիայի միջև թշնամություն շուտով վերաճեց պատերազմի։

Երկրորդ խնդիրը հարաբերությունների կարգավորումն էր Ֆրանսիայի և Իսպանիայի հետ, որոնք միմյանց հետ պատերազմական վիճակում էին։ Դրանցից յուրաքանչյուրի դիվանագետները հակում էին դեպի Կրոմվելը և ցանում էին ձեռք բերել նրա աջակցությունը։ Սա ընտրեց Ֆրանսիան՝ և՛ այն պատճառով, որ Իսպանիային համարում էր Անգլիայի «բնական թշնամին», և՛

www.a-pdf.com

այն պատճառով, որ դաշինքը Ֆրանսիայի հետ տնտեսական ու քաղաքական մեծ օգուտներ էր բերում։ Կրոմվելը դեռևս փորձում էր օգնել ֆրանսիական հուգենոտներին։ Դրանից բացի, Կարլոս Ստյուարտը, որի մայրը ֆրանսուհի էր, Մազարինիից օգնություն էր ձեռք բերում, գույն Անգլիա ներխուժելու համար. այդ մտադրություններին պետք էր խոչընդոտել։ Վերջապես, Ֆրանսիայի աջակցությանը վստահ լինելով միայն, կարելի կլիներ անգլիական նավատորմի ողջ հզորությունն ուղղել իսպանական գաղութների վրա, որոնք անգլիական նվաճողներին խոստանում էին հարուստ նկամտի աղբյուրներ, արգավանդ հողեր, ոսկեբեր գետեր և արծաթի հանքեր։

1655 թվականի նոյեմբերի սկզբին պայմանագիր կնքվեց Ֆրանսիայի հետ։ Այն հռչակում էր խաղաղություն, բարեկամություն և դաշինք։ Երկու կողմերը խոստանում էին չօգնել մյուս կողմի թշնամիներին և «խռովարարներին»։ Ֆրանսիայի համար դա նշանակում էր հրաժարում ռոյալիստներին օժանդակելուց, Անգլիայի համար՝ հուգենոտներին։ Թույլատրվում էր անարգել կերպով Ֆրանսիա արտահանել անգլիական բրդյա և մետաքսյա կտորեղեն. Անգլիա՝ ֆրանսիական կտորեղեն և գինիներ։ Պայմանագիրը պարունակում էր նաև գաղտնի հոդվածներ. Ֆրանսիան պարտավորվում էր Իսպանիայի հետ հաշտություն չկնքել առանց Անգլիայի համաձայնության։

Համարյա այդ նույն ժամանակ սկսվեց պատերազմը Իսպանիայի դեմ։ Բլեյքը դրեթե մի տարի շարունակ զբաղվում էր Միջերկրական ծովի վրա, իսկ ապա դուրս եկավ Ջիբրալթար և սկսեց հետամտել իսպանական արծաթյա նավատորմին։ Մյուս ծովակալը՝ Պեննը, ուղևորվեց դեպի Վեստ-Ինդիայի իսպանական տիրույթները, ուր և շուտով գավթեց Յամայկան։ Ի պատասխան՝ Իսպանիան կոլտնը դրեց անգլիական նավերի և ապրանքների վրա, որոնք գտնվում էին իր նավահանգիստներում, հետ կանչեց իր դեսպանին Լոնդոնից և վերջապես պատերազմ հայտարարեց։

Պատերազմը Անգլիային չբերեց արագ և փայլուն հաջողություն։ Բլեյքին ոչ մի կերպ չէր հաջողվում գրավել արծաթյա նավատորմը։ 1656-ի սեպտեմբերին հաջողությունը ժպտաց մի ուրիշ նավապետի՝ Ռիչարդ Սթեյներին։ Սա ջրասույզ արեց մի քանի նավ, երկու միլիոն ֆունտ ընդհանուր արժողությամբ, և տիրեց մի խոշոր թիանավի, որը տանում էր 600 ֆունտ արծաթ։ Թանկարժեք բեռը շարժվում էր անգլիական հողով Պորտսմուտից դեպի Լոնդոն 38 ձիասայլերով՝ հարկավոր էր ամբողջ ժողովրդի առաջ ի ցույց դնել հաղթահանդեսը։ Յոթ ամիս անց Բլեյքը Թեներիֆի կղզու մոտ ջրասույզ արեց իսպանական տորմիղը, ավերվեց Սանթա-Քրուս նավահանդիստը, այրվեցին և ջրասույզ արվեցին տասնվեց թիանավեր և հինգ այլ նավեր։ Դրանցից վերցված արժեքավոր բեռը ուղարկեցին Անգլիա։ Այդ վերջին հաղթանակով ավարտվեց ծովակալ Բլեյքի կարիերան. 1657

www.a-pdf.com

թվականին նա մեռավ հայրենիք վերադառնալիս, արգեն նրա ափերին բոլորովին մոտիկ։

Միաժամանակ Իսպանիայի հետ պատերազմ էր տեղի ունենում ցամաքում, ինչպես և՝ Ֆլանդրիայում, ուր անգլիացիները զորք ու զինամթերք էին ուղարկել ի օգնություն Ֆրանսիայի։ Կրոմվելը երազում էր հաջողության դեպքում Անգլիային հանձնել Դյունկերկը, որը հիանալի պլացդարմ կծառայեր Եվրոպայում։

Կրոմվելյան արտաքին քաղաքականության մտահղացումները շլացնում են իրենց ֆանտաստիկ ընդգրկումով։ Առաջին անգամ պատմության մեջ նա մշակեց համաշխարհային ռազմավարության պես մի բան։ Նա ծրագիր առաջադրեց միավորել բողոքական պետություններն ընդդեմ կաթոլիկների, վերահսկողությունը Միջերկրածովյանի և Ատլանտյանի վրա, բրիտանական տիրապետությունը տարածել Վեստ-Ինդիայի և Արևելյան Եվրոպայի՝ Լեհաստանի և անգամ Ռուսաստանի վրա, նա բանակցություններ էր վարում թուրքերի հետ։ Անգլիայի միջազգային համարումը նրա կառավարման տարիներին աննախընթաց կերպով աճեց, երրորդական ծայրամասային երկրից այն դարձավ Եվրոպայի առաջատար տերությունը։ «Նրա փառքը իր տան մեջ,— գրել է Կրոմվելի թշնամի Քլարենդոնը,— ընդամենը միայն սովերն է այն փառքի, որը նա ուներ արտասահմանում։ Դժվար էր որոշել՝ ով էր նրանից ավելի վախենում՝ Ֆրանսիա՞ն, Իսպանիա՞ն, թե՞ Նիդեռլանդները... Եվ քանի որ դրանք բոլորը հօգուտ նրա զոհում էին իրենց պատիվը և իրենց շահերը, ինչ էլ որ նա պահանջում էր սրանցից, ոչ մի բան նրանք նրան չէին մերժում»։

Տանը, սակայն, արդյունքը միանգամայն այլ էր։ Համաշխարհային փառքը նրա վրա ծանր էր նստում։ Տեսական պատերազմները հյուծում էին գանձարանը։ Պետական պարտքը 1655 թվականին կազմում էր 781 հազար ֆունտ, երկիրը տնքում էր հարկերի ծանրության տակ, Սիթին մերժում էր փոխառություն տալ։ Վաճառականները տրտնջում էին Իսպանիայի հետ շահավետ առևտրի դադարեցման դեմ։ Բանակը ոռճիկ չէր ստանում և բարձրաձայն տրտնջում էր։

Ամեն ինչ նորից անկասելիորեն տանում էր դեպի պառլամենտի գումարումը։ Միայն նա կարող էր փրկել գանձարանը՝ թվարկել նոր հարկերի օգտին։

2. «ՀՆԱԶԱՆԴ ՀԱՆՐԱԳԻՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ»

— Ես չեմ պատրաստվում այստեղ, որոշ ճոռոմախոսների համար, ձեր առջև շաղ տալ խոսքեր։ Մեր պարտքն է խոսել գործից. աստված ինքն է դա մեզնից պահանջում։

Այս խոսքերով սեպտեմբերի 17-ին Կրոմվելը բացեց նոր պառլամենտի նիստը։ Նա խոսեց երկար, ավելի քան երկու ժամ։

www.a-pdf.com

Նրա հարձակումների գլխավոր թիրախն այժմ արտաքին թշնամին էր՝ Իսպանիան։ Նա ամբողջապես ծախվել է հակաքրիստոսապային և ծառայում է նրա շահերին։ Իսպանիան վիթխարի վնաս է հասցնում անգլիացիներին Վեստ-Ինդիայում։ Նա օգնում է անգլիական ռոյալիստներին։ Պատերազմը նրա դեմ պետք է մղել ամբողջ եռանդով ու թափով, և դրա համար էլ պրոտեկտորը խնդրում էր պառլամենտին հաստատել նոր հարկեր։

Կրոմվելը պաշտպանում էր նաև մայոր-գեներալներին, որոնց դեմ, գիտեր, շատ-շատերն էին տրտնջում։ Մի՞թե արդարացի չէ, ասում էր նա, որ նրանք՝ մայոր-գեներալները, հարկադրեցին ռոյալիստներին վարձահատույց լինել օրինականության վերականգնման համար, որ խախտված էր նրանց իսկ կողմից։ Մի՞թե անդորրության այդ նոր պահապանները զոր ու գիշեր չեն աշխատել ամեն չարիք վերացնելու համար, հանրապետականներին, որոնք անխիղճ կերպով միավորվել էին կավալերների հետ, հնազանդեցնելու համար, ճշմարիտ կրոն հաստատելու համար։

Նա խոսում էր երիտասարդության մասին, նրա բարի ու խելամիտ դաստիարակության անհրաժեշտության մասին, բարոյական կատարելագործման մասին։ Նա սիրո և գթասրտության կոչ էր անում։

— Եթե հարկավոր է մեզ որևէ բան, եթե որևէ բանից կախված է մեր ազատությունը ու բարեկեցությունը, ապա դա, ես համոզված եմ, բարոյականության բարձրորդումն է։ Թող անարգանքի սյունին գամվեն նրանք, ովքեր հակված են մեղսագործության ու պղծության, և աստված կօրհնի ձեզ։ Դուք օրհնություն կլինեք ազգի համար և այդ աշխատանքով կկարողանաք լավագույնս ապաքինել մեր վերքերը, քանզի այն վերաբերում է հոգուն և ոգուն, այսինքն մարդկային բուն էությանը։ Մարդն ինքը ոգի է։ Եվ եթե ոգին մաքուր է, ապա մարդը ևս արժանի է իր նախորոշմանը, իսկ եթե ոչ, ապա ես տարբերություններ չեմ տեսնում նրա և անասունի միջև։

Երկար ճառը վերջապես ավարտվեց, չորս հարյուր պատգամավորները քրտնամած դեմքերով վեր կացան իրենց տեղերից և Նկարազարդ պալատից հանդիսավորաբար ուղղվեցին դեպի նիստերի դահլիճ։ Բայց այստեղ նրանց սպասում էր անակնկալ. դահլիճի դռների մոտ կանգնած էին պահապաններ և մի քանի գրագիրներ. նրանցից մեկը իր ցուցակի հետ համեմատում էր դահլիճ մտնողների անունները և նրանց անվանական տոմսեր էր տալիս Պետական խորհրդի կնիքով։ Նրանք, ովքեր ցուցակում չկային, տոմսեր չէին ստանում և դահլիճ անցնել չէին կարող։ Այդպիսիները, պարզվեց, ավելի քան հարյուր հոգի էին։ Կրոմվելն ու սպաները պառլամենտի բացումից առաջ օգտվեցին իրենց իրավունքից, որ գրանցված էր «Կառավարման միջոց»-ում՝ ստուգել պատգամավորների լիազորությունները։ Այդ յուրօրինակ մաքրագործումը վտարում էր պառլամենտից հանրա-

www.a-pdf.com

պետականներին՝ «գլխանքի» նախկին անդամներին, նրանց, ովքեր կապված էին լևելերների ու աղանդավորների հետ, և այլ կասկածելի անձանց, որոնք ընտրվել էին հակառակ մայոր-գեներալների եռանդուն ջանքերի։

Վտարված անդամները փորձ արեցին ընդդիմանալ։ Նրանք կազմեցին մի ռեմոնստրացիա, որով մերկացնում էին բռնատիրական իշխանությունը (նրանց արտահայտությունները զարմանալիորեն հիշեցնում էին թագավորական իշխանության հասցեին հեղափոխությունից առաջ տրվող բողոքները), և հայտարարեցին, որ պառլամենտը ներկայումս գտնվում է պրոտեկտորի ու բանակի ճնշման տակ և այդ պատճառով էլ չի կարող կոչվել ժողովրդական կառավարություն։ Պառլամենտը տեղի չավեց այդ հարձակումների առջև։ Ջափավոր և օրինապահ պատգամավորները, որոնց թույլատրել էին մասնակցել, չէին ուզում բարդացնել իրենց կյանքը։ Նրանք վտարվածներին խորհուրդ տվին դիմել Պետական խորհրդին։ Իսկ իրենք անցան ընթացիկ գործերի քննարկմանը։

Սկզբնապես նրանք կայացրին միանգամայն լոյալ որոշումներ. Ստյուարտների տոհմին զրկել անգլիական գահին նստելու իրավունքից, պետական դավաճանություն հռչակեցին պրոտեկտորի և նրա կառավարության դեմ ամեն մի հանցափորձ, քվեարկեցին հօգուտ հարկերի՝ Իսպանիայի դեմ պատերազմը շարունակելու համար։ Հոկտեմբերին Ուիլյամ Ջեֆսոնը՝ «երկաթակող» մի գնդապետ, առաջարկեց ուղղում մտցնել «Կառավարման միջոց»-ի մեջ. պրոտեկտորի պաշտոնը դարձնել ժառանգական և խնդրել Կրոմվելին, որ նշանակի իր հաջորդին։ Հասկանալի էր, որ պրոտեկտորն արդեն ջահել չէր։ Մարմնական ցավերն ավելի ու ավելի հաճախ էին այցի գալիս նրան, ձեռքերը երբեմն նկատելիորեն դողդողում էին։ Այն հարցը, թե ով էր լինելու ժառանգորդը, հիմա արդեն շոշափվում էր պառլամենտի կողասրահներում։

Բայց Կրոմվելը հրաժարվեց։ Նրա մոտ բարեկամ լորդ Բրոգհիլը համոզում է համաձայնել, իսկ Դեսբորոն, ընդհակառակը, ետ էր պահում նրան։ Կրոմվելն ինքը ծիծաղում էր։ Նա թափով թփթփացրեց Ջեֆսոնի ուսին.

— Դե գնա գործիդ, խենթի մեկը։

Բծախնդիր Լեդլոն, սակայն, ենթադրեց, որ շուտով Ջեֆսոնի որդուն կհանձնարարվի հետևազորի ջոկի հրամանատարությունը. Լեդլոյին էլ էր բանակում մի եկամտաբեր պաշտոն շնորհված։ Խոսակցություն էր գնում, որ ղեկավարման ձևի մեջ ինչ-որ փոփոխություններ այնուամենայնիվ հասունանում են։

Պառլամենտը մինչդեռ ձեռնամուխ էր եղել մի այլ գործի՝ վարկաբեկիչ ու աղմկալի։ Անգլիայում վերջին ժամանակներս ի հայտ էր եկել նոր մեսիա, որին տգետ մոլեռանդները քիչ էր

www.a-pdf.com

մնում հենց իրեն Հիսուս Քրիստոսի տեղն ընդունեին։ Նրան անվանում էին Ջեյմս Նեյլոր։ Նա կռվել էր Դենբարի մոտ պառլամենտական զորքերի մեջ, իսկ ապա ընդունել էր «ներքին լույսի բարեկամների» հավատը և դարձել կվաքեր։ Արտաքինով նա իսկապես հիշեցնում էր Քրիստոսին՝ ոչ թավ, մուգ խարտյաշ մորուք, երկարավուն, ճգնավորի դեմք, ուսերին թափված մազեր։ Նա ման էր գալիս քաղաքից քաղաք և չգիտես իր հեզությամբ թե քարոզելու ունակությամբ այնպես էր կախարդում ունկնդիրներին, որ ամբոխը կրնկակոխ գնում էր նրա ետևից և նրան երկրպագում էր որպես ուսուցչի։ Մի կին նույնիսկ պնդում էր, թե նա իրեն հարություն է տվել մեռելների միջից։

Նրան բանտ նստեցրին, իսկ երբ բաց թողեցին, նրա երկրպագուները շլված ու սրբապիղծ մի արարողություն սարքեցին։ Նեյլորի մուտքը Բրիսթոլ նրանք կազմակերպեցին հար նման Քրիստոսի մուտքին Երուսաղեմ՝ շարշարանաց և խաչ հանվելու նախօրյակին։ Իշուկ ճարել չէր հաջողվել և նորահայտ մեսիան գնում էր ջորի հեծած։ Ոգևորված ամբոխը վազում էր նրա առջևից, նրա ճանապարհին սփռելով ծաղիկներ ու ճյուղեր։ «Օվսաննա՜, Օվսաննա՜...» հնչում էին կանչերը...

Նեյլորին ձերբակալեցին և տեղափոխեցին Լոնդոն։ Նկատի առնելով հատուկ կարևորությունը՝ նրա գործը որոշվեց քննարկել պառլամենտում, թեպետև ըստ սահմանադրության պալատը չուներ դատական իշխանություն. դրանով նախկինում օժտված էին լինում միայն լորդերը։

Նեյլորին մեղադրում էին սրբապղծության, ինքնակոչության, գայթակղություն կատարելու մեջ։ Վիճաբանությունները նրա գործով ընթանում էին մի քանի օր. միայն 14 ձայնի մեծամասնությունը փրկեց նրան մահապատժից։ Օրինապահ դեպուտատների ատելությունն ու վրդովմունքը սաստկանում էր նրանով, որ Նեյլորը, ինչպես կար կվաքերների սովորությամբ, հրաժարվեց գլխարկը հանել բարձր ժողովի առաջ, խոնարհվել սփիքերին և արտասանել երդման սահմանված խոսքերը։ Վճռեցին նրան երկու ժամով անարգանքի սյունին գամել Վեսթմինսթերում, ապա խարազանահարել Վեսթմինսթերից մինչև Հին Բորսա ընկած ողջ ճանապարհին, իսկ Բիրժայում նա նորից երկու ժամ գամված կմնա անարգանքի սյունին, որից հետո նրա ճակատը խարանել, լեզուն դաղել շիկացած երկաթով։ Բայց պուրիտանական չարամիտ երևակայությունը դրանով էլ չէր սահմանափակվում։ Մարմնական պատիժներից հետո, ասված էր վճռի մեջ, Նեյլորին պետք է ուղարկել Բրիսթոլ, քաղաքով մեկ մերկ ման ածել, ձաղկել մտրակով շուկայի հրապարակում և ուղարկել բանտ, առանց կարդալու, գրելու և հարազատներին տեսակցելու իրավունքի։

Ահա թե ինչպիսի՜ն էր գթասրտությունն ու հավատահանդուրժողությունն այդ պառլամենտի։ Կրոմվելը վրդովված էր պատժի այդ բարբարոսական միջոցների վրա։ Նա կարող

www.a-pdf.com

էր ցասման պահին դաժան լինել, դրա վկաներն են՝ Դրոգեդի բազմաշարշար պարիսպները, բայց սառնասիրտ վայրագությունը խորթ էր նրան։ Դեկտեմբերի 25-ին նա գրեց սփիքերին. «Տեղեկանալով ոմն Ջեյմս Նեյլորին ձեր կողմից կայացրած դատավճռի մասին, թեպետև մենք խորշում ենք նվազագույն իսկ պաշտպանության տակ առնել այն մարդկանց, ովքեր մտածում ու վարվում են նրա նման, բայց, համենայն դեպս, քանի որ մեզ իշխանություն է ընձեռված պաշտպանելու այս ժողովրդի շահերը, և չիմանալով, թե ինչքան հեռուն կարող են գնալ այդպիսի դատավարությունները (որ անցկացվում են առանց մեր մասնակցության), մենք ցանկանում ենք, որ պալատը մեզ տեղեկացնի, թե ինչ հիմունքներով և ինչ պատճառներով է նա գործել»։

Պալատը չպատասխանեց։ Խոշտանգումների երկար շղթան շարունակվեց բծախնդիր ճշգրտությամբ։ Կրոմվելն իրեն անզոր զգաց։ Միակ բանը, որ նա կարողացավ անել՝ դա փոքր-ինչ թեթևացնելն էր կալանավորի վիճակը բանտում՝ արդեն պատիժներ կրելուց հետո։ Ո՜չ, այդպիսի սահմանադրությունը նրան չէր գոհացնում։ Պառլամենտը դարձյալ ամբողջ իշխանությունը վերցնում էր իր ձեռքը, և պրոտեկտորը չէր կարողանում միջամտել, չէր կարողանում անդամ ներում շնորհել մարդուն։ Նրա և պառլամենտի միջև միջնորդ էր պետք։ Գուցե թե հիմնել լորդերի պալատի նման մի որևէ բա՞ն։

Նեյլորին դատի ենթարկելուց մի քանի օր հետո պալատում դրվեց մայոր-գեներալների հարցը։ Ծննդյան տոների նախօրեին Դեսբորոն օրինագիծ մտցրեց նրանց ֆունկցիաների շարունակման և համապատասխանորեն նրանց պահպանման հարկերը տալը տոկոսի չափով ռոյալիստների բոլոր եկամուտներից գանձելու մասին։ Նա հույս ուներ, թե դեպուտատները, որոնք շտապում էին հասնել տոնական թխվածքին, հապճեպ կհաստատեն օրինագիծը, առանց քննարկելու։ Բայց նա սխալվեց։ Մեկը մյուսի ետևից դեպուտատները երդվել էին ունենում հեղինակություն չվայելող ռեժիմի դեմ։ Ինչո՞ւ աղքը բաժանել զինվորական օլիգարխների՝ շվեյցարական կանտոնների նման։ Ինչո՞ւ հարկեր դրել ժողովրդին ճնշող իշխանությունների պահպանման համար։ Վիճաբանությունները շարունակվեցին հունվարին։ Կրոմվելի դեմ, նրա սիրասուն թեթթիի ամուսին Ջոն Քլեյփոլը, եռանդուն դատապարտում էր ռազմատիկանական իշխանությունը։ Նրան արձագանքում էին լորդ Բրոդհիլը և պրոտեկտորի աղգականը՝ գնդապետ Հենրի Կրոմվելը, ծերուկ սըր Օլիվերի թոռը։ Նրանց առարկում էին իրենք մայոր-գեներալները՝ Դեսբորոն, Ֆլիները։

Բոլորի համար անսպասելի Կրոմվելը պաշտպանեց օպոզիցիան։ Նա Հենրի Կրոմվելին պարգևեց իր ուսերին գցած թիկնոցը և իր ձեռնոցները։ 1657 թվականի հունվարի 28-ին մայոր-

www.a-pdf.com

գեներալների մասին օրինագիծը ձախողեցին 124 ձայնով ընդդեմ 88-ի։ Կրոմվելն ստիպված էր խոստովանել, որ ռազմաոստիկանական վարչակարգի հիմնումն Անգլիայում սխալ էր։

Իրականում փոփոխությունները հասունանում էին։ Դա զգացվում էր և՛ պառլամենտի, և՛ ժողովրդի տրամադրության մեջ։ «Եկել են վերջին ժամանակները,— գուշակություններ են անում հրապարակներում «Հինգերորդ միապետության մարդիկ»,— գալիս է, գալիս է տեր Քրիստոսը՝ հեծած կարմիր ձին, գալիս է կռվելու մեղսագործ այլանդակի հետ, օձի հետ, որ նստած է Անգլիայի գահին»։ Հրապարակ եկավ անանուն մի պարսավագիր «Մեռցնելը սպանություն չէ» վերնագրով։ Նրա հնարավոր հեղինակների մեջ թվարկվում էր նախկին լևելեր Սեքսբիի անունը։ Պարսավագիրը ապացուցում էր, որ բռնապետին մեռցնելը՝ հանուն ժողովրդի բարօրության, սրբազան ու արդար գործ է, և Օլիվեր Կրոմվելին ուղղակի անվանում էր բռնապետ։

Հունվարին Թերլոն պալատին զեկուցեց պրոտեկտորի կյանքի դեմ մահափորձի բացահայտման մասին։ Ոմն Մայլս Սինդերքոմբ, նախկին զինվոր, դատապարտված էր եղել Կրոմվելին Ուայթհոլից Հեմփթոն-Քորթ տանող ճանապարհին, ինչպես երեք տարի առաջ Կարլոս Ստյուարտի կողմից գաղտնաբար ուղարկված երկու ռոյալիստները։ Սա (ասում են, թե Սեքսբիի դրդմամբ) վարձել էր մի տնակ, որը հարում էր ճանապարհի այն տեղին, որը նեղ էր ու ցեխոտ, և սպասել էր լիցքավորված թնդանոթի մոտ։ Պրոտեկտորը այս անգամ էլ փրկվեց, ընտրելով ջրային ուղին։ Սինդերքոմբը ըռնվեց և պատժվեց, նա մեռավ բանտում՝ մահապատժի նախօրյակին թունավորվելով մկնդեղով։ Բացահայտվեցին նաև պրոտեկտորին Հայդ-պարկում զբոսնելիս սպանելու դավադրություններ, իսկ Ուայթհոլի նկուղում տակառիկներով վառոդ հայտնաբերեցին. ինչ-որ մեկը փորձել էր պայթեցնել Անգլիայի տիրակալի կացարանը։

Երկրի ճակատագիրն այժմ կախված էր կույր պատահականությունից. այդպես էր թվում շատերին։ Պրոտեկտորը թե ժամանակին չիմանար դավադրության մասին, թե չարագործը Թերլոյի ամենատես աչքից վրիպեր, միակ մարդը, որի ձեռքին են իշխանությունն ու օրենքը, կսպանվեր, իսկ եոկրում նորից կտիրեր անիշխանություն ու ավազակություն։ Գուցե՞ թե, այնուամենայնիվ ավելի լավ է ռազմական դիկտատուրայի կողմից տրված «պրոտեկտոր» տարօրինակ տիտղոսի փոխարեն դնել ավելի սովորական և փառավոր տիտղոսը՝ «թագավոր»։

• Այսպես էին մտածում շատերը, հատկապես նրանք, ովքեր ուզում էին ամրապնդել արդեն ձեռք բերածը, ապահովել նվաճված իրավունքները, հողը, արտոնությունները, ովքեր վախենում էին Կարլոս Ստյուարտի վերականգնումից՝ մի կողմից, և ժողովրդական տարերքի հորդումից՝ մյուս կողմից։ Շնորհավորե-

www.a-pdf.com

լով պրոտեկտորին երջանիկ դիպվածով վտանգից ազատվելու առթիվ, մահուդի հարուստ վաճառական Ջոն Աշը ի լուր ամենքի պառլամենտում ասաց. «Ես կցանկանայի ավելացնել էլի ինչ-որ բան, որը, իմ կարծիքով, և՛ պրոտեկտորին, և՛ հենց մեզ ապահովություն կբերի ու մեր թշնամիների բոլոր չարամիտ դիտավորությունները կխափանի. որպեսզի նորին մեծությունը բարեհաճի համաձայնել կառավարելու հին սահմանադրության ավանդներով՝ դա վերջ կդնի հեղաշրջում կատարելու մեր թշնամիների հույսերին»։

Փետրվարի 23-ին վաճառական Քրիսթոֆեր Փեքը, Սիթիի ներկայացուցիչը և Լոնդոնի նախկին լորդ-քաղաքագլուխը, պալատում ելավ ու կարդաց մի փաստաթուղթ, որ հայտնի է «Հնազանդության հանրագիր և խորհուրդ» վերնագրով։ Այնտեղ առաջարկվում էր Անգլիայում հիմնել կառավարություն՝ կազմված արքայից (Օլիվեր Կրոմվելից), լորդերի պալատից և համայնքների պալատից, այսինքն վերադառնալ նախկին, կառավարման մինչհեղափոխական ձևին։ Էլ ինչի՞ համար էր պատերազմ մղվել։ Պալատը սկսեց աղմկել, տեղացին զայրագին բողոքներ, Փեքին կանչեցին վանդակապատի մոտ։ Բայց հնչում էին նաև այլ ձայներ։ Պետական քարտուղար Թերլոն զգուշորեն պաշտպանեց առաջարկությունը։ Նրա օգտին արտահայտվեցին և՛ իրավաբանները, և՛ Ուայթլոքը, և՛ լորդ Բրոգհիլը, և՛ ծովակալ Մոնթեքյուն՝ Կրոմվելի մերձավորները։ Կրքերը հանդարտվեցին, և մի որոշ ժամանակ անց, որպես թե ոչինչ չի եղել, պալատը ձեռնամուխ եղավ օրինագծի քննարկմանը։

Այլ էր սպաների և մայոր-գեներալների վերաբերմունքը։ Փետրվարի 27-ին, Փեքի ելույթից չորս օր անց, նրանք մի ամբողջ պատգամավորությամբ ներկայացան Կրոմվելին։ Հատկապես չարացած ու մոլեգնած էր Լամբերթը։ Հնարավոր է, որ այդ կարիերիստը երազում էր փոխարինել Կրոմվելին պրոտեկտորի պաշտոնում։ Համենայն դեպս, նա կտրուկ առարկում էր արքայական տիտղոսը ընդունելու դեմ, ասում էր, որ այն առաջ կբերի ընդդիմություն բանակում, դժբախտություն կբերի հենց իր՝ Կրոմվելի համար և վերջ ի վերջո կհանգեցնի Ստյուարտների գահի վերականգնմանը։ Լամբերթին արձագանքում էին Դեսբորոն և Ֆլիթվուդը, Սայդենհեմը և Սքիփոնը, մայոր-գեներալներն ու բարձր աստիճանավորները։ Ընդհանուր առմամբ նրանք հարյուր հոգուց ավելի էին։

Պրոտեկտորը լսում էր նրանց հարաճուն անբավականությամբ և վերջապես սկսեց խոսել նույն այն կոպտությամբ և շիտակությամբ, որով սովորաբար դիմում էր իր զինվորներին։ Նրանք անբավակա՞ն են։ Նրանք եկել են նոր պահանջներո՞վ։ Ինչ մնում է անձնապես իրեն՝ արքայական տիտղոսը իրեն հարկավոր չէ,— ասաց նա,— դա խաղալիք է, կեղծ զարդ, ավելին չէ, քան փետուրը գլխարկի վրա։ Բայց հենց նրանք չէի՞ն, որ առաջինը

www.a-pdf.com

խոսք բաց արին այդ տիտղոսի մասին։ Լամբերթը չէ՞ր, որ դեռևս 1653 թվականին, «Կառավարման միջոցը» ընդունելուց առաջ, իրեն առաջարկում էր թագավոր դառնալ։ Իսկ հիմա նրանք դժգո՞հ են։

Նրանք հավերժորեն դժգոհ են ինչ-որ բանից։ Կրոմվելն զգաց, որ կոկորդը սեղմվում է և ձայնը վերածվում է ճչոցի, բայց արդեն չէր կարող կանգ առնել։ Այդ նրանք՝ բանակի սաներն են մեղավոր ամեն ինչում։ Նա միշտ ենթարկվել է նրանց ցանկություններին, անգամ երբ գիտակցել է, որ դրանք վնասակար են։ Բոլոր փոփոխությունները սահմանադրության մեջ՝ նրանց ձեռքի գործն է։ Նրանք ստիպեցին իրեն արձակել Երկարատև պառլամենտը, այնուհետև պահանջեցին, որ ընդունի «Կառավարման միջոցը», այդ անկատար սահմանադրությունը և ինքը դարձավ դիկտատոր։ Նրանք իրեն ստիպեցին արձակել պառլամենտը, այն բանի համար, որ ինքը ուզում էր շտկել գործը. հորինեցին մայոր-գեներալների ռեժիմը, իսկ երբ այն հպատատված էր, նրանց նորից հարկավոր եղավ պառլամենտը։ Եվ ինքը բոլորը կատարում էր։

— Դուք կարողանում էիք աքացի տալ իմ ետևին և բոթել ուր ուզում էիք,— մոլեգնում էր Կրոմվելը։— Հապա վերջի՞ն պառլամենտը։ Դուք ինձ ստիպեցիք ընտրել ներկայացուցիչներ, իսկ երբ նրանք ընտրվել էին, նորից խաղաթղթերը խառնեցիք, ոմանց դեն նետեցիք, իսկ ոմանց դրիք այնտեղ, որտեղ կբարեհաճեիք։ Եվ ինձնից պահանջում էիք, որ այդ ամենին հավանություն տայի՝ և՛ լավին, և՛ վատին։ Բայց բավական է, այդպես շարունակվել չի կարող։ Ես երբեք չեմ ծոմվել ձեր առաջ և երբեք չեմ հաճոյանա ձեզ։ Եվ ունեմ հավատարիմ ապավեն։ Եթե պալատը լավ առաջարկություններ անի, ես պարտավոր եմ և պիտի պաշտպանեմ դրանք։ Նրանք ազնիվ մարդիկ են և լավ են գործում։ Ես չգիտեմ, թե է՛լ ինչում դուք կարող եք մեղադրել նրանց, բացի այն բանից, որ նրանք չափազանց սիրում են ինձ։

Նա առաջարկեց պատգամավորությանը իրենց կազմից ընտրել վեց կամ յոթ մարդ. նրանց հետ ինքը դեռ կխոսի։ Իսկ այժմ բարի գիշեր։

Վհատված սպաները ցրվեցին տները։ Պալատը շարունակում էր քննարկել «Հնազանդության հանրագիրը»։

Կրոմվելին տիրել էին տանջալի կասկածները։ Փեքի առաջարկությունը նրան ուրախացրեց և վախեցրեց։ Այո, միտքն այն մասին, որ իր վրա վերցնի հին արքայական աստիճանի ծանրությունն ու վեհությունը, նա վաղուց էր հղացել, և նա երբեմն իրեն բռնում էր այն բանում, որ մտովի փորձում էր թագը՝ իր համար, Եղիսաբեթի, երեխաների, Անգլիայի համար... Բայց երբեք աքքայական տիտղոսը նրան չէր թվացել այդքան հնարավոր։

Նա ուշիուշով խորամուխ էր լինում նոր սահմանադրության

www.a-pdf.com

հոդվածների մեջ։ Հասկանալի էր, որ բարձր անունն ու պատիվը զուր չէին տրվել նրան, նա պետք է իր ներկա դիկտատորական իշխանության մի մասը զիջեր պառլամենտին։ Ճիշտ է, նա կարող էր նշանակել իր ժառանգորդին. նա իր իսկ ընտրությամբ նշում էր այն լորդերին, որոնք պետք է լինեին վերին պալատի անդամներ, և նրանք՝ այդ 50 և 70 մարդիկ, կծառայեին նրան ցմահ։ Սակայն դեպուտատական մանդատները ստուգելու բոլոր լիազորությունները հանձնվել էր միայն ստորին պալատին։ Նրա անդամները կարող էին հեռացվել նիստերի դահլիճից միայն դատարանի վճռի ու մնացած պատգամավորների համաձայնությամբ։ Միայն ստորին պալատը կարող էր թույլատրել հարկերի հավաքում, հաստատել պետական բյուջեն։ Նրա հսկողության տակ էին անցել միլիցիան և ընդհանրապես բոլոր զինված ուժերը։ Պետական խորհուրդը, որն այժմ, ինչպես հնում, անվանվում էր Գաղտնի խորհուրդ, կորցնում էր իր լիազորությունների նշանակալի մասը։

Եվ այնուհանդերձ այդ սահմանադրությունը դուր էր գալիս Կրոմվելին։ Դա կառավարությանը դնում էր հին, ավանդական, դարերով փորձված ճանապարհի վրա, թագավոր, լորդեր, համայնքներ։ Դա նրա իշխանությունը դարձնում էր ոչ արտակարգ, այլ օրինականացված, հաստատուն։ Դա նրա վարկը բարձրացնում էր օտարերկրյա թագավորների աչքում։ Այդ պատճառով էլ, երբ մարտի 25-ին պալատը 123 ձայնով ընդդեմ 62-ի հաստատեց «Հնազանդության հանրագիրը»՝ իր առաջին, ամենից ավելի վիճելի պարբերությամբ հանդերձ, «որպեսզի ձերդ մեծությունը բարեհաճի ընդունել թագավորի կոչումը, մեծարումն ու տիտղոսը, աստիճանն ու պաշտոնը», նա բավարարված էր։ Մարտի 31-ին Ուայթհոլի ճաշկերույթի դահլիճում նրան հանդիսավորաբար հանձնեցին «Հնազանդության հանրագիրը», և նա արժանապատվությամբ պատասխանեց, թե նոր սահմանադրությունը իր ուսերին ծանրություն է դնում, մի մեծ ծանրություն, որը ընկած չի եղել դեռ ոչ ոքի ուսերին։ Ինքը պետք է խորհի, զննի այն բոլոր կողմերից։ Ինքն արդեն ծեր է, և գուցե թե իր օրերը հաշված են։ Ավելի լավ կլիներ լույս աշխարհ չգար ինքը, քան թե այժմ անուղղելի սխալ թույլ տար։ Նա ասաց, որ իրեն ժամանակ է պետք խորհելու համար։ «Խորհուրդ անելու աստծո և սեփական սրտի հետ»։

Թեթև չէին նրա այդ խորհրդածությունները։ Նրա վրա ճնշում էին զանազան կողմերից, համոզում էին, ծվատում, պատառ-պատառ անում։ Բրոդհիլը շշնջում էր. «Անգլիական իրավունքը չի ճանաչում ոչ մի պրոտեկտոր։ Ազգը սիրում է միապետություն։ Համաձայնեցեք»։ Թերլոն, խորամանկ աղվեսը, դատում էր. «Տիտղոսն ինքն այնքան կարևոր չէ, որքան պաշտոնը, որը ծանոթ է օրենքին և ժողովրդին։ Մարդիկ գիտեն իրենց պար-

www.a-pdf.com

տականությունները արքայի նկատմամբ և նրա պարտականությունները իրենց հանդեպ։ Ուրիշ որևէ աստիճան ավելին չէ, քան ժամանակավոր մի բան. փոքր-ինչ դուրները չեկավ, կփորձեն նորից փոխել»։ Սպաները, ընդհակառակը՝ առարկում էին։ Լամբերթը բանսարկություն էր անում ամբողջ ուժով, Ֆլիթվուդը, երբ պառլամենտը հաստատեց «Հնազանդության հանրագիրը», հեկեկում էր։ Ժողովուրդն անհանգստացած էր։ Կվաքեր Ջորջ Ֆոքսը կանխագուշակում էր, թե նա, ով թագը դնի Կրոմվելի գլխին, նրան կղրկի կյանքից։ Միլենարական աղանդի քարոզչուհիներից մեկի հիմարավուն ոտանավորներում, որոնք շրջում էին Լոնդոնով մեկ, հայտարարվում էր. «Ոգին ու ձայնն աստծո միացել են ընդդեմ Կրոմվելի և նրա թագի...»։

Ապրիլի 3-ին նա հարցրեց, թե կարելի՞ է հանրագիրն ընդունել ամբողջովին, մերժելով միայն նրա կետերից մեկը՝ թագի վերաբերյալ կետը։ Ոչ, պատասխանեց պառլամենտը, հանրագիրը անբաժանելի է. կամ բոլորն ընդունել, կամ բոլորը մերժել։ Այնժամ նա հրաժարվեց։ «Դուք ստիպեցիք ինձ պատասխանել կտրուկ. դուք ինձ ընտրության ազատություն չտվեցիք... Ես չեմ կարող այդպիսի պատասխանատվություն, այդպիսի ծանր բեռ ստանձնել...»։

Լամբերթականները ցնծում էին։ Արքայական տիտղոսի կողմնակիցները շարունակում էին համոզել։ Պառլամենտը պնդում էր։ Դա անտանելի էր։ Ապրիլի վերջին Կրոմվելը հիվանդացավ և հերթական պատգամավորությանը դիմավորեց կիսամերկ վիճակում, սև շարֆով, որ փաթաթված էր վզին։ Նա այդպես էլ պատասխան չէր տալիս, նրա տրամադրությունը տատանվում էր. ծայրահեղ մռայլությունը հանկարծ տեղի էր տալիս անխելամիտ զվարթությանը և նա, դեն նետելով իր ողջ վսեմությունը, կատակում էր բարեկամների՝ Թերլոյի և Բրոգհիլի հետ, նրանց հետ հորինում էր ծիծաղելի ոտանավորներ, ծխամորճ էր ծխում։ Հետո նորից էր լրջանում։ Օտարերկրյա դեսպանները տարակուսում էին։

Վերջապես նա վճռեց։ Արքայի տիտղոսը երեխայի խաղալիք է։ Թող ժողովուրդը խաղա դրա հետ, եթե ուզում է։ Նա կհամաձայնի ընդունել սահմանադրությունը ամբողջությամբ, որն իրեն խելամիտ էր թվում։ Մայիսի 6-ին նա իր որոշման մասին հայտնեց իր մերձավորներից մի քանիսին։ Նա ուզում էր այդ մասին հայտարարել հաջորդ օրը և պառլամենտի անդամների հետ հանդիպում նշանակեց առավոտյան ժամը 11-ին իբ մոտ։ Այդ օրը նա պիտի դառնար «Նորին մեծություն Օլիվեր Առաջին»։

Մայիսի 6-ին նա ըստ իր սովորության զբոսանքի դնաց սուրբ Հակոբի զբոսայգին։ Առաջինները, որոնց նա տեսավ այնտեղ, Լամբերթն էր, Ֆլիթվուդը, Դեսբորոն։ Նրանց տեսքից նա հասկացավ, որ հանդիպումը պատահական չէ։ Բոլոր երեքն էլ առանց երկմտության հայտարարեցին, թե իրենք չեն հանդուրժի,

www.a-pdf.com

որ նա արքայական տիտղոսն ընդունի։ Իրենք խռովություն չեն բարձրացնի նրա դեմ, բայց անմիջապես կհրաժարվեն իրենց պաշտոններից։ Թող նա այլևս իրենց վրա հույս չդնի։

Նույն այդ երեկո Դեսբորոն պրոտեկտորի որոշման մասին պատմեց անզսպորեն հանդուգն գնդապետ Պրայդին, որը մի անգամ արդեն ի հայտ էր բերել իր խիզախությունը՝ դատաստան տեսնելով Օրկարատև պառլամենտի հետ։

— Դե չէ, այդ մեկը նա չի անի,— հայտարարեց Պրայդը։

— Ինչո՞ւ, ինչպե՞ս կխանգարես նրան։

— Հանրագիր կազմիր այդ կապակցությամբ, և ես կխանգարեմ։

Հետևյալ օրը, մայիսի 7-ին, պառլամենտական ներկայացուցիչներին հայտարարվեց, որ պրոտեկտորը սպասում է նրանց ոչ թե առավոտյան 11-ին, այլ երեկոյան, ճաշից հետո։ Նրանք նշանակված ժամին ներկայացան Ուայթհոլ, բայց պրոտեկտորը դուրս չեկավ։ Երկու երկար ու ձիգ ժամեր նրանց մտատանջությունների մեջ պահելուց հետո վերջապես դուռը բացվեց և հայտնվեց Կրոմվելը՝ որսորդական զգեստով, բարձրաճիտ կոշիկներով։ Իբր թե չնկատելով պատգամավորներին, նա ուղղվեց դեպի ելքը՝ նոր բերված արաբական զամբիկին ձիանոցում տեսնելու համար։ Պառլամենտի պատվիրակը երկչոտ մոտեցավ նրան.

— Մենք այստեղ սպասում ենք, ձերդ մեծություն, արդեն բավական երկար. դուք ե՞րբ կբարեհաճեք պատասխան տալ։

Վաղը, պատասխանեց նրանց, մայիսի 8-ին, առավոտյան ժամը 11-ին նրանց կսպասեն Պատկերազարդ պալատում։

Մայիսի 8-ին, պալատի նիստի բացումից անմիջապես հետո, Պրայդը պառլամենտին հանրագիր ներկայացրեց պրոտեկտորին արքայական տիտղոս շնորհելու առաջարկության դեմ բողոքով և խնդրանքով, որ չպնդեն այն ընդունել։ Նրա հետ մեկտեղ պառլամենտական վանդակապատի մոտ հայտնվեցին 27 սպաներ, որոնք ստորագրել էին հանրագիրը։ Ֆլիթվուդի առաջարկությամբ դրա քննարկումը հետաձգվեց, և պառլամենտական կոմիտեն անցավ Պատկերազարդ պալատ։

Պրոտեկտորը նրանց առաջ ելավ մռայլադեմ, հանգիստ, ձրգված։ Վճիռը կայացված էր վերջնականապես։ Նա ասաց.

— Միստր սփիքեր, ես խոստովանում եմ, որ այդ գործը պառլամենտին իսկապես մեծ անհանգստություն է պատճառել և շատ ժամանակ է խլել։ Դրա համար ես շատ եմ ափսոսում։ Դա ինձ էլ է մեծ մտահոգությունների մեջ գցել, տեղիք է տվել շատ մտատանջությունների... Ես դժբախտություն ունեցա և՛ ձեր կոմիտեի հետ բանակցություններում, և՛ սեփական մտատանջություններում չհանգել վստահության, թե այն, ինչը դուք այդպես պնդում էիք՝ իմ կողմից արքայական տիտղոսի ընդունումը, իսկապես անհրաժեշտ է։ Նոր սահմանադրությունը հիանալի

www.a-pdf.com

դրույթներ է պարունակում ամեն ինչի մասին, բացառությամբ այդ մի բանի՝ արքայական տիտղոսի։ Ես ազնիվ մարդ չէի լինի, եթե չասեի ձեզ, որ չեմ կարող այն ընդունել, այդպիսի բեռ վերցնել ինձ վրա։ Ես ավելի, քան որևէ մեկ ուրիշը, գիտակցում եմ, թե ինչպիսի հոգսեր ու դժվարություններ են ընկնում այն մարդու վրա, որն օժտվում է այդքան բարձր վստահությամբ։ Կարճ ասած, ես պետք է ձեզ այսպիսի պատասխան տամ. ես չեմ կարող ինձ վրա վերցնել թագավորական տիտղոսով կառավարման այդ եղանակը։ Այսպիսին է իմ պատասխանը այդ մեծ ու ծանրակշիռ հարցին։

Մայիսի 19-ին «Հնազանդության հանրագրի ու խորհրդի» քննարկումը պառլամենտում վերսկսվեց։ Պալատին չհաջողվեց վերականգնել արքայական տիտղոսը, բայց չէ՞ որ պրոտեկտորը չէր հրաժարվել մյուս կետերից։ Իսկ հենց այդ մյուս կետերն էլ, որոնք ընդլայնում էին պառլամենտի իրավունքները, ունեին կարևորագույն նշանակություն։ Այստեղ էլ պալատը հաղթանակ տարավ։ Մայիսի 25-ին «Հնազանդության հանրագրի» ընդունման նոր առաջարկությանը, որից հանվեց սոսկ առաջին կետը՝ արքայական տիտղոսի ընդունումը, Կրոմվելը համաձայնությամբ պատասխանեց։ Դրանից քիչ անց գեներալ Լամբերթը հեռացվեց պետության մեջ ղրալնցրած բոլոր պատասխանատու պաշտոններից և քաշվեց իր կալվածքը, որտեղ սկսեց զբաղվել այգեգործությամբ։

Հունիսի 26-ին Վեսթմինսթեր-հոլում՝ նույն այն վիթխարի դահլիճում, որտեղ ութուկես տարի առաջ դատեցին ու մահվան դատապարտեցին «գլուխը մարմնից հատելու միջոցով» թագավոր Կարլոս I-ին, տեղի էր ունենում հանձնման հանդիսավոր արարողություն՝ պրոտեկտորի պաշտոնի ընդունումն ըստ նոր սահմանադրության։ Իսկապես ասած, դա թագադրություն էր և միայն թագն էր պակասում, որպեսզի այդ հանդիսավոր արարողությունը կոչվեր իրեն վայել անունով։ Փայտաշեն պատվանդանի վրա, ճոխ ամպհովանու տակ, հառնում էր շոտլանդական թագադրման գահը, որ հատկապես բերված էր Վեսթմինսթերի աբբայությունից։ Պատվանդանը զարդարված էր Ջենովայի վարդագույն թավիշով, ոսկեհուռ ծոպքերով։ Գահի առաջ սեղանին դրված էին դրոշմատիպ կաղմով Աստվածաշունչը, պետական սուրը, ոսկյա գայլիսոնը։ Կողքերին դրված էին բազկաթոռներ՝ սփիքերի, պառլամենտի անդամների, դատավորների, օլդերմեն-ների, օտարերկրյա դեսպանների համար։

Կեսօրին, ժամը երկուսին, Օլիվեր Կրոմվելը շքեղ թափորի ուղեկցությամբ ներս մտավ լեփ-լեցուն դահլիճը։ Սփիքերը, իրադրությանը վայել ողջույնի խոսքից հետո, նրա ուսերին գցեց կզաքիսի խալոտ մորթիով ծիրանագույն թավշյա թիկնոցը, գոտևորեց սրով և ձեռքը տվեց գայլիսոնը։ Փողահարել սկսեցին

www.a-pdf.com

շեփորները, որոտացին թնդանոթները, ժողովուրդը սկսեց գոչել. «Աստված, պահի՛ լորդ պրոտեկտորին»։

Երբ Կրոմվելը վերջնականապես որոշեց հրաժարվել միապետական թագից և տատանումներին վերջ էր տրված, նա դարձավ մանկան պես ուրախ։ Տկարությունն ու հիվանդությունը նահանջեցին։ Նրան նույնիսկ թվում էր, թե ինքը խաբել է իր հակառակորդներին։ Նա իր ձեռքում կենտրոնացրել էր մի իշխանություն, որին կարող էր նախանձել յուրաքանչյուր թագավոր։ Ամեն ինչ, բացի երեխայի խաղալիքից՝ ոսկե թագից, ի սպաս էր դրված նրան։ Պառլամենտն արձակուրդի էր ուղարկվել մինչև հունվար։ Օլիվերը ծիծաղում էր, կատակում Եղիսաբեթի և դուստրերի հետ, որոնց օտարերկրյա դևսպանները տիտղոսել էին «արքայադուստրեր»։

Սակայն շուտով բերկրանքը մարեց։ Հարկավոր էր նավը առաջ վարել, բայց ո՞ւր։ Դե իհարկե, դեպի խաղաղություն ու բարգավաճում։ Բայց որտե՞ղ է այդ երջանկաբեր կղզին։ Իսկ նավապետը, որ կանգնած է ղեկանիվի մոտ, արդեն երիտասարդ չէ. տկարությունները նորից են վրա տալիս։ Նրա արքայական ստորագրությունը՝ Օլիվեր Պ. (պրոտեկտոր) երևան է հանում ձեռքերի նկատելի դողդողոցը, նրա տկարությունը տագնապահար է անում մոտիկներին։ Նա ձեռնամուխ է լինում լորդերի պալատի ստեղծմանը։ Այստեղ էլ նրան դարանակալում են ոչ քիչ դժվարություններ։ Նոր պալատի անդամները, որին այժմ ամոթխածությամբ անվանում են «մյուս պալատ», պետք է լինեն պատկառելի, հարուստ մարդիկ, պետք է ազդեցություն ձեռք բերեն երկրում և միևնույն ժամանակ լոյալ լինեն պրոտեկտորի հանդեպ և կարողանան լեզու գտնել ստորին պալատի հետ։ Հեշտ բան չէ այդպիսի մարդկանց գտնելը։ Իրավացի է Թերլոն. սխալվել այդ գործում՝ մեկ է թե սխալվես կին ընտրելիս, հետո կզղջաս, բայց ուշ կլինի։ Ամբողջ ամառն ու աշունը Օլիվերն զբաղված է ցուցակներ կազմելով։ Նա նոր լորդերի թվում ընդգրկում է իր երկու որդիներին՝ Ռիչարդին և Հենրիին, երեք փեսաներին, սրանց երկու եղբայրներին։ Մյուս կողմից, ընդգրկում է ժառանգաբար եկող յոթ պերերի հին աղգանուններ կրողների, ապա և, իհարկե, իր հավատարիմ բարեկամներին ու մարտական զինակիցներին՝ գնդապետների ու գեներալների։ Ընդհանուր առմամբ վաթսուներեք մարդ։

Բայց երբ ցուցակը հաստատվեց և հրավերները ուղարկվեցին, պարզվեց, որ բնավ էլ ամենքը չէ, որ ծարավի են տեղ գրաղեցնելու այդ ցմահ և ոչ թե ժառանգվող տարօրինակորեն խնայտաբղետ պալատում։ Պերերը հրաժարվում են նստել միևնույն նստարանին նախկին կոշկակար Հյուսոնի և նախկին կառապան Պրայդի հետ։ Կանչին արձագանքում են միայն քառասուներկու հոգի։ Առաջին նիստին ներկայանում են երեսունյոթը։

www.a-pdf.com

Գլխավոր բարդությունը, սակայն, սկսվում է պառլամենտի նոր նստաշրջանի բացման հետ՝ հունվարի 20-ին։ Համայնքների պալատի կազմը փոքր-ինչ փոփոխվել էր։ Տեղերի մի մասը դատարկ էր՝ դուրս էին եկել նրանք, ովքեր այժմ նստած էին լորդերի պալատում, բայց փոխարենը նիստին ներկայացել էին նախորդ նստաշրջանում հանվածները։ Նրանց ոչ ոք չէր արգելել, և պալատը համալրվեց մոլեգին ու քաղաքական պայքարում բովված հանրապետականներով. իրենց տեղերում նստած էին Գեղլերիգը, Սքոթը, Ռոբինսոնը։ Նրանք նախապատրաստվում էին օպոզիցիայի։

Կրոմվելը նստաշրջանի բացմանը ժամանեց ոսկեզօծ կառքով։ Ձիերին ծածկել էին թավշյա թանկագին տապճակներով. ցուրտ հունվար էր։ Պրոտեկտորը լավ չէր զգում իրեն, և պառլամենտին ուղղված նրա ճառը աչքի չընկավ երկարատևությամբ։ Նա խաղաղության կոչ էր անում ունկնդիր դեպուտատներին։

Մոայլ նախազգացումները, որոնք գիշերները թախիծով էին պատում նրա սիրտը, արդարացան։ Հազիվ էին սկսվել վիճաբանությունները, անմիջապես տարակարծություններ առաջ եկան և այն էլ ինչպիսի՜։ Գեգլերիգն ու Սքոթը հանրապետական օպոզիցիային կատաղորեն դուրս բերին գրոհի։ Երկարատև պառլամենտում նրանք այնքան ջանքեր էին ներդրել լորդերի պալատը վերացնելու համար, և այժմ ահա լորդերը կրկին հայտնվել էին Վեսթմինսթերում։ «Եկեք գոնե լորդեր չանվանենք նրանց, թող դա լինի պարզապես «մյուս պալատ»։ Եթե մենք նրանց լորդեր կոչենք,— աղմկում էին հանրապետականները,— նրանք կպահանջեն այն լիակատար իշխանությունը, որից օգտվում էր վերին պալատը թագավորի օրոք»։ Առաջ էին քաշվում ավելի խորամանկամիտ փաստարկներ. նոր լորդերը չեն ներկայացնում հողի սեփականատերերին։ Նրանք աղքատ են, նրանք տիրում են ազգի ամբողջ հողերի մեկ տասներկուերորդ մասին, այն դեպքում, երբ նախկինում տիրում էին երկու երրորդին։

Հինգ օր անց Օլիվերը դարձյալ ելույթ ունեցավ նրանց առաջ։ Հակամարտություն չէր կարելի թույլ տալ։ Նրա խոսքի մեջ հայտնվել էին մոայլ ու սպառնագին շեշտեր։ Նա անխոհեմ դեպուտատներին հիշեցրեց վտանգի մասին։ Ռոյալիստները ծրագրում են ներխուժել Իսպանացիների օգնությամբ, դավադրությունները եռկրի ներսում բազմապատկվում են։ Աղանդներից յուրաքանչյուրը ջանում է իշխանությունը գցել իր ձեռքը։ Միայն միասնությունը, համախմբվածությունն ու զգոնությունը կարող են փրկել Անգլիան։ Միմյանց հետ գժտվելով ,— ասաց նա,— պառլամենտի անդամները խաղում են հօգուտ շոտլանդական թագավորի՝ եթե կարելի է այդպես կոչել Կարլոս Ստյուարտին։ Եթե դուք դարձյալ ընթանաք արյան ու պատերազմի ուղիով,— զգուշացնում էր Կրոմվելը,— ազգի մկանները վերջնականապես կհուծվեն։ Այն կկործանվի»։

www.a-pdf.com

Բայց ետ պահել նրանց այլևս հնարավոր չէր։ Վեճերն ու ամբաստանությունները շարունակվում էին, ուժեղանում, խմորումները աճում։ Զգալով պառլամենտական հանրապետականների պաշտպանությունը, գլուխ բարձրացրին աղանդավորները՝ «Հինգերորդ միապետության մարդիկ»։ Նրանք հանրագիր ներկայացրին, որը պահանջում էր անսահմանափակ լիազորություններով միակ պալատի՝ Երկարատև պառլամենտի, իշխանության վերականգնում։ Նրա վերահսկողության տակից նրանք պահանջում էին հանել միայն բանակը և դրա գլխավոր հրամանատարը նշանակել լորդ Ֆերֆաքսին։

Վտանգը լուրջ էր։ Կրոմվելը Թերլոյից իմանալով հանրագրի մասին, հրամայեց ձերբակալել մի քանի խառնակիչների քաղաքում և այստեղ ու այնտեղ դրեց նոր պահապաններ։

Փետրվարի 4-ին, առանց որևէ մեկին բան ասելու, Կրոմվելը միայնակ դուրս եկավ Ուայթհոլի կողքի դռնից և մոտեցավ գետին։ Նա ցանկանում էր նավակ վարձել։ Սառույցը, սակայն, շատ էր պինդ, ձմեռը սաստիկ ցուրտ էր, և նա, վերադառնալով Ուայթհոլի բակ, ձայնեց առաջին իսկ պատահած կառքին։ Իր հետ առնելով միայն հինգ թե վեց գվարդիականների, նա հրամայեց ուղևորվել Վեսթմինսթեր։ Այստեղ նա անցավ իր համար առանձնացված սենյակը և պատվիրեց մատուցել մի գավաթ թանձր գարեջուր և մի կտոր բոված հաց։ Ամրապնդվելով, նա ոտքի ելավ հենց այն պահին, երբ Ֆլիթվուդը և էլի մի քանի նոր լորդեր մտան նրա մոտ։

— Դուք ի՞նչ եք պատրաստվում անել, ձերդ մեծություն,— հարցրեց Ֆիններսը։

— Պատրաստվում եմ արձակել այդ պառլամենտը։

Ֆլիթվուդը բռնեց նրա ձեռքը.

— Աղաչում եմ ձեզ. լավ կշռադատեցեք այդ քայլը։ Դրա հետևանքներն արտակարգ...

Կրոմվելը քաշեց ձեռքը։

— Կաթնակեր։ Ես կցրեմ պառլամենտը բարձրյալի կամքով։

Նա հրամայեց լորդերին ու համայնքներին հավաքվել միասին և, երբ նրանք պատրաստվել էին նրան լսելու, նրանց գլխին թափեց մի ցասկոտ ու հակասական ճառ, վերջին ճառը իր կյանքում։ Դարձյալ, ինչպես հինգ տարի առաջ, «գլխանքի» արձակման ժամանակ, նա կատաղի մոլեգնել էր և ոտքով դոփում էր հատակը։

— Դուք հարկադրեցի՞ք ինձ նշանակել մի այլ պալատ,— գոռում էր նա,— և ես ազնվորեն նշանակեցի այն, այո՛, այո՛։ Ես ընտրեցի մարդկանց, որոնք պատրաստ էին օգնել ձեզ, ինչ էլ որ դուք անելու լինեիք, և սեղմել ձեր ձեռքն ու ասել, թե՞ իրենք գնահատում են ո՛չ թե տիտղոսները, ո՛չ թե լորդերի կոչումը, ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, այլ հոգում են միայն քրիստոնյաների և անգլիացիների շահերի մասին։ Դրանք ձեր շրջապատի ու դիրքի

www.a-pdf.com

մարդիկ են, մարդիկ, որ սիրում են նույնը, ինչ սիրում եք դուք, եթե դուք իսկապես սիրում եք Անգլիան ու կրոնը...

Կրկին նա անհաջողության մատնվեց։ Պառլամենտը դուրս եկավ նույնքան դատարկ ու անձնապաստան խառնաժողով, ինչպես և «գլխանքը»։ Կրոմվելն ինքը բորբոքելով իր կատաղության սարսափելի եռքը, ազատություն տվեց դրան՝ թունդ մեղադրանքներ նետելով խառնակիչների երեսին.

— Դուք պառակտեցիք ոչ միայն ձեզ, այլև ողջ ազգը, որն այս տասնհինգ կամ տասնվեց օրում ընկավ ավելի մեծ իրարանցման մեջ, քան ապրել էր երբևէ նախկինում։ Եվ դա տեղի ունեցավ, որովհետև մի քանի անձինք ուզում են կրկին հեղաշրջում անել։ Մի քանի անձինք ցանկանում են ուզղություն տալ բոլորին։ Նրանք անգամ փորձում են դրա մեջ ներքաշել բանակը։

Նրա ձայնը խզվեց, նա սկսեց հազալ։ Վերջ տալ դրանց մի հարվածով՝ միակ բանը, որ մնացել էր նրան։ Ամենացասումնալի խոսքերը նա պահեց եզրափակելու համար.

— Նման վարմունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ խաղ շոտլանդական թագավորի օգտին... Ձեզանից մի քանիսը, ես գիտեմ, հավաքագրված են Կարլոս Ստյուարտի հանձնարարությամբ գործող մարդկանց կողմից։ Դուք փորձում էիք ժողովրդին ապստամբության հանել հենց նրա օգտին... Ժամանակն է վերջ տալու դրան։ Ես արձակո՛ւմ եմ այս պառլամենտը։

Անգլիան, թվում էր, պապանձվեց։ Բոլոր գլուխները խոնարհվեցին ամենազոր բռնակալի առաջ, շրթունքները համրացան, ձեռքերը թուլացան։ Ճիշտ է, անմիջապես էլ, ոչ առանց Թերլոյի օգնության ձեռք առնվեցին մի քանի հատուկ միջոցներ։ Փետրվարի 6-ին, պառլամենտի արձակումից մեկ օր հետո, լոնդոնյան օկրուգի բոլոր սպաները կանչվեցին պրոտեկտորի մոտ, որը նրանց արեց համապատասխան նախազգուշացումներ։ Անցկացվեցին մի քանի ձերբակալություններ դիվնվորների, ինչպես նաև «Հինգերորդ միապետության մարդկանց» մեջ։

Թերլոյին հաջողվեց բացահայտել ռոյալիստական մի նոր դավադրություն, որը նյութվել էր «Կնքված հանգույց» ընդհատակյա կազմակերպության կողմից։ Նրանում ներքաշված էին անգլիացի քահանա դոկտոր Հյուիթը և Հենրի Սլինգսբին՝ յորքշիրցի մի սքվայր։ Պրոտեկտորի ցուցման համաձայն նրանց գործերի քննության համար ստեղծվեց մի նոր դատական մարմին, որը կրում էր արդարության Գերագույն դատարան պատկառելի անվանումը։ Ինը տարի առաջ այդպիսի մի մարմին մահվան վճիռ կայացրեց Կարլոս I-ի նկատմամբ։ Այժմ մահապատժի էին ենթարկվում ձերբակալված ռոյալիստները, և ոչ կարդինալ Մազարինիի, ոչ լորդ Ֆոքսնբերգի՝ Կրոմվելի փեսայի, և ոչ էլ նույնիսկ նրա սիրասուն դստեր՝ Բեթթի Քլեյֆոլի ջանքերը, որ միշտ ուղղված էին լինում ի պաշտպանություն դրժ-

www.a-pdf.com

բախտների, չոգնեցին։ Հանցագործները մահվան դատապարտվեցին։ Այդ էր պակաս. Սլինգսբին մեղադրվում էր կարևորագույն նավահանգիստ Գուլը Կարլոս II-ի և իսպանացիների ձեռքը հանձնելու մտադրության մեջ։ Այդպիսի հանցագործության համար խնայել չկա։

Եվ այսպես, Անգլիան խաղաղվեց։ Պրոտեկտորը կարող էր վայելել իր փառքի անխոով վեհությունը։ Նրա արքունիքը իր փայլքով ստվերել էր Եվրոպայի շատ տիրակալների արքունիքները։ Այն քանի գնում պահպանողական էր դառնում իր տիրոջ հետ միասին, քանի գնում ավելի ու ավելի էր հակվում դեպի անցած ժամանակների մոդան՝ միահեծան միապետության ժամանակները։ «Նորին մեծության» դուստրերը զուգվում-զարդարվում էին պերճաշուք զգեստներով, զբոսանքի էին գնում ոսկեզօծ կառքերով։ 1657 թվականի նոյեմբերին մեկը մյուսի ետևից տեղի ունեցան երկու հարսանիք. Ֆրենսիս Կրոմվելն ամուսնացավ Ռոբերտ Ռիչի՝ կոմս Ուզրիկի թոռան հետ, Մերի Կրոմվելը՝ լորդ Ֆոքոնբերգի հետ։ Երկու ջենտլմեններն էլ կրում էին բարեհամբավ հնամենի ազգանուններ և չէին թաքցնում իրենց համակրանքը միապետության նկատմամբ։ Ֆրենսիսի հարսանիքը եղավ մեծ, աղմկալի, ճոխ։ Հյուրերը ողջ գիշեր պարեցին՝ ցասում հարուցելով այն մարդկանց մեջ, որոնք դեռ պահում էին նվիրվածությունը պուրիտանական սովորույթներին։ Պրոտեկտորի արքունիքը իսկապես որ վերադառնում էր հին միապետական կարգերին։ Փոխարենը՝ Մերիի հարսանիքն արեցին զրեթե գաղտնի. ասում էին, թե փեսան, և հենց ինքը՝ հարսնացուն, պահանջել են պսակադրություն անգլիական ծեսով։ Եվ դեռ ավելացնում էին, թե նրանց պսակադրել է նույն այն դոկտոր Հյուիթը, որին կես տարի անց Թայբերնում գլխատեցին ռոյալիստական դավադրության մասնակցության համար։

Պրոտեկտորն ինքը իրեն պահում էր իր աստիճանին վայել արժանապատվությամբ, թեպետև ոչ գոռոզ։ Նա սիրում էր ընտանեկան երեկոներ, ուրախ կատակներ, անմեղ զվարճալիքներ։ Նրան առանձնապես հաճույք էր պատճառում երաժշտությունը. և՛ Հեմպթոն-Քորթում, և՛ Ուայթհոլում հանդիսավոր ընդունելության ժամանակ հնչում էին երգեհոններ և ջութակներ, իսկ ընտանեկան նեղ շրջանում նվագում ու երգում էին իրենք, և Օլիվերը բոլորի հետ մեկտեղ երգում էր հին երգեր և իտալական մոթեթներ։

Ռոյալիստները արտասահմանում և օտարերկրյա դեսպանները ակնածանքով էին նայում շողշողուն արքունիքին և արժանին էին հատուցում անգլիական պրոտեկտորական գահի վսեմությանը։ «Թվում է, թե ամեն ինչ ենթարկված է նրա ցանկություններին և՛ տանը, և՛ արտասահմանում,— գրել է Քլարենդոնը,— նրա և՛ իշխանությունը, և՛ մեծությունը առավել լավ են ամրապնդված, քան եղել է երբևէ։ Դեսպանությունները Կրոմվելի կողմից ըն-

www.a-pdf.com

դունվում էին մեծ պատիվներով. ասես թե կայսր լիներ։ Փետրվարին Շվեդիայի հետ կնքված ռոսքիլդյան պայմանագիրը հաստատեց Բալթիկ ծովում անգլիացիների առևտրական իրավունքները։ Հունիսին մեկ տարի առաջ Ֆրանսիայի հետ կնքված պայմանագիրը փայլուն պտուղներ բերեց. անգլիական զինվորները, որ օգնության էին ուղարկված ֆրանսիացիներին՝ վեց հազար հետևակ և նավատորմ, հաղթանակ տարան իսպանացիների դեմ Դյունկերկի մոտ։ Նրանց դեմ թշնամիների շարքերում մարտնչում էին Անգլիայի աքսորված թագավորի եղբայրները՝ Յորք և Գլոսթեր կոմսերը։ Ֆրանսիացիները պայմանագրի համաձայն նվաճված բերդի բանալին հանձնեցին անգլիացի լիազորներին, և Անգլիան շահեկան ռազմավարական մարտահենակետ ստացավ մայր ցամաքում։ Լյուդովիկոս XIV-ը, որ այն ժամանակ դեռ պատանի էր, ի պատիվ այդ հաղթանակի Կրոմվելին ուղարկեց մի հոյակապ սուր՝ թանկարժեք քարերով պատած երախակալով։

Ամեն ինչ, թվում էր, ընթանում էր անսահմանորեն բարեհաջող։ Բայց դա պրոտեկտորատի սոսկ արտաքին, ցուցադրական կողմն էր։ Իրականում անդորր ու բարգավաճում չէին վայելում ո՛չ երկիրը, ո՛չ էլ նրա տիրակալ Կրոմվելի հոգին։ Ընդհակառակը, ուշադիր աչքը կարող էր նկատել, որ երկիրը փակուղու մեջ է, և այն փակուղու ու պարտության են հասցրել պրոտեկտոր Կրոմվելի ամենից, թվում է, բարեմիտ ցանկությունները։

Բանակը, որի վրա նա հենվում էր, պատերազմները, որ նա վարում էր, գաղութային նվաճումները և վիթխարի նավատորմը ավելի ու ավելի շատ փող էին պահանջում։ Հրեշավոր դրամական դեֆիցիտն անընդհատ աճում էր. 1658-ի գարնանն այն գերազանցում էր 500 հազար ֆունտ ստեռլինգից։ Վիթխարի պետական պարտքը ծանրանում էր կառավարության վրա՝ մեկուկես միլիոն ֆունտ։ Զինվորներին ոռճիկ չէր տրվում շատ ամիսներ շարունակ։ Թերլոն, որ գրեթե հանճարեղ էր ամեն տեսակ գավադրություններ բացահայտելու գործով, խոստովանում էր իր անճարակությունը։ «Մենք այստեղ այն աստիճան ենք խելքներս կորցրել,— ապրիլին գանգատվում էր նա Հենրի Կրոմվելին,— որ չգիտեմ, թե ինչ ենք անելու առանց փողի»։ Հունիսին վիճակն ավելի վատացավ, և երկաթե Թերլոն քիչ էր մնում խուճապի մատնվեր. «Ես դրականապես կարծում եմ, որ միայն նախախնամությունը կարող է վերցնել մեր դժվարությունները, եթե աստծուն հաճո լինի գթալ մեզ»։

Առևտուրը ողբալի օրեր էր ապրում. Իսպանիայի հետ շահավետ պայմանագրերն ընդհատվել էին պատերազմի պատճառով, հարկերն ու տուրքերը անչափ աճել էին։ Գործազրկությունը, սնանկացումը ամեն կողմից բողոք ու տրտունջ էր առաջացնում։ Սիթին մերժում էր փոխառություն տալ պրոտեկտորին։

Կրոմվելը չէր կարող չտեսնել, որ տնտեսության մարզում իր ռեժիմը ձախողվում է։ Ոչինչ չէր մնում անել, քան թե մտածել

www.a-pdf.com

նոր պառլամենտ գումարելու մասին, բայց ի՞նչ հիման վրա։ Ո՛չ «Կառավարման միջոցը», ո՛չ «Հնազանդության հանրագիրը», ինչպես փորձը ցույց էր տվել, պիտանի չէին։ Այն ինը մերձավորները, որոնց Կրոմվելն ընտրել էր որպես այդ գծով կազմված խորհուրդ, զուր գլուխ էին կոտրում սահմանադրական հարցերի վրա։ Ինչպե՞ս պահպանել կարգն ու հանգստությունը նոր պառլամենտում։ Ինչպե՞ս թույլ չտալ, որ այնտեղ մտնեն հանրապետականներն ու կավալերները։ Գուցե թե համաձայնությա՞մբ գալ Լեդլոյի և Վենի հետ. նրանց հստակամիտ գլուխները պետք կգան պրոտեկտորին։ Կամ գուցե, ավելի լավ է, կրկին բորբոքել թագի վերաբերյալ հարցը, քանի որ դրա գլխավոր ընդդիմախոսը՝ Լամբերթը, գործերից հեռացված է։ Նրանք ելք չէին տեսնում։ Անհանգստությունը պատել էր արքունիքի ամենահեռատեսներին։ Հենրի Կրոմվելն գրում էր այդ անելանելի, տագնապալի վիճակը և ամռանը Իռլանդիայից գրում էր Թերլոյին. «Եվ առհասարակ դուք ունե՞ք մի որևէ հիմնավոր սահմանադրություն, որով կարելի լիներ երդվել։ Արդյոք երկրի հանգստությունը կախված չէ՞ մեն-միակ նոցին մեծության գոյությունից, նրա բացառիկ ջանադրությունից ու ընդունակություններից և անձնական հոգատարությունից հանդեպ բանակը, որը նա ստեղծել է և որին նա ղեկավարում է։ Ազնիվ խոսք, մի կողմ թողած աստծո մասը (եթե ես որևէ բան հասկանում եմ Անգլիայի գործերից), միայն իմ հոր կենդանի լինելն է, որ խանգարում է սարսափելի արյունահեղությանը»։

Երիտասարդ Հենրիի խորաթափանցությունը պատիվ էր բերում նրան. ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, միայն Կրոմվելի հեղինակությունն էր փրկում երկիրը երկպառակություններից, խռովություններից, անիշխանությունից, վերջապես, Ստյուարտների վերականգնումից։ Իսկ կյանքը դեպի մայրամուտ էր թեքվում։ Ապրիլի 24-ին լրանում էր պրոտեկտորի հիսունինը տարին։ Նրա հայթ թիկունքը կորացել էր, այտերը կախ էին ընկել, մազերը նոսրացել էին, ճերմակել։ Նրան տիրում էին ծերունական տկարությունները՝ անքնությունը, հոդատապը, գլխապտույտը, ցավը գոտկատեղում։ Սակայն ոգին ավելի նկատելիորեն էր դեպի անկում թեքվում։ Այլևս չկային բոցաշունչ, անկեղծ պոռթկումները, թևավոր հավատը իր մեծ առաքելության հանդեպ։ Այո, նա երկրում հասել էր բարձրագույն իշխանության, բայց դա արդյոք նրան բերո՞ւմ էր այն բավականությունը, որը նա ցանկանում էր։ Հազիվ թե։

Ամենից ավելի հուսալի զինակիցների դեմքերը մեկիկ-մեկիկ անցնում էին նրա աչքի առջևով՝ տանջալի, անքուն գիշերների թանձր խավարում. Լիլբեռն, Լեդլո, Հենրի Վեն, Լամբերթ... Նրանք բոլորը երես էին թեքել նրանից, դավաճանել էին նրան։ Այդ դավաճանություններից կրած դառնությունը և հիասթափու-

www.a-pdf.com

թյունը նրա մեջ ծնել էին կասկածամտություն, անվստահություն։ Նախկինում մարդամոտ և ուշադիր Կրոմվելն այժմ դարձել էր մարդախույս։ Ժամանակ առ ժամանակ նա քաշվում էր իր առանձնասենյակը, երկար փակվում, պատվիրելով ոչ ոքի չընդունել։ Միայն դուստրերի և Թերլոյի հետ նա «դեռևս ուրախ էր լինում և միաժամանակ մոռանում էր իր ծերությունը»։

Բազում մահափորձերը նրա դեմ և այն գիտակցությունը, որ իրենից է կախված ամեն ինչ՝ կարգ ու կանոնը, խաղաղությունը, հասարակական բարեկեցությունը, նրան դարձրել էին ծայրահեղ զգուշավոր։ Ասում էին, որ նա ոչ ոքի չէր վստահում, նույնիսկ անձնական պահակախմբին, անգամ մոտիկ ազգականներին։ Ցուրաքանչյուր օտարերկրացու մեջ նա տեսնում էր հնարավոր քողարկված թշնամու կամ մարդասպանի, նա իր հագուստի տակ բարակ օղակրահ էր կրում և ոչ մի տեղ չէր գնում առանց թիկնազորի։

Եվ ահա չարագուշակ հյուրը սուր գերանդիով սկսել էր ավելի ու ավելի հաճախակի հայտնվել նրա տան մեջ, ասես նախազգուշացնելով, ասես սպառնալով տանտիրոջը։ Փետրվարին թոքախտից մեռավ Ֆրենսիսի երիտասարդ ամուսինը՝ Ռոբերտ Ռիչը։ Ընդամենը երեք ամիս էր անցել նրանց փառահեղ խրախճալի հարսանիքից, և ահա նորատի այրին հագնված էր սգազգեստ։ Ճուտով նրա ետևից այն աշխարհը գնաց նրա պապը՝ կոմս Ռուրիկը, որ հրաժարվել էր տեղ գրավել նոր լորդերի մեջ։ Հունիսին ննջեց Օլիվերի միամյա թոռը՝ Բեթթի Քլեյտոնի կրտսեր որդին, իսկ ինքը Բեթթին ծանր հիվանդացավ։

Սիրունիկ, աշխույժ, ինքնահաճ այդ աղջիկը, նրա ամենից սիրելի դուստր Բեթթին, որը տասնվեց տարեկանում իր ընտրությամբ ամուսնացել էր Ջոն Քլեյտոնի՝ «պիղծ կավալերի», հետ և որը միշտ հոր մոտ բարեխոսում էր ռոյալիստական միաբանության մի որևէ դատապարտված անդամի համար, պառկած էր այժմ Հեմպթոն-Քորթում, տանջվելով որդու կսկիծից և ուժեղ ցավերից, որոնցից չէին կարողանում գլուխ հանել բժիշկները։ Երբ պարզվեց, որ նրա հիվանդությունը կյանքի համար վտանգավոր է, Օլիվերը ողջ ընտանիքով և արքունիքով տեղափոխվեց Հեմպթոն-Քորթ։ Նա ինքը ստանձնեց հիվանդի խնամքը։ Հուլիսյան հեղձուկ գիշերները նա անընդհատ նստած էր դստեր գլխավերևը՝ մորմոքվելով նրա տառապանքներից և իր անզորությունից։ Նա մի կողմ էր թողել պետական գործերը, միայն հազվադեպ դուրս էր գալիս հանդիպելու օտարերկրյա դեսպաններին՝ անքնությունից կարմրատակած աչքերով, ծերունական երերուն քայլերով։

Օգոստոսի առաջին օրերին Բեթթին իրեն փոքր-ինչ լավ զգաց, և հալումաշ եղած հայրը առաջին անգամ քնեց ողջ գիշերը։ Օգոստոսի 6-ի առավոտյան Բեթթին վախճանվեց։ Նա այդ ժամանակ քսանինը տարեկան էր։

www.a-pdf.com

Կրոմվելը այնքան ջախջախված, ամայացած ու վշտահար էր, որ անգամ չգնաց թաղմանը, որը տեղի ունեցավ օգոստոսի տասին։

Մի շաբաթ անց նրա հին հիվանդության ուժեղ նոպան, այն ախտի, որ ձեռք էր բերել դեռևս իռլանդական ճահիճներում, տապալեց նրան. սկսվեց տենդը։ Բայց հոգեկան տառապանքը ուժեղ էր ֆիզիկականից։ Նա անասելի տառապում էր։ Մխիթարություն գտնելու որոնումների մեջ նա պատվիրեց բերել Աստվածաշունչը և մի հատված կարդալ Պողոս առաքյալի թղթերից։ Երբ հատվածը կարդացին, նա ասաց.

— Այդ տեղը մի անգամ արդեն փրկել է իմ կյանքը, երբ մեռավ իմ ավագ որդին, մի բան, որ դաշույնի պես խոցեց իմ սիրտը, բայց սա փրկեց ինձ։

Տենդը, արդարացնելով իր եռօրյա անվանումը, տեղի տվեց, և օգոստոսի 19-ին Կրոմվելը մասնակցեց Պետական խորհրդի նիստին։ Հետևյալ օրը նա պնդեց, որ իրեն դուրս բերեն զբոսանքի, և մի երկու պտույտ կատարեց ամրոցի մերձակայքում։ Նրան ընդառաջ եկավ նշանավոր կվաքեր Ջորջ Ֆոքսը՝ հերթական խնդրագիրը ձեռքին։ Կրոմվելն արդեն մի քանի անգամ ոչ առանց հետաքրքրության զրույցի էր բռնվել այդ լուսավորյալ մարդու հետ, և այժմ նրան պատվիրեց վաղը դալ։ Ֆոքսն ասլշած երկար նայեց նրա եռանից։ «Դեռևս մինչև նրան մոտենալը,— գրել է նա իր օրագրում,— ես տեսա և զգացի մահվան շունչը, որ գալիս էր նրանից։ Իսկ երբ ես մոտեցա նրան, նա մեռածի տեսք ուներ»։

Հետևյալ օրը Ֆոքսին մերժեցին ընդունել. պրոտեկտորը կրկին անկողին էր ընկել։

Օգոստոսի 24-ին նրան բժիշկների պնդմամբ տեղափոխեցին Ուայթհոլ. Հեմթոն-Քորթում՝ քաղաքից դուրս, փոքր-ինչ խոնավ էր, իսկ եղանակը դեպի աշուն էր թեքվում։ Բայց տեղափոխությունը միայն վատթարացրեց հիվանդի վիճակը։ Երեկոյան դողը նորից բռնեց նրան, և սկսեց նվաղել։ Քանիցս նա մեքենաբար կրկնում էր հավատի հանգանակը, բայց նրա ձայներանդի մեջ հույս չկար։ Գուցե նրան հալածում էր խղճի խայթը։ Երեք անգամ լսել էին, թե ինչպես նա շշնջացել էր. «Մարսատիելի բան է կենդանի աստծո ձեռքն ընկնելը»։ Մի անգամ նա իր մոտ կանչեց կապելանին (մի քանի ընտանեկան քարոզիչներ հարևան ենջարանում զոր ու գիշեր աղոթում էին նրա առողջության համար)։

— Ասեք ինձ,— հարցրեց հիվանդը,— հնարավո՞ր է, որ մի անգամ ընտրյալը կորցնի վերին օգնությունը։

— Ոչ, հնարավոր չէ,— հաստատ պատասխանեց աստվածաբանը, որ ներծծված էր կալվինական հավատի դոգմաներով։ Թեթևության հառաչ դուրս թռավ Կրոմվելի կրծքից։ Նա հայացքը բարձրացրեց և շշնջաց.

www.a-pdf.com

— Այնժամ ես փրկված եմ։ Քանզի գիտեմ, որ ես երբեք արժանացել եմ երկնային շնորհին։

Օգոստոսի 30-ին ահավոր մի հողմ էր սուրում Լոնդոնով մեկ։ Փոթորիկը խաղալիքի պես շուռ էր տալիս եկեղեցիների զանգակատները, պոկում էր տների տանիքները, ջրասույզ անում նավերը Թեմզայում։ Զբոսայգիներում և քաղաքային անտառներում հողմակործան ծառերի վիթխարի կույտեր էին գոյացել։ Արտերում ցաքուցրիվ էր լինում խուրձ արած բերքը։ Ահռելի մրրկասյունները գալարվում էին օդում, նրանց մթին կատարները երկինք էին հասնում։

Փոթորկի որոտն ու բվվոցը թափանցում էին Ուայթհոլի հաստ պատերից ներս, նրա բոլոր բնակիչներին ստիպելով ցնցվել և ավելի բարձրաձայն կրկնել աղոթքի խոսքերը։ Երբ փոթորիկը փոքր-ինչ հանդարտվեց, Կրոմվելի գիտակցությունը ասես մի փոքր պարզվեց. նա սկսեց լավ զգալ։ Նա նորից ասաց, որ չի մեռնի այս անգամ ևս՝ կապրի, որպեսզի վախճանի հասցնի իր գործը։ Նոպաներ չեղան նաև հաջորդ օրը, բայց շատ էր թույլ։

Պրոտեկտոր Օլիվեր Կրոմվելի այդ վերջին օրերին միայն մի մարդ արիություն ունեցավ նրա մոտ մտնել պետական գործերով, և ավելի ճիշտ՝ միայն մի կարևորագույն պետական գործով. այդ մարդն էր Ջոն Թերլոն։ Իսկ այն գործը, հանուն որի նա իր հարցումներով դադար չէր տալիս մեռնող և արդեն աշխարհիկ հոգսերից ձեռ քաշած պրոտեկտորին, ժառանգորդ նշանակելն էր։ Համաձայն վերջին սահմանադրության՝ «Հնազանդության հանրագրի ու խորհրդի», պրոտեկտորն ինքը պետք է իրեն ժառանգորդ նշանակեր։ Եվ քանի դեռ այդպիսի նշանակում չէր կատարվել, պետական գործիչները՝ նրանք, ում վիճակված էր ապրել և ղեկավարել երկիրը Կրոմվելից հետո, չէին կարող հանգիստ քնել։ «Եվ հիրավի, միլորդ,— գրում էր անքուն ու աչալուրջ Թերլոն Իռլանդիա՝ Հենրի Կրոմվելին,— մենք բոլոր հիմքերն ունենք վախենալու, որ մեր գործերը շատ կվատանան, եթե հիմա աստված իր մոտ կանչի նորին մեծությանը։ Ոչ թե այն պատճառով, որ Կարլոս Ստյուարտի կովանները, ինչպես ես կարծում եմ, արդեն այնքա՞ն շատ են մեծ կամ նրա կուսակցությունը ինքնին վերցրած ուժեղ է, այլ վախենում եմ մեր սեփական տարաձայնություններից, որոնք կարող են բավականին մեծ լինել, եթե նորին մեծությունը նախքան մեռնելը չընտրի և չնշանակի իր ժառանգորդին...»։

Օգոստոսի 30-ին, երբ մոլեգնում էր փոթորիկը, Թերլոն վրճռեց, որ հասել է պահը։ Նա խոնարհվեց դեպի հիվանդը և հարցրեց, թե ում է նա ցանկանում նշանակել իր փոխանորդը։ Կրոմվելը սաստիկ թույլ էր և ինքնամփոփ։ Նա որոշակի ոչ մի բան չպատասխանեց կամ գուցե տվեց այնպիսի պատասխան, որը չգոհացրեց Թերլոյին...

www.a-pdf.com

Թերլոյին, ինչպես և խորհրդի մյուս անդամներին, ձեռնտու էր միայն մի թեկնածու՝ Ռիչարդ Կրոմվելը։ Պարզամիտ ու համակերպվող այդ «գյուղական ջենտլմենը» կարող էր առաջին ծանոթությունից դուր գալ բոլորին։ Խորհրդականները կթելադրեին նրան իրենց կամքը, պրեսբիտերների և պահպանողականների սրտովն էր, որ Ռիչարդը չէր արտաբերել իրեն թագավորի մահապատժին մասնակցությամբ և իշխանությունը ժառանգում էր որպես ավագ որդի, ըստ միապետական սկզբունքի։ Մյուս կողմից, հանրապետականները հույս ունեին թուլակամ Ռիչարդին ստիպել մի քանի զիջումներ անել իրենց օգտին։ Դրա համար էլ Թերլոն այդպես հետամտում էր, որ տենդի մեջ տապակվող պրոտեկտորից հատկապես կորզեր Ռիչարդի նշանակումը։

Սեպտեմբերի 2-ին պարզ դառնավ, որ Կրոմվելը մեռնում է։ Նա հաճախ ընկնում էր ինքնամոռացության մեջ, մեկ էլ հանկարծ դառնում էր անհանգիստ, անընդհատ ինչ-որ բան էր խոսում։

Այդ օրը Թերլոն և էլի չորս մերձավորներ մտան պրոտեկտորի մոտ, փորձելով ժառանգորդի վերջնական նշանակումն ստանալ։ Բայց արդեն ուշ էր։ Կրոմվելը շուռումուռ էր գալիս, ինչ-որ անհասկանալի քրթմնջում էր, զառանցում։ Մարդիկ նրան խանգարում էին։ Նա պետք է վճռեր իր համար կարևոր մի խնդիր, ով գիտե, գուցե պետք է թողություն խնդրեր աստծուց իր այդ վերջին ժամին։ Մարդիկ խոնարհվել էին նրա վրա, իրենց մարմնով ծածկելով աղոտ լույսը, որ թափանցում էր թանձր վարագույրներից, նրանք ինչ-որ բան էին ուզում նրանից։

— Ուրեմն Ռիչա՞րդը, Ռիչա՞րդը,— աներևսարար հարցնում էին նրանք։

Նա գլխով էր անում՝ միայն թե շուտ գնան, և շարունակում էր իր անվերջանալի, անկապ մենախոսությունը՝ ուղղված երկնքին։

Սեպտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը նա ավելի անհանգիստ դարձավ։ Քրթմնջոցն ավելի բարձրաձայն էր դարձել, կցկտուր, անհասկանալի։ Նրան առաջարկեցին դեղ խմել և քնել, բայց նա հանկարծ կտրուկ պատասխանեց.

— Իմ հոգսը խմելը կամ քնելը չի, իմ հոգսը շտապ, ժամ առաջ գնալն է...

Առավոտյան դեմ նա կորցրեց խոսելու ընդունակությունը և սեպտեմբերի 3-ին, կեսօրին, ժամը երեքի ու չորսի արանքում, այն հիշարժան ու փառավոր օրը, որը նրան մեծագույն հաղթանակն էր պարգևել Դենբարի և Վուսթերի մոտ, լորդ-պրոտեկտոր Օլիվեր Կրոմվելը վախճանվեց։

www.a-pdf.com

ՎԵՐՋԱԲԱՆ

Վեսթմինսթերում հին, սևամած կարմրաղյուս շինությունների արանքում, սպիտակ պատվանդանի վրա կանգնած է մի խստահայաց հուշարձան։ Մի մարդ է կանգնած, հագին՝ զրահ, հեծյալի բարձր սապոգներով, գլուխը փոքր-ինչ առաջ հակած։ Աջ ձեռքին նա պահած ունի մի սուր, ձախում Աստվածաշունչը՝ իր իշխանության զենքերը։ Նրա գլուխը ծածկված չէ. դեմքը խիստ է և թախծոտ։ Պատվանդանի տակ պառկած է մի փառահեղ առյուծ՝ Բրիտանիայի ավանդական խորհրդանիշը։ Դարեր անց այսպես կկանգնի մեր ժամանակակիցների աչքի առաջ նա՝ անգլիական հեղափոխության առաջնորդը, ծագումով ջենտլմենը, գինվորը, տրքայասպանը, նվաճողն ու բռնակալը, այդպես էլ թագավոր չդարձած Օլիվեր Կրոմվելը։

Ինչի՞ մասին է պատմում մեզ այդ կերպարը։ Ամենից առաջ՝ հեղափոխության մասին։ «Եվրոպական մասշտաբի» առաջին բուրժուական հեղափոխության, որը ջախջախեց ֆեոդալական սահմանափակության լապանքները տնտեսության մեջ, սրբեց դասային արտոնությունները, խարխլեց բացարձակ միահեծանության հենարանը՝ անգլիկանական եկեղեցին, իսկ թագավորական իշխանությունը տապալեց, թագավորին տարավ կառափնարան և Անգլիայում հռչակեց հանրապետություն։ Դա նշանակում էր «նոր հասարակարգի հաղթանակը, բուրժուական սեփականության հաղթանակը ֆեոդալվանի հանդեպ, ազգինը՝ գավառականության հանդեպ, մրցակցությանը՝ համքարային կարգի հանդեպ, սեփականության մասնատմանը՝ մայորականի հանդեպ, հողի սեփականատիրոջ տիրապետության հաղթանակը սեփականատիրոջը հողին ենթարկելու հանդեպ, լուսավորությանը՝ սնահավատության հանդեպ, ընտանիքինը՝ տոհմանվան հանդեպ, բուրժուական իրավունքինը՝ միջնադարյան արտոնությունների հանդեպ»[1]։

Ճիշտ է, դա բուրժուական հեղափոխություն էր և բուրժուական հանրապետություն իր բոլոր թուլություններով ու փոխզիջումներով հանդերձ, իր երկյուղածությամբ՝ հանդեպ ժողովրդական շարժումը, իր կրքոտ շահասիրությամբ և նվաճողական արտաքին քաղաքականությամբ։ Բայց բուր-

---

[1] Маркс К. и Энгельс Ф., соч., т. 6, с. 115.

www.a-pdf.com

ժուազիան այն ժամանակներում դեռևս երիտասարդ էր, նոր բարձրացող դասակարգ, որ հասակ էր առել միջնադարյան լճացման դեմ պայքարի ընթացքում։ Այն իր միջավայրից առաջադրում էր անձնվեր, վճռական գործողություններից չվախեցող հեղափոխականներ, որոնք համարձակորեն պայքարի էին գնում՝ հաճախ իրենց կողմը գրավելով ժողովրդական լայն զանգվածներին։ Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ XVII դարի հեղափոխության դարաշրջանի անգլիական բուրժուազիան չէր վախենում գնալ ժողովրդի հետ, «ախ չէր քաշում կրտսեր եղբոր անհամբերության» առթիվ, թթու ծամածռություններ չէր անում այդ կրտսեր եղբոր շրջապատից ելած «խիստ բոցաշունչ հռետորների» առթիվ, այլ ինքն էր մատակարարում ամենից բոցաշունչ հռետորներ (և ոչ միայն հռետորներ), որոնք ատելության զգացում էին արթնացնում դեպի «համբերատարության» քարոզը, դեպի անզոր ախուվախները, դեպի տատանումներն ու անվճռականությունը։ Եվ այդ բոցաշունչ հռետորների մեջ գտնվում էին մարդիկ, որոնք դարերի ու դարերի ընթացքում մնացին իբրև ջահեր, ուսուցիչներ, չնայած ամեն տեսակի թշվառություններից ազատվելու միջոցների մասին նրանց այն ժամանակ ունեցած պատկերացումների ամբողջ պատմական սահմանափակությանը, հաճախ միամտությանը[1]։ Վ. Ի. Լենինը այդ վաղ բուրժուական հեղափոխականներին իբրև օրինակ մատնացույց էր անում իմպերիալիզմի դարաշրջանի վախկոտ ու համաձայնողական բուրժուազիային։

Անգլիական հեղափոխության ամենից տիպիկ կերպարանքը, որն արտացոլում էր նրա ողջ հակասությունն ու բարդությունը, հանդիսանում էր ոչ հարուստ գյուղական սքվայրը՝ հողատերը, պուրիտանը, պաշտոնական եկեղեցու և թագավորական կամայականության թշնամին։ Հենց այդպիսի մի սքվայր էր նաև Օլիվեր Կրոմվելը։ Ինչ-որ բանով նա մոտիկ է ժողովրդին. նա գիտե ժողովրդի հետ խոսել միևնույն լեզվով. նա այնպես է հավատում աստծուն, ինչպես իր ժամանակի հասարակ մարդիկ։ Նա ժողովրդի հետ միասին պայքարի է գնում թագավորի դեմ, եպիսկոպոսների, լորդերի դեմ։ Նա ժողովրդական բանակը կռվի է տանում ընդդեմ բացարձակ միապետության կողմնակիցների և ջնորհիվ ականավոր զորավարի իր հատկությունների փայլուն հաղթանակներ է տանում։ Նա զիջում է ժողովրդական պահանջներին և համաձայնում է գլխատել թագավորին և Անգլիայում հանրապետություն հաստատել։ Իսկ երբ հանրապետությունը ի դեմս Երկարատև պառլամենտի՝ «գլխանքի» ողջ աշխարհին ցուցադրում է իր կեղծավոր, շահախնդիր էությունը, նա համարձակորեն ցրում է այն, գուցե թե անգիտակցաբար ձգտելով ավելի արդարացի և ներդաշնակ կարգի։ Զուր չի ասել Կ. Մարքսը, թե

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 20, էջ 348—349։

www.a-pdf.com

«անգլիական ժողովուրդը հանձին Կրոմվելի ցրեց Երկարատև պառլամենտը»[1]։

Բայց բուրժուազնվականական դաշինքի ներկայացուցիչ Կրոմվելը միևնույն ժամանակ վախենում է ժողովրդից։ Նա չի ուզում ցածր խավի մարդկանց հետ իրավունքների հավասարություն լինի ո՛չ քաղաքական, ո՛չ էլ առավել ևս ունեցվածքային առումով։ Եվ, ինչպես թելադրում են դասակարգի շահերը, նա ճնշում է ժողովրդական շարժումները, ասպարեզ չի տալիս նրան, ինչը համարում է «խառնակչություն» և «անարխիա»։ Նա սկսում է հեռանալ ժողովրդից դեռևս 1649 թվականին, երբ կապերը խզում է նրա դրոշակակիրների՝ լևելերների հետ։ Իսկ երբ նա շուտ է տալիս իր հեղափոխական բանակը ապստամբած Իռլանդիայի դեմ և առաջնորդում է նրան խեղդելու ու զավթելու, գարկելու ու հարստանալու, նա հեղափոխության Ռոբեսպիերից վերածվում է, Ֆ. Էնգելսի արտահայտությամբ, նրա Նապոլեոնի[2]։ Հավատարիմ իր դասակարգի ձգտումներին, նոր դասակարգի, որը նկրտում էր բուրժուազիայի իշխանության հաստատման՝ նոր ազնվականության հետ դաշինք կնքած, նա ծրագրեր է մտմտում Բրիտանիայի գերիշխանությամբ բողոքական տերությունների միջազգային միություն ստեղծելու վերաբերյալ։ Իսկ Անգլիայի ներսում նա իր կյանքի վերջում դառնում է կարգի պահապան, կոնսթեբլ (ռազմիկան), որը ճնշում է դժգոհության ամեն մի արտահայտություն։ Նա սրբազան մասնավոր սեփականության աչալուրջ պահապանն է նրա դեմ ուղղված ամեն տեսակի ոտնձգություններից։

Եվ այնուհանդերձ Կրոմվելը մեծ էր, ինչպես որ մեծ էր հենց անգլիական հեղափոխությունը՝ հին հասարակարգի տապալման վառվռուն ու ահեղ ժամանակը, նոր հույսերի ու հղացումների, իդեալների ծննդյան ժամանակը։ Դեռ հիմա էլ Անգլիայում խոսում են հեղափոխությունների մասին, որպես «Կրոմվելի ժամանակների» մասին։ Իսկ երբ ուզում են խոսել յուրաքանչյուր մարդու անձնական պատասխանատվության մասին իր խղճի առաջ, ընտրության իրավունքի մասին, իր կրքերին տիրապետելու և դրանք բարձր նպատակների ծառայեցնելու անհրաժեշտության մասին, բերում են այս ասացվածքը. «Յուրաքանչյուր մարդ ինքն իր Կրոմվելն է»։ Չնայած իր ողջ պատմական սահմանափակությանը, նահանջներին ու սխալներին, քաղաքական իդեալների խակությանը, Կրոմվելը կապրի դարեդար ամենից առաջ որպես մեծ հեղափոխության առաջնորդ, ֆեոդալիզմի ու թագավորական կամայականությունների դեմ պայքարող մարտիկ, ականավոր զորավար ու խիզախ քաղաքագետ, որն իր արարքները չափակցում էր իր խղճի պատվիրանների ու թելադրանքների հետ։

[1] Маркс К и Энгельс Ф, Соч, т. 6, с 11

[2] Կրոմվելը,— գրել է Ֆ. Էնգելսը,— «մի անձնավորության մեջ համատեղում է անգլիական հեղափոխության Ռոբեսպիերին և Նապոլեոնին»։

www.a-pdf.com

ԿՐՈՄՎԵԼԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

1558—1603 — *Եղիսաբեթ I թագուհու կառավարման տարիները։*

1599, ապրիլի 25 — *Հանթինգդոնում ծնվեց Օլիվեր Կրոմվելը, Ռոբերտ և Եղիսաբեթ Կրոմվելների որդին։*

1603, մարտ — *Եղիսաբեթ I թագուհու մահը և Հակոբ I Ստյուարտի գահ բարձրանալը։ Նրա տեղափոխվելը Շոտլանդիայից Անգլիա, ապրիլ—Հինչինբրուքում, որը Օլիվեր Կրոմվելի կալվածքում մնալը։*

1604, մարտ — *Հակոբ I-ի առաջին պառլամենտի գումարումը (ընդմիջումներով դոյություն ունեցավ մինչև 1611 թվականի փետրվարը)։*

1605 — *«Վառոդային դավադրությունը»՝ կազմակերպված անգլիական կաթոլիկների կողմից պառլամենտը պայթեցնելու նպատակով։*

1614 ապրիլ — *Հակոբ I-ի երկրորդ պառլամենտի գումարումը (արձակվեց 1614-ի հունիսին)։*

1616, մայիս — *Կրոմվելն ընդունվում է Քեմբրիջի համալսարան, Սիդնի-Սասեքս կոլեջը։*

1617, նոյեմբեր — *մեռնում է Ռոբերտ Կրոմվելը՝ Օլիվերի հայրը։ Օլիվեր Կրոմվելը թողնում է Քեմբրիջը և վերադառնում է Հանթինգդոն։*

1619—1620 — *Կրոմվելի Լոնդոնում գտնվելը, որտեղ նա իրավունք է ուսանում։*

1618—1648 — *երեսունամյա պատերազմը Եվրոպայում։*

1620, օգոստոսի 22 — *Կրոմվելն ամուսնանում է Եղիսաբեթ Բուրշյեի, լոնդոնցի վաճառական-մորթեգործի աղջկա հետ։ Պսակադրությունը տեղի է ունենում Լոնդոնում, սուրբ Ջայլսի, Քրիփլսգեյթի եկեղեցում։ Դրանից հետո նա կնոջ հետ վերադառնում է Հանթինգդոն։*

1621, նոյեմբեր — *Հակոբ I-ի երրորդ պառլամենտի գումարումը (արձակվեց 1622-ի հունվարին)։ Այդ նույն տարին ծնվեց Կրոմվելների որդի Ռոբերտը։*

1623 — *ծնվեց Կրոմվելների Օլիվեր որդին։ Այդ տարվա մարտ-սեպտեմբերին Ուելսի արքայորդի Կարլոսը պալատական սիրեցյալ Բեքինհեմի հետ ուղևորվում է Իսպանիա, իսպանական արքայադստեր հետ ամուսնանալու նպատակով։*

1624 — *Կրոմվելներին ծնվեց աղջիկ՝ Բրիջեթը։ Այդ տարվա նոյեմբերին ամուսնական պայմանագրություն կնքվեց Ուելսի արքայազն Կարլոսի և Հենրիետա-Մարիայի՝ Ֆրանսիայի թագավոր Հենրի IV-ի աղջկա ու Լյուդովիկոս XII-ի թոռ միջև։*

1625— *Հակոբ I թագավորի մահը և Անգլիայի գահի անցումը Կարլոս I-ին։ Այդ տարվա հունիս-օգոստոսին նոր թագավորը գումարում է իր նոր պառլամենտը։*

1626 — *ծնվեց Կրոմվելի Ռիչարդ որդին։ Նույն այդ տարին, փետրվարից հունիսը, Կարլոս I-ը հրավիրում է երկրորդ պառլամենտը։*

1628 — *Կրոմվելին պառլամենտի անդամ են ընտրում Հանթինգդոնշիրից։ Մարտին նա մեկնում է Լոնդոն, մասնակցում պառլամենտի նիստերին, ծանոթանում է Համփդենի, Փիմի, Էլիոթի և օպոզիցիայի մյուս առաջնորդների հետ։ Հունիսի 7-ին պառլամենտը թագավորին հանձնում է «Հանրագիր իրավունքի մասին»։ Հուլիսի 17-ին Կարլոսը հաստատում է այն։ Օգոստոսի 23-ին Ֆելթոնն սպանում է արքայական ֆավորիտ դուքս Բեքինհեմին։ Կրոմվելը հի-*

www.a-pdf.com

վանդանում է։ Սեպտեմբերին նա խորհրդակցում է Լոնդոնում բժիշկ Թեոդոր Մայերնի հետ։ Նույն այդ տարին ծնվում է նրա Հենրի որդին։

1629, փետրվարի 11 — Կրոմվելի առաջին ելույթը պառլամենտում ի պաշտպանություն պուրիտանական քարոզիչների։ Մարտին Կարլոս I-ը ցրում է պառլամենտը և բանտարկում պառլամենտական օպոզիցիայի 11 առաջնորդներին, որոնց թվում է Էլիոթը։

1629 (մարտ 9) — 1640 (ապրիլի 13) — Կարլոս I-ի կառավարումը առանց պառլամենտի։ Կրոմվելը վերադառնում է Հանթինգդոն։ Ծնվում է նրա Եղիսաբեթ դուստրը (Բեթթի Քլեյփոլը)։

1630 — վերականգնումը այն հին օրենքի՝ ըստ որի ասպետի կոչում էր շնորհվում յուրաքանչյուր հողատիրոջ, որն ուներ ոչ պակաս 40 ֆունտ ստեռլինգ եկամուտ։ Նոյեմբեր— Անգլիայի և Իսպանիայի միջև խաղաղության ու միասնության պայմանագրի կնքումը Մադրիդում։

1631 — Կրոմվելը վաճառում է իր տունն ու տիրույթները Հանթինգդոնում և տեղափոխվում է Սենթ Այվզ, որտեղ արոտավայր է վարձակալում և զբաղվում է անասնապահությամբ։

1633 — Կարլոս I-ը Թոմաս-Ուենթվորթին (հետագայում՝ կոմս Սարաֆորդ) նշանակում է լորդ-կուսակալ (փոխարքա) Իռլանդիայում։ Ուիլյամ Լոդը դառնում է Քենթերբերիի արքեպիսկոպոս։

1635— Կարլոս I-ի կողմից հին հարկի՝ «նավային տուրքի» վերականգնումը։

1636—Կրոմվելը իր հորեղբոր՝ Թոմաս Ստյուարտի, մահից հետո ժառանգություն է ստանում և ընտանիքով տեղափոխվում է Իլ (Քեմբրիջի կոմսություն)։

1636—1638 — Ժողովրդական շարժումներ Արևելյան Անգլիայում ընդդեմ ճահիճները չորացնողների՝ ի պաշտպանություն գյուղացիների համայնքային իրավունքների։ Կրոմվելը մասնակցում է այդ շարժումներին։

1637 — Աստղային պալատը դատավճիռ է կայացնում պրեսբիտերական աստվածաբանների՝ Փրինի, Բերթոնի և Բասթվիկի նկատմամբ (դատապարտվում են ցմահ բանտարկության, ձաղկման, անարգանքի և տուգանքի)։ Այդ տարվա հուլիսին սկսվեց ապստամբությունը Շոտլանդիայում, որը իր ետևից բերեց Շոտլանդիայի պատերազմը Կարլոս I-ի դեմ։ Նոյեմբերին Ջոն Հեմփդենը՝ Կրոմվելի զարմիկը, գանձատան դատարանում դրդեց «նավային դրամների» ապօրինության մասին։ Այդ նույն տարվա դեկտեմբերին ձերբակալվեց Ջոն Լիլբոնը՝ պուրիտանական գրականության տպագրման ու տարածման համար։ Ծնվում է Կրոմվելի դուստրը՝ Մերին։

1638 — Ժողովրդական ելույթներ ընդդեմ «նավային դրամների»։ Մարտին՝ շարժում Շոտլանդիայում ազգային Կովենանտի ստորագրման համար։ Ապրիլի 18-ին ի կատար է ածվում Աստղային պալատի դատավճիռը Ջոն Լիլբոնի նկատմամբ, որը դատապարտված էր ցանահարման, անարգանքի սյունի, 500 ֆունտ ստեռլինգ տուգանքի և բանտարկության։ Նույն տարվա նոյեմբերին շոտլանդացիները Գլազգոյում հրավիրեցին գլխավոր ասամբլեա կալվինական հոգևորականության, աղնվականության ներկայացուցիչների քաղաքացիների և մասամբ գյուղացիների մասնակցությամբ։ Այդ տարի ծնվեց Կրոմվելի դուստր Ֆրենսիսը։

1639, փետրվար — Շոտլանդական բունակն անցավ անգլիական սահմանը և ներխուժեց հյուսիսային կոմսությունները։ Անգլիայի համար անհաջող ու թարմ պատերազմից հետո Կարլոս I-ը այդ նույն տարվա հունիսին կնքեց Բերվիքյան հաշտության պայմանագիրը Շոտլանդիայի հետ։ Մեռավ Կրոմվելի ավագ որդի Ռորերը։

1640, ապրիլի 13-ից մայիսի 5-ը — Կարճատև պառլամենտ։ Կրոմվելը դրսն մասնակցում է որպես դեպուտատ Քեմբրիջից։ Օպոզիցիոն շոտլանդացիները վերսկսում են ռազմական գործողությունները և պարտություն են մատնում անգլիացիներին Նյուբերնի մոտ։ Նոյեմբերին հրավիրվում է նոր պառլամենտ, որ ստացել է Երկարատև անունը։ Կրոմվելը դարձյալ դեպուտատ է Քեմբրիջից։

www.a-pdf.com

Նոյեմբերի 3-ը՝ պառլամենտի բացումը։ 11-ը նոյեմբերի՝ Ստրաֆորդի ձերբակալությունը, դեկտեմբերին՝ արքեպիսկոպոս Լոդի և միապետական քաղաքականության մյուս ոգեշնչողների ձերբակալությունը։ Դեկտեմբերի 1-ին պառլամենտին 15 հազար մարդու ստորագրությամբ հանրագիր է հանձնվում եպիսկոպոսատի լիակատար՝ «արմատներով ու ճյուղերով» ոչնչացման մասին։ Ստեղծվում է կրոնի գործերի կոմիտե, որին եռանդուն մասնակցում է Կրոմվելը։

1641, հունվարի 19 — պառլամենտին օրինագիծ է ներկայացվում պառլամենտի ամենամյա գումարման մասին։ Փետրվարի 15-ին ընդունվում է «Ծռամյա ակտը»։ Մարտ-ապրիլին դատ է գնում Ստրաֆորդի դեմ, մայիսին Լոնդոնում տեղի են ունենում ժողովրդական հուզումներ, դրանց ճնշման տակ թագավորը մահվան դատավճիռ է ստորագրում Ստրաֆորդի վերաբերյալ։ Մահավճիռը ի կատար է ածվում մայիսի 12-ին, Կրոմվելը պառլամենտում ելույթ է ունենում Լիլբեռնի դատապարտման դործով, և մայիսին նրան բաց են թողնում բանտից։ Հուլիսին պառլամենտի պահանջով լուծարքի են ենթարկվում Առաջային պալատի և Բարձր հանձնաժողովի դատարանները։ Օգոստոսին վերացվում են անտառային օրենքները և նավային գրամները։ Հոկտեմբերին ապստամբություն է սկսվում Իռլանդիայում։ Նոյեմբերի 22-ին պառլամենտն ընդունում է Մեծ ռեմոնստրացիան։

1642 — հունվարին թագավորը փորձում է ձերբակալել պառլամենտական օպոզիցիայի հինդ առաջնորդներին, բայց անհաջողություն է կրում և փախչում է հյուսիս։ Փետրվարին պառլամենտը որոշում է կալացնում իռլանդացիներից 2,5 միլիոն ակր բերրի հողեր բռնագրավելու մասին, որպեսզի ապահովվի 1 միլիոն ֆունտ ստեռլինգի փոխառությունը, որը կառավարությունն ստացել էր ապստամբությունը Իռլանդիայում ճնշելիս։ Հունիսի 2-ին պառլամենտն ընդունում է «Տասնինը առաջարկությունները» թագավորին։ Հունիսի 12-ին որոշում է հրապարակվում Էսեքսի հրամանատարությամբ պառլամենտական բանակ կազմելու մասին։ Օգոստոսի 22-ին թագավորը պատերազմ է հայտարարում պառլամենտին իր դրոշն է բարձրացնում Նոթինհեմում։ 23-ը հոկտեմբերի — առաջին խոշոր ճակատամարտը պառլամենտական և թագավորական զորքերի միջև Էջհիլի մոտ։ Կրոմվելը դրան մասնակցում է կապիտանի աստիճանով։

1643 — հունվարին պառլամենտը որոշում է հրապարակում եպիսկոպոսատը ոչնչացնելու մասին։ Փետրվարին Կրոմվելին նշանակում են Արևելյան կոմսությունների միավորման զորքերի գեղապետ։ 13-ը մայիսի — ճակատամարտ Գրենտեմի մոտ։ Հունիսին մահանում է վիրավորված Ջոն Համփդենը։ Ամռանն ու աշնանը Կրոմվելն ստեղծում է նոր տիպի բանակի առաջին ջոկատները։ 28-ը հուլիսի — ճակատամարտ Գեյնսբորոյի մոտ։ Օգոստոսի 10-ին Արևելյան միավորման զորքերի գլխավոր հրամանատար է նշանակվում կոմս Մանչեստերը, նրա տեղակալ՝ Կրոմվելը։ Սեպտեմբերին պառլամենտը ընդունում է շոտլանդական «Սրբազան Լիգան և Կովենանտը»։ 20-ը սեպտեմբերի — ճակատամարտ Նյուբերիի մոտ։ Հոկտեմբերի 10-ին Կրոմվելյան ջոկատները Ուինսբիի մոտ պարտություն են մատնում ռոյալիստներին։

1644 — անգլիական պառլամենտի դաշնակից շոտլանդական բանակը մրտնում է Հյուսիսային Անգլիայի տերիտորիան։ Կրոմվելին նշանակում են լեյտենանտ-գեներալ։ Մեռնում է նրա երկրորդ որդին՝ Օլիվերը։ Հուլիսի 2-ին ճակատամարտ է տեղի ունենում Մարսթոն-Մուրի մոտ, որտեղ պառլամենտի զորքերը վճռական հաղթանակ են տանում։ 27-ը հոկտեմբերի — երկրորդ ճակատամարտը Նյուբերիի մոտ։ Նոյեմբերին հակամարտություն է ծագում Կրոմվելի և կոմս Մանչեստերի միջև՝ թագավորի դեմ պայքարը ուժեղացնելու հարցի կապակցությամբ։ Նոյեմբերի 25-ին Կրոմվելը Մանչեստերին հրապարակավ մեղադրում է պառլամենտի նիստում։ Դեկտեմբերի 9-ին Կրոմվելը պառլամենտում ելույթ է ունենում բանակում արմատական բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտության մասին։ Նա պալատին առաջարկում է ինքնահրաժարման վերաբերյալ օրինագիծը։

1645 — փետրվարի կեսերին պառլամենտը որոշում է ընդունում նոր տիպի բանակ կազմելու մասին։ Կրոմվելը կազմակերպում ու սովորեցնում է բանակային ջոկատները։ Հունիսի 14-ին ճակատամարտ է տեղի ունենում Նեսբիի մոտ՝

www.a-pdf.com

պառլամենտական բանակի խոշորագույն հաղթանակը։ Սեպտեմբերին Կրոմվելը վերցնում է Բրիսթոլը։

1646 — փետրվարի 24-ին պառլամենտը հրամանագիր է հրատարակում խնամակալության գործերի պալատը լուծարքի ենթարկելու մասին. տեղի է ունենում ֆեոդալական, «ասպետական պահումի» վերացում։ Ապրիլի վերջին Կարլոս I-ը փախչում է Հյուսիս և գերի հանձնվում շոտլանդացիներին։ Հունիսի 24-ին պառլամենտական զորքերը գրավեցին Օքսֆորդը։

1647 — փետրվարին շոտլանդացիները թագավորին հանձնեցին անգլիական լիազորներին։ Կրոմվելը հիվանդ է։ Պառլամենտը վճռում է արձակել բանակը։ Լևելերները բողոք են բարձրացնում, Լիլբեռնը մերկացնող պամֆլետներ է հրապարակում։ Բանակում առաջանում են ագիտատորների խորհուրդները։ Զինվորները հրաժարվում են արշավանքից դեպի Իռլանդիա։ Պրեսբիտերները Լոնդոնում ստեղծում են Անվտանգության կոմիտե։ Հունիսի 2—4-ը կոռնետ Ջոյսը թագավորին բռնում է Հոլմբի ամրոցում և տանում բանակի գլխավոր հրամանատարության շտաբ։ Այդ նույն ժամանակ Կրոմվելը թողնում է Լոնդոնը և ժամանում բանակի շտաբ։ Նրա առաջարկությամբ ստեղծվում է բանակի Համընդհանուր խորհուրդ։ Օգոստոսի 1-ին ինդեպենդենտները հրապարակում են իրենց սահմանադրությունը՝ «Առաջարկությունների գլուխները»։ Փետրվարի 6-ին բանակը Կրոմվելի ու Ֆերֆաքսի գլխավորությամբ մտնում է Լոնդոն։

Սեպտեմբերին Կրոմվելն սկսում է բանակցություններ վարել թագավորի հետ։ Լևելերները նրան մեղադրում են դավաճանության մեջ։ Հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 11-ը Պեթնիում տեղի է ունենում բանակի խորհրդի ընդլայնված նիստ, որտեղ քննարկվում է լևելերների սահմանադրությունը՝ «Ժողովրդական համաձայնագիրը»։ Նոյեմբերի 11-ին թագավորը Հեմփթոն-Քորթից փախչում է Ուայթ կղզի։ Նոյեմբերի 15-ին Կրոմվելը ճնշում է լևելերների ելույթը Ուերում։ Զինվոր Ռիչարդ Առնոլդի մահապատիժը։ Դեկտեմբերին Կարլոս I-ը գաղտնի համաձայնագիր է ստորագրում շոտլանդացիների հետ։

1648 — հունվարի 3-ին համայնքների պալատը որոշում է ընդունում թագավորի հետ բանակցությունները դադարեցնելու մասին։ Գարնանն սկսվում է երկրորդ քաղաքացիական պատերազմը։ Ապրիլի 29-ին տեղի են ունենում բանակի սպաների՝ ինդեպենդենտների և լևելերների խորհրդակցություններ Վինձորում։ Որոշում է ընդունվում Կարլոս I-ին դատի տալ որպես աղքն աղետի ենթարկող հանցավորի։ Մայիսի 3-ին Կրոմվելը Լոնդոնից մեկնում է Ուելս։ Հուլիսին նա շրջապատում է Փեմբրոքը։ Դրա անկումից հետո զորքերով գնում է դեպի հյուսիս։ 17—19-ը օգոստոսի — նա Պրեսթոնի մոտ հաղթանակ է տանում ռոյալիստների դեմ։ Սեպտեմբեր-հոկտեմբերին Կրոմվելը կռվում է շոտլանդական ռոյալիստների դեմ հյուսիսում, հոկտեմբերի սկզբին մտնում է Էդինբուրգ և հաշտության դաշինք կնքում Արգայլի հետ։ Այնուհետև գնում է դեպի հարավ և պաշարում է Պոնտեֆրակտը։

Դեկտեմբերի սկզբին Կարլոս I-ին տեղափոխում են Հերսթ ամրոցը։ Դեկտեմբերի 2-ին բանակը մտնում է Լոնդոն, դեկտեմբերի 6-ին գնդապետ Պրայդը և զինվորներն անցկացնում են պառլամենտի զտում պրեսբիտերներից։ Նույն այդ երեկո Կրոմվելը վերադառնում է Լոնդոն։

1649 — հունվարի 20-ին սկսվում է դատը թագավորի դեմ։ Հունվարի 30-ին Կարլոս I-ը գլխատվում է։ Փետրվարի 6-ին պառլամենտը օրինագիծ է հրապարակում լորդերի պալատը լուծարքի ենթարկելու մասին։ Փետրվարին լույս է տեսնում Լիլբեռնի պարսավագիրը «Անգլիայի նոր շղթաների մերկացումը» վերնագրով։ Մարտին լույս են տեսնում լևելերյան պարսավագիրը՝ «Աղվեսների որսը...» և Լիլբեռնի պարսավագիրը՝ «Անգլիայի նոր շղթաների մերկացման երկրորդ մասը»։ Պառլամենտը այս պարսավագիրը հայտարարում է խռովարարական և լևելերական օպոզիցիայի առաջնորդներին բանտարկում է Թաուերում։ Վաղ գարնանն սկսվում են «իսկական լևելերների»՝ դիգերների ելույթները։ Հուզումներ գնդերում։ 27-ը ապրիլի—Ռոբերտ Լոքիերի մահապատիժը։ Մայիսի ոկզբներին Կրոմվելը ճնշում է լևելերական ապստամբությունը Բերֆորդում։ Մայիսի 19-ին Անգլիայում սպաշտոնապես հռչակվում է հանրապետություն։

www.a-pdf.com

Օգոստոսի 15-ին Կրոմվելը անգլիական զորքերի գլուխն անցած ափ է իջնում Իռլանդիայում։ Սեպտեմբերի 11-ը Դրոգեդի առումը և բնակչության ու կայազորի գազանային կոտորածը։ Հոկտեմբերի 11-ին Կրոմվելը գրոհով վերցնում է Ուեքսֆորդը։

1650 — ապրիլ-մայիսին Կրոմվելը պաշարում է Քլոնմել ամրոցը և մի շարք պարտություններ է կրում։ Մայիսի 26-ին նա թողնում է Իռլանդիան։ Հունիսին, Լոնդոնում կարճատև մնալուց հետո, նա գնում է հյուսիս և հուլիսին բանակով ներխուժում Շոտլանդիա։ Սեպտեմբերի 3-ին Դենբարի մոտ նա խոշոր հաղթանակ է տանում շոտլանդական զորքերի դեմ։

1651. փետրվար-ապրիլ-մայիս— Կրոմվելն Էդինբուրգում լուրջ հիվանդ է։ Օգոստոսի սկզբին նա նվաճում է Պերտը, որից հետո Կարլոս Ստյուարտի շոտլանդական բանակի ետևից շտապում է Անգլիա։ Սեպտեմբերի 3-ին ճակատամարտ է տեղի ունենում Վուսթերի մոտ, որտեղ Կրոմվելը ջախջախիչ պարտություն է մատնում Կարլոս Ստյուարտին և շոտլանդացիներին։

Հոկտեմբերի 9-ին պառլամենտը հրապարակում է «Նավագնացության ակտը»՝ ուղղված հոլանդական առևտրական գերակշռության դեմ։ Դեկտեմբերին Կրոմվելը Ուայթլոքի հետ քննարկում է «ազգի կարգավորման» հարցը։

1652 — ապրիլին սկսվում է առաջին անգլո-հոլանդական պատերազմը (ավարտվում է 1654 թվի ապրիլին)։ Օգոստոսին հրատարակվում է «Իռլանդիայի կարգավորման ակտը»։ Նույն այդ օգոստոսին բանակի սպաները հանրագիր են հանձնում, պահանջելով վերափոխումներ կատարել։ Նոյեմբերին Կրոմվելը Ուայթլոքի հետ կրկին քննարկում է սահմանադրության հարցը։

1653 — ապրիլի 19-ին Ուայթհոլում Կրոմվելը խորհրդակցում է բանակի սպաների և Երկարատև պառլամենտի մի քանի անդամների հետ։ Ապրիլի 20-ին նա ցրում է Երկարատև պառլամենտը և Պետական խորհուրդը։ Հուլիսի 4-ին սկսվում են Փոքր պառլամենտի նիստերը։ Օգոստոսին դատ է տեղի ունենում Լիլբեռնի դեմ։ Երդվյալ ատենակալները արդարացնում են նրան։ Դեկտեմբերի 12-ին Փոքր պառլամենտը ցած է դնում իր լիազորությունները։ Դեկտեմբերի 16-ին Կրոմվելը դառնում է Անգլիայի լորդ-պրոտեկտոր։ Ընդունվում է նոր սահմանադրություն՝ «Կառավարման միջոցը»։

1654 — ապրիլին Անգլիան խաղաղության դաշն է կնքում Հոլանդիայի հետ և առևտրական պայմանագիր է ստորագրում Շվեդիայի հետ։ Սեպտեմբերի 3-ին բացվում է պրոտեկտորի առաջին պառլամենտը։ Սեպտեմբերին մեռնում է Կրոմվելի մայրը։ Դեկտեմբերին ռազմական արշավախումբ է ուղարկվում Վեստ-Ինդիա։

1655 — հունվարի 22-ին Կրոմվելն արձակում է պառլամենտը։ Ապրիլին անգլիական նավատորմիղը գրոհում է Էսպանոլայի վրա, բայց անհաջողություն է կրում։ Մայիսի 17-ը Անգլիայի կողմից Յամայկայի գրավումը։ Օգոստոսի 9-ին Կրոմվելը Անգլիան և Ուելսը բաժանում է 11 ռազմավարչական օկրուգների՝ մայոր-գեներալների գլխավորությամբ։ Նոյեմբերի 3-ին Անգլիան դաշնակցային ու առևտրական պայմանագիր է կնքում Ֆրանսիայի հետ։ Սկսվում է պատերազմն Իսպանիայի դեմ։

1656 — սեպտեմբերի 17-ին պրոտեկտորի երկրորդ պառլամենտը սկսում է իր նիստերը։ Նոյեմբերի 27-ին հրատարակվում է ակտ, որը հաստատում է 1616 թվականի օրդոնանսը՝ խնամակալության պալատը լուծարքի ենթարկելու մասին։

1657 — փետրվարին պառլամենտ է մտցվում «Հնազանդության հանրագիրը և խորհուրդը». Կրոմվելին արքայական տիտղոս են առաջարկում։ Մարտի 23-ին պայմանագիր է ստորագրվում իսպանական Նիդեռլանդների դեմ միասնական ռազմական գործողությունների մասին։ Մայիսի 8-ին Կրոմվելը սպաների նշման տակ հրաժարվում է թագավորական տիտղոսից։ Մայիսի 25-ին պառլամենտն ընդունում է «Հնազանդության հանրագիրը և խորհուրդը»։ Հունիսի 26-ին տեղի է ունենում նոր սահմանադրության հանդիսավոր վավերացումը և Կրոմվելի դահակալեցումը. նրան երկրորդ անգամ լորդ-պրոտեկտոր են հռչակում։ Կրոմվելը կազմում է լորդերի պալատի ցուցակը։

www.a-pdf.com

1958 — փետրվարի 4-ին Կրոնվիլի արհեստում է գրադարանը։ Հանրագիտարանի է սահմանում Հանրամատչելի գրադարանի հասկացությունը։ Գրադարանը սկսվում է Անգլիայում։ Գրադարանը սկսվում է Անգլիայում։ Գրադարանը սկսվում է 6-ին մեկնում է Նյուքասլի Ֆիլիպսը։ Սեպտեմբերի 3-ին մեկնում է Կրոնվիլը։

1960 — Հունվարի 29-ին սկսվի է սահմանում Սոցիալական գիրքերի գիրքհանումը։

1961 — Հունվարի 10-ին Կրոնվիլի, Ֆրիսի և Բրեզնոսի սեղմանները դուրս են գալիս գիտնականների և սեղմագրերի հիմքերից։

www.a-pdf.com

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 1, с. 41, 602; т. 6, с. 11; т. 8, с 120; т 14, с. 307; т. 23, с. 758; т. 32, с. 304, 316, 338, 493, 532.

Английская буржуазная революция XVII в., т. I—II. М., 1954.

Здесь же приведена подробная библиография.

Архангельский С. И. Крестянские движения в Англии в 40—50-х годах XVIIв. М, 1960.

Барг М. А. Кромвель и его время. М., 1960.

Барг М. А. Народные низы в английской буржуазной революции XVII в. М., 1967

Лавровский В. М Сборник документов по истории английской революции М, 1973.

Лавровский В. М., Барг М. А. Английская буржуазная революция XVII в М, 1958.

Левин Г. Р. Демократическое движение в английской революции. I, 1973.

Лилберн Джон. Памфлеты. М, 1937.

Сапрыкин Ю. М. Ирландское восстание XVII в, М, 1967.

Сапрыкин Ю. М. Политическое учение Гаррингтона. М, 1975

Уинстенли Дж. Избранные памфлеты. М.-Л., 1950.

Abbott W. C. The Writtings and Speeches of Oliver Cromwell. Vol 1—4. Cambridge (USA), 1937.

Buchan J. Oliver Cromwell. London, 1934.

Clarendon, Edward Hyde. The History of the Rebellion and Civil Wars in England, vol. I—VI. Oxford, 1888.

The Constitutional Documents of the Puritan Revolution. 1628—1660 Oxford, 1889.

Cromwell in the English Revolution (Tercentenary), London, 1958.

Firth C. H. Oliver Cromwell and the Rule of the Puritans in England. London, 1947.

Fraser A. Cromwell. The Lord Protector. New York, 1975.

Gardiner S. R. Oliver Cromwell. London, 1909.

Hill Ch. God's Englishman. Oliver Cromwell and the English Revolution. London, 1975.

The Leveller Tracts 1647—1653. Gloucester (Mass). 1964.

Ludlow Ed. The Memoirs, 1625—1672. Vol. I—II. Oxford, 1894.

www.a-pdf.com

The Parliamentary History of England from the Earliest Period to the Year 1803, ed by W. Cobbett. vol. I—IV. London, 1806—1820

(Stace M) Cromwelliana, a Chronological Details of Events, in which Oliver Cromwell was engaged; from the Year 1642 to his Death 1658. Westminster, 1810.

Wedgwood C V. Oliver Cromwell. London, 1962

Wedgwood C V. The Trial of Charles I Collins, 1964

Whitelock B Memorials of the English Affairs from the Begining of the Reign Of Charles I. Vol I—IV Oxford, 1853

www.a-pdf.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
Գլուխ I Մագուսով չենտլմենը 12
Գլուխ II Ճանիճների տերը 31
Գլուխ III Պառլամենտի անդամը 56
Գլուխ IV Զինվորը 79
Գլուխ V Դավաճանը 107
1. *Ագիտատորները* *107*
2. *«Ժողովրդական համաձայնագիր»* *126*
Գլուխ VI Արքայասպանը 148
1. *«Զարաղետ պատերազմը»* *148*
2. *Բռնություն պառլամենտի վրա* *166*
3. *Արդարության Գերագույն դատարանը* *186*
Գլուխ VII Հանրապետականը 203
Գլուխ VIII Նվաճողը 228
1. *Իռլանդիա* *228*
2. *Շոտլանդիա* *250*
Գլուխ IX Բարեգործիչը 271
1. *«Գլխանքը»* *271*
2. *«Սրբերը» իշխանության գլուխ* *291*
Գլուխ X Լորդ-պրոտեկտորը 304
1. *Կոնաքելը* *304*
2. *«Հնազանդության հանրագիր և խորհուրդ»* *325*
Վերջաբան 348
Կրոմվելի կյանքի և հեղափոխության գլխավոր իրադարձությունների հիմնական տարեթվերը *351*
Համառոտ մատենագրություն *357*

www.a-pdf.com

Պավլովա Տատյանա Ալեքսանդրովնա

ԿՐՈՄՎԵԼ

Павлова Татьяна Александровна

КРОМВЕЛЬ

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван — 1983

Խմբագիր՝ Հ. Ա. Հարությունյան
Հրատ. խմբագիրներ՝ Ա. Ս. Վարդազարյան, Ա. Ս. Սարգսյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Կ. Մնացականյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ա. Տոնոյան

ՀԽ — 4233
Հանձնված է շարվածքի 1. 04. 1983 թ.։ Ստորագրված է տպագրության 13. 06. 1983 թ.։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ տպ.՝ № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 20,68 պայմ. տպագր. մամ., հրատ.՝ 20,96 մամ+17 ներդիր։ Պատվեր՝ 1046։ Տպաքանակ՝ 25000։
Գինը՝ 1 ռ. 60 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91։
Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան։ Երևան, Ալավերդյան փող. № 65։
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван, ул. Алавердяна, 65

www.a-pdf.com